Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:


*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝*[http://www.armin.am](http://www.armin.am)

*Էլ. փոստ՝*[info@armin.am](mailto:info@armin.am)

Տպագրվում է
«Գալուստ Գյուլբենկյան»
հիմնադրամի հովանավորությամբ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

М. Г. НЕРСИСЯН

# ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА АРМЯНСКОГО НАРОДА ПРОТИВ ТУРЕЦКОГО ДЕСПОТИЗМА 1850-1890 гг.

Издательство "Гитутюн" НАН РА
ЕРЕВАН - 2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲՌՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ 1850-1890 թթ.

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ - 2002

# ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Արդի Հայագիտության մեջ ազգային-ազատագրական պայքարի թեմայի զարգացումը ու խոր ուսումնասիրությունը սերտորեն կապվում է Մ. Գ. Ներսիսյանի գիտական գործունեության հետ և ամբողջացնում նրա խոշոր վաստակը իր կողմից հիմնավորապես մշակած՝ հայ-ռուսական պատմաքննական հարաբերությունների, հայ հասարակական մտքի պատմության և, ի վերջո, հայոց ցեղասպանության հիմնարար թեմաների ուսումնասիրության բնագավառներում: Իրենց որոշակի ինքնուրույնությամբ հանդերձ, նշված թեմաները փոխներթափանցված են Մ. Նիրսիսյանի աշխատություններում, և տրամաբանորեն լրացնում են միմյանց՝ հանդես գալով իբրև նրա հետազոտական ծրագրի հիմք և իրականացում:

Տակավին 1946 թ. Մ. Ներսիսյանը պաշտպանեց դոկտորական ատենախոսություն «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ.» խորագրով, որը հրատարակվեց շուրջ մեկ տասնամյակ անց՝ 1955 թ.: Այս աշխատությունը սկզբունքորեն կարևոր նշանակություն ունեցավ առհասարակ հայ խորհրդային պատմագիտության համար, որչափով մերժում էր գաղափարական ու քաղաքական հրահանգների ուժ ունեցող մի ամբողջ շարք պատմագիտական դրույթներ՝ ապացուցելու այն ճշմարտությունը, որ հայ ժողովրդի գոյատևման կարևորագույն միջոցներից մեկը նոր ժամանակներում եղել է նրա ազատագրական պայքարը օսմանյան բռնապետության դեմ: Սույն աշխատության հիմքում ևս, որն ընդգրկում է պատմական ավելի լայն ժամանակահատված՝ 1850-1890-ական թթ., ընկած է հայ ժողովրդի ինքնապաշտպանական պայքարը բռնությունների դեմ՝ հանուն ազատության: Գիտնականը այս տասնամյակների ազատագրական շարժումների և դրանց գաղափարախոսության վերլուծությունը լծորդում է ժամանակաշրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական կացության խորը և հանգամանալի հետազոտության հետ: Ընդ որում, այն հենվում է քաղաքականապես երկու տարանջատ՝ Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածների տնտեսական, հասարակական ու մտավոր-մշակութային կացության մշտական բաղդատման, զուգահեռների, փաստականորեն հագեցած նյութի վրա, որ հետազոտությունը դարձնում է համոզիչ ու ճշմարտացի: Մ. Ներսիսյանը եզրակացնում է, որ համեմատած Արևելյան Հայաստանի հետ, Արևմտյան Հայաստանը գտնվում էր և՛ տնտեսական, և՛ հասարակական զարգացման շատ ավելի ցածր աստիճանի վրա՝ ի դեմս այն իրո-

*ղության, որ թուրքական հասարակությունը գտնվում էր արևելյան բռնապետության համատարած տիրապետության փուլում։ Իբրև վերջինիս որակական բնութագիր, նա բացահայտում է արևմտահայ գյուղացիության ճորտական կախվածությունը թուրք և քուրդ բեկերից ու աղաներից, նրա զանգվածային հողազրկությունը, օրինականացված կամ ապօրինի բազմաթիվ կողոպտչական հարկերն ու տուրքերը, պարհակները և այլն։ Սոցիալական այս ծայրահեղ թշվառությունը ամրապնդվում էր արևմտահայ աշխատավորության իրավազուրկ դրությամբ, ազգային, կրոնադավանական ճնշումներով ու նվաստացումներով։ Տնտեսական այս վիճակը քայքայում էր հայ գավառը, գյուղացիության մեջ ուժեղացնում պանդխտության երևույթը։ Միաժամանակ, նաև՝ իբրև դրա հետևանք, այս կացությունը գյուղացիության մեջ սնուցանում էր սոցիալ-տնտեսական ու ազգային ծանր պայմաններից ձերբազատվելու որոնումներ, որի ելքը սուլթանական բռնակալության և ճորտական կախվածության դեմ մղվող պայքարն էր։ Ձևավորվող ընդդիմության տրամադրությունները արևմտահայ իրականության մեջ անհրաժեշտորեն ստանում էին «նաև ազգային-ազատագրական բնույթ», եզրակացնում է Մ. Ներսիսյանը։*

*Շատ կարևոր է նաև, որ նա, ինչպես ասվեց, սկզբունքորեն տարբերում է քաղաքական ու գաղափարական այն իրականությունները, ուր տնտեսական ու ազգային ճնշումների էին ենթարկվում արևելահայ ու արևմտահայ հատվածները։ Ըստ էության, այստեղից է սկիզբ առնում կամ ուրվագծվում այն հենքը, որի վրա գիտնականը պետք է կառուցեր հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման տեսահիմքը։ Նկատի ունենք նրա այն եզրակացությունները, որ ռուսական առաջավոր մտավորականությունն ու հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները խորին համակրանքով էին վերաբերվում Ռուսաստանի ճնշված ազգությունների, այդ թվում և հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրության գաղափարին, պաշտպանում նրանց տնտեսական ու հոգևոր ազատ զարգացման ձգտումները՝ ելնելով հենց սեփական՝ ռուս ժողովրդի ազատագրման գաղափարից։ Այս իմաստով համառուսական առաջավոր շարժումները միավորում էին ռուսներին և նրանց բախտակից ճնշված ժողովուրդներին։ Թուրքական վայրագ իրականությունը, մինչդեռ, ինչպես ակնհայտորեն երևում է դեռևս 1850-1890-ական թթ. հայ մամուլի ու եվրոպացի իրազեկ անձանց վկայություններից, արևմտահայության համար միանգամայն իրական էր դարձրել նրա ֆիզիկական կործանումը։*

*Մ. Ներսիսյանը օսմանյան Թուրքիայի բարենորոգչական հնարավորությունները ևս գնահատում է իրատեսորեն՝ ոչ մի ներգործուն ուժ չտեսնելով ոչ 1839-ի հաթթը շերիֆի, և ոչ էլ արևմտահայերի Ազգային*



*սահմանադրության (1860 և 1863) մեջ։ Հիրավի, այդ սահմանադրությունը, որը գործել է միայն Կ. Պոլսում, Զմյուռնիայում և մի քանի գավառական կենտրոններում, ուներ սոսկ կրոնադավանական, մշակութային-կրթական երկրորդական հարցերը կարգավորող կանոնադրական ինչ-ինչ նշանակություն, մնում էր իբրև «թղթի կտոր» և ի զորու չէր որևէ թեթևություն բերելու իրավազուրկ արևմտահայությանը։ Բնականաբար, ամբողջովին զուրկ լինելով քաղաքական կամ տնտեսական որևէ արժեքից, այն չէր կարող, ինչպես նկատում է Մ. Ներսիսյանը, կասեցնել արևմտահայերի դրության հետագա վատթարացումը։ Ավելին, բազմաթիվ փաստերի ու տվյալների վրա հենվելով, նա ցույց է տալիս, որ XIX դարի երկրորդ կեսին սուլթանիզմի գործադրած ազգային ճնշումների քաղաքականությունը էլ ավելի անհանդուրժող, հարձակողական ու բիրտ է դառնում նրա նախորդ տարիների նկարագրից։ Իբրև այս եզրակացության նախադրյալներ և այդ քաղաքականության որոշակի դրսևորումներ, Մ. Ներսիսյանը վկայակոչում է թուրքական կառավարության ձեռնարկած «կտրուկ» միջոցները Զեյթունի և Սասունի դեմ։ Այդպիսի դրսևորումներ էին նաև արևմտահայերի համահավաք բնակության դեմ ուղղված Բ. Դռան քաղաքական ու վարչական վճիռները, նրանց ցրումը մահմեդական մեծամասնության մեջ և այլն։*

*Պատմաբանը առանձնացնում է նաև նշվածը հատկապես ընդգծող նոր երևույթ՝ հայկական ջարդերի կազմակերպման պետական ծրագրի իրականացումը 1890-ական թթ., Արևմտյան Հայաստանում (մասնավորապես Վանի և Ալաշկերտի շրջաններ) հայ բնակչության զանգվածային կոտորածների սանձազերծումը, այդ նպատակով կանոնավոր զորքի և քրդական ցեղերի օգտագործումը։ Մ. Ներսիսյանը բացահայտում է այս նոր քաղաքականության իրական մի շարք պատճառներ, ինչպես ծայրահեղորեն ազգայնական թուրքական բուրժուազիայի հետադիմական պայքարը կայսրության ժողովուրդների ազատագրական շարժումների դեմ, պանիսլամիզմի և պանթուրքիզմի մոլի քարոզչությունը ընդդեմ այդ ժողովուրդների, նրանց ազգային, կրոնական, մշակութային ինքնության ժխտումը և այլն։ Օսմանյան կայսրության ամբողջականությունը ազատագրական շարժումների հարվածներից ապահովելու, ճնշված ազգերի պայքարը կանխելու ջղաձիգ ճիգերը ևս, մասնավորապես Հունաստանի և Բալկանների մի մասի կորստից հետո, թուրքական կառավարողներին մղում էին ուժեղացնելու ազգային ճնշումները։ Հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի դեմ համատարած արշավանքում, ինչպես բացահայտում է Մ. Ներսիսյանը, թուրքական հետադիմական վերնախավի քաղաքական մտածողությունն ու վարքագիծը դրսևորվում էր ազգայնամոլ՝*

*պանիսլամական և պանթուրքական գաղափարախոսությունները գործի դնելով:*

*Մ. Ներսիսյանի այս, ինչպես և հետագա աշխատություններում հիմնավոր վերլուծության է ենթարկվել ազգային-ազատագրական շարժման ուղղվածության հիմնահարցը: Նա եզրակացնում է, որ այդ շարժումը ուղղված էր սուլթանական Թուրքիայի դեմ, մինչդեռ Ռուսաստանում կարևորագույնը ժողովրդավարական հեղաբեկումների խնդիրն էր, սոցիալական հեղաբեկումների խնդիրը: Օսմանյան Թուրքիայում արևմտահայության հուզող սոցիալական խնդիրը ստորադասվում էր քաղաքական ազատագրական պայքարի խնդրին: Մ. Ներսիսյանը չի բացառում, որ Արևելյան Հայաստանում ևս ցարիզմի ազգային ճնշումները իբրև հակազդեցություն առաջ էին բերում ազգային պայքարի դրսևորումներ, սակայն խնդրի էությունը դրանից չէր փոխվում, քանի որ առաջնայինը այստեղ պայքարն էր երկրի սոցիալական վերափոխումների համար: Հիրավի, արևելահայ ժողովրդավարական գործիչները երբևէ արևելահայերի քաղաքական կամ ազգային անկախության կոչ չեն արել, այլ ընդհակառակն, բազմիցս արտահայտվել են ազատագրական պայքարը Թուրքիայի դեմ ուղղելու մասին (Մ. Նալբանդյան, Ռ. Պատկանյան, Րաֆֆի, տարաստիճան մտավորականության այլ ներկայացուցիչներ և այլն): Հատկապես Մ. Նալբանդյանի գործունեությունը բնութագրելիս Մ. Ներսիսյանը դիտում է, որ ռուսական հեղափոխական շարժման գաղափարախոսների հետ միասին նա արևմտահայության սոցիալական ու ազգային ազատագրությունը կապակցում էր ռուս ժողովրդի պայքարի ու ազատագրության հեռանկարներին: Ավելին, նա բազմաթիվ փաստեր վկայակոչելով հաստատում է, որ թուրքական բռնապետության դեմ ուղղված հայ ազգային-ազատագրական պայքարը խորապես հուզում էր ոչ միայն Արևելյան Հայաստանի, այլև բազմաթիվ հայկական գաղթավայրերի բնակչությանը: Դրա վկայությունն է գաղութաբնակ հայ կամավորների ընդգրկումը ռուսական բանակի կազմում՝ ընդդեմ թուրքական զորքերի: Դրանով Մ. Ներսիսյանը ընդգծում է հայ ժողովրդի ազատագրական պայքարի համազգային բնույթը:*

*Հայ ժողովրդի ազատագրական շարժման կարևոր դրսևորումներից մեկը դիտելով նրա մասնակցությունը XIX դարի ռուս-թուրքական պատերազմներին, Մ. Ներսիսյանը բացահայտում է այդ մասնակցության բուն պատճառը՝ արևմտահայերի համար բարենպաստ հնարավորությունների ստեղծումը թուրքական լծից ազատագրվելու գործում, այդ հնարավորությունների իրացումը ռուսական զենքի հաղթանակների հետ կապելու ժողովրդի հավատը: Նա շրջանառության մեջ է դնում բազմաթիվ վավերագրեր, արդեն հայտնի և իր իսկ հայտնաբերած, անհերքելի լրատվություն պարունակող փաստաթղթեր՝ ներկայացնելով հայության համակողմանի մասնակցությունը 1828-1829, 1853-1856, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմներին: 1870-ական թթ. ազատագրական շարժումների կապակցությամբ Մ. Ներսիսյանը նույն հետևողականությամբ ի հայտ է բերում Զեյթունի, Վանի շարժումների, այլև կազմակերպությունների (Վանի՝ «Միություն ի փրկություն», 1872, Կարինի՝ «Պաշտպան հայրենյաց», 1881-1882 և այլն) գործունեության հետ կապված ուշագրավ փաստեր՝ առնչելով դրանք ծավալվող ազատագրական շարժումներին:*



*Ազատագրական շարժման բովանդակությունն ու ընթացքը բացահայտելիս հեղինակը բուն շարժմանն է համադրում նրա գաղափարախոսությունը և հոսանքները: Այս աշխատության մեջ ըստ ամենայնի մշակված է ժամանակի հայ պատմագրության համար բոլորովին նոր և արժեքավոր՝ ազատագրական շարժման ժամանակագրությունը՝ XVIII դար, XIX դարի առաջին կես և դրանցից որակապես տարբերվող՝ XIX դարի երկրորդ կես: Այս վերջին փուլի որակական առանձնահատկություններն էին՝ առավել աչքի ընկնող մարտական բնույթը, ժողովրդի զանգվածների մեջ թողած լայն արձագանքները և գործնական ու քաղաքական որոշակի հետևանքները: Հետագոտական այս կտրվածքով էլ համադրվում են հայ ազատագրական շարժման գաղափարախոսների հայացքները և հայ իրականության մեջ նրանց թողած լուրջ ազդեցության երևույթը: Աշխատության լայն ընդգրկումներից ելնելով, Մ. Ներսիսյանը բնորոշ գծերով է ներկայացրել նաև ժամանակի արևմտահայ և արևելահայ պարբերականները («Հյուսիսափայլ», «Արծվի Վասպուրական», «Մեղու», «Ծաղիկ», «Մշակ» և այլն)՝ բացահայտելով դրանց տեղն ու դերը ազատագրական շարժման քարոզչության մեջ:*

*Մ. Ներսիսյանը գյուղացիական-դեմոկրատական հոսանքի բնութագրական գիծն է համարում ազատագրության հարցը գյուղացիության շահերի տեսանկյունից ըմբռնելը, այդ հարցը ազգային և սոցիալական միասնության մեջ համատեղելը: Այս հոսանքը (Մ. Նալբանդյանի և նրա համախոհների ղեկավարությամբ) մերժում էր Արևմտյան Հայաստանը Եվրոպայի օգնությամբ ազատագրելու գաղափարը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը առնչում էր ռուսական հեղափոխական շարժման հետ: Մյուս՝ բուրժուա-ազգայնական հոսանքը, ինչպես նկատում է Մ. Ներսիսյանը, ի հայտ էր բերում ազատագրական շարժմանը ազգային վերնախավի շահերին համապատասխան ընթացք տալու մտայնություն և այդ ընթացքի ուղղությունն ու նպատակների իրագործումը կապում էր բացառապես Թուրքիայում եվրոպական քաղաքականության կամ դրա*

միջամտության հետ: Վերլուծության են ենթարկվում այս հոսանքի ներկայացուցիչների քաղաքական ծրագրերի ոչ հետևողականությունն ու ոչ արմատականությունը:

Աշխատության մեջ ազատագրական շարժումների կողմնորոշումների հիմնահարցը դիտարկվել է նաև դրանց հիմնավորվածության տեսանկյունից: Փաստական հարուստ տվյալներով են բացահայտվում արևմտյան տերությունների իրական դերը հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարցում: Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի քաղաքականությունը Թուրքիայում առաջնորդվել է իրենց սեփական շահերով, որոնք քողարկվել են Թուրքիայի ամբողջականության պաշտպանի կեղծավոր կեցվածքով: Անկախ դիվանագիտական վայրիվերումներից, ինչպես ցույց է տալիս Մ. Ներսիսյանը, նրանք պաշտպանել են սուլթանական բռնապետությունը և թշնամական դիրք գրավել ազատագրական շարժումների նկատմամբ: Նա եզրակացնում է, որ Արևմուտքի այս հետադիմական դիրքորոշումը շարժման դեմ ոչ միայն խոչընդոտեց վերջինիս զարգացումն ու հաջողությունը, այլև օգնեց սուլթանական կառավարությանը բնաջնջելու արևմտահայ բնակչությանը:

Մ. Ներսիսյանը անվերապահորեն ընդունում է, որ ազատագրական շարժումն ուներ ռուսական կողմնորոշում, ընդ որում, նա այս հանգամանքը համարում է շարժման հիմնական ու բնորոշ կողմերից մեկը: Արևմտահայերի ռուսական կողմնորոշումը դրսևորվել է ոչ միայն ժողովրդի՝ Ռուսաստանի օգնությամբ թուրքական բռնապետությունից ազատագրվելու, այլև հայ երկու խոշոր հատվածների՝ ազատագրական շարժման ղեկավար գործիչների նույն համոզմունքն ունենալու իրողություններով:

Հայ-ռուսական քաղաքական ու տնտեսական հարաբերությունների թեման Մ. Ներսիսյանը հետագա մշակման է ենթարկել իր մի շարք աշխատություններում՝ այն հարստացնելով տեսական նոր եզրահանգումներով և փաստավավերագրական տվյալներով:

Մ. Ներսիսյանին զբաղեցնող հիմնահարցերում քննության է առնվել արդի հայագիտական միտքը հուզող՝ հայերի կոտորածներն ու ցեղասպանությունը ժխտող թուրքական պատմաբանների կեղծարարության բացահայտումը, հայերի արտաքին քաղաքական կողմնորոշման, ազատագրական շարժման XX դարի առաջին տասնամյակների դրսևորումները և այլն: Գրքում հիմնավորապես հերքվում են թուրք պատմաբաններ Է. Ուրասի, Բ. Շիմշիրի, Ի. Ուզունչարշըլըի, Օ. Բարքանի, Թ. Գյոքբիլգիի, Ս. Քոչաշի, Ք. Կարպատի և սրանց համախոհների՝ տասնամյակներ ի վեր խնամքով հյուսած առասպելը՝ սուլթանների կողմից Ասիայի ու Եվրոպայի երկրնե-



րում իբր օրինականություն հաստատելու, հպատակ ժողովուրդների մեջ «քաղաքակիրթ առաքելություն» իրականացնելու վերաբերյալ: Ցույց է տրվում, որ թուրքական պատմագիտական միտքը դեռևս 1930-ական թթ. սկսած կատարում է պանթուրքիզմի գաղափարական պատվերը՝ առաջնորդվելով բացառապես քաղաքական հրահանգներով: Մ. Ներսիսյանի քննադատական այս դիրքորոշումը վերաբերում է նաև Արևմուտքի մի խումբ արևելագետ պատմաբանների, որոնց ակնհայտ շինծու դիրքորոշումն այս հարցում չի սպառվում սոսկ գաղափարական շահախնդրություններով, այլև մեծ մասամբ մատնում է նյութական բավարարված նախասիրություններ: Հայոց պատմության կեղծարարների այս շարքի մեջ Մ. Ներսիսյանը բացահայտել է նաև քաղաքական խարդավանքներ հրահրող ադրբեջանական մերօրյա կեղծ տեսությունները:

Իր գիտական գործունեության վերջին շրջանում՝ 1990-ական թթ. ևս, Մ.Ներսիսյանը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում արխիվային փաստաթղթերի և վավերագրերի հրապարակմանը (որոնց, ի դեպ, նա միշտ էլ բացառիկ նշանակություն է տվել պատմական իրողությունների ճշմարտացի լուսաբանման գործում), դրանց կցելով սեփական եզրակացությունները: Պատմական վավերագրերի նշանակության ընդգծումով Մ.Ներսիսյանը ինչ-որ տեղ նկատի ուներ մեզանում ևս աշխուժացած կողմնակալ, երբեմն՝ պատեհապաշտության մղումով ազատագրական շարժումները և պատմական այլ իրողությունները «նորովի» գնահատող օրապակաս տեսակետները: Իր շատ ուշագրավ և վերջին հարցազրույցներից մեկում նա անդրադառնում է տագնապալի այս հանգամանքին. «Ոմանք հեղինակներ, հանդես բերելով բացահայտ անգիտություն, փորձում են վարկաբեկել մեր ժողովրդի վերջին դարերի ազգային-ազատագրական շարժումը, նրա փայլուն ներկայացուցիչներին՝ Իսրայել Օրուն, Խաչատուր Աբովյանին, Ներսես Աշտարակեցուն, զորավար Անդրանիկին և ուրիշներին: Դեռևս կան «գիտուններ», որոնք խոսելով XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին թուրքական բռնապետության դեմ ծավալված հայ ազատագրական շարժման մասին, աշխատում են ինչ-ինչ նկատառումներով ժխտել, նսեմացնել հայ ազգային քաղաքական կուսակցությունների՝ դաշնակցության, հնչակյանների ու արմենականների գործուն մասնակցությունը և ղեկավար դերը այդ ժողովրդական պայքարում»:

Մ. Ներսիսյանի այս աշխատության մեջ թուրքական բռնապետության դեմ ազատագրական պայքարը արժեքավորվում է որպես հայ ժողովրդի գոյատևման հզոր միջոց, դարերի ընթացքում նրա ինքնությունը պահպանող կենսաձև: Եվ նա յուրովի իր ավարտին է հասցրել ազատագրական պայքարի էպոպեան՝ ստեղծելով կառուցիկ և պատմականորեն

տրամաբանված մի հայեցակարգ, որը ուրույն և անվիճելիորեն բարձր որակ է հայ պատմագրության մեջ:

* * *

Ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ. 1850-1890» գրքի սույն վերահրատարակությունը նախորդ՝ 1955 թ. հրատարակության հետ համեմատած, ունի էական տարբերություններ: Հեղինակը հետազոտության շրջանակները հասցրել է մինչև XIX դարի վերջը: Այնուհետև, գրել է նոր նախաբան՝ համապատասխան գրականության տեսությամբ: Ավելացրել է 3 նոր գլուխ: Որակական փոփոխությունների է ենթարկել աշխատության գրեթե բոլոր գլուխները, դրանց մեջ մտցվել են նոր թեմաներ և ենթաթեմաներ: Ավելացվել են բոլոր գլուխների ծանոթագրությունները: Ամբողջովին նորացվել է և հարստացվել գրքի մատենագիտական ցանկը: Մեծ մասամբ նորացվել է վավերագրական նյութերի բաժինը, փոփոխվել կամ հագեցվել նոր վավերագրերով և փաստաթղթերով:

Աշխատությունը արդիական բնույթ է ստացել ոչ միայն իր նպատակաուղղվածությամբ, այլև վերջին տասնամյակներին թեմային առնչվող գրականության ընդգրկմամբ, պատմագիտական նոր հայեցակարգերի հաշվառմամբ: Մ. Ներսիսյանը հավելումները, ուղղումները և լրացումները իրականացրել է անձամբ, իսկ որոշ փոփոխություններն արվել են իր թողած բազմաթիվ գրառումների, հատվածական շարադրանքների և դիտողությունների հիման վրա:

Աշխատությունը հագեցվել է գիտնականի արժեքավոր ժառանգության մեջ առկա կարևոր գրառում-դիտարկումներով, որոնք, հեղինակի մտահղացմամբ, պետք է մտնեին սույն հրատարակության մեջ, որ և իրականացրել է Ն. Դերոյանը: Իր ամբողջության մեջ աշխատությունը կրել է որակական կարևոր փոփոխություններ:

Պատմագիտության դոկտոր, պրոֆ.
Ա. Ա. Խառատյան

## ՆԱԽԱԲԱՆ

Թուրք-օսմանյան պետությունը, որը կազմավորվեց XIII դարի վերջերին - XIV դարի սկզբին Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան տարածքում, սկզբից ևեթ ուներ բացարձակ բռնապետական, ռազմաավատատիրական բնույթ և նրա մշակույթը դեռևս չէր տարբերվում սելջուկյան քոչվոր ցեղերի ցածրակարգ մշակույթից: Իշխանության գլուխ անցած սուլթանները և ռազմիկ ավատատերերը իրենց նյութական ապահովության ու հարստության հիմնական աղբյուրը դարձրին նվաճողական արշավանքներն ու պատերազմները, օտար երկրների գրավումը և կողոպուտը, դրանց բնակչության և մասնավորապես «անհավատների» գերեվարությունը, ռազմատուգանքի և անասելի ծանր հարկերի բռնագանձումը: Պատահական չէ, որ Կարահիսարում դեռևս XIII դարի առաջին կեսին ձևավորված թուրքական ֆեոդալական իշխանությունը, որը հետագայում հանդիսացավ օսմանյան պետության հիմքը և նրա գլխավոր բաղկացուցիչ մասը, Կ. Մարքսը բնութագրել է որպես ավազակային կազմավորում*. «Գրեթե այդ նույն ժամանակ (1230-ական թթ. – Մ. Ն.) թուրք օսմանների հորդան ներխուժում է Փոքր Ասիա, ուր նրանք ամենից առաջ հիմնում են Կարահիսարի ավազակային պետությունը»[1]:

Թուրքական սուլթանների նվաճումների թալանչիական բնույթի մասին, ի թիվս բազմաթիվ այլ հայտնի հեղինակների, գրել է նաև ռուս հեղափոխական դեմոկրատ, մեծ մտածող Ն. Գ. Չեռնիշևսկին: «Թուրքերը, – նկատել է նա, – ապրել են միայն զավթումներով, սահմանների ընդլայնումն է եղել նրանց միակ նպատակը»: Նրանք մտածում էին միայն «թալանի, հարկերի և իշխելու մասին»[2]:

Օսմանյան պետության «հարստության գլխավոր աղբյուրը,– գրել է թուրքագետ Ա. Ֆ. Միլլերը,– նվաճված տարածքների կողոպուտն էր՝ ռազմական ավարի, ստրուկների և հարկերի ձեռքբերումը: Իրենց ամբողջ էներգիան, ուշադրությունը և ժամանակը թուրքերը նվիրում էին մարտունակ բանակ ստեղծելու և ամբողջ կայսրության մեջ ռազմական խիստ ռեժիմ պահպանելու գործին»[3]:

Անընդմեջ արշավանքների ու պատերազմների միջոցով օսմանյան զորքերը XIV-XVI դդ. գրավեցին Թրակիան, Բուլղարիան, Սերբիան, Ալ-

1 *Архив Маркса и Энгельса.* Под ред. В. Адоратского. Т. V, Политиздат, 1938, с. 223.

2 *Н. Г. Чернышевский.* Сочинения. Т. II, М., 1949, с. 604, 606-610.

3 *А. Ф. Миллер.* Краткая история Турции. М., 1948, с. 16.

*բանիան, Հունաստանը, Բոսնիան, Հերցեգովինան, Հունգարիան, իրենց ենթարկեցին Ղրիմը, Մոլդավիան, Վալախիան, Արևմտյան Վրաստանը:*

*Թուրքական սուլթանները խոշոր նվաճումներ կատարեցին նաև Փոքր Ասիայում ու Աֆրիկայում: XV-XVI դդ. նրանք գրավեցին Արևմտյան Հայաստանը, Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Իրաքը, Եգիպտոսը, Թունիսը և այլ երկրներ: Օսմանյան կայսրության սահմանները նրա հզորության ամենաբարձր շրջանում՝ XVI դարի երկրորդ կեսին, տարածվում էին Ալժիրից մինչև Իրան և Եմենից մինչև Հունգարիա:*

*Օսմանյան բռնագրավումները ամենուրեք կատարվում էին հրով ու սրով, անասելի կոտորածներով ու ասպատակություններով: Բերենք մի քանի օրինակ:*

*1393 թ., երբ թուրքական զորքերը գրավեցին Բուլղարիայի մայրաքաղաք Տռնովոն, այն, ինչպես վկայում է դեպքերի ականատեսը, ենթարկվեց ահավոր թալանի, ավերածության, տեղի ունեցան զանգվածային ջարդեր, հազարավոր մարդիկ գերի տարվեցին: «Քաղաքը և նրա շրջակայքը վերածվեցին ողբալի ավերածության»*[1]*:*

*Նշանավոր պատմաբան Ֆ. Շլոսսերը գրել է, որ թուրք և հույն պատմիչների վկայությամբ սուլթան Մուրադ II-ը 1430 թ. գրավելով Թեսալոնիկ քաղաքը, այն ավերի ու կողոպուտի ենթարկեց: «Տարբեր հասակի ավելի քան 7000 տղամարդկանց ու կանանց գերեվարեցին, բնակիչների ունեցվածքը թալանվեց, եկեղեցիներն ու վանքերն ավերվեցին»*[2]*:*

*Սարսափելի կոտորածներ, կողոպուտ ու գերեվարություն տեղի ունեցան 1453 թ. մայիսի 29-ին, երբ սուլթան Մեհմեդ II-ի հորդաները գրավեցին Կ. Պոլիսը և դրանով իսկ վերջ դրին Բյուզանդական կայսրության գոյությանը: Մի բնորոշ մանրամասն: Երկար ժամանակ չկարողանալով կոտրել Կ. Պոլսի պաշտպանների հերոսական դիմադրությունը, որին, ի դեպ, մասնակցում էին նաև հայեր, սուլթան Մեհմեդը հանդիսավոր խոստում տվեց իր զորքերին, որ հաջողության՝ այսինքն Կ. Պոլսի գրավման դեպքում, նրանց կթույլատրի երեք օր ու գիշեր բոլորովին ազատ ու անկաշկանդ կողոպտել այդ հարուստ ու շքեղ քաղաքը և գերեվարել նրա բնակիչներին, ինչքան ցանկանան և որքան կարողանան: Ընչաքաղց հորդաները վերջիվերջո հաղթեցին: Բյուզանդիայի հռչակավոր մայրաքաղաքում տեղի ունեցան անլուր վայրագություններ ու խժդժու-*

1 Византийский временник. Т. VII, М., 1953, с. 39.

2 *Ф. Шлоссер.* Всемирная история. Т. 9, СПб., 1861, с. 74.



*թյուններ***: Կատարվեցին զանգվածային ջարդեր, մեծ չափերի գերեվարություն, կողոպտվեց ամեն ինչ*[1]*:*

*Կ. Պոլսի հերոսական պաշտպանության մասնակից, ողբերգական դեպքերի ականատես, XV դարի հայտնի բյուզանդական տարեգիր Գեորգի Ֆրանձիսը (Սֆրանձիս) իր «Մեծ խրոնիկա» գրքում պատմում է, որ թուրքական զորքերը ներխուժելով քաղաք, անմիջապես սկսեցին կոտորածն ու թալանը, ընդ որում «մի շարք տեղերում դիակների թիվն այնքան շատ էր, որ հողը բոլորովին չէր երևում»*[2]*: Ամենուրեք լաց, հեկեկանք, կանանց, աղջիկների ու տղամարդկանց գերեվարում, տաճարների կողոպուտ, սրբապատկերների ոչնչացում և այլն: Հռչակավոր ս. Սոֆիա եկեղեցին բարբարոսաբար թալանելուց հետո, շարունակում է տարեգիրը, այնտեղ «թուրքերն ուտում, խմում էին և իրականացնում իրենց անառակ ցանկություններն ու տռփանքը կանանց, աղջիկների ու անչափահաս տղաների նկատմամբ… Ամենուրեք լսվում էին տղամարդկանց հառաչանքը, կանանց հեծկլտանքը: Մարդկանց բռնի բաժանում էին իրարից և քշում դեպի գերություն… Հրապարակներում, փողոցներում և բոլոր վայրերում կատարվում էին անօրինակ վայրագություններ»*[3]*:*

*Անգլիացի պատմաբան Ս. Ռանսիմենը «Կոնստանդնուպոլսի անկումը 1453 թվականին» աշխատության մեջ*** *հանգամանորեն խոսում է չլսված գազանությունների և ավերումների մասին, որ կատարեցին թուրքական զորքերը Կ. Պոլիսը գրավելուց հետո: Հեղինակը գրում է. երբ թուրքական զորքերը ներխուժեցին քաղաք, «բոլորը անմիջապես նետվեցին ավարի համար վայրենի որսի: Սկզբում դեռևս չհավատալով, որ դիմադրությունն արդեն դադարել է, նրանք սպանում էին բոլորին… Արյան հեղեղներ էին հոսում Կոստանդնուպոլսի զառիվայր փողոցներով… քաղաքի կողոպուտը շարունակվեց ամբողջ օրը… Բնակիչների բոլոր տները ենթարկվեցին թալանի»*[4]*:*

*Բնորոշ է, որ Կ. Պոլսի գրավման ժամանակ բարբարոսները գրեթե իսպառ ոչնչացրեցին բյուզանդական մայրաքաղաքի շատ հարուստ հուշարձանները: Անգամ թուրքասեր Հելմուտ ֆոն Մոլտկեն (19-րդ դարի գերմանական հայտնի զորավար) գրել է, որ հիշված հազարավոր հուշարձանների մի մասից «այժմ չի մնացել ոչ մի հետք», իսկ մյուս մասից «պահպանվել են միայն շատ քիչ ավերակներ»:*

1 Византийский временник. Т. VII, с. 422.

2 Նույն տեղում, էջ 428:

3 Նույն տեղում, էջ 429:

4 *С. Рансимен.* Падение Константинополя в 1453 году. М., 1983.

Կ. Պոլսի անկումից երկու տարի հետո՝ 1455 թ. սերբական Նովո Բրդո քաղաքն առանց դիմադրության հանձնվեց օսմանյան զորքերին՝ բնակիչների կյանքը խնայելու պայմանով, բայց սուլթանը դրժեց իր խոստումը. նրա հրամանով քաղաքը կողոպտվեց, տղամարդիկ ոչնչացվեցին, իսկ 320 պատանիներ և 700 կանայք որպես գերի հանձնվեցին դաժան սուլթանին և նրա մերձավորներին:

1458 թ. հուլիսին, սուլթանական զորքերը գրավելով Պելոպոնեսը, գրել է Կ. Մարքսը, կազմակերպեցին կոտորած, անմարդաբնակ դարձրին երկիրը, գերի տարան բնակիչներին: Ընդհանրացնելով իր խոսքը, Մարքսը այնուհետև նշել է, թե թուրքերը «հրի ու սրի էին մատնում քաղաքներն ու գյուղերը... կատարում էին վայրագություններ՝ մարդակերների նման»[1]:

Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված իր բազմահատոր աշխատության մեջ ավստրիացի գիտնական ու դիվանագետ Համմերը բերում է շատ փաստեր ու տեղեկություններ թուրքական զորքերի ավերիչ արշավանքների ու անօրինակ դաժանությունների մասին:

Թուրքիայի պատմության նշանավոր մասնագետ Ա. Ս. Տվերիտինովան, որ մանրամասնորեն ուսումնասիրել է օսմանյան աղբյուրները, իրավամբ գրել է. «Մենք գիտենք, որ թալանը, հողերի գրավումը, զանգվածային գերեվարությունը թուրքական արշավանքների գլխավոր շարժառիթն էին: Սկզբնաղբյուրների հիման վրա ծանոթանալով թուրքերի կողմից Բալկանյան թերակղզու երկրների նվաճման պատմությանը, մեր առջև պարզվում է սարսափելի տեսարան: Ցուրաքանչյուր արշավանք, Սերբիայի, Բոսնիայի, Բուլղարիայի և մյուս երկրների յուրաքանչյուր քաղաքի ու գավառի գրավումը ուղեկցվում էր բնակչության մի մասի կոտորածով և մյուսի կողոպուտով, բնակավայրերի ավերումով և տասնյակ հազարավոր մարդկանց գերեվարումով ու նրանց ստրկացմամբ: Ամեն մի արշավանքի նկարագրությունը սկզբնաղբյուրներում միշտ ավարտվում է հետևյալ խոսքերով. «Ողջ շրջապատը ամայացնելով՝ զինվորները տիրացան անթիվ, անհամար ավարի» կամ «Վերադառնալով արշավանքից, մենք մեզ հետ տանում էինք անհաշիվ ավար, գերիներ և կտրված գլուխներ»[2]:

1 *Архив Маркса и Энгельса.* Под ред. М. Б. Митина. Т. VII, Политиздат, 1940, с. 202, 215.

2 *А. С. Тверитинова.* Фальсификация истории средневековой Турции в кемалистской историографии.– Византийский временник. Т. VII, с. 23-24.



Նույն բնույթի էին օսմանյան արշավանքները նաև Փոքր Ասիայում, Անդրկովկասում և այլ շրջաններում: Այսպես, 1512 թ. Արևմտյան Վրաստանում (Իմերեթիայում) օսմանյան զորքերի կատարած դաժանությունների մասին վրաց պատմիչ Վախուշտի Օրբելիանին գրել է, որ թուրքերը կրակի տվեցին, ավերեցին ու ոչնչացրին Քութայիսը, գերեվարեցին ում որ գտան:

Նկարագրելով օսման թուրքերի ասպատակությունները Անդրկովկասում, մասնավորապես Հայաստանում 1553 թ., սուլթանների պալատական տարեգիր-պատմիչներից մեկը՝ Իբրահիմ Փեչևին, որպես ժամանակակից և ականատես, գոհունակությամբ արձանագրում էր, որ թուրքական «հաղթական բանակը», գրավելով Հայաստանի Շորագյալ (Շիրակ) գավառը, «ամբողջությամբ ավերեց և հողին հավասարեցրեց գավառի գյուղերը և բոլոր շինությունները»: Երևանում ամեն ինչ «կրակի տվին, այրեցին ու հողին հավասարեցրեցին»: Մտնելով Նախիջևանի դաշտ, սուլթանական զորքերը, գրում է Փեչևին, «գյուղերն ու ավանները, դաշտերն ու շինություններն այն աստիճան քանդեցին ու ավերեցին, որ շինության և կենդանության հետքն անգամ չմնաց»[1]: Այնուհետև, խոսելով 1578 թ. արշավանքի մասին, նույն պատմիչը գրում էր, որ թուրքական զորքերը կողոպտեցին ու թալանեցին Երևան քաղաքն ու երկիրը և «20 հազարից ավելի կանանց ու երեխաների գերի տարան»[2]:

Մի այլ թուրք պատմիչ՝ Չելեբի Զադե էֆենդին, նկարագրելով Գյանջայի (Գանձակի) գրավումը օսմանյան զորքերի կողմից 1725 թ., նույնպես հպարտությամբ նշում էր. սուլթանական բանակի «փառապանծ դրոշակը ծածանվեց քաղաքում. առյուծանման ղազիները անհավատ ռաֆըզիների արյունով քաղաքի փողոցներն ու շուկաները ներկեցին և այդ անհավատների՝ շարիաթի սրով թափած արյունը Ջիհուն գետի նման հոսեցրին»[3]: Օսմանյան զորքերի՝ դեպի Անդրկովկաս կատարած բազմաթիվ արշավանքների ժամանակ կոտորածների ենթարկվեցին ու մեծ տառապանքներ կրեցին հայ, վրաց ու մահմեդական ժողովուրդները*:

Հարուստ տեղեկություններ են պարունակում նաև հայկական աղբյուրները: Սուլթանական բանակի՝ Անդրկովկաս կատարած 1581 թ. արշավանքի հայ ժամանակակիցներից մեկը, օրինակ, արձանագրել է, որ թուրքական զորքերը «զբաղում քաղաքս և զգեղս և զգաւառս աւերեալ քանդեցին. զարսն սրով սպանին, զկանայսն և զտղայսն գերի վարեցին և

1 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Ե., 1961, էջ 33-34:

2 Նույն տեղում, էջ 46-47:

3 Նույն տեղում, էջ 155:

*այնչափ անողորմ բան արարին, զի զողայսն որորանով կալեալ և ընկեցին ի վառեալ թոնիրն ի մէջ կրակին... և ոմանք հարկանէին զողայսն ի ծայրն նիզակացն և վերացուցեալ զնիզակսն տընկէին զմիւս ծայրն ի գետին, և տղայքն ի վայրի ծայրն աղաղակէին և ճչային, թալկանային և ի սաստկութենէ ձմեռանն սառեալ մեռանէին: Եւ այլ բազում ազգի ազգի հնարս գործեցին, զի ոչ կարեմք պատմել և ոչ զաղէտսն ընդ գրով արկանել»*[1]*:*

*Այսպիսով բյուզանդական, հունական, թուրքական, հայկական, բուլղարական, սերբական և մյուս ժողովուրդների սկզբնաղբյուրներում, գիտական գրականության մեջ բերված հարուստ ու անհերքելի փաստերը սպառիչ կերպով պատկերում են օսմանյան պետության արշավանքների թալանչիական, բարբարոսական բնույթը, արշավանքներ, որոնց հետևանքով ավերվեցին ու ասպատակվեցին շատ երկրներ և պատմական մեծ ողբերգություն ապրեցին բազմաթիվ ժողովուրդներ:*

*Նվաճված երկրներում օսմանյան սուլթանները հաստատեցին բռնի ստրկացման, դաժան ճնշումների ու հարստահարությունների ռեժիմ: Այդ երկրներում հաստատված օսմանյան կառավարման համակարգը, նշել է Կ. Մարքսը, ստեղծվել էր ոչ այլ կերպ, եթե ոչ «ռազմական զավթիչների դասակարգի» կողմից*[2]*:*

*Հպատակ երկրներում օսմանյան պետությունը կիրառում էր բացարձակ բռնության և անլուր կեղեքումների քաղաքականություն՝ ռազմաֆեոդալական շահագործում, սոցիալական անասելի կեղեքում, արտատնտեսական ճնշման ամենավայրենի ձևեր, ազգային և կրոնական բարբարոսական հալածանքներ ու հարստահարություններ: Օսմանյան կայսրության ժողովուրդների ծանր վիճակի մասին ահա թե ինչ է գրել XVII դարի թուրք պատմիչ տարեգիր Կոչի բեյը. «...աղքատ ռայաների նկատմամբ ներկայումս կիրառվող ճնշումներն ու բռնությունները տեղի չեն ունեցել ոչ մի ժամանակ և ոչ մի տեղ... Ռայաները ինչպե՞ս կարող են տանել այս բռնությունները: Երկրի ժողովուրդները ինչպե՞ս կարող են ապրել այս պայմաններում»*[3]*: Պատմագիր Ահմեդ Ջևդեթ փաշան, որի տրամադրության տակ եղել են սուլթանական արքունիքի արխիվային շատ նյութեր և պաշտոնական այլ փաստաթղթեր, Օսմանյան կայսրության մեջ XVI-XVIII դդ. ստեղծված ծանր դրության մասին գրել է.*

1 Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, կազմ. Վ. Ա. Հակոբյան, Ե., 1956, էջ 251:

2 *К. Маркс и Ф. Энгельс*. Сочинения. Изд. второе, Т. 9, М., 1957, с. 35.

3 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, կազմեց Ա. Խ. Սափրաստյան. Ե., 1964, էջ 230:



*«...որոշ ժամանակից ի վեր բռնությունների ու անիրավությունների ամեն սահմանը անցել էր և օսմանյան կայսերական երկրում ռայաները մեծ թշվառության էին ենթարկվել, իրենց երկիրն ու հայրենիքը թողնելով՝ ցիրուցան եղել: Դրանով երկիրն ավերվել՝ ագռավների ու բուերի բնի էր վերածվել»*[1]*: Երկրի այս աստիճան ավերվածության պատճառը, ավելացնում էր Ջևդեթ փաշան, ոչ միայն պատերազմներն էին, այլև շատ ծանր հարկերը, որոնք գանձվում էին ամենայն բռնությամբ ու դաժանությամբ:*

*Դժոխային վիճակը շարունակվեց նաև հետագա դարերում: 1803 թ. Հունաստանից գրում էին. «Փաշաներից սկսած մինչև Բ. Դռան բոլոր պաշտոնյաները, որոնց հանձնարարված է կառավարել այս գավառները, մշտապես կատարում են աղաղակող անարդարություններ, զբաղվում են միայն նրանով, որ բնակիչներին կողոպտում և ենթարկում են տառապանքների ու բռնությունների»*[2]*: Ռուսական հյուպատոս Մ. Յա. Մինչակին 1815 թ. տեղեկացնում էր, որ Մորեայի բերդերում տեղավորված թուրքական կայազորների զինվորները «թալանում ու սպանում են և բոլորը մնում են անպատիժ: Այստեղ գոյություն չունի ո՛չ իշխանություն, ո՛չ օրենք»*[3]*:*

*Նույն պատկերը մենք տեսնում ենք նաև Արևմտյան Հայաստանում, ուր XVI դարում երկարատև ու ավերիչ արշավանքներից հետո իրենց տիրապետությունը հաստատեցին թուրքական սուլթանները: Ազգային ճնշումները, հարստահարությունները, կողոպուտը և թալանը այստեղ ևս ստացան ծայրահեղորեն այլանդակ ձևեր: Պատահական չէ, որ XVII-XVIII դդ. հայ պատմիչները, ժամանակագիրներն ու հիշատակարանների հեղինակները ողբում էին իրենց ժամանակի դառն իրականությունը: Իր ուղեգրական նոթերի մեջ լեհահայ Սիմեոն դպիրը (XVII դ.), օրինակ, գրում էր, թե արևմտահայերը ենթարկվում են բազմապիսի ծանր տառապանքների, «վասն որոյ յոյժ աղքատ և չքաւոր են, զի միշտ զրկեն, զզվեն, տուգնեն, զրպարտեն և առաւել հարկս պահանջեն... ամէն տեղ թալան և եաղմայ և զուլում»*[4]*: Նույն դարի մի այլ ժամանակագիր բացականչում էր. «Արդ զնեղութիւն և զդառնութիւն վշտաշատ ժամանակիս ո՞վ կարէ ընդ գրով արկանել, ո՛վ եղբարք»*[5]*:*

1 Նույն տեղում, հ. Ա, էջ 277:

2 *Г. Арш*. Этеристское движение в России. Освободительная борьба греческого народа в начале XIX в. и русско-греческие связи. М., 1970, с. 48.

3 Նույն տեղում, էջ 44:

4 *Սիմէոն դպրի Լեհացւոյ* Ուղեգրութիւն. Վիեննա, 1936, էջ 194:

5 Մատենադարան, ձեռ. 2776, էջ 266բ:

*ժողովրդի ծանր դրության մասին Հակոբ Կարնեցին հայտնում էր. «Հարկապահանջութիւնն և կեղեքելն անասելի է և անպատմելի»[1]: 1760 թ. Լիմ անապատում գրված մի ձեռագրի հիշատակարանում ասված է. «Ի դառն և ի նեղ ժամանակիս, որ յամենայն կողմանէ նեղիմք յանօրինաց հարկապահանջութենէ, ի սպանութենէ, ի գերութենէ և յայլ անասելի և անպատմելի պատուհասէ»[2]:*

*Ավելի ուշ, 1805 թ., Արևմտյան Հայաստան այցելած ֆրանսիական դիվանագետ Պ. Ա. Ժոբերը Բայազետի փաշայությունում տիրող վիճակի մասին գրել է. «Ի զուր հողագործը այնտեղ սերմեր է ցանում, հունձքը խլում են չհասունացած: Նա ստիպված է լքել այդ դաշտերը, փախչել ընտանիքով և հոտերով, ազատվելու ավազակների կատաղությունից և նահանգում իշխող փաշաների հարստահարություններից: Այսպես, այդ դժբախտ երկրում գոյություն չունի ո՛չ հայրենիք, ո՛չ ապահովություն, ո՛չ հանգիստ»[3]:*

*Օսմանյան պետության նվաճած երկրները տնտեսության և մշակույթի խիստ անկում, համընդհանուր դեգրադացիա ապրեցին:*

*Թուրքական տիրապետության հետևանքով, գրել է ռուս պատմաբան և հրապարակախոս Սերգեյ Գլինկան, բոլոր գրաված երկրներում թուրք-օսմանները ստեղծում էին ոչ թե քաղաքական ու քաղաքացիական հաստատություններ, այլ «միայն ռազմական ճամբարներ: Ամենուրեք, ուր փայլատակում էր նրանց սուրը, այնտեղ միշտ էլ հնչում էր ստրկության շղթաների շառաչյունը»[4]: Երբ օսմանյան բռնապետությունը հաստատվեց Առաջավոր Ասիայում, նշել է Վալերի Բրյուսովը, ապա այդ աշխարհամասի վրա «իջավ բարբարոսության և տգիտության թանձր խավարը»[5]:*

*Օսմանյան տիրապետության բերումով նույն վիճակը ստեղծվեց նաև մյուս երկրներում: Բալկանյան երկրների պատմության մասնագետ Ի. Ս. Դոստյանը գրել է, որ օսմանյան պետությունը բուլղար ժողովրդին դատապարտեց անհույս ստրկության: «Թուրքական նվաճողները զրկելով բուլղար ժողովրդին անկախությունից, խախտեցին պատմական զարգացման նորմալ ընթացքը, կասեցրին Բուլղարիայի արտադրողական ուժերի զարգացումը: Մի քանի դար տևող թուրքական տիրապետությունից հե-*

1 Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 545:
2 Մատենադարան, ձեռ. 4982, էջ 349ա:
3 *Հովհ. Հակոբյան.* Ուղեգրություններ. հ. Ձ, Ե., 1934, էջ 150:
4 *С. Глинка.* Картины исторические и политические. М., 1840, с. 108.
5 *В. Я. Брюсов.* Летопись историческиx судеб армянского народа. Е., 1969, с. 147.



*տո բուլղար ժողովուրդը տնտեսապես ու քաղաքականապես դարձավ Եվրոպայի ամենահետամնաց ժողովուրդներից մեկը»[1]:*

*Վերը հիշված թուրքագետ Ա. Ս. Տվերիտինովան իր բազմաթիվ ուսումնասիրությունների հիման վրա հանգել է այն ճշմարիտ եզրակացությանը, որ բոլոր առումներով «թուրքական տիրապետությունը մեծագույն աղետ էր նվաճված երկրների համար»[2]: Մի այլ կապակցությամբ նա գրել է. «Թուրքական արշավանքները ուղեկցվում էին քաղաքների ու գյուղերի սարսափելի ավերածությամբ, նյութական ու մշակութային արժեքների կողոպուտով, հարյուր հազարավոր խաղաղ բնակիչների գերեվարությամբ: Թուրքական լծի տակ ընկած բալկանյան, կովկասյան, արաբական և մյուս ժողովուրդների համար այդ արշավանքները ճակատագրական աղետ էին, որ երկար ժամանակ արգելակեցին բազմաթիվ ժողովուրդների տնտեսական ու մշակութային զարգացումը»: Հայտնի է, որ ի պատասխան դաժան ճնշումների ու հարստահարությունների, օսմանյան լծի դեմ բռնկվեցին ազատագրական շարժումներ գրեթե բոլոր նվաճված երկրներում:*

*Հայաստանում ծավալված ազատագրական պայքարի մեջ պատվավոր տեղ է գրավում այն շարժումը, որ տեղի ունեցավ 1720-ական թթ. Սյունիքում՝ Դավիթ-Բեկի առաջնորդությամբ: Այս պայքարի շնորհիվ էր, որ Սյունիքում (Ղափանում) պարսկական տիրապետության դեմ տարած հաղթանակից հետո ստեղծվեց հայկական ինքնուրույն իշխանություն: 1725 թ. այստեղ ազատագրական պայքարն ուղղվեց թուրքական նվաճողների դեմ: Մի քանի կռիվներից հետո Դավիթ-Բեկն ամրանում է Հալիձորի նշանավոր բերդում, որը հսկայական ուժերով պաշարում է թշնամին: Հայկական զորամասն անցնում է ակտիվ պաշտպանության: Անհավասար կռիվների ընթացքում հայ մարտիկները դուրս գալով բերդից, հանկարծակի հարձակում են գործում թշնամու վրա, որը ջախջախվելով՝ հարկադրվում է վերացնել պաշարումը և հետ քաշվել: Հալիձորի և առհասարակ, 1720-ական թթ. ազատագրական կռիվների մասին պատմում է հայերի ղեկավար գործիչներից մեկը՝ Ստեփաննոս Շահումյանը իր հայտնի աշխատության[3] մեջ:*

*Հալիձորի, այնուհետև, Մեղրիում թուրքերի դեմ տարած հաղթանակներից հետո Սյունիքի ազատագրական շարժումը հասավ իր հաջողություն-*

1 История Болгарии. Т. I, М., 1954, с. 163.
2 *А. С. Тверетинова,* Фальсификация истории средневековой Турции...,– Византийский временник. Т. VII, с. 25.
3 *Ստեփաննոս Շահումեան.* Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին և պատերազմացն Խափանու. Վաղարշապատ, 1871:

ների գագաթնակետին: 1730 թ., ապստամբության ղեկավարների վախճանից հետո, ազատագրական շարժումը Սյունիքում թուլացավ և պարտվեց:

1720-ական թթ. ազատագրական շարժման պատմության մեջ հիշարժան դրվագներ են գրել նաև Երևանի, Լոռու, Գանձակի և այլ վայրերի հայ բնակիչները: Երկարատև ու առանձնապես հերոսական էր Երևանի պաշտպանությունը, որը սկսվեց 1724 թ. ապրիլի սկզբներին և տևեց 60 օր: Երևանում պաշարված բնակչությունը հաջողությամբ հետ էր մղում օսմանյան զորամասերի անընդհատ հարձակումները: Միայն հունիսի 7-ին, օժանդակ ուժերով համալրվելուց հետո, թուրքերը կարողացան ներխուժել քաղաք և գրավել այն: Այդ կռիվներում թուրքերը կորցրեցին շուրջ 20000 զինվոր, պաշարվածներից սրի քաշվեց 10000 մարդ: Թուրքերի դեմ հայերի հետ միասին կռվում էին նաև Երևանի բերդի պարսկական կայազորը և քաղաքում բնակվող հայ բոշաները: Երևանի հերոսական պաշտպանության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ կան Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն» աշխատության մեջ:

Ազատագրական պայքարի պատմության մեջ հերոսական էջեր գրանցեցին Արցախի հայրենասերները: 1725 թ. նրանք ևս նշանակալի հաղթանակներ տարան թուրքական նվաճողների դեմ: 1726 թ. նոյեմբերին սղնախների ջոկատներն ու գյուղացիությունը թուրքական 40000-անոց զորքի դեմ մղած ութօրյա ճակատամարտերում հյուծեցին նրան և հարկադրեցին բռնել նահանջի ճանապարհը: Օսմանյան զորամասերն Արցախում խոշոր պարտություն կրեցին նաև 1727 թ. հուլիսին: Սակայն հետագայում, հուսահատության և ներքին տարաձայնությունների պայմաններում հայկական զորամասերն այստեղ կազմալուծվեցին: Արցախը ևս ընկավ թուրքական տիրապետության տակ, թեև այդ տիրապետությունը շուտով ձևական պետք է դառնար: Ապավինած իրենց լեռներին՝ արցախցիները տարերային պայքար էին վարում թշնամիների դեմ: Հայ զինվորականների մի մասն անցավ Ռուսաստան, ծառայության մեջ մտավ ռուսական բանակում:

XV-XVIII դդ. տեղի ունեցան բազմաթիվ ելույթներ ու ապստամբություններ Բուլղարիայում, Սերբիայում, Հունաստանում, Հայաստանում, Ալբանիայում և այլուր: XIX դարի սկզբին, երբ մի կողմից ավելի էր քայքայվում թուրքական ռազմաֆեոդալական պետությունը, իսկ մյուս կողմից բուրժուական հարաբերությունների զարգացման հետևանքով Օսմանյան կայսրության մի շարք երկրամասերում տեղի էր ունենում ազգային միավորման և վերածննդի գործընթացը, ծայր առավ ժողովրդական, ազգային-ազատագրական շարժումների մի նոր, հզոր ալիք: 1804 թ. սկսվեց սերբ ժողովրդի ազատագրական պայքարը, 1821 թ. զինված ապստամբություն բարձրացրին հույները, 1860-ական թթ. տեղի ունեցան ապստամբական շարժումներ Չեռնոգորիայում, Կրետեում, 1875 թ.՝ Բոսնիայում և Հերցեգովինայում, 1876 թ. Բուլղարիայում և այլուր: 1860-1890-ական թթ. բազմիցս զենքի դիմեցին նաև արևմտահայերը և արաբները: Այսպիսով, օսմանյան լծի տակ տառապող գրեթե բոլոր ժողովուրդները ոտքի կանգնեցին իրենց ազատության, Շիլլերի խոսքերով ասած, իրենց «հավիտենական իրավունքները» ձեռք բերելու համար.



Երբ որ ճնշվածն այստեղ, աշխարհում
Դատ ու իրավունք բնավ չի գտնում,
Երբ որ բռնության լուծը գարշելի
Դառնում է ստրկին անհանդուրժելի,
Նա իր ձեռքերը երկինք է մեկնում
Եվ վստահորեն այնտեղից խլում
Իր իրավունքներն հավիտենական*:

Օսմանյան սուլթանները, սակայն, իրենց ողջ ռազմական ուժն ուղղեցին ազատության և անկախության համար պայքարող ժողովուրդների դեմ: Նրանք փորձեցին հրի ու սրի միջոցով արյան մեջ խեղդել ազատագրական այդ շարժումները: Թուրքական զորքերը կազմակերպեցին զանգվածային կոտորածներ, ավերեցին անթիվ գյուղեր և քաղաքներ, գերեվարեցին մեծ թվով բնակիչների, կատարեցին ամեն տեսակ բարբարոսություններ: Բնորոշ է, օրինակ, որ երբ թուրքական զորքերը 1822 թ. ապրիլի 11-ին ներխուժեցին ապստամբության դրոշ բարձրացրած հունական Քիոս կղզին, ապա ինչպես գրում է պատմաբան Ե. Ֆեոկտիստովը, տեղի ունեցան «կողոպուտի, կոտորածների ու բնաջնջման սովորական տեսարաններ: Բնակչությունը փորձում էր փրկվել վանքերում, բայց դրանք իսկույն հրդեհվեցին բոլոր կողմերից և հրդեհի ծխի մեջ ոչնչացվեց մի քանի հազար մարդ: Քաղաքի բոլոր տները ավերվեցին հիմնովին, չխնայվեցին անգամ հիվանդները հիվանդանոցներում: Կանայք սկզբում ենթարկվեցին բռնությունների, ապա ականատես եղան, թե ինչպես իրենց մանկիկներին խփելով պատերին, ջարդում էին նրանց գլուխները: Հաշվվում է, որ 23 հազար մարդ սրի քաշվեց, 47 հազարը գերեվարվեց և միայն 5 հազար հոգի փրկվեց փախուստի դիմելով»[1]:

Ֆրանսիացի ճանապարհորդ Շարլ Դեվալը, որ 1825-1826 թթ. (այն տարիներին, երբ օսմանյան զորքերը բարբարոսական հետքեր էին թողել հույն ժողովրդի հերոսական ազատագրական շարժումների դեմ կռվելիս), եղել է Կ. Պոլսում և Հունաստանի մի շարք մասերում, գրել է. «Հունաս-

1 Е. Феоктистов. Борьба Греции за независимость. СПб., 1863, с. 82.

*տանի դաշտերի մեծ մասը այժմ ամայացած է: Ամբողջ քաղաքներ հրդեհված են: Ճանապարհորդն այժմ տեսնում է միայն մոխրացած բեկորներ և մինչև վերջը չայրված ողբալի դիակներ»[1]: Հետաքրքրիր է նկատել, որ թուրքական հրոսակախմբերը ոչ միայն կոտորում ու գերեվարում էին ապստամբներին, այլև կանխամտածված ձևով ավերում էին նրանց երկիրը՝ քանդում շենքերը, ամայացնում դաշտերը, ոչնչացնում այգիները:*

*Օսմանյան զորքերն ամենայն դաժանությամբ ճնշեցին Բուլղարիայի հյուսիս-արևմտյան մի քանի շրջանների գյուղացիական ազատագրական շարժումը, որ բռնկվեց 1841 թ. գարնանը: Հազարավոր մարդիկ սրի քաշվեցին, 240 գյուղ հրի մատնվեց ու ոչնչացվեց, մոտ 10000 մարդ փախուստի դիմելով անցավ Սերբիա: Այս դեպքերի ականատես ֆրանսիացի հրապարակախոս Մ. Բլանկին գրել է. «Պետք է սեփական աչքերով տեսնել բուլղար գյուղացիների վիշտը և կատաղի հորդաների վայրագությունները, պատկերացնելու համար այն բոլոր տանջանքները, որոնց ենթարկվեց բուլղար բնակչությունն այս կարճ, բայց մղձավանջային շրջանում: Եվրոպան դեռևս չի պատկերացնում, թե ինչ տառապանքներ են կրում նրանք... Եվրոպան չգիտի, որ թուրքերը խուժում են քրիստոնյաների տները և զավթում այն ամենը, ինչ դուր է գալիս իրենց... և որ անձնական ապահովության ամենաչնչին երաշխիքներն անգամ, որ տրվում են ամենահետամնաց երկրների ժողովուրդներին, անսահման շնորհ կհամարվեին Բուլղարիայի բնակչության համար»[2]:*

*Հանրահայտ են այն գազանությունները, որ կատարվեցին Բուլղարիայում 1876 թ., երբ օսմանցի բաշիբոզուկները արյան մեջ խեղդեցին Ապրիլյան հերոսական ապստամբությունը: Կոտորածների զոհ դարձավ 30000 մարդ, բազմաթիվ աղջիկներ ու երիտասարդ կանայք ուղարկվեցին սուլթանի և նրա բարձրաստիճան փաշաների հարեմները կամ վաճառվեցին որպես ստրուկներ: Ավերվեցին ու կողոպտվեցին մի քանի հարյուր գյուղ ու բնակավայր:*

*Թուրք-օսմանյան բռնապետությունը, հրի ու սրի իր ավանդական քաղաքականությունը կիրառեց նաև XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման նկատմամբ, շարժում, որը հիմնականում ուներ ինքնապաշտպանական բնույթ: Արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի հրա-*

1 *Ш. Д.*, Два года в Константинополе и Морее (1825-1826)..., пер. с франц., СПб., 1828.

2 *M. Blanqui.* Voyage en Bulgarie, pendant l'année 1841. Paris, 1845, p. 179-180.



*մանով գազանաբար ոչնչացված արևմտահայերի թիվը միայն 1890-ական թթ. հասավ մոտ 300000-ի*:*

*Օսմանյան տիրապետության դեմ մաքառող ժողովուրդների ազատագրական պայքարի արդյունքները միանշանակ չեղան: Եթե սերբերի, հույների ու բուլղարների շարժումը ավարտվեց հաղթանակով, ապա հայ ժողովրդի պայքարը հաջողություն չունեցավ: Այս հանգամանքը, սակայն չի կարող ստվեր գցել նրա վրա, քանի որ այն արդարացի ու հերոսական էր, մղվում էր ազատության ու հայրենիքի, մարդկային իրավունքների ու արժանապատվության համար: Խիզախ ընդվզումներով և անձնուրաց սխրագործություններով հարուստ ազգային ազատագրական այդ պայքարը մեր ժողովրդի բազմադարյան պատմության փայլուն դրվագներից մեկն է:*

*Օսմանյան բռնապետության դեմ ուղղված XIX դարի երկրորդ կեսին հայ ազատագրական շարժման ամբողջական պատմությունը դեռևս չի դարձել հատուկ գիտական ուսումնասիրության առարկա: Հայ ազգային կուսակցությունների պատմության մասին գրված աշխատություններում և ազատագրական շարժմանը մասնակցած մի շարք գործիչների օրագրերում ու հիշողություններում շոշափվել են ընդհանուր խնդրի առանձին կողմերը: Սփյուռքահայ պատմագրության մեջ առկա մի շարք աշխատությունները ունեն գիտահանրամատչելի բնույթ: Խորհրդային Հայաստանում 1920–1950-ական թթ. շատ դժվար էր զբաղվել այդ հարցով. ստալինյան բռնապետության տարիների գռեհիկ սոցիոլոգիական դոգմաների համաձայն, հայ ազատագրական շարժումը համարվում էր հետադեմ և ուշադրության ոչ արժանի**: Միայն 1950-ական թթ. կեսերից որոշ քայլեր կատարվեցին վերանայելու պատմությունը խորապես աղավաղող այդ տեսակետը***:*

*Ներկա աշխատության հրատարակության առթիվ հարկ ենք համարում ասել հետևյալը: Հայ ազատագրական շարժման պատմության հարցերով մենք զբաղվել ենք դեռևս տասնյակ տարիներ առաջ: Չնայած խիստ անբարենպաստ պայմաններին, մեզ հաջողվեց 1946 թ. ապրիլին ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում պաշտպանել դոկտորական դիսերտացիա «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը սուլթանական դեսպոտիզմի դեմ (1850-1870-ական թթ.) թեմայով: Սակայն, ստալինյան զգոնության ուղղափառ ասպետները չհապաղեցին հանդես գալ պատմական փաստերի դեմ իրենց «քաղաքական եզրակացություններով»: Շուտով հեղինակը ամբաստանվեց ազգայնականության, իսկ ավելի ուշ՝ նաև «բուրժուական միասնական հոսանքի» տեսության տուրք տալու մեջ: Տպագրվեցին «մերկացնող» հոդվածներ, հարցը*

*քննարկվեց ղեկավար օրգաններում, հեղինակը ստացավ նկատողություն, «ընդունեց սխալները» և այլն: Ուսումնասիրությունը լույս տեսավ միայն ինը տարի անց՝ 1955 թ., խրուշչովյան բարեփոխումների շրջանում: Այս աշխատության հիմքում, այսպիսով, ընկած է տարիներ առաջ գրված ուսումնասիրությունը: Իհարկե, կատարված են անհրաժեշտ շատ փոփոխություններ, ուղղումներ ու լրացումներ:*

*1989, 27.07*
*Երևան*

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

*Քաղաքական այն իրավիճակը, որ ստեղծվեց Հայաստանում 1826-1828 թթ. ռուս-պարսկական և 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո, էական փոփոխություններ չկրեց հետագա տասնամյակներին և հիմնականում պահպանվեց նաև 1850–1870-ական թթ.: XIX դարի երկրորդ կեսին Հայաստանի արևելյան և հյուսիսային նահանգները կամ այլ կերպ ասած Արևելյան Հայաստանը գտնվում էր Ռուսական կայսրության կազմում, իսկ արևմտյան և հարավային շրջանները՝ Արևմտյան Հայաստանը՝ թուրք-օսմանյան բռնապետության լծի տակ: Ղրիմի պատերազմը չբերեց նոր փոփոխություն: Միայն 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Կարսի մարզը ազատվեց օսմանյան տիրապետությունից և միացվեց Ռուսաստանին: Համառոտակի ծանոթանանք Արևելյան և Արևմտյան Հայաստանի վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական դրությանը՝ մեզ այստեղ հետաքրքրող ժամանակաշրջանում:*

### 1

*Արևելյան Հայաստանը 1828 թ. Ռուսաստանին միանալուց հետո ցարական կառավարությունը ստիճանական քայլեր կատարեց երկրի պարսկա-խանական վարչաձևը ռուսականով փոխարինելու ուղղությամբ: Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո՝ 1828 թ. մարտ ամսին, ստեղծվեց Հայկական մարզը (*Армянская область*), որի կազմի մեջ մտան Երևանի, Նախիջևանի գավառները և Օրդուբադի գավառակը: Վարչական այդ միավորը, սակայն, վերացվեց 1840 թ., տեղի ունեցան նոր փոփոխություններ: Համեմատաբար մնայուն վարչաձև ստեղծվեց 1846–1849 թթ., Կովկասի առաջին փոխարքա իշխան Մ. Ս. Վորոնցովի ժամանակ: Այդ տարիներին ցարական կառավարությունն Անդրկովկասում կազմեց հինգ նահանգներ՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու, Դերբենդի և Երևանի[1]:*

*Երևանի նահանգը, որ բաժանվեց հինգ գավառների (Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի և Օրդուբադի), հիմնակա-*

1 *В. Н. Иваненко.* Гражданское управление Закавказьем. Тифлис, 1901, с. 376. Երևանի նահանգը ստեղծվեց 1849 թ., 1860 թ. Շամախու նահանգի փոխարեն կազմվեց Բաքվի, իսկ 1868 թ.՝ Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգը (*С. Эсадзе.* Историческая записка об управлении Кавказом. Т. II, Тифлис, 1907, с. 45).

նում իր մեջ ընդգրկեց Արևելյան Հայաստանի կենտրոնական և մեծ մասը: Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջաններից Ջալալօղլին և Ալավերդին մտան Թիֆլիսի նահանգի, իսկ Ադրբեջանին սահմանակից Զանգեզուրը՝ Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգի մեջ: 1879 թ. նոյեմբերի 1-ին ցարական կառավարությունը Կարսի և նրա մերձակա այն շրջաններից, որոնք մինչ այդ կազմում էին Էրզրումի (Կարինի) վիլայեթի երկու՝ Կարսի և Չըլդըրի սանջակները, ստեղծեց վարչական մի առանձին միավոր՝ Կարսի մարզ, որ բաժանվեց չորս գավառների (Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի)[1]: Անդրկովկասի և մասնավորապես, Արևելյան Հայաստանի վարչական այս բաժանումը հիմնականում անփոփոխ մնաց XIX դարի ամբողջ երկրորդ կեսի ընթացքում:

Անդրկովկասի հայ բնակչությունը կենտրոնացած էր հիմնականում Երևանի, Ելիզավետպոլի, Թիֆլիսի, Բաքվի նահանգներում և Կարսի մարզում: Պաշտոնական տվյալների համաձայն, 1886 թ. Երևանի նահանգի բնակչության թիվը եղել է 670405, որից հայ՝ 375700, Ելիզավետպոլի նահանգում՝ 728943, որից հայ՝ 258324, Թիֆլիսի նահանգում՝ 807143, որից հայ՝ 193610, Բաքվի նահանգում՝ 712703, որից հայ՝ 55459, Կարսի մարզում՝ 174044, որից հայ՝ 33094[2]: Անդրկովկասի հայ բնակչության թիվը 1865 թ. կազմել է 540931 (Անդրկովկասի ամբողջ բնակչության թիվը եղել է 3115164), 1874 թ.՝ 711960[3], 1886 թ.՝ 939131 (Անդրկովկասի ամբողջ բնակչության թիվը հասնում էր 4702898-ի), 1897 թ.՝ 1122675 մարդ[4]: 1881 թ. տվյալներով ռուսական կայսրության մեջ ապրող հայերի թիվը կազմում էր Անդրկովկասում 820753, Հյուսիսային Կովկասում՝ 39700, կայսրության մնացած մասերում՝ 56536 մարդ[5]:

Այսպիսով, հայ բնակչության թիվը Արևելյան Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում անընդհատ աճել է (ինչպես կտեսնենք, Արևմտյան Հայաստանում կատարվում էր միանգամայն հակառակ պրոցես): Եթե

1 Сборник материалов по русско-турецкой войне 1877-1878 гг. на Кавказско-малоазиатском театре. Вып. I, СПб., 1903, с. 112.

2 Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1893.

3 Сборник статистических сведений о Кавказе. Т. I, Тифлис, 1869, II отд., с. 20-21. Сборник сведений о Кавказе на основании камерального описания 1871-1874 гг. Т. VII, Тифлис, 1881.

4 Свод статистических данных о населении Закавказского края. Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г. Вып. 6, СПб., 1905. «Մուրճ» հանդեսը Անդրկովկասի հայ բնակչության թիվը XX դարի սկզբում հաշվում էր 1300000 («Մուրճ», Թիֆլիս, 1905, N 5, էջ 112):

5 *Ա. Երիցեանց*. Ռուսիոյ հայոց վիճակագրութիւնը.– «Փորձ», Թիֆլիս, 1881, N 2:



1831 թ. Արևելյան Հայաստանի բնակչության ընդհանուր թիվը կազմել է 161747, ապա 1914 թ.՝ 1014255: Ուրեմն 83 տարվա ընթացքում բնակչությունը աճել է ավելի քան 852 հազարով կամ այլ կերպ ասած՝ 5,3 անգամ[1]: Բնակչության այսպիսի բազմացումը, որ կատարվել է ոչ միայն բնական աճի, այլև ներգաղթի հետևանքով, տեղի ունեցավ շնորհիվ այն բանի, որ Ռուսաստանին միանալուց հետո Արևելյան Հայաստանում ստեղծվեցին անհամեմատ ապահով վիճակ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանման, ինչպես և բարենպաստ պայմաններ՝ երկրի տնտեսական ու մշակութային զարգացման համար:

XIX դարի սկզբին Արևելյան Հայաստանի և մասնավորապես, Արարատյան դաշտի գյուղերի ու ավանների մի զգալի մասը կիսավեր ու անմարդաբնակ էր: Հայաստանում իշխող խաների ու բեկերի միջև պարբերաբար կրկնվող ներքին կռիվների ու ասպատակությունների հետևանքով բնակչության մի մասը կոտորվել կամ գաղթել էր այլ երկրներ: Ցարական կառավարության շահերը թելադրում էին վերականգնել ու ավելացնել Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստանի հայ բնակչության թիվը: Այդ անհրաժեշտ էր նախ երկրի տնտեսական կյանքը վերականգնելու, զարգացնելու և հետևապես՝ նյութական շահույթ ստանալու համար, և ապա սահմանամերձ գոտի հանդիսացող այդ երկրում ունենալու այնպիսի վստահելի բնակչություն, որպիսին հայերն էին: Ելնելով այս նկատառումներից, ցարական կառավարությունը ջանաց թուրքական և պարսկական տիրապետության տակ մնացած հայ բնակչության մի մասը գաղթեցնել Արևելյան Հայաստան: Այդ նպատակը իրականացնելու համար Ռուսաստանի պահանջով ինչպես Թուրքմենչայի (10/22/.II.1828), այնպես էլ Ադրիանուպոլսի (2/14/.IX.1829) պայմանագրերում նախատեսվեցին հոդվածներ, որոնցով թույլատրվում էր հայերի գաղթը դեպի ռուսական սահմանները՝ Արևելյան Հայաստան և Անդրկովկաս:

Նախատեսված գաղթը իրականացնելու համար կազմակերպվեց հատուկ հանձնաժողով: Գործի կանչվեցին Ներսես Աշտարակեցին, գնդապետ Ղազար Լազարյանը, Էրզրումի Կարապետ արքեպիսկոպոսը և այլ գործիչներ: Պասկևիչի հանձնարարությամբ ծավալվեց նախապատրաստական լայն աշխատանք:

Թուրքական և պարսկական տիրապետության տակ մնացած հայ բնակչությունը ուրախությամբ ընդունեց Անդրկովկաս գաղթելու առաջարկը: Խաներն ու փաշաները աշխատեցին խափանել սպասվող գաղթը,

1 *А. Бадалян*. Население Армении со времени присоединения ее к России до наших дней.– «Տեղեկագիր», 1953, N 5, էջ 54:

որովհետև աշխատավոր ձեռքերից զրկվելը ձեռնտու չէր նրանց: Սակայն, չնայած դրան, գաղթը լայն ծավալ ստացավ:

Առաջինը գաղթեցին պարսկահայերը: 1828 թ. գարնանը, տաք եղանակները սկսվելուն պես, առանձին խմբերով ճանապարհ ընկավ Թավրիզի, Մակուի, Խոյի, Սալմաստի, Ուրմիայի և այլ վայրերի հայ բնակչությունը: Գաղթն արագացվում էր: Շատերը թողնում էին նույնիսկ իրենց շարժական գույքը և շտապում դեպի ռուսական սահմանները: Գաղթող պարսկահայերի թիվը կազմեց մոտ 40000:

Ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո սկսվեց նաև արևմտահայերի գաղթը: Առաջին խմբերը ճանապարհ ընկան դեռևս 1829–1830 թթ. ձմռանը: Բայց գաղթականական ուժեղ հոսանք սկսվեց 1830 թ. գարնանից: Գաղթեցին գլխավորապես Էրզրումի, Կարսի և Բայազետի փաշայությունների հայ բնակիչները: Արևմտյան Հայաստանից գաղթեց ավելի քան 90000 մարդ:

Այսպիսով, 1828–1830 թթ. ընթացքում Արևելյան Հայաստան և ընդհանրապես Անդրկովկաս եկան շուրջ 130000 հայ գաղթականներ: Սակայն, դա պարսկահայ և արևմտահայ բնակչության միայն մի փոքր մասն էր: Մեծ մասը, որ զանազան պատճառներով հնարավորություն չունեցավ գաղթի դիմելու, շարունակեց մնալ պարսկական* և գլխավորապես, թուրքական տիրապետության տակ:

Անդրկովկաս գաղթած հայ բնակչությունը վերաբնակվեց հիմնականում սահմանամերձ շրջաններում և ամայացած բնակավայրերում: Պարսկահայերը տեղավորվեցին Երևանի ու Զանգեզուրի շրջաններում և Ղարաբաղում, արևմտահայերից էրզրումցիները՝ Ախալքալակում և Ախալցխայում, կարսեցիները՝ Գյումրիում, Ապարանում ու Թալինում, իսկ բայազետցիները՝ Սևանա լճի հարավ-արևմտյան ափերին: Վերջինները, որ արևմտահայ գաղթականության ամենաստվար զանգվածն էին կազմում, հիմնեցին Նոր Բայազետ քաղաքը: Գաղթականները բնակություն հաստատեցին նաև Երևանում:

Պարսկահայ և արևմտահայ բնակչության այս գաղթը կատարվեց ծանր պայմաններում: Գաղթականները չունեին տեղափոխության անհրաժեշտ միջոցներ, բավարար սնունդ և հագուստ: Նրանք մեծ զրկանքներ կրեցին ու թշվառության մեջ ընկան ոչ միայն տեղափոխության ընթացքում, այլև նոր բնակավայրերում հաստատվելուց հետո: Ցարական կառավարությունը փոխառության կարգով բաց էր թողել չնչին գումար: Զստանալով որևէ լուրջ օգնություն, գաղթականներից շատերը դատապարտվեցին սովի և տարափոխիկ հիվանդությունների: Առանձնապես ծանր վիճակի մեջ ընկան պարսկահայ գաղթականները:



Հայտնի դեկաբրիստ Ալեքսանդր Մալինկին, որ այդ տարիներին գտնվում էր Հայաստանում, պարսկահայ գաղթականների ծանր վիճակի մասին գրել է. «Ոսկե սարեր խոստացան, և նրանք շարժվեցին… եկան և չգտան հացի հատիկ, գլուխ դնելու տեղ, հյուղ՝ կյանք պահպանելու համար: Ոչինչ չէին պատրաստել: Նրանց տվեցին կորստաբեր կլիմա, անբերրի հող և դրա հետ աննշան դրամական օգնություն, այն էլ մի մասին»:

Ընդհանուր առմամբ, սակայն, 1828–1830 թթ. գաղթը ունեցավ դրական նշանակություն հայ ժողովրդի համար: Գաղթի շնորհիվ բարելավվեց Արևելյան Հայաստանի ավերված ու քայքայված տնտեսության վիճակը, բազմացավ նրա հայ բնակչությունը: Վերականգնվեց օտար տիրողների ձեռքով ցաք ու ցրիվ արված հայ ժողովրդի հավաքական գոյությունը:

XIX դարի սկզբներին հայ ժողովրդի մի զգալի մասն ապրում էր Հայաստանից դուրս՝ հարևան և հեռավոր երկրներում: Դարեր շարունակ Հայաստանում տիրող դժնդակ պայմանները, օտար հափշտակիչների ասպատակություններն ու կոտորածները ստիպել էին շատերին թողնել հայրենիքը և բնակություն հաստատել այլ երկրներում: Գաղթի դիմած հայերի բնակատեղերի՝ գաղթավայրերի թիվը բավական մեծ էր: XIX դարի սկզբներին հայ գաղթավայրեր կային Մոսկվայում, Թիֆլիսում, Հյուսիսային Կովկասում (Նոր Նախիջևան, Մոզդոկ, Ղզլար), Աստրախանում, Ղրիմում, Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում, Հնդկաստանում, Իրանում, Եգիպտոսում, Բուլղարիայում և այլուր:

Հայ գաղթօջախներից շատերը չկտրեցին իրենց կապերը մայր երկրի՝ Հայաստանի հետ: Գտնվելով համեմատաբար ավելի բարենպաստ քաղաքական ու տնտեսական պայմանների մեջ, նրանք զգալի մասնակցություն ունեցան հայկական մշակույթի ու հասարակական կյանքի զարգացման գործում: Այս տեսակետից առանձնապես աչքի ընկան Մոսկվայի, Թիֆլիսի, Նոր Նախիջևանի, Կոստանդնուպոլսի հայ գաղութները:

Մոսկվայի հայ գաղթավայրը կազմվել էր XVIII դարի կեսերին: Այն բաղկացած էր գլխավորապես Պարսկաստանից գաղթած հայ առևտրականներից, որոնց մեջ առանձնապես աչքի ընկավ Լազարյանների տոհմը: Լազարյանները կուտակեցին մեծ հարստություն և ցարական արքունիքում վարեցին բարձր պաշտոններ: Մոսկվայի հայ գաղութը բազմամարդ չէր, բայց նշանակալից դեր խաղաց հայ մշակույթի զարգացման ասպարեզում:

Թիֆլիսի և ընդհանրապես, Վրաստանի հայ բնակչությունը մեծ զանգված էր կազմում: XIX դարի սկզբներին միայն Թիֆլիս քաղաքում ապրող հայերի թիվը հասնում էր մոտ 18000-ի: Վրաստանի քաղաքների հայ բնակչությունը զբաղվում էր գլխավորապես արհեստներով ու առևտ-

րով: XIX դարում հայկական մշակույթի զարգացման և մտավոր կյանքի վերածնության մեջ խոշոր դեր խաղաց Թիֆլիսի հայ գաղութը:

Նոր Նախիջևանը (Դոնի Ռոստովի մոտ), որ ամբողջապես հայկական քաղաք էր, հիմնվեց 1780 թ.: Նրա բնակչությունը 1778 թ. գաղթել էր Ղրիմից: Դարի սկզբին Նոր Նախիջևանում և նրա շրջակայքում հիմնված հինգ հայկական գյուղերում բնակվում էր մոտ 12000 մարդ: Նոր Նախիջևանի հայ համայնքն իր ներքին գործերում ինքնավար էր: Նա ուներ առանձին դատարան, մշակութային-կրթական և նման այլ հարցերը լուծվում էին համայնքի ներսում:

Կոստանդնուպոլսի հայ բնակչության թիվը XIX դարի սկզբին անցնում էր 200 հազարից: Հայերը այդտեղ էին գաղթել գլխավորապես Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի գավառներից: Կոստանդնուպոլիսն էր օսմանյան Թուրքիայի հայերի պատրիարքի նստավայրը:

Թուրքմենչայի պայմանագրից անմիջապես հետո ցարական կառավարությունը վերացրեց Արևելյան Հայաստանում մինչ այդ գոյություն ունեցող խանական վարչաձևը և ստեղծվեց ռուսական վարչակարգ: Հայկական մարզի վերացումից հետո, 9 տարի անց, 1849 թ., մի շարք նոր վարչական ռեֆորմների ուժով կազմվեց Երևանի նահանգը՝ բաղկացած Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի և Օրդուբադի գավառներից: Արևելյան Հայաստանի մնացած շրջանները ընդգրկվեցին Թիֆլիսի և Ելիզավետպոլի (Գյանջայի) նահանգների մեջ: Այս վարչաձևը հիմնականում պահպանվեց մինչև 1917 թ.:

Արևելյան Հայաստանում, ինչպես և Անդրկովկասի մյուս մասերում՝ Վրաստանում ու Ադրբեջանում, Ռուսաստանին միանալուց հետո զգալի տեղաշարժեր կատարվեցին նաև տնտեսական կյանքի զարգացման ուղղությամբ: Արդեն 1860-1870-ական թթ. երկրամասը ապրում էր ֆեոդալիզմի, հին, նահապետական կյանքի քայքայման ու կապիտալիստական հարաբերությունների ձևավորման ժամանակաշրջան: Վ. Ի. Լենինը «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» իր հայտնի գրքում նշել է այն հանգամանքը, որ հետռեֆորմյան ժամանակաշրջանում Կովկասը ներգրավվեց համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ, ավելի աճեցին շուկայական հարաբերությունները, ուժեղացավ երկրի բնատնտեսության քայքայման պրոցեսը, սկսեց կազմակերպվել արդյունաբերական կապիտալիզմը: «Կովկասի ուժեղ գաղութացման պրոցեսի ու նրա հողագործական բնակչության արագ աճմանը զուգընթաց, տեղի էր ունենում նաև բնակչության՝ հողագործությունից կտրվելու և արդյունաբերությանը հարելու պրոցես (որը վարագուրվում էր հողագործական բնակչության աճով): Կովկասի քաղաքային բնակչությունը 1863 թ. 350 հազա-



րից հասավ մոտ 900 հազարի՝ 1897 թ. (Կովկասի ամբողջ բնակչությունը 1851 թ. մինչև 1897 թ. աճեց 95%-ով)»,– գրում է Վ. Ի. Լենինը[1]:

Կապիտալիզմի զարգացմանը նպաստեցին ագրարային-գյուղացիական ռեֆորմը, ռուսական և արտասահմանյան կապիտալի մուտքն Անդրկովկաս և ապա ճանապարհային շինարարությունը: 1861 թ. ագրարային-գյուղացիական ռեֆորմը, որն իրականացնող օրենքներն ընդունվեցին Վրաստանի համար 1864 թ., իսկ Հայաստանի համար՝ 1870 թ., չնայած իր կալվածատիրական էությանն ու անհետևողականությանը, կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար ստեղծում էր մի շարք նախադրյալներ: Նույն իմաստով զգալի դեր խաղաց ցարական կառավարության կողմից ձեռնարկված ճանապարհային շինարարությունը: 1870-ական թթ. կառուցվեցին մի շարք կարևոր խճուղիներ, որոնց թվում Թիֆլիս-Ղարաքիլիսա-Երևան, Երևան-Ջուլֆա, Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ, Ալեքսանդրապոլ-Կողբ և Նախիջևան-Գորիս խճուղիները[2]: 1872 թ. գործարկվեց Թիֆլիս-Փոթի երկաթգիծը, որն առաջինն էր Անդրկովկասում: 1883 թ. շահագործման հանձնվեց Բաքու-Բաթում գիծը, 1899 թ. պատրաստ էր Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս գիծը[3]:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը գյուղում արտահայտվեց նրանով, որ այնտեղ աշխուժացան ապրանքափոխանակային հարաբերությունները, ուժեղացավ գյուղացիության քայքայման և շերտավորման պրոցեսը, լայն գործունեություն ծավալեց վաշխառուական կապիտալը, հրապարակ եկավ գյուղի հարուստ, ուռճացած շերտը և սկսեց աստիճանաբար իր ձեռքում կենտրոնացնել հողային ֆոնդը և իշխող դիրք գրավել գյուղում: Վաշխառուների կատարած հարստահարությունների մասին ժամանակի հրապարակախոս Գ. Տեր-Մելքիսեդեկյանը գրում էր, որ իշխանները՝ կալվածատեր-վաշխառուները, զանազան խորամանկ և խարդախ միջոցներով անասելի կեղեքման և շահագործման են ենթարկում աշխատավոր գյուղացիությանը: Չափազանց բարձր տոկոսներով պարտք վերցնելով վաշխառուից, գյուղացին այլևս չի կարողանում մարել իր պարտքը: Նրա հողը, կայքը և գույքը աստիճանաբար հափշտակում է վաշխառուն: Գյուղացին ամբողջությամբ ընկնում է վաշխառուի ճանկերի մեջ: «Գյուղացին դառնում է իշխանների [կալվածատեր վաշխառուների] ճորտը… և իշխանները տեսնելով գեղջուկ էդ խղճալի

1 Վ. Ի. Լենին. Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, «Հայաստան» հրատ., 1975, էջ 754-755: Թարգմանված է ռուսերեն հինգերորդ հրատարակությունից:

2 Сборник сведений о Кавказе. Т. I, Тифлис, 1871, с. 9.

3 *И. Адлер.* Железнодорожное строительство на Кавказе.– Кавказ, Тифлис, 1912, N 97.

*վիճակը, տանջում են նրան, կես գնով բանացնել են տալիս նրանց իրենց տներում, բաղերում, արտերում և այլն»[1]:*

*Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով գյուղացիության մի զգալի մասը զրկվեց հողից, անասուններից և բռնեց պանդխտության ճանապարհը: 1895 թ. Երևանի նահանգի հողազուրկ գյուղացիության թիվը կազմում էր 5211 մարդ (1209 գյուղացիական ընտանիք)[2]: Այդ նույն տարիներին Ալեքսանդրապոլի գավառում ցանք չունեցող գյուղացիների թիվը կազմում էր 19,7 տոկոս, իսկ բանող անասուններից զուրկ գյուղացիների թիվը՝ 16 տոկոս: 1884 թ. Զանգեզուրի գավառից պանդխտության են դիմել մոտ 3000 գյուղացի[3]: 1892 թ. Նոր-Բայազետից հեռացել են 1171 մարդ, իսկ 1893 թ.՝ 1247 մարդ: Պանդխտության դիմող հայ գյուղացիությունը գնում էր գլխավորապես Բաքու, Թիֆլիս, Բաթում և երբեմն էլ Ռուսաստանի կենտրոններ:*

*Գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը խթանեց նաև այն հանգամանքը, որ արդեն 1870-ական թթ. սկսած ռուսական կապիտալը մուտք գործեց Հայաստանի գյուղ: Այսպես, օրինակ, 1872 թ. Կախանովը պետությունից 65 տարով կապալով վերցրեց Արազդայան տափաստանի հողերը և ստեղծեց կապիտալիստական խոշոր տնտեսություն, ուր մշակվում էր բամբակ և հացահատիկ[4]: 1880-ական թթ. Հայաստանի գյուղերում երևացին Մոսկվայի, Վարշավայի, Թիֆլիսի, Ռուսաստանի և արդյունաբերական այլ կենտրոնների բուրժուազիայի ներկայացուցիչները, որոնք աշխատեցին իրենց արդյունաբերության համար հումք մատակարարող բազաներ ստեղծել Հայաստանի գյուղերում: Հետաքրքիր է, որ 1880-ական թթ. սկզբներին Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության խոշոր ներկայացուցիչներից մեկի՝ կապիտալիստ Սավվա Մորոզովի գործակալները բամբակ մթերելու նպատակով հատուկ գրասենյակներ բաց արին Երևանի նահանգում:*

*Գյուղատնտեսության մեջ կատարվող այդ գործընթացների հետևանքով զարգացավ մի շարք կուլտուրաների և առաջին հերթին բամբակի կուլտուրայի արտադրությունը: Բամբակի արտադրությունը Երևանի նահանգում, օրինակ, կազմել է 1861 թ. 30000 փութ, 1870 թ.՝ 273000,*

1 *Գ. Տէր-Մելքիսեդեկեան.* Նուէր քեաւիր գեղըցիներին. Թիֆլիս, 1879, էջ 16:
2 *О. Семин.* Великая годовщина. Киев, 1911, с. 29.
3 Материалы для изучения экономического быта государтсвенных крестьян Закавказского края. Т. IV, ч. I, Тифлис, 1886, с. 106.
4 *М. Сагателов.* Экономические очерки Эриванской губернии и озеро Гокча. Тифлис, 1879, с. 12.



*1889 թ.՝ 508764 փութ[1]: Զարգացել է նաև այգեգործությունը և մասնավորապես խաղողագործությունը:*

*Նշված ժամանակաշրջանը բնորոշ է նաև այն տեսակետից, որ ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Արևելյան Հայաստանում ծնունդ է առնում ու կազմավորվում արդյունաբերական կապիտալիզմը: Կապիտալիստական արդյունաբերության առաջին ձեռնարկությունները Անդրկովկասում հիմնվեցին դեռևս 1860-ական թթ., սակայն, բացառությամբ Բաքվի, որտեղ կապիտալիստական արդյունաբերությունն աճեց արագ տեմպերով, Անդրկովկասի արդյունաբերության զարգացումը ամբողջությամբ վերցրած դանդաղ էր ընթանում: Առանձնապես դանդաղ էր զարգանում արդյունաբերությունը Հայաստանում, ուր XIX դարի 2-րդ - կեսին փաստորեն ստեղծվեցին հանքարդյունաբերության երկու կենտրոններ՝ Ալավերդին և Զանգեզուրը: Ալավերդու պղնձահանքերը մինչև 1887 թ. շահագործում էին հույն ձեռնարկատերերը, իսկ նրանցից հետո՝ ֆրանսիական բաժնետիրական ընկերությունը: Ալավերդու պղնձաձուլարանների տարեկան արտադրանքը կազմել է 1861 թ. 4807 փութ, 1871 թ.՝ 7325 փութ, 1900 թ.՝ 19682 փութ պղինձ[2]: Զանգեզուրի պղնձաձուլարանների արտադրանքը եղել է 1858 թ. 2485 փութ, 1873 թ.՝ 10147 փութ, 1887 թ.՝ 15312 փութ[3]: 1880-ական թթ. սկսած Հայաստանում հիմնվեցին արդյունաբերական ձեռնարկություններ նաև բամբակի, գինու, կոնյակի, մետաքսի ու կաշվի արտադրության գծով:*

*Միաժամանակ, զգալի չափով ընդարձակվեց ներքին և արտաքին առևտուրը, ծավալվեց դրամական շրջանառությունը: Անդրկովկասի բուրժուազիան մշտական կապեր հաստատեց Ռուսաստանի, Արևմտյան Եվրոպայի երկրների և ապա Պարսկաստանի ու Թուրքիայի առևտրական կենտրոնների հետ: Թե ինչպիսի զարգացում է ունեցել Անդրկովկասի առևտուրը, այդ մասին վկայում են հետևյալ թվերը: 1862–1866 թթ. ընթացքում Անդրկովկասի առևտրի տարեկան շրջանառությունը, միջին հաշվով, կազմում էր 11815891 ռուբլի, 1872–1876 թթ.՝ 14139270 ռուբլի, իսկ 1886 թ.՝ 39264547 ռուբլի[4]:*

1 *И. Петрович.* Хлопководство в Закавказье. Ч. 1, Тифлис, 1912, с. 11-12; *Г. Данилович.* Араксская равнина, сборник. Тифлис, 1897, с. 690-698; Сборник статистических данных о землевладении и способах хозяйства в пяти губерниях Закавказского края. Тифлис, 1899, с. 95.
2 Кавказский календарь, за 1861, 1871, 1900 гг., Тифлис.
3 *О. Карапетян.* Краткий очерк развития горного дела на Кавказе. Тифл., 1901, с. 14.
4 Краткий очерк экономического положения Кавказа по новейшим официальным и другим отчетам. Тифлис, 1888, с. 12.

Հարաճուն առևտուրը քայքայիչ ազդեցություն գործեց արհեստավորական արտադրության վրա*: Ռուսաստանից ու արևմտաեվրոպական երկրներից ներմուծվող արդյունաբերական ապրանքներն աստիճանաբար շուկայից դուրս էին մղում տեղական արհեստավորական արտադրանքը, որն ի վիճակի չէր մրցելու համեմատաբար բարձրորակ և էժանագին արդյունաբերական ապրանքների հետ: Սրա հետևանքով արհեստավորները կանգնեցին փակուղու առաջ և ընկան տնտեսական ծանր դրության մեջ: Համքարությունները սկսեցին քայքայվել, արհեստավորության զգալի մասը, թողնելով արհեստները, աշխատանքի անցավ գործարաններում և արդյունաբերական այլ ձեռնարկություններում: Համքարությունների քայքայման այս շրջանում Անդրկովկասում տեղի ունեցան համքար արհեստավորների հուզումներ, որոնցից առանձնապես նշանավոր էր Թիֆլիսի համքարների 1865 թ. ելույթը:

Երկրի կապիտալիստական զարգացման տեմպի մասին որոշ գաղափար կարող են տալ նաև քաղաքային բնակչության աճին վերաբերող տվյալները: 1865 թ. Բաքուն ուներ ընդամենը 14715 բնակիչ, 1897 թ.՝ 112252 բնակիչ, Թիֆլիսը 1875 թ. ուներ 67770 բնակիչ, իսկ 1897 թ.՝ 160645 բնակիչ: Համեմատաբար դանդաղ էին աճում Հայաստանի քաղաքները: 1865 թ. Երևանն ուներ 14070 բնակիչ, 1886 թ.՝ 17738, իսկ 1897 թ.՝ 29023 բնակիչ: Ալեքսանդրապոլը 1865 թ. ուներ 16814 բնակիչ, 1886 թ.՝ 24230, իսկ 1897 թ.՝ 32230 բնակիչ[1]:

Անդրկովկասի կապիտալիստական արդյունաբերության զարգացման գործում զգալի դեր խաղաց հայ բուրժուազիան, որը մինչև XIX դարի երկրորդ կեսը զբաղվում էր առևտրով: Բայց այդ բուրժուազիայի մի մասը 1860-ական թթ. սկսած՝ անցավ արդյունաբերական գործունեության: Թողնելով առևտրական գործառնությունները, նա հիմնեց ֆաբրիկաներ, գործարաններ և արդյունաբերական այլ ձեռնարկություններ: Նոր ձևավորվող արդյունաբերական հայ բուրժուազիան կենտրոնացավ գլխավորապես Հայաստանից դուրս՝ Բաքվում, Թիֆլիսում և Բաթումում: Հայաստանում նա կապիտալ ներդրեց հիմնականում Զանգեզուրի պղնձարդյունաբերության մեջ: Կուտակելով խոշոր կապիտալներ, հայ բուրժուազիան իր ձեռքում կենտրոնացրեց Բաքվի նավթարդյունաբերության զգալի մասը, իշխող դիրք գրավեց Անդրկովկասի տեքստիլ արդյունաբերության մեջ: Նրան էր պատկանում նաև ծխախոտի գործարանների մեծ մասը:

1 Ըստ Кавказский календарь-ի 1915 թ. տվյալների՝ առ 1-ը հունվարի 1914 թ. Բաքուն ուներ 248800, Թիֆլիսը՝ 344600, Երևանը՝ 29800 և Ալեքսանդրապոլը՝ 51300 բնակիչ:



Սակայն կապիտալիստական զարգացման այն գործընթացում, որ մենք նշեցինք վերը, հնարավոր չեղավ, այնուամենայնիվ, խոշոր տեղաշարժեր իրականացնելով փոխել նրա տնտեսական դեմքը: Արևելյան Հայաստանը, ինչպես և ամբողջ Անդրկովկասը, ոչ միայն 1850-1880-ական թթ., այլև ավելի ուշ, հետագա տասնամյակներին, շարունակեց մնալ որպես հետամնաց ագրարային երկիր՝ ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների բազմաթիվ մնացուկներով:

Ֆեոդալական հարաբերություններն առկա էին գլխավորապես այն պարտադիր հարաբերությունների մեջ, որոնք ստեղծվեցին կալվածատիրական գյուղացիության և կալվածատեր հողատերերի միջև 1870 թ. մայիսի 14-ի գյուղացիական ռեֆորմից հետո: Կալվածատիրական գյուղացիությունը, որի թիվն Անդրկովկասում հասնում էր մոտ 170000-ի, (այսինքն՝ ամբողջ գյուղացիության 24 տոկոսը), ֆեոդալական բազմաթիվ պարտավորություններ էր կատարում կալվածատիրոջ համար: Ժամանակավոր կախյալ անվանված այդ գյուղացիության վիճակի մեջ որոշ փոփոխություններ տեղի ունեցան միայն 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքով: Պետական գյուղացիությունը, որի թիվն Անդրկովկասում, մոտավոր հաշիվներով, հասնում էր 560000-ի, իրավաբանորեն ազատ էր ֆեոդալական պարտավորություններից, սակայն տնտեսական կախման մեջ ընկնելով կալվածատերերից (պետական գյուղացիության մի զգալի մասը սակավահողության պատճառով կապալով հող էր վերցնում կալվածատերերից), անխուսափելիորեն ընդգրկվում էր ֆեոդալական հարաբերությունների մեջ[1]:

Հողի խիստ պակասություն էր զգում թե՛ պետական և թե՛ կալվածատիրական գյուղացիությունը: Հողային ֆոնդի լավագույն և խոշոր մասը կենտրոնացած էր կալվածատեր-հողատերերի ձեռքին: Այսպես, օրինակ, Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառում գյուղացիներն ունեին 93162, իսկ կալվածատերերը՝ 337886 դեսյատին հող[2]:

Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի գյուղացիական հոծ զանգվածները, ինչպես մինչռեֆորմյան տարիներին (1850-ական թթ.), այնպես էլ հետռեֆորմյան շրջանում կանգնած էին հակաֆեոդալական-դեմոկրատական հեղափոխության խնդիրները լուծելու անհրաժեշտության առաջ:

1 Հայաստանի մի շարք գավառներում տիրող ֆեոդալական հարաբերությունների մասին հետաքրքիր տեղեկություններ են հայտնում ժամանակակիցները (տե՛ս Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края. Т. I-VII, Тифлис, 1885-1887).

2 *М. З. Аргутинский-Долгоруков.* Борчалинский уезд в экономическом и коммерческом отношениях. Тифлис, 1897, с. 65, 74.

Դասակարգային պայքարի առանցքը կազմում էր գյուղացիական զանգվածների պայքարը ֆեոդալական հարաբերությունների, ցարական կարգերի դեմ: Այս հարցում էական տարբերություններ չկային Ռուսաստանի և Անդրկովկասի միջև: Ճիշտ է, սոցիալ-տնտեսական զարգացման տեսակետից Անդրկովկասն ավելի հետամնաց էր, քան Ռուսաստանը, կապիտալիստական զարգացման պրոցեսները Ռուսաստանում ավելի ուժեղ էին, քան Անդրկովկասում, սակայն այդ տարբերությունները չունեին վճռական նշանակություն. դրանք քանակական էին, բայց ոչ որակական: Թե՛ Ռուսաստանում, թե՛ Անդրկովկասում հիմնական սոցիալ-դասակարգային հարցը ագրարային-գյուղացիական հարցն էր:

Հատկանշական է, որ 1850-1880-ական թթ. տեղի ունեցան գյուղացիական մի շարք ելույթներ կալվածատերերի և ցարիզմի դեմ ինչպես Վրաստանում ու Ադրբեջանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում: Այսպես, օրինակ, 1858 թ. Ախտայի շրջանի Բջնի գյուղի հայ և ադրբեջանցի գյուղացիները վերսկսեցին իրենց պայքարը կալվածատեր Գեղամովի դեմ: 1866 թ. կալվածատերերի ու ցարական վարչության դեմ զենք բարձրացրեց Ալեքսանդրապոլ գավառի մի շարք գյուղերի գյուղացիությունը: Նույն թվականին Սևանի շրջանի Զիբուխլու գյուղի գյուղացիները ելույթ ունեցան Սևանի վանքի դեմ, որը գրավել էր գյուղացիներին պատկանող հողերը և ամեն կերպ ճնշում ու շահագործում էր տեղական բնակչությանը: Գյուղացիական ելույթներ տեղի ունեցան 1872 թ. Լոռի-Փամբակում, 1881 թ. Երևանի գավառի Պտղնի գյուղում, 1884 թ. նույն գավառի Գյոդակլու և Դալար գյուղերում և այլն[1]: Այդ ելույթները թեև անկազմակերպ էին և չստացան լայն ծավալ, բայց, այնուամենայնիվ, ունեին ցարիզմի ու ֆեոդալիզմի դեմ ուղղված հեղափոխական պայքարի բնույթ:

Անդրկովկասում, իհարկե, առկա էր նաև ազգային հարցը: Ցարական կառավարության գաղութային քաղաքականության դեմ ուղղված արևելահայության պայքարի մասին մենք կխոսենք հաջորդ գլխում:

2

Արևմտյան Հայաստանը, ինչպես և ամբողջ Թուրքիան մինչև 1860-ական թթ., մոտ երկու դար շարունակ, վարչականորեն բաժանված էր էյալեթների (վիլայեթների) կամ այլ կերպ ասած՝ փաշայությունների*: XIX դարի առաջին կեսին սուլթանական տիրապետության տակ գտնվող Հա-

1 Крестьянское движение в Армении в XIX веке (сборник документов), составил проф. В. Рштуни, при участии К. Степаняна. Е., 1948.



յաստանի տարածքը բաժանված էր Կարսի, Էրզրումի, Բայազետի, Վանի, Մուշի և մասամբ Դիարբեքիրի ու Սվազի փաշայությունների միջև:

Հիշված բոլոր փաշայությունները մտնում էին Էրզրումի սերասքերության մեջ և վարչականորեն ենթարկվում էին նրան[1]: 1856 թ. բարենորոգումների՝ հաթթը հումայունի սկզբունքներից բխող 1864 թ. վիլայեթների մասին օրենքի համաձայն, ստեղծվեցին վարչական նոր միավորներ՝ վիլայեթներ (նահանգներ): 1870-ական թթ. վերջերին Արևմտյան Հայաստանի տարածքը բաժանված էր Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Սվազի, Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթների միջև: Կիլիկիան բաժանված էր Հալեպի և Ադանայի վիլայեթների միջև: Արևմտյան Հայաստանի և նրա հարևան երկրների վարչական բաժանումը հաճախ փոփոխվում էր: 1880 թ. գոյություն ունեին հետևյալ վիլայեթները. Էրզրումի, Մամուրեթ ուլ-Ազիզի (Մալաթիա, Ադիյաման, Արաբկիր և այլն), Դերսիմի, Բիթլիսի, Վանի, Հեքյարի, Դիարբեքիրի, Սվազի, իսկ 1886 թ.՝ Բիթլիսի, Վանի, Էրզրումի, Դիարբեքիրի, Մամուրեթ ուլ-Ազիզի և Հեքյարի (Ջուլամերիկ, Բաշկալա և այլն) վիլայեթները[2]:

Ընդհանրապես Թուրքիայի տիրապետության տակ ապրող հայ բնակչության թվի մասին մենք չունենք ճշգրտված տեղեկություններ: Սուլթանական կառավարությունը ոչ միայն մտահոգված չէր դրանով, այլև ամեն կերպ աշխատում էր, քաղաքական հասկանալի պատճառներով, ծածկել ու գաղտնի պահել իրական վիճակը: Թուրքական պաշտոնական շրջանները մի քանի անգամ հրատարակեցին թվական տվյալներ, բայց դրանք խիստ աղավաղված և միտումնավոր էին: Բ. Դուռը ամեն կերպ աշխատում էր պակաս ցույց տալ հայ բնակչության թիվը: Համեմատաբար հավաստի տեղեկություններ է տվել Կ. Պոլսի հայ պատրիարքարանը, որը 1882 թ. տվյալներ հրապարակեց հայ բնակչության թվի վերաբերյալ[3]: Այդ տվյալների համաձայն, թուրքական տիրապետության տակ գտնվող հայերի ընդհանուր թիվը կազմում էր 2660000 մարդ, ընդ որում, Վանի վիլայեթում՝ 400000, Սվազի վիլայեթում՝ 280000, Խարբերդի վիլայեթում՝ 270000, Բիթլիսի վիլայեթում՝ 250000, Դիարբեքիրի վիլայեթում՝ 150000, Էրզրումի վիլայեթում՝ 280000, Կիլիկիայում (Ադանայի

1 Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. Մասն առաջին, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 58-65: История военных действий в Азиатской Турции в 1828 и 1829 годах. Ч. 1, СПб., 1836, с. 55.

2 *А. И. Гиппиус*. Статистические таблицы вилайетов Турецкой империи, ближайших к Закавказью. Тифлис, 1889, с. 6, 11-14.

3 «Արարատ», Էջմիածին, 1914, N 9, էջ 811:

*և Հալեպի վիլայեթներ)՝ 380000, Ասիական Թուրքիայի մնացած մասերում՝ 455000, Եվրոպական Թուրքիայում՝ 195000:*

*Կ. Պոլսի հայ պատրիարք Ներսես Վարժապետյանի կողմից Բեռլինի կոնգրեսին ներկայացված հուշագրում թուրքահպատակ հայերի թիվը 1870-ական թթ. հաշվվում էր 3000000, որից 400000 Եվրոպական Թուրքիայում ու Կ. Պոլսում, 600000 Փոքր Ասիայում և Կիլիկիայում, 670000 Փոքր Հայքում (Սվազի վիլայեթ և Կեսարիայի սանջակ) և 1330000 Մեծ Հայքի թուրքական մասում (Էրզրումի, Վանի վիլայեթները, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը և այնուհետև, Սղերդի սանջակի հյուսիսային մասը)[1]: Մկրտիչ բեյ Դադյանը Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերի թիվը 1870-ական թթ. սկզբներին հաշվում էր 3400000, որից 150000 Կ. Պոլսում[2]:*

*Սուլթանական կառավարության դաժան ռեժիմի, անլուր ճնշումների ու հալածանքների հետևանքով արևմտահայ բնակչության թիվն անընդհատ և զգալի կերպով պակասում էր*: Կոտորածներ ու ջարդեր, բռնի մահմեդականացում, ժողովրդի արտագաղթ և այլն, սովորական երևույթներ էին Արևմտյան Հայաստանում: Ակնհայտ է, որ Հայաստանը հայերից մաքրագործելու՝ թուրքական սուլթանների քաղաքականությունն իր ծանր հետևանքներն ունեցավ դեռևս XIX դարի երկրորդ կեսին:*

* * *

*Ինչպես ամբողջ Ասիական Թուրքիան, այնպես էլ Արևմտյան Հայաստանը գտնվում էին սոցիալ-տնտեսական զարգացման խիստ ցածր մակարդակի վրա: Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը 1853 թ. գրում էին, որ Թուրքիայում տիրող ավատատիրական կարգերը գտնվում են «ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոս փուլում»[3]: Սուլթանական բռնապետական ռեժիմը, փաշաների հափշտակումներն ու կամայականությունները մեծ խոչընդոտ էին հանդիսանում կապիտալիստական զարգացման համար. «...Թուրքական... տիրապետությունը,- գրում էր Ֆ. Էնգելսը,– անհամատեղելի է կապիտալիստական կարգի հետ. ձեռք բերված հավելյալ արժեքը ոչնչով ապահովված չէ սատրապների ու փաշաների գիշատիչ ձեռքերից. գոյություն չունի բուրժուական ձեռնարկատիրական գործունեության առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի և նրա սեփականության ապահովությունը»[1]:*

1 Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանեան Հայաստանի. Կ. Պոլիս, 1878, էջ 30:

2 *Мкртич-бей Дадиан.* Армяне Оттоманской империи. Перевод с французского. Тифлис, 1878.

3 *К. Маркс и Ф. Энгельс.* Сочинения. Т. 9, с. 6.



*Սուլթանական կառավարության 1834 թ. հողային ռեֆորմը, որը նպատակ ուներ վերացնել ռազմա-ֆեոդալական խոշոր հողատիրությունը և դրանով իսկ թուլացնել կենտրոնախույս ուժերը, չունեցավ գրեթե ոչ մի էական հետևանք՝ ինչպես ամբողջ կայսրության մեջ, այնպես էլ Արևմտյան Հայաստանում, ուր իշխող շեյխերն ու բեյերը կիսանկախ էին և միանգամայն թույլ կապեր ունեին կենտրոնական կառավարության հետ: Նույն բախտին արժանացան նաև 1839 թ. հաթթը շերիֆը, 1856 թ. հաթթը հումայունը և թանզիմաթի դարաշրջանի սուլթանական մյուս հրովարտակները: «Թուրքական կառավարության բոլոր փորձերը,– գրում էին Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը,– կանգնել քաղաքակրթության ճանապարհի վրա, մատնվեցին կատարյալ անհաջողության...»[2]:*

*Ընդհանրապես Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի մեծ մասում, գոյություն ունեին հողատիրության չորս հիմնական ձևեր. պետական, վակֆային, ավատական և մասնավոր (մյուլքային): Առաջին և երկրորդ կարգի հողերը պատկանում էին պետությանը, սուլթանական պալատին, տոհմիկ բարձրաստիճան պաշտոնյաներին և մզկիթներին՝ հոգևորականությանը: Երրորդ կարգի հողերը, որպես սեփականություն, պատկանում էին կալվածատեր բեկերին, աղաներին և գյուղացիության մի մասին: Սուլթան Աբդուլ Մեջիդի 1858 թ. հրապարակած օրենքի համաձայն, հողի մասնավոր սեփականության իրավունքից կարող էր օգտվել միայն նա, ով ուներ պետության կողմից հաստատված կալվածագիր՝ թափու: Բեկերից ու աղաներից բացի, թափու ուներ նաև արևմտահայ գյուղացիության մի մասը: Այս կարգի գյուղացին ուներ սեփական հող, իրավականորեն ազատ էր, բայց չնայած դրան, գտնվում էր ծանր վիճակում, քանի որ վճարում էր բազմաթիվ ու բազմատեսակ հարկեր, որոնց թիվը անընդհատ ավելանում էր: Բացի այդ, նա ենթակա էր պետական պաշտոնեության (վալիների, սանջակբեյերի և մյուսների) ու ոստիկանության մշտական բռնություններին և կամայականություններին: Գյուղացիության մյուս մասը, որ հողազուրկ էր, անտանելի պայմաններում աշխատում էր բեկերի ու աղաների հողերի վրա:*

*Հողազուրկ գյուղացին, չունենալով արտադրության և ոչ մի միջոց, մշակում էր կալվածատիրոջ հողը: Մարաբա կոչվող այդ գյուղացին «զուրկ է ամեն ինչից՝ և՛ հողից, և՛ սերմից, և՛ լծկանից, և՛ գործիքից...*

1 Там же, т. 22, М., 1962, с. 33.

2 Там же, т. 9, с. 6.

*Այսպիսի մարաբան վերցնում է աղայից հողը, սերմը, լծկանը, գործիքները և բերքի 2/3-ը տալիս է աղային, իսկ միմիայն 1/3-ը իրեն վերցնում... Նախքան բերքի կիսելը վճարվում է կառավարության հասանելիք տասանորդի տուրքը... Մարաբան դեպի աղան ունի մի շարք պարտականություններ, որոնք հաճախ ավելի ծանր են նրա համար, քան նույնիսկ իր աշխատանքի արդյունքի 2/3 մասի վճարելը: Մարաբան պարտական է կատարել աղայի տնային ու դաշտային աշխատանքները... Եթե աղայի ընտանիքը գյուղումն է գտնվում, մարաբայի կինն ու աղջիկը պարտավոր են կատարելու աղայի տան կարը, լվացքը, գործվածքներ ու այլ աշխատանքներ: Այս ձևի օլամական աշխատանքները որևէ նորմայի կամ չափի տակ չեն մտնում, այլ այդ աշխատանքների քանակը, որակը և տեսակը կախված են աղայի կամքից: Աղան նայում է մարաբայի վրա իբրև մի գրաստի, ոտքի տակ տալով նրա մարդկային բոլոր արժանիքները»[1]: Մարաբա գյուղացիությունը, որը, ի դեպ, իր մեջ ընդգրկում էր թե հայ և թե մուսուլման գյուղացիներին, սակայն ամրացված չէր հողին և իրավականորեն ազատ էր համարվում: Բայց դա այդպես էր միայն թղթի վրա:*

*Հայտնի է, որ Արևմտյան Հայաստանի մեծ մասում բացահայտորեն ոտնահարվում էին իրավական նորմերը: Օրենքները չէին կիրառվում, ամեն ինչ լուծվում էր զենքի միջոցով, հզոր բեկերի ու ցեղապետերի կամքով ու հրամանով, նրանց իրավունքը անսահմանափակ էր: Իրավացի էր թուրքական կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը, որը կառավարությանն ուղղած իր պաշտոնական զեկուցագրերից մեկում, խոսելով Արևմտյան Հայաստանի մասին, գրում էր. «Այս կողմերը «ուժը իրավունքին կհաղթանակե», բռնապետական պատգամը իր իմաստի ամբողջությամբ կտիրապետե... գյուղացիներու հողը, կայքը, ընտանի անասունները, մինչև իսկ պատիվնին ու կյանքերնին աղայի քմահաճույքին ենթակա են»[2]:*

*Արևմտահայաստանի որոշ գավառներում հայ գյուղացիները գտնվում էին փաստորեն ճորտական վիճակում: Այդ մասին մենք ունենք բազմաթիվ վկայություններ, որ թողել են մեզ ժամանակակիցներն ու ականատեսները:*

*«Հայկական աշխարհ» պարբերականը 1868 թ. Սղերդի գավառի գյուղացիների մասին գրում էր, որ նրանք գտնվում են կատարյալ ճորտական դրության մեջ, որ բեկերը անսահմանափակ կերպով նրանց գնում ու վաճառում են որպես բանող անասունների[1]:*

1 *Ա-Դո.* Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները. Ե., 1912, էջ 285:

2 *Աստմ.* Պետական վերանորոգութիւնն ու հողային հարցը. Կ. Պոլիս, 1910, էջ 8-9:



*Զարսանջակի հայ բնակիչները 1867 թ. Էջմիածնի կաթողիկոսությանն ուղղած բողոքագրում խոսելով այն հարստահարությունների ու կեղեքումների մասին, որոնց ենթակա էին իրենք, հայտնում էին. «Կույս աղջիկ և կամ այրի ամուսնացած ժամանակը հինգ հարյուրեն մինչև հազար հինգ ղուրուշ կանխիկ ստակ պիտի վճարենք գյուղի մեջ նստող աղային, որ հրաման ընե ամուսնանալու և հետ այնորիկ արտոնություն ունենանք հարսանյաց հանդեսը կատարել: Ամեն մարդ տարին տասներկու ամիս անխախտ ձրի և առանց հացի և հացերնիս մեր քսակեն հետերնիս առնելով արտորեից, այգես[տա]նաց և պարտիզաց մշակությունը անխափան պիտի կատարենք. ամեն տուն իր աղային հիսուն վաթսուն բեռ փայտ տարոց տարի պիտի հատուցե. նաև որքան որ պետք ըլլա, իշխանին համար յուղ, ոչխար, գառ, մուճակ, ամենայն կարևոր պիտույքը ձրիաբար պիտի հատուցանենք: Եթե ընդդիմանանք կամ զանց առնենք և կամ սակավ ինչ ուշանա, շղթա, գելան, մահաղեղ, սուր, հրացան արդեն մեզի համար պատրաստված է... Ութսուն տարիեն ավելի է, որ անոնց [աղաների] թագավորական հարկը դարձյալ մենք պիտի վճարենք. իրենք ազատ են... այգի, պարտեզ և տուն կհաստատենք կամ հայրենական ժառանգ մնալով, բարկացած ժամանակը մեր ձեռքեն կառնե ուրիշի մը կուտա, կամ գյուղեն կվանե. ժամանակին Զարսանջակն երեք հազար տուն էր, այժմ հազար հինգ հարյուր տուն մնաց... անոնց ալ թագավորական հարկը դարձյալ կառնե կառավարությունը մենե»[2]:*

*Կ. Պոլսի «Մասիս» լրագիրը 1872 թ. վերջերին հրապարակեց Մուշից գրված մի թղթակցություն, որտեղ ասված էր. «Մերազնեայ դաս մը ժողովուրդ, որ ի Բռնաշէն, ի Խութ, ի Սասունք և ի Շատախ գաւառներ, քիւրտերու հետ խառն կը բնակին. նոցա գլխաւորներուն, որ խաֆիր կըսուին, ճորտ լինելով՝ ամենադառն կենաց վիճակուած են: Դաս դաս նոցա բաժին եղած, իւրաքանչիւրն իբրև հպատակ և սեփականութիւն համարուած, տարեկան տուրք կուտան խաֆիրներուն... Այն մարդակերպ վայրենի գազան խաֆիրներ (ճորտատեր)՝ ինքնագլուխ և ապստամբ վիճակի մէջ լինելով, իրենց ճորտ հայերը՝ կանամբ և որդւովք, շարժական և անշարժ կալուածներով իրարու ծախելու սովորութիւն ունին, և երբ իրարու դէմ կատաղին և թշնամանան, իւրաքանչիւրն՝ իրենց հպատակ հայերը բռնութեամբ առջևնին ձգելով, իրարու սահման կասպատակեն, մանաւանդ*

1 «Հայկական աշխարհ», Թիֆլիս, 1868, N 5-6, էջ 225:

2 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 202, վավ. 549:

թէ Հայոց բնակած գիւղերու վրայ Հարձակելով կկողոպտեն, կքանդեն, կաւերեն, կվիրաւորեն, կսպաննեն և կվերադառնան տեղերնին... Գերիտէր խաֆիրներ, երբ մանչ ծնանելու լինին, Հանձնիւր ճորտի տունէն՝ ոչխարով և գառամբ աչքալուսի պիտի երթան, տղայի զգեստցու պիտի տանին, այնինչ Հայոց մերկանդամ կանայք՝ ձեռքերով իրենց կուրծքը ծածկելու աղքատ վիճակի մէջ կգտնուին: Երբ պատանեկութեան Հասնի, զէնք պիտի պատրաստեն անոր: Կին առնելու ատենը, ղալան (պաշլըխ) պիտի տան Հարսնացուի ծնողաց, և Հարսանեաց պիտոյքը պիտի պատրաստեն. եթէ մեռած ալ պատաՀի, ոչխար, իւղ, պանիր և այլն տանելով՝ կմխիթարեն զխաֆիրներ: Բայց ընդՀանուր ազգութեան նախատինք այն կետն է, որ նախապետազն Հայոց պարկեշտութեան առագաստի Հարսներ և սրբութեան քողի ներքև սնուած աղջիկներ, այսօր Հոլանի եղած, խաֆիրներու տան մէջ, իբրև Հարճ՝ օրերով ձաւարը, կորկոտը շինելու, լաթը լուանալու և կարկատելու սպասարկութիւն կընեն՝ լռին արտասուօք: Եւ անոնց կըլկըլի արտերը քաՀնելու շաբաթներով կաշխատին մե՛րկ անձամբ և բո՛կ ոտամբ, արևակեզ և փշաՀար եղած...»[1]:

Այդ նույն թղթակցության մեջ ասվում էր, որ յուրաքանչյուր տուն ֆեոդալ աղային տալիս է «...յոթ բեռ ցորեն, մեկ պաճար, Հինգ ոչխար, երկու լիտր յուղ, երկու լիտր ծխախոտ, մեկ լիտր չորթան, չորս լիտր աղ, մեկ շալվար, մեկ զույգ զանկապան, մեկ զույգ գուլպա. մեկ զույգ խոնճան, մեկ զույգ գոգնոցի ժապավեն, երկու ունկի վառոդ, երկու ունկի կապար, երկու ունկի կանափ, Հինգ ունկի ձեթ, Հինգ Հատ պուտուկ, երկու շերեփ, երեսուն դգալ, չորս թի, երկու կողով, վեց ցախավել, մեկ դաՀուկ, չորս Հավ, երկու աքաղաղ, տասը սարակ, վեց Հարոր, 121/2 ղուրուշ ստակ և տարին երկու անգամ ունեցած ոչխարաց կաթ՝ գարնան՝ պանիր շինելու և աշնան մածուն բռնելու»[2]:

ԱրևմտաՀայ գյուղացու ճորտական վիճակի մասին շատերն են գրել: Այսպես, Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը սուլթանական կառավարությանն ուղղված իր մի բողոքագրի մեջ, ուր մանրամասնորեն նկարագրված էին Արևմտյան Հայաստանի գավառներում կատարվող ՀարստաՀարությունները, խոսելով Մոկս գավառի մասին, գրում էր, թե «Պէյերը գյուղացի Հայերն իրենց մէջ իբրև գերի կը վաճառեն»[3]: Այսօրինակ փաստերի մասին Հայտնում էին նաև Գարեգին Սրվանձտյանցը[4], Պողոս Նաթանյանը[1] և ուրիշները:

1 «Մասիս», Կ. Պոլիս, 1872, N 1239:

2 Նույն տեղում:

3 Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ. Կ. Պոլիս, 1876, էջ 226:

4 Գ. *Սրուանձտեանց*. Հնոց և նորոց. Կ. Պոլիս, 1874:



Ճորտական այս վիճակը շարունակվեց 1890-ական թթ. և ավելի ուշ՝ XX դարի սկզբներին: 1894 թ. օգոստոսին Էրզրումի ռուսական փոխՀյուպատոս Վ. Մաևսկին Կ. Պոլսի ռուսական դեսպան Ա. Նելիդովին ներկայացրած իր զեկուցագրում Սասունի Հայ բնակչության մասին գրում էր. «Սասունի յուրաքանչյուր Հայ ընտանիք իր գույքի և Հողի Հետ միասին գտնվում է յուրատեսակ ճորտային կախման մեջ, այս կամ այն աղայից: Եթե վերջինս անբավական է իր Հայից, ապա նրան վաճառում է ուրիշին, որքան Հայը շատ երեխաներ ունի, այնքան նրա գինը բարձր է»[2]:

1901 թ. Հոկտեմբերին Կ. Պոլսի ռուսական դեսպան Զինովևին ուղղած իր զեկուցագրում Վանի ռուսական փոխՀյուպատոս Տումանովսկին Սասունի մասին գրում էր, որ «Այնտեղ գոյություն ունի խաֆիրների սոցիալ-իրավական ինստիտուտ: Դա Հայերի Համարյա թե ճորտային կախվածությունն է բեկերից: Դեպի Սասուն կատարած իմ անցյալ տարվա ճանապարՀորդության վերաբերյալ զեկուցագրի մեջ ես արդեն առիթ եմ ունեցել մատնանշելու նման կախվածության գոյությունը, բայց այն ժամանակ ես չէի կասկածում, որ գործ ունեմ կառավարության կողմից Հաստատված իրավական նորմերի Հետ: Այդ նորմերի Համաձայն, յուրաքանչյուր Հայ պատկանում է որևէ աղայի և պարտավոր է ամեն տարի իր տիրոջը Հասցնել մեկ եզ կամ կով, մեկ ոչխար, մեկ այծ, բուրդ՝ մի զույգ շալվարի Համար, մի զույգ գուլպա (սինանի), մի զույգ քոշ (տրեխ) և 20 պիաստր փող: Ամուսնության դեպքում ղալիմի (գլխագնի) մեծ մասը անցնում է աղջկա ընտանիքի տիրոջը՝ ի սեփականություն: Փողի կարիքի դեպքում բեկերը վաճառում են իրենց գյուղացիներին: Եթե որևէ բեկ սպանի մյուսի գյուղացուն, ապա տուժած բեկը վրեժ է առնում առաջինի գյուղացուն սպանելով, փոխադարձության նույն կանոնը գործի մեջ է լինում նաև կողոպուտի դեպքում»[3]:

Տումանովսկին Հայտնում էր նաև այն մասին, որ կան բեկեր ու աղաներ, որոնք գործադրում են առաջին գիշերվա իրավունքը: Խոսելով Հայդար աղայի (Բիթլիսի վիլայեթ, Բուլանըխի կազա) մասին, Տումանովսկին գրում էր. «Այդ մարդը ընդՀանրապես այնպիսի մի անզգամ է, որ իր գյուղում Հաստատել է առաջին գիշերվա իրավունք»[4]:

Անգլիացի նշանավոր ճանապարՀորդ և աշխարՀագրագետ Լինչը գրում էր. «Ճորտական իրավունքը անՀայտ չէ այս երկրի Համար...

1 *Պ. Նաթանեան*. Արտօսր Հայաստանի կամ տեղեկագիր Բաղիշոյ, Քարբերդու, Չարսանճագի, Ճապաղջուրի և Երզնկայու. Կ. Պոլիս, 1883:

2 АВПРИ, Армянский фонд, Константинопольское посольство, д. 3176, л. 22.

3 Նույն տեղում, գ. 1587, թ. 14.

4 Նույն տեղում:

Ճորտ հայերը հայտնի են զեր-կուրի անվան տակ, որ նշանակում է ոսկով գնվածներ: Եվ իսկապես, նրանք գնվում և վաճառվում են քուրդ բեկերի ու աղաների կողմից, ճիշտ այնպես, ինչպես որ գնվում և վաճառվում են ոչխարներն ու տավարը: Միակ տարբերությունն այն է, որ այդ մարդիկ չեն կտրվում իրենց հողից և վաճառվում են այն հողի հետ միասին, որը նրանք մշակում են»[1]:

Սասունի հայ գյուղացիների ճորտական վիճակի մասին դեռևս 1860-ական թթ. գրել են ֆրանսիացի զինվորական Ֆ. Միլինգենը[2], իսկ ավելի ուշ՝ 1903 թ. ֆրանսիական պառլամենտի սոցիալիստական ֆրակցիայի ղեկավար Ֆրենսիս Պրեսանսեն, և մի շարք այլ հեղինակներ[3]:

Արևմտահայ գյուղացիության վիճակն ավելի ծանրացավ XIX դարի վերջին երեսնամյակում: 1870-ական թթ., երբ ավատական դասն իր օրավուր աճող տնտեսական պահանջները բավարարելու համար սկսեց հողային մեծ կուտակումներ կատարել, արևմտահայ գյուղացիության հողերի բռնագրավումը ստացավ զանգվածային կերպարանք: Կ. Պոլսի հայ պատրիարքարանի կողմից կազմված տեղեկագրերը 1874-1876 թթ. ընթացքում գավառական հարստահարությունների մասին բերում են հարյուրավոր օրինակներ, որոնք պերճախոս կերպով ցույց են տալիս, թե ինչպես բեկերը, աղաներն ու մյուս կարգի ֆեոդալները խլում են գյուղացիների հողերը, այգիները և դրանք իրենց սեփականությունը հայտարարում: Փաստերը ցույց են տալիս, որ բեկերը զենքի ուժով գրավում էին ամբողջ գյուղեր՝ դուրս քշելով այնտեղից բնակչությանը և սեփականացնում նրա հողային ամբողջ հարստությունը: Տեղեկագրերում զետեղված ցուցակներից պարզվում է, որ միայն 1874 թ. ընթացքում Վանի գավառում հողային հափշտակություններ են կատարվել 160, իսկ Դիարբեքիրի վիլայեթում՝ 110 հայկական գյուղերում[4]: Հողային բռնագրավումները հետագայում ավելի մեծ ծավալ ստացան[5], որովհետև սուլթանական կառավարությունը ցանկանում էր այդ միջոցը ևս օգտագործել Հայաստանը հայաթափ անելու իր դժոխային քաղաքականությունն իրագործելու համար:

---

1 *Х. Линч*. Армения, путевые очерки и этюды. Т. II, Тифлис, 1910, с. 554.

2 *Frederick Millingen (Osman-Seifi-Bej)*. La Turquie sous le règne d'Abdul-Aziz (1862-1867), Paris, 1868, p. 168.

3 Հայաստան և Մակեդոնիա. Ժընև, 1903, էջ 40: *Գ. Վարդանեան*. Հողատիրութիւնը Թիւրքիայում.– «Մուրճ», 1893, N 5: *Հ. Մուրադեան*. Ճորտատիրութիւնը Թիւրքիայում.– «Մուրճ», 1899, N 10:

4 Տեղեկագիր գաւառական հարստահարութեանց. Կ. Պոլիս, 1876, էջ 28-36:

5 Տեղեկագիր հողային գրաւման հանձնաժողովոյ, տետր Ա, Կ. Պոլիս, 1910, էջ 1-11:



Գյուղացին բազմաթիվ և բազմատեսակ հարկեր էր վճարում պետությանը: Պետական գլխավոր հակերից էին տասանորդը (աշարը), գլխահարկը (խարաջը), այնուհետև հողային, զինվորական, մաքսային առևտրական տուրքերը, հարկեր ճանապարհների, ջրի, աղի, մետաքսի, ծխախոտի, դրոշմաթղթի, ոչխարների և այլ կենդանիների, շենքերի, ամուսնության համար, զանազան այլ տուրքեր արհեստավորներից (էսնաֆներից), խանութպաններից, կառապաններից, որսորդներից, ճանապարհորդներից և այլն[1]: Հետաքրքիր է նշել, որ որոշ տեղերում հարկ էին վերցնում օդի համար: Մշտական բնույթ կրող հարկերից բացի, բնակչությունը տալիս էր նաև զանազան պատահական հարկեր ևս, որոնք գլխավորապես հավաքվում էին այս կամ այն պատրվակով միանվագ ձևով: Այսպես, օրինակ, հաճախ հարկ էին տալիս արքունական շինությունների և զորքի տեղափոխության համար: 1867 թ. Զարսանջակի հայ բնակիչները Կ. Պոլսի հայ պատրիարքին ուղղած իրենց նամակում ասում էին, թե իրենք հարկ են վճարում ննջեցյալներին գերեզմանում թաղելու համար, այլապես չի թույլատրվում որևէ թաղում կատարել: Թուրք փաշաները, ասված է նամակում, «մեր ննջեցեալները գերեզմանատուն չթողուցին ամփոփել՝ թէ երկիրը մերն է»[2]:

Պետական այդ հարկերից բացի, գյուղացին վճարում էր հարկեր բեկերին, աղաներին ու դերեբեյներին: Ավատական խավը զենքի ուժով ստիպում էր գյուղացիությանը, որպեսզի նա իրեն վճարի չնախատեսված ու պատահական բազմաթիվ հարկեր: Անպաշտպան գյուղացին ստիպված էր կատարել այդ պահանջը, որովհետև հակառակ դեպքում բեկերի ու աղաների հրոսակախմբերը կոչնչացնեին նրա ամբողջ ընտանիքը, ավերի ու թալանի կմատնեին կայքն ու գույքը: Ֆեոդալ բեկը մշտական ձև էր տալիս իր այդ պահանջին: Գյուղացին պարբերաբար վճարում էր այն ամենը, ինչ պահանջում էր նա:

Թուրք և քուրդ ֆեոդալների հետ մեկտեղ արևմտահայ գյուղացուն կեղեքում էր նաև «սեփական» վերնախավը՝ եկեղեցական պետերն ու վաշխառուները: Վասպուրականի հայ ժողովուրդը, բողոքելով տեղի հայ եկեղեցու գլուխ կանգնած Պողոս վարդապետի հարստահարությունների դեմ, գրում էր. «Քանի քանի անգամներ թախանձագին կերպով խնդրեցինք, աղաչեցինք, արտասուեցինք, պաղատեցինք և ոչ ոք լուաւ մեր ձայնին, ոչ ոք ի գութ շարժեցաւ մեր եղկելի և թշուառ հայրենեաց ողորմ վիճակին վրայ, ոչ ոք փոյթ ունեցաւ մեր Վասպուրական աշխարհի

---

1 Сборник географических и статистических материалов по Малой Азии. Вып. 66, СПб., 1896, с. 55.

2 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 202, վավ. 549:

վերաշինութեան, որոյ քանդումն ու քայքայումը ոչ այնչափ առաւել բռնապետ քիւրդի մը երեսէն է, որչափ եկեղեցւոյ պաշտոնեայ, խոնարհ Քրիստոսի աշակերտ և ժողովրդեան հայր կոչեցեալ անգութ, անողոք մեկու մը շնորհիւն է... զՊօղոսն հեռացուցէք, այն Պօղոսը կըսենք, որ մեր երկրի թշուառութեան և բողոքանաց բովանդակ առարկան է»[1]: Մուշ գավառի բնակիչները, բողոքելով Մխիթար վարդապետի դեմ, գրում էին. «Անձնմերկ ոտաբոբիկ փորը քաղցած ժողովուրդը իր վաստակը քրդին կուտայ, պարտքին կուտայ, տէրութեան հարկին կուտայ ու Մխիթար վարդապետին ալ կաշառք ու տուգանք պիտի տայ»[2]: Միքայել Նալբանդյանը «սեփական» հարստահարիչների մասին գրում էր. «Մեք սարսափում ենք, երբ աչք ենք ձգում այն անշքացած, անապատացած աշխարհի վերա..., ուր այժմ մեր խեղճ, անտեր և անօգնական ժողովուրդը միլիոնավոր բազմությամբ թշվառության, հարստահարության և հուսահատության մինչև հնարավոր ծայրը հասած, փոխանակ արտասուքի, արյուն է քամում աչքերից, երբ լաց է լինում, և ուր, դարձյալ, հայակերպ և գիշերադեմ վամպիրները տակավին չեն կշտանում անմեղ զոհի – խե՛ղճ ժողովրդի – արյունը ծծելուց»[3]:

Մենք արդեն ասացինք, որ Արևմտյան Հայաստանում XIX դարի ամբողջ երկրորդ կեսին և դեռ ավելի ուշ շրջանում իշխում էին ֆեոդալական հարաբերությունները: Սակայն չի կարելի չնկատել այն փաստը, որ արդեն 1870-ական թթ. սկսած Արևմտյան Հայաստանում աշխուժանում են ապրանքափոխանակային հարաբերությունները: Երկրի մի շարք գավառներում վաճառքի են հանվում մեծ քանակությամբ ապրանքներ: Ներքին առևտրի զարգացման վրա որոշ ազդեցություն են գործում առևտրական տարանցիկ ճանապարհները, մասնավորապես այն ճանապարհը, որ Տրապիզոնը միացնում էր Բայազետի և ապա Պարսկաստանի հետ[4]: Առևտրական այդ ճանապարհի շնորհիվ Էրզրումը դարձավ առևտրական կենտրոն: 1879 թ. Թիֆլիսում կարդացած իր մի դասախոսության մեջ Գրիգոր Արծրունին ասում էր, որ Էրզրումում, մինչև 1877-1878 թթ. ռուս-տաճկական պատերազմը, «Կ. Պոլսից եկող ապրանքը պատահում էր Պարսկաստանից անցնող անմշակ, հում բերքի հետ: Այնտեղ թափվում էին, նույնպես, ամեն կողմերից Հայաստանի թե բնական բերքերը և թե

1 Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 495-496:
2 Նույն տեղում, էջ 493:
3 *Մ. Նալբանդյան.* Երկերի լիակատար ժողովածու. հ. 3, Ե., 1940, էջ 103:
4 Բայազետն այն կետն էր, որի վրայով անցնում էր Թուրքիայից Պարսկաստան տանող միակ առևտրական ճանապարհը, գրում էր Մ. Ի. Բոգդանովիչը: (*М. И. Богданович.* Восточная война 1853-1856 гг., изд. 2-е. Т. I, СПб., 1877, с. 87).



գավառացի հայոց ազգաբնակության ձեռքերի վաստակը, աշխատասեր հայի և հայուհու արդյունագործությունները: Այսպիսով թե՛ բնիկ և թե՛ օտարական հայ առևտրականները, նույնպես և պարսիկ, հույն, երբեմն և Եվրոպայի վաճառականներ հավաքվելով Էրզրումի մեջ, տալիս էին այդ քաղաքին կյանք և առևտրական նշանակություն»[1]:

Առևտրա-փոխանակային հարաբերությունների զարգացման հետևանքով ավելի ուժեղացավ վաշխառուական կապիտալը, խորացավ գյուղացիության սոցիալական շերտավորման գործընթացը, նոր թափ ստացավ պանդխտության հոսանքը: Այս հարցերի կապակցությամբ խոսելով Արևմտյան Հայաստանի գավառներում տիրող դրության մասին, Գ. Սրվանձտյանցը 1880 թ. գրում էր. «Այժմ այս վիճակի մէջը ուրիշ բան չկայ ժողովրդեան մեր գաւառները, բայց միայն պարտք առնուլ, մուրհակ տալ, գրաւ դնել իր անասունն, իր արտն, իր պարտէզն, իր տունն և ի լրանալ պայմանին, անտրտունջ թողուլ ադոնք և մեկնիլ: Պարտքով կվճարէ տէրութեան հարկը, պարտքով կգնէ իր և ընտանեաց ապրուստն ու հագուստն, պարտքով դատ կվարէ... պարտքով պանդխտության ճամբու ծախքը կհոգայ, պարտքով հարսանիք կընէ. պարտքով Եւրոպայէն եկած կոնեակին և իքսիրին գինը կվճարէ...»[2]:

«Փորձի» թղթակիցներից մեկը, խոսելով Վանի և նրա հարևան գավառների գյուղացիության դրության մասին, նկատում էր. «Վայ այն գյուղացուն, որ անբերության, կամ մի հարսանիքի և կամ մի այլ արտաքո կարգի ծախուց պատճառով ստիպվում է մի ամենափոքր գումար վեր առնել տոկոսով, կամ ապառիկ ապրանք գնել: Այս փոքրիկ գումարը զանազան դարձվածներով քիչ ժամանակի մեջ այնպիսի արագությամբ է մեծանում, որ այլևս սովորական եկամտով նրան վճարելն անհնար է լինում, ուստի խեղճ գյուղացին յուր հողն ու տավարը չվաճառելու կամ գեթ ամբողջը չվաճառելու համար ստիպված է յուր գերդաստանից մի կամ ավելի հոգի Կ. Պոլիս կամ մի այլ մեծ քաղաք ուղարկել, որպեսզի դրամ շահեն և ազատեն իրենց կալվածը: Դժբախտաբար, այսպիսի դրամառություն և հետևաբար պանդխտությունը հաճախ է պատահում»[3]: Արևմտահայերի պանդխտության, որպես սոցիալական մի մեծ չարիքի մասին խոսել է դեռևս Միքայել Նալբանդյանը: Իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ նա գրում էր. «...ազգը օր ըստ օրե թողնում է յուր երկիրները և կենդրոնանում է քաղաքներում:

1 *Գ. Արծրունի.* Թիւրքաց հայերի տնտեսական դրութիւնը (հրապ. դասախօսութիւն, կարդացուած 1879 թ. մարտի 25-ին). Թիֆլիս, 1894, էջ 6:
2 *Գ. Սրուանձտեանց.* Թորոս աղբար. հ. Բ, Կ. Պոլիս, 1884, էջ ԺԴ:
3 «Փորձ», 1879, N 4, էջ 65-66:

*Աղքատությունը ստիպում է նորան թողուլ յուր տունը, յուր ընտանիքը, յուր ամուսինը, յուր զավակները և գնալ Պոլիս կամ այլ քաղաք, աղքատութենից ազատվելու համար»*[1]:

*1880-ական թթ. Մշո գավառի դրության մասին ժամանակակիցներից մեկը գրում էր. «Մշո աշխարհ 25 տարիեն մարդ չմնար, ղարիպություն տի կավրե զմեր աշխարհ... կիսրարն ու վաշխառությունն, իբր ժանտախտ Մշո աշխարհն ի կորուստ մատնած են, և եթե այդպես շարունակվի, այդ բարեբեր և ընդարձակ դաշտը, անախորժ բուերու վայր մը դարձած տեսնելու դժբախտությունն պիտի ունենամք»*[2]:

*Մ. Մամուրյանը 1881 թ. նշում էր. «Վաճառականը կգաղթե, երկրագործը կգաղթե, արվեստավորը կգաղթե, բանվորը կգաղթե, մեկ խոսքով՝ ամենքը կգաղթեն, և Հայաստան կմնան շատ տեղ միայն ծերեր, կիներ, մանկունք»*[3]:

*Պանդխտության հարցի վերաբերյալ 1889 թ. մեկ ուրիշ հեղինակ գրում էր. «Մուշի, Վանի, Բիթլիսի և Էրզրումի հայ գյուղացիք 40 տարիե ի վեր կպանդխտին: Հոռմե հետէ շոգենավը հեռավոր երկիրներ մոտեցուց Հայաստանի մերձավոր նավահանգստին՝ Տրապիզոնին, ալ մեր գյուղացիք թռչնոց նման երամներ կազմելով, աշխարհներ այց ելնել սկսան»*[4]*: Կ. Պոլսի հայ պատրիարքարանի տվյալների համաձայն՝ միայն Պոլսում սևագործ աշխատանքով զբաղվող հայ պանդուխտների թիվը 1870-ական թթ. վերջերին կազմում էր 30 հազար մարդ*[5]*: Գյուղի աղքատացման գործընթացը Արսեն Թոխմախյանը կապում էր քաղաքների հետ: «Որքան որ գյուղերը մոտ են քաղաքին,– գրում էր նա,– այդ չափով էլ ավելի խիստ ենթարկված են քաղաքացոց հարստահարությանց և ավելի շատ աղքատ են»*[6]:

*Շուկայական-փոխանակային հարաբերությունների զարգացման հետևանքով առևտրական կապիտալն ուժեղացավ Վանում, Էրզրումում, Բայազետում և Արևմտյան Հայաստանի այլ կենտրոններում: Սակայն հայ առևտրական բուրժուազիան գործում էր գլխավորապես Արևմտյան Հայաստանից դուրս՝ Կ. Պոլսում, Զմյուռնիայում ու Թուրքիայի ծովափնյա*

1 *Մ. Նալբանդյան.* Երկերի լիակատար ժողովածու. հ. 3, էջ 68:
2 Հանդէս գրականական և պատմական, գիրք Ա. Մ., 1888, էջ 225:
3 *Մ. Մամուրեան.* Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը. Զմիւռնիա, 1881, էջ 200:
4 «Արմենիա», Մարսել, 1889, N 3:
5 Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի, էջ 28:
6 *Ա. Թոխմախեան.* Մասիս լեռների հարաւային ստորոտները, Բ մասն. Թիֆլիս, 1882, էջ 16-17:



*մյուս քաղաքներում*[1]*: XIX դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում չստեղծվեցին արդյունաբերական քիչ թե շատ աչքի ընկնող ձեռնարկություններ: Սակայն, չնայած դրան, երկրի տնտեսության մեջ առաջ եկան իրենց էությամբ կապիտալիստական պրոցեսներ, որոնք սկսեցին, թեև թույլ և դանդաղ կերպով, քայքայել բնատնտեսությունը և ճեղքեր բացել տիրող ավատատիրական կարգերի մեջ:*

*Ապրանքա-փոխանակային հարաբերությունների զարգացման հետևանքով ուժեղացավ աշխատավորական մասսաների կեղեքումը և շահագործումը: Թուրքական կառավարությունն ավելացրեց գյուղացիությունից գանձվող հարկերի չափը: Հարկերի այն քանակը, որ գյուղացին վճարում էր 1840-1850-ական թթ., խիստ ավելացավ 1860-ական թթ. հետո: Այսպես, օրինակ, 1835 թ. զինվորական տուրքը սահմանված էր 15 դահեկան, 1870-ական թթ. վերջերին՝ 37,5 դահեկան: 1840-1850-ական թթ. աշարը կազմում էր երկրագործական արդյունքի 1/10-ը, իսկ 1890-ական թթ.՝ 1/8-ը: 1870-ական թթ. յուրաքանչյուր ոչխարի կամ այծի համար վճարվում էր մեկ դահեկան, իսկ 1890-ական թթ.՝ 4,5 դահեկան: Խոսելով Թուրքիայում բնակչությունից գանձվող հարկերի մասին, ռուսական գնդապետ Զելենոյը 1875 թ. Կ. Պոլսից գրում էր. «Հարկերը և տուրքերը իրենց չափով ու գանձման կամայականությամբ դարձել են անտանելի»*[2]:

*Հարկերի ավելացման գործում որոշ դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ սուլթանական Թուրքիան, հայտնվելով Անգլիայի ու Ֆրանսիայի ֆինանսական-թալանչիական գործարքների ցանցի մեջ, խոշոր պարտքերի տակ ընկավ: Օրավուր աճող այդ պարտքերը մարելու նպատակով թուրքական կառավարությունն անընդհատ ավելացնում էր ժողովրդից գանձվող հարկերը: «Գավառաց հայերը,– գրում էր Հ. Պարոնյանը,– միայն տուրք վճարելու և հարստահարվելու դատապարտված են»*[3]:

*Սուլթանական կառավարության համար գանձվող ծանր հարկերը մի կողմից, թուրք և քուրդ բեկերի, աղաների անլուր հարստահարությունները՝ մյուս կողմից, ինչպես նաև ապրանքա-փոխանակային հարաբերությունների զարգացման հետևանքով առաջացած վաշխառուական կապիտալը տնտեսական խիստ ծանր կացություն էին ստեղծում Արևմտյան Հայաստանի գյուղացիության համար: Գյուղացիական հոծ զանգվածներն ապրում էին խիստ քայքայման և աղքատացման պրոցես: Որոշ գավառ-*

1 *Յ. Մրմըրեան.* Թիւրքահայոց հին վաճառականութիւն և վաճառականք. Կ. Պոլիս, 1908, էջ 44-45:
2 РГВИА, ф. Военно-учебного архива (ВУА), д. 56518, л. 67.
3 *Հ. Պարոնյան.* Երկերի լիակատար ժողովածու, հ. 11, Ե., 1948, էջ 39:

*ներում գյուղացու աղքատությունը հասնում էր ծայր աստիճանի*: Մուշից գրված մի թղթակցության մեջ տեղի գյուղացիության մասին հետևյալն էր ասվում. «Խուռն բազմությամբ գյուղացիք թափած են այստեղ չորս կողմեն և գթություն կհայցեն իրենց թշվառ վիճակին վրա. կիսամեռ եղած են գրեթե բազմաթիվ ընտանիքներ՝ իրենց առօրյա պաշարաց պակասութենեն»[1]:*

*Բուլղարական ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ, հեղափոխական-դեմոկրատ Խրիստո Բոտևը 1870-ական թթ. գրած իր հոդվածներում նշում էր այն չափազանց ծանր վիճակը, որի մեջ գտնվում էր աշխատավոր ժողովուրդը Անատոլիայում: 1875 թ. մարտ ամսին, օրինակ, Բոտևը գրում էր, թե աղքատ գյուղացու դրությունն այնքան օրհասական է, որ նա ստիպված է երբեմն մի քանի փութ ցորենով վաճառել իր ընտանիքի անդամներին[2]:*

*Համընդհանուր աղքատության ու անապահովության պայմաններում բնության ամեն մի աղետ կամ այլ կարգի անբարենպաստ հանգամանք խիստ ծանր էր նստում աշխատավոր գյուղացիության վրա: Ահա մի օրինակ. 1879 թ. երաշտը, ինչպես նաև ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմի ժամանակ ու դրանից հետո տեղի ունեցած ավերածություններն ու կողոպուտը, որոնք ամեն կերպ հովանավորվում էին Բ. Դռան կողմից, առաջ բերեցին ահռելի սով Արևմտյան Հայաստանի շատ շրջաններում, մասնավորապես Վասպուրականում, Ալաշկերտում, Էրզրումի ամբողջ նահանգում: 1879-1881 թթ. այդ դաժան ու համատարած սովի հետևանքով բնաջնջման ենթարկվեց տասնյակ հազարավոր մարդ:*

---

1 «Մեղու», Կ. Պոլիս, 1864, N 234, էջ 59:

2 *Христо Ботев.* Публицистика, статьи, очерки, письма. Перевод с болгарского. М., 1952, с. 257.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՈՒՄՆԵՐ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

*Գտնվելով օտար բռնապետությունների տիրապետության տակ, հայ ժողովուրդը ենթակա էր նաև ազգային ճնշումների ու հարստահարությունների ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում: Սակայն Հայաստանի այդ երկու մասերում կիրառվող ազգային ճնշման քաղաքականությունը միատեսակ չէր: Եթե ցարական կառավարության գաղութային քաղաքականության հիմնական նպատակն էր տնտեսական շահագործման ենթարկել երկիրը և խաթարել հայ ժողովրդի ազգային-քաղաքական կյանքի ու մշակույթի զարգացումը, ապա օսմանյան պետությունը ձգտում էր դաժան բռնությունների ու անընդմեջ կոտորածների միջոցով ֆիզիկապես ոչնչացնել արևմտահայ զանգվածներին: Արևմտահայության վիճակը անհամեմատ ծանր էր ու օրհասական: Ծանոթանանք հարցին վերաբերող փաստերի հետ: Նախ Արևելյան Հայաստանում ազգային ճնշումների մասին:*

## 1

*Ցարական ինքնակալությունը վարում էր ազգային-գաղութային ճնշման քաղաքականություն, ինչպես մյուս ոչ ռուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի նկատմամբ: Ցարիզմն աշխատում էր Արևելյան Հայաստանը դարձնել տնտեսական, գաղութային շահագործման օբյեկտ, վերածել ռուս առևտրական բուրժուազիայի ապրանքների սպառման շուկայի և ապա հումք մատակարարող բազայի՝ ռուսական արդյունաբերական բուրժուազիայի համար*:*

*Բնորոշ է, որ 1850 թ. Անդրկովկաս էր ներմուծվում ապրանք (գլխավորապես ֆաբրիկատ) 3809993 ռուբլու, իսկ 1875 թ.՝ 8973860 ռուբլու արժողությամբ: 1850 թ. Անդրկովկասից արտահանվել է (գլխավորապես հումք) 3835350, իսկ 1875 թ.՝ 6262152 ռուբլու արժողությամբ: Նշված ներմուծման և արտահանման մեջ վճռական դեր էր խաղում ռուսական բուրժուազիան[1]:*

---

1 *Н. Шавров.* Обзор производительных сил Кавказского наместничества за 1879 г. Тифлис, 1880, с. 345.

*1860-1870-ական թթ. Անդրկովկասում կատարվող ճանապարհաշինության շնորհիվ ցարական կառավարությունը նոր հնարավորություններ ստացավ Արևելյան Հայաստանը և ամբողջ Անդրկովկասը տնտեսական ավելի ինտենսիվ շահագործման ենթարկելու համար: Դրա հետևանքով զգալի չափով ուժեղացավ ցարիզմի ազգային-գաղութային ճնշման քաղաքականությունը: Սակայն չպետք է մոռանալ, որ Հայաստանի և ամբողջ Կովկասի տնտեսական «նվաճումը», ինչպես նկատել է Վ. Ի. Լենինը, լրիվին չավարտվեց անգամ 1890-ական թթ.*[1]*:*

*Ցարական կառավարությունն ամեն կերպ արգելակում, խափանում էր հայ ժողովրդի մշակութային զարգացումը, հետապնդում էր նրա մշակույթը, մամուլը, գրականությունը, վարում էր բռնի ռուսացման քաղաքականություն:*

*Ռոմանովների ինքնակալության ազգային-գաղութային ճնշման քաղաքականությունն առանձնապես ուժեղացավ 1880–1890-ական թթ.: Ցարական կառավարությունը ուժեղացրեց հալածանքները ամբողջ կայսրության մեջ: Ի թիվս մյուս ժողովուրդների, նոր արշավանք սկսվեց նաև հայ ժողովրդի դեմ, խիստ հսկողության տակ առնվեց պարբերական մամուլը, խստացավ գրաքննությունը: Մշակութային-կրթական և բարեգործական ընկերությունները դիտվեցին որպես կասկածելի կազմակերպություններ, պետական պաշտոններից հեռացվեցին բազմաթիվ հայ գործիչներ: Ցարական կառավարությունն առանձնապես խիստ միջոցառումներ ձեռնարկեց հայկական դպրոցների նկատմամբ: Համարելով այդ դպրոցները հայկական մշակույթի զարգացման, լուսավորության և ազգային ինքնաճանաչության գլխավոր օջախներ, նա որոշեց ոչ միայն թույլ չտալ հայկական դպրոցների ցանցի հետագա զարգացումը, այլև փակել եղածները: Հարցը ցարական մինիստրների հատուկ քննության առարկա դարձավ 1882 թ.: Հաջորդ տարին այս խնդրով զբաղվեցին ներքին գործերի մինիստր կոմս Դմիտրի Տոլստոյը, լուսավորության մինիստր «հայազգի» Դելյանովը և Կովկասի այն ժամանակվա կառավարչապետ իշխան Ա. Դոնդուկով-Կորսակովը: Ցարական այդ սատրապները հայկական դպրոցների համար 1884 թ. փետրվարի 16-ին ընդունեցին մի կանոնադրություն, որը մեծ չափով սահմանափակում էր դպրոցների ցանցը և զրկում այդ դպրոցներն իրենց ազգային դեմքից: Կանոնադրության համաձայն, հայկական դպրոցների մեծ մասը պետք է դրվեր ավելի ծանր վիճակի մեջ և պիտի առնվեր կառավարության անմիջական և խիստ հսկողության տակ: Փետրվարի 16-ի կանոնադրությունը, սակայն, հանդիպեց դի-*

1 *Վ. Ի. Լենին.* Երկերի լիակատար ժողովածու. հ. 3, էջ 770:



*մադրության: Ցարական կառավարությունը դիմեց բռնի միջոցների: 1885 թ. մարտին տրված հատուկ հրամանի համաձայն, ոստիկանությունն ուժով փակեց դպրոցների մեծ մասը*[1]*:*

*Ցարական կառավարության ազգային-գաղութային քաղաքականությունը բնականորեն առաջ էր բերում համապատասխան դիմադրություն և ըմբոստություն*: Հայտնի է, թե ինչպիսի սուր տողեր է գրել Միքայել Նալբանդյանը դեռևս 1860-ական թթ. սկզբներին ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության մասին: 1860–1870-ական թթ. Անդրկովկասում գործող հայրենասիրական մի շարք խմբակներ կոչ էին անում պայքար ծավալել Ռոմանովների ինքնակալության դեմ: 1880-ական թթ. հայ մտավորականությունը ելույթներ ունեցավ ցարական կառավարության ազգային ճնշման քաղաքականության դեմ: Այդ տարիներին, օրինակ, հակացարական բնույթի հոդվածներ տպագրվեցին Երևանում հրատարակվող «Պսակ» լրագրում և այլ պարբերականներում: Հայկական դպրոցների փակման կապակցությամբ տեղի ունեցան ժողովրդական ցույցեր ու ըմբոստացումներ: 1885 թ. փետրվարին Թիֆլիսում հրապարակվեց «Հայ եղբայրներ ու հայ քույրեր» խորագիրը կրող մի կոչ, ուր խստորեն դատապարտվում էր Ալեքսանդր III-ի հակահայկական քաղաքականությունը*[2]*:*

*Սակայն, չնայած այս բոլորին, չպետք է մոռանալ, որ շնորհիվ սոցիալ-տնտեսական ու քաղաքական մի շարք պատճառների, որոնց մասին մենք արդեն խոսեցինք վերևում, ազգային ազատագրության հարցն Արևելյան Հայաստանում ստորադաս հարց էր և կապվում էր համառուսական ընդհանուր հզոր հեղափոխական շարժման հետ, իսկ Արևմտյան Հայաստանում հանդես էր գալիս որպես առաջնահերթ, հիմնական հարց:*

*Հետաքրքիր է այստեղ նշել մի բնորոշ հանգամանք: 1850–1890-ական թթ. հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարների քարոզիչների դերում, ինչպես հայտնի է, հանդես եկան մի շարք ականավոր գրողներ ու հրապարակախոսներ: Նրանք գրեթե բոլորն էլ քարոզում էին այն միտքը, թե անհրաժեշտ է ազգային-ազատագրական պայքար մղել սուլթանական Թուրքիայի դեմ: Բայց նրանք չէին խոսում արևելահայերի ազգային-քաղաքական անկախության մասին: Ռափայել Պատականյանը, օրինակ, որ բազմաթիվ մարտական կոչեր էր ուղղում թուրքական տիրապետության դեմ, չի գրել արևելահայերի ազգային շարժման անհ-*

1 Տե՛ս *Վ. Երկանյան.* Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում. Ե., 1970, էջ 141-146:

2 *Մ. Ներսիսյան.* Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում. Ե., 1940, էջ 62:

րաժեշտության մասին: Նա գտնում էր, որ ռուսական կայսրության մեջ ապրող հայերի վիճակը անհամեմատ ավելի լավ է, քան սուլթանական բռնապետության լծի տակ ապրող արևմտահայերի վիճակը: Պետերբուրգի գրաքննական կոմիտեին ուղղած՝ 1861 թ. հուլիսի 3-ի թվակիր իր դիմումի մեջ Պատկանյանը գրում էր, որ ինքը ցանկանում է «Հյուսիս» անունով մի լրագիր հրատարակել, որի նպատակը պետք է լինի գովաբանել Ռուսաստանը: «Մի խոսքով,– գրում էր Պատկանյանը,– մեր պարբերական հրատարակությունը անելու է իմ երկրորդ հայրենիքի՝ Ռուսաստանի գովքը, քանի որ միայն այդ կերպ կարող ենք շնորհապարտ լինել մեծ Ռուսաստանին, որի բարերար պտուղները վայելել և վայելում ենք մենք»[1]:

Պատկանյանի այդ մտքերը չի կարելի պատահական համարել, կամ թե բացատրել այլ հանգամանքներով, որովհետև, երբ նա 1863 թ. սկսեց հրատարակել «Հյուսիս» պարբերականը, ապա շարունակեց իր այդ տեսակետների պրոպագանդը: Պատկանյանը բացառություն չէր: Հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գաղափարախոսներից մեկը՝ Րաֆֆին ևս գրում էր, որ Ռուսաստանի հայերը բնակվում են «բարեկարգ պետության հովանավորության ներքո», որ նրանք «նյութապես ավելի բարեբախտ վիճակի մեջ են գտնվում, քան իրանց տաճկահպատակ եղբայրները»[2]: Րաֆֆին գտնում էր, որ ռուսահայերը պետք է օգնեն արևմտահայերին՝ նրանց ազգային ազատագրության գործը հաջողությամբ լուծելու համար: Ճիշտ է, նա մի անգամ չէ, որ հանդես եկավ ցարական կառավարության հակահայկական քաղաքականության դեմ: Հայտնի է, օրինակ, որ երբ ցարական կառավարությունը 1885 թ. բռնությամբ փակեց հայկական դպրոցների մեծ մասը, նա թե՛ իր գրչով, թե՛ բանավոր խոսքով ու պրակտիկ գործունեությամբ հանդես եկավ Ռոմանովների գաղութային քաղաքականության դեմ: Սակայն, չնայած դրան, մեծ վիպասանը անգամ այդ տարիներին կոչ էր անում քաղաքական-ազատագրական պայքար վարել թուրքական բռնապետության դեմ: Նա մերժում էր ռուս մեծապետական շովինիստների այն սադրիչ պնդումը, թե արևելահայերը ձգտում են քաղաքական անկախություն ձեռք բերել Անդրկովկասում:

Գրիգոր Արծրունին ծրագրեր էր կազմում Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու և Ռուսաստանին միացնելու համար*: Խիստ բնորոշ է այն փաստը, որ 1860-ական թթ. սկզբներին, երբ լեհ իշխան Չարտորիժսկին Կ. Պոլսում եղած ժամանակ առաջարկ է անում Մկրտիչ Պեշիկթաշլյանին՝ կազմակերպել կովկասահայերի ապստամբություն Ռուսաստանի դեմ, նա մերժում է այդ առաջարկը[1]: Իսկ հայտնի է, որ հենց նույն ժամանակ Պեշիկթաշլյանը ողջունում էր թուրքական տիրապետության դեմ ապստամբության դրոշ բարձրացրած զեյթունցիներին և ամեն կերպ օգնում էր նրանց:

Բերենք այլ կարգի մի շարք փաստեր: 1850-1880 թթ. հեղափոխական-քաղաքական լայն գործունեություն ծավալեց Անդրկովկասի տարատիճան դեմոկրատական մտավորականությունը: Նրա ճնշող մեծամասնությունն ըմբռնելով, որ Անդրկովկասի ժողովուրդների ինչպես սոցիալական, այնպես էլ ազգային ազատագրությունը սերտ կերպով կապված է ռուս ժողովրդի հեղափոխական պայքարի հետ, մերժում էր ազգային առանձին պայքարի մարտավարությունը և միավորում, միաձուլում էր իր պայքարը ռուսական հեղափոխական շարժման հետ: Անդրկովկասի դեմոկրատական մտավորականության ներկայացուցիչները գտնվում էին ռուս հեղափոխական մտքի ուժեղ ազդեցության տակ, ակտիվորեն գործում էին համառուսական հեղափոխական շարժման մեջ, աշխատում էին Ռուսաստանում գործող հեղափոխական խմբակներում, անձնական սերտ կապեր հաստատում ռուսական հեղափոխական շարժման խոշոր դեմքերի հետ:

Անդրկովկասի տարատիճան այդ մտավորականության առաջին խոշոր ներկայացուցիչներից մեկն էր հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը, որը հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրությունը կապում էր ռուս ժողովրդի պայքարի ու ազատագրության հետ, ակտիվ կերպով գործում էր ռուսական հեղափոխական շարժման մեջ, գաղափարական ու քաղաքական սերտ կապեր էր հաստատում հեղափոխական շարժման այնպիսի դեմքերի հետ, ինչպիսիք էին Ն. Գ. Չեռնիշևսկին, Ա. Ի. Գերցենը, Ն. Պ. Օգարյովը, Մ. Ա. Բակունինը և մյուսները:

Բնորոշ է, որ 1860-ական թթ. սկզբներին Մոսկվայում և Պետերբուրգում սովորող Անդրկովկասի ուսանողության շատ ներկայացուցիչներ ոչ միայն ամբողջովին գտնվում էին ռուսական հեղափոխական-քաղաքական մտքի ուժեղ ազդեցության տակ, այլև անձնական կապեր էին հաստատել ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատ Չեռնիշևսկու հետ[2]: Ռուսաստանում սովորող Անդրկովկասի երիտասարդությունը 1860-ական թթ. սկզբներից արդեն ակտիվ մասնակցություն էր ունենում ռուսական ուսա-

1 РГИА, ф. Петербурского цензурного комитета, 1861, д. 90, л. 1.
2 *Րաֆֆի*. Տաճկահայք. Թիֆլիս, 1895, էջ 75:

1 Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԳ, էջ 55:
2 *Г. Туманов*. Характеристика и воспоминание. Тифлис, 1913, с. 230.

*նողական հեղափոխական շարժումներին: 1861 թ., օրինակ, Պետերբուրգում տեղի ունեցած ուսանողական շարժումների առթիվ բանտարկված երկու հարյուր ուսանողների թվում, որոնց ցուցակը ժամանակին հրապարակվեց Ա. Ի. Գերցենի «Կոլոկոլում», կային բավական թվով անդրկովկասցի ուսանողներ:*

*Անդրկովկասի տարասեռ դեմոկրատական մտավորականության կապը ռուսական հեղափոխական շարժման հետ ավելի սերտ դարձավ և ավելի մեծ չափերով արտահայտվեց 1870-1880-ական թթ.: Դեմոկրատական մտավորականության ներկայացուցիչները, որոնց թիվը 1870-ական թթ. արդեն բավական մեծ էր, ակտիվ կերպով մասնակցում էին հեղափոխական-նարոդնիկական շարժմանը[1]: Մոսկվայում, Պետերբուրգում, Ռոստովում, Խարկովում, Կիևում գործող նարոդնիկական խմբակներում աշխատում էին, օրինակ, անդրկովկասցի ուսանողներ՝ Իվան Ջաբադարին, Ստեփան Ղարդաշյանը, Եկատերինա Գամկրելիձեն, Դավիթ Այվազյանը, Օլգա Սաֆարյանը, Կոստանդին Մամիկոնյանը, Շահթախտինսկին, Միքելաձեն, Շահնազարյանը և շատ ուրիշներ[2]: 1875 թ. Մոսկվայում Սոֆիա Բարդինայի ղեկավարությամբ կազմակերպված Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպություն կոչվող նարոդնիկական խմբակի ակտիվ գործիչների զգալի մասը կովկասցի ուսանողներ էին: Նրանց գործուն մասնակցությունը համառուսական ընդհանուր հեղափոխական շարժմանն այնքան ակնառու էր, որ ժամանակի լրագրերը, ինչպես, օրինակ, Կրաևսկու «Գոլոս» թերթը, հատուկ կերպով ընդգծում էին այդ հանգամանքը: Եվ կարևոր է նորից հիշել, որ Կովկասի այդ ուսանողությունը, մասնակցելով համառուսական հեղափոխական շարժումներին, չուներ որևէ անջատական ձգտում: Սոֆիա Բարդինայի վերը նշված խմբակի անդամ և 50-ի դատավարությամբ դատված վրացի ուսանող Ջաբադարին իր հուշերի մեջ այս մասին գրում էր. «Մեր դատավարության ընթացքում (50 նարոդնիկների դատավարության մասին է խոսքը– Մ. Ն.) իմ հայրենակիցներից և ոչ մեկը սեպարատիզմի մասին անգամ չէր մտածում, այլ աշխատում էր բացառապես ռուսական սոցիալական հեղափոխության հաղթանակի համար, հեղափոխություն, որը միայն կարող էր տալ ազատություն Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին»[3]:*

1 *Մ. Ներսիսյան.* Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, էջ 24-40:

2 РГИА, д. Департамента министерства юстиции. Второе уголовное отделение, 1883, д. 11321; Био-библиографический словарь. Т. II, вып. 3, М., 1931, с. 983; *В. Г. Короленко.* Письма. Т. I. Харьков, 1923; Народовольцы 1880-90-х гг. Т. II, М., 1929, с. 9.

3 Былое. СПб., 1907, N 8, с. 2.



*Այն հանգամանքը, որ Անդրկովկասի տարասեռ դեմոկրատական մտավորականության մի մասը առաջ չէր քաշում ազգային հարցը, մերժում էր ազգային անջատական շարժման տակտիկան և Անդրկովկասի ժողովուրդների ազատությունը կապում էր ռուսական հեղափոխական շարժման հետ, ինքնին արդեն խոսում է այն մասին, որ ինչպես այդ տարածաշրջանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում հիմնականը ոչ թե ազգային-քաղաքական շարժման հարցն էր, այլ ընդհանուր, համառուսական բնույթ կրող ագրարային-գյուղացիական հարցը:*

*Ավելորդ չէ այստեղ նշել այն, որ ցարական Ռուսաստանի որոշ հետադիմական շրջաններ, հետապնդելով սադրիչ նպատակներ, փորձում էին, հակառակ իրական փաստերի, գործն այնպես պատկերել, թե իբր Անդրկովկասում ուժեղ է ազգային, անջատական շարժումը: Այդ իմաստով 1865 թ. մի քանի հոդվածներ տպագրեց հետադիմական «Մոսկովսկիյե վեդոմոստի» թերթը, որն այն ժամանակ խմբագրում էր մեծապետական շովինիստների պարագլուխներից մեկը՝ խավարամիտ Կատկովը: Հետադիմական այդ թերթը գրում էր, թե Անդրկովկասի բնիկ երիտասարդության մեջ խիստ տարածված է վրացական և հայկական ինքնուրույն թագավորություններ ստեղծելու ձգտումը, որ ստեղծվել են «Երիտասարդ Վրաստան», «Երիտասարդ Հայաստան» ազգային-անջատական բնույթի գաղտնի կազմակերպություններ, որոնք ղեկավարում են լեհական ապստամբները և այլն[1]: Թերթը փորձում էր Թիֆլիսի համքարների 1865 թ. հունիսի 27-28-ի հայտնի ելույթը, որ ուներ սոցիալ-դասակարգային բնույթ, պատկերել որպես ազգային-քաղաքական շարժման մի արտահայտություն[*]:*

*Հետաքրքիր է, որ «Մոսկովսկիյե վեդոմոստիի» այդ պնդման դեմ հանդես եկան մի շարք թերթեր, որոնք աշխատեցին ցույց տալ, որ Կատկովի եզրակացություններն արդյունք են հիվանդոտ երևակայության: Ի պատասխան «Մոսկովսկիյե վեդոմոստիի» 1865 թ. սեպտեմբերի 5-ի խմբագրական հոդվածի, ուր խոսվում էր ազգային-անջատական գաղափարներով տարված հայ երիտասարդության մասին, «Ս.-Պետերբուրգսկիյե վեդոմոստի» թերթը 1865 թ. հոկտեմբերի 4-ի համարում զետեղեց Գ. Ե.-ի հոդվածը, որի մտքերը ամբողջովին բաժանում էր թերթի խմբագրությունը: Հոդվածագիրը նախ և առաջ դիտողություն էր անում Կատկովի թերթին նրա ավելորդ «զգոնության» համար և ապա դիմելով պատմական փաստերի, աշխատում էր ցույց տալ, որ հայ ժողովուրդը դարերի*

1 Московские ведомости, 1865, N 194: Բնորոշ է, որ ավելի ուշ, 1883 թ. նորից սադրիչ նպատակներով նման լուրեր էր տարածում Սուվորինի հետադիմական Новое время թերթը (Новое время, 1883, N 2613):

ընթացքում ունեցել է ռուսական կողմնորոշում, որ հայ իրականության համար օտար է ազգային-անջատական շարժումը Ռուսաստանի դեմ: Մենք համոզված ենք, գրում է հոդվածագիրը, որ «հայերը մնում են և կմնան անկեղծորեն ու խորապես նվիրված Ռուսաստանին... Եվ ոչ միայն Անդրկովկասի հայերը, այլև Պարսկաստանի ու Թուրքիայի սահմաններում ապրող հայերը»[1]:

Գ. Ե.-ն հրապարակ եկավ երկրորդ անգամ: «Ս.-Պետերբուրգսկիյե վեդոմոստիի» 1865 թ. հոկտեմբերի 27-ի համարում նա նորից վեճի բռնվելով Կատկովի թերթի հետ, գրում էր, որ ինքը վճռական կերպով ժխտում է քիչ թե շատ լուրջ ազգային շարժման գոյությունը հայերի մեջ, սակայն ընդունում է, որ կարող են լինել առանձին անհատներ, որոնք համակված լինեն ազգային անկախության գաղափարներով:

Նույն այդ հարցի մասին երկու հոդված տպագրվեց «Կավկազ» լրագրում: Առաջին հոդվածի հեղինակը, որ հանդես էր եկել «Մոսկվայի համալսարանի սան» ստորագրությամբ, բոլորովին ժխտում էր ազգային-անջատական շարժման գոյությունն Անդրկովկասում, ինչպես ժողովրդական լայն զանգվածների, այնպես էլ մտավորականության մեջ[2]: Երկրորդ հոդվածի հեղինակը (Դմիտրի Կիպիանի) նույնպես ժխտում էր ազգային-քաղաքական շարժման առկայությունը Վրաստանում և Հայաստանում[3]:

Դժվար չէ նկատել, որ Կատկովի պարբերականի բարձրացրած աղմուկը՝ Անդրկովկասում իբր թե օրավուր աճող ազգային-քաղաքական-անջատական շարժման մասին, արհեստական էր և հետապնդում էր սադրիչ նպատակ: Սակայն, միաժամանակ, իրականությանը չէր համապատասխանում նաև Կատկովի հակառակորդների այն պնդումը, թե իբր Անդրկովկասում իսպառ բացակայում էին ցարիզմի դեմ ուղղված ազգային բնույթի շարժումներ:

Ի վերջո, հարկավոր է նշել այն փաստը, որ թուրքական բռնապետության դեմ ուղղված հայ ազգային-ազատագրական շարժումը լայն արձագանք գտավ և՛ Արևելյան Հայաստանում, և՛ հայկական գրեթե բոլոր գաղթավայրերում: Սուլթանական Թուրքիայի դեմ արևմտահայերի մղած ազատագրական պայքարին ակտիվ կերպով մասնակցեցին հատկապես արևելահայերը, որոնք ձեռնարկում էին բոլոր հնարավոր միջոցները օգնելու իրենց արևմտահայ եղբայրներին՝ ազատագրվելու թուրքական բռնապետության ծանր լծից: Բնորոշ է, օրինակ, որ ռուս-թուրքական պատերազմների ժամանակ բազմաթիվ կովկասահայեր, որպես կամավորներ մտնում էին ռուսական բանակի շարքերը, հերոսաբար կռվում թուրքական զորքերի դեմ՝ նպատակ ունենալով ռուսական զորքերի օգնությամբ ազատագրել Արևմտյան Հայաստանը սուլթանական Թուրքիայի տիրապետությունից: Երևանի, Թիֆլիսի, Մոսկվայի, Պետերբուրգի և մյուս քաղաքների հայ ուսանողներից շատերն իրենց նվիրում էին արևմտահայերի ազատագրության գործին: Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարը լայն ժողովրդականություն էր վայելում Կովկասի և ամբողջ Ռուսաստանի հայ բնակչության մեջ: Արևմտահայերի ազատագրական շարժման գաղափարախոսների դերում մեծ չափով հանդես էին գալիս արևելահայ հասարակական-քաղաքական գործիչները: Կովկասում ստեղծված մի շարք գաղտնի խմբակների ու կազմակերպությունների գործունեությունը հիմնականում հետապնդում էր Արևմտյան Հայաստանը սուլթանական Թուրքիայի տիրապետությունից ազատագրելու նպատակը: Հատկանշական է, օրինակ, որ Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր պետ, իշխան, գեներալ-լեյտենանտ Ա. Դոնդուկով-Կորսակովը ներքին գործերի մինիստրի պաշտոնակատար գեներալ-լեյտենանտ Օրժևսկուն ուղղած իր 1883 թ. սեպտեմբերի 7-ի թվակիր զեկուցման մեջ հայտնում էր, որ Կովկասում ստեղծված հայ ազգային-քաղաքական կազմակերպությունների գլխավոր նպատակն է՝ «ազգային-հայրենասիրական շարժում ստեղծել փոքրասիական հայերի մեջ՝ ընդդեմ թուրքական տիրապետության»[1]:

Սուլթանական Թուրքիայի դեմ 1850–1890-ական թթ. ծավալված հայ ազգային-ազատագրական շարժումը, այսպիսով, ոչ միայն արևմտահայերի, այլև ամբողջ հայ ժողովրդի հերոսական պայքարն էր արևմտահայությունը թուրքական բռնապետության ծանր լծից ազատագրելու համար:

## 2

Անհամեմատ դաժան ու անսահման ծանր էր ազգային ճնշման, հալածանքների ու հարստահարության այն քաղաքականությունը, որ վարում էր թուրքական բռնապետությունն Արևմտյան Հայաստանում: Սուլթանական Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ինչպես մյուս ժողովուրդները, այնպես էլ հայ ժողովուրդը ենթարկվում էր բիրտ ու անլուր ճնշումների, դաժան հալածանքների ու բռնությունների:



1 С. Петербурские ведомости, 1865, N 259. Նկատենք, որ Գ. Ե.-ն Գևորգ Եվանգուլյանն էր, որն այդ ժամանակ ուսանում էր Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում. տե՛ս *Մ. Հ. Մխիթարյան*. XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից. Ե., 1976, էջ 49-50:

2 Кавказ, Тифлис, 1865, N 82.

3 Նույն տեղում, N 83:

1 ЦИАМ, ф. Департамент полиции, 3-е делопроизводство, д. 700, л. 18.

Կ. Մարքսը 1853 թ. հրատարակած իր «Ազգությունները Թուրքիայում» հոդվածում* նշում էր այն ծանր հալածանքներն ու ճնշումները, որոնց ենթակա էին սլավոն, հույն, ալբան, ռումին և մյուս ժողովուրդները[1]:

Արևմտահայ բնակչությունը գտնվում էր չափազանց ծանր վիճակում: Նա համարվում էր իրավազուրկ ռայա: Հայերի վկայությունը դատարանում չէր անցնում, նրանք իրավունք չունեին զենք կրելու, օրենքը չէր ապահովում նրանց կյանքը, գույքը և պատիվը: Հայ ժողովուրդը մշտապես ենթակա էր բռնությունների ու հարստահարության, ոտնահարվում էին նրա արժանապատվությունը և նվիրական զգացմունքները, նա մշտապես ստանում էր բարոյական հարվածներ: Ո՛չ 1839 թ. հաթթը շերիֆը և ո՛չ էլ 1856 թ. հաթթը հումայունը չփոխեցին դրությունը**:

Ղրիմի պատերազմի տարիներին ռուս գեներալ-մայոր Լիխուտինը, որ եղել էր Արևմտյան Հայաստանում, հայերի մասին գրում էր. «Նրանք իրավունք չունեն զենք կրելու... ես տեսա մի քանի հայեր կտրված ականջներով և քթերով, մի բան, որ արված էր ոչ թե դատարանով, այլ կամայականորեն և բռնությամբ այս կամ այն աղդեցիկ ու հարուստ գյուղապետի կամ տեղական դատարանի անդամի կողմից: Նրանք [հայերը] մշտապես գտնվում էին տագնապի մեջ, ունեին ահաբեկված տեսք...»[2]:

Արևմտյան Հայաստանում ստեղծված ծանր վիճակի մասին Էմ. Դիլլոնը գրում էր. «Հայկական հինգ նահանգներում հաստատված է կառավարման գազանային սիստեմ, որի հետ համեմատած, հարավային նահանգների ստրկական համակարգի դաժանությունները սոսկ աննշան չարաշահումներ են»[3]:

1862-ի օգոստոսի վերջերին Կ. Պոլսի Courrière d'Orient-ին ուղղված մի նամակում Բրուսայից գրում էին. «Ասկից 5-6 օր առաջ Պապա-Սուլթան թուրք գյուղի բնակիչներեն ոմանք զեն ի ձեռին Ենիճե հայ գյուղը կոխեցին. գյուղին 2-3 խանութները կողոպտեցին, ոչխարները սպաննեցին, գտնված ծխախոտն ու ոգելից ըմպելիները հափշտակեցին, բազմաթիվ բնակիչներ խոշտանգեցին... Գեղեն դուրս ելլելնուն՝ հայ կին մը տեսան... բռնեցին ու հետերնին տարան: Բայց շրջակա արտերուն հնձողները բազմությամբ վազեցին, դժբախտ կինը ազատեցին: Ուրիշ օր մ'ալ քանի խեղճ հայեր բռնեցին ու եզների պես կառքի մը լծելով, քաշել տվին,

1 К. Маркс и Ф. Энгельс. Сочинения. Т. 9, с. 5.
2 М. Лихутин. Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах. СПб, 1863, с. 168.
3 Эм. Диллон. Положение дел в Турецкой Армении.– Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году. М., 1896, с. 329.



մինչև որ ուժերնին սպառեցավ»: Դրությունը այնքան ծանր էր, որ հայերը ստիպված եղան հեռանալ իրենց հայրենի գյուղից:

Մշո գավառի հայ բնակչության վիճակը Գ. Սրվանձտյանցը 1864 թ. պատկերում էր հետևյալ բառերով. «Գնդակներու հարձակում, արյան հոսում, ընչից ավար, ընտանյաց բռնաբարություն, եկեղեցոց կողոպտում, օրինաց եղծում, կենաց գրավում...»[1]:

Տարոնի գյուղացիությունը 1868 թ. Կ. Պոլսի հայ Ազգային ժողովին և պատրիարքին ուղղած իր բողոքագրի մեջ գրում էր. «զմեզ անխնա կնեղեն, կչարչարեն և կհարստահարեն... մեր Մշո գավառին մեջ քանի-քանի եկեղեցիներ կողոպտեցին ու բազմաթիվ գանձեր տարին, հարյուրավոր աղջիկներ և ամուսնացյալ կնիկներ պատրեցին և բռնի մեր սուրբ կրոնքեն դուրս հանին անցյալ տարի... այս տարի... բազմաթիվ գանձեր հափշտակեցին ու տարին, թե Մշո մեջ և թե գյուղորեսն ամեն գիշեր գլխանութս և զտուներնիս կպատրեն և զունեցածնիս կտանին... մենք չենք համարձակիր որ ևիցե այլազգիներեն զմեր իրավացի պահանջն պահանջել ու ուզել, կամ կանարգեն, և կամ կուրանան, թե հայ վկաներ բերենք չեն ընդունիր... քսան ղրուշի բերքեն հարյուր ղրուշեն ավելի կբռնեն ու մեզմեն կառնուն, նազի երկիր հետին չքավորության և աղքատության մեջը ինկած է, ուստի շատերը խոսք դրեր են երկրես ցան և ցիր ըլլալու, և հետզհետե կըլլան...»[2]:

Քղի գավառի հայ բնակչության մասին Մ. Ճանթեմիրյանը 1869 թ. ասում էր. «աս ժողովուրդը բարոյապես և ֆիզիկապես կորսվելու վրա է, իրենց կյանքն ալ, ստացվածքն ալ վտանգի մեջ է ամեն օր, կսպանվին, կվիրավորվին, կկողոպտվին, կհարստահարվին...»[3]:

Շատախից 1872 թ. գրում էին... «Մեք Շատախու գավառի հայերս վեց հարյուր տունեն ավելի ենք. ամենքս ալ երկրագործ ու արհեստավոր մարդիկ... բայց գերիի պես ենք... մեկ հարկ թագավորին կուտանք. հարկեն ավելի ալ հիշյալ աղաներուն կուտանք. քանի մը գեղ բոլորովին իրենց սեպհական ըրեր են: Մարդասպանություն, տուն վառել, իրենց սովորական է. և մեր հավատքը հայհոյել. մեր եկեղեցիք աղբանոց ընել ու չլսված բաներ անոնց ձեռքեն կկրենք»[4]:

Բողոքելով բեյերի ու աղաների հարստահարությունների դեմ, Ջարսանջակի Հալալգոմ գյուղի գյուղացիները 1878 թ. հայտնում էին. «ա-

1 «Արծուիկ Տարօնոյ», Վան, 1864, N 1:
2 Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԳ, էջ 143-144:
3 Նոյն տեղում, էջ 174:
4 Նոյն տեղում, էջ 253-254:

*մեն ատեն կծեծեն մեզ, կնեղեն, տուգանք կառնեն, պաղջանուս փայտերը կկտրեն, ոչխարնիս, այծերնիս բռնի կտանին, իրավունքնիս կկտրեն, ինչ որ աշխարհիս մեջ հարստահարություն կգտնվի նե՝ մեզմե անպակաս է, հարսանիք մը ընելու ըլլանք՝ հեմ պաշլըղ կառնեն, հեմ պսակադրամ կառնեն…»*[1]*:*

*Մուշի բնակիչները 1887 թ. գրում էին Սրվանձտյանցին. «Հարստահարությունք ու զեղծմունք օրավուր ավելի կբազմանան»*[2]*:*

*Թուրքական զավթիչները շատ հաճախ փորձում էին բռնի կերպով թուրքացնել հայ բնակչությանը: Մուշից Կ. Պոլիս ուղարկված բողոքագրում ասվում էր. «Խլաթա մեջ հայ կին մը սաստիկ ծեծելով թեն ու գլուխը ջարդեցին զորով տաճիկցնելու համար»*[3]*: Նմանօրինակ փաստերը շատ էին և կատարվում էին ամենուրեք:*

*Արևմտահայության ծանր վիճակի մասին գրել են նաև օտարերկրյա ականատեսները: Էրզրումի անգլիական փոխհյուպատոս կապիտան Էվերետը, որ 1879 թ. աշնանը այցելեց Ալաշկերտ, Ղարաքիլիսա, Դիադին և Բայազետ, այդ շրջանների հայ գյուղացիության վիճակը համարում էր անելանելի: Թուրքական ոստիկանությունը և քրդական աշիրաթապետերը, զեկուցում էր նա, դիմում են ամեն տեսակի բռնության, հարստահարության և կողոպուտի*[4]*: Դրությունը քանի գնում, այնքան վատանում է, ժողովուրդը խիստ գրգռված ու անհանգիստ է, գրում էր այդ կապիտանը իր մի այլ զեկուցագրում*[5]*:*

*Ամերիկյան երկու միսիոներներ՝ Պարմելը և Ջամբերը 1880 թ. հունիսին շրջելով Էրզրումի և մի քանի այլ շրջանների գյուղերում, զեկուցում էին, որ բազմաթիվ բեկերի ու ցեղապետերի հետ միասին հայերին կողոպտում, թալանում են նաև թուրքական բանակի զինվորները և սպաները: Քրդական ու չերքեզական հրոսակախմբերը մշտական տեռորի տակ են պահում քրիստոնյա բնակչությանը, ընդ որում, տեղական իշխանությունները ցուցաբերում են բացահայտ անտարբերություն և ոչ մի քայլ չեն ձեռնարկում կատարվող խժդժությունների դեմ: Ավելին, գրում էին միսիոներները, նրանք, ինչպես օրինակ, Բայազետի կայմակամը, հասկացնել են տալիս հրոսակների պետերին, որ քրիստոնյաներին հալա-*

1 Նույն տեղում, էջ 337:
2 Նույն տեղում, էջ 403:
3 Նույն տեղում, էջ 493:
4 Turkey, N 4 (1880). Correspondence Respecting the Condition of the Populations in Asia Minor and Syria. London, 1880, p. 105-107.
5 Նույն տեղում, էջ 161-163:



*ծելու նրանց գործելակերպը չի հակասում սուլթանական կառավարության քաղաքականությանը*[1]*:*

*Ինչպես հայտնի է, 1863 թ. սուլթանական կառավարությունը վավերացրեց արևմտահայերի այսպես կոչված «Ազգային սահմանադրությունը», որը, չնայած իր այդ հորջորջմանը, սոսկ մի կանոնադրություն էր հայ բնակչության կրոնա-դավանաբանական, մշակութային-կրթական և ներքին կյանքի հարցերի վերաբերյալ: «Սահմանադրությունը» չէր շոշափում սոցիալական ու քաղաքական և ոչ մի լուրջ հարց և բնականորեն անկարող էր որևէ փոփոխություն մտցնել ժողովրդի տնտեսական ու իրավական ծանր դրության մեջ: Սկզբում պատրանքն ուժեղ էր, շատերը ողջունեցին այն: Բայց շուտով վրա հասավ հիասթափությունը, ճիշտ դուրս եկան նրանք, ովքեր ըմբռնեցին թուրքական սուլթանի կողմից հաստատված այդ «սահմանադրության» խաբուսիկ նշանակությունը:*

*Դեռ իր ժամանակ Մ. Նալբանդյանը իրավացիորեն գրել է, որ Ազգային սահմանադրությունը մի անուն է, որ «անիմաստ է թե հայ ազգի և թե այս Կանոնադրության իսկ վերաբերմամբ»*[2]*: Տարիներ անց ավելի խիստ արտահայտվել է Րաֆֆին. «Կ. Պոլսի Ազգային սահմանադրությունն ուրիշ ոչինչ չէ եղել, բայց միայն* մի մանկական խաղալիք, *որ խորամանկ դայակը տալիս է երեխայի ձեռքում, որ նա հանգիստ մնա, որ նրանով զբաղվի, չարություն չգործե… Եվ Կ. Պոլսի տղայամիտ էֆենդիները շատ գոհ և ուրախ էին այս խաղալիքով, և ամեն տարի Բոսֆորի ափերի մոտ տոնում էին իրանց ողորմելի պատրանքը…»*[3]*: «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին 1875 թ. գրում էր. «Կ. Պոլսի հայոց ազգային և կրոնական ժողովը միայն դարդակ կրոնական հարցերով է զբաղված, ունի երևակայական իրավունքներ… Հայերի սահմանադրությունը Թուրքիայում մի խաղալիք է ուրեմն, որ տվել է տերությունը Կ. Պոլսի դարդակախոս, բարձր խոսքերով և ոչ թե իրական, կենսական, ամբոխի բարոյական և տնտեսական օգուտներով հափշտակվող հայ հոսհոսներին…»*[4]*: Ավելի ուշ՝ անվանի իրավագետ Ռոլեն-Ժեկմենը գրում էր, որ այդ «սահմանադրության» մեջ ամեն ինչ կա, բացի մի հոդվածից, որը արգելեր, որպեսզի բեկը չխլեր հայ գյուղացուց նրա ոչխարները, բե-*

1 Turkey, N 6 (1881). Further Correspondence Respecting the Condition of the Population in Asia Minor and Syria in Continuation of Turkey N 23 (1880). London, 1881, p. 8-9.
2 *Մ. Նալբանդյան.* Երկերի լիակատար ժողովածու. հ. 2, Ե., 1947, էջ 353:
3 *Րաֆֆի.* Երկերի ժողովածու. հ. 9, Ե., 1958, էջ 263:
4 «Մշակ», Թիֆլիս, 1875, N 51:

*յը չանպատվեր նրա աղջիկներին և չավերեր նրա հողը, որ հարկահավաքը երկու կամ երեք անգամ չպահանջեր նրանից միևնույն հարկը...»*[1]*:*

*Բնորոշ է, որ «սահմանադրությունը» վավերացնելուց մեկ տարի հետո՝ 1864 թ. Գ. Սրվանձտյանցը, հեգնելով «փափուկ ազգասեր» արևմտահայ սահմանադրականներին, գրում էր. «Ի՞նչ սահմանադրություն, ի՞նչ Թաղական խորհուրդ, ի՞նչ Ազգային ժողով, ի՞նչ առաջնորդ: Պսակ չեխերու հրամանով կլինի, քահանայից իշխան սոքա են և վարիչ... սոքա են երկրի առաջնորդ, դատավոր և այլն»*[2]*: Նույն 1864 թ. Կ. Պոլսի «Մեղու» թերթը գրում էր. «Սահմանադրությունը եկավ, տարի մ'ալ անցավ, ամեն քաղաքներե հետզհետե գանգատներն ալ շատցան. ուր որ սահմանադրական հրահանգը գնաց, հոն հին բռնավորներն ու միայն իրենց օգուտը խորհող անպէտ առաջնորդները պատեհությունը չկորսնցնելով նոր վարչության ալ առաջին տեղը գրավելու ամեն վարպետ միջոց ի գործ դրին: Ոսկին դարձյալ շատ տեղեր լեզու ելավ. անձնական արժանավորությունը հալածական վարեցավ:*

*Անոնք, որ առաջ ինքնակոչ և անհեղինակ բռնավորներ էին, այժմ ոսկվո ուժով իրենց տիրապետությունը վերահաստատեցին... Ան սահմանադրությունը, որ ժողովրդյան իրավանց պաշտպան պիտի կանգներ, բռնավորք զանի իրենց տիրապետությանը գործիք ընելու չդանդաղեցան»*[3]*:*

*Ականավոր երգիծաբան Հակոբ Պարոնյանն իր թունոտ սատիրայով բացահայտում էր Հայաստանի գավառներում տիրող հարստահարությունները, Թուրքական բռնակալության դաժան ռեժիմը, եվրոպական պետությունների խարդախ քաղաքականությունը և այլն: «Շաբաթ չանցնիր,– ասում էր Պարոնյանը,– որ Հայաստանեն ցավալի լուրեր չառնվին. շաբաթ չանցնիր, որ հայ սիրտերն ցավոք և տրտմությամբ չլնուն»*[4]*: Խոսելով Մշո գավառի դրության մասին, Պարոնյանը գրում էր. «Չկա հոն ո՛չ ստացվածքի ապահովություն, ո՛չ կենաց և ո՛չ ալ պատվո երաշխավորություն, այլ կա հոն հափշտակություն, մարդասպանություն, պատվո բռնաբարում...»*[5]*:*

. 1 *М. Г. Ролен-Жекмен.* Армения, армяне и трактаты. М., 1897, с. 19.
2 «Արծուիկ Տարոնոյ», 1864, N 1:
3 «Մեղու», 1864, N 244:
4 Հ. *Պարոնյան.* Երկերի լիակատար ժողովածու. հ. 11, էջ 35:
5 Նույն տեղում, էջ 38:



*Ղ. Աղայանի նման Հ. Պարոնյանը ևս նշում էր, թե Թուրքիայում ապրող հայերի վիճակը գերության վիճակ է. «Այս լուծն հպատակություն ըսելե դադրած՝ գերության լուծ եղած է»*[1]*:*

*Թուրքիան բանտ է, ասում էր Պարոնյանը: «Ես կկարծեմ, թե կուսակալն Սեբաստիո բոլոր հայերը բանտարկած է...*

*Տաճկաստանի մեջ բա՛նտ... Բանտի մեջ բանտ...»*[2]*:*

*Պարոնյանը մերկացրել է եվրոպական պետությունների նվաճողական քաղաքականությունը, ցույց է տվել, որ նրանք միայն փորձանք ու դժբախտություն են բերում հայ և մյուս ժողովուրդներին: Խոսելով այն մասին, թե ինչ «օգուտ» է տվել Բեռլինի կոնգրեսը հայ ժողովրդին, նա գրում էր. «Եթե այս օգուտներուն երևակայականն մեկդի նետելով իրականին դառնանք՝ սա օգուտը կգտնենք, որ առաջ գավառներու մեջ եթե տարին հարյուր հոգի կսպաննվեին՝ այսօր հազար կսպաննվին...»*[3]*:*

*«Անմտություն է,– գրում էր Պարոնյանը,– Թուրքական կառավարութենե բարենորոգում հուսալն»: «Գավառաց հայերը դարերե ի վեր կհարստահարվին, դարերե ի վեր* թաքրիրներ *կգրվին ու հարստահարությունները դարերե ի վեր կշարունակվին»*[4]*:*

*Հետագա տասնամյակների ընթացքում ևս, չնայած «սահմանադրության» առկայությանը*[5]*, արևմտահայերի վիճակը գնալով ավելի ու ավելի էր ծանրանում: 1890 թ. իրենց բողոքագրերից մեկում արևմտահայերն ասում էին. «Ոչ մարդկային լեզուն և ոչ նորա գրիչը չեն կարող նկարագրել այն բազմատեսակ ծանր դժբախտությունք, որ մենք կրած ենք և կկրենք... Մեր մայրենի հողի վերա մեր կյանքը խաղալիք է դարձել մեր իշխողներու ձեռքին, մեր գույքը անապահով դրությանց մատնված է, մեր ընտանիքը ամոթաբեր բռնությանց, մեր զավակները զոհ են դարձած կոպիտ ուժի, մեր դառն քրտինքով վաստակած հացը մեզնից կորզելով, մեր զավակներն սովամահ կոտորվելու ենթարկված են. մեր եկեղեցիները կողոպտվին ու հրո ճարակ կլինին, մեր սրբությունները կանարգվին, մեր հավատքը կհայհոյվի և հոգևորականությունը ենթարկված է V դա-*

1 Նույն տեղում, էջ 39:
2 Հ. *Պարոնյան.* Երկերի ժողովածու. հ. 4, Ե., 1965, էջ 137:
3 Նույն տեղում, հ. 3, Ե., 1964, էջ 19:
4 Հ. *Պարոնյան.* Երկերի լիակատար ժողովածու. հ. 11, էջ 39:
5 Արևմտահայերի Ազգային սահմանադրության մասին տե՛ս *Ա. Հովհաննիսյան.* Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Ե., 1955, էջ 367-395: Հ. *Ղազարյան.* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Ե., 1967, էջ 446-471: *Ա. Խառատյան.* Արևմտահայերի Ազգային «սահմանադրությունը» (1860-1863).– ՊԲՀ, 1992, N 2-3, էջ 51-66:

րում տեղի ունեցած բոլոր տառապանաց»[1]: Աճուն կերպարանք ստացած այդ հալածանքների ու հարստահարությունների մասին պերճախոս փաստեր հրապարակվեցին ժամանակի մամուլի և հատկապես Կ. Պոլսի պատրիարքարանի հրատարակած այն տեղեկագրերի մեջ, որոնք նվիրված էին գավառական հարստահարություններին*:

Պետք է նշել, որ Արևմտյան Հայաստանում կիրառվող ազգային ճնշումներն ու հալածանքները XIX դարի երկրորդ կեսին ավելի խստացան և ավելի դաժան կերպարանք ստացան: 1850-ական թթ. հետո սուլթանական կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրեց Արևմտյան Հայաստանի վրա և կատարեց նոր քայլեր, որոնց նպատակն էր կանխել օսմանյան լծի դեմ ուղղված վերահաս հայ ազատագրական շարժումը: Ի՞նչ ձևով արտահայտվեց թուրքական բռնապետության այդ «նոր» քաղաքականությունը: Ամենից առաջ Բ. Դուռը կտրուկ միջոցներ էր ձեռք առնում կիսանկախ հայկական Զեյթունի և Սասունի դեմ: Եթե նախընթաց ժամանակաշրջաններում այսպես թե այնպես «հանդուրժվում էր» այդ կիսանկախ գավառների գոյությունը, ապա այժմ՝ XIX դարի երկրորդ կեսին, դրությունը փոխվել էր և սուլթանական կառավարությունը հարձակման էր անցել նրանց դեմ: Այնուհետև, կառավարությունն ամեն կերպ ձգտում էր խախտել արևմտահայերի հավաքական գոյությունը, աշխատում էր ցրել հայերին ամբողջ կայսրության մեջ, որպեսզի դյուրացներ ջարդի ու ձուլման իր քաղաքականության կիրառումը: Այդ նպատակն իրականացնելու համար սուլթանական կառավարությունը կատարեց վարչական մի շարք «բարենորոգումներ» և Արևմտյան Հայաստանում բնակեցրեց Բալկաններից ու Կովկասից Թուրքիա գաղթած չերքեզական բնակչություն: Իշխանությունն ամեն հնարավոր միջոցներով սրեց հայերի ու քրդերի, հայերի ու գաղթեցված չերքեզների հարաբերությունները, աննախընթաց ճնշումներ սկսեց ինչպես հայ, այնպես էլ մյուս ժողովուրդների նկատմամբ: Խիստ ուժեղացան հալածանքները մամուլի, գրականության, մշակութային-կրթական ընկերությունների դեմ, կատարյալ անհեթեթության հասան գրաքննության խստություններն ամբողջ կայսրության մեջ*:

1860–1880 և մասնավորապես 1890-ական թթ. պետական ծրագրեր կազմվեցին և գործնական քայլեր արվեցին հայկական ջարդեր կազմակերպելու ուղղությամբ: Այս տեսակետից բնորոշ են հետևյալ փաստերը: 1876 թ. դեկտեմբերի 1-ին Վան քաղաքում բռնկվեց մեծ հրդեհ, որ կազմակերպել էին տեղական թուրք ոստիկանները՝ սուլթանական կառավա-

1 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 236, վավ. 48:



րության ցուցումներով: Թալանվեցին ու կրակի ճարակ դարձան հայերին պատկանող գրեթե բոլոր խանութները*, կատարվեցին սպանություններ ու բանտարկություններ: Այդ հրդեհը հետապնդում էր սադրիչ նպատակ: Րաֆֆին նշում էր այն փաստերը, որոնք վկայում էին, որ հրդեհը նախապես կազմակերպել են իշխանությունները՝ հայերի թալանուած խանութներում հետքերը վերացնելու համար: «Եվ նույն գիշերվա երեկոյան պահուն, երբ պատահել է հրդեհը, զինվորներից շատերն այս և այն խանութին մոտենալով ձևացրել են, թե բան են գնում և աննկատելի կերպով խանութներում այրվող բաներ են ձգել... Հափշտակության գլխավոր գործիչները, որ եղել են զինվորները, հրդեհի առավոտը փոխում են և հեռացնում են քաղաքից, նրանց տեղը բերելով նորերին: Այս փոփոխությունն այլ նպատակ չունի, եթե ոչ ավազակների հետքը կորցնել և... թաքցնել չարագործները»[1]:

Անդրադառնալով Վանի հրդեհին, Հ. Պարոնյանը դիպուկ երգիծանքով մերկացնում էր կառավարության հանցավոր դերը այս գործում. «Իմացա՞ք սա բարբարոս կրակին Վանա մեջ գործած անիրավությունները. ամբողջ շուկան մոխիր դարձունելեն ետքը շատ մը ապրանքներ առեր փախեր է: Կրակին այրելու հատկությունը գիտեինք, բայց գողնալու հատկությունը չէինք գիտեր. արդյոք քյուրտերը իրենց փոխանո՞րդ կարգեցին կրակը և անո՞ր միջոցով պիտի գործեն ասկից ետքը»[2]: Թուրքական կառավարությունը ցանկանում էր կազմակերպել տեղի հայ բնակչության զանգվածային կոտորածներ: 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին Բ. Դուռը ավելի հանդուգն կերպով և մեծ չափերով սկսեց իրականացնել հայկական կոտորածների իր քաղաքականությունը: Ինչպես վկայում են ականատեսները, 1877 թ. հունիսի սկզբներին (6-8-ին) թուրքական կանոնավոր զորքն ամենաբարբարոս ձևերով զանգվածային բնաջնջման ենթարկեց Բայազետ քաղաքի հայ բնակչությանը[3]:

Այդ նույն ժամանակաշրջանում թուրքական զորքերը, Մուխթար փաշայի հրամանատարությամբ, սահմանամերձ շրջաններում և հատկապես Վանի ու Ալաշկերտի շրջաններում կազմակերպեցին հայ բնակչության լայնածավալ կոտորածներ[4], որի համար թուրքական կառավարությունն արդեն 1870-ական թթ. աշխատեց օգտագործել քրդական ցեղե-

1 «Մշակ», 1877, N 5:
2 Հ. Պարոնյան. Երկերի ժողովածու, հ. 4. էջ 117:
3 23-х дневная оборона Баязетской цитадели и комендант Феодор Эдуардович Штоквич (Материалы к истории Баязетской осады). СПб., 1879, с. 34.
4 C. B. Norman. Armenia and the Campaign of 1877. London, 1888, p. 269, 273.

րին: Այդ մասին հետաքրքիր տեղեկություններ է հայտնում Ա. Թոխմախյանը, որը Արևմտյան Հայաստանում կատարած իր ճանապարհորդության ժամանակ զրույց է ունեցել քրդական ցեղապետներից մեկի՝ Հուսեյին աղայի հետ: Վերջինս, դիմելով Թոխմախյանին, ասում է. «Ձեր խնդիրը (Հայկական հարցը – Մ. Ն.) երևան գալուց զկնի Թուրքերը մեծ բարեկամություն սկսեցին ցույց տալ մեզ, և մեր ձեռքով կամենում էին կրակ բռնել, այդ աշխարհը սրբել հայերից: Դորա համար շատ մեծ գաղտնի աշխատություններ են եղել և լինում են»[1]: 1880 թ. Շամդինանում շեյխ Օբեյդուլլայի ղեկավարությամբ տեղի ունեցած քուրդ շեյխերի ու բեկերի ժողովում Թուրք կառավարության անունից քրդերին առաջարկություն է արվում հայկական կոտորածներ սկսել: Այդ առաջարկը, սակայն, մերժվում է[2]: «Արձագանքի» հոդվածագիր Ա. Խաչատրյանը գրում էր. «Մի հայտնի փաստ է, որ Թուրք կառավարությունը ամենայն ջանք գործ է դնում Տաճկահայաստանում եղած հայ տարրը նվազեցնելու համար: Վերջին ժամանակները նորա առանձին ուշադրությունն այս տեսակետից դարձրել է յուր վրա Հին Բայազետի փաշայությունը»[3]:

Այսպիսով, անկասկած է, որ սուլթանական կառավարությունը 1850-1860-ական թթ. սկսած ուժեղացրեց ազգային ճնշման ու հալածանքների իր քաղաքականությունը և ընդհանուր հարձակման անցավ արևմտահայերի վրա: Այս հանգամանքն ունի իր մի շարք պատճառները. թվենք դրանցից մի քանիսը:

Դեռևս 1850–1860-ական թթ. ազգայնական ծրագրերով հանդես եկավ Թուրքական բուրժուազիան: Նրա հիմնական նշանաբաններն էին՝ անձեռնմխելի պահել Թուրքական կայսրության ամբողջականությունը, վճռական միջոցներ ձեռք առնել Թուրքական տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների դեմ: Թուրքական բուրժուազիայի այս քաղաքական ծրագրերի իրականացման համար 1865 թ. ստեղծվեց «Իթթիհադ» կազմակերպությունը, որի հիմնադիրներն էին, ինչպես ճիշտ նկատված է, «մոլի Թուրքերը, մոլի ազգայնականները»[4]: Իթթիհադը առաջադրեց «Թուրքիան Թուրքերին» լոզունգը, սկսեց պանիսլամիզմի և պանԹուրքիզմի գաղափարների քարոզչությունը, բացահայտ կերպով քարոզեց այլ ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի նկատմամբ ավելի խիստ քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը:

1 Ա. Թօխմախեան. Մասիս լեռների հարաւային ստորոտները, Բ մասն, էջ 51:
2 Полковник Карцов. Заметки о курдах. Тифлис, 1896, с. 18.
3 «Արձագանք», Թիֆլիս, 1883, N 3, էջ 33:
4 История XIX века. Под ред. Лависса и Рамбо. Т. VI, М., 1938, с. 121.



Թուրք բուրժուազիայի այդ իղձերն արտահայտող պահանջներով ավելի բացահայտորեն հրապարակ եկան 1876 թ. սահմանադրության հեղինակները: Ոչ անհայտ Միդհատ փաշան, որը միշտ գովաբանվել է Թուրքական ազգայնական պատմագրության մեջ, նպատակ ուներ մասնակի, աննշան բարենորոգումների միջոցով պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը և գոյություն ունեցող կարգերը: Ազգային հարցում նա վարում էր չափազանց հետադիմական քաղաքականություն: Հայտնի է, որ իր պետական գործունեության տարիներին նա ազգային ջարդեր ու կոտորածներ կազմակերպեց Բալկաններում: Ելնելով Թուրքական բուրժուազիայի շահերից, նա աշխատում էր անխախտ պահել սուլթանական Թուրքիայի լուծը նվաճված ու ճնշված ազգությունների վրա:

Թուրքական բուրժուազիայի և նրա գաղափարախոսների այդ իղձերը ամբողջովին համընկնում էին սուլթանների ու ֆեոդալական հետադիմության պահանջներին: Սուլթան Աբդուլ Համիդը՝ պանիսլամիստների և պանԹուրքիստների այդ գլխավոր ոգեշնչողը, որ գահ բարձրացավ 1876 թ., Թուրքական բուրժուազիայի օգնությամբ սկսեց ամենայն հետևողականությամբ կիրառել ջարդարարական իր քաղաքականությունը:

Բնորոշ է, որ դեռևս 1860-ական թթ. սուլթանական կառավարությունը վարում էր պետական կառույցներից և ռազմական արդյունաբերական ձեռնարկություններից հայերին հեռացնելու քաղաքականություն: Այդ մասին «Համբավաբեր Ռուսիո» լրագրում կարդում ենք. «Գրեթե 80 տարիե ի վեր օսմանյան պետության վառոդաշինությունը հայոց հանձնված էր, ընդ վերատեսչությամբ Տատյան... գերդաստանին: Այժմ Բ. Դուռն արժան համարեր է վառոդարանի վերատեսչությունը նույն գերդաստանեն առնուլ և հայ աշխատավորաց քով Թուրք զինվորներ դնել, և նույն աշխատավորներն ստիպել, որ անոնց հետ գործեն և վառոդաշինության արհեստն ուսուցանեն անոնց, որպեսզի հետո հայերը բոլորովին արտաքսե վառոդարանեն»[1]:

Ուշադրության արժանի է նաև հետևյալ փաստը. Կ. Պոլսի ռուսական դեսպան Իգնատևը 1869 թ. հայտնում էր այն մասին, որ Բ. Դուռը գաղտնի հրահանգ է ուղարկել տեղական իշխանություններին՝ անխնա կերպով ոչնչացնելու հայկական պատմական բոլոր հուշարձանները, որպեսզի դրանք չհիշեցնեն Հայաստանի անցյալը և չզարթնեցնեն ազգային անկախության գաղափարը հայ ժողովրդի մեջ[2]:

1 «Համբաւաբեր Ռուսիոյ», Մ., 1863, N 48, էջ 3:
2 Биржевые ведомости, С. Петербург, 1869, N 109.

Ազգային ճնշումն ուժեղացնելու պատճառներից մյուսը պետք է համարել հետևյալը. XIX դարի առաջին հիսնամյակի ընթացքում Եվրոպական Թուրքիայում տեղի ունեցած սլավոնական ժողովուրդների ազատագրական լայն շարժումները, Սերբիայի և Հունաստանի անջատվելն ու ազատագրումը Թուրքիայից մոտալուտ վտանգ էին ստեղծել սուլթանական կառավարության համար: 1850–1860-ական թթ. հակասուլթանական ազգային-ազատագրական շարժման մի ալիք սկսվեց Արևմտյան Հայաստանում և ամբողջ Մերձավոր Արևելքում: Այս բանն անհանգստություն էր պատճառում սուլթաններին ու փաշաներին: Որպեսզի կանխեն Բալկանյան դեպքերի հնարավոր կրկնությունը կայսրության մյուս մասերում, նրանք ավելի ուժեղացրին ազգային ճնշումների ու հալածանքների քաղաքականությունը և կիրառեցին խիստ ու դաժան միջոցառումներ՝ ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի ազատագրական շարժումները ճնշելու և հետագա զարգացումը կասեցնելու համար:

Որոշ դեր խաղաց նաև հետևյալ հանգամանքը: Մինչև 1860-ական թթ. արևելյան փաշայությունների հետ կապված հիմնական հարցը, որ զբաղեցնում էր թուրքական կառավարությանը, քուրդ ժողովրդի անկախ և կիսանկախ դրությունը վերացնելու հարցն էր: Թուրքական կառավարությունը ձգտում էր իրեն ենթարկել քրդական աշիրեթությունները, որոնք այն ժամանակ հանդիսանում էին գլխավոր կենտրոնախույս ուժերը արևելյան փաշայություններում*: Եվ սուլթանները զգալի հաջողությունների ունեցան այդ ուղղությամբ: 1834 թ. Մուստաֆա Ռեշիդ փաշայի բանակը ծանր հարված հասցրեց Բայազետի ու Վանի գավառների քրդական ապստամբ ցեղերին[1]: Հաջորդ մեծ հարվածը տրվեց 1845-1846 թթ., երբ քրդական ցեղերը Թուրքական կառավարության դեմ ապստամբություն բարձրացրին Բադիր խանի ղեկավարությամբ: Այս ապստամբությունն ամենայն խստությամբ ճնշվեց Մոսուլի, Դիարբեքիրի, Վանի և Էրզրումի փաշաների միացյալ ուժերով[2]: Քրդական հաջորդ խոշոր ապստամբությունը տեղի ունեցավ Ղրիմի պատերազմի ժամանակ՝ 1854-1855 թթ. Եզդանշիրի գլխավորությամբ: Ապստամբությունը հսկայական ծավալ ընդունեց, սակայն վերջ ի վերջո ճնշվեց ամենայն խստությամբ[3]: Վերացավ քրդական ցեղերի մի զգալի մասի անկախ վիճակը: Ճիշտ է, XIX դարի ամբողջ երկրորդ կեսի ընթացքում ևս տեղի ունեցան քուրդ ժողովրդի ապստամբական նոր շարժումներ, սակայն դրանք արդեն մեծ վտանգ չէին ներկայացնում Թուրքական կառավարության համար:

1 Троттер. Мало-Азийские курды. Тифлис, 1886, с. 24.

2 П. И. Аверьянов. Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия. Тифлис, 1900, с. 81-82.

3 М. Лихутин. Русские в Азиатской Турции, с. 256, հմմտ. Акты собранные Кавказскою археографическою Комиссиею (АКАК). Т. XI, Тифлис, 1888, с. 335.



Այսպիսով, քրդական ցեղերի հետ կապված այն հարցերը, որոնք խիստ մտահոգում էին Թուրքական կառավարությանը XIX դարի առաջին կեսին, նույն լրջությամբ այլևս գոյություն չունեին դարի երկրորդ կեսին: Քանի դեռ չէին ճնշվել քրդական շարժումները, սուլթանական կառավարությունը հատուկ և ակտիվ քաղաքականություն չէր վարում արևմտահայերի նկատմամբ: Ընդհակառակը, նա երբեմն փորձում էր սիրաշահել ու օգտագործել նրանց: Ինչպես վկայում է Մոլտկեն, Թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Հաֆըզ փաշան 1830-ական թթ. անգամ ծրագիր էր կազմում կանոնավոր զորքերի շարքերում ընդունել հայերին[1]: Սակայն դրությունը փոխվում է 1850-ական թթ. հետո: Ճնշելով, թեկուզ և ժամանակավորապես, քրդական շարժումները, սուլթանական կառավարությունն իր հարվածներն ուղղում էր արևմտահայության դեմ, որին այժմ նա սկսեց դիտել որպես իր գլխավոր թշնամի Մերձավոր Արևելքում:

Մենք այստեղ թվեցինք մի քանիսն այն պատճառներից, որոնք ուժեղացրին արևմտահայերի նկատմամբ սուլթանական կառավարության կողմից XIX դարի երկրորդ կեսին կիրառվող ազգային ճնշման ու հալածանքների քաղաքականությունը: Իհարկե, Թուրքական բռնակալության ազգային ճնշումների քաղաքականությունը նոր չէր: XIX դարի առաջին կեսին և նախընթաց շրջաններում ևս ջարդերի, անլուր հալածանքների ու հարստահարությունների քաղաքականություն էր կիրառվում ինչպես Թուրքական տիրապետության տակ գտնվող բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի նկատմամբ: Բայց, այնուամենայնիվ, XIX դարի երկրորդ կեսին հայ ժողովրդի նկատմամբ սուլթանական կառավարության վարած ազգային քաղաքականությունը արտահայտվեց ավելի մերկապարանոց, անցնելով բարբարոսության բոլոր սահմանները. այն բացահայտորեն հետապնդում էր արևմտահայերի ֆիզիկական ոչնչացումը, ամբողջ ժողովրդի ցեղասպանությունը: Թուրքական տիրապետության տակ գտնվող արևմտահայության վիճակը ծանրացավ, մասնավորապես, XIX դարի վերջին տասնամյակին: Սուլթան Աբդուլ Համիդը ծրագրեր էր մշակում հայկական ջարդեր կազմակերպելու համար: Նրա հրամանով 1890–1892 թթ. ստեղծվեցին հատուկ հեծյալ զորամասեր, որոնց հիմնական խնդիրն էր լինելու մասնակցություն ունենալ հայկական կոտորած-

1 H. von Moltke. Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei aus den Jahren 1835 bis 1839. Berlin, 1876, S. 354-355.

ներին: Այդ զորամասերը իրենց կազմակերպչի անունով էլ կոչվեցին Համիդիե:

Սուլթանական կառավարությունը որոշեց նախ և առաջ հաշիվ մաքրել Սասունի հետ, որը հայ ազատագրական շարժման գլխավոր օջախներից մեկն էր: Թուրքական տեղական իշխանությունների դրդմամբ և մշակած ծրագրով քրդական ցեղերը 1893 թ. հարձակվեցին Սասունի վրա, բայց դիմադրության հանդիպելով՝ հետ շպրտվեցին: Սակայն գրոհները շարունակվեցին: 1894 թ. ամռանը թուրքական 4-րդ բանակը, Զեքի փաշայի հրամանատարությամբ, շարժվեց Սասունի վրա: Թուրքական զորքերին միացան քրդական ուժերը: Արշավողների թիվը հասավ 40000-ի: Օգոստոս ամսին թշնամին մտավ Սասուն:

Ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ Սասունի հայ բնակչությունը հասարակ զենքով զինված կռվեց խիզախությամբ և անձնազոհությամբ: Բայց ուժերն անհավասար էին, թշնամին հաղթեց: Սասունը ենթարկվեց անասելի կողոպուտի, բնակչությունը՝ կոտորածի: Իսպառ ավերվեցին ու կործանվեցին մի քանի տասնյակ գյուղեր: Սրի քաշվեց ավելի քան 10000 մարդ:

Սասունի կոտորածները բողոք ու զայրույթ առաջացրին բազմաթիվ երկրներում: Հասարակայնությունը իր ձայնը բարձրացրեց արյունարբու սուլթանի դեմ և պահանջեց կտրուկ միջոցներ ձեռնարկել նրա նկատմամբ: Օրեցօր աճող հասարակական կարծիքի և ժողովրդական զայրույթի ազդեցության տակ Սասունի հայկական ջարդերով զբաղվեցին անգլիական, ֆրանսիական և ռուսական կառավարությունները: Կազմվեց քննիչ հանձնաժողով, որ սկսեց գործել 1895 թ. հունվարից: Վեց ամիս աշխատելուց հետո հանձնաժողովը արձանագրեց, որ տեղի են ունեցել սոսկալի ջարդեր, որ Սասունի հայ բնակչությունը կոտորվել է առանց սեռի ու հասակի խտրության: Միաժամանակ, նորից առաջ քաշվեց Հայկական հարցը, նորից դրվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ մտցնելու խնդիրը: Հարցը քննարկեցին Կոստանդնուպոլսի անգլիական, ֆրանսիական և ռուսական դեսպանները, որոնք Արևմտյան Հայաստանի համար մշակեցին բարենորոգումների ծրագիր, որը սուլթանին ներկայացվեց 1895 թ. մայիսին և այդ պատճառով ստացավ «Մայիսյան բարենորոգումներ» անունը:

Այդ ծրագիրը բաղկացած էր 40 հոդվածից, ուներ վարչական բարենորոգումների բնույթ և նախատեսում էր տեղական ինքնավարություն: Բարենորոգումները պետք է կիրառվեին Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի և Սեբաստիայի վիլայեթներում:



Սուլթանական կառավարությունը սկզբում խուսափում էր ընդունել առաջարկված բարենորոգումների ծրագիրը, իսկ հետո զանազան պատրվակներով երկար ժամանակ ձգձգեց նրա քննությունը: 1895 թ. աշնանը երեք պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները, վերանայելով ու մասնակիորեն փոփոխելով Մայիսյան ծրագիրը, այն նորից ներկայացրին սուլթան Աբդուլ Համիդին, որը և ստորագրեց այն: Սակայն, դրանից հետո էլ դրությունը Արևմտյան Հայաստանում մնաց անփոփոխ: Սուլթանը զգալով մեծ պետությունների երկդիմի և խարդախ քաղաքականությունը Հայկական հարցում, բարենորոգումների ծրագիրը ընդունեց միայն առերես: Գործնականում նա քայլեր կատարեց բոլորովին հակառակ ուղղությամբ:

Այն ժամանակ, երբ անգլիական, ֆրանսիական և ցարական կառավարությունների՝ Կոստանդնուպոլսի դեսպանները զբաղված էին Մայիսյան բարենորոգումների ծրագրով, սուլթան Աբդուլ Համիդը գաղտագողի նախապատրաստում էր հայկական զանգվածային ջարդեր՝ սպասելով հարմար առիթի: 1895 թ. սեպտեմբերին հնչակյանները Կոստանդնուպոլսում կազմակերպեցին Բաբը-Ալիի ցույցը՝ պահանջելով, որ սուլթանական կառավարությունն ընդունի երեք պետությունների կողմից բարենորոգումների ծրագիրը և իրագործի այն: Թուրքական ոստիկանությունը զենքի ուժով ցրեց ցուցարարների բազմությունը և անմիջապես սկսեց հայ բնակչության կոտորածներ Կոստանդնուպոլսում: Այդ կոտորածներն ազդանշան հանդիսացան. Կոստանդնուպոլսի դեպքերի օրինակով ջարդեր սկսվեցին Թուրքիայի հայաբնակ գավառներում և Արևմտյան Հայաստանի շատ մասերում:

1896 թ. ամռանը Կ. Պոլսում տեղի ունեցան նոր կոտորածներ, որի համար առիթ հանդիսացավ հետևյալ դեպքը: Օգոստոսի 14-ին դաշնակցություն կուսակցությանը պատկանող մի խումբ զինված երիտասարդներ հանկարծակի հարձակումով գրավում են Բանկ Օտոմանը և պահանջում, որ սուլթանը վերջ տա հայկական կոտորածներին ու հրապարակորեն խոստանա բարենորոգումներ մտցնել Արևմտյան Հայաստանում, այլապես կպայթեցնեն բանկը և այդպիսով կոչնչացնեն նրանում եղած ամբողջ հարստությունը: Սուլթանը տատանվում է, քաղաքում սկսվում է խուճապ և իրարանցում: Գործին միջամտում են եվրոպական պետությունների դեսպանները, որոնք, խոստանալով հաշվի առնել ու քննարկել առաջադրված պահանջները, համոզում են զինյալներին թողնել բանկը և հեռանալ Թուրքիայից: Առիթ դարձնելով կատարված դեպքը, Աբդուլ Համիդը նոր կոտորածներ սկսեց Կ. Պոլսում:

Հայկական ջարդերը, սուլթանական կառավարության գազանությունները մեծ զայրույթ առաջացրին շատ երկրներում, մամուլի բազմաթիվ օրգաններում, աշխարհի առաջավոր մտավորականության մեջ: Տեղի ունեցան բողոքի ցույցեր ու ելույթներ, Աբդուլ Համիդը անվանվեց «ջարդարար», «արյունարբու»: Սուլթանին մեղադրողների և արևմտահայերի պաշտպանների դերում հանդես եկան ականավոր գրողներ, հրապարակախոսներ ու քաղաքական գործիչներ: Հասարակական կարծիքը, սակայն, ի վիճակի չեղավ խափանելու սուլթանական Թուրքիայի ջարդարարական քաղաքականությունը:

Կոտորածի տարիներին արևմտահայության որոշ հատվածներ զենքի դիմելով վարեցին ինքնապաշտպանական կռիվներ, որոնցից մի մասը ավարտվեց հաջողությամբ: Առանձնապես հիշատակության արժանի է Զեյթունի հայ բնակչության ինքնապաշտպանությունը: 1895 թ. սեպտեմբերին, երբ սուլթանական զորքերը ջարդեր կազմակերպելու նպատակով մոտեցան Զեյթունին, քաղաքի զինված բնակիչները, հարձակվելով թուրքական ջոկատների վրա, փախուստի մատնեցին նրանց: Սուլթանի հրամանով ապստամբների դեմ շարժվեցին նոր զորամասեր: Տեղի ունեցան կատաղի կռիվներ, թուրքական զորքերը մեծ կորուստներ կրեցին, բայց չկարողացան կոտրել լեռնականների դիմադրությունը:

Զեյթունցիների՝ ամիսներ տևող հերոսական ինքնապաշտպանության լուրը տարածվեց շատ երկրներում: Հասարակական կարծիքի ճնշման տակ գործին միջամտեցին մեծ պետությունների ներկայացուցիչները: Սուլթանական կառավարության և զեյթունցիների միջև սկսվեցին բանակցություններ, արվեցին փոխադարձ զիջումներ: Կնքված պայմանագրի համաձայն, թուրքական զորքերը հետ քաշվեցին Զեյթունի սահմաններից:

1896 թ. զինված ինքնապաշտպանություն կազմակերպեցին նաև Վանի հայ բնակիչները: Նրանք հերոսաբար դիմադրեցին թուրքական հրոսակախմբերին, բայց վերջիվերջո պարտվեցին, որովհետև ուժերն անհավասար էին:

Ինքնապաշտպանական կռիվները մեծ մասամբ անհաջող ելք ունեցան: 1894–1896 թթ. զանգվածային կոտորածների ընթացքում զոհվեց մոտ 300000 մարդ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ 1850-1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

## 1

Նախքան մեր հիմնական նյութին անցնելը, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ օսմանյան բռնապետության դեմ ուղղված հայ ազգային-ազատագրական պայքարը զգալի չափով նախապատրաստվեց և լայն ծավալ ստացավ շնորհիվ այն բանի, որ 1850-1860-ական թվականները բեկման՝ յուրահատուկ վերածննդի ու ազգային զարթոնքի շրջան հանդիսացան մեր ժողովրդի պատմության մեջ, երբ ավելի ուժեղացավ, ամրապնդվեց ազգային կոնսոլիդացիան հայության հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի գրեթե բոլոր բնագավառներում:

Շրջադարձային այդ տարիներին լուսավորական շարժումը վճռական հաղթանակ տարավ կղերա-ավատատիրական, ռեակցիոն ուժերի նկատմամբ: Ձևավորվեց ու զարգացավ նոր, աշխարհիկ գրականությունը, կատարվեցին դպրոցական բարենորոգումներ, հիմնվեցին գրական, մշակութային-կրթական մի շարք ընկերություններ, նոր թափ ստացան հրատարակչական գործը, մամուլը, թատրոնը և այլն: Ձևավորվեց և քաղաքացիական իրավունք ստացավ աշխարհաբար գրական լեզուն, որը վեր կանգնելով տեղական բարբառներից, դարձավ ազգային միասնական լեզու, լայն ծավալ ստացավ լուսավորական գաղափարների պրոպագանդը: Պատահական չէր, իհարկե, որ «Հյուսիսափայլը» դեռևս 1858 թ. ազդարարում էր. «Այսուհետև ոչինչ եգիպտոսյան խորամանկ քրմեր, որ կամեին լինել գիտության միայնակ պահապանքը. այսուհետև ոչինչ Չինական պարիսպ, որ պիտոյ է փակեր լուսավոր գաղափարների մուտքը ազգերի մեջ: Այսուհետև լույս և ճշմարտություն և ազատություն խավարի բաբելոնյան գերությենից»[1]:

Հայրենասիրական գաղափարներով տոգորված մի շարք հասարակական-քաղաքական գործիչներ, գրողներ և հրապարակախոսներ առաջ քաշեցին «հայության հավաքման» և ազգության համախմբման գաղափարները: Ռափայել Պատկանյանը ժամանակի հիմնական հարցը համարում էր ազգություն կազմելու հարցը: Գարեգին Սրվանձտյանցը «Արծվի Վասպուրականի» էջերից խիստ հարձակվում էր գործում նրանց վրա, ովքեր

---

1 «Հիւսիսափայլ», Մ., 1858, ամսատետրակ N 7 [տիտղոսաթերթ]:

մտածում էին ոչ թե ամբողջ Հայաստանի բախտի, ամբողջ ազգի մասին, այլ իրենց նեղ շահերի, իրենց քաղաքի կամ գավառի մասին: Ոչ թե «գավառասիրություն», այլ «հայրենասիրություն»,– ահա նրա նշանաբանը[1]: Հարություն Սվաճյանի խմբագրությամբ Կ. Պոլսում հրատարակվող «Մեղու» պարբերականը 1860 թ. հունիսին գրում էր. «Միանանք ազգայնության փառավոր դրոշակին տակ, ի մի սիրտ և մի հոգի հոդյալ ամրացնենք, ստվարացնենք ազգին արմատը»[2]: Մի այլ կապակցությամբ, թերթը նույն թվականի նոյեմբերին կոչ էր անում հայ ժողովրդի երկու հատվածների միջև սերտ կապեր հաստատել, գործակցել միմյանց հետ, միանալ «սրտով ու տենչանոք», կազմել մի ընդհանուր, անբաժանելի ազգ: Մկրտիչ Պեշիկթաշլյանը կոչ էր անում մի կողմ նետել ներքին, կրոնական-դավանաբանական վեճերը և միացյալ ուժերով դարբնել ազգի բախտը: Պեշիկթաշլյանի այդ իղձը ցայտուն կերպով արտահայտվեց նրա «Եղբայր եմք մեք» հայտնի բանաստեղծության մեջ:

Տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբա՛յր եմք մեք,
Որ մըրըրկաւ էինք զատուած.
Բաղդին ամէն ոխ չարանենգ
Ի մի համբոյր ցրուին ի բաց
..............................
Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն հայոց դաշտեր:
Ընդ աստեղոք ի՜նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն[3]:

Պեշիկթաշլյանին ջերմորեն արձագանքեց նրա արևելահայ եղբայրը՝ Րաֆֆին:

Տո՛ւր ինձ ձեռքդ, մենք եղբայր ենք,
Ե՛կ տանք սիրո միմյանց համբույր,
Այն ի՞նչ ծաղիկ է անուշհոտ,
Քան զսեր եղբարց՝ սուրբ, բարեբույր…
Սեր, միություն, եղբայրություն
Մեր դրոշի վերա գրենք,
Մենք միասին, ձեռն ի ձեռին,

1 «Արծուի Վասպուրական», 1861, N 3, էջ 93:
2 «Մեղու», 1860, N 102, էջ 139:
3 Մ. Պէշիկթաշլեան. Բանաստեղծութիւններ, ճառեր. Վենետիկ, 1956, էջ 48:



Մեր գործերը հառաջ վարենք…
Տո՛ւր ինձ ձեռքդ, հայ ենք, եղբայր,
Ազգայնության կնքենք համբույր.
Ով յուր ազգը չէ ճանաչում,
Մտքով, աչքով խուլ է և կույր[1]:

Ազգության հարցի վերաբերյալ Ստեփանոս Նազարյանցը «Հյուսիսափայլում» տպագրեց բազմաթիվ հոդվածներ: Սկսնակ հրապարակախոս Գրիգոր Արծրունին ևս մեծ եռանդով պայքարում էր ազգության սկզբունքի համար:

Հայ երիտասարդ մտավորականության մեջ մեծ տարածում ստացավ «աստծուց հետո հայրենիք» նշանաբանը: Զմյուռնիայում հրատարկվող «Ծաղիկ» պարբերականը, դիմելով հայ երիտասարդներին, կոչ էր անում. «Եռանդուն երիտասարդներ, Հայկա արժանի զավակներ, միանալու ժամանակ հասած է»[2]: Հանդես եկան բանաստեղծներ, գրողներ ու հրապարակախոսներ, որոնք գտնում էին, թե ժամանակն է սթափվել, ոտքի կանգնել, ապստամբության դրոշ բարձրացնել թուրքական տիրապետության դեմ: Ժամանակակից մամուլի էջերում մեծ տեղ էին գրավում ազգային-ազատագրական շարժման հարցերը: Հաճախակի դարձան հայրենասիրական գրքերի հրատարակությունները: 1858 թ. Թիֆլիսում լույս տեսավ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին», որը ջերմ արձագանք գտավ հայ դեմոկրատական-հայրենասիրական շրջաններում: Հայ մտավորականության մի շարք ներկայացուցիչներ գաղափարական պրոպագանդի հետ միասին ձեռնամուխ եղան նաև քաղաքական գործունեության:

Հայ ազգային զարթոնքի մասին դեռ իր ժամանակ արտահայտվել է նաև Միքայել Նալբանդյանը: «Տարակույս չկա,– գրում էր նա 1860 թ. իր «Հիշատակարանում»,– որ մարդկության պատմության մեջ, ոչ մի ժամանակ այնպես սաստիկ և որոշակի երևացած չեն ազգությունքը, ինչպես ներկայումս: Ազգությունը ասես թե դարձել է մի ամենօրյա հաց, առանց որին չէր կարելի ապրել. մի էլեկտրականության պես բան, որ փայլակի շուտությամբ տարածվում է զանազան ազգության անդամների մեջ: Այս բանի խմորը ընկնում է և մեր ազգի մեջ և մեզանում լսվում են ձայներ և մեր մեջ սկսում է բաբախել մի կենդանի սիրտ»[3]:

Տեղի ունեցավ ժողովրդի երկու հատվածների՝ արևելահայերի ու արևմտահայերի մերձեցում, ավելի ուժեղացան գաղափարական և մշակու-

1 Րաֆֆի. Երկերի ժողովածու. հ. առաջին. Ե., 1983, էջ 56-57:
2 «Ծաղիկ», Զմիւռնիա, 1861, N 1:
3 Մ. Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածու. հ. 1, Ե., 1945, էջ 463:

թային կապերը: Այս գործում առանձնապես խոշոր դեր խաղաց պարբերական մամուլը: Բնորոշ է, օրինակ, այն որ 1850–1860 թթ. արևելահայ մի շարք պարբերականներ, այդ թվում և «Հյուսիսափայլը», «Կռունկ Հայոց աշխարհին», «Մեղու Հայաստանին» և այլն, հաճախ անդրադառնում են արևմտահայ իրականության հարցերին և երբեմն բավական լայնորեն լուսաբանում արևմտահայերի մշակութային և հասարակական-քաղաքական կյանքը: Թիֆլիսում հրատարակվող «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը 1862–1863 թթ. մի շարք հոդվածներ տպագրեց ինչպես Զեյթունի 1862 թ. ապստամբության, այնպես էլ արևմտահայերին վերաբերող այլ հարցերի մասին:

Աշխույժ գործունեություն ծավալեց նաև արևմտահայ պարբերական մամուլը: Մկրտիչ Խրիմյանի «Արծվի Վասպուրականը» 1850–1860-ական թթ. գրում էր նաև Արևելյան Հայաստանի մասին և հայրենասիրական ոտանավորներ արտատպում* Մոսկվայում հրատարակվող «Քնար հայկականից»: Այդ նույն ժամանակ Ստեփան Ոսկանյանի «Արևելքը» և «Արևմուտքը» զգալի ջանքեր գործադրեցին արևելահայ և արևմտահայ առաջավոր մտավորականության կապերն ուժեղացնելու և ամրապնդելու ուղղությամբ: Կ. Պոլսի «Մեղու» հանդեսում 1860–1861 թթ. արտատպվեցին Մ. Նալբանդյանի հեղափոխական պայքարի կոչ անող «Մանկության օրեր», «Ազատություն» բանաստեղծությունները և այլ ստեղծագործություններ: Հանդեսի խմբագիր Հարություն Սվաճյանը առավել հետևողականությամբ անդրադառնում էր արևելահայերի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի հարցերին: Մատթեոս Մամուրյանը 1864-1865 թթ. գրում էր Լազարյան ճեմարանի, Ներսիսյան դպրոցի և արևելահայերի մշակութային-հասարակական կյանքի հետ կապված խնդիրների մասին:

Միաժամանակ, քաղաքական կապեր հաստատվեցին արևելահայ և արևմտահայ մտավորականության ներկայացուցիչների միջև: 1860-ական թթ. սկզբներին արդեն տեղի ունեցավ համագործակցություն ազգային-ազատագրական շարժման բնագավառում: Դրա լավագույն օրինակը հանդիսացան Մ. Նալբանդյանի քաղաքական կապերը պոլսահայ դեմոկրատական մտավորականության մի շարք ներկայացուցիչների հետ: Ավելի ուշ, հայրենասիրական գաղափարներով տոգորված արևելահայ մտավորականությունը իրեն նվիրում էր սուլթանական լծի տակ հեծող հայության ազատագրության գործին, զգալի դեր խաղալով արևմտահայ ազատագրական շարժումների մեջ: Այսպիսով, գնալով ավելի ու ավելի էին ամրանում հայ ժողովրդի երկու հատվածների ինչպես գաղափարական ու մշակութային, այնպես էլ քաղաքական կապերը:



Բեկման տարիների արտահայտություններից մեկն էր նաև հասարակական-քաղաքական ու գաղափարական այն շարժումը, որ ծավալվեց 1850–1860-ական թթ. Կ. Պոլսում՝ «Ազգային սահմանադրության» շուրջ: Շարունակելով իրենց ազատամիտ գաղափարների պրոպագանդը, արևմտահայ բարենորոգիչները և առաջին հերթին Գրիգոր Օտյանը, Նիկողայոս Պալյանը, Նահապետ Ռուսինյանը, Գր. և Մ. Աղաթոնները, Սերվիչենը (Սերովբե Վիչենյան) և ուրիշներ, Օտյանի խոսքերով ասած, պատերազմ հայտարարեցին լուսո դիրքերից՝ խավարի դեմ, ժողովրդայնություն՝ ամիրայության դեմ և սահմանադրություն՝ եկեղեցական ու աշխարհական իշխանության դեմ[1]: Քարոզելով ազատամիտ գաղափարներ, նրանք ձգտում էին բարեփոխումներ մտցնել հայ հասարակական կյանքի բոլոր բնագավառներում:

Այս բոլորից հետո, իհարկե, պատահական չէր, որ հայրենասեր շատ գործիչներ ավետում էին հայոց աշխարհի նոր գարունը: Դեռևս 1849 թ. Ղևոնդ Ալիշանը գրում էր.

Հայո՛ց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել...

Մկրտիչ Խրիմյանի աշակերտ Արսեն Թոխմախյանը 1859 թ. «Արծվի Վասպուրականում» հրապարակեց գողտրիկ մի բանաստեղծություն.

Լեռնակուտակ հալին ձիւնք,
Գայ բաղձալին այն գարուն
Որ վարդէնին և շուշան
Ի քաղս առուաց կան զուարթուն.
Եւ կաթնորակ աղբերունք
Ցայտեալ վիժին 'ի մարմանդ
Վառեալ սոխակն սիրելույն
Ձայնէ մեղմիկ վարդէնույն
Աւետելով Նոր գարուն...

Պերճ Պռոշյանը նույնպես 1850–1860-ական թթ. համարում էր հայ ժողովրդի գարնան սկիզբը[2]:

1850–1860-ական թթ. ազգային զարթոնքը պայմանավորող այդ նախադրյալների ստեղծման գործում զգալի նշանակություն ունեցան մի շարք քաղաքական անցքեր ու գաղափարական ազդեցություններ: Նկա-

1 Մ. Վարանդեան. Հայկական շարժման նախապատմութիւնը, հ. Ա. Ժընև, 1912, էջ 261:

2 Պ. Պռոշյան. Հուշեր. Ե., 1940, էջ 143:

տի ունենք հատկապես Արևելյան Հայաստանը 1828 թ. Ռուսաստանին միանալու պատմական ակտը, Ղրիմի պատերազմը (1853-1856 թթ.) և դրան հաջորդող հեղափոխական իրադրությունը Ռուսաստանում, ֆրանսիական 1848 թ. հեղափոխությունը, Մաձձինիի և Գարիբալդիի գլխավորած իտալական ազգային-ազատագրական պայքարը, սուլթանական բռնապետության դեմ ծավալված բալկանյան և այլ ժողովուրդների ապստամբական շարժումներն ու խմորումները:

Ազգային զարթոնքին գործուն մասնակցություն ունեցավ հատկապես Մոսկվայի, Թիֆլիսի, Կ. Պոլսի ու Զմյուռնիայի հայ համայնքների դեմոկրատական մտավորականությունը:

Թուրք-օսմանյան բռնապետության դեմ 1850–1860 թթ. ուղղված հայ ազատագրական պայքարը արտահայտվեց տարբեր ձևերով ու երանգներով: Տեղի ունեցան ապստամբություններ ու զինված ելույթներ, ծավալվեց գաղտնի խմբակների և հայրենասեր առանձին գործիչների քաղաքական գործունեություն:

Նախ, ժողովրդական շարժումների մասին:

Հայ ազատագրական շարժման հիմնական կենտրոններից մեկը Զեյթունն էր: Լեռնային Կիլիկիայի մի մասը կազմող այդ երկրամասը ընկնում է Մարաշից դեպի հյուսիս-արևմուտք, Ջահան (Պյուռամիս) գետի ակունքներում: Զեյթուն անունով կոչվել է ինչպես ամբողջ գավառը, այնպես էլ նրա կենտրոնը հանդիսացող գյուղաքաղաքը[1]: Հնում գավառն անվանվել է նաև Ուլնիա:

Նա ունի բազմաթիվ ձորակներ և անանցանելի կիրճեր, որոնք լեռների հետ միասին երկրին տալիս են անառիկ դիրք[2]:

Զեյթունում համեմատաբար ստվար հայ բնակչություն հաստատվել էր դեռևս Կիլիկիայի հայկական պետության գոյության ժամանակաշրջանում[3]: Բնակչության թիվը տարբեր ժամանակներում տարբեր է եղել: 1860-ական թթ. Զեյթունի հայ բնակչության թիվը մոտավոր հաշվով կազմում էր 30000, որից 17 հազարը ապրում էր գավառի կենտրոնը հանդիսացող Զեյթուն գյուղաքաղաքում, իսկ մնացածը՝ նրա շրջակայքում գտնվող հայկական գյուղերում:

XIX դարի առաջին կեսին Զեյթուն գավառի տնտեսական կյանքն ուներ փակ, բնատնտեսային բնույթ: Գյուղացիության սոցիալական շերտավորումը դեռևս թույլ ձևով էր արտահայտվում: Երկրի վարչաձևը իր

1 Տե՛ս Կիլիկիա, Պետերբուրգ, 1894, էջ 327-332:

2 Հ. Ալլահվերտեան. Ուլնիա կամ Զեյթուն. Կ. Պոլիս, 1884:

3 Г. Г. Микаелян. История Киликийского Армянского государства. Е., 1952.



վրա կրում էր տոհմական-նահապետական կարգերի դրոշմը: Հետաքրքիր է, որ յուրաքանչյուր գյուղ ուներ ծերունիների խորհուրդ, որի դերը, սակայն, անվանական էր: Ռեալ իշխանությունը գտնվում էր գյուղապետի՝ այսպես կոչված՝ քեհյայի ձեռքում: Բուն Զեյթուն գյուղաքաղաքը բաժանված էր չորս թաղի: Յուրաքանչյուր թաղ ուներ իր թաղապետը, որը «իշխան» տիտղոսն էր կրում: Սովորաբար թաղապետերն իրենց պաշտոնները վարում էին ժառանգաբար: Ֆրանսիացի Լեոն Պոլը, որ 1864 թ. այցելել էր Կիլիկիա, թաղապետների մասին գրում էր, թե նրանք «ընտրվում են տոհմի կամ հանճարի առավելության համար և միայն իրանց հայրենասիրության և քաջության պատճառով են կարգվում ժողովրդի գլուխ, և ժողովուրդը կարող է մերժել այդ իշխաններին, եթե նրանք որևէ հանցանք ունենան[1]:

Ֆրանսիացի ճանապարհորդը ճիշտ էր մասամբ, քանի որ ինչպես քեհյաները գյուղերում, այնպես էլ թաղապետները («իշխանները») Զեյթունում ավանդաբար հանդիսանում էին վերնախավի ներկայացուցիչներ: Նրանց վարչական-քաղաքական դիրքը պայմանավորված էր իրենց սոցիալական դիրքով:

Ընդհանուր բնույթ կրող հարցերը, որոնք վերաբերում էին ամբողջ գավառին (երկրին), քննվում էին գավառային մարմնի կողմից, որի մեջ մտնում էին առանձին գյուղեր ներկայացնող քեհյաները և Զեյթուն գյուղաքաղաքի թաղապետները՝ «իշխանները»: Այստեղ զգալի դեր էր խաղում Զեյթունի հայ հոգևորականության պետը:

Զեյթուն գավառի վարչաձևի մասին մի շարք հեղինակներ արտահայտել են բավական հետաքրքիր տեսակետներ: Վիկտոր Լանգլուան Զեյթունի վարչաձևը համարում էր «հանրապետական»[2], իսկ Էլիզե Ռեկլյուն՝ «կոնֆեդերատիվ հանրապետական»[3]: Հայ հեղինակներից մի քանիսն աշխատել են գործն այնպես պատկերացնել, որ իբր Զեյթունում բացակայել են սոցիալական ներքին հակասությունները և դասակարգային պայքարը[4]: Այդ տեսակետները հեռու են ճշմարտությունից: Չնայած տոհմական-նահապետական կյանքի որոշ գծերի առկայությանը, Զեյթունում, ինչպես նաև նրա հարևան մյուս գավառներում, տիրում էին ֆեոդալական հարաբերություններն իրենց հիմնական հատկանիշներով:

1 «Մշակ», 1896, N 8, հմմ. Ղ. Ալիշան. Սիսուան. Վենետիկ, 1885, էջ 188-190:

2 «Մասեաց աղաւնի», Փարիզ, 1856, N 6:

3 Էլիզէ Ռեկլիւ. Լազիստան, Հայաստան և Քուրդիստան..., Վաղարշապատ, 1893, էջ 95:

4 «Փորձ», 1879, N 11, էջ 21:

Զեյթունն իրավականորեն գտնվում էր սուլթանական Թուրքիայի տիրապետության տակ, բայց փաստորեն ուներ կիսանկախ դրություն: Գավառի վարչական, դատական, քաղաքական, կրոնական և այլ բնույթի գործերը կատարվում էին ինքնուրույն կերպով, առանց թուրքական կառավարության միջամտության: Սակայն զեյթունցիները, թեև ոչ միշտ, հարկ էին վճարում սուլթանական կառավարությանը*:

XIX դարի առաջին կեսին զեյթունցիները մի շարք անգամ զինված ընդհարումներ ունեցան թուրքական կառավարության զորքերի հետ: Այսպես, օրինակ, սուլթանական զորքերը 1808, 1819, 1829, 1835 թթ. արշավեցին այդ կիսանկախ գավառի վրա: Զեյթունցիները, որ քաջ և հմուտ կռվողներ էին, հերոսաբար դիմադրում և հաճախ հետ էին շպրտում թշնամուն:

Զեյթունցիները կռիվներ են մղել նաև հարևան շրջաններում իշխող զանազան աշիրաթապետերի ու ավատատերերի դեմ, որոնք հաճախ հարձակումներ էին գործում հայ լեռնականների վրա կողոպուտի, արոտավայրերը գրավելու կամ նման այլ նպատակներով: Զեյթունից ոչ հեռու ապրող մի շարք թուրքական, թուրքմենական, քրդական ու ավշարական ցեղեր երբեմն նույնպես զենք են բարձրացրել օսմանյան կառավարության դեմ ձգտելով պահպանել իրենց անկախությունը և ազատությունը: Այդ հողի վրա Տավրոսի լեռնականները՝ հայերը և նրանց հարևանները, երբեմն համագործակցել են ընդհանուր թշնամու դեմ: Հարկ է նկատել, որ զեյթունցիների կիսանկախ դրությունն իր վրա հրավիրեց հայ ազատագրական շարժման գաղափարներով տոգորված մի շարք գործիչների ուշադրությունը, գործիչներ, որոնք հույս ունեին, թե իրենց քաղաքական ծրագրերը կարող են իրագործվել առաջին հերթին լեռնային այդ գավառում և ընդհանրապես, Կիլիկիայում: Պատահական չէ, որ Մկրտիչ Խրիմյանը դեռևս 1851 թ. այստեղ ստեղծեց «Սեր» անունը կրող մի ընկերություն, որը չնայած անվանվեց կրոնական կազմակերպություն, բայց իրականում ուներ հայրենասիրական նպատակ[1]: 1853 թ. Ղրիմի պատերազմի ժամանակ, Կ. Պոլսից ուսուցչի պաշտոնով Զեյթուն է գալիս Մելիքյան Հովակիմը, որին ոմանք անվանում են «առաջին գաղափարական քարոզիչը» Զեյթունում: Մելիքյանն աշխատում է կազմակերպել Զեյթունի ինքնապաշտպանությունը, ամրացնել, պահպանել նրա ինքնավարությունը: Իր այդ նպատակին հասնելու համար նա փորձում է անցնել Կովկաս և դիմել արևելահայերի դրամական օժանդակությանը: Սակայն

1 L. Nalbandian. The Armenian Revolutionary Movement. Berkeley and Los Angeles. 1963, p. 74.



այդ չի հաջողվում և թուրքական կառավարությունը նրան բանտարկում ու կախաղան է բարձրացնում:

«Այս ատենները (1853 թ.) Պոլսեն Զեյթուն եկավ Մելիքյան Արծրունի Հովակիմ աղան՝ իբրև գործիչ ու հին պանդուկը (քերվանսարայ) կառավարական պալատի ձև մտցնելով՝ ինքը եղավ կառավարիչ, չորս իշխանները ժողովո անդամ և Տիրացույան տեր Մարտիրոսն ալ դատավոր, ու այսպես սկսավ կառավարել շատ կանոնավոր կերպով: Մեկ տարի վերջ Կյուրետինի բերդին նորոգության ձեռնարկեց և այս բանին համար չի կրնալով պետք եղածին չափ դրամ հասցնել՝ խորհեցավ Ռուսիո երթալ այնտեղեն դրամ ճարելու համար: Արևելյան պատերազմին բորբոքած ժամանակն էր, հետևաբար և խիստ վտանգավոր այսպիսի ճանապարհորդություն մը, ուստի իշխանք ընդդիմացան, բայց նա պնդելով յուր որոշման վրա ճամփա ելավ ու Կարնո մեջ ճանչցվելով ձերբակալվեցավ և տեղվույն առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսի գործ դրած սաստիկ ջանքերուն հակառակ՝ չի կրնալով ազատվիլ՝ կախաղան բարձրացավ»[1]:

Այս, ըստ ամենայնի, հետաքրքիր անձնավորության մասին մենք ունենք միայն կցկտուր տեղեկություններ: Սակայն դրանք էլ հիմք են տալիս կարծելու, որ Մելիքյան Հովակիմը ևս 1850-ական թթ. Կ. Պոլսից Զեյթուն է եկել քաղաքական նպատակներով: Ավելի ուշ, Զեյթունի հետ զգալի հույսեր են կապել, ինչպես կտեսնենք, նաև Կ. Պոլսի դեմոկրատ-հայրենասեր մի շարք հայ մտավորականներ, որոնց թվում Հ. Շիշմանյանը (Ծերենց), Մ. Պեշիկթաշլյանը, Ս. Թագվորյանը և ուրիշներ:

Կիսանկախ և անհնազանդ Զեյթունի դեմ 1860 թ. կազմակերպվեց մի նոր արշավանք: Մարաշի կառավարիչ Խուրշիդ փաշան նախ «Զեյթուն ուղարկեց մարաշցի Թոփալյանը և առաջարկեց որ զինաթափ ըլլան և վճարեն 12 տարվան յետնեալ տուրքերը: Հակառակ պարագային կսպառնար բնաջինջ ընել զիրենք»[2]: Առաջարկը մերժվեց կտրականապես: Փաշայի 12 հազարանոց զորամասը, որը մեծ մասամբ կազմված էր բաշիբոզուկներից, նույն թվականի հունիսին բանակ դրեց գյուղաքաղաքի մատույցներում: Կանխելով թշնամուն, զեյթունցիները հանկարծակի ու սրընթաց հարձակումով խուճապի մատնեցին թուրքական զորքին, որը կրելով զգալի կորուստ՝ փախուստի դիմեց:

Բալկաններում և արաբական երկրներում (Սիրիա, Լիբանան) ծավալված հակաօսմանյան շարժումների պայմաններում տեղի ունեցած հայ լեռնականների այս փայլուն հաղթանակը խիստ անհանգստություն պատ-

1 *Զեյթունցի*. Զեյթունի անցեալը և ներկայը, Ա մաս. Վիեննա, 1900, էջ 91-92:
2 *Աղասի*. Զեյթուն և իր շրջակաները. Պեյրութ, 1968, էջ 87:

ճառեց Բ. Դուանը: Որպեսզի կանխի հայության ազատագրական շարժումը Զեյթունում և ամբողջ Կիլիկիայում, նա որոշում ընդունեց գրավել և ամբողջովին իրեն ենթարկել այդ լեռնային գավառը, զինաթափ անել ու կոտորել նրա հայ բնակչությունը: Մշակված ծրագիրն իրագործելու նպատակով 1862 թ. ամռանը կազմակերպվեց ավելի մեծ արշավանք, այժմ արդեն Ազիզ փաշայի հրամանատարությամբ:

Իր ժամանակի մի շարք աղբյուրներ իրավամբ նշել են, որ Ազիզ փաշան օսմանյան արքունիքից ստացել է հրահանգներ Զեյթունի հայ բնակչությանը զանգվածային կոտորածի ենթարկելու մասին: Մարաշի ֆրանսիական հյուպատոսարանի ներկայացուցիչ Մոլինարի հետ ունեցած զրույցի ժամանակ Ազիզ փաշան ուղղակի հայտարարել է, որ իր խնդիրն է իսպառ վերացնել ապստամբներին և նրանց ոչնչացնել մինչև վերջինը[1]: Թուրքական կառավարությունը գտնում էր, որ վերջապես ժամանակն է հաշիվը մաքրել Զեյթունի հետ: Խորհուրդ էր տրվում գործի անցնել՝ օգտագործելով ինչ-որ պատրվակ:

Թուրքական նոր բանակը, որը բաղկացած էր գլխավորապես քրդերից, չերքեզներից*, ավշար ու այլ ցեղերից կազմված անկանոն ջոկատներից, հուլիս ամսին շարժվեց Զեյթունի վրա**: Սկզբում նրան հաջողվեց գրավել մի քանի գյուղեր, որոնք ենթարկվեցին ջարդերի, ավերի ու թալանի: Այդ դեպքերի ժամանակակիցներից մեկը Արեգին (Ալաբաշ) գյուղի կոտորածի մասին գրել է. «... արք և կանայք և տղայք բոլոր սուրի բերան գնացին, տուները կողոպտեցան և ամբողջ գյուղը հրո ճարակ եղավ: Արյունը փողոցներու մեջ կվազեր, և հրդեհին մուխը սոսկում ու սարսափ կծավալեր մերձակա գյուղերը: Փաշան հրամայեց գյուղին մոտակա հայ վանքին դռները խորտակել, և այս արյան ծարավի մարդիկը կուսակալին աչաց առջև և նորա հրամանավ վանահայրը և միաբանքը փողոտեցին»[2]:

Փաշայի հաջողությունները, սակայն, երկար չտևեցին: 1862 թ. օգոստոսի 2-ին (14-ին) զեյթունցիները վճռական գրոհի անցան և մեծ ջարդ տվին սուլթանական զորքերին: Ազիզ փաշան խայտառակ պարտություն կրեց: Հաղթողները գրավեցին շատ զենք և այլ ռազմամթերք: Թշնամին դաշտում թողեց մոտ 2000 դիակ: Տեղի ունեցած կռիվներում զեյթունցիները մի անգամ ևս ցուցաբերեցին հիասքանչ քաջություն և պատերազմելու բարձր արվեստ***:

1 *V. Langlois.* Les arméniens de la Turquie et les massacres du Taurus (Revue des deux mondes, 1863, t. XLIII, p. 986).

2 «Փորձ», 1879, N 11, էջ 22:



Հերոսական այդ ճակատամարտի մասին մի այլ ժամանակակից գրել է. «Օգոստոսի երկրորդ օրը առավոտուն կանուխ Ազիզ փաշան Զեյթունի վրա հարձակելու նշանը տվավ. այլազգյաց բանակին առջևեն իբր 150 մոլլաներու և շեյխերու մեծ գունդը կերթար և անոնց ամենուն ալ առջևեն մեծ մյուֆթին: Զեյթունեն կես ժամի չափ հեռավորություն հասած ատեննին մեկ բարձր դաշտավայրի վրա ժողովեցան և աղոթելու կեցան և Զեյթունի վրա անեծքներ կարդացին... Այլազգի բանակը կես ժամու չափ աղոթելեն վերջը, Զեյթունի վրա հարձակեցավ, որուն առջին ժայռերու ետին տեղ-տեղ զեյթունցիք պահեստի մեջ կեցած էին իրենց չորս գլխավորներուն հրամանատարությանը տակ...»:

Խոսելով այն գազանությունների մասին, որ կատարում էին թուրքական զորքերն իրենց ձեռքն ընկած հայ գյուղացիների նկատմամբ, հոդվածագիրն այնուհետև շարունակում էր. «... պատերազմը ամեն կողմը բորբոքած էր, Զեյթունի զանգակաց հնչումը բոլոր Հայոց ի զեն դիմելու նշանը տված էր: Կռիվը խիստ կատաղի եղավ: Հայերը ամուր տեղեր բռնած ըլլալովնին՝ այլազգիներուն աղեկ ջարդ մը տվին և զանոնք ետ վռնդեցին և մինչև Ազիզ փաշային բանակատեղին հասան, որն որ հազիվ կրցավ մազապուր խալըսիլ: Ասոր նման ջարդ մը կերավ նաև Աստվածածնա վանից կողմը եղող այլազգի գունդը: Զեյթունցիք լերանց կիրճերը ու նեղ անցքերը ամրացած ըլլալով, մեծ վնաս հասցուցին այլազգյաց բանակին. կռիվը առտվանց մինչև կեսօր տևեց և Ազիզ փաշային զորքերը սկսան անդին ցիր ու ցան փախչել: Զեյթունցիք մինչև իրիկուն անոնց հետևեն ինկան և հալածեցին անոնցմե շատ մարդ ջարդելով: Այս զորացս մեկ մասը Մարաշի ճամբան բռնած էր, որն որ իր փախստյանը ատեն մեծամեծ կորուստներ ընելեն վերջը՝ հազիվ հազ գիշերը հոն կրցավ մտնել: Մյուս մասը ավելի կարճ ճամբե անցնելով՝ փախչելու համար Զեյթունի աջ և ձախ կողմերը ուղղած էին իրենց ընթացքը, այլ անոնց մեծ մասը լեռներու, կիրճերու և ձորերուն մեջ ջարդվեցան, մեծ մաս մ'ալ գետին մեջ թափվելով՝ խեղդվեցան»[1]:

Զեյթունի 1862 թ. դեպքերի այս նկարագրությունը, հնարավոր է, որ ունի չափազանցություններ: Սակայն նրա հիմնական միտքը, թե զեյթունցիք հերոսական դիմադրություն են ցույց տվել և ապա փայլուն հաղթանակ տարել թուրքական զորքերի նկատմամբ, միանգամայն ճիշտ է: Այդ բանն ապացուցվում է բազմաթիվ այլ վկայություններով: Այսպես, օրինակ, ապստամբության մասնակից Մ. Սեմերճյանի (Զեյթունցու) հուշերում 1862 թ. անցքերին վերաբերող նյութը հիմնականում համընկ-

1 «Կռունկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1863, N 3, էջ 224-225:

նում է վերը բերված նկարագրությանը: Ի դեպ, հետաքրքիր է նշել հատկապես այն փաստը, որ, ինչպես հայտնում է հուշերի հեղինակը, հայ ապստամբների հետ միասին թուրքական զորքերի դեմ հերոսական կռիվներ էին մղում Զեյթունում բնակություն հաստատած մի քանի ընտանիք լազեր[1]:

Օսմանյան ագրեսորների դեմ մղած իրենց մարտերում զեյթունցիներն ինչպես միշտ, այնպես էլ 1862 թ. աչքի ընկան հայրենասիրությամբ ու խիզախությամբ: Անօրինակ սխրագործություն և անձնազոհություն ցուցաբերեցին և հերոսի մահով ընկան Մարկոս Թաշճյանը, Մելքիսեթ Քասմյանը, Թորոսենց Հակոբը, Գալուստ վարդապետը և ուրիշներ:

«Զեյթունցի երիտասարդ մը՝ Մարկոս Թաշճյան անուն, կռվի տաք միջոցին՝ ուզեց վրեժխնդիր ըլլալ իրենց հերոսներու արյան, և մտադրեց սպաննել նույնինքն Ազիզ փաշան: Լավ նկատեց որ հեռուն, թնդանոթին քով կարմրաշերտ տաբատով մեկը կանգնած է. կարծեց թե անիկա էր հրամանատար փաշան: Բյուրավոր գնդակներու մեջեն անվտանգ անցնելով՝ հասավ և սպաննեց զայն, դժբախտաբար փախած միջոցին ինքն ալ զարնվեցավ: Խեղճ հերոսը չէր գիտեր, թե սպանվածը թնդանոթաձիգ հիսնապետ մըն էր»[2]:

Տավրոսի լեռնականները ցուցաբերեցին ոչ միայն զարմանալի արիություն, այլև պատերազմական արվեստին տիրապետելու մեծ փորձ ու հմտություն: Նկարագրելով թուրքական մի զորագնդի դեմ նրանց կռիվը, ականատես Մ. Սեմերճյանը պատմում է. «Հայերն այնպիսի ճշտությամբ կրակ կընեին, որ հարվածներեն և ոչ մին կվրիպեր իր նպատակեն, և թշնամիներուն դիակները դեզ ի դեզ կ'կուտակվեին ձորին մեջ, որ այնուհետև կոչվեցավ «Կոտորածի ձոր», «Գըրգըն դերեսի»: Թուրք զորքին այդ զորագունդին մեծամասնությունը և ամենեն եռանդով կռվողները չերքեզներն ըլլալով, ամենեն շատ կորուստն ալ անոնք տվին, 756 դիակ թողնելով ճակատամարտին տեղը իրենց 9 պեյերուն հետ, որոնց անուններն գրված էին իրենց սուրերուն վրա»[3]:

Զեյթունցիների հերոսական դիմադրության մասին գրել են նաև եվրոպացի հեղինակները: Ֆրանսիացի նշանավոր գիտնական, հայագետ Վիկտոր Լանգլուան, որ ժամանակակից էր ու լավ տեղյակ կատարված դեպքերին, 1863 թ. հրապարակած իր մի հոդվածում[4] պատմում էր, որ

1 *Զեյթունցի*. Նշվ. աշխ., էջ 26:
2 *Աղասի*. Նշվ. աշխ., էջ 96-97:
3 *Զեյթունցի*. Նշվ. աշխ., էջ 115:
4 Revue des deux mondes, 1863, t. XLIII, p. 989.



պաշարված հայերը հերոսաբար հետ էին մղում Ազիզ փաշայի բոլոր գրոհները: Ավելին: Ընտրելով բարենպաստ պահ հակագրոհի համար, նրանք հարձակվեցին թշնամու վրա առաջ բերելով մեծ շփոթություն և անկարգություն նրա շարքերում: «Ճեռնամարտը դարձավ համընդհանուր: Ազիզ փաշայի ջղմած զինվորները կորցնելով իրենց տոկունությունը նահանջեցին ու փախուստի դիմեցին: Հայերի պահեստային զորամասը, որ գտնվում էր ձորում, համարյա առանց դիմադրության գրավեց Ազիզ փաշայի թնդանոթները... Ճակատամարտը շարունակվեց մոտ չորս ժամ: Պատերազմի դաշտում թուրքերը թողեցին ութ հարյուր դիակներ: Զեյթունցիները միայն գիշերը դադարեցրին իրենց հետապնդումը: Ազիզ փաշայի պարտված, զգալի կորուստներ կրած և թնդանոթներն ու դրոշակները կորցրած բանակը անկարգ շարքերով նահանջեց Մարաշ»*:

Սակայն, գործը չվերջացավ այսքանով: Բ. Դուռը նոր պատրաստություններ տեսավ ապստամբներին ճնշելու համար: Պարտված զորահրամանատարին փոխարինեց Աշիր փաշան, որը Բալկաններում տեղի ունեցած ազգային-ազատագրական շարժումը ճնշելու փորձ ուներ: Զեյթունցիները նորից պատրաստվեցին դիմադրելու թշնամուն: Բայց շուտով դեպքերն այլ ընթացք ստացան: Զեյթունցիների ներկայացուցիչները, Կ. Պոլսի պատրիարքը և մի շարք հայ գործիչներ դիմեցին Բ. Դռանը և Ֆրանսիային: Կայսր Նապոլեոն III-ը, որ այդ շրջանում նվաճողական ակտիվ քաղաքականություն էր վարում Մերձավոր Արևելքում, փորձեց օգտվել առիթից և հանդես գալ հայերի «պաշտպանի» դերում: Թուրքական կառավարությունը, հասկանալով Ֆրանսիայի իսկական նպատակը, որոշեց չձեռնարկել նոր արշավանք զեյթունցիների դեմ, որպեսզի չստեղծի նոր պատրվակ Նապոլեոնի համար: Ի դեպ, կան տեղեկություններ այն մասին, որ միջամտության նպատակով հայերը դիմել են նաև Կ. Պոլսի ռուսական դեսպանին, որը խոստացել է օգնել նրանց: Այս բոլորի հետևանքով սուլթան Աբդուլ Ազիզը բանակցություններ սկսեց զեյթունցիների հետ, կնքվեց համաձայնություն, ըստ որի, Բ. Դուռը դադարեցրեց Զեյթունի դեմ նախապատրաստվող արշավանքը, իսկ ապստամբները համաձայնվեցին վճարել հարկերը և ընդունել կառավարության կողմից նշանակվելիք կայմակամին՝ գավառապետին, որը Զեյթուն եկավ միայն 1865 թ.[1]: Այսպիսով չիրագործվեց Բ. Դռան հիմնական նպատակը՝ կոտորածի ենթարկել զեյթունցիներին, և ցրիվ տալ նրանց ամրակուռ համայնքը:

Զեյթունցիների 1862 թ. հերոսամարտը լայն արձագանք գտավ և մեծ ազդեցություն թողեց հայ իրականության մեջ: Ազատագրական այդ պայքարին, ինչպես հայտնի է, անդրադարձան շատերը և այդ թվում Մ.

1 *Aghassi*. Zeïtoun... Traduction d'Archag Tchobanian. Paris. 1897, p. 148.

*Պեշիկթաշլյանը՝ Կ. Պոլսում և Ս. Շահազիզը՝ Մոսկվայում, նաև՝ Ա. Հայկունին (Ծիզմեճյան) Զմյուռնիայում: Կ. Պոլսի հայ բնակչությունը և մասնավորապես նրա դեմոկրատական խավերը լարված հետաքրքրությամբ հետևում էին կատարվող անցքերին և ամեն կերպ աշխատում նյութական ու բարոյական օժանդակություն հասցնել զենքի դիմած հայրենակիցներին: Իր հուշերում Սրբուհի Երիցյանը վկայում է, որ Զեյթունի ապստամբության ժամանակ կրոնական-դավանական կռիվներն արևմտահայերի մեջ զգալի չափով թուլացան:*

*«Այն տարին,– գրում էր Երիցյանը,– Զեյթունի անցքերը մեծ ազդեցություն ունեցան Պոլսո և այլ տեղերի հայոց վերա. ամենայն ոք Կիլիկիան ուներ ի բերան, ամենայն ոք մասնակից էր դրամական հանգանակությանց. ...նույնիսկ հռոմեադավան հայ երիտասարդները մոռացել էին դեպի իրանց լուսավորչական եղբայրներն ունեցած ատելությունը, և ամենայն սիրով թե՛ նյութապես և թե՛ բարոյապես օգնում էին այդ ձեռնարկություններին»[1]:*

*Նույն այդ հուշերում Երիցյանը հայտնում էր, որ Կ. Պոլսի «Անձնվեր ընկերությունը» նույնպես օգնում էր ապստամբ զեյթունցիներին թե՛ նյութապես և թե՛ բարոյապես: Զեյթունի հերոսամարտն առանձնապես մեծ արձագանք գտավ և զգալի աշխուժություն առաջացրեց հայրենասիրական գաղափարներով տոգորված երիտասարդության մեջ: Զեյթունի անցքերն արձագանք գտան նաև Վանում, Էրզրումում և այլ քաղաքներում[2]:*

*Թիֆլիսում հայ հայրենասերները և գլխավորապես երիտասարդությունը հանգանակություն սկսեցին ապստամբների օգտին: Այս կապակցությամբ «Կռունկ Հայոց աշխարհին» հանդեսում տպագրվեց հատուկ կոչ, որ ուներ «Հրավեր Ռուսաստանի հայերուն» խորագիրը: Կոչում ասվում էր. «... ուրախ ենք, որ մեր քաջասիրտ Զեյթունի հայերն իրանց աջու կռան ուժով մեր հավատո թշնամիներին ակռեքը փշրել են հենց էն գլխեմեն և տուր չեն տվել, որ նրանց կատաղությունը իր ուզածն գլուխ տանի: Սակայն մենակ էս դարդակ կարեկցությունը մեր Ռուսաստանի հայերուս կողմանե բավական չէ Թուրքերի սրի տակ վեր ընկած հայերու խեղճ և անտերունչ որբերու և այրիներու դառը վիճակը թեթևացնելու...»[3]:*

1 «Փորձ», 1877, N 4, էջ 193:

2 *Վ. Մելիքսեթյան.* Զեյթունի 1862 թ. ապստամբությունը.– Հայաստանի պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», հ. 2, Ե., 1950, էջ 232:

3 «Կռունկ Հայոց աշխարհին», 1862, N 10, էջ 778-779:



*Կոչն այնուհետև հիշեցնում էր, որ Ռուսաստանը միշտ օգնության ձեռք է մեկնել թուրքական տիրապետության դեմ ապստամբած ժողովուրդներին և որ այժմ ռուսական պետությանը հաճելի կլինի, եթե ռուսահայերը օժանդակեն զեյթունցիներին: Մեր խնդիրը և պարտքն է, ասվում էր կոչում, «մեր կարեկցությունը տարածել մեր... հեռավոր ազգայինների վերա. թո՛ղ ուրեմն մեր մեջ եղանակը մտածենք, փող հավաքենք ապահով եղանակավ հասցնենք նրանց ձեռը: Էս ազնիվ խորհուրդը մենք շատ հայերի բերանից լսում ենք էս օրերումս, միայն գործադրությունն է հարկավոր. թո՛ղ աշխարհ ամենայն վկա լինի, որ Ռուսաստանի հայերն էլ... չեն մոռանում խորը Տաճկաստանումը կրակի ու սրի տակ հալումաշ եղող իրանց եղբարցը»[1]:*

*Զեյթունի կռիվներին նվիրված հոդվածներ տպագրվեցին հայ պարբերական մի շարք հրատարակություններում և մասնավորապես, «Փարիզ», «Մյունատիի Էրճիաս» թերթերում, «Կռունկ Հայոց աշխարհին» և այլ հանդեսներում[2]: Այդ պայքարն ամենուրեք դիտվեց որպես հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր երևույթ*:*

*Զեյթունցիների ելույթը խիստ անհանգստություն պատճառեց սուլթանական Թուրքիային: 1850–1860-ական թթ., երբ ազգային-ազատագրական շարժման մի նոր ալիք էր բարձրանում Օսմանյան կայսրության դեմ, երբ ապստամբություններ բռնկվեցին Չերնոգորիայում, Սերբիայում, Հերցեգովինայում, Բուլղարիայում և այլն, սուլթանական կառավարությունը հայ լեռնցիների պայքարը համարեց լուրջ բնույթ կրող և իր համար խիստ վտանգավոր ազգային-ազատագրական շարժում: Այդ է պատճառը, որ սուլթանը մեծ նախապատրաստություն էր տեսնում և աշխատում էր ինչ գնով էլ լինի ճնշել սկսված շարժումը: Դեռ տարիներ առաջ սուլթանական ինքնակալությունը որոշել էր վճռական միջոցներ ձեռք առնել Զեյթունը գրավելու համար, որովհետև, ինչպես ասացինք, նա հասկանում էր, որ Զեյթունի կիսանկախ դրությունը կարող է խթանել հայ ազգային-ազատագրական շարժումները և այդ լեռնագավառը կարող է դառնալ հայկական շարժման կենտրոններից մեկը: Որ դեռ 1862 թ. ապստամբությունից առաջ թուրքական պետությունը որոշել էր գրավել Զեյթունը և վերացնել նրա կիսանկախ վիճակը, այդ մասին մի քանի փաստեր է բերում հայ նշանավոր վիպասան Ծերենցը «Փորձ» հանդեսում տպագրված իր հոդվածներից մեկում: Ծերենցը գրում էր. «... Ալի փաշա զրուցած էր 1861-են առաջ տոքթոռ Պառթ՝ հռչակավոր գերմանացի ճանապարհորդին, թե՝ «Կիլիկիո*

1 Նույն տեղում, էջ 780:

2 «Փարիզ», 1862, N 75 և հաջորդ համարները, «Կռունկ Հայոց աշխարհին», 1862, N 10, էջ 781-814, N 11, էջ 865-875, 1863, N 1, էջ 71-76:

*լեռներուն մեջ կան քանի մը ապստամբ ժողովուրդք, հուսամ թե քիչ ատենեն զանոնք անհետ կընենք»*[1]:

*Սուլթանական կառավարությունը որոշել է կոտորել զեյթունցիներին և նրանց երկիրը բնակեցնել չերքեզներով: Այս մասին Ծերենցը գրում էր. «Զեյթունցիք Նողայի թաթարաց պատերազմի մեջ սպանյալ գլխավորին ծոցեն գտած էին փաշայի թուղթը՝ որ օրերով առաջ խոստացեր էր թաթարներու շնորհել Զեյթուն, քրիստոնյա ժողովուրդը բնաջինջ ընելեն վերջ»*[2]:

*Զեյթունցիների 1862 թ. ապստամբությունը ստացավ համաժողովրդական, համազգային բնույթ և ջերմ արձագանք գտավ հայ իրականության մեջ: Պետք է նկատել, որ այդ գործում մեծ դեր խաղաց ժամանակի ազգային-ազատագրական գաղափարներով տոգորված հայ մտավորականությունը:*

*Բնորոշ է, որ 1863 թ. Ռ. Պատկանյանը «Հյուսիս» պարբերականում կոչ էր անում, որ պարսկահայերը թողնեն իրենց հայրենիքը և կենտրոնանան Զեյթունում: Պատկանյանը ակնարկում էր, որ այդ գավառը կարող է դառնալ այն երկրամասը, ուր հնարավոր է վերականգնել հայ ազգային-քաղաքական անկախությունը*[3]:

*Զեյթունցիների 1860–1862 թթ. ազատագրական շարժման ժամանակ հանդես եկան որոշ տարրեր, որոնք ձգտում էին ստեղծել Զեյթունի ինքնավարություն Նապոլեոն III-ի գերիշխանության տակ: Դրանք պատկանում էին տեղի հայ բնակչության բարձր շերտին և Կ. Պոլսի հայ ամիրայական խավին (գլխավորապես կաթոլիկներ): Այդ ժամանակաշրջանում նույն ուղղությամբ ակտիվ գործունեություն ծավալեց մի ոմն արկածախնդիր «իշխան Լուսինյան», որը փորձում էր իրեն ներկայացնել որպես Կիլիկիայի հայ Լուսինյան թագավորների ժառանգը: Նա պարզապես ֆրանսիական վարձու գործակալ էր և աշխատում էր ճանապարհ հարթել Նապոլեոն III-ի նվաճողական քաղաքականության համար Մերձավոր Արևելքում*: Այդ ծրագրերը, սակայն, հաջողություն չունեցան:*

*Զեյթունցիների 1862 թ. ապստամբության նախապատրաստման և ղեկավարման գործում զգալի դեր են խաղացել իր ժամանակի արևմտահայ մտավորականության մի շարք ներկայացուցիչներ: Ինչպես կտեսնենք հետագայում, արևմտահայ այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Մ. Պեշիկթաշլյանը, Հ. Սվաճյանը, Ս. Թագվորյանը, Հ. Քյաթիպյանը և ու-*

1 «Փորձ», 1879, N 11, էջ 21-22:
2 Նույն տեղում, էջ 23:
3 «Հիւսիս», Պետերբուրգ, 1863, N 1:



*րիշներ, կապեր են ունեցել ապստամբների հետ և օգնել նրանց հնարավոր միջոցներով:*

*Այդ նույն ժամանակ, տեղի ունեցավ ապստամբական մի այլ ելույթ Վան քաղաքում: Ազգային ճնշումների և սոցիալական կեղեքումների իրողությունը Վանի հայ բնակչությանը 1862 թ. սկզբներին զինված ընդհարման հասցրեց տեղական թուրքական ոստիկանության և թուրք վերնախավի հետ: Ընդհարումը գնալով ավելի լուրջ բնույթ է ստանում: Քաղաքի հայ բնակիչներին օգնության են գալիս շրջանի գյուղացիները: Սկսվում են համառ կռիվները, որոնց ընթացքում երկու կողմերն էլ տալիս են մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ: «Սկսվեցավ սոսկալի կռիվ. Վանա բոլոր բնակիչքը մեծավ մասամբ հայք են. և բաց հայաստանե՝ քաղաքն շրջապատված է գյուղերով և գյուղաքաղաքներով, որոց մեջ շատ և շատ հայ բնակիչք կան: Երբ որ այդ տխրալի լուրը հասավ այն գյուղացիներին՝ զինվորվեցան և հավաքվեցան նոցանից մինչև 20000 մարդ (որոց մեջ շատ կարելի է թե քուրդեր ևս կային...), ամեն կողմից դիմեցին դեպի քաղաք օգնության քրիստոնեից: Եվ ահա այստեղ... եղավ տաճկաց և հայոց մեջ այդ ահավոր կռիվը: Տաճիկները վազեցին դեպի բերդն, այնու մտոք որ նորա զենքերը դարձնեն հայերի վերա, բայց հայերը անկան նոցա ետևեն և բուն բերդի մեջ սկսվեցավ ձեռամբարձ սոսկալի կռիվը (ծեծքը) և կոտորածը: Բերդը մնաց հայերի ձեռքում, որովհետև նոքա թվով շատ էին տաճիկներից*: Ասում են, թե այս և այն կողմից շատ մարդիկ սպանվեցան և վիրավորվեցան, բայց նոցա թվույն վերա լսված համբավներն շատ տարաձայն են»*[1]:

*Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ նշված անցքերի ժամանակ Վան քաղաքի հայ բնակչությանը օգնության է գալիս մոտակա գյուղերի ոչ միայն հայ, այլև քուրդ գյուղացիությունը: «Փարիզ» պարբերականը հայտնում էր, որ երբ Վան քաղաքում կատարվող անցքերի լուրը հասնում է շրջակա գյուղերը, «մոտ 20000 հայ և քուրդ զինվում են և գնում քաղաքի հայերին օգնության»*[2]*: Այսպիսով, կարելի է ասել, որ նշված զինված ելույթը հայերի և քրդերի միացյալ պայքարն էր թուրքական բռնակալության դեմ:*

*Վանի իրադարձությունների մասին իր ժամանակ գրեցին, բացի «Համբավաբեր Ռուսիո» և «Փարիզ» պարբերականներից, նաև Թեոդո-*

1 «Համբաւաբեր Ռուսիոյ», 1862, N 21:
2 «Փարիզ», 1862, N 64: Ապստամբների թիվը, կարծում ենք, չափազանցված է:

*սիայում հրատարակվող «Ռադուգա» թերթը[1], ինչպես և ֆրանսիական ու անգլիական մի շարք թերթեր:*

*Այս մասին արժեքավոր տեղեկություններ է հայտնում ֆրանսիացի զինվորական Ֆրիդրիխ Միլլինգենը, որը 1853–1864 թթ. ծառայել է թուրքական բանակում որպես գումարտակի հրամանատար, կրելով Օսման Սեյֆի բեյ անունը: Նա, որ քաջ ծանոթ էր արևելյան փաշայությունների ու Արևմտյան Հայաստանի տնտեսական ու հասարակական կյանքին*, Մուշում տեղի ունեցած հայ բնակչության հուզումների մասին գրել է. «Մշո գավառի բազմամարդ հայ ազգաբնակչությունը 1863 թ. բացահայտ ապստամբություն բարձրացրեց իր հարստահարիչների դեմ: Այնուհետև, ժողովուրդը որոշում ընդունեց մի պատվիրակություն ուղարկել Կ. Պոլիս կայսերական կառավարությանը բողոքելու իրենց տանջանքների և տխուր վիճակի մասին և հնարավոր դեպքում հատուցում ստանալու կրած վնասների դիմաց:*

*Մեծ վեզիր Ֆուատ փաշան լսեց նրանց բողոքներն անտարբեր, առանց նկատի առնելու դրանց կարևորությունն ու լրջությունը: Հանդիպելով անհաջողության, պատվիրակությունը ստիպված եղավ մեծ վեզիրին հայտարարել, որ եթե իր բողոքները մնան անհետևանք, այն ժամանակ ազգաբնակչությունը հարկադրված կլինի թողնել իր երկիրը և գաղթել Ռուսաստան, քան թե տանել իրենց հարստահարիչների տիրապետությունն ու բռնակալությունը:*

*Մեծ վեզիրը զայրացած այդ հայտարարությունից, որն, ի դեպ, արտահայտություն էր միանգամայն արդարացի պահանջների, կատաղությամբ պատասխանեց, որ «կարող են գնալ, ուր որ ուզեն, և որ ռուսական սահմանները միանգամայն բաց են նրանց համար»:*

*Պատվիրակության վերադառնալուց հետո 300 ընտանիք որոշեցին թողնել իրենց հայրենիքը և գաղթել Վրաստան՝ այլևս անհանդուրժելի դարձած ստրկության չենթարկվելու համար»[2]:*

*Նույնանման ժողովրդական ելույթ տեղի ունեցավ 1865 թ. Զարսանջակ գավառում: Այդ մասին Միլինգենը պատմում է. «1865 թ. Զարսանջակի հայ ազգաբնակչությունը ենթարկվեց նոր հարստահարությունների և վայրագությունների: Տագնապը անմիջապես տարածվեց Քուրդիստանի ամբողջ հայ հասարակության մեջ: Նրանք ապստամբեցին և որոշեցին ուղարկել մի նոր պատվիրակություն բաղկացած 24 հոգուց՝ Հայաստանի 24 քաղաքների ներկայացուցիչներից: Այս պատվիրակությանը հանձնա-*

1 Радуга, Феодосия, 1862, 15 апреля.

2 *F. Millingen.* La Turquie sous le règne d'Abdul-Aziz..., p. 173-174.



*րարվեց մատուցել նորին կայսերական մեծություն սուլթանին մի աղերսագիր, որտեղ խնդրվում էր արդարություն, մի բան, որ մինիստրությունը մինչ այդ համառ կերպով մերժել էր նրանց: Աղերսագիրը, իրոք, նորին վսեմության մատուցվեց 1865 թ. մարտի 31-ին, որը, ըստ ընդունված սովորության, ուղարկեց իր փոխանորդին՝ Ֆուատ փաշային: Մինիստրը փոխանակ ուշադրություն դարձնելու ժողովրդի իրավացի բողոքներին... բանտարկել տվեց պատվիրակության 15 անդամներին, որոնք համարձակվել էին իրեն զայրույթ պատճառել, վեհապետին պահանջներ ներկայացնելով: Այդ անձինք բանտում պահվեցին ամբողջ ավագ շաբաթը և զատկի տոներին ազատ արձակվեցին այն պայմանով, որ անմիջապես վերադառնան իրենց երկիրը»[1]:*

*Միլլինգենի հաղորդած տեղեկություններն, անկասկած, հավաստի են և արժանի ամենայն ուշադրության:*

*Ժողովրդական ընդվզումներ տեղի ունեցան նաև Էրզրումի վիլայեթի Քղի գավառում: Կ. Պոլսում իր ժամանակ հրապարակված մի շարք հայկական նյութերից (հայ ազգային ժողովների ատենագրությունները, գավառական հարստահարությունների տեղեկագրերը և այլն), երևում է, որ 1868 թ. Քղի գավառի հայ գյուղացիները պայքար են մղել քուրդ բեկերի ու թուրքական իշխանությունների ճնշումների և կեղեքումների դեմ:*

*Այսպիսով, օսմանյան բռնապետության տակ գտնվող հայ ժողովրդական զանգվածները 1860-ական թթ. ապստամբություններ և ելույթներ ունեցան Զեյթունում, Վանում, Մուշում, Զարսանջակում և Քղի գավառում:*

## 2

*Հայ ազատագրական պայքարը, սակայն, չսահմանափակվեց վերը նշված ապստամբություններով ու ելույթներով: Ժողովրդական այդ ընդվզումների հետ մեկտեղ ազատագրական շարժման ուղղությամբ գործնական աշխատանք ծավալեցին հասարակական–քաղաքական մի շարք գործիչներ և գաղտնի խմբակներ:*

*Խոսելով հայ քաղաքական գործիչների մասին, մենք նկատի ունենք նախ և առաջ հայ մեծ հեղափոխական–դեմոկրատ Միքայել Նալբանդյանին: Ազգային-ազատագրական շարժման ուղղությամբ Նալբանդյանի ձեռնարկած գործունեությունը օրգանապես կապված է 1850-1860-ական թթ. ռուսական հեղափոխական-դեմոկրատական շարժման հետ: Նալբանդյանը, ինչպես հայտնի է, ընդգրկվեց այդ շարժման մեջ և դարձավ նրա ականավոր դեմքերից մեկը: Նա հետևեց Ն. Գ. Չեռնիշևսկու օրինակին, իր*

1 Նույն տեղում, էջ 174-175:

վրա կրեց նրա գաղափարական ազդեցությունը, սերտ կապեր հաստատեց Ա. Ի. Գերցենի, Ն. Պ. Օգարյովի, Ն. Ա. Սերնո-Սոլովևիչի, Մ. Ա. Բակունինի հետ, դարձավ նրանց մարտական զինակիցը, վճռական պայքար մղեց ոչ միայն ֆեոդալական-կալվածատիրական հոսանքի, այլև բուրժուական լիբերալների դեմ:

Նալբանդյանը որպես հեղափոխական-դեմոկրատ, որպես գյուղացիական-աշխատավորական մասսաների շահերի և իղձերի արտահայտիչ, պայքար էր հայտարարում և՛ ներքին, և՛ արտաքին ճնշողներին ու կեղեքողներին: Նրան հավասարապես հուզում էր ժողովրդի ինչպես սոցիալական, այնպես էլ ազգային ճնշումների ու հարստահարությունների հարցը: Նրա աչքից, հասկանալի է, որ չէր կարող վրիպել, մասնավորապես, թուրքական բռնապետության տակ հեծող արևմտահայ ժողովրդի վիճակը: Նալբանդյանը բազմիցս անդրադարձել է արևմտահայ ժողովրդի ծանր դրությանը: Իր հոդվածներում և աշխատություններում, այդ թվում և «Երկու տող», «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» երկերում, նա ոչ միայն քողազերծ էր անում հայ հարստահարիչներին և հոգևոր «հայրերին», այլև նշում էր այն ճնշումները, հալածանքներն ու հարստահարությունները, որ կիրառում էին օտարերկրյա զավթիչները:

Նալբանդյանին զբաղեցնում էր նաև հայ ժողովրդի ազգային ազատագրության հարցը: Հարություն Սվաճյանին Իտալիայից 1860 թ. դեկտեմբերին գրած իր մի նամակում, խոսելով իտալական ազգային-ազատագրական շարժման հաջողության մասին, նա գրում էր. «Ջեմ նախանձում Իտալիայի ազատության, դորա հակառակ առ ի սրտե ուրախ եմ, սակայն տեսանելով նորա ազատությունը և իմ ազգի տկարությունը, կրծում է սիրտս և այրում է հոգիս: ... Էտնան և Վեզուվին ծխվում են. Արարատի հին վուլկանի մեջ մի՞թե կրակ կմնա խպառ... մահաբեր մտածություն»[1]:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման խնդիրը համարելով օրակարգի հարց, Նալբանդյանը անհրաժեշտ էր գտնում կազմակերպել, ղեկավարել ու ուղղություն տալ այդ շարժմանը: Հայ մեծ հեղափոխական-դեմոկրատը ամենայն հստակությամբ գիտակցում էր, որ արևելահայ ժողովրդի ինչպես սոցիալ-դասակարգային, այնպես էլ ազգային-ազատագրական պայքարի բախտը սերտորեն կապված է ռուսական գյուղացիական, հեղափոխական-դեմոկրատական շարժման հաղթանակի հետ: Սուլթանական բռնապետության լծի տակ հեծող արևմտահայ ժողովրդի ազատագրական պայքարը ևս նա չէր պատկերացնում որպես ինքնամ-

1 Մ. Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածու. հ. 4, Ե., 1949, էջ 86:



փոփ, անջատական պայքար: Նալբանդյանը կարծում էր, որ արևմտահայերի ազատագրական պայքարի բախտը ևս կապված է համառուսական հեղափոխական-դեմոկրատական շարժման, ինչպես նաև իր ժամանակի եվրոպական ազգային-ազատագրական շարժման (հատկապես իտալական և սլավոնական ժողովուրդների) հաղթանակի հետ: Ռուսաստանի օգնությունը նա դիտում էր որպես հաղթանակի կարևորագույն նախապայման:

Արտասահմանում կատարած իր ճանապարհորդությունների ժամանակ (1859–1862 թթ.) Նալբանդյանը քաղաքական կապեր հաստատեց Լոնդոնի ռուս հեղափոխական վտարանդիների խմբակի հետ: Այս մասին հրապարակված արխիվային և գրական նյութերը (նամակներ, հուշեր և այլն)[1] կասկած չեն թողնում այն մասին, որ Նալբանդյանը հարել է Լոնդոնի վտարանդիներին և որպես նրանց համախոհ ու գործակից, պարտավորություն է ստանձնել Կովկասում ու Թուրքիայում ծավալել կազմակերպչական, հեղափոխական-քաղաքական աշխատանք:

Արխիվային փաստաթղթերը միաժամանակ վկայում են, որ Միքայել Նալբանդյանը 1860–1862 թթ. գործնական քայլեր է կատարել արևմտահայ դեմոկրատական տարրերից Կ. Պոլսում գաղտնի կոմիտե հիմնելու համար: Կոմիտեի նպատակը պետք է լիներ կազմակերպել ու գլխավորել արևմտահայ ազատագրական շարժումները թուրքական բռնակալության դեմ: Նալբանդյանը այդ հարցով զբաղվեց առանձնապես Կ. Պոլիս կատարած իր երկու այցելությունների ժամանակ: Ինչպես հայտնի է, նա Կ. Պոլսում եղել է առաջին անգամ 1860 թ. նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 21-ը, և երկրորդ անգամ՝ 1861 թ. նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 27-ը: Կարևոր է նշել, որ Նալբանդյանը Կ. Պոլսում ջերմ ընդունելություն գտավ տեղի արևմտահայ դեմոկրատական շրջաններում: Հ. Սվաճյանի «Մեղուն» նրա Կ. Պոլիս գալու կապակցությամբ գրում էր. «... հիրավի, բախտ մը կհամարինք մեզի համար պ. Նալբանդյանին ի Պոլիս գալուստն ու մեր ճանաչվորությունը իրեն հետ»[2]:

Նալբանդյանին հաջողվեց Կ. Պոլսում իր շուրջ համախմբել արևմտահայ դեմոկրատական մտավորականության մի շարք ներկայացուցիչների և նրանց ընդգրկել գործնական քաղաքական աշխատանքի մեջ: Ո՞վքեր էին Նալբանդյանի արևմտահայ համախոհները: Առայժմ դժվար է սպառիչ պատասխան տալ այդ հարցին: Սակայն կան բոլոր հիմքերը պնդելու, որ

1 "Былое", 1906, N 7, 9, 10, 11, 12; *А. И. Герцен*. Полн. собр. соч. и писем. Т. XV, XVIII. Петербург, 1920; *М. Лемке*. Очерки освободит. движ. шестидесятых годов. СПб., 1908; *Огарева-Тучкова*. Воспоминания. Ленинград, 1929; Գրական ժառանգություն, Ա գիրք, Ե., 1940 և այլն:

2 «Մեղու», 1860, N 117:

*նրանց թվում եղել են Կ. Պոլսի «Բարեգործական ընկերության» ղեկավարներից մեկը՝ Սերովբե Թագվորյանը և «Մեղու» հայտնի շաբաթաթերթի խմբագիր Հարություն Սվաճյանը: Կարելի է ենթադրել, որ Նալբանդյանի սկսած գործի մեջ է ընդգրկվել նաև բժիշկ Հովհ. Քյաթիպյանը, որին նա տվել է մի շարք հանձնարարություններ: Սակայն, ինչպես վկայում են մի շարք փաստաթղթեր, Նալբանդյանի քաղաքական կապերն ուժեղ են եղել առանձնապես Սվաճյանի և Թագվորյանի հետ*:*

*Ի՞նչ գործունեություն են ծավալել Նալբանդյանը և նրա համախոհները: Այս մասին որոշ գաղափար են տալիս մեզ հասած մի քանի կարևոր փաստաթղթեր, որոնք հայտաբերվել են ցարական ոստիկանների կողմից 1862 թ. Նալբանդյանի տանը (Նոր-Նախիջևան) կատարված խուզարկության ժամանակ:*

*Առաջին փաստաթուղթը Կ. Պոլսից Պետերբուրգ՝ Մ. Նալբանդյանի հասցեով ուղարկած Սերովբե Թագվորյանի կիսածածկագիր նամակն է, ուր հեղինակը խոսում է գաղտնի խմբակի կազմակերպման կապակցությամբ սկսված ձեռնարկումների, իտալական ազգային-ազատագրական շարժման ղեկավարներից մեկի՝ Մաձձինիին ուղարկվելիք նամակի, զեյթունցիների հետ ունեցած իրենց կապի և նրանց օգնություն ցույց տալու մասին և այլն: Անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել այդ կարևոր նամակն ամբողջությամբ: Ահա Սերովբե Թագվորյանի 1862 թ. մայիսի 14-ի թվակիր նամակը՝ ուղղված Միքայել Նալբանդյանին[1]:*

*«Մայիսի 9-ի ի Փարիզե գրեալ նամակդ ընկալա: Հին նշանագիրներու ցուցակը, որ ինձ խավրեր էիք, չեմ գիտեր որ նամակի մեջ պարունակյալ, զայն ընկալա. չեմ գիտեր որ նամակի մեջ կըսեմ, վասն զի ձեր նամակները այժմ չեն ի միջի: Թողություն ըրե, որ կարգավորյալ չեմ պատասխաներ նամակներուդ: Ես խելացնոր մարդ մը եղեր եմ. հոս մեր ազգին մեջ ամենափոքրիկ գործ մը կատարելն ալ մարդ կսպաննե: Դու կտրտնջաս մեր թուլութենեն և իրավամբ, բայց քանի որ մեր քաղաքեն ելեր ես, մոռցեր ես բոլորովին մեր ազգին բնավորությունը. ճշմարիտ է, թե երբ եզին մեկը կաղա, դժվար է լուծ ձգելը. նույնը ես ալ կըսեմ:*

*Պ-րն Մարտիրոսին** նամակը մինչև հիմա չի տալուս կնեղանաս, բայց կաղաչեմ միտ դիր ըսելիքներուս պաղ արյունով:*

*Քանի որ դու մեկներ ես մեր քաղաքեն, կաշխատիմ որ իրոք ստանանք ինչ որ պարոն Մարտիրոսին ըսեր ես թե ունիմք, որպեսզի խրկած նամակը իր մարդու կարենանք համարձակ տալ. բայց իզուր, ազգին մեջ եղած անվերջանալի խնդիրները և այն մարդիկներուն գործքերը, որոնց*

1 *Մ. Նալբանդյան*. Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 438-440:



*վրա քանի մի ամիս առաջ վստահություն ունեինք և այժմ չունիմք, այսպիսի կրճիմները կըսեմ, անհնարին կվհատեցնեն զմեզ: Հիմա խորհրդածե՛. չունենալով այս քաղաքիս մեջ սեղանավոր մը, ունիմք ըսելը թո՛ղ որ գիս քրիթիք կացության մեջ կդնե, այլև մեր ընկերները չեն ներեր, որ այսպիսի բան մը հաղորդեմ այն մարդուն, որ բոլոր ընկերության վարկումին կրնա վնասել. ես, ինձի համար, քու ըրած տնօրինությանդ բոլորովին ապահով եմ, և եթե լավ մտածելեն հետո որոշես, որ նամակը պիտի տալ իր տեղը, ես անկասկածաբար կուտամ. մտածե՛ և իմացուր ինձի:*

*Աշխատեցա, որ (Հոթֆելո) եղբարց լոժ ունենամք հոս և հրամանը ունինք, քանի մը ատենեն լոժը պիտի բանամք: Այս լոժին անունն է Հայկ կամ Օրիոն: Ասի եղբայրություն մըն է Անգլիո պաշտպանության տակ, և Դռնեն ալ հրաման առնված է, որ այս եղբայրությունը իշխանություն ունենա իրեն գաղտնի ժողովները ընելու: Այս ալ ֆրեր մասոններուն եղբայրության պես է, բայց կարծեմ ավելի պարզ. և նպատակն է անկար եղբայրները իրենց հիվանդությանը ատեն զիրենք հոգալ և ստակով նպաստել: Թե որ մեր լոժը բավական կարողություն չունենա, աղքատ և հիվանդ եղբարց օժանդակելու՝ այն ատեն Լոնդոնի մայր լոժը պարտական է մեզի նպաստելու դրամով: Տարին իբրև տուրք կես անգլիական լիրա պիտի տա եղբայր ընդունվողը և շաբաթը վեց բենս: Հույս ունիմ, որ այս եղբայրութենեն օգուտ քաղենք, վասնզի ասոր ծայրը հեռուն է:*

*Անցագիրներու համար ինչ որ ըրիր շատ լավ է: Էնժենյուորին համար ինչ որ ըսիք ի միտ առի: Բարեգործական ընկերության համար խոչընդոտներ կան, բայց չեն անհաղթելի, կարծեմ որ քանի մը օրեն ի կարգի կմտնա: Բավական գումար մը ժողվեցինք: Դրսի գործակալներու երթալիք թուղթերը դեռ ճամբա չելան: Ասիկա քեզ պիտի բարկացնե, ես ալ կբարկանամ, բայց հարկ է, որ այսպես ըլլա. այսուամենայնիվ այս օրերս զանոնք ալ պիտի ճամբա հանիմք:*

*Քյաթիպյանի հետ տեսություն կընենք. շատ պատվական մարդ է, բայց հանդարտ մարդ. պետք է որ քու trempe-եդ քանի մի մարդ ըլլար հոս, որ քիչ մը շուտով քալեինք, որուն հետ որ գործ մը ունիմ շատ մեծ դժվարություն կկրեմ: Տավրոսեն վարդապետ մը եկավ հոս, քանի օր է, որ կաշխատիմ, որ առուտուր մը ընեմ այս մարդուս հետ. հազիվ կրցա քսան, երեսուն հոգիով ժողով մը կազմել և այն ալ մեծ դժվարությամբ. քիչ մը ստակ ես, քիչ մ'ալ բարեկամին մեկը տվինք անոր, որ հարկավոր եղած դասագիրքները առնե և ճամբու ծախք ընե: Մնացածին համար խոսք տվինք, որ պիտի աշխատինք իրենց համար: Կըսեք թե*

*apathie ինձի մահ է – ես ալ ձեզի պես կմտածեմ: Սակայն կրնա՞ս ճար մը գտնալ. մեր ազգը քիչ կաշխատի, կամ այնպիսի բանի համար կաշխատի, զոր դու կարհամարհես և կամ ցույցս կգործե: Երբ ազգասիրության խնդիր է ամենը խոսքերնին բարձր ձայնով կընեն. ասոնցմե ոմանցը կեղծավորություն է, ոմանցը գաղջ սեր մը. բայց գործադրության մասին ամենևին չի կա մարդ գրեթե: Ասոնք զրուցելովս, պետք չէ, որ հուսահատիմք. ես միտք ունիմ միշտ աշխատելու, թեպետ այս աշխատանքը գիս շուտով կծերացնե: Թե որ վերոգրյալ ըսածներես արդյունք մը տեսնվի, քեզի կիմացնեմ»*:*

*Թագվորյանի այս նամակը, ինչպես տեսնում ենք, կիսածածկագիր է: Հեղինակը հասկանալի պատճառներով հաճախ դիմում է ակնարկների, պայմանական և մշուշապատ արտահայտությունների, այնպես որ նամակը կարիք ունի որոշ բացատրությունների և մեկնաբանման:*

*Ի՞նչ գլխավոր հարցեր են շոշափվում նամակում, ի՞նչ հիմնական եզրակացություններ կարելի է անել դրանից: Նախ և առաջ պարզ է մի բան, որ Նալբանդյանը Եվրոպայից (Փարիզ, Լոնդոն) սերտ կապ է պահպանել Թագվորյանի հետ, նրան ուղարկելով քաղաքական աշխատանքի հետ կապված մի շարք նամակներ ու ծածկագրեր: Նալբանդյանն ամենայն ուշադրությամբ և հետաքրքրությամբ հետևել է Կ. Պոլսի իր համախոհների ձեռնարկած քայլերին և անբավականություն է հայտնել նրանց թույլ և դանդաղ աշխատանքից: «Դու կտրտնջաս մեր թուլությենեն և իրավամբ»,– գրում է Թագվորյանը և ապա աշխատում է արդարացուցիչ պատճառներ բերել:*

*Թագվորյանն այնուհետև, գրում է Մաձձինիին ուղարկվելիք մի նամակի մասին: Այս հարցի կապակցությամբ եղած տողերը վկայում են, որ Նալբանդյանը նամակ է ուղարկել Թագվորյանին, որպեսզի նա իր հերթին այն ուղարկի Մաձձինիին: Այդ հանձնարարությունը չի կատարվել, որի հետևանքով Նալբանդյանն իր անբավականությունն է հայտնել: Թագվորյանը բացատրում է պատճառը: Այդ բացատրությունից երևում է, որ Մաձձինիին ուղարկվելիք նամակում ասված է եղել, թե Կ. Պոլսում հիմնվել է գաղտնի կոմիտե: Սակայն Թագվորյանը, նկատի ունենալով, որ ծրագրված գաղտնի կոմիտեն դեռևս չի ստեղծված, հարմար է համարել նամակի առաքումը հետաձգել մինչև հիշված կոմիտեի հիմնումը: Թագվորյանը գրում է. «չունենալով այս քաղքիս մեջ սեղանավոր մը (Նալբանդյանի մոտ գտնված ծածկագիր բառարանի համաձայն, «սեղանավոր» նշանակում է «գաղտնի կոմիտե»* – Մ. Ն.*), ունիմք ըսելը թո՛ղ որ գիս քրիթիք կացության մեջ կդնե, այլև մեր ընկերները չեն ներեր, որ այսպիսի բան մը հաղորդեմ այն մարդուն, որ բոլոր ընկերության*



*վարկումին կրնա վնասել»: Նամակի այս տողերն, այսպիսով, վկայում են ոչ միայն այն մասին, որ Նալբանդյանն աշխատել է, որպեսզի արագ կերպով, առանց ձգձգումների Կ. Պոլսում ստեղծվի գաղտնի կոմիտե, այլև այն, որ Նալբանդյանն ու նրա համախոհները կապ են ունեցել իտալական ազգային-ազատագրական շարժման և նրա ղեկավարների հետ:*

*Նամակում խոսվում է ինչ որ մասոնական «լոժ» հիմնելու մասին: Այս հարցի կապակցությամբ եղած տողերը խիստ պայմանական են և չպետք է հասկանալ ուղղակի իմաստով: Պարզ երևում է, որ Թագվորյանը, ելնելով իր հաղորդած տեղեկությունների կարևորությունից, աշխատել է որքան հնարավոր է արտահայտվել անուղղակի և մշուշապատ խոսքերով: Պայմանական են անկասկած այն տողերը, ուր ասվում է, թե իբր լոժը (օթյակը) պիտի գտնվի Անգլիայի պաշտպանության տակ, որ իբր թուրքական կառավարությունը թույլ է տվել, որ այդ «եղբայրությունը» ունենա իր գաղտնի ժողովները, թե այդ լոժը նպատակ ունի իր հիվանդ անդամներին նյութական օժանդակություն տալ և այլն: Այդ տողերը պարզ է, որ չպետք է ուղղակի մտքով հասկանալ, դրանք չեն բխում նամակի ընդհանուր ոգուց և գրված են միայն քողարկելու նպատակով: Թագվորյանը, ըստ երևույթին, կարծել է, թե դրանք կապակողմնորոշեն ոստիկանությանը՝ նամակը նրա ձեռքը ընկնելու դեպքում: Սակայն, միաժամանակ, կան մի շարք այլ տողեր, որոնց մեջ, թեև մշուշապատ ձևով, տրվում է գործի իսկական էությունը, մասնավորապես այն հատվածում, որտեղ խոսվում է «Հոթֆելո եղբարց» օթյակի մասին:*

*Նշված տողերից երևում է, որ Թագվորյանը Նալբանդյանին հայտնում է, թե շուտով կհիմնվի գաղտնի խմբակ, որը պետք է օժանդակություն և ղեկավարություն ստանա Լոնդոնի ռուս տարագիրների խմբի կողմից, և որ ստեղծվելիք գաղտնի խմբակի հետ նամակի հեղինակը (Թագվորյանը) մեծ հույսեր է կապում: Նալբանդյանի մոտ գտնված ծածկագիր բառարանի համաձայն, «հիվանդը» Հայաստանն է. ուրեմն նամակում եղած խոսքերը հիվանդ անդամներին օգնելու մասին՝ նշանակում է Հայաստանին «օգնել», այսինքն՝ այնտեղ ազատագրական շարժման ուղղությամբ աշխատանք կատարել: Նամակի շարունակության մեջ խոսվում է անցագրերի վերաբերյալ, «դրսի գործակալների», նրանց համար թղթեր պատրաստելու մասին: Այստեղից պիտի եզրակացնել, որ Նալբանդյանը և նրա Կ. Պոլսի համախոհները քաղաքական լայն կապեր են ունեցել և գործնական լայն աշխատանք են ձեռնարկել:*

*Նամակում միաժամանակ խոսվում է «Բարեգործական ընկերության» և նրա հետ կապված ինչ-որ խոչընդոտների ու դժվարությունների մասին: Ելնելով այս և այլ կարգի մի շարք ուրիշ տվյալներից, պետք*

*է ենթադրել, որ Թագվորյանը Նալբանդյանից հանձնարարություն է ունեցել քաղաքական աշխատանքի մեջ ներգրավել Կ. Պոլսում այդ ժամանակ գոյություն ունեցող «Բարեգործական ընկերության» անդամներին, և չնայած եղած դժվարություններին, Թագվորյանին, այնուամենայնիվ, հաջողվել է որոշ գործ կատարել: «Բարեգործական ընկերության համար,– գրում է Թագվորյանը,– խոչընդոտներ կան, բայց չեն անհաղթելի, կարծեմ, որ քանի մը օրեն ի կարգի կմտնա: Բավական գումար մը ժողվեցինք»:*

*Թագվորյանի հաղորդած այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Քյաթիպյանի հետ ունեցած իր տեսակցություններին, վկայում են, որ վերջինս եղել է Մ. Նալբանդյանի արևմտահայ համախոհներից մեկը և մյուսների հետ միասին ընդգրկվել է Նալբանդյանի գլխավորությամբ ծավալված քաղաքական աշխատանքի մեջ: Այս տեսակետից բնորոշ է նաև այն, որ Նալբանդյանը Լոնդոնից նամակագրություն է ունեցել Քյաթիպյանի հետ*[1]*:*

*Նամակում առանձնապես հետաքրքիր են հետևյալ տողերը. «Տավրոսեն վարդապետ մը եկավ հոս, քանի օր է, որ կաշխատիմ, որ առուտուր մը ընեմ այս մարդուս հետ. հազիվ կրցա քսան, երեսուն հոգիով ժողով մը կազմել և այն ալ մեծ դժվարությամբ. քիչ մը ստակ ես, քիչ մ'ալ բարեկամին մեկը տվինք անոր, որ հարկավոր եղած դասագիրքները առնե և ճամբու ծախք ընե: Մնացածին համար խոսք տվինք, որ պիտի աշխատինք իրենց համար»:*

*Նշված տողերն, իհարկե, ծածկագիր են: «Կաշխատիմ որ առուտուր մը ընեմ» ասելով Թագվորյանը, ըստ երևույթին, նկատի է ունեցել ազատագրական շարժում կազմակերպելու նպատակով զեյթունցիների հետ վարած իր բանակցությունները, իսկ հարկավոր եղած «դասագիրքները առնե» ասելով՝ զենք, զինամթերք գնելը: Նամակից երևում է, որ Թագվորյանի հաղորդած տեղեկությունները՝ Զեյթունի հետ կապ հաստատելու մասին, Նալբանդյանին հետաքրքրող հարցերից մեկն է եղել: Այսպիսով, Թագվորյանի ծածկագիր այդ նամակը հիմք է տալիս կարծելու, որ Նալբանդյանը և նրա համախոհները դեռևս 1862 թ. գարնանը կապեր են ունեցել Զեյթունի հետ և նախապատրաստական աշխատանք են կատարել այնտեղ ազատագրական շարժում կազմակերպելու համար:*

*Արևմտահայերի ազգային շարժման և հատկապես Զեյթունի 1862 թ. ապստամբության հետ Նալբանդյանի ունեցած կապի մասին որոշ գաղափար է տալիս նաև նրա մոտ գտնված ծածկագիր բառարանը:*

1 *Մ. Նալբանդյան.* Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, էջ 267:



*Ահա մի քանի նմուշ այդ բառարանից.*

| | |
|---|---|
| «Վաճառականության տուն մը բանալ | Զորք կենտրոնացնել և շատցնել տեղի մը մեջ |
| Տրապիզոն քոմիսիոներ մը ունենալ | Պոնտոսի ծովեզերքը տեղ ունենալ |
| Սեղանավոր մը ունենալ տեղի մը մեջ | Քոմիթե ունենալ տեղի մը մեջ: |
| Բամպակի մշակություն | Կիլիկիո մեջ գաղթականություն հաստատել |
| Քրիդիթ ունենալ | Լրագիր մը հաստատել տեղի մը մեջ |
| Սամսոնի բարեկամ | Ռուս |
| Լոնդոնի բարեկամ | Հերցեն |
| Ճենովայի բարեկամ | Իթալիա |
| Լիվոռնոյի բարեկամ | Կարիպալտի |
| Պոլսո բարեկամ | Տաճկաստան |
| Հիվանդ | Հայաստան |
| Բամբակ | Կիլիկիա |
| Փարիզի բարեկամ | Չարթորիսկի |
| Պարոն Մարտիրոս | Մածձինի |
| Պարոն Ալմինքար | Պաքունին |
| Ժամացույց | Սվինավոր հրացան |
| Քրոնոմեթր | Թնդանոթ |
| Լեղակի արտ | Ալեքսանդրեթ |
| Ալյուր | Վառոդ |
| Ցորյան | Ռումբ |
| Ապրանքի գինը բարձրացնել | Դրամ հավաքել |
| Րեքոլթեն առաջ ստակ տալ երկրագործաց կամ վաճառականաց | Ազգայնությունը զարթեցնել տեղի մը մեջ |
| Պաղ բռնել կամ ապրանք մը գնելու համար ինքը զինքը հոժարամիտ չցցնել | Ապստամբություն»[1]: |

*Չի կարելի ասել, թե ծածկագիր այս բառարանի հեղինակը Միքայել Նալբանդյանն է: Բայց այն փաստը, որ այդ բառարանը եղել է նրա մոտ, ցույց է տալիս, որ Նալբանդյանն իսկապես զբաղվել է Արևմտյան*

1 Նույն տեղում, էջ 283-284:

*Հայաստանում սուլթանական Թուրքիայի դեմ ապստամբական շարժումներ կազմակերպելու հարցերով:*

*Նալբանդյանի բանտարկության ժամանակ, բացի Թագվորյանի նամակից և վերը նշված բառարանից, ցարական ոստիկանությունը նրա թղթերում հայտնաբերել էր նաև հայերեն այբուբենի մի ծածկագիր, որի միջոցով, ըստ երևույթին, Նալբանդյանը նպատակ ուներ գրագրություն ունենալ Ս. Թագվորյանի և արտասահմանի իր մյուս հայ համախոհների հետ*[1]*:*

*Հետաքրքիր է, որ Նալբանդյանի թղթերում հայտնաբերվել է նաև հայերեն լեզվով կազմված մի տեղեկանք, ուր նկարագրվել են այն նյութերը, որոնցից այդ ժամանակ Ռուսաստանում, Անգլիայում և Ֆրանսիայում վառոդ էր պատրաստվում: Այն հանգամանքը, որ Նալբանդյանը զբաղվել է վառոդի պատրաստման հարցերով, նույնպես բնորոշ է:*

*Նալբանդյանը, ըստ երևույթին, մեծ նշանակություն է տվել իր մոտ հայտնաբերած այդ փաստաթղթերին, գտնելով, որ դրանք կարող են պարզ վկայություն տալ իր քաղաքական-հեղափոխական գործունեության մասին: Այդ է պատճառը, որ նա դատաքննության ժամանակ դիմել է զանազան հնարամտությունների՝ համոզելու ցարական քննիչներին, թե այդ թղթերը իր մոտ են ընկել պատահաբար, որ դրանք գրված են ինչ-որ հայ առևտրականների կողմից և կապ չունեն քաղաքական, հեղափոխական շարժման հետ:*

*Ճիշտ է, հայ ազատագրական շարժման մեջ Նալբանդյանի ունեցած մասնակցության մասին մեզ հասած փաստաթղթերը շատ չեն, բայց եղածներն էլ վկայում են, որ մեծ հեղափոխական-դեմոկրատը, ակտիվ մասնակցելով իր ժամանակի համառուսական հեղափոխական շարժմանը, միաժամանակ գործուն մասնակցություն է ունեցել և ղեկավար դեր է խաղացել թուրքական բռնապետության դեմ ուղղված հայ ժողովրդի ազատագրական շարժման մեջ:*

*Մենք արդեն ասացինք, որ Նալբանդյանի արևմտահայ համախոհներից մեզ հայտնի են Հ. Սվաճյանը, Ս. Թագվորյանը և Հ. Քյաթիպյանը: Հիմք կա ենթադրելու, որ Նալբանդյանի համախոհներն են եղել 1860 թ. Կ. Պոլսում հիմնված «Բարեգործական ընկերության» նաև մի շարք այլ անդամներ: Ընկերության անդամների մի մասը համակրում էր ազգային-ազատագրական շարժումները և անգամ գաղտնի աշխատանք էր կատարում այդ ուղղությամբ:*

1 Ծածկագիր այդ այբուբենի ֆաքսիմիլեն տե՛ս *Մ. Նալբանդյան.* Անտիպ երկեր. Ե.- Մ., 1935, էջ 136:



*Կ. Պոլսի «Բարեգործական ընկերության» անդամ էր նաև արևմտահայ նշանավոր բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանը: Նա 1860-ական թթ. սկզբներին որոշ աշխատանք ծավալեց ազգային-ազատագրական շարժման ուղղությամբ: Պեշիկթաշլյանը ոչ միայն մարտական բանաստեղծություններ նվիրեց զեյթունցիների 1862 թ. ապստամբությանը, այլև գործնական քայլեր կատարեց ապստամբ զեյթունցիներին օգնելու, նրանց հերոսամարտը կազմակերպելու համար:*

*Ի՞նչ տվյալներ կան այս մասին: Նախ և առաջ պետք է հիշել Սրբուհի Երիցյանի արժեքավոր հուշերը Պեշիկթաշլյանի մասին: «Փորձում» տպած իր հուշերում Երիցյանը պատմում է, որ Պեշիկթաշլյանը 1862 թ. գաղտնի տեսակցություն էր ունենում զեյթունցիների ներկայացուցիչների հետ, պատասխան նամակներ էր ուղարկում Զեյթուն և անում էր ամեն ինչ՝ զեյթունցիների ապստամբության հաջողությունն ապահովելու համար*[1]*:*

*Այնուհետև հետաքրքիր է Ղ. Ալիշանի՝ Պեշիկթաշլյանին ուղղած մի բանաստեղծությունը, որը պատասխան էր վերջինիս նամակին: Թե ինչ է գրել Պեշիկթաշլյանն իր այդ նամակում, հայտնի չէ: Բայց այդ նամակին Ալիշանը պատասխանել է «Պատասխան առ քերթող» վերնագրով մի բանաստեղծությամբ, ուր կշտամբում էր Պեշիկթաշլյանին այն բանի համար, որ նա ձգտում է թողնել խաղաղ, հանգիստ կյանքը և նետվել ամպրոպների, մրրկոտ պայքարի մեջ: Գրաբարով գրած իր այդ բանաստեղծության մեջ Ալիշանը, ակնարկելով բանաստեղծի քաղաքական պայքարը, ասում էր.*

«Թև ի թիկունըս, շրջեալ՝ երթ, դարձիր յայերս հեզանազ.
Անդ սըլացիր, անդէն թըռիր ու ի մրըրկաց հեռացի՛ր»[2]:

*Պետք է ենթադրել, որ Պեշիկթաշլյանն Ալիշանին գրած նամակում հայտնել է իր քաղաքական ծրագրի մասին, իսկ Ալիշանը նրան խորհուրդ է տվել առժամանակ հեռու մնալ քաղաքական-ապստամբական շարժումներից:*

*Բնորոշ է նաև հետևյալ փաստը: Ծերենցը պատմում է, որ արևմտահայ կաթոլիկների պարագլուխ, Վատիկանի գործակալ Անտոն Հասունյանն ամբաստանագրեր էր գրում այն մասին, որ Կ. Պոլսի «Բարեգործական ընկերության» անդամները ցանկանում են վերականգնել հայկական անկախ պետությունը: Հիշյալ ընկերության ամենագործուն անդամներից մեկը Պեշիկթաշլյանն էր: Ավելին. Պեշիկթաշլյանը Հասունյանի գլխավոր*

1 «Փորձ», 1877, N 4, էջ 189:

2 *Ղ. Ալիշան.* Մաղթունի, Նուագք Բ. Վենետիկ, 1885, էջ 47-48:

թշնամիներից մեկն էր: Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ Հասունյանի ամբաստանագիրը վերաբերում էր առաջին հերթին հենց Մ. Պեշիկթաշլյանին:

«Բարեգործական ընկերության» անդամներից է եղել նաև Հովսեփ Շիշմանյանը (Ծերենցը): Որոշ հեղինակներ հենվելով այն բանի վրա, որ Շիշմանյանը 1862 թ. գտնվում էր Կիլիկիայում, եզրակացնում են, թե նա կապեր է ունեցել ապստամբ զեյթունցիների հետ[1]: Դա հավանական ենթադրություն է:

Այսպես, ուրեմն. 1860-ական թթ. սկզբներին հայ ազատագրական շարժման գործնական հարցերով զբաղվել են Միքայել Նալբանդյանը, նրա համախոհներ Հարություն Սվաճյանը, Սերովբե Թագվորյանը, Կարապետ Փանոսյանը, Հովհաննես Քյաթիպյանը, ինչպես նաև Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Հովսեփ Շիշմանյանը և ուրիշներ: Ավելին. հիմք կա պնդելու, որ այդ տարիներին Կ. Պոլսում գործել է գաղտնի մի խմբակ, որի մեջ ընդգրկվել են վերը հիշված գործիչներից շատերը: Վերծանելով Մ. Նալբանդյանին ուղղված՝ Ս. Թագվորյանի 1862 թ. մայիսի 14-ի՝ վերոհիշյալ նամակը, Ա. Գ. Հովհաննիսյանը եկել է այն եզրակացության, որ «Թագվորյանի և Քյաթիպյանի միջոցով Նալբանդյանը մերձավոր կապերի մեջ էր պոլսահայ ինչ-որ կազմակերպության («ընկերության») հետ», որը կոչված էր «ազատասիրական», քաղաքական աշխատանք տանելու Թուրքիայում: «Հետաքրքական է և բնորոշ այդ տեսակետից Տավրոսի (իմա՝ Զեյթունի) հիշատակումը նամակում, այլև գրության ակնարկները նամակի գրությունից երկու-երեք ամիս անց լինելիք ապստամբության նախապատրաստությունների մասին: Կազմակերպության շուրջ խմբված գործուն «բարեկամների» միջոցով Նալբանդյանը ջանք էր թափում ազդել ծրագրվող ապստամբության ընթացքի վրա»[2]:

1850–1860-ական թթ. հայ ազատագրական շարժման նախապատրաստման ու ծավալման ուղղությամբ զգալի դեր խաղաց նաև Մկրտիչ Խրիմյանը: Նա, ինչպես արդեն նկատեցինք, դեռևս 1851 թ. Զեյթունում ստեղծել էր «Սեր» հայրենասիրական ընկերությունը, բայց մի քանի տարի անց իր գործունեության գլխավոր կենտրոնն ընտրեց հայրենի Վասպուրականը: 1857 թ. Կ. Պոլսից փոխադրվելով Վարագա վանք, Խրիմյանը այստեղ շարունակեց հրատարակել «Արծվի Վասպուրական» իր նշանավոր պարբերականը, որը առաջինն էր Արևմտյան Հայաստանում: Թերթը համարձակորեն բացահայտում էր Արևմտյան Հայաստանի

1 Ա. Մակարյան. Մ. Նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատիան. Ե., 1946, էջ 144:
2 Ա. Հովհաննիսյան. Նալբանդյանը և նրա ժամանակը. գիրք առաջին, էջ 474:



գավառներում կատարվող անլուր ճնշումներն ու հարստահարությունները, ավերն ու կողոպուտը, միաժամանակ քարոզում էր չվհատվել ու չընկճվել, այլ ոտքի ելնել, ու հայ նախորդ հերոսների օրինակով պայքարել բարբարոսական բռնակալության դեմ: «Արթնցեք, Հայկա որդիք, արթնցեք», «դեպի երկիր» կոչ էր անում Խրիմյանը: Ինչպես «Արծվի Վասպուրականի» հրատարակիչը, այնպես էլ նրա շուրջ համախմբված երիտասարդ հայրենասերները լավատեսորեն էին տրամադրված ապագայի նկատմամբ: Խրիմյանի ազատասիրական ու մարդասիրական գաղափարները լայն արձագանք գտան Վասպուրականի ու Արևմտյան Հայաստանի մյուս գավառների ժողովրդական զանգվածների մեջ: Սկսնակ Րաֆֆին, որ որոշ ժամանակ աշխատակցեց «Արծվի Վասպուրականին», տարիներ անց բարձր էր գնահատում Խրիմյանի այդ շրջանի գործունեությունը:

Արևմտահայ իրականության մեջ 1860-ական թթ. ազգային-քաղաքական հարցերով, թեև կարճ ժամանակով, զբաղվել է նաև Հ. Նորատունկյանը: Հռոմից Մ. Խրիմյանին ուղարկած իր 1863 թ. հոկտեմբերի 21-ի նամակում գրում էր, թե անհրաժեշտ է համախմբել ուժերը, կազմակերպել հանձնաժողով և գործնական քայլեր անել Արևմտյան Հայաստանն ազատագրելու, նրա քաղաքական անկախությունը վերականգնելու համար: «Ալ գիտնալու եմք,– գրում էր նա,– որ եթե այսպես ամեն մեկերնիս ձեռք ձեռքի վրա դրած՝ միմիայն առանձին-առանձին խորհելու ըլլամք այս տեսակ խնդրոց վրա (ուսկից կախում ունին մեկ կերպով Հայրենյաց կառումն ու ամբողջ կործանումն) և առանց մեր գաղափարներն միաբերան հայտնելով, խստությամբ զանոնք լուծելով և ըստ հարկի գործադրելով, Հայաստանի հարազատ որդիքներն չեմք կարող սեպվիլ»[1]: Այնուհետև, Նորատունկյանը խոսում էր այն մասին, որ հարկավոր է թողնել դանդաղաշարժությունը, անհրաժեշտ է հայրենասիրական գաղափարների պրոպագանդ անել, պատրաստվել քաղաքականապես և ռազմապես, որպեսզի հաջողությամբ լուծվի Հայաստանի ազատագրության խնդիրը:

«Կարելի է հարցնես,– գրում էր նա,– թե ո՞վ կարող է այդպիսի ծանր բեռի մը տակ մտնելով, հաջողիլ զասոնք գործադրելու:

Այն ժամանակ պիտի պատասխանեմ. ՄԵՆՔ. և միմիայն հետևյալ հոդվածներն անմիջապես հավատով ընդունելով: Ա. Մասնաժողով մը երեք կամ հինգ անդամներե բաղկացյալ: Բ. Պաշտոնն. Ազգիս արտաքին գործերն վարել: Գ. Նպատակն. Հայաստանի շղթաներն խորտակել»[2]:

1 Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԳ, էջ 56-57 (ընդգծումները բնագրին են – Մ. Ն.)
2 Նույն տեղում, էջ 57:

*Նամակում խոսվում էր նաև Մ. Պեշիկթաշլյանի գործունեության, Զեյթունի ապստամբության և այլ հարցերի մասին: Նորատունկյանը գրում էր, թե որոշել է իրեն նվիրել Արևմտյան Հայաստանի ազատագրության գործին:*

*Հայ ազգային-ազատագրական շարժումները, ինչպես արդեն նկատել ենք, դրսևորվել են նաև մի շարք խմբակների ու ընկերությունների գործունեության մեջ: Այդ խմբակներից մեկը, որ կրում էր «Բարենպատակ ընկերություն» անունը, հիմնվեց 1868 թ., Ալեքսանդրապոլում*: Ընկերության կազմակերպիչն ու ղեկավարն էր Ալեքսանդրապոլի մասնավոր դպրոցի ուսուցիչներից մեկը՝ երիտասարդ Արսեն Կրիտյանը: Խմբակը նպատակ ուներ տարածել հայրենասիրական գաղափարներ և ապա աշխատել ազատելու Հայաստանը օտարների տիրապետությունից: Ազատագրական պայքարի հիմնական սլաքը պետք է ուղղվեր թուրքական բռնապետության դեմ:*

*Ընկերության մեջ ընդգրկված էին ուսուցիչներ, ուսանողներ, արհեստավորներ և առևտրականներ: Նրանց ընդհանուր թիվը հասնում էր 43-ի: Խմբակի մասին Երևանի նահանգական ժանդարմական վարչության պետ մայոր Զոլոտովսկին «Նորին կայսերական մեծության սեփական դիվանի 3-րդ բաժանմունքին» զեկուցում էր, թե «ընկերությունն ունեցել է իր հատուկ ցուցանակը, որ կախված է եղել այն սենյակի դռան վերևը, որտեղ հավաքվելիս են եղել խմբակի անդամները: Կազմակերպությունն ունեցել է «Փառքի թագ» կոչված հատուկ մի գիրք, որի մեջ գրված են եղել խմբակի անդամների անունները՝ նրանց կողմից նվիրաբերված դրամական գումարների նշանակումներով»[1]: Ընկերությունն ուներ կանոնադրություն, որը սահմանում էր խմբակի անդամների, ինչպես նաև կարգադրիչ մարմինների ընտրության, ապա ժողովներ հրավիրելու, նրանցում հարցեր քննարկելու կարգը և այլն**:*

*Կանոնադրության մեջ ասված էր նաև, որ ընկերության բարի նպատակն է օգնել հայ ազգին, խմբակի անդամների թիվը չպետք է 50-ից անցնի, անդամները պետք է լինեն գիտակից երիտասարդներ, որոնք պետք է աշխատեն լավ օրինակ դառնալ մյուսների համար, անդամավճարը շաբաթական կազմում է 3 կոպեկ, յուրաքանչյուր անդամ պարտավոր է սրբությամբ և քաջությամբ կատարել այն պարտավորությունները, որոնք կազմակերպությունը կդնի նրա վրա, իսկ նրանք, ովքեր չեն կատարի այդ պարտավորությունները, առաջին անգամ կենթարկվեն հանդիմանության, երկրորդ անգամ՝ տուգանքի, իսկ երրորդ անգամ՝ հեռաց-*

1 ЦИАМ, 3-е отделение, 3-я экспедиция, д. 120, л. 22.



*ման: Կանոնադրության մյուս հոդվածներում խոսվում էր հավաքույթներ կազմակերպելու, դրամ հավաքելու, գրքեր կարդալու կարգի մասին:*

*Արխիվային նյութերից պարզվում է, որ «Բարենպատակ ընկերությունը» ծավալել է հայրենասիրական պրոպագանդ, ժողովներ, հավաքույթներ է գումարել, կոչեր է տարածել, դրամ է հավաքել՝ զենք գնելու համար և այլն: Խմբակը, ըստ էության, գաղտնի է եղել, բայց փորձել է գործել լեգալ՝ մշակութային-կրթական, ինքնազարգացման նպատակներ հետապնդող ընկերության դրոշի տակ: Բնորոշ է, օրինակ, այն հանգամանքը, որ խմբակի մասին մի շարք հոդվածներ տպագրվեցին ժամանակի հայ պարբերականներում՝ «Մեղու Հայաստանի» թերթում և «Արարատ»[1] ամսագրում: Հոդվածների հեղինակները, որ, ի դեպ, խմբակի անդամներն էին, աշխատում էին գործն այնպես պատկերել, թե իբր խմբակը հետապնդում է միայն մշակութային-կրթական և բարեգործական նպատակներ: Այնուհանդերձ, անկասկած է, որ ընկերության հիմնական աշխատանքը կատարվում էր գաղտնի:*

*Ի՞նչ նպատակ ուներ «Բարենպատակ ընկերությունը»: Արխիվային նյութերից երևում է, որ խմբակը գլխավորապես ձգտում էր այն բանին, որ Արևմտյան Հայաստանում ապստամբական շարժումներ կազմակերպի թուրքական տիրապետության դեմ: Իր կոչերից մեկում Կրիտյանն ասում էր. «Մի հապաղեք, հայեր, շարժվելու դեպի Հայաստանի կենտրոնը»: «Հայաստանի կենտրոն» ասելով հասկացվում էր Արևմտյան Հայաստանի գավառներից մեկը՝ Վասպուրականը: Որ «Բարենպատակ ընկերությունն» իր գործունեության կենտրոնը համարում էր Արևմտյան Հայաստանը, երևում է նաև ընկերության ամենագործունյա անդամներից մեկի՝ Պետրոս Հայկազունու գործունեությունից*: Նա Արևմտյան Հայաստան է անցել ուսումնասիրելու այն միջավայրը, որտեղ ծրագրվում էր գործել: Արևմտյան Հայաստանում գործելու հենց այդ նպատակի համար էր, որ խմբակի անդամներն աշխատել են հանգանակություն կատարել, զենք ու դրամ հավաքել:*

*Արդեն ասացինք, որ ընկերության հիմնադիրը և ղեկավարն էր Ալեքսանդրապոլի մասնավոր դպրոցի ուսուցիչ Արսեն Կրիտյանը: Կրիտյանը տեղացի էր, երիտասարդ, ընդամենը 24 տարեկան, սովորել էր Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցում, ուներ միջնակարգ կրթություն: 1860-ական թթ. վերջերին և 1870-ական թթ. սկզբներին նա, որպես ուսուցիչ, աշխատել է Ալեքսանդրապոլում գործող մասնավոր դպրոցում և որոշ*

1 «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1869, N 23, նաև 1871, N 36: «Արարատ», 1868, N 9:

ժամանակ նաև գավառական դպրոցում: Կրիտյանը զբաղվել է նաև գրավաճառությամբ ու գրական աշխատանքով: Ժամանակի պարբերական մամուլում նա տպել է հայրենասիրական գաղափարներով համակված մի շարք հոդվածներ ու բանաստեղծություններ: Ընկերության անդամներից պետք է հիշել Մելիք Զմշկյանցին, Ալեքսանդր Աֆրիկյանին, Գևորգ Ղասաբյանին, Օհանջան Գորոյանին, Կարապետ Օհանջանյանին, Սենեքերիմ Լալայանին և Հարություն Օհանջանյանին: Սրանք Ալեքսանդրապոլի դպրոցների ուսուցիչներ և վերջին դասարանի աշակերտներ էին: Նրանք ակտիվ մասնակցություն են ունեցել ընկերության աշխատանքներին[1]:

«Բարենպատակ ընկերությունը» գործել է մի քանի տարի: Առաջին տարիներին նա ծավալել է համեմատաբար աշխույժ գործունեություն: 1871 թ. սկսած, ինչպես ցույց է տալիս ժանդարմական գործը, խմբակի աշխատանքները թուլանում են: Նրա անդամների մի մասը հեռանում է Ալեքսանդրապոլից, իսկ մնացած մասն իր աշխատանքը սահմանափակում է գրեթե միայն հավաքույթներով և բանավոր պրոպագանդով:

Ընկերությունը հայտնաբերվեց 1875 թ.: Ապրիլ ամսին ժանդարմական վարչության պետ մայոր Զոլոտովսկին հայտնաբերում է խմբակը, կատարում խուզարկություններ և ձերբակալություններ*: Ձերբակալվում են ընկերության գրեթե բոլոր անդամները: Գործը քննվում է մեկ տարուց ավելի և հասնում մինչև ցար Ալեքսանդր II-ը: Վերջինս 1876 թ. մայիս ամսին արձակում է իր վճիռը, որ համեմատաբար մեղմ էր: Արսեն Կրիտյանը ենթարկվում է բանտարկության (նա բանտում մնում է մեկ տարի 6 ամիս), ապա հանձնվում է ոստիկանության հսկողությանը, իսկ մյուսներին արվում է խիստ հանդիմանություն և զգուշացում, «որպեսզի օրենքի առաջ պատասխանատու լինելու սպառնալիքով այսուհետև թույլ չտան իրենց, առանց կառավարության գիտության, որևէ ընկերություն հիմնելու և ոչ էլ պատկանելու այդպիսիններին»[2]:

Ինչո՞վ բացատրել այդ «մեղմ» վճիռը: Դրա գլխավոր պատճառը, կարծում ենք, այն է, որ խմբակի հիմնական նպատակն է եղել ազգային-ազատագրական պայքար ծավալել թուրքական բռնակալության դեմ: Պատճառներից մյուսը պետք է համարել այն, որ 1876 թ., երբ արդեն լուրջ հիմքեր կային խոսելու ռուս-թուրքական պատերազմ սկսվելու մասին, ցարական կառավարությունը, բնականաբար, չէր ցանկանում նոր դժգոհություններ առաջ բերել հայկական քաղաքական շրջաններում:

---

1 ЦИАМ, 3-е отд., 3-я экспед., д. 120, л. 56.

2 Նույն տեղում, թ. 72:



1850–1860-ական թթ. Հայաստանում, ինչպես նաև Հայաստանից դուրս (Պետերբուրգում, Թիֆլիսում, Կ. Պոլսում և այլուր) կազմվեցին գրական, մշակութային-կրթական և տնտեսական-հասարակական բնույթի հայկական մի շարք միություններ ու խմբակներ: Դրանք, սակայն, հեռու մնացին քաղաքական, ազատագրական պայքարի հարցերից և այդ պատճառով էլ դուրս են մնում մեր ուսումնասիրության շրջանակից:

## 3

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման բաղկացուցիչ մասն է կազմում այն պայքարը, որ ծավալեց նա սուլթանական բռնապետության դեմ XIX դարի ընթացքում տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմների տարիներին: Ամեն անգամ, երբ բռնկվում էին այդ պատերազմները, արևմտահայերը բարենպաստ պայմաններ էին տեսնում սուլթանական լծից ազատվելու համար: Համակված նոր հույսերով, նրանք ոտքի էին ելնում սուլթանների և փաշաների տիրապետության դեմ: Իր ազատագրությունը սուլթանական լծից կապելով ռուսական զենքի հաղթանակի հետ, հայ ժողովուրդն ուժերի ներածին չափ, բոլոր հնարավոր միջոցներով օգնում էր ռուսական զորքերին: Ռուսական բանակի շարքերում, թուրքական զորքերի դեմ կռվում էին կամավորական գնդեր, բազմաթիվ ջոկատներ ու աշխարհազորային միավորումներ: Ժողովրդական զանգվածներն աշխատում էին վերամիավորվել իրենց արևելահայ եղբայրների հետ, ձգտում էին Արևմտյան Հայաստանը ևս միացնել Ռուսաստանին:

Այս նպատակով արևմտահայ ժողովուրդը զգալի պայքար ծավալեց դեռևս 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Պատերազմի առաջին իսկ լուրը մեծ հույսեր և ոգևորություն առաջ բերեց արևմտահայերի մեջ, որոնք, ունենալով արևելահայերի թարմ օրինակը, ձգտում էին ռուսական զորքերի օգնությամբ ազատագրվել թուրքական բռնապետության լծից և միանալ Ռուսաստանին: Բնորոշ է, որ սուլթանական կառավարությունը զգալով այդ, դեռ պատերազմի նախօրեին, աշխատեց զինաթափ անել հայերին և նրանց տեղափոխել երկրի խորքերը: Այդպես վարվեցին հատկապես Կարսի փաշայության բնակչության հետ[1]: Սակայն թուրք փաշաները չկարողացան իրագործել իրենց ծրագիրը: Բռնի կերպով տեղահանված հայ բնակչությունը ռուսական զորքերի օգնությամբ ազատվեց գերությունից և վերահաստատվեց իր գյուղերում ու ավաններում: Չնայած Բ. Դռան ձեռք առած բոլոր միջոցներին, ժողովր-

---

1 АКАК. Т. VII, Тифлис, 1878, с. 749, նաև История военных действий в Азиатской Турции. Ч. I, с. 189, 221.

դական զանգվածները կարողացան ակտիվ մասնակցություն ունենալ պատերազմական գործողություններին և ըստ հնարավորին փոխադարձաբար օգնել ռուսական բանակին: Պատերազմի առաջին իսկ շրջանում, Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր գավառներում կազմակերպվեցին կամավորական հետևակ և հեծյալ զորամասեր ու պահակություն անող միլիցիական ջոկատներ:

Երբ ռուսական զորքերը մտան Բայազետ, տեղական հայ բնակչությունից կազմվեց 1000 մարդուց բաղկացած կամավորների մի հետևակ գումարտակ[1], որը ռուսական զորքերի հետ միասին հաջողությամբ կռիվներ մղեց թուրքական զորքերի դեմ: Բացի դրանից, Բայազետի գյուղերում կազմվեցին նաև հեծյալ և հետևակ ջոկատներ, որոնց հաջողվեց գրավել Դիադինը: Բայազետը թշնամու զորքերի հարձակումից պաշտպանելու գործում ակտիվ մասնակցություն ցույց տվին հայ միլիցիական ջոկատները, որոնց կազմում հաշվվում էր 750 մարդ[2]: Իր զեկուցագրերից մեկում Կովկասի ռուսական բանակի գլխավոր հրամանատար Պասկևիչը 1829 թ. հոկտեմբերին գրում էր, թե Բայազետում ռուսական զորքերի շարքերում թուրքական բանակի դեմ կռվում էին 2000 հայեր[3]: Տեղի հայ բնակչությունը զինված պայքարի փայլուն օրինակներ ցույց տվեց հատկապես Բայազետի բերդի հերոսական պաշտպանության օրերին: 1829 թ. հունիսին Վանի փաշան 15000 հոգուց բաղկացած իր բանակով հարձակման անցավ և ամենուրեք կոտորած ու ավեր սփռելով, պաշարեց Բայազետի բերդն ու ձեռնարկեց անընդհատ և կատաղի գրոհների՝ այն գրավելու համար: Բերդում ամրացված ռուսական փոքրաթիվ զորամասը և հայ կամավորները գեներալ-մայոր Պոպովի հրամանատարությամբ հերոսաբար հետ մղեցին թշնամու բոլոր գրոհները և արիաբար պաշտպանեցին բերդը: Վանի փաշան վերջ ի վերջո ստիպված էր նահանջել: Հիշյալ գեներալը, խոսելով ռուս զորքերի հերոսական սխրագործությունների մասին, միաժամանակ նշում էր հայ կամավորների արիությունը: «Հայերը,– գրում էր Պոպովը,– կռվում էին և մեռնում որպես հերոսներ... Նրանք օրինակելի էին, հոգվով նվիրված են ռուսներին...»[4]:

Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողությունները սկսվելուց շատ չանցած Կարսում կազմակերպվեց հայ կամավորների մի հետևակ վաշտ, ապա մեկ հեծյալ գունդ՝ բաղկացած 800 հոգուց: Այնուհետև, ստեղծվեց մի քանի հարյուր հոգուց բաղկացած հեծյալ և հետևակ միլիցիա, որի գլխավոր խնդիրն էր պաշտպանել փաշայության սահմանները: Կազմակերպվեցին նաև համեմատաբար ավելի փոքր կազմ ունեցող կամավորական այլ ջոկատներ: Պետք է նշել, որ Կարսի համար մղվող կռիվներում ռուսական զորքերին զգալի օժանդակություն ցույց տվեցին քաղաքի հայ բնակիչները: Երբ ռուսական զորքերը սկսեցին իրենց գրոհները Կարսի նշանավոր բերդի վրա, նրանցից շատերը, արհամարհելով իրենց սպառնացող վտանգը, օգնում էին ռուս զինվորներին՝ բերդին տիրանալու համար:

Կամավորական զորամասեր ստեղծվեցին նաև Էրզրումում: Գեներալ Պանկրատևի նախաձեռնությամբ այնտեղ կազմակերպվեց հայ կամավորների մի հետևակ վաշտ, որն ուներ իր սեփական դրոշակը: Տեղական հայերի նյութական միջոցներով ստեղծվեց նաև հեծյալ զորամաս:

Սակայն գործը չսահմանափակվեց միայն նշված կամավորական ջոկատներով: Արևմտյան Հայաստանի բնակչությունը ռուսական զորքերին ամենուրեք դիմավորում էր խանդավառությամբ և ոգևորությամբ: Ռուսական զենքի հաղթանակի մեջ նա տեսնում էր իր փրկությունը սուլթանական բռնապետության ծանր լծից: Պատերազմի մասնակիցները վկայում էին, որ հայերը ամենուրեք անսահման ուրախությամբ ու ոգևորությամբ դիմավորեցին ռուսական զորքերին: Խանդավառված և հույսերով լի ժողովուրդը ռուսական զորքերին տրամադրում էր սննդամթերք, բնակարաններ, օգնում էր վիրավոր զինվորներին, տալիս էր զանազան անհրաժեշտ տեղեկություններ և այլն: «Բայազետի փաշայության բնակիչները, մեծ մասամբ հայերը,– գրում էր դեպքերի ժամանակակից ռուս զինվորականներից մեկը,– գաղտնի կերպով օժանդակում էին մեզ և չնայած որ պատերազմը սկսվել էր, շարունակում էին մեր սահմանները բերել հաց՝ վաճառքի համար»[1]: «Բասենի վիճակի հայ գյուղացիները եկեղեցական թափորներով դիմավորելով ռուսներին՝ նրանց ընծա էին բերում իրանց կենդանիներից և պաշարներից»[2]:

Կարևոր է նշել այն փաստը, որ պատերազմական գործողություններին մասնակցում էին ոչ միայն արևմտահայերը, որ ձգտում էին ռուսական զորքերի օգնությամբ ազատագրվել սուլթանների ու փաշաների լծից, այլև արևելահայերը, որ արդեն ազատվել էին պարսկական խաների տի-

1 История военных действий в Азиатской Турции в 1828-1829. Ч. II, Варшава, 1843, с. 170.

2 Նույն տեղում, էջ 173:

3 *Ա. Երիցեանց.* Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա. Թիֆլիզ, 1894, էջ 434:

4 Նոյն տեղում, էջ 423-424:



1 История военных действий в Азиатской Турции. Ч. I, с. 353.

2 *Ե. Գեղամեանց.* Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում կամ Հայկական հարցի չորրորդ շրջանը. Բաքու, 1915, էջ 203:

րապետությունից և գտնվում էին ռուսական կայսրության կազմում: Ոգևորվելով ռուսական զենքի օգնությամբ արևմտահայերին սուլթանական տիրապետությունից ազատագրելու գաղափարով, արևելահայերը ես կազմակերպեցին կամավորական և աշխարհազորային ջոկատներ և ռուսական զորքերի շարքերում ակտիվ կռիվներ մղեցին սուլթանական Թուրքիայի դեմ: 1828 թ. գարնանը, երբ դեռ նոր էր հայտարարվել ռուս-թուրքական պատերազմը, Արարատյան դաշտի բնակչությունից կազմվեց 2000 հետևակ և հեծյալ գնդեր: Պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում այդ գնդերը գտնվում էին ռուսական բանակի առաջապահ մասերում: Ինչպես պատմում են ականատեսները, հետևակ գնդի զինվորները ծածկում էին կարմիր գլխարկներ, հագնում էին կանաչագույն և կապտագույն մահուդի համազգեստներ՝ սպիտակ, լայն անդրավարտիքներով և դեղնագույն կոճկավոր ու սրածայր կոշիկներով[1]: Կամավորական և աշխարհազորային ջոկատներ կազմվեցին Երևանում, Սարդարապատում, Լոռիում և Արևելյան Հայաստանի այլ մասերում: Երևանի աշխարհազորային հեծյալ զորամասը, որ ուներ 400 մարդ, կազմված էր հայերից և տեղացի մահմեդականներից[2]:

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս վերը բերած փաստերը, ռուս-թուրքական 1828–1829 թթ. պատերազմի ժամանակ հայ ժողովուրդը զգալի ջանքեր գործադրեց սուլթանական բռնապետության դաժան լծից ազատագրվելու համար: Նման փորձեր, սակայն, ավելի լայն չափով կատարվեցին Ղրիմի պատերազմի տարիներին:

Այդ պատերազմի ժամանակ, ինչպես հայտնի է, Անդրկովկասի համար բավական լուրջ վտանգ ստեղծվեց: Թուրքական զավթիչները, անգլիական ու ֆրանսիական ագրեսորների հետ միասին, ցանկանում էին Ռուսաստանից կտրել Կովկասը և այնտեղ իրենց տիրապետությունը հաստատել: Այդ է պատճառը, որ պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանում ու Հարավային Վրաստանում թուրքական տիրապետության դեմ ուղղված ազատագրական պայքար ծավալվելու հետ մեկտեղ, տեղի ունեցավ հայրենասիրական մեծ շարժում: Պատերազմի ամբողջ ընթացքում անդրկովկասյան ժողովուրդները ակտիվ մասնակցություն ունեցան Կովկասյան ռազմաճակատի գործողություններին: Ռուսական բանակի շարքերում կռվում էին բազմաթիվ կամավորական զորամասեր ու միլիցիական ջոկատներ: Իրավացի է ակադեմիկոս Ե. Վ. Տառլեն, երբ գրում է, թե Կովկասյան ռազմաբեմի ռուսական զորքերի հետ միասին Անդր-

1 Ա. Երիցեանց. Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք, մասն Ա, էջ 453:

2 История военных действий в Азиатской Турции. Ч. I, с. 356.



կովկասի ժողովրդական զանգվածները ցուցաբերեցին մեծ արիություն՝ հայրենի երկիրը թուրքական զավթիչների թալանչիական ոտնձգություններից պաշտպանելու գործում[1]:

Մասնավորեցնելով մեր խոսքը հայ ժողովրդի մասին, պետք է նշել, որ սուլթանական բռնակալության դեմ ուղղված ազատագրական պայքարը լայն ծավալ ստացավ ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում: Պատերազմի տարիներին կազմակերպված հայկական ջոկատները ձգտում էին ոչ միայն մասնակցել Անդրկովկասը թուրքական ագրեսիայից պաշտպանելու գործին, այլև նպատակ ունեին օգնել արևմտահայ բնակչությանը՝ ազատագրվելու թուրքական բռնակալության տիրապետությունից: Կամավորական և միլիցիական հեծյալ ու հետևակ ջոկատներ կազմակերպվեցին Երևանում, Ալեքսանդրապոլում, Էջմիածնում, Շորագյալում, Նոր Բայազետում, Զանգեզուրում և Հայաստանի գրեթե բոլոր գավառներում: Հետաքրքրական է, որ կամավորական ջոկատներ ստեղծվեցին անգամ անհատ մարդկանց կողմից ու նրանց հաշվին: Այսպես, օրինակ, Նախիջևանի գավառական դպրոցի վերակացու, նահանգային վարչության քարտուղար Ավետիս Գալուստովիչ Տեր-Գրիգուրովը 1854 թ. մայիս ամսին իր հաշվին Նախիջևանի և Օրդուբադի հայերից կազմեց 125 հոգուց բաղկացած կամավորական հեծյալ ջոկատ, որի անդամների թիվը հետագայում հասավ 150-ի[2]: Ջոկատը ուղարկվեց գործող կորպուսի հրամանատարության տրամադրության տակ և ապա Երևանյան ջոկատի (отряд) հրամանատարի խնդրանքով միացվեց նշված զորամասին և մասնակցեց նրա մարտական գործողություններին[3]:

Միաժամանակ, կազմվեցին ազգային խառը կազմ ունեցող կամավորական խմբեր: Այսպես, 1855 թ., գնդապետ Լորիս–Մելիքովի հրամանատարությամբ, գործող բանակ ժամանեց մի ջոկատ, որի մասին Կովկասի փոխարքա և գլխավոր հրամանատար գեներալ Ն. Ն. Մուրավյովը գրում էր, որ այն բաղկացած է 300 հոգուց, որոնցից մեծ մասը հայեր են (ինչպես արևմտահայեր, այնպես էլ արևելահայեր)[4]: Պետք է նշել, որ ռուսական կանոնավոր զորամասերում ևս կային որոշ թվով հայ մարտիկներ*:

Կամավորական խմբեր ու միլիցիական ջոկատներ ստեղծվեցին նաև Արևմտյան Հայաստանում: Ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ ռուսա-

1 Е. В. Тарле. Крымская война, второе издание. Т. II, М., 1950, с. 541.

2 АКАК. Т. XI, с. 968.

3 ЦГИА Грузии, ф. 559, д. 18, л. 5, նաև М. Лихутин. Русские в Азиатской Турции, с. 47, 77; М. И. Богданович. Восточная война. Т. II, СПб, 1876. с. 163.

4 Н. Н. Муравьев. Война за Кавказом в 1855 году. Т. I, СПб., 1877, с. 34.

կան բանակի առաջխաղացումը դեպի Արևմտյան Հայաստան՝ մեծ ոգևորություն ու խանդավառություն առաջ բերեց տեղական բնակչության մեջ: Ամենուրեք ռուսական զորքերին դիմավորում էին որպես փրկիչների ու ազատարարների: «Հայերը դիմավորում էին մեզ որպես փրկարարների»,– գրում էր պատերազմական գործողությունների մասնակից գեներալ-մայոր Մ. Լիխուտինը[1]: «Հայերը,– գրում էր գեներալ-լեյտենանտ Մ. Ի. Բոգդանովիչը,– մեր զենքի ուժի մեջ են տեսնում փրկություն ստրկությունից»[2]: Օգտվելով ռուսական զորքերի ներկայությունից, արևմտահայ բնակչությունը շատ տեղերում զենքի դիմեց թուրքական բռնակալության դեմ պայքար մղելու համար: Երբ ռուսական հաղթական զորքերը մոտենում էին Բայազետին, այնտեղ կազմվեց կամավորական մի ջոկատ, որը հաջողությամբ ու ոգևորությամբ մասնակցեց թուրքական զորքերի դեմ մղվող կռիվներին[3]: Նման ջոկատներ ու զորամասեր ստեղծվեցին նաև Ալաշկերտում և այլուր: Նրանք ռուսական զորքերի օգնությամբ ազատագրական պայքար էին վարում թուրքական բռնակալության դեմ: Թե ինչպիսի տրամադրություն էր տիրում Արևմտյան Հայաստանում պատերազմի ժամանակ, այդ մասին հետաքրքիր վկայություն է տալիս գեներալ Լիխուտինը: Նկարագրելով ռուսական զորքի հարձակումը Բայազետի վրա, նա գրում էր. «Այդ հարձակումը խանդավառություն առաջ բերեց Բայազետի հայերի մեջ: Նրանցից շատերը, այդ թվում և ծերունիները, ոտքից մինչև գլուխ զինվելով, եկան ու ճանապարհին հասան զորամասին (ռուսական – Մ. Ն.), խնդրեցին, որպեսզի միանան մեզ և հայտարարեցին, թե պատրաստ են մեռնել մեզ հետ միասին: «Ինչով ենք մենք ձեզանից լավ»,– ասում էին նրանք: – «Դուք պաշտպանում եք մեզ, գնում եք կռվելու մեզ համար. մենք պատրաստ ենք մեռնել ձեզ հետ միասին»: Այդ մարդկանց ոգևորությունը և տեսքը, մարդիկ, որոնք միգուցե երբեք զենք չէին կրել, իսկ այժմ զինված էին, հուզիչ էր...»[4]:

Շատ տեղերում բնակչությունը զինվում և սրտատրոփ սպասում էր ռուսական զորքերին: Ասորիների պատրիարքը գեներալ Բեհբութովին 1855 թ. գարնանը գրած իր նամակներից մեկում Վասպուրականի հայերի ու քրդերի մասին գրում էր. «Ինչպես հայերը, այնպես էլ քրդերը սպասում են ռուսական զորքերի հայտնվելուն մեր սահմանի վրա, որպեսզի

1 *М. Лихутин*. Русские в Азиатской Турции, с. 133.
2 *М. И. Богданович*. Восточная война... Т. I, с. 211.
3 *М. Лихутин*. Русские в Азиатской Турции, с. 226.
4 Նույն տեղում, էջ 230:



միանան նրանց հետ»[1]: Ժողովուրդը բազմաթիվ դիմումներ էր հղում ռուսական բանակի հրամանատարությանը, նրանից խնդրելով արագացնել զորքերի առաջխաղացումը: Գեներալ Լիխուտինը պատմում է, որ երբ ռուսական զորամասը գտնվում էր Բայազետում, «... Ալաշկերտի սանջակի բնակիչները անընդհատ գալիս և հրավիրում էին մեզ իրենց մոտ»[2]: Այսպիսի օրինակներ բազմաթիվ են:

Ռուսական հերոսական բանակի սխրագործությունները ոգեշնչող օրինակ էին հանդիսանում նաև հայ կամավորական խմբերի ու ջոկատների համար: Մասնակցելով պատերազմական գործողություններին՝ նրանք արիաբար կռվում էին թշնամու դեմ: Կովկասյան ռազմաճակատի գործող բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Վ. Օ. Բեհբութովը հատուկ հրամանով նշում էր Շորագյալի հայ բնակչությունից կազմված հեծյալ միլիցիական ջոկատի ցուցաբերած հերոսությունը[3]: 1854 թ. հունիսի 23 թվակիր հրամանում Բեհբութովը գրում էր. «Շորագյալի միլիցիան, որ կազմվել է միայն հունիսի 1-ին, կարողացավ երեք շաբաթվա ընթացքում երեք անգամ՝ հունիսի 7-ին, 14-ին և 20-ին, աչքի ընկնել թշնամու հետ ունեցած ընդհարումների ժամանակ: Վերջին երկու անգամ այդ միլիցիան, գործ ունենալով թվական գերակշռություն ունեցող թուրքական հեծելազորի հետ, ստիպեց նրան թողնել դաշտում մի քանի դիակ, խլեց շատ ձի և զենք»[4]: Գնդապետ Լորիս-Մելիքովի հրամանատարությամբ գործող կամավորական ջոկատի մասին գեներալ Մուրավյովը գրում էր, թե «այդ դրուժինան աչքի ընկավ խիզախությամբ, արագաշարժությամբ և տեղանքի իմացությամբ»[5]: Գրեթե նույն ձևով էր արտահայտվում նաև գեներալ Բոգդանովիչը: Խոսելով հիշյալ ջոկատի կամավորների մասին, նա ասում էր, թե «նրանք աչքի ընկան տեղանքի իմացությամբ, անվեհերությամբ և ճարպկությամբ»[6]: Պետք է նշել նաև այն, որ Կովկասյան ռազմաճակատի գրեթե բոլոր մարտական գործողություններին և մասնավորապես Բաշկադըքլարի և Քյուրուկ Դարայի նշանավոր ճակատամարտերին, երբ ռուսական հերոսական զորքերը փայլուն հաղթանակ տարան թվական տեսակետից իրենց մի քանի անգամ գերազանցող թուրքական

1 АКАК. Т. XI, с. 350.
2 *М. Лихутин*. Русские в Азиатской Турции, с. 157.
3 Ջոկատը բաղկացած էր 200 մարդուց:
4 ЦГИА Грузии, ф. 559, д. 5, л. 19.
5 *Н. Н. Муравьев*. Война за Кавказом. Т. I, с. 34.
6 *М. И. Богданович*. Восточная война. Т. IV, Варшава, 1877, с. 245.

*զորքերի դեմ, մասնակցում էին նաև հայ մարտիկներ, որոնց մի մասը ցուցաբերած արիության համար արժանացավ պարգևների ու նվերների*[1]*:*

*Պատերազմի տարիներին կազմակերպվեցին նաև աշխարհազորային ջոկատներ, որոնց հիմնական նպատակն էր՝ պաշտպանել հայրենի գյուղերն ու քաղաքները թուրքական ագրեսորներից: Աշխարհազորային զինված ջոկատներ ստեղծվեցին նաև Արևմտյան Հայաստանի մի քանի մարզերում (Բայազետ, Ալաշկերտ, Կարս): Սակայն աշխարհազորը մեծ չափեր և համեմատաբար կազմակերպված բնույթ ստացավ Անդրկովկասում: Բազմաքանակ և բավական հաջող էր, մասնավորապես, Թիֆլիսի աշխարհազորը, որի կազմի մեջ մտնում էին տեղական բնակչության բոլոր ազգությունների ներկայացուցիչները՝ վրացիներ, հայեր, ռուսներ, և այլն: 1855 թ. գարնանը Թիֆլիսի աշխարհազորը բաղկացած էր 6 դրուժինայից, որոնց անդամների ընդհանուր թիվը կազմում էր 6158 մարդ*[2]*: Աշխարհազորայինների մեծ մասը արհեստավորներ (համքարներ) և մանր առևտրականներ էին*:*

*Զգտելով ռուսական բանակի օգնությամբ ազատագրել Արևմտյան Հայաստանը սուլթանական բռնապետության լծից, հայ ժողովուրդը ոչ միայն ստեղծում էր կամավորական, միլիցիական և աշխարհազորային ջոկատներ, այլև կատարում էր ամեն տեսակ ծառայություններ: Արևմտահայերը ռուսական բանակի հրամանատարությանը տրամադրում էին լավ հետախույզներ, նամակատարներ, ուղեկիցներ: Բնակչությունը ռուսական զորքերին տալիս էր սննդամթերք, կատարում էր փոխադրություններ, ամեն կերպ օգնում էր վիրավոր մարտիկներին*[3]*: Այդ ուղղությամբ զգալի գործ կատարվեց նաև Արևելյան Հայաստանում: Գործող բանակի զորամասերի համար նվիրատվություններ կատարեցին ինչպես ամբողջ համայնքներ, ընկերություններ, այնպես էլ բազմաթիվ անհատներ: 1854 թ., օրինակ, ռազմաճակատի զորքերին նվերներ տվին Ալեքսանդրապոլի գավառի Շորագյալ տեղամասի բնակիչները՝ 168 խոշոր եղջերավոր անասուն, 311 ոչխար, Նոր Բայազետի բնակիչները՝ 1000 ռուբլի արժաթ, Շուշու հայկական ընկերությունը՝ 1647 ռուբլի և այլն*[4]*: Մեծ էր հատկապես անհատ նվիրատուների թիվը:*

---

1 *Ա. Պողոսյան.* Ղրիմի պատերազմի Կովկասյան ռազմաճակատը և հայերի մասնակցությունը ռազմական գործողություններին.– «Տեղեկագիր», 1950, N 3, էջ 50-51, 57:

2 АКАК. Т. XI, с. 205-207 (док. 193).

3 Նույն տեղում, էջ 373, 351; *М. Лихутин.* Русские в Азиатской Турции, с. 319.

4 *Ա. Պողոսյան.* Ղրիմի պատերազմի Կովկասյան ռազմաճակատը.– «Տեղեկագիր», 1950, N 3, էջ 57-58, 62:



*Հատկապես ուշագրավ է այն հանգամանքը, որ Ղրիմի պատերազմի տարիներին Սևաստոպոլի հերոս ծովայիններին օգնելու նպատակով Հայաստանի շատ գյուղերում ու քաղաքներում հանգանակություն կատարվեց: Ինչպես ցույց են տալիս արխիվային նյութերը, հանգանակությանը մասնակցեցին ժողովրդի լայն շերտերը*[1]*:*

*Ղրիմի պատերազմը, այսպիսով, նոր խթան հանդիսացավ սուլթանական Թուրքիայի լծի տակ հեծող հայ ժողովրդի ազատագրական ձգտումների և պայքարի համար: Այդ պայքարը, ինչպես տեսանք, արտահայտվեց զանազան ձևերով ու երանգավորումներով: Ունենալով ռուսական զորքերի անմիջական օգնությունը՝ Արևմտյան Հայաստանի բնակչությունը բոլոր հնարավոր միջոցներով փորձեց ազատագրվել սուլթանական անագորույն տիրապետությունից:*

---

1 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 176, վավ. 259, 323, 324, 325, թղթ. 181, վավ. 165, 214, 393, թղթ. 183, վավ. 453, 460 և այլն:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ 1870-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

### 1

*1870-ական թթ. հայ ազատագրական շարժման գլխավոր աչքի ընկնող կենտրոններ դարձան Վանը, Ամիդը և Լեռնային Կիլիկիայի Զեյթուն գավառը:*

*Վան քաղաքում 1872 թ. հիմնվեց մի գաղտնի կազմակերպություն, որ կրում էր «Միություն ի փրկություն» անունը: Նրա մասին մեզ հասել են միայն մի քանի փաստաթղթեր, որոնք հրապարակվել են Գյուտ քահ. Աղանյանցի «Դիվանում»: Փաստաթղթերից մեկը «Միության» կոչն է, ուր նկարագրվում է Վասպուրականի հայ բնակչության խիստ ծանր վիճակը և զարգացվում է այն միտքը, թե անհրաժեշտ է համախմբվել և պայքարել ժողովրդի ազատագրության համար: Խոսելով անլուր ճնշումների և հարստահարությունների մասին, կոչում ասվում է. «... գնաց մեր պատիվը, պղծվեցան մեր եկեղեցիք. առևանգվեցին մեր հարսունքն ու երիտասարդունք. հայտնապես կխլեն մեր իրավունքը մեր ձեռքեն և իսպառ սպուռ մեր ազգության սերունդը ջնջելու կճգնին: Վասնորո կամ պետք է մեռնել ու չտեսնել այս սարսափելի վիճակը, և կամ վերակենդանություն ստանալ ի ծոց հայրենյաց: Ալ ի՞նչ կսպասենք. կյանք չունինք, մահե կվախնանք, ստացվածքնիս ու վաստակնիս մերը չէ, եկեղեցիք ունինք ամեն օր հալածանաց մեջ է, ու կնախատվի: Զասոնք հերիք սեպելով՝ պահ մը արթնանանք: Միախորհուրդ երդնումք ի խաչ և... փրկության միջոց փնտռենք, ապա թե ոչ կորուստ մերձ է իսպառ»[1]:*

*Կոչը, որ ստորագրել են 46 մարդ, վերջանում է հետևյալ տողերով. «Ահավասիկ ստորագրյալքս զասոնք նկատելով միակամ հաճությամբ կերդնումք ի խաչ..., որ հաստատամտությամբ սույն պայմանը չժխտել հավատարմությամբ մեր մեջ պահել մինչև մեր արյան հետին կաթիլը: Եվ ո՞վ է այն հայը և ո՞րն է այն սիրտը, որ այս արտասվելի տեսարանները տեսնե ու անտարբեր մնա իբրև արձան «ինչ փույթ է ինձ ըսելով», այսպիսյաց լավ է անբան անուն տալ, քան թե մարդ: Ահա ձեռն ի գործ արկյալ կհրավիրեմք ամեն զգայուն հայը հաստատուն երդմամբ*

1 Դիւան Հայոց պատմութեան, գիրք ԺԳ, էջ 269-270:



*ուխտել այս գործը ի գլուխ հանելու առանց երկմտության որպես և Վարդանանք և միաբանություն ուխտի նոցա»[1]:*

*Վան քաղաքի բնակչության մեջ ստեղծված «Միություն ի փրկություն» կազմակերպության կոչը լայն արձագանք գտավ նաև գավառում: Շուտով այդ կազմակերպությանը հարեցին մի շարք գյուղական համայնքներ: Այսպես, օրինակ, 1872 թ. ապրիլի 26-ին Անգղ գյուղի ներկայացուցիչները այդ կազմակերպությանը ուղարկեցին հետևյալ հետաքրքիր նամակը.*

*«Մեծապատիվ անդամք Գաղտնի ընկերության, մենք ստորագրյալ Անգղ գյուղացիքս մեր կրած նեղության, հարստահարության և զրկանաց երեսեն բոլորովին հուսահատած ըլլալով, և այս միջոցներ լսելով որ քաղաքամեջդ ալ նույն ցավոք վարակյալ կգտնվին ու զգացած են այս անտանելի չարության իրենց վրա ծանրանալ, ընկերություն մը կազմած եք Միություն ի փրկություն անվամբ: Ուստի ալ չկարենալով տոկալ այս սարսափելի վիճակին և անկրելի լուծին՝ ձեզ կդիմենք այսօր որ մենք ալ ձեզ հետ միանալով թերևս դարման մը գտնենք: Թե ինչ միջոց որ նպաստավոր է այս չարիքներեն փրկվելու, պատրաստ եմք արյան և մահու չափ ձեզ հետ գալելու, ուր որ ալ մեր փրկության հույսը զմեզ տանի. թե ռուսանալ՝ ռուսանանք միասին, թե գաղթել՝ գաղթենք. թե վերջապես մեռնիլ հասած է մեզ՝ մեռնինք, բայց փրկվինք. այս է մեր աղերսն թե առ ձեզ և թե առ Աստված և կերդնումք ի մի Աստված կենդանին որ չբաժնվինք իրարմե բայց եթե մահվամբ միայն»[2]:*

*Միությանը նույն բովանդակությամբ նամակներ ուղարկեցին Վանի գավառի նաև Հորոտենց, Խեքքեղ, Հնուստան, Նոր գյուղ և Հառեղ գյուղերի ներկայացուցիչները: Դժբախտաբար, մեզ տեղեկություններ չեն հասել նրա գործունեության մասին: Չգիտենք, թե ինչ ծավալ է ընդունել և ինչ ուղղությամբ է ընթացել գաղտնի միության գործունեությունը: Սակայն հայտնի է, որ «Միությունը» մեծ հույսեր է կապել Ռուսաստանից սպասվող օգնության հետ: Ըստ երևույթին, նրա նախաձեռնությամբ է, որ Վանի հայ հասարակությունը 1872 թ. մայիսին դիմում է ուղղում Կովկասի փոխարքային՝ խնդրելով նրանից օգնություն և պաշտպանություն: Այդ դիմումը փոխարքային ներկայացնելու համար Կովկաս են ուղարկվել «Միության» երկու անդամները՝ Հակոբ Կալոյանը և Նշան Շիրվանյանը: Սրանք ժամանելով Երևան, դիմում են Երևանի նահանգապետին, խնդրելով նրանից Վանում նշանակել ռուսական հյուպատոս, որպեսզի նա պաշտպա-*

1 Նույն տեղում. կոչի տակ նշված է «Վան, 3 մարտ, 1872 թ.»:

2 Նույն տեղում, էջ 271:

նի և հովանավորի տեղի բնակչությանը: Կովկասի փոխարքայի անունով հասցեագրված դիմումի մեջ Վանի հայ բնակչությունը ջերմ ցանկություն էր հայտնում ընդունել ռուսական հպատակություն:

«Դիվանում» հրապարակված նյութերից երևում է, որ «Միություն ի փրկություն» կազմակերպության մեջ ընդգրկված են եղել հասարակության գրեթե բոլոր խավերի ներկայացուցիչները՝ գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ և հոգևորականներ: Հետաքրքիր է, որ Գարեգին Սրվանձտյանցը ինչ-ինչ կապեր է ունեցել Միության հետ: Աղանյանցը հայտնում է, որ «Միություն ի փրկության» կոչի բնագրի վրա կան Սրվանձտյանցի մակագրությունները[1]:

Տարիներ անց՝ 1878 թ. Վան քաղաքում հիմնվեց հայրենասիրական մի այլ գաղտնի միություն, որ կրեց «Սև խաչ» անունը: Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ, վանեցի Հարություն Ճանկուլյանը իր հուշերում այդ մասին գրել է. «Վանա երիտասարդությունը չափեն ավելի խանդավառված էր, որով հետզհետե կըմբռներ, թե ինքն իբր մարդ ազատ է իր իրավունքն ունենալ, պետք է անոր տերն ըլլալ և ապահով կյանք մը ապրիլ, ոգևորությունը չափ ու սահման չուներ, խումբ մը կրակոտ ու խանդոտ երիտասարդներ «Սև խաչ» անվան տակ գաղտնի կազմակերպություն ձեռնարկեցին: «Սև խաչ» մակդիրը կնշանակեր՝ կազմակերպության դավաճան և անգաղտնապահ ընկերի անվան վրա սև խաչ քաշելով, իսկույն ևեթ մահվան դատապարտել: «Սև խաչի» նպատակն էր ժողովուրդին մեջ ինքնապաշտպանության ոգին տարածել, իր իրավանց տեր ընել և իբրև մարդ ապրիլ: «Սև խաչը» ոգի ի բռին կաշխատեր իր անդամներուն թիվը շատցնել: Արդեն գաղտնապահության պետք եղած ուխտերն և երդումները տեղի կունենային, և փորձով տեսնվեցավ որ մինչև վերջ «Սև խաչ» իր մեջ չունեցավ ուխտադրուժներ»[2]:

Կազմակերպության նախաձեռնությամբ Վանում տեղի էին ունենում դասախոսություններ հայրենասիրական թեմաներով: Բանախոսների թվում Ճանկուլյանը հիշում է նաև Տաճատ Պեյլերյանին և Մկրտիչ Փորթուգալյանին: Վերջինիս դասախոսություններից մեկի նյութն էր «Ժամանակը հասեր է, հայեր, ի՞նչ անենք»: Տեղեկանալով այդ մասին Վանի կուսակալը շուտով արգելում է բոլոր դասախոսությունները:

«Սև խաչը» ձգտել է կազմակերպել Վանի և գավառի հայության ինքնապաշտպանության գործը, որի անհրաժեշտությունը խիստ զգացվում

1 Նույն տեղում, էջ 553:

2 Հ. Կ. Ծանկուլեան. Յիշատակներ հայկական ճգնաժամէն. մաս Ա և Բ. Կ. Պոլիս, 1913, էջ 50-51:



էր այդ տարիներին: Խմբակը զգալի աշխատանք է կատարել երիտասարդության հայրենասիրական ոգին բարձրացնելու, նրան զինելու ուղղությամբ և միջոցներ է ձեռնարկել հարկ եղած դեպքում թուրք և քուրդ կողոպտիչներին ու ջարդարարներին դիմադրելու համար: Անխնա պայքար է ծավալել մատնիչների ու նրանց դեմ, ովքեր փորձեր են արել զենք վաճառել թուրքերին ու քրդերին: Կան տվյալներ այն մասին, որ «Սև խաչ» կազմակերպությունը ունեցել է «Զինակիր» անունը կրող մի հատուկ խումբ[1], որը գործել է Այգեստանում՝ խնդիր ունենալով զինավարժել ազատագրական պայքարի մեջ ընդգրկված երիտասարդներին: Կարծում ենք հենց այս խումբը նկատի ունի «Մշակի» Վանի թղթակիցը, երբ ժամանակին գրում էր. «Ինչպես կերևի, մի ժամանակ հետե, մի խումբ կազմված է այստեղ Այգեստանի մեջ: Այս խմբակը թեև չը գիտցըվիր թե ինչ տեսակ անձերե բաղկացյալ է, բայց իրենց գործերեն կերևի, որ զգայուն հայեր պետք է լինեն նոքա, զի ազգին վնասակար անձերու վրա կհարձակին գիշերայն և նոցա կպատժին ծեծելով»[2]:

Իր հուշերում Ճանկուլյանը գրել է, որ Վանի հայրենասեր երիտասարդության վրա մեծ ազդեցություն ունեին Մկրտիչ Խրիմյանը և Վանի ռուսական փոխհյուպատոս, հայազգի Կոստանդին Կամսարականը: Այդ մասին կան նաև մի շարք այլ տվյալներ: Պետք է ենթադրել, որ «Սև խաչ» գաղտնի կազմակերպության ղեկավարները կապեր ունեին նշված գործիչների հետ:

Ինչքա՞ն է տևել «Սև խաչի» գոյությունը: Առայժմ դժվար է տալ ճշգրիտ պատասխան: Սակայն մի բան պարզ է, որ այդ կազմակերպությունը գործում էր նաև 1880-ական թթ. սկզբներին: Հայտնի է, օրինակ, որ 1882 թ. նա կապեր է հաստատել Էրզրումի «Պաշտպան հայրենյաց» ընկերության հետ, որը ինչպես կտեսնենք հայտնաբերվեց ու վերացվեց թուրքական կառավարության կողմից 1882 թ. վերջերին: Հնարավոր է, որ հենց այդ ժամանակ էլ դադարեց գործելուց նաև «Սև խաչը»:

1870-ական թթ. վերջերին Վանի երիտասարդության մեջ ազատագրական գաղափարներ է արծարծել Մկրտիչ Փորթուգալյանը: Նա ժամանակի հայ քաղաքական ինքնատիպ գործիչներից մեկն է, որի գործունեությունը սերտորեն կապված է լուսավորական-դեմոկրատական գաղափարների՝ ազատագրական պայքարի գաղափարախոսության վերաճելու գործընթացին: 1870-ական թթ. առաջին կեսին նա խմբագրել է Կ. Պոլսի

1 Ռ. Փ. Հովհաննիսյան. Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը. Ե., 1965, էջ 216:

2 «Մշակ», 1882, N 63:

«Ասիա» թերթը, աշխատակցել Կ. Փանոսյանի «Մանգումե-ի էֆքյար» հայատառ թուրքերեն թերթին, Գր. Արծրունու «Մշակին» և այլ պարբերականների՝ առաջադրելով հանրային կյանքի հետ կապված կարևոր հարցադրումներ: Նա նշանակալի դեր է ունեցել արևմտահայ ընկերությունների գործունեության պատմության մեջ. Կ. Պոլսում հիմնադրել է «Վարագդատյան» ընկերությունը, եղել է «Արարատյան» ընկերության գործուն անդամը, անդամակցել է Վանի «Լուսավորյալ միություն» և «Երկրագործական» ընկերություններին: Գործնականում իրականացրել է գավառներում լուսավորություն տարածելու խնդիրը, ուսուցչությամբ է զբաղվել Եվդոկիայում, Վասպուրականի Այլյուր գյուղում և այլն: Մ. Փորթուգալյանը Վանում համագործակցել է Մ. Նաթանյանի, Մ. Խրիմյանի, Վանի ռուսական փոխհյուպատոս Կ. Կամսարականի հետ: Նույն ժամանակներում Վանի վարժապետանոցն ու կեդրոնական վարժարանը Մ. Փորթուգալյանի և նրա համախոհների կողմից օգտագործվում էին իբրև լեգալ ասպարեզներ՝ թուրքական բռնակալության դեմ ինքնապաշտպանության, ազատագրական պայքարի գաղափարներ տարածելու նպատակով: Ուշագրավ է, որ «Միացյալ ընկերությունների» կազմակերպումից (1881) տարիներ առաջ նա գործնական ու գաղափարական կապեր էր հաստատել արևելահայ առաջադիմական գործիչների հետ՝ ի դեմս Գ. Արծրունու և նրա շուրջ խմբված կովկասահայ մտավորականության: Մ. Փորթուգալյանի՝ գրեթե բացահայտ դարձած հակաթուրքական քարոզչությունը, արևմտահայերի մեջ պայքարի ոգին ամրացնելու գաղափարները սաստիկ անհանգստացրել էին թուրքական իշխանություններին:

1885 թ. նա արտաքսվում է Թուրքիայից և անցնում Մարսել: Այստեղ նա հիմնում է «Արմենիա» շաբաթաթերթը, որը տարածվելով Կ. Պոլսում և Արևմտահայաստանում, կարևոր նշանակություն ունեցավ XIX դարի վերջին քառորդի և XX դարի սկզբների հայ ազատագրական պայքարի գաղափարների տարածման, արևմտահայ կյանքի իրական պատկերը ընթերցողին բացահայտելու տեսակետից:

«Արմենիայի» ուղղությունը կապ չունի Վանում կազմակերպված «Արմենական» կազմակերպության հետ, թեև այդ կազմակերպության գործիչներից Մ. Ավետիսյանը, հետագայում՝ Մ. Գրիգորյանը և այլք, պնդել են հակառակը՝ հանդիպելով Մ. Փորթուգալյանի հիմնավոր առարկություններին: Իսկապես, արմենականներին անդամակցում էին որոշ հնչակյաններ և ՀՀ Դաշնակցության որոշ անդամներ, իսկ այս կուսակ-



ցությունների հետ Մ. Փորթուգալյանն ուներ գաղափարագործնական բավական տարաձայնություններ[1]:

Ազգային-ազատագրական բնույթի քաղաքական խմորումներ տեղի ունեցան Ամիդի (Դիարբեքիրի) հայության մեջ: Դիարբեքիր քաղաքում գործող Հայրենակցական միության շատ անդամներ 1874–1878 թթ. զգալի քայլեր կատարեցին հայ բնակչությանը զինելու, թուրքական տիրապետության դեմ ապստամբություն նախապատրաստելու և ռուսական բանակին զինված օգնություն ցույց տալու ուղղությամբ: Հայրենասիրական այդ շարժումը գլխավորում էին վարդապետ Փիլիպպոս Նաճարյանը և առևտրական (կամ արհեստավոր) Հովհաննես Հարությունյանը (Հովհաննես էֆենդին):

Ամիդահայերի ազգային զարթոնքին ու ազատագրական պայքարին նպաստեց այն հանգամանքը, որ 1860–1870-ական թթ. թուրքական կառավարության կողմից Դիարբեքիր աքսորված բուլղար հեղափոխականները, որոնց թիվը միայն այդ քաղաքում հասավ մի քանի հարյուրի, որոշակի գաղափարական ազդեցություն ունեցան տեղի հայ հասարակության վրա: Աքսորյալ բուլղարների հետ սերտ կապեր հաստատեց մասնավորապես Փիլիպպոս վարդապետը, որը 1874 թ. նշանակվեց ամիդահայության հոգևոր առաջնորդի տեղապահ (հետագայում առաջնորդ): Հայկական ու բուլղարական աղբյուրները վկայում են, որ ժողովրդասեր ու հայրենասեր այդ վարդապետը խիստ ոգևորվել է բուլղարների հակաօսմանյան ազատագրական պայքարով և աշխատել է հետևել նրանց օրինակին: Այսպես. դիարբեքիրցի Տիգրան Մկունդի «Ամիտայի արձագանքներ» աշխատության մեջ*, ուր բերված են ժամանակակիցների հուշերից քաղված հարուստ և հետաքրքիր տեղեկություններ, հաճախ նշվում է, որ Փիլիպպոս վարդապետը համարձակորեն քարոզներ էր կարդում թուրքական լծի դեմ ապստամբելու անհրաժեշտության մասին: Մի անգամ, օրինակ, նա Դիարբեքիրի ս. Կիրակոս եկեղեցում հավաքված բազմությանը ճառ է կարդացել այն մասին, որ հասել է հայոց վերակենդանության ժամանակը, որ պետք է ոտքի կանգնել: Խոսելով բուլղարների հերոսական ապստամբության վերաբերյալ, նա հույս է հայտնել, որ մյուս քրիստոնյա ժողովուրդները ևս պետք է հետևեն նրանց օրինակին: Դիմելով ժողովրդին վարդապետը ասել է. «Այս պուլկարներ, որոնք հոս աքսորվել են, ամենն ալ այն անխախտ համոզումն ունին, որ մի օր իրենց հայրենիք Պուլկարիա ազատ պիտի լինի, անոր համար է որ անոնք հոս տառապում են, մաշվում են նեղության մեջ և անտրտունջ կրում են աքսորականի բոլոր

1 Տե՛ս Հ. *Փափազյան.* Մկրտիչ Փորթուգալյանը Արմենական կուսակցության մասին (հրապարակում).– ՊԲՀ, 1996, N 1-2, էջ 318-320:

դառնությունները: Անոնք վստահ են, որ իրենց ընկերներ, իրենց հետևողներ շարունակում են հեղափոխության սուրբ գործը, և հավատում են, որ պուլկար ազգը պիտի թոթափե գերության դարավոր շղթան և մի օր կանգնի անկախ ու ազատ ինքնիշխան ազգերու շարքում: Նրանց հավատքը մենք տեսնում ենք նրանում, որ ուսյալ և անուս, քահանա և աշխարհական, հարուստ և աղքատ, բոլորն ալ մեկ գաղափարով լեցված և սնված իրենց հայրենիքին համար զոհում են ինչ որ ունին, մինակ հույս ունենալով որ Պուլկարիա պիտի ազատի Թուրքի լուծից... Եվ այն օրը կլինի նրանց վերակենդանության, նրանց ազգային օրն: Եվ հուսանք, որ նրանց օրինակին հետևին բոլոր քրիստոնյա ազգերը, որոնք օտարի լուծն են կրում»[1]:

Բերելով այս քաղվածքը, հուշերի հեղինակը ավելացնում է. «Քարոզին ուշի ուշով հետևողներն Հայրենասիրացի անդամներն էին: Անոնք գիտցան, որ Փիլիպպոս վարդապետը ամբողջ սրտով կհամակրի թե պուլկար ազգին և թե իրենց բարեկամական հարաբերության, որ հաստատված էին պուլկար հեղափոխականներուն հետ անոնց աքսոր գալու առաջին օրերեն»:

Մի այլ անգամ Փիլիպպոս վարդապետը նույն եկեղեցում բանախոսում է «զենք գործածել սորվելու կարևորության վրա»: «Այդ օր, հիշում է ժամանակակիցը, սովորական դաս առնողներուն հետ Հայրենասիրաց ընկերության բոլոր անդամներն եկած էին և բավական թվով ալ իրենց ծանոթներն հետերնին բերած էին... Պատվելին յուր կրակոտ ոճով սկսեց նախ պատկերացնել ժողովուրդի տխուր վիճակն բաղդատելով անցյալի փառավոր և ինքնիշխան կյանքին հետ, երբ «Հայկ, Արամ, Տիգրան և Արտաշես թագավորներն հայ ազգն անկախ ու հզոր տերություն մ'ըրած էին»: Վարդապետը այնուհետև նշում է, որ հետագա դարերում օտար նվաճողներն «տիրապետեցին մեր երկրին, կողոպտեցին և քանդեցին մեր սրբավայրերը, և մեզ բաժին թողուցին լալ և կրճել ատամանց: Սակայն հերիք է մեր լալն. ալ բավ է մեր ողբն ու կոծը: Ժամանակն է ալ ևս, որ մեր հզոր նախորդաց օրինակներուն հետևինք: Անոնք նիզակներ ունեին, մենք հրացաններ պետք է ունենանք, անոնք նետ և աղեղ ունեին, մենք փամփուշտներ և ատրճանակներ պետք է ունենանք, անոնք բանակներով դեպի պատերազմի դաշտ կերթային, մենք անվեհեր՝ մահը դիմագրավել կարող ենք»[2]:

Վարդապետի կոչը ջերմ արձագանք է գտնում ունկնդիրների մեջ: Հայրենասիրացի անդամները «հրացաններ ձեռք գցելու» նպատակով,

1 *Տիգրան Մկունդ*. Ամիտայի արձագանքներ. Նիւ-Եորք, 1950, էջ 115:
2 Նույն տեղում, էջ 187:



կազմում են հանձնաժողով, որի մեջ ընտրվում են Հակոբ Թոփրհահանյանը, Հակոբ Սիմսարյանը, Պետրոս Ճերբեհյանը և ուրիշներ: Որոշվում է ծանոթ վաճառականների միջոցով զենք ձեռք բերել Էրզրումից և այլ քաղաքներից:

Բնորոշ է, որ հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Մկրտիչ Փորթուգալյանը 1875 թ. եղել է Ամիդում և տեսակցել է Փիլիպպոս վարդապետի ու Հայրենասիրաց ընկերության մյուս անդամների հետ: Վարդապետի ու Փորթուգալյանի կապերը շարունակվեցին նաև հետագա տարիներին:

Ամիդի հայ հայրենասերների քաղաքական գործունեության մասին կան հետաքրքիր տեղեկություններ նաև Արևմտյան Հայաստան և հարևան շրջանները աքսորված բուլղար հեղափոխականների թողած նամակներում, հուշերում և այլ գրառումներում[1]: Այդ նյութերը նույնպես հաստատում են այն փաստը, որ 1870-ական թթ. Ամիդի հայերը որոշակի քայլեր են կատարել հակաօսմանյան շարժում կազմակերպելու ուղղությամբ: Մասնավորապես, հետաքրքիր են Վասիլ Լևսկու զինակից, բուլղար քահանա Մինչո Ստոյանովի (1836–1904) ձեռագրերը, որոնցից հայերին վերաբերող առանձին քաղվածքներ հրապարակվեցին միայն վերջերս[2]: Դրանք կարևոր տեղեկություններ են պարունակում Դիարբեքիր աքսորված բուլղարների* ու տեղի հայ հայրենասերների միջև հաստատված քաղաքական ու բարեկամական կապերի և հատկապես նշանավոր գործիչ Հովհաննես Հարությունյանի մասին, որին նա անվանում է Հովհաննես էֆենդի Խարիտոնով կամ Խարիտյանով (բուլղար բանասեր-պատմաբան Կիրիլա Վըզվըզովա-Կարաթեոդորովան ճիշտ է նկատում, որ տասնյակ տարիներ հետո գրված հուշերում Հարությունյանը «դարձել է» Խարիտյանով)[3]: Բուլղար աքսորականը վկայում է, որ Հովհաննես էֆենդին լինելով ամիդահայ նշանավոր հայրենասեր գործիչներից մեկը ձգտում էր զինել հայ բնակչությանը, նախապատրաստել ապստամբություն օսմանյան լծի դեմ: 1877 թ., երբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, Հովհաննես Հարությունյանը զգալի ջանքեր թափեց, որպեսզի Ամիդի հայությունը, ինչպես նաև այնտեղ աքսորված բուլղարները կապեր հաստատեն ռուսական զորամասերի հետ, նպատակ ունենալով նպաստել նրանց հաղթանակին:

1 Տե՛ս *Ст. Каракостов*. Диарбекирски заточеници... София, 1946.
2 Տե՛ս, *К. Вызвызова-Каратеодорова*. Армяно-болгарские связи 70-х годов XIX века по данным одной болгарской рукописи.– ИФЖ, 1984, N 1.
3 Նույն տեղում, էջ 146:

*Ստոյանովը պատմում է, որ մի անգամ Հովհաննես էֆենդի Խարիտոնովը (այսինքն Հարությունյանը) գիշերը այցելեց ինձ բանտում, վերադարձրեց իմ գումարը, որ պահ էի տվել իրենց և հրաժեշտ տալով ասաց. «Մեր հեղափոխական կոմիտեն վաղը երեկոյան ճանապարհ է ընկնելու դեպի Վանի ու Մուշի կողմերը»[1]: Նույն հեղինակի վկայությամբ Հովհաննեսը եռանդուն հասարակական-քաղաքական գործիչ էր, ծնվել էր Տրապիզոնում, բայց գործում էր Ամիդում, որտեղ ապրում էր նրա քույրը, որը ամուսնացած էր մի հույնի հետ: Աքսորական բուլղարները Հովհաննեսին համարում էին իսկական հայրենասեր և իրենց բարերարն ու լավագույն բարեկամը: Առանձնապես հետաքրքիր են Ստոյանովի նամակներից մեկի այն տողերը, որոնցում ասված է, որ Հովհաննեսը երեք տարի մասնակցել է Կրետեի հույների ապստամբությանը[2]:*

*Ստոյանովի բախտակից Գեորգի Մինչևը ևս հիշում է Հովհաննեսին: Իր հուշերում նա պատմում է, որ հայտնի բուլղար հեղափոխական Բերկովսկին գտնվելով Դիարբեքիրում որպես աքսորական, իր շուրջն է համախմբել ազդեցիկ ու կրթված հայերին և նրանց հետ զրույցներ է ունեցել ազատագրական պայքարի անհրաժեշտության մասին: Այդ հանդիպումները չեն մնացել անհետևանք: Հայերը «հիմնեցին մի կոմիտե Օհաննեսի ղեկավարությամբ»[3]:*

*Արխիվային ու գրական աղբյուրները, այսպիսով, կասկած չեն թողնում այն մասին, որ 1874–1878 թթ. Ամիդի հայության մեջ ծավալվեց հայրենասիրական շարժում ուղղված թուրքական բռնապետության դեմ: Շարժման պարագլուխներն էին, ինչպես արդեն ասացինք, վարդապետ Փիլիպպոս Նազարյանը և առևտրական Հովհաննես Հարությունյանը: Վերջինս 1877 թ., 38 տարեկան հասակում, զոհվեց թուրքական զորքերի հետ տեղի ունեցած մի ճակատամարտի ժամանակ[4]: Վարդապետ Փիլիպպոսը, որը ևս մեծ համբավ ու հարգանք ուներ հասարակ ժողովրդի մեջ, 1879 թ. բանտարկվեց ու որպես «խռովարար» փոխադրվեց Կ. Պոլիս: Մահացավ նա Երուսաղեմում, 1894 թ.[5]:*

1 Նույն տեղում, էջ 149:

2 Նույն տեղում, էջ 146:

3 *С. В. Овнанян.* Армяно-болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во второй половине XIX века, Е., 1968, с. 107.

4 ՊԲՀ. 1984. N 1. էջ 149:

5 «Արմենիա», 1894, հոկտեմբերի 3:



* * *

*Ազատագրական պայքարը շարունակվեց նաև Զեյթունում: 1875 թ., ի պատասխան կայմակամ Դավուդ Նիազի դաժան ճնշումներին ու հարստահարություններին, զեյթունցիները նորից զենքի դիմեցին: Բարբարոս ու արյունարբու այդ կայմակամի իշխանության ժամանակ հայերի հալածանքները, ինչպես դեռ իր ժամանակ վկայել է Հալեպի անգլիական հյուպատոս Հենդերսոնը, հասավ ծայր աստիճանի: Եվ երբ մի անգամ այդ թուրք իշխանավորը անհիմն կասկածի պատճառով իրեն ենթակա հայ ծառայողին խիստ տանջանքների ենթարկելուց հետո գլխատեց նրան անձամբ, սեփական ձեռքով, լցվեց Զեյթուն քաղաքի բնակիչների համբերության բաժակը և նրանք նորից ոտքի կանգնեցին[1]: Ժողովրդական խռովությունը չդադարեց նաև հաջորդ տարում: Ապստամբները 1876 թ. հունիս ամսին հարձակվելով կառավարական շենքի վրա «հիմնահատակ կքանդեն շենքը ու կայրեն մզկիթը, կվռնդեն պաշտոնյաները»[2]:*

*Սուլթանական կառավարությունը, որ այդ ժամանակ պատրաստվում էր մոտ ապագայում սպասվող ռուս-թուրքական պատերազմին, հնարավորություն չուներ անհրաժեշտ քանակի զորքեր ուղարկել հայ լեռնականների դեմ, ուստի ստիպված եղավ ժամանակավորապես հաշտվել կատարված փաստի հետ: «Երեք տարի շարունակ ազատ ապրեցան զեյթունցիք առանց գայմագամի, ըստ վաղեմի դրության ինքզինքնին կառավարելով Մարաշեն անկախ»[3]: Այս տարիների ազատագրական պայքարի ղեկավար դեմքերից մեկն էր երիտասարդ հայրենասեր Պապիկ իշխանը՝ արդեն հայտնի իր արիությամբ ու սխրագործություններով, որին կանդրադառնանք իր տեղում:*

*1878 թ., երբ ավարտվեց պատերազմը և կնքվեց հաշտության պայմանագիր Ռուսաստանի ու Թուրքիայի միջև, Բ. Դուռը նոր արշավանք կազմակերպեց անհնազանդ զեյթունցիների դեմ: Հալեպի վիլայեթի վալի Քյամիլ փաշայի գլխավորությամբ դեպի Զեյթուն շարժվեց յոթ փաշաների միացյալ բանակը: Որպեսզի իր խնդիրը լուծի ավելի դյուրությամբ, վալին դիմելով խորամանկության ու կեղծ խոստումների, կարողացավ համոզել հայ լեռնականների վերնախավի մի մասին չդիմադրել և ենթարկվել սուլթանական կառավարությանը: Զեյթունցիները այս անգամ չցուցաբերեցին անհրաժեշտ միասնություն, առաջացան տարաձայնու-*

1 Turkey, N 1 (1880), London. 1880, p. 11-12.

2 *Գ. Հ. Գալուստեան (Կիլիկեցի).* Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զէյթուն. Նիւ-Եորք, 1934, էջ 144:

3 *Զէյթունցի.* Զէյթունի անցեալէն և ներկայէն. Ա մասն, էջ 131:

թյուններ, տեղի ունեցան մատնության և դավաճանության դեպքեր, թշնամին օգտագործեց հայ կաթոլիկների, բողոքականների ու լուսավորչականների միջև եղած հակասությունները, չհաջողվեցին այն փորձերը, որոնց նպատակն էր ստեղծել մի ընդհանուր ճակատ քրդական և թուրքմենական որոշ ցեղերի հետ միասին ընդդեմ օսմանյան պետության:

Զեյթունցիների մի մասը սկզբում փորձեց ցույց տալ զինված դիմադրություն: Ֆռնուզի վանահայր Նիկողոս եպիսկոպոսը կազմելով մի փոքրիկ զորամաս, Հարություն վարժապետի (Հարություն Զաքրյան) հետ միասին փորձեց պայքար սկսել թշնամու դեմ, բայց հաջողություն չունեցավ: Անհաջողության հանդիպեց նաև Պապիկ իշխանը, որը սակայն վայր չդրեց զենքը և իր մարտիկ զինակիցներով նահանջեց լեռները ու շարունակեց մղել պարտիզանական կռիվներ:

Թուրքական զորքերը գրավեցին Զեյթունը: Հակառակ իր խոստումներին, Քյամիլ փաշան գործի դրեց ծանր ճնշումներ ու հարստահարություններ: Նախ, փորձեց զինաթափ անել բնակիչներին, հավաքել տվեց ոչ միայն զենքերը, այլև կացինները, մուրճերը, երկաթի կտորները[1]:

Բանտարկվեցին մի քանի հարյուր մարդ, որոնք փոխադրվեցին Մարաշի ու Հալեպի բանտերը: Հարկերը հավաքելու նպատակով Մարաշի մյութասերիֆ Վեյսի փաշան դիմեց անտանելի բռնությունների: Քյամիլ փաշայի խոստումներին հավատացած զեյթունցիները զգացին թույլ տված սխալը և զղջացին իրենց միամտության համար:

Օգտվելով այն հանգամանքից, որ թուրքական զորքերի մի զգալի մասը հետ դարձավ Մարաշ, Հալեպ և մյուս քաղաքները, զեյթունցիները 1878 թ. աշնանը (սեպտեմբերին) բարձրացրին նոր ապստամբություն: Հալեպի անգլիական հյուպատոս Հենդերսոնը 1878 թ. նոյեմբերի 8-ին գրում էր Կ. Պոլսի դեսպան Լայարդին, թե Մարաշի կառավարչից ստացվել է հեռագիր այն մասին, որ մի քանի օր առաջ Կ. Պոլսից Զեյթուն է եկել մի քահանա և նրա հրահրումների հետևանքով այսօր Զեյթունի ամբողջ գավառակը «նորից գտնվում է ապստամբ վիճակում»[2]: Դրությունը եղել է այնքան լուրջ, որ թուրքական կառավարությունը Զեյթուն է ուղարկել ոչ միայն Մարաշում գտնվող զորամասերը, այլև զորքեր Ուրֆայից ու Հալեպից՝ իրենց թնդանոթներով[3]: Նկատենք, որ նման դեպքերում թուրք փաշաների հրահանգներով միշտ էլ կանոնավոր

1 Զեյթունի պատմագիրք. Պուենոս Այրես, 1960, էջ 479:

2 Turkey, No. 1 (1880). Correspondence Respecting the Commission Sent by the Porte to Inquire Into the Condition of the Vilayet of Aleppo. London, 1880, p. 5.

3 Նույն տեղում, էջ 26:



զորքերին միանում էին զանազան ցեղերից կազմված բաշիբոզուկներ: Բնորոշ է, որ Քյամիլ փաշան ստիպված է եղել նորից գնալ Զեյթուն:

Հենդերսոնը 1878 թ. նոյեմբերի 14-ին զեկուցում էր Կ. Պոլսի իր դեսպանին, որ մի քանի օր առաջ զեյթունցիք հարձակվել են թուրքական զորամասի վրա: Տեղի ունեցած կռիվներում նրանք տվեցին 10 սպանված և բազմաթիվ վիրավորներ: Իշխանությանը հաջողվեց բանտարկել 40 մարդ[1]:

Զեյթունի անցքերի մասին գրեցին նաև իր ժամանակի թերթերը: Այսպես, օրինակ, Ս. Պետերբուրգի «Գոլոս» թերթը 1878 թ. սեպտեմբերի 18-ին (30-ին) տպագրեց հետևյալ թարմ լուրը, որը Վիեննայի «Պոլիտիշե կորեսպոնդենց» լրագիրը ստացել էր Կ. Պոլսից:

«...Զեյթունի հայերը ապստամբվել են սուլթանի իշխանության դեմ: Զեյթունը, որ գտնվում է Հալեպի վիլայեթում, ունի 30000 հայ բնակիչներ, որոնց մի անգամ չէ, որ արդեն համեմատում են չերնոգորցիների հետ... Մի քանի շաբաթ առաջ Բարձրագույն Դռան մեջ դժբախտ միտք ծագեց՝ Զեյթունից հավաքվող հարկերը տասնապատկել: Հայերը որոշեցին եռանդուն կերպով բողոքել այդ միջոցառման դեմ: Նրանք քանդեցին թուրքական մյուդիրի տունը և նրա ավերակների վրա տնկեցին սոխ ու սխտոր, որ նշանակում է, արտահայտել մեծագույն ատելություն»[2]:

Ապստամբներն այս անգամ իրենց ներկայացուցիչներն են ուղարկում Էրզրում, որպեսզի խնդրեն ռուսական զորքերի օժանդակությունը: Հետաքրքիր է նաև այն, որ այդ դեպքերի կապակցությամբ մեծ վեզիրը դիմում է Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանին, որպեսզի նա հնազանդեցնի ապստամբներին: Ներսես պատրիարքը պատասխանում է, որ ինքը այդ անկարող է անել, որովհետև ոչ մի ազդեցություն չունի Զեյթունի հայ բնակչության վրա: Այս մասին «Գոլոս» թերթը գրում էր. «Ապստամբները (զեյթունցիները – Մ. Ն.) Էրզրում ուղարկեցին պատգամավորներ, որպեսզի ռուսական գեներալ Լազարևից օգնություն՝ մասնավորապես զենք խնդրեն: Մեծ վեզիրը իմանալով այդ բոլոր անցքերի մասին, բողոքեց հայկական պատրիարք Ներսեսին, որը հառաչանքով պատասխանեց, որ ինքը Զեյթունի հայերի վրա չունի ոչ մի ազդեցություն: Այս բոլոր մանրամասնությունները հաղորդել է Զեյթունի հայերի արքեպիսկոպոսը, որ եկել է այստեղ (Կ. Պոլիս – Մ. Ն.) աշխարհական պատգամավորի հետ միասին: ...Կատարված բոլոր անցքերի մասին նա պատմեց առանց չափազանցությունների»[3]:

1 Նույն տեղում, էջ 4:

2 Голос. СПб., 1878, N 258.

3 Նույն տեղում:

Զեյթունցիների 1878–1879 թթ. հերոսական կռիվները, ինչպես նաև Բ. Դռան հայահալած բարբարոսական քաղաքականության կապակցությամբ Եվրոպայում ծավալված բողոքները ստիպեցին սուլթան Աբդուլ Համիդին ժամանակավորապես համաձայնության եզր գտնել հայ լեռնականների հետ: Այդ նպատակով Զեյթուն ուղարկվեց մի հատուկ հանձնաժողով, որի կազմի մեջ ընդգրկվեցին Մազհար փաշան, Նուրյան էֆենդին (Կ. Պոլսից), Հալեպի անգլիական հյուպատոսը և Կիլիկիայի հայոց կաթողիկոսը: Երկու կողմերը եկան համաձայնության. կառավարությունը համաձայնեց «ներում շնորհել» Պապիկ իշխանին և նրա զինակիցներին, ազատել շատ բանտարկյալների, խոստացավ պակասեցնել հարկերի չափը, որոշ պաշտոններ, այդ թվում Զեյթուն քաղաքի կառավարչի պաշտոնը թողնել հայերի ձեռքում, իսկ զեյթունցիները համաձայնվեցին, որ քաղաքում զորանոց կառուցվի:

Համաձայնագիրն, ընդհանուր առմամբ, բարենպաստ էր զեյթունցիների համար: «Մշակ» լրագիրը դեռևս 1879 թ. իրավամբ գրում էր, որ համաձայնության «այս պայմանները բոլորովին շահավոր էին հայոց համար, քիչ մը խոնարհություն անտեղի չէր»[1]: Հայկական շրջաններում համաձայնագիրը դիտվեց որպես զեյթունցիների հաղթանակ:

Զեյթունցիների վիճակի, նրանց 1878–1879 թթ. ապստամբության մասին հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում նաև արևմտյան պետությունների մի շարք հյուպատոսներ, միսիոներներ և այլ ներկայացուցիչներ: Այսպես, օրինակ, Հալեպի անգլիական հյուպատոսության զինվորական կցորդը լեյտենանտ Հերբերթ Ջըրմայդը*, որ 1879 թ. մայիսին տասն օր շրջել էր Զեյթուն քաղաքում և նրա շրջակա գյուղերում, նույն թվականի հունիսի 2-ի թվակիր իր զեկուցագրում՝ ուղղված Կ. Պոլսի անգլիական դեսպան Լայարդին, գրում էր, որ զեյթունցի հայերի վիճակը ամոթանք է պետությունների համար և որ «հազիվ թե չափազանցություն լինի, եթե այն անվանենք անարգանք մարդկության հասցեին»[2]: Առանձնապես հետաքրքիր են նրա մի այլ զեկուցագրի այն տողերը, որոնցում ասվում է, թե հայերը հայտարարում են, որ եթե «իրենք ժամանակ առ ժամանակ չպաշտպանեին իրենց գոյության իրավունքը, ապա բնաջնջման կենթարկվեին»[3]:

1870-ական թթ. Զեյթունում ծավալված ազատագրական շարժման մեջ առանձնապես աչքի ընկավ և լայն համբավ ձեռք բերեց Ենիտունյա-

1 «Մշակ», 1879, 209:

2 Turkey, N 1 (1880), Correspondence Respecting the Commission Sent by the Porte, p. 73.

3 Նույն տեղում, էջ 53:



յան նշանավոր տոհմի ներկայացուցիչներից մեկը՝ Պապիկ իշխանը, որին ժամանակակիցները ի նշան հարգանքի հորջորջում էին փաշա տիտղոսով: Իր ջերմ հայրենասիրության, ազնվության և զարմանալի արիության համար նա մեծ ժողովրդականություն է վայելել հայրենակիցների շրջանում: Հարկ է բերել որոշ տեղեկություններ նրա մասին:

«Մշակի» Կ. Պոլսի թղթակից Հայկակը (Ա. Արփիարյան), որը ուշադրությամբ հետևում էր Զեյթունում կատարվող անցքերին, իր՝ 1879 թ. նոյեմբերի 17-ը թվակիր նամակում հաղորդում էր. «Պապիկ իշխանը քառասունը տարեկան երիտասարդ մ'է, բարձրահասակ, թուխ դիմօք, երկայն և լայն հոնքերով. միշտ յուր վրա կկրե անդիի աշխարհ հզած չերքեզներու փառավոր զգեստներե մի մաս: Հեղափոխության ամենեն տաք միջոցին, երբ ի Զեյթուն թրքաց զորքերը կմտնեին, Պապիկ գիշերն գաղտագողի լեռներեն վար կիջներ, այնքան հանդուգն էր, թեպետ և յուր գլուխը բերողին 500 ոսկի խոստացվեր էր, սակայն յուր աչքերը կչափավորեին յուր հանդգնությունը: Աչքերուն վրա կոճիծներ ունի, որով դյուրավ կը ճանչցվի: Լեռներու մեջ յուր ընկերները սակավաթիվ էին, բայց դյուրին էր իրեն, երբ որ ուզում էր երկու հազարի չափ ընկերներ գտնել, բոլոր ջաղացպաններն յուր ձայնը կլսեն: Թրքաց ահուսարսափն է»[1]:

Նամակագիրը զեյթունցիների 1878–1879 թթ. հաջողությունները կապում էր խիզախ հայ լեռնականի անվան հետ: «Մենք ազգովին երախտապարտ լինելու ենք Պապիկ իշխանին և յուր արի զինակիցներուն» գրում էր նա: Հայկակը, այնուհետև, այն միտքն էր հայտնում, որ Պապիկ իշխանի և նրա զինակիցների զինված պայքարն «ավելի արդյունավոր եղան, քան վեհաժողովներ, անթիվ բողոքներ, կառավարությանց միջամտումներ»:

Պապիկ իշխանը, գրել է հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկը՝ Աղասին[2], «Բարձրահասակ, հաղթակազմ և իր ժամանակին Զեյթունի ամենեն գեղեցիկ մարդն էր: Գեղեցկության հմայքի հետ, ուներ նաև հոգեկան ազնվություն – վեհանձն, ներող, աչալուրջ ու անկողմնակալ մըն էր և վերին աստիճանի արագաշարժ: Ձենքերն ալ իրեն պես ընտիր ու մեկ հատիկ էին. Հազարապետի մը հետ մրցումի ատեն, ցույց տված, որ իր կայծքար քարելաքով ավելի արագ կը պարպեր, քան հազարապետը իր մարթինի հրացանով: Զարքաշ էր և անշահախնդիր. իր ամբողջ տիրապետության միջոցին, ոչ միայն չմտածեց հարստանալ, այլև

1 «Մշակ», 1879, N 209:

2 *Աղասի.* Զեյթուն և իր շրջակաները, էջ 117-118. *Aghassi,* Zeïtun.

*հորենական ժառանգությունն ալ կորսնցուց ժողովրդի փրկության համար և դարձավ ամբողջ Տորոսի առասպելական դյուցազնը: Իրեն կաջակցեր միշտ իր երկրորդ եղբայրը՝ Սարգիս իշխանը, որ օժտված էր իր ճարպիկություններով, բայց արտակարգորեն քիչ խոսող ու շատ գործող մեկն էր, որ հետագային մեծ զորավարներեն մին եղավ»*:*

*Քաջարի իշխանը ոչ միայն ղեկավարել է զեյթունցիների մի քանի ապստամբությունները, այլև տարիներ շարունակ հետևողականորեն վարել է պարտիզանական կռիվներ օսմանյան իշխանությունների դեմ: Նա առաջիններից մեկն էր, որ ստեղծեց հայդուկային ջոկատներ, որոնք նպատակ ունեին պայքարել օսմանյան և այլ կարգի ճնշողների ու հարստահարողների դեմ և պաշտպանել ժողովրդի շահերը:*

*1877 թ. գարնանը պոզտողան ցեղի աշիրապետ Պոյրազ օղլու Ալի բեկը իր 500 տուն ցեղակիցներով գրավեց Զեյթունի Կապան գյուղի դաշտավայրը և սկսեց այնտեղ եղած հացահատիկի ցանքսերում արածացնել իր և յուրայինների անասունները: Այդ վայրենի արարքի դեմ հայ և մահմեդական գյուղացիները բողոքեցին Մարաշի փաշային, բայց նա հրաժարվեց զբաղվել այդ հարցով: Այն ժամանակ գյուղացիները օգնություն խնդրեցին Պապիկ իշխանից: Անվեհեր հայդուկը առանց հապաղելու կազմեց մի ջոկատ և շարժվեց դեպի Կապան[1]:*

*«Պատերազմը սկսավ կատաղությամբ: Հայ իշխանին ռազմական կարգադրությունները այնքան խելացի էին, որ թշնամին շուտով ջախջախվեցավ... Պապիկի առաջին հարվածին զարնվեցավ Պոյրազ օղլուն, իր հետ ինկան նաև հինգ-վեց ձիավորներ: Հայ հետևակներ գետին փռեցին թշնամիի բազմութենեն շատերը... Հայերը պաշարեցին զանոնք և ամեն կողմե սկսան անխնա ջարդել: Թուրքմենները շվարված՝ սկսան ասդինանդին ցրվել: Իրենց ցեղապետի մահը շվարեցուց զիրենք և հազիվ թե պատերազմը տևեց մեկ ժամ. սարսափահար փախան անոնք շատ հեռուները և զեյթունցիներուն թողուցին իրենց բոլոր արջառները, ձիերը, վրաններն ու ոսկեղեն զարդերը»[2]:*

*Նույն այս միջադեպի մասին մի այլ հեղինակ գրում է. «Պոզտողան աշիրեթին պետ Փոյրազ-Ալի՝ իբրև տերեպեյի իրավունք սեպած էր Կապանի հայ գյուղացիներուն կորեկի ցանքը կերցնել իր անասուններուն: Կապանի Վարդիվար քէհյան Մարաշ կերթա և այս անիրավության դեմ կբողոքե: Փաշան «Ես պոզտողանցիները չեմ կրնար զսպել, այս տարի ալ կորեկի հաց մի ուտեք» ըսելով քովեն կվռնտե քէհյան, որ գյուղացիներուն գալով կպատմե եղելությունը: Գյուղացիներ ճարահատ կդիմեն Զեյթունի պաշտպանության: Պապիկ փաշան սիրով կընդունի առաջարկը և զարնել կուտա նվիրական թմբուկը, զոր օծած էր Սարգիս եպիս. Կիլիկյան, և կհնչեցուցեր իբրև զորակոչ: Թիվով շուրջ 300 քաջեր կհավաքվին, որոնց գլուխ անցած Պապիկ փաշա կերթա Զեյթունեն 16 ժամ հեռու Կապան, կզարնե Փոյրազ-Ալին, որ իբր նախամարտիկ արշաված էր Պապիկ փաշայի դեմ: Հետո պոզտողանցիներու վրանները արշավելով հազարավոր թիվով կիներ, աղջիկներ ու լամուկներ գերի կվարե Զեյթուն, բերելով նաև բոլոր անասունները – ուղտ, եզ, կով, ձի, էշ, ոչխար: Զեյթունցիք գերիներուն պատվույն չեն դպչիր բնավ և հանդիստ պահելե ետքը կվերադարձնեն, բայց կենդանիները կբաժնեն զեյթունցիներուն»: Ճակատամարտը տեղի է ունեցել բաց դաշտում, ընդ որում, աշիրեթի զորամասը կազմված է եղել հեծյալներից, իսկ Պապիկ իշխանի զինվորները «բոլորն ալ հետիոտն էին»[1]:*

*Ապստամբության շրջանում Զեյթուն այցելած ամերիկյան հյուպատոս Մոնտգոմերին 1879 թ. հունվարի 3-ին հայտնում էր, որ նոր տարվա գիշերը լեռներից իջած հայ մարտիկները հարձակվելով թուրքական պահակախմբի վրա, գրավեցին Զեյթունի բանտը և ազատեցին բոլոր բանտարկյալներին: Չորս օր հետո այդ մասին մոտավորապես նույնն էր գրում վերոհիշյալ հյուպատոս Հենդերսոնը. «Պապիկը իր երեսուն զինակիցներով պաշարեց բանտը, ջարդեց դրա դռները և ազատեց բանտարկյալներին»[2]:*

*Պապիկ իշխանի ջոկատը ունեցավ նաև այլ հաջողություններ: 1878 թ. նա գերի վերցրեց կայմակամին և նրա պաշտոնյաներին, իսկ հաջորդ թվականին ոչնչացրեց թշնամու մի զորախմբի մեծ մասը[3]: Թուրքական կառավարության բոլոր փորձերը՝ գերել կամ պարտության մատնել Պապիկին՝ մնացին անհետևանք: Բ. Դռան պաշտոնական ներկայացուցիչները դիմեցին բանակցությունների և առաջարկեցին նրան ցած դնել զենքը և ենթարկվել կառավարությանը, բայց անվեհեր հայրենասերը մերժեց այդ պահանջը:*

*Այս և նման բնույթի կռիվներ Պապիկը մղել է շատ անգամ, միշտ հանդես բերելով զարմանալի արիություն և անձնազոհություն: Իրենց սխրանքներով աչքի են ընկել նաև նրա շատ զինակիցները՝ Վառվառ,*

1 *Զեյթունցի.* Զեյթունի անցեալէն և ներկայէն..., էջ 134-135:

2 *Աղասի.* Զեյթուն և իր շրջակաները..., էջ 119:



1 *Գ. Հ. Գալուստեան.* Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, էջ 145:

2 Turkey N 1 (1880), p. 16-17.

3 *Զեյթունցի.* Զեյթունի անցեալէն և ներկայէն... էջ 139-144: *Կ. Թումայեան.* Պատմութիւն Արեւելեան խնդրոյ և առաջնորդ Հայկական հարցի, հ. Բ, Լոնդոն, 1905, էջ 579:

*Քացախ Փանոս, Մարաշցի Սարգիս, Պապիկի քեռորդի Մերկենյան Հաճի և ուրիշներ*[*]:*

*Պապիկ Մարկոսի Ենիտունյայանը չունեցավ երկար կյանք: «Այս պատվական անձը հիվանդութեամբ կը մեռնի 1886 թ. օգոստոսի 21-ին, 40 տարու և կթաղվի Ս. Աստվածածին վանքին բակը»*[1]*: Կան ենթադրություններ, որ Պապիկ իշխանին թունավորել են թուրքական իշխանությունները:*

*Նկատենք, որ Ենիտունյայանների տոհմը տվել է մի շարք այլ նշանավոր գործիչներ: 1860-ական թթ., օրինակ, զեյթունցիների ազատագրական շարժման մեջ աչքի ընկավ Աստվածատուր իշխանը, իսկ 1895–1896 թթ. նշանավոր ապստամբության ժամանակ՝ Պապիկի կրտսեր եղբայր Նազարեթ Չավուշը:*

*Ուշադրության արժանի է այն փաստը, որ 1870-ական թթ. երկրորդ կեսին և մասնավորապես 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին Զեյթուն են ժամանել մի շարք հայ գործիչներ Էրզրումից, Իզմիրից և Կ. Պոլսից: Հայտնի է, օրինակ, որ այդ ժամանակ Իզմիրից Զեյթուն է եկել երիտասարդ Ղուկաս Փափազյանը, որը, ինչպես հաղորդում է Աղասին, «կդրդեր հայերը, որ անձնատուր չըլլան» և կապեր է ունեցել 1878 թ. ապստամբության ղեկավարներից վանահայր Նիկողայոս եպիսկոպոս Դավթյանի և Հարություն վարժապետ Չագրյանի հետ*[2]*: Նույն վանահայրը հանդիպումներ է ունեցել ինչ-որ մի «օտարականի» հետ, որը «օգտվելով պատերազմի պատեհութենեն» ցանկացել է «ոտքի հանելու Զեյթունը թուրք իշխանության դեմ»: Գրավոր աղբյուրներից մեկում ասված է, որ «Սրբազանը և այդ օտարականը օրերով խորհրդակցեցան ազգին փրկությունը ձեռք բերելու միջոցներուն վրա»*[3]*: Ըստ երևույթին «օտարականը» եղել է ռուսական զինվորական կամ դիվանագիտական ներկայացուցիչներից մեկը:*

*Նկատենք, որ դրսի ուժերի հետ կապվելու ուղղությամբ նախաձեռնություն ցուցաբերեցին իրենք՝ զեյթունցիները: 1876 թ., օրինակ, իշխան Ղազար Շավրոյանը անցավ Կովկաս և հոկտեմբեր ամսին Նոր Նախիջևանում տեսակցություն ունեցավ Ռափայել Պատկանյանի հետ*[4]*: Բանաստեղծի հանձնարարական նամակներով՝ ուղղված Ս. Պետերբուրգում ապրող Կարապետ Եզյանին, Մկրտիչ Սանասարյանին, Փիլիպպոս Վարդանյանին և ուրիշներին, նա եղավ Ռուսաստանի մայրաքաղաքում, որպեսզի խնդրագիր ներկայացնի ռուս թագավորին: Այս մասին Փ. Վարդանյանի 1876 թ. հոկտեմբերի 15-ի թվակիր պատասխան նամակում՝ ուղղված Ռ. Պատկանյանին, ասված է. «Զեյթունցին երեկ երեկոյան, ժամը 9-ին հասավ ինձ՝ ձեր նամակներով հանդերձ: Գիշերն իմ մոտ պահեցի, հյուրասիրելով ինչքան որ կարող էի. այս առավոտ պ. Սանասարյանի մոտ տարի... արդյոք գիտե՞ք, թե այս Ղազարը ինչո՞ւ է եկել Պետերբուրգ, ինչո՞ւ է թափել այսքան քրտինք, կրել այսքան չարչարանք, նեղություն, տառապանք: Եկել է անոր համար, որ մի խնդիրք տա թագավորին... «Զունքի թագավորը զորավոր է, մեծ է, բարի, պեքիմ աղեկություն մը կընե»: Միամի՜տ, անմեղ, ողորմելի Ղազար...»*[1]*:*

*Մեկ տարի անց՝ 1877 թ., զեյթունցիների ներկայացուցիչները ժամանեցին Էրզրում և ռուսական հաղթական բանակի հրամանատարությանը դիմեցին իրենց անհրաժեշտ օգնություն ցույց տալու խնդրանքով: Այս փաստն արձանագրվեց դեռ իր ժամանակի մի շարք պարբերական հրատարակություններում*[2]*:*

*Ի վերջո, պետք է նշել, որ Զեյթունի շուրջը ստեղծված այս իրադրության պայմաններում բնական է, որ փորձեր են արվել հիմնելու գաղտնի խմբակ (կազմակերպություն)՝ դրսի ուժերի օգնությամբ հայ լեռնականներին օսմանյան տիրապետության դեմ ոտքի հանելու համար: Այս մասին է վկայում, օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվում պահպանված մի փաստաթուղթ, որը հանդիսանում է ծրագիր (ավելի ճիշտ նախագիծ) ինչ-որ գաղտնի կազմակերպության գործունեության համար: Հայատառ թուրքերենով գրված այդ վավերագրում շարադրված են խմբակի նպատակները, անելիքները, մի շարք մարդկանց պարտականությունները և այլն: Ինը կետից բաղկացած այդ ծրագրում նախ ասված է, որ պետք է ապստամբել այն ժամանակ, երբ օսմանյան տիրապետության դեմ Բալկաններում կամ այլ տեղ կծավալվի ազատագրական շարժում: «Օսմանյան պետության Ռումելիի շրջանում կամ մի այլ վայրում, ապստամբության ծագելու դեպքում, մենք ալ 5-6 ամիս հետո, այդ շարժման թեժ պահին, մեր կողմերում ևս ապստամբություն ենք բարձրացնելու»*[3]*: Այնուհետև նշվում էր, որ պետք է դիմել միայն Ռուսաստանի օգնությանը և գործել նրա դեսպանի միջոցով: Նախագծի մյուս հատվածներում ասվում էր, որ նախապատրաստվելիք ապստամբության*

---

1 *Գ. Հ. Գալուստեան.* Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, էջ 145:
2 *Աղասի.* Զեյթուն և իր շրջակաները..., էջ 122:
3 Քաղվածքը տե՛ս *Հ. Մ. Պողոսյան.* Զեյթունի պատմությունը. Ե., 1969, էջ 285:
4 ԳԱԹ, ֆ. Ռ. Պատկանյանի, N 270/1996: *Ռափայել Պատկանյան.* Երկերի ժողովածու. հ. 6, Ե., 1970, էջ 444-445:

---

1 *Ռ. Պատկանյան.* Երկերի ժողովածու. հ. 6, էջ 611:
2 Տե՛ս Голос, 1878, N 258; «Մշակ», 1878, N 165:
3 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 21, վավ. 1410:

ղեկավարության մեջ պետք է մտնեն Զեյթուն քաղաքի չորս իշխանները, որոնք հավաքվելով եկեղեցում, պետք է «սուրբ Ավետարանի, սուրբ խաչի ու սուրբ խորանի առաջ երդում տան: Իրենց խոստումն ու երդումը դրժողները համարվելու են դավաճան (հուդա) Աստծու, հայրենիքի և հայության առաջ: Այս իսկ պատճառով բոլորի խոսքն ու միտքը մեկ է լինելու»[1]:

Նախատեսվում էր Զեյթունում ստեղծել գաղտնի արհեստանոց, որպեսզի այնտեղ արտադրվեր շատ վառոդ ու զենքի նոր տեսակներ: Այդ նպատակով պետք է հրավիրվեին հայ վարպետներ ու արհեստավորներ Կ. Պոլսից և անգամ 5-6 հոգի Ամերիկայից: Սպասվում էր դրամական օգնություն՝ Թիֆլիսից: Որպես շարժման ղեկավարներ, հիշատակվում են նաև «հայր սրբազանը», Պողոսյանը, Պողոս բեյը, Աստվածատուր և Հակոբ աղաները:

Փաստաթուղթը, դժբախտաբար, չունի թվական և այդ պատճառով դժվար է ասել, թե երբ է ստեղծվել այն: Սակայն նրանում հիշատակված մի շարք անունները հիմք են տալիս ենթադրելու, որ գաղտնի կազմակերպություն հիմնելու այս փորձը տեղի է ունեցել 1860-ական թթ. վերջերին կամ հաջորդ տասնամյակի սկզբներին: Ավելի պարզ է մի բան, որ ծրագրվող գաղտնի խմբակը չի ստացել վերջնական ձևավորում կամ թե չի կարողացել ձեռնարկել գործնական քայլեր: Համենայն դեպս, համապատասխան գրականության մեջ նրա մասին չկան տեղեկություններ:

1870-ական թթ. կեսերին քաղաքական-ազատագրական նպատակներ հետապնդող մի խմբակ (ընկերություն) հիմնվել է նաև Արևելյան Հայաստանում: Արխիվային նյութերից պարզվում է, որ 1874 թ. հունիս ամսին Մեծ Ղարաքիլիսա գյուղում ստեղծվել է մի ընկերություն, որ կոչվում էր «Կանտորա հայրենյաց սիրո»: Խմբակի կառավարիչն է եղել Գևորգ Խոսրովյանցը, քարտուղարը՝ Համբարձում Բալասանյանը, իսկ անդամներ՝ Ալեքսանդր Լազարյանցը, Մկրտիչ Լազարյանցը, Բաղդասար Զարխչյանցը և ուրիշներ: Խմբակն ունեցել է կիսալեգալ բնույթ, նրա անդամները ցանկացել են պարապել «ազգօգուտ գործերով»: Համբարձում Բալասանյանի 1874 թ. հունիսի 29-ի թվակիր նամակում, ուղղված ոմն Արշակ Տեր-Ղազարյանցի, «Կանտորայի» մասին ասված է. «Ամսույս 20-ին մի քանի արիական հայ ազգի զավակունք, ոմանք հաղագս ծառայության և ոմանք հաղագս երկար ժամանակյա օդափոխության եկան այսօր ի գյուղն Մեծ Ղարաքիլիսա Փամբակա ձորվո Ալեքսանդրապոլու գավառի, և գումարյալ ի միասին անձնանվեր համահաճությամբ համարեցին վասն յուրյանց կազ-

1 Նույն տեղում:



մել մի սենյակ անվանագրել «Կանտորյա հայրենյաց սիրո» ... որոշեցին ի նույն Կանտորն հավաքելու յուրաքանչյուրում շաբաթու երեք օր հաղագս զանազան լրագրեր կարդալու, նմանապես ազգային զպատմությունս և միով բանիվ ամենատեսակ ազգօգուտ գործոց վերա մտածելու, բացի ի տերությանց գործոց, որն որ արգելված է, այնպես որ չիցե յուրյանց հայության նախկին սերն այս գյուղումն ռամկորեն ի մոռացության ենթարկեն, այլ ունեցին դարբասիս անմահ հիշատակության»[1]:

Ինչպես տեսնում ենք, Բալասանյանը բավական համեստ ձևով է ներկայացնում «Կանտորա հայրենյաց սիրո» խմբակի հետապնդած նպատակները: Սակայն նամակի այն արտահայտությունը, թե հավաքվել են մի քանի «արիական հայ ազգի զավակունք», որպեսզի մտածեն «ամենատեսակ ազգօգուտ գործոց վերա», հիմք է տալիս կարծելու, որ «Կանտորան», այնուամենայնիվ, ունեցել է քաղաքական բնույթ: Այս կարծիքը ավելի հավանական է թվում, երբ ծանոթանում ենք խմբակի մասին Երևանի նահանգական ժանդարմական վարչության պետ Զոլոտովկու կազմած զեկուցագրերին: Զեկուցագրերում հաճախ հիշատակվում է, որ «Կանտորայի» անդամների մոտ կատարած խուզարկության ժամանակ հայտնաբերվել են «մի քանի բանաստեղծություններ, որոնցում կոչ է արվում պայքարել Հայաստանի անկախությունը վերականգնելու համար»[2]: Արխիվային նյութերը հիմք են տալիս ասելու, որ խոսքը վերաբերում է Արևմտյան Հայաստանի ազատագրությանը: Կարող է տարակուսանք առաջացնել այն հանգամանքը, որ Բալասանյանի նամակում ասված է, թե «Կանտորայի» անդամները իրենց առաջ նպատակ են դրել զբաղվել շատ հարցերով, «բացի տերության վերաբերող հարցերից»: Բայց չպետք է մոռանալ, որ Արևմտյան Հայաստանում քաղաքական, ազատագրական շարժումները կազմակերպելու խնդիրը նրանք չէին համարում ռուսական պետությանը վերաբերող հարց: Այսպիսով, պետք է կարծել, որ «Կանտորայի» անդամները զբաղվել են արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հարցով, բայց այն չեն համարել «տերության վերաբերող» գործ:

Խմբակի մասին կազմված ժանդարմական գործի տվյալներից ելնելով, կարելի է ասել, որ չնայած «Կանտորային» չի հաջողվել ծավալել գործնական-քաղաքական լայն աշխատանք, բայց նա իսկապես եղել է քաղաքական բնույթի խմբակ: Չպետք է մոռանալ նաև այն, որ քաղաքական հարցերով զբաղվող խմբակներն ու կազմակերպությունները շատ

1 ЦИАМ, 3-е отд., 3-я экспед., д. 120, л. 102.

2 Նույն տեղում, թ. 95:

հաճախ հանդես էին գալիս ինքնազարգացման և ինքնակրթության քողի տակ: Ոչ մի հիմք չկա կարծելու, որ այդպիսիների թվին չէր պատկանում նաև Մեծ Ղարաքիլիսայում 1874 թ. հիմնված «Կանտորա հայրենյաց սիրո» խմբակը:

Երևանի նահանգական ժանդարմական վարչության պետ մայոր Զոլոտովսկին 3-րդ բաժանմունքին ուղղված իր 1875 թ. ապրիլի 8-ի թվակիր զեկուցագրում տեղեկություններ էր տալիս «Կանտորայի» անդամների մասին: Այդ տեղեկություններից պարզվում է, որ խմբակի կառավարիչ Գևորգ Խոսրովյանցն ալեքսանդրապոլցի էր և այգեգործությամբ էր զբաղվում Ախալցխայում, խմբակի քարտուղար Համբարձում Բալասանյանը սովորել է Ալեքսանդրապոլի գավառական դպրոցում, ապա թարգմանի պաշտոն է վարել Կարսում և Ալեքսանդրապոլում: Խմբակի անդամներ Բաղդասար Զարխչյանցը Ղարաքիլիսայի բնակիչ էր, զբաղվել է թամբագործությամբ: Ալեքսանդր Լազարյանցը նույնպես ղարաքիլիսեցի, զբաղվել է աղի վաճառքով և բրդի գնումներով, իսկ նրա եղբայրը՝ Մկրտիչ Լազարյանցը պարապել է կոշկակարությամբ[1]:

Մեծ Ղարաքիլիսայում հիմնված «Կանտորա հայրենյաց սիրո» խմբակը չունեցավ երկար կյանք: Նրա գոյությունը տևեց մոտ մեկ տարի: 1875 թ. ապրիլ ամսին Երևանի նահանգական ժանդարմական վարչությանը հաջողվում է հայտնաբերել «Կանտորան» և վավերացնել: Դրանից անմիջապես հետո, հայտնաբերվում է նաև Ալեքսանդրապոլում կազմակերպված «Բարենպատակ ընկերություն» խմբակը, որի մասին մենք արդեն խոսեցինք նախորդ գլխում: Կազմվում է մի ընդհանուր գործ, որի հետաքննությունը տևում է մեկ տարուց ավելի: «Կանտորայի» անդամների նկատմամբ սահմանվում է ոստիկանական հսկողություն:

Հայ ազատագրական պայքարը զգալիորեն ուժեղացավ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, պատերազմ, որը վճռական դեր խաղաց սուլթանական լծի տակ հեծող մի շարք ժողովուրդների, մասնավորապես, բուլղարների ազգային ազատագրության գործում:

Օսմանյան կայսրության մեջ ազատագրական շարժման մի նոր ալիք բարձրացավ 1870-ական թթ. երկրորդ կեսին: 1875 թ. սուլթանական բռնապետության դեմ ապստամբություններ բռնկվեցին Բոսնիայում և Հերցեգովինայում: Մեկ տարի հետո ապստամբության դրոշ բարձրացրին բուլղարները: Նույն 1876 թ. Բ. Դռանը պատերազմ հայտարարեցին Սերբիան և Չեռնոգորիան: Արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը սրի ու հրի միջոցով ճնշեց իրենց ազատության համար ոտքի ելած ազգություն-

1 Նույն տեղում, թ. 103:



ների այդ ընդվզումները: Անօրինակ գազանություններ կատարվեցին հատկապես Բուլղարիայում:

Սլավոնական ժողովուրդների հերոսական պայքարը և թուրքական զորքերի բարբարոսությունները մեծ շարժում առաջացրին Ռուսաստանում: Հասարակության լայն խավերը պահանջեցին օգնության ձեռք մեկնել եղբայրական ժողովուրդներին և ազատել նրանց թուրքական դաժան տիրապետությունից: Ցարական կառավարությունը օգտագործեց ստեղծված իրադրությունը և, իր արտաքին քաղաքականության ծրագրերն իրագործելու նպատակով, հանդես եկավ ապստամբների պաշտպանության դերում: 1877 թ. ապրիլին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային:

Պատերազմական գործողությունները ծավալվեցին Բալկաններում (գլխավոր ռազմաբեմը) և Կովկասյան ռազմաճակատում՝ հիմնականում Արևմտյան Հայաստանում: Ռուսական բանակի կովկասյան կորպուսը 1877 թ. ընթացքում գրավեց Կարսը, Կարլ Մարքսի խոսքերով ասած «Հայաստանի այդ շատ հարուստ և առավել իրացված մասը»[1], Արդահանը, Օլթին, Ալաշկերտը, Բայազետը, Բաթումը և Արևմտյան Հայաստանի ու Վրաստանի մի շարք այլ կենտրոններ: 1878 թ. փետրվարին ռուսական զորքերը գրավեցին Էրզրումը (Կարինը): Ռուս-թուրքական այս պատերազմը, որ մղվում էր օսմանյան ծանր լծի տակ հեծող սլավոնական ժողովուրդների ազատագրության նշանաբանով, մեծ ոգևորություն և հույսեր առաջացրեց ամբողջ հայության մեջ: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ կովկասյան գործող կորպուսի հրամանատարն էր հայազգի գեներալ Մ. Տ. Լորիս-Մելիքովը, իսկ առանձին զորամասերի հրամանատարներ էին նշանավոր գեներալներ Ա. Հ. Տեր-Ղուկասովը, Ի. Դ. Լազարևը, Բ. Մ. Շելկովնիկովը, Ս. Օ. Քիշմիշևը և այլ հայ զինվորականներ:

Ոգևորությունը մեծ էր և՛ արևմտահայության, և՛ կովկասահայության մեջ: Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը նոր փորձեր կատարեց ռուսական զորքերի օգնությամբ ազատագրվելու թուրքական սուլթանների ու փաշաների դաժան տիրապետությունից: Հայ ժողովրդի լայն խավերը, նախորդ տարիների օրինակով, ակտիվ մասնակցություն ունեցան պատերազմական գործողություններին և իրենց ուժերի ներածին չափ փոխադարձ օգնություն ցույց տվին ռուսական բանակին:

Թուրքական զորքերի դեմ կռվելու նպատակով Կովկասյան ռազմաճակատում կազմակերպվեցին նաև հայկական կամավորական բազմաթիվ

1 *К. Маркс и Ф. Энгельс.* Сочинения. Т. 9, с. 117.

*ջոկատներ ու զորամասեր: Երևանի նահանգի բնակիչներից, օրինակ, ստեղծվեց մի հեծյալ զորամաս, որ կրում էր Ալեքսանդրապոլի հեծյալ-իռեգուլյար գունդ անունը: Կամավորական ջոկատներ ստեղծվեցին Շիրակում, Զանգեզուրում, Էջմիածնում, Լոռի-Փամբակում և այլուր: Միաժամանակ, Անդրկովկասի տարբեր մասերում կազմակերպվեցին միլիցիական ջոկատներ՝ կազմված տեղական բնակիչներից: Նման կարգի ջոկատներ ստեղծվեցին Թիֆլիսում, Ախալքալաքում, Ախալցխայում, Երևանում, Գանձակում, Ղարաբաղում և այլ վայրերում: Երբ ռուսական զորքերը ոտք դրեցին Արևմտյան Հայաստան՝ տեղական բնակչությունը կազմակերպեց զինված ջոկատներ և ակտիվ կերպով պայքար մղեց սուլթանական բանակի դեմ: Արևմտահայերի ամենալայն խավերը ցանկություն էին հայտնում ընդունվելու ռուսական զորքերի շարքերը: 1877 թ. ապրիլի 19-ին Կովկասի փոխարքան ցարի անունով ուղարկած իր հեռագրերից մեկում հայտնում էր, որ «Կարսի փաշայության այն բնակիչները, որոնք ցանկություն են հայտնել ընդունվելու մեր զինվորական ծառայության մեջ, այնքան մեծ զանգված են կազմում, որ գեներալ–ադյուտանտ Լորիս-Մելիքովը միանգամայն անհրաժեշտ է համարում այժմ և իսկ սկսել կազմակերպել առայժմ մեկ հեծյալ-իռեգուլյար գունդ: Այդ բանի համար ես նրան տվեցի թույլտվություն»[1]: Նմանօրինակ տրամադրություններ և շարժում էին նկատվում նաև Բայազետում, Ալաշկերտում, Մուշում և Արևմտյան Հայաստանի մյուս վայրերում:*

*Կամավորական ջոկատները, ոգեշնչված ռուսական բանակի փայլուն հաղթանակներով, անձնվեր ու հերոսական պայքար էին մղում թուրքական զավթիչների դեմ: Վերը նշված Ալեքսանդրապոլի հեծյալ-իռեգուլյար գնդի շատ մարտիկներ արժանացան պարգևատրման: Ռուսական կովկասյան բանակի շտաբի պետի պարտականությունները կատարող գեներալ-լեյտենանտ Պավլովը հատուկ հրամանով նշում էր, որ 1877 թ. հոկտեմբերի 2-ին և 3-ին թուրքական զորքերի հետ ունեցած ճակատամարտերում ցուցաբերած արիության համար պարգևատրման են արժանացել գնդի հրամանատար Եդիգարովը, պորուչիկ Մակաևը, պոդպորուչիկ Իշխանովը և ուրիշները[2]:*

*Պատերազմի սկզբներին Թիֆլիսում տեղական հայերից ու վրացիներից կազմակերպվեց կամավորական մի ջոկատ, որի սխրագործությունների մասին հետաքրքիր տեղեկություններ են հայտնում ժամանակակիցները: Թիֆլիսում հրատարակվող թերթերից մեկի զինվորական թղթակիցը*

1 РГВИА, ф. ВУА, д. 78664. л. 23.

2 Кавказ, 1878, N 14.



*1877 թ. հունիսի 4-ին գրում էր. «Ընթերցողներին լավ հայտնի է Գուրիական ջոկատների քաջագործությունների մասին... բայց մինչ այժմ մենք չէինք կարող ասել, թե ինչպե՞ս է գործելու Թիֆլիսի ջոկատը, որը, ինչպես հայտնի է, կազմված է հայերից ու վրացիներից: Մայիսի 21-ի ճակատամարտը ցույց տվեց նաև նրանց: Բոլորը միաձայն ասում են, որ նրանք իրենց պահեցին որպես անվեհերներ և կռվեցին անբասիր քաջությամբ: Կռվի ամբողջ ժամանակ ջոկատը գտնվում էր առաջին գծի վրա և միշտ առաջ էր նետվում, ինչպես ասում են ականատեսները: Ինձ հաջողվեց հարյուրակի հրամանատարից ջոկատի վերաբերյալ իմանալ հետևյալը: Խոսելով իր հարյուրակի արիության մասին, նա չէր կարողանում առանց արցունքների խոսել մի քանի հերոսների սխրագործությունների մասին, հերոսներ, որոնք, դժբախտաբար, ճակատամարտերում սպանվել են: Ինձ ուղղակի զարմացնում էր, ասում էր նա, ոմն Սարկիսովի արիությունը...»[1]: Այնուհետև թղթակիցը բերում էր մի շարք օրինակներ կամավորների քաջագործությունների մասին և անում եզրակացություն, որ Թիֆլիսի ջոկատը պատվով ու արիությամբ է կատարում իր խնդիրները:*

*Հայ բնակչությունն ինչպես Կովկասում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում մեծ չափով ընդգրկվել է նաև այն ջոկատներում, որոնք հիմնվեցին պահակային ծառայություն կատարելու համար: Գեներալ-մայոր Դուխովսկոյը, օրինակ, գրում էր, որ Էրզրումում ռուսական զորահրամանատարության կողմից կազմակերպված պահակախմբերի մեջ առանձնապես սիրով ու ոգևորությամբ մտնում էին տեղական հայերն ու հույները, որոնք «զինավորվելով սրերով, մեծ ջերմեռանդությամբ դիմում էին իրենց նոր պարտականությունների կատարմանը»[2]:*

*Ոգևորված հայրենասիրական գաղափարներով, ուշադրության արժանի սխրագործություններ կատարեցին ռուսական բանակի շարքերում գտնվող մի շարք կամավորներ: Այս տեսակետից հետաքրքիր է առանձնապես Բայազետի նշանավոր պաշտպանության ժամանակ կամավոր Սամսոն Տեր-Պողոսյանի ցուցաբերած սխրագործությունը: Զորս կողմից Բայազետի բերդում պաշարված ռուսական զորամասի հրամանատարությունը որոշում է ստեղծված ծանր վիճակի մասին անհապաղ տեղեկություն տալ Երևանյան ջոկատի հրամանատար գեներալ-մայոր Տեր-Ղուկասովին: Այդ ծանր և վտանգավոր պարտականությունը ինքնակամ կերպով իր վրա է վերցնում Տեր-Պողոսյանը: Օգտվելով գիշերվա խավարից, նա իջնում է*

1 Тифлисский вестник, 1877, N 118.

2 *С. Духовской.* Русские в Эрзеруме в 1878 году. СПб., 1878, с. 11.

*բերդից և բանեցնելով մեծ ճարպկություն, հաղթահարում է բազմաթիվ դժվարություններ ու հաջողությամբ կատարում իր վրա դրված պարտականությունը[1]: Տեր-Ղուկասյանն իր ցուցաբերած այդ արիության համար ստացավ միլիցիայի պրապորշչիկի աստիճան և պարգևատրվեց զինվորական ոսկե մեդալով: Այս դեպքերը, ինչպես հայտնի է, իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել Րաֆֆու «Խենթը» վեպում*:*

*Պետք է նշել, որ թեև 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Կովկասի հայ բնակչության համար դեռևս չէր սահմանված պարտադիր զինվորական ծառայություն, այնուամենայնիվ, ռուսական կանոնավոր բանակի շարքերում կային որոշ թվով հայ մարտիկներ, որոնք վրացի, դաղստանցի և այլ ազգության զինվորների հետ միասին, ակտիվ մասնակցություն են ունեցել թուրքական բանակի դեմ մղված կռիվներին: Նրանց մի մասը, ինչպես երևում է Կովկասյան բանակի շտաբի հրամաններից, արժանացավ պարգևատրման: Այսպես, օրինակ, նշված հրամաններից մեկում, որպես պարգևատրվածներ, հիշվում էին պրապորշչիկ Տեր-Ասատուրովը, պորուչիկ Կորգանովը, պոդպորուչիկ Ավետիկովը, հարյուրապետ Քուշնարյովը, պոդպորուչիկներ Մուրադխանովը, Ամիրովը և այլն[2]:*

*Հայ ժողովրդի հայրենասիրական-ազատագրական շարժումը պատերազմի տարիներին, սակայն, արտահայտվեց ոչ միայն հայ կամավորների ու նրանց ջոկատների գործունեությամբ, այլև այն օգնությամբ, որ ցույց էին տալիս հայ ժողովրդի ամենալայն խավերը ռուսական զորքերին: Օգնությունն ընդունում էր զանազան ձևեր և կատարվում էր բոլոր հնարավոր միջոցներով: Ահա մի քանի օրինակներ: «Կավկազ» թերթի զինվորական թղթակիցը 1877 թ. օգոստոսին գրում էր. «Այս ամսի 15-ին, Իգդիրից 6-7 վերստ հեռավորության վրա, Խալֆալու գյուղի մոտ տեղի ունեցավ մի ոչ մեծ ընդհարում թուրքերի հետ, ընդ որում մեր կողմից սպանված է 1 և վիրավորված 5 հոգի, թուրքերից սպանվել են 150 մարդ: Ճակատամարտի ժամանակ Խալֆալուի հայ բնակիչներից շատերը ամբողջ ժամանակ գտնվում էին առաջին գծի վրա և գնդակների տարափի տակ խմելու ջուր էին հասցնում զինվորներին, չնայած նրան, որ զինվորներն ավելորդ զոհերից խուսափելու համար իրենք առաջարկում էին գյուղացիներին հեռանալ կռվի դաշտից: Խալֆալեցիների այս քաջարի վարմունքը, ինքնին հասկանալի է, որ արժանի է մեծ գովասանքի»[3]:*

1 *Ф. И. Булгаков.* Геройская оборона Баязета. СПб., 1878, с. 13-14.

2 Кавказ, 1878, N 18, 19.

3 Նույն տեղում, N 170.



*Պատերազմի առաջին իսկ օրերին, երբ անհրաժեշտ էր արագ կերպով կամուրջ կառուցել Ախուրյանի վրա, Ալեքսանդրապոլի բնակիչներն ամենաեռանդուն կերպով օգնեցին ռուսական զորքերի սակրավորներին: Այս առթիվ ժամանակակիցներից մեկը գրում է. «Կառուցվում էր կամուրջ, որը պիտի միանար թուրքական ափի այն կետի հետ, որտեղից գնում է գլխավոր ճանապարհը դեպի Կարս: Ալեքսանդրապոլի բնակիչները, որոնց թվում շատ ատաղձագործներ, օգնում էին սակրավորներին... բնակիչների այդ եռանդուն ու միահամուռ օգնության շնորհիվ կամուրջն արդեն պատրաստ էր օրվա կեսին: Հավաքվածները աղմուկով շարժվեցին կամուրջի վրա: Այդ առաջին փորձն էր, որից հետո շարժվեց զորքը հրետանու հետ միասին»[1]:*

*Միայն 1877 թ. Երևանի նահանգի բնակիչները ռուսական զորքերին տրամադրեցին 35858 սայլ, 1074 ձի և 5703 ուղտ[2]: Միաժամանակ զորքին ուղարկում էին ալյուր, հաց, գինի և այլ տեսակի սննդամթերք:*

*Մեծ հոգատարություն էր հանդես բերվում վիրավորված զինվորների նկատմամբ:* «Тифлисский вестник» *թերթը գրում էր, որ Ղարաքիլիսա գյուղի շատ բնակիչներ իրենց տները տրամադրեցին տեղի հոսպիտալի վիրավորներին[3]: Նույն թերթը հայտնում էր, որ ռուսական բանակի վիրավոր զինվորներին սրտալից և սիրալիր ընդունելություն էին ցույց տալիս Երևան քաղաքի բնակիչները: Երևանից գրում են, հայտնում էր թերթը, որ հուլիսի 2-ին ռազմաճակատից Երևան ժամանեց վիրավորների մի խումբ: Ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ քաղաքի բնակչությունը նրանց ցույց տվեց սիրալիր ընդունելություն և վիրավորներին հյուրասիրեց թեյով, ճաշով, մրգերով, գինով, օղիով և այլն[4]: Հուլիսի 16-ին Երևան ժամանեցին Բայազետի հերոս պաշտպանները, որպեսզի գնան Դարաչիչակ և հանգստանան այնտեղ: Երևանի բնակչությունը ջերմորեն ողջունեց Բայազետի քաջերին և հուլիսի 17-ին նրանց համար հյուրասիրություն կազմակերպեց[5]: Հետաքրքիր է, որ Երևանում կազմակերպվել էր հատուկ կոմիտե, որի խնդիրն էր խնամել վիրավոր և հիվանդ զինվորներին և հանգանակության միջոցով հավաքած գումարներով հոգալ նրանց կարիքները[6]:*

1 Тифлисский вестник, 1877, N 83.

2 Сборник материалов по русско-турецкой войне 1877–78 гг. на Кавказско-малоазиатском театре. Вып. 1, с. 2.

3 Тифлисский вестник, 1877, N 117.

4 Նույն տեղում, N 152:

5 Кавказ, 1877, N 145.

6 Նույն տեղում, N 156:

*Ռուսական զորքերին մեծ ջերմությամբ էր ընդունում հատկապես Արևմտյան Հայաստանի բնակչությունը, որն իր ազատագրությունը թուրքական բռնապետությունից կապում էր ռուսական զենքի հաղթանակի հետ: Ամբողջ պատերազմի ժամանակաշրջանում նա ռուսական բանակին տրամադրում էր հուսալի հետախույզներ, ուղեկցողներ, նամակատարներ, տալիս էր ամեն տեսակի տեղեկություններ, առանձնացնում էր սննդամթերք, ցուցաբերում էր մեծ հոգատարություն վիրավորների նկատմամբ և այլն: 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ակտիվ մասնակիցներից մեկը՝ գեներալ-մայոր Ս. Քիշմիշևը, գրում էր, թե պատերազմի ընթացքում արևմտահայերը հանդես բերեցին մեծ ինքնազոհություն ու անշահախնդրություն դեպի ռուսական զորքերը և զգալի օգնություն ցույց տվին նրանց[1]:*

*Իհարկե, չպետք է գերագնահատել այն օգնությունը, որ ցույց էր տալիս հայ ժողովուրդը ռուսական զորքերին՝ ռուս-թուրքական պատերազմների ժամանակ: Այդ օգնությունը համեստ էր և ռուսական հզոր բանակի հաղթանակների գործում նա չէր կարող խաղալ էական դեր: Կարևորը այստեղ այն էր, որ նշված օգնությունը, ինչպես նաև ռուսական զորքերի օգնությունը արևմտահայ բնակչությանը՝ հանդիսանում էր ռուս և հայ ժողովուրդների դարավոր բարեկամության արտահայտություններից մեկը: Միաժամանակ, ռուսական բանակին ցույց տված իր օգնության մեջ արևմտահայ ժողովրդական զանգվածներն արտահայտում էին իրենց ազատագրական տենչերը և իղձերը:*

*Սուլթանական բռնապետության լծից ազատվել ձգտող արևմտահայ բնակչությունը մեծ հույսեր էր կապում ռուսական բանակի հաղթանակի հետ: Ռուս զինվորները դիտվում էին որպես ազատարարներ ու փրկարարներ: Պատերազմի մասնակիցներից մեկն իր հուշերում գրում էր, թե ռուսական զորքերին «ամեն տեղ ժողովուրդը մեծ ուրախությամբ, զոհերով ու զոհաբերությամբ էր դիմավորում, իր տանջված, չարչարված, նահատակված կյանքի վերջը տեսնելու հույսով»[2]: Անցքերի մի այլ ականատես գրում էր, թե երբ տեղի էր ունենում ռուսական զորքերի առաջխաղացում, ժողովրդի ուրախությունը չափ ու սահման չուներ: Շիրակի, Բասենի և Ալաշկերտի գավառի հայերը ռուս զինվորներին տեսնելիս նրանց համարում էին փրկարարներ, որ եկել են իրենց բազմադարյան գերության շղթաները խորտակելու[3]:*

1 *С. О. Кишмишев*. Война в Турецкой Армении 1877–1878 гг., С. Петербург, 1884, с. 127.

2 «Հովիտ», Թիֆլիս, 1914, N 46, էջ 729:

3 «Մշակ», 1878, N 3:



*Ռուսական բանակի հաղթանակները ոգևորում և ոգեշնչում էին հայ ազգաբնակչությանը: Հենվելով ռուսական զորքերի անմիջական օգնության վրա, նրանք անում էին ամեն ինչ, դիմում էին բոլոր միջոցների, որպեսզի իրենց վրայից թոթափեն սուլթանական բռնապետության ծանր լուծը: Ռուս-թուրքական պատերազմների տարիներին կատարված այդ փորձերը ևս, ինչպես արդեն նկատել ենք, հայ ժողովրդի ազատագրական շարժման բաղկացուցիչ մի մասն են:*

*Ի վերջո, նշենք մի հանգամանք ևս: Սուլթանական իշխանության դեմ ծավալված բողոքի արտահայտություն պետք է համարել բավական լայն չափեր ընդունած այն արտագաղթը, որ դարեր շարունակ տեղի էր ունենում Արևմտյան Հայաստանից: Հաճախ, ի վիճակի չլինելով դիմելու զինված ապստամբության, արևմտահայ բազմությունները, որպեսզի ազատվեն սուլթանների ու փաշաների անլուր ճնշումներից ու հարստահարություններից, թողնում էին իրենց հայրենի տունն ու տեղը և գնում դեպի այլ երկրներ: Այդ երևույթը ծավալվեց Արևմտյան Հայաստանում թուրքական տիրապետության հաստատման առաջին իսկ տասնամյակներից սկսած: Դեռևս XVII–XVIII դարերում հայ ժողովրդի մի զգալի մասը գաղթեց Ռուսաստան, Լեհաստան, Հնդկաստան և այլն: Դեպի Ռուսաստան ուղղվող գաղթը շարունակվեց XVIII դարի վերջերից և մասնավորապես Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո: Հայտնի է, որ ռուս-թուրքական 1828–1829 թթ. պատերազմից հետո ավելի քան 90000 մարդ Արևմտյան Հայաստանից գաղթեց Անդրկովկաս: Այս շրջանում գաղթեցին գլխավորապես Էրզրումի, Կարսի և Բայազետի փաշայությունների բնակիչները, որոնք տեղավորվեցին մեծ մասամբ Ախալքալաքում, Ախալցխայում, Ապարանում, Գյումրիում, Սևանա լճի հարավ-արևմտյան ափերին և այլն:*

*Արտագաղթը շարունակվեց Ղրիմի պատերազմի ժամանակաշրջանում: Գնդապետ Լորիս-Մելիքովը 1856 թ. ապրիլին զեկուցում էր, որ Կարսի գավառի բնակիչներից շատերը «ցանկություն են հայտնում գաղթել մեր սահմանները» և որ չնայած թուրքական կառավարության կողմից ձեռք առնված միջոցներին, «այդ ցանկությունը գնալով ավելի է ուժեղանում»[1]:*

*Արևմտահայերի գաղթը դեպի Ռուսաստան առանձնապես ծավալվեց 1877–1878 թթ. պատերազմից հետո, երբ Անգլիայի և արևմտյան մյուս պետությունների ջանքերով չեղյալ հայտարարվեց Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագիրը և կնքվեց Բեռլինի պայմանագիրը, որը խիստ ան-*

1 АКАК. Т. XI, док. 307.

*բարենպաստ ու վտանգավոր դրություն էր ստեղծում արևմտահայերի համար: Երբ հայտնի դարձավ, որ ռուսական զորքերը պետք է հետ քաշվեն Արևմտյան Հայաստանից, երկրի բնակչության մի մասը փորձեց Ռուսաստան գաղթել: Կովկասյան ռազմաճակատի գործող կորպուսի հրամանատարին ներկայացրած իր զեկուցման մեջ գեներալ-լեյտենանտ Գեյմանը 1878 թ. հայտնում էր, որ Արևմտյան Հայաստանի բնակչության մի զգալի մասը ցանկանում է գաղթել Կովկաս և ընդունել ռուսական հպատակություն[1]: Էրզրումի զինվորական նահանգապետը այդ նույն ժամանակ զեկուցում էր, որ նահանգում Ռուսաստան գաղթել ցանկացողների թիվը մեծ է, և որ այդ խնդրով իր մոտ ամեն օր պատգամավորներ են գալիս[2]: Նույն 1878 թ. Ալաշկերտի գավառից տեղեկացնում էին, որ տեղի գյուղացիները դադարեցրել են իրենց աշխատանքը և ամենուրեք ասում են, թե իրենք «առանց ռուսական զորքերի կորած են»[3]:*

*Արտագաղթը, որ հանդիսանում էր սուլթանական բռնակալության դեմ արևմտահայերի՝ բողոքի պասիվ ձևերից մեկը, լայն չափեր ընդունեց ինչպես 1850–1870-ական թթ., այնպես էլ հետագա տասնամյակներին:*

1 ЦГИА Грузии, ф. 558, д. 18, л. 11.
2 Նույն տեղում, թ. 40:
3 Նույն տեղում, թ. 11:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

# ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1880-1890-ԱԿԱՆ ԹԹ.

## 1

*1878–1879 թթ. հետո հայ ազատագրական շարժումը սերտորեն առնչվեց Հայկական հարցին և դրա շուրջ ծավալված միջազգային դիվանգիտությանը:*

*Նախ՝ համառոտակի Հայկական հարցի մասին:*

*Ռուս-թուրքական 1877–1878 թթ. պատերազմը վերջացավ Թուրքիայի ծանր պարտությամբ, սուլթանական կառավարությունը ստիպված եղավ խնդրել հաշտություն: 1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) կնքվեց Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը, որի համաձայն, նախատեսվում էր ճանաչել Չեռնոգորիայի, Սերբիայի և Ռումինիայի անկախությունը, Բուլղարիային տալ ինքնավարություն, բարենորոգումներ մտցնել Բոսնիայում ու Հերցեգովինայում, Ռուսաստանին միացնել Բաթումը, Արդահանը, Կարսը և Բայազետը, իսկ Էրզրումը, Վանը և Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներ, որոնք արդեն գրավված էին ռուսական զորքերի կողմից, վերադարձնել Թուրքիային:*

*Միաժամանակ, պայմանագրի 16-րդ հոդվածով նախատեսվում էր բարենորոգումներ մտցնել Վանի, Բիթլիսի (Բաղեշի), Էրզրումի (Կարինի), Սեբաստիայի, Խարբերդի ու Դիարբեքիրի վիլայեթներում, և երաշխավորել հայ բնակչության ապահովությունը քրդական ու չերքեզական հրոսակախմբերից: 16-րդ հոդվածում ասվում էր. «Նկատի ունենալով, որ ռուսական զորքի՝ Հայաստանում գրաված, բայց Թուրքիային վերադարձվելիք տերիտորիայից հեռանալը կարող է առաջ բերել ընդհարումներ ու բարդություններ, որոնցից երկու երկրների [Ռուսաստանի և Թուրքիայի] լավ հարաբերությունները կվնասվեն, Բարձրագույն Դուռը պարտավորվում է հայաբնակ նահանգներում առանց ուշացնելու իրականացնել տեղական կարիքներից բխող բարվոքումներ ու բարենորոգումներ և երաշխավորել նրանց [հայերի] ապահովությունը քրդերից ու չերքեզներից»[1]: Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, սակայն, մնաց անգործադրելի, քանի որ Անգլիան և Ավստրո-Հունգարիան վճռականորեն հանդես եկան նրա*

1 Сборник договоров России с другими государствами. 1856–1917. М., 1952, с. 168.

դեմ: Պայմանագիրը ուժեղացնում էր Ռուսաստանի դիրքերը Բալկաններում ու Փոքր Ասիայում, մի բան, որ հակասում էր այդ երկու պետությունների նվաճողական քաղաքականությանը: Անգլիական և ավստրո-հունգարական կառավարությունների ջանքերով հրավիրվեց եվրոպական վեց պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի, Իտալիայի, ինչպես նաև Թուրքիայի կոնգրեսը, որը բացվեց Բեռլինում, 1878 թ. հունիսի 13-ին: Մեկ ամիս տևող բանակցություններից հետո՝ հուլիսի 13-ին, Սան-Ստեֆանոյի պայմանագրի փոխարեն կնքվեց ու հաստատվեց Բեռլինի պայմանագիրը, որով Ռուսաստանը կատարեց զգալի զիջումներ:

Բեռլինի կոնգրեսում վերանայվեց նաև Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, որի փոխարեն նոր (Բեռլինի) պայմանագրում ընդունվում է 61-րդ հոդվածը, ուր ասված է. «Բ. Դուռը պարտավորվում է հայաբնակ նահանգներում առանց ուշացնելու իրականացնել տեղական կարիքներից բխող բարվոքումներ ու բարենորոգումներ, և ապահովել նրանց [հայերի] ապահովությունը քրդերից ու չերքեզներից: Այս նպատակի համար ձեռք առած միջոցների մասին նա պետք է պարբերաբար հաղորդի պետություններին, որոնք պիտի հսկեն դրանց գործադրության վրա»[1]:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանի, նրա բնակչության վիճակի բարելավման խնդիրը 1878 թ. դարձավ միջազգային հարց, եվրոպական մեծ պետությունների դիվանագիտական հարաբերությունների առարկա, շաղկապվեց Արևելյան հարցի հետ: Շուտով, սակայն, պարզ դարձավ, որ նոր ծնունդ առած Հայկական հարցը Անգլիայի ագրեսիվ և թուրքասիրական քաղաքականության հետևանքով ոչ միայն չբավարարեց արևմտահայության պահանջները, այլև նոր փորձություններ բերեց հայ ժողովրդի արևմտահայ հատվածին: Բ. Դռան հետ կնքված գաղտնի պայմանագրի համաձայն, Մեծ Բրիտանիան պարտավորվեց ամեն կերպ պաշտպանել Թուրքիային և դրա փոխարեն իր իշխանության տակ վերցրեց Կիպրոս կղզին*:

Արևմտահայությունը, ի դեմս Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի և Մկրտիչ Խրիմյանի (որը, ինչպես հայտնի է, գլխավորեց Բեռլին ուղարկված հայ պատվիրակությունը), մեծ ջանքեր գործադրեց, որպեսզի Արևմտյան Հայաստանին տրվի գոնե ինքնավարություն Օսմանյան կայսրության մեջ: Բայց մերժվեց անգամ այդ չափավոր պահանջը, քանի որ այն հակասում էր Անգլիայի շահադիտական նպատակներին: Նենգ Ալբիոնի դիվանագետները իրենց գործարքը սուլթանի հետ ծածկելու համար հորինեցին «տեսություն» այն մասին, որ օսմանյան լծի տակ գտնվող փոքրասիական ժողովուրդները, այդ թվում և հայերը, ընդունակ չեն ունենալ ինքնավարություն[1]: Ինչպի՛սի ցինիզմ:

1 Turkey. N 39 (1878), p. 225.



Անգլիայի թուրքասիրական, հակահայկական քաղաքականությունը, սակայն, փաստորեն տապալեց նաև Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու գործը: Բանն այն է, որ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու նպատակով Սան-Ստեֆանոյի պայմանագրով նախատեսվում էին ավելի ռեալ երաշխիք ու միջոցառումներ, քան Բեռլինի պայմանագրով[2]: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի համաձայն Բ. Դուռը բարենորոգումներ պետք է իրականացներ Ռուսաստանի վերահսկողությամբ ռուսական զորքերի առկայության պայմաններում:

Հարցը դրված էր որոշակի, և թուրքական կառավարությունը ստիպված պիտի լիներ կատարել պայմանագրի այդ պահանջը: Բայց դրությունը փոխվեց Բեռլինի կոնգրեսում, որտեղ Անգլիայի ջանքերի հետևանքով բարենորոգումների գործի վերահսկողությունը դրվեց վեց պետությունների վրա, պետություններ, որոնք, ունենալով տարբեր շահեր, վարում էին տարբեր քաղաքականություն ինչպես Արևելյան հարցում ընդհանրապես, այնպես էլ Հայկական հարցում մասնավորապես: Այսպիսի պայմաններում համատեղ վերահսկողությունը դառնում էր ձևական, արևմտահայության խնդիրը թողնվում էր բախտի քմահաճույքին: Օգտվելով դրանից, սուլթանական կառավարությունը ոչ միայն չիրագործեց նախատեսված բարենորոգումները, այլև դիմեց նոր ջարդերի ու կոտորածների քաղաքականությանը, նպատակ ունենալով Հայկական հարցը «լուծել» արևմտահայությանը ֆիզիկապես ոչնչացնելու միջոցով:

Ստեղծված իրադրության մեջ հայ ազատագրական շարժումը նոր թափ ստացավ: Արդեն 1879–1880 թթ. տեղի ունեցան ժողովրդական խմորումներ Վասպուրականում, որի մասին գրվեց իր ժամանակի պարբերական մամուլում: Այսպես, օրինակ, «Մշակ» թերթի 1880 թ. N 138-ում տպագրվեց Հայկակի (Արփիար Արփիարյանի) հուլիսի 30-ին գրած նամակը, ուր ասվում էր, թե Կ. Պոլսում հրատարկվող «Ստամբուլ», «Սեմաֆոր», և «Վաքըթ» լրագրերի հաղորդած տեղեկությունների համաձայն, Վասպուրականում «հայոց զինեալ խմբեր» հարձակման են անցել իրենց ճնշողների ու հարստահարողների դեմ: «Կըսեն, որ այս միջոցին Վանա մեջ ալ շարժում մը տեղի պիտի ունենա»[3]: Հաղորդելով այս լուրը,

1 Տե՛ս *Սարուխան.* Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում 1860–1910. հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 412:

2 *A. O. Sarkisian.* History of the Armenian question to 1885. Urbana, 1938, p. 83.

3 «Մշակ», 1880, N 138:

*«Մշակի» թղթակիցն ավելացնում էր, որ դեռ պետք է սպասել ստույգ և մանրամասն տեղեկությունների:*

*Մոտ մեկ ամիս անց «Գոլոս» լրագրում տպագրվեց Արևմտյան Հայաստանի համար նախաձեռնվող բարենորոգումների առթիվ Կ. Պոլսից գրված մի նամակ, որտեղ հայտնվում էր, թե երբ սուլթանական կառավարությունը խաբեական նպատակներով հայտնի ավազակ Բահրի բեյին Արևմտյան Հայաստան ուղարկեց, որպեսզի նա զբաղվի «բարենորոգումների» գործով*, ապա «Վասպուրականի հայերը պատրաստականություն ցույց տվին իրանց ուժը փորձելու... զենքերով, որ արդեն պատրաստած ունեին»[1]: Մոտավորապես նույն լուրն էր հաղորդում նաև «Նովոյե վրեմյա» լրագիրը: Հայկական խնդրին նվիրված իր հոդվածներից մեկում թերթը գրում էր. «Հայկական խնդիրը, որ Բ. Դռան խարդախությամբ՝ չեռնոգորիական և հունական խնդիրների պատճառով հետաձգված էր, այժմ նորից երևան եկավ: Թուրքաց բռնավորության, կամայականության և ճնշման զոհերը զենք վերցրին, որպեսզի իրանց ուժերով վրեժխնդիր լինեն... կողոպտումներից, որոնց ենթարկվում էին հայերը Բ. Դռան իշխանության տակ: Ակներև է, որ հայերը այլևս չեն հավատում եվրոպական դիպլոմատիայի... խոստումներին... Բայց, իհարկե, գործը միակ վրեժխնդրությամբ չի վերջանա: Հայ ապստամբների խմբերը հետզհետե մեծանում են, որովհետև նրանց հետ միանում են անբավական լեռնաբնակները և վերջ ի վերջո, ապստամբություն կարող է տարածվել Ասիական Թուրքիայի մեծ մասի մեջ»[2]: 1880 թ. սեպտեմբերի 9-ին «Մշակի» սեփական թղթակիցը Իգդիրից հեռագրում էր, որ «լուր կա, թե Վանի հայերի մեջ ապստամբություն է ծագել, սպանված հայերի թիվը 70 հոգի է, թուրք սպանվածների թիվը դեռևս հայտնի չէ: Երկու կողմերն էլ լավ զինավորված են»[3]:*

*Նմանօրինակ նոր լուրեր հաղորդեց վերը հիշատակված «Նովոյե վրեմյա» թերթը 1880 թ. սեպտեմբերի 3(15)-ի իր համարում, արտատպելով այն հաղորդագրությունները, որոնք ստացվում էին Վիեննայի «Պոլիտիշե կորեսպոնդենց» լրագրից: Հենվելով այդ լուրերի վրա, «Մեղու Հայաստանի» լրագիրը գրում էր. «Հայերը բնավ զինվորյալ ապստամբության և ցույցերի շավղի վրա ոտք չէին կոխել, բայց վերջապես հայի համբերության թելն էլ կտրվեց, և նա էլ այլ միջոց չէ տեսնում օգնության, բացի զենքը: Զեյթունի բարձրությունների վրա բնակվող հայերը զենք են բարձրացրել: ...Պապիկ իշխանը ապստամբների գլուխն է անցել*

1 «Մեղու Հայաստանի», 1880, N 70. «Մշակ», 1880, N 158:

2 «Մշակ», 1880, N 160:

3 Նույն տեղում, N 158:



*և այնտեղից կամենում է Բարձր Հայք արշավել»*: Շարժողության մի այլ կենտրոն գոյացել է Բայազետից դեպի Հարավ: Այդտեղի հայերը միանալով Մուշի սանջակից եկած 1200 մարդու հետ, միասին 2800 հոգի են և իրանց գործը սկսել են...: Այն հանգամանքը, որ Զուլամերիքի հայերը, բոլոր նեստորականները, նույնպես ապստամբվել են, ապացույց է, որ այդ շարժողությունը պիտի մեծանա: Դոքա իրանց մեծավոր Մարշիմոնին ընտրել են իրանց կրոնական և քաղաքական գլուխ և երդվել են նորան հավատարիմ մնալ մինչև մահ: Մարշիմոնը յուր խումբը տանում է դեպի Վան»[1]: Թերթը պատմում էր նաև, որ ասորիների ազգապետ Մարշիմոնը իր զինված ուժերին դիմել է մի ճառով, որտեղ ասել է, թե պետք է հայերի հետ միասին կյանքի ու մահու կռիվ մղել թուրքական բռնակալության դեմ[2]:*

*Այստեղ առանձնապես ուշադրության արժանի է այն, որ, ինչպես երևում է թերթի տված հաղորդագրությունից, տեղի է ունեցել հայ-ասորական միացյալ ապստամբություն՝ ընդդեմ թուրքական լծի:*

*1880 թ. հոկտեմբերի 16-ին «Մշակին» Վանից գրված մի նամակում հայտնում էին հետևյալ, ըստ ամենայնի հետաքրքիր տեղեկությունները. «Հայկական խնդիրը այսօր բոլորովին պաշտոնական հանգամանք մը առած է և Հայաստանում տիրող անիշխանությունը և հարստահարության շարունակվիլը հայկական ապստամբության գոյություն տված է: Վասպուրական, Մուշ, Բաղեշ, Կարին** արդեն ունեն հեղափոխական մասնաժողովներ, որոնք գաղտնի միջոցներով աշխատում են գործակից լինել հայկական ընդհանուր ապստամբության ի Հայաստան... Գալով Վասպուրականում վերջերս տեղի ունեցած շարժմանց, թե քաղաքում և թե գյուղերում, ամեն տեղ, հայ ժողովուրդը արթնցած է և պատրաստվում է իր գոյությունը զինու զորությամբ հայրենի երկրում պաշտպանելու... Տեղական թուրք վարչության ըրած զրկանքները, բռնությունը և անիրավությունը մղում և ստիպում են ժողովուրդը զենք վեր առնելու և թշնամյաց հետ անձամբ անձին մարտնչելու, ինչպես որ մի քանի օր առաջ Կարճկանում, ուր 16000 հայեր կան, պատահած դեպք մը զայս կապացուցանե»[3]:*

*Այդ մասին գրեց նաև «Մեղու Հայաստանին»: Վանից թերթին հայտնում էին, որ Արևմտահայաստանի գյուղացիների մեջ զարթնել է անձնապաշտպանության զգացմունքը և որ Նորդուզ գավառի Գոզան*

1 «Մեղու Հայաստանի», 1880, N 72:

2 Նույն տեղում:

3 «Մշակ», 1880, N 207:

*գյուղում մեծ կռիվ է եղել հայ գյուղացիների ու բեկերի միջև*[1], *ընդ որում, հաղթող են հանդիսացել առաջինները**:

*1879–1880 թթ. տեղի ունեցան տեղական բնույթի մի շարք զինված ընդհարումներ Էրզրումում և այդ վիլայեթի որոշ շրջաններում ու գյուղերում: Նման դեպքեր պատահեցին նաև Մամախաթունի և Դերջանի գավառակներում ու Էրզրում քաղաքից ոչ հեռու գտնվող Կամ (Կեմ) գյուղում: Այս մասին տեղեկություններ է հաղորդում Էրզրումի անգլիական հյուպատոս մայոր Հենրի Տրոտտերը իր այն զեկուցագրերում, որոնք հասցեագրված են լորդ Սոլսբերիին՝ 1879 թ. սեպտեմբեր ու հոկտեմբեր ամիսներին*[2]:

*Անգլիական Կապույտ գրքի տեղեկությունների համաձայն, 1880 թ. աշնանը Մուշի սանջակի գյուղերից մեկում տեղի է ունենում ընդհարում հայ գյուղացիների ու թուրքական բանակի զինվորների միջև: Երբ բինբաշի Հուսեյին աղան Վանից Մուշ անցնելու ժամանակ փորձում է կողոպտել գյուղացիներին, սրանք թակում են բինբաշուն և նրա շքախմբի անդամներին: Երկու կողմերն էլ տալիս են վիրավորներ: Շուտով Մուշից ժամանում է մի զորամաս, որը բանտարկում է 25 մարդ և թալանում շատ տներ: Գյուղացիների մեծ մասը պատսպարվում է լեռներում:*

*Այս դեպքերի մասին գրող, Վանի անգլիական փոխհյուպատոս կապիտան Կլեյտոնը կարևոր էր համարում նշել այն հանգամանքը, որ հայ գյուղացիության մեջ զգալի չափով ուժեղացել է* սուլթանական կառավարությանը դիմադրելու ոգին, և որ գյուղացիները հայտարարում են, թե «լավ է մեռնել, քան թե ապրել ներկա վիճակում»[3]:

*Արևմտյան Հայաստանին նվիրված գրականության մեջ կա հիշատակություն այն մասին, որ 1880-ական թթ. սկզբներին Սասունի մի շարք այլ վայրերում ևս հայ գյուղացիները զինված ընդհարումներ են ունեցել թուրք և քուրդ ճնշողների ու հարստահարողների հետ*[4]:

*1880 թ. Արևմտյան Հայաստանում եղած մի «պաշտոնական ճանապարհորդ» վկայել է, որ «հայերին ճանաչել չի կարելի, նրանք գլուխները բարձր են պահում, անվախ են և եթե իմանան, որ կարելի է զենք*

1 «Մեղու Հայաստանի», 1880, N 82:

2 Turkey, N 4 (1880). Correspondence...., p. 66, 126.

3 Turkey, N 6 (1881). Further Correspondence... (in continuation of Turkey, N 23 (1880), p. 290-292).

4 *Հ. Մ. Պողոսյան*. Սասունի պատմություն. Ե., 1985, էջ 164-165:



*ձեռք բերել, փողը չեն խնայի և սաստիկ ցանկություն ունեն զենք ձեռք բերելու»*[1]:

*1880-ական թթ. սկզբներին հայրենասիրական շարժումը ուժեղացավ հատկապես Վան քաղաքում, ուր այդ տարիներին Մկրտիչ Խրիմյանի հետ միասին եռանդուն գործունեություն ծավալեց Մկրտիչ Փորթուգալյանը (1848–1921): Նախորդ շրջանում, ինչպես տեսանք, նա աշխատել էր կրթություն, լուսավորություն տարածել իր հայրենակիցների մեջ, հիմնել էր դպրոցներ, ընկերություններ, պայքարել էր կղերա-աղայական հոսանքի, մասնավորապես Վանի հոգևոր առաջնորդ, հետադեմ Պողոս վարդապետի ու նրա կողմնակիցների դեմ: 1870-ական թթ. վերջերից Մ. Փորթուգալյանը, հետևելով Մ. Խրիմյանի, Գրիգոր Արծրունու և Րաֆֆու ազատասիրական գաղափարներին, սկսեց կոչեր անել երիտասարդությանը պատրաստվելու քաղաքական պայքարի: Պատահական չէ, որ նրա աշակերտները՝ Մկրտիչ Թերլեմեզյանը (Ավետիսյան), Գրիգոր Թերլեմեզյանը, Ռուբեն Շատվորյանը, Գրիգոր Աճեմյանը, Ղևոնդ Խանջյանը և ուրիշներ, թվով ինը երիտասարդներ*[2], *1885 թ. Վանում հիմնեցին առաջին հայ քաղաքական կուսակցությունը՝ Արմենականների կուսակցությունը, որի ուղղությունը, սակայն, ինչպես նշել ենք իր տեղում, կապ չուներ «Արմենիայի» ուղղության հետ:*

*Խոսելով Մկրտիչ Փորթուգալյանի այդ ժամանակաշրջանի գործունեության մասին, Մ. Խրիմյանի կենսագիրը նկատել է. «Փորթուգալյանը՝ իբրև դաստիարակ և հեղափոխական Խրիմյանի աջ բազուկը հանդիսացավ: Գր. Արծրունու քարոզած գաղափարներ, Րաֆֆիի վեպեր, Գամառ-Քաթիպայի ռազմաշունչ երգեր և ժամանակակից հայության քաղաքական ու ազգային վերածնության ձգտումները՝ Փորթուգալյանի միջոցով և անոր կազմակերպած հանդեսներով ու դասախոսություններով տարածվեցան Վանի մեջ: Խրիմյանի «Ժառանգավորաց» շարունակությունն էր Փորթուգալյանի «Կեդրոնական վարժարանը», ուր հեղափոխական և ռազմական շունչով դաստիարակություն կստանար սերունդ մը, որուն լավագույն ներկայացուցիչներեն հիշենք Մկրտիչ Ավետիսյան-Թերլեմեզյան, Եղիշե Գոնդակչյան և Տիգրան Տերոյանը (Վազգեն) – Հայկական ազատագրության վրա ընկած գործիչները»*[3]:

*Ժամանակակիցները իրենց հուշերում պատմում են, որ Վանի ռուսական փոխհյուպատոս Կ. Կամսարականի ջանքերով վանեցիները Անդրկով-*

1 *Մ. Հ. Մխիթարյան*. XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, էջ 105:

2 *L. Nalbandian*. The Armenian Revolutionary Movement, p. 96.

3 *Հայկ Աճեմեան*. Հայոց Հայրիկ, Թավրիզ, հ. 1, 1929, էջ 560:

կասից գաղտնի կերպով ստանում էին ու տարածում Րաֆֆու երկերը, կազմակերպում էին գաղտնի ժողովներ, որոնցում կոչեր էին արվում ոտքի կանգնել տիրող կարգերի դեմ: «Ազգային սահմանադրության» 10-ամյակի կապակցությամբ Վանում, և շրջակա մի շարք այլ վայրերում տեղի ունեցան բազմամարդ ցույցեր, որոնք ակնհայտորեն ուղղված էին սուլթանական կառավարության դեմ: Ազատասիրական գաղափարները տարածված էին հատկապես երիտասարդության մեջ: «Բազմաթիվ երիտասարդներ գաղտնի զենքեր էին պահում և տոն օրերին դեռ լույսը չծագած մերձակա սարերն էին բարձրանում հրացանաձգության մեջ վարժվելու: Մի երիտասարդ ուսուցիչ, Մկրտիչ Թերլեմեզյան (Ավետիսյան), որ Մխիթարյան հայրերի տպած գրքերով քիմիա էր ուսումնասիրել, քրտնաջան աշխատանքով պայթուցիկ նյութեր էր պատրաստում ապագա ապստամբության համար: Իսկ ժողովուրդը ընդհանրապես աղոթում էր, որ «օրհնած ռուսը» մի օր գա և Վանն էլ միացնի Կովկասին…»[1]:

## 2

Բեռլինի 1878 թ. վեհաժողովից հետո արևմտահայերի վիճակը ավելի ծանրացավ: Սուլթանական կառավարության գաղտնի հրահանգներով հաճախակի դարձան հայկական ջարդերն ու անօրինակ բարբարոսությունները: Աստիճանաբար ակնհայտ դարձավ մեծ պետությունների շահամոլ և խարդախ քաղաքականությունը Հայկական հարցի նկատմամբ: Այս բոլորը հուզմունքի ու ցասումի նոր ալիք բարձրացրեց հայության ամենալայն խավերում: Անհրաժեշտ էր օգնության ձեռք մեկնել օսմանյան լծի դեմ պայքարող եղբայրներին, փրկել նրանց ֆիզիկական գոյությունը: Եվ ժողովրդի, մտավորականության մեջ առաջացավ հայ կամավորների մի շարժում, որի նշանաբանն էր «դեպի Երկիր», դեպի Արևմտյան Հայաստան:

Կամավորական շարժմանը մասնակցություն ունեցան հատկապես հայրենասեր երիտասարդները: Կազմելով առանձին խմբեր, իրենց հետ վերցնելով զենք ու զինամթերք, նրանք գաղտնի կերպով անցնում էին Վան ու Ալաշկերտ:

Այդ ժամանակաշրջանում կովկասահայ երիտասարդության մեջ տիրող տրամադրությունների մասին Գ. Ղարաջյանը իր հուշերում գրել է. «80-ական թվականների սկզբներին ստեղծվել էր երիտասարդ սերնդի շրջաններում մի տեսակ՝ եթե կարելի է այսպես ասել՝ թունդ ազգասիրական մթնոլորտ: Ոչ թե ոգևորություն էր միայն տիրել, ոչ թե միայն շա-

1 Նույն տեղում, էջ 561:



տերի մտահոգության առարկա էր դարձել հայկական խնդիրը և տաճկահայերի արևով էին երդվում ամենը, այլ այդ ժամանակից արդեն ջոկջոկ անհատներ սկսում էին սահմանից անցնել - «Երկիրը», գնալ այն ավետյաց երկիրը, որի հետ կապված էին այնքան հույսեր ու երազներ: Գնում էին այդ անձինք գործելու, հայ ժողովուրդը փրկելու քրդի ու տաճկի յաթաղանից: Բայց, որովհետև այդ բանին միայն կարելի էր հասնել բռնի, զենքի ուժով՝ շատ շուտով Երկիր անցնող այդ ազգասիրական կրակով վառված անհատները (իսկ ապագայում նաև խմբերը) դիմում էին ամեն հնարավոր միջոցների՝ զենք ձեռք բերելու, զինվելու և զենք անցկացնելու սահմանից»[1]:

Սկսված հոսանքը չէր վրիպում ցարական կառավարության ուշադրությունից: Կովկասի փոխարքա իշխան Միխայիլ Նիկոլաևիչը պետական քարտուղար Գիրսի անունով Թիֆլիսից ուղարկած իր հեռագրում 1880 թ. հոկտեմբերի 8-ին հայտնում էր. «Անդրկովկասի որոշ քաղաքներում հայ երիտասարդության մեջ վերջերս գաղտնի կերպով Թուրքիա անցնելու ձգտում է նկատվում՝ թուրքահայերի կողմից իրենց կառավարության դեմ իբրև թե նյութվող ապստամբությանը որպես կամավորներ մասնակցելու նպատակով: Իմ կողմից առաջարկված է տեղական իշխանություններին՝ ամենախիստ միջոցները ձեռք առնել թույլ չտալու նման անձնավորություններին անցնել սահմանից այն կողմը: Լրացուցիչ կերպով կհաղորդեմ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալուց հետո»[2]:

Կովկասում սկսված հայ կամավորական շարժման մասին Մոսկվայի Պետական կենտրոնական պատմական արխիվում պահվում է մի հետաքրքիր փաստաթուղթ, որ մենք անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ:

Երևանի նահանգական ոստիկանական վարչության պետը, պետական ոստիկանական դեպարտամենտին ուղղած իր 1881թ. ապրիլի 30-ի թվակիր գաղտնի գրության մեջ ասում էր. «Սույն ապրիլի 18-ին Երևանի ոստիկանապետը ստացել է Թիֆլիսի մասնավոր գիմնազիայի դիրեկտոր Մոնաստիրևի մի հեռագիրը, որով պ. Մոնաստիրևը, տեղեկացնելով ոստիկանապետին այն մասին, որ իր գիմնազիայի սաներից 3-ը՝ Բայբուրդսկին, Օհանովը և Օթարիձեն փախել են հիշյալ ուսումնական հաստատությունից և ուղևորվել Երևան քաղաք, խնդրել է նրանց ձերբակալելու և գիմնազիա վերադարձնելու մասին անել կարգադրություն: Հենց նույն ապրիլի 20-ին Երևանի ոստիկանությունը ձերբակալել է վերոհիշյալ երեք սաներին՝ քաղաք մտնելիս: Նրանց մոտ, այլ իրերի թվում,

1 Գ. Ղարաջեան. Անցեալի յիշողութիւններից. Թիֆլիս, 1918, էջ 11:

2 ЦИАМ, 3-е отд., 3-я экспед., д. 707, л. 1.

*գտնվել է Պիրոդի սիստեմի մեկ հրացան, վեց ատրճանակ, երկու դաշույն, մեկ արկղի մեջ 300 հատ փամփուշտ՝ Պիրոդի սիստեմի հրացանի համար և մեկ արկղի մեջ 150 հատ փամփուշտ՝ ատրճանակի համար: Զենքը և փամփուշտները խլված են նրանցից: Ձերբակալվածները ցուցմունք են տվել, որ եկել են Երևան սեփական գործով, բայց թե հատկապես ինչ գործով, չեն կարողացել բացատրել: Իրենց մոտ գտնված զենքի ու փամփուշտների մասին նրանք սկզբում ասել են, թե դրանք ձեռք են բերել ճանապարհի անվտանգության համար: Սրանից հետո կատարված քննությամբ պարզված է, որ վերոհիշյալ սաները (21, 20 և 18 տարեկան) գիմնազիայից փախել են, որպեսզի անցնեն Թուրքիա և մտնեն, այսպես կոչված, Վանի կամավորների շարքերը՝ ի պաշտպանություն հայերի: Թե ինչպես են նրանք ձեռք բերել զենքը, փամփուշտները և ճանապարհածախսի դրամը, այդ սաները բացատրել են, որ պ. Մոնաստիրևի գիմնազիայում կատարված հանգանակության միջոցով նրանք ստացել են 300 ռուբլի, որով Թիֆլիս քաղաքում ձեռք են բերել զենք, և ճանապարհ են ընկել:*

*Վերը հիշված սաների Երևանում հայտնվելը և ձերբակալվելը ուժեղ սենսացիա է առաջ բերել տեղի հայ բնակչության բոլոր խավերում:*

*Ընդսմին պարտք եմ համարում ավելացնել, որ ըստ համառ լուրերի՝ Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքներում բոլոր դասերին պատկանող հայերի մեջ գաղտնի հանգանակություն է կատարվում՝ հանդերձավորելու և Թուրքիա ուղարկելու համար, այսպես կոչված, Վանի կամավորներին և որ... Ալեքսանդրապոլից շատ բնակիչներ, որպես այդպիսի կամավորներ, ճանապարհվում են Թուրքիա:*

*Հիշյալ Բայբուրդսկին, Օհանովը և Օթարիձեն Երևանի նահանգապետի կարգադրությամբ հանձնված են առաջինի և վերջինի հայրերին, որոնք եկել են Երևան, որպեսզի նրանց վերադարձնեն Թիֆլիս՝ Մոնաստիրևի գիմնազիա»[1]:*

*Արժեքավոր տեղեկություններ կան նաև ժամանակակիցների հուշերում: Պրոֆեսոր Լեոյի արխիվում գտնվում են 1879–1880 թթ. հայ կամավորական շարժման ակտիվ մասնակից աշուղ Ջամալիի հուշերը՝ նվիրված այդ տարիներին Ալեքսանդրապոլում, Կարսում, Ախալցխայում և այլ վայրերում կազմակերպված կամավորական խմբերի գործունեությանը: Խոսելով արևմտահայ ժողովրդի կրած հարստահարությունների մասին, Ջամալին գրել է. «Կարո՞ղ էինք լուռ մնալ սահմանից այն կողմը խեղճ հարստահարվող ու տանջվող մեր եղբայրների օրհասական աղաղակների*

1 Նույն տեղում, թ. 2:



*դեմ: Ու չմնացինք, ինչքան որ մեր տեղական[1] ուժերը և միջոցները ներում էին մեզ: Այդ հարցին նախանձախնդիր մարդիկ ժողով հավաքեցին և ընտրեցին մի հանձնաժողով: Լավ հիշում եմ այդ անունները. Կարապետ Իսահակյան, աշուղ Ջիվանի, Նազարեթ Փահլևանյանց, Յագոր Օհանյանց և տողերիս գրողը: Սկսեցին ցուցակագրել Ալեքսանդրապոլում այն երիտասարդներին, որոնք ուրախությամբ ուզում էին գնալ կամավոր՝ օգնության հասնելու սահմանի այն կողմը և թշնամու դեմ կռվելու: Առաջին անգամ գրվեցին 64 հոգի: Դրանց պետք էր զինել: Այդ ժամանակ Ալեքսանդրապոլում կար պատերազմի ժամանակից մնացած բավականին թուրքական «այնալու» և «ղափաղլու» հրացաններ, այլև դրանց փամփուշտները, որոնք ում մոտ գտնվում էին, բերին ինքնակամ, առանց վճարի մեզ հանձնեցին...այս հանգամանքը սիրտ տվեց մեզ ավելի ազատ գործելու: Այնուհետև մեր խանութը դարձավ համարյա զինապահեստ, մինչև անգամ տեղական ծառայության ժանդարմը հրացանները տնտղում էր, ասելով. «լավ մաքրել տվեք, պատրաստեցեք, որ տղերքը չվնասվեն»: Երկու օրում հավաքվեց 600 ռուբլի փող, կամավորներին կոշիկներ, գլխարկներ ու յափունջիք առանք այն կողմերի ցրտերին դիմանալու համար»[2]:*

*Հուշերի հեղինակն այնուհետև, պատմում է, թե ինչպես մի գիշեր, երբ ամեն ինչ պատրաստ էր, քաղաքից դուրս՝ դաշտում, ահագին բազմության ներկայությամբ, կամավորների խումբը կազմակերպում է «զորահանդես», տալիս է երդում և ապա ներկա եղող բազմության կեցցեների տարափի տակ ճանապարհ է ընկնում: Հաջորդ օրը առավոտյան խումբը հասնում է Անի, այդտեղ մնում է երեք օր: Այդ երեք օրվա ընթացքում կամավորները պարապում են զինավարժությամբ, սովորում են զենք գործածել և ապա գնում են Կողբ գյուղը, իսկ այնտեղից անցնում են Թուրքական սահմանը: Կամավորական այս առաջին խմբին շուտով հաջորդում են այլ խմբեր:*

*«Մի երկու օրից հետո պատրաստվեց երկրորդ խումբը, դարձյալ թե՛ Ալեքսանդրապոլ քաղաքից և թե՛ գյուղերից՝ 60 հոգուց բաղկացած: Սրանց ևս նույն պատրաստությունով ճանապարհեցինք: Դրանից 4 օր անցած Ալեքսանդր Մանուկյանի (Սարոյի) ղեկավարությամբ եկավ Կարսից 40 հոգուց բաղկացած 3-րդ խումբը, դրանց էլ նույնպես ճանապարհեցինք: Վերջապես եկավ 4-րդ խումբը Ախալցխայից՝ Մովսես Ջիվտալարյանցի ղեկավարությամբ, 44 հոգուց բաղկացած, իրենց զենքերով*

1 Հուշերի հեղինակը նկատի ունի Ալեքսանդրապոլը:

2 ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, պրոֆ. Լեոյի ֆոնդ:

պատրաստված և բավականին վարժված: Սրանց տեղավորեցինք Ալմոյանցի քարվանսարայի սենյակներում, որ մի երկու օր հանգստանալուց հետո ճանապարհ ընկնենք»[1]:

Ջամալիի հուշերում բերված տեղեկությունները հաստատվում են պաշտոնական տվյալներով: Այսպես, ցարական կառավարության Վանի փոխհյուպատոս, պետական խորհրդական Կամսարականն իր զեկուցագրերից մեկում 1880 թ. նոյեմբերի 13-ին հայտնում էր, որ կովկասյան հայերի շրջաններում առաջ է եկել համակրական շարժում հօգուտ իրենց թուրքահայ եղբայրակիցների: «Ռուսահայության զինված խմբերը պատրաստվում էին անցնելու թուրքական սահմանը... 35 հոգուց բաղկացած նրանց առաջավոր ջոկատը (որոնց թվում կային շատ թվով Գեորգևյան ասպետներ) արդեն թափանցել էր Ալաշկերտ, որտեղ պետք է կուտակվեին և մնացած խմբերը... Սակայն համոզվելով, որ Վանում ապստամբություն գոյություն չունի, հիշյալ ջոկատը վերադարձավ Ռուսաստան, որտեղ և կասեցրեց մյուս խմբերի շարժումը: ...Թուրքահայերի մոտ կազմակերպվում են գաղտնի կոմիտեներ, որոնց նպատակը, ասենք, բոլորովին չի պարզվել: Երիտասարդությունը լքված Դուլցինի հարցի առիթով մեծ տերությունների միջև ծագած տարաձայնություններից և, ըստ երևույթին, հույսը կտրած, որ իրագործվելու են Հայաստանի բարենորոգումները, քարոզում է ապստամբություն կառավարության դեմ. մինչդեռ հիշյալ կոմիտեների ավելի խոհեմ և զգույշ անդամները ցանկանում են սահմանափակվել միայն ժողովրդին զինելով, ամեն մի պատահարի դեպքում պատրաստ լինելու նպատակով: ...Հայերը և նեստորականները վկայակոչելով մի շարք հանրածանոթ փաստեր, գանգատվում են, որ թուրքական կառավարությունը գիտակցաբար և համառորեն ձգտում է ոչնչացնել քրիստոնեական տարրը Անատոլիայում: Այս կապակցությամբ արդեն բանակցություններ են վարվում Վանի վիլայեթի նեստորականների պարագլուխ Մարշիմոնի և Վանի հայերի ներկայացուցիչների միջև»[2]: Այստեղ ևս նշվում է, ինչը հայտնի է մեզ արդեն «Մեղու Հայաստանիի» էջերից, որ նեստորականների պատրիարքը անհետաձգելի անհրաժեշտություն է համարում նեստորականների միանալը հայերին, որպեսզի կարիք եղած դեպքում միահամուռ հակահարված տրվի թշնամուն:

Նշված դեպքերի մի այլ ժամանակակից՝ բանասեր Վահան Բաստամյանն իր օրագրում 1880 թ. հոկտեմբեր ամսին արձանագրում էր. «Հեռագրերը լուր են բերում, որ Վանա գավառի հայերը այլևս չկարողա-

1 Նույն տեղում:

2 РГВИА, ф. ВУА, д. 78755, л. 37.



ցան համբերել տաճիկների և նոցա տերության հարստահարությանց, ոտքի են կանգնել և զենքը ձեռին հարձակողական դիրք են բռնել: Այս լուրերը մեծ ցնցում գործեցին և ահա ոչ միայն խնդակցության և ցնծության ցույցեր են երևում ամեն տեղ, այլև նվերներ են հավաքում Վանի վիրավորյալների համար, ընկերություններ են կազմվում, օրինակ՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Իգդիրում և այլն, որոնց նպատակն է օգնել հայոց շարժումներին, փող են հավաքում, զենք են ձեռք բերում, զինվորական լրտեսներ են ուղարկում Վանա կողմերը և այլն: Վաղարշապատում, Իգդիրում և ուրիշ տեղերում զինվորներ են հավաքվում, որ գնան Հայաստանի հայերին օգնելու: Հաստատ հայտնի է, որ Ալեքսանդրապոլից և շրջաններից մինչև 100 հոգի մանր խմբերով և զինավորված անցել են սահմանը: Առայժմ ռուսաց տեղական ոստիկանները ոչինչ արգելքներ չեն հարուցում այդ շարժումների դեմ: Ռուսաց թերթերը թե՛ Թիֆլիսում և թե՛ մայրաքաղաքներում բացահայտ կերպով տեղեկություններ և լուրեր են տպում դոցա մասին»[1]: Հայ կամավորների մասին գրվեց նաև մամուլում: Այսպես, օրինակ, Արևմտյան Հայաստանում կատարվող անցքերին բավական լավատեղյակ «Գոլոս» թերթը հայտնում էր, թե՝ «...ռուսաց սահմաններից 500 ձիավոր հայ կամավորներ անցել են Թուրքիա և նրանց հետ մինչև անգամ քուրդ ցեղերը սկսել են միանալ»[2]: Մամուլը և գրական այլ նյութեր վկայում են այն մասին, որ կամավորական շարժումը, բացի Ալեքսանդրապոլից և Կարսից, ընդգրկել էր նաև Վաղարշապատը, Իգդիրը, Երևանը և այլ քաղաքներ: Հետաքրքիր է, որ, ինչպես պատմում է ականավոր գիտնական-բանասեր Ստեփան Մալխասյանցը, 1880-ական թթ. սկզբներին, Պետերբուրգի մի շարք հայ ուսանողներ, թողնելով իրենց ուսումը, սովորել են զինագործական արհեստ Տուլայի զինագործարաններում և գնալով Պարսկաստան (Մակու), այնտեղ զինագործական արհեստանոցներ են կազմակերպել: Այդ արհեստանոցներում պատրաստված կամ վերանորոգված զենքը նրանք գաղտնի կերպով փոխադրել են Արևմտյան Հայաստան՝ թուրքական բռնակալության դեմ պայքարող հայ ժողովրդին զինելու համար[3]: Իր հուշերում վանեցի Հարություն Հ. Ծանկուլյանը գրել է, որ առաջին կովկասահայ կամավորներից հիշում է երկուսին՝ Գալուստին և Բաղդասարին, որոնք Վանում որոշ ժամանակ մնալուց հետո մեկնում են գյուղերը: «Կովկասահայերեն Գալուստին և Պաղտասարին վիճակված էր գավառի կողմերն

1 Մատենադարան, Գ. Հովսեփյանի անձնական արխիվ, թղթ. 110, վավ. 40:

2 «Մշակ», 1880, N 158, համտ. «Մեղու Հայաստանի», 1880, N 70:

3 ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, պրոֆ. Լեոյի ֆոնդ:

*երթալ և հայ գյուղացիներն ինքնապաշտպանության պատրաստել»*[1]*: Մատնության հետևանքով նրանք շուտով բանտարկվում են, բայց Կ. Պոլսի ռուսական դեսպանության միջամտության շնորհիվ ազատվում և արտաքսվում են Կովկաս: Ճանկուլյանը եզրակացնում է. «Կովկասահայերուն ներկայությունը Վանա մեջ և հաճախ երիտասարդության հետ համախորհուրդ իբր գաղափարակից ընկեր՝ իր օգուտներն ունեցավ, պետք է խոստովանել»*[2]*:*

*Կամավորական շարժմանը մեծ չափով նպաստել է Գր. Արծրունին: Եղիշե Գեղամյանը, որ ականավոր հրապարակախոսի գաղափարական հակառակորդներից մեկն էր, իր հուշերում գրել է. «Հայ կամավորների խմբեր կազմակերպելու և Տաճկահայաստան ուղարկելու մտքին՝ թե խոսքով և թե գործով, ջերմ ջատագով և պաշտպան էր «Մշակի» խմբագիրը: Արծրունու խորին համոզմամբ Տաճկաստանում հայերը ոչ մի ապագա չունեն և չեն էլ կարող ունենալ, մինչդեռ Ռուսաստանում, անշուշտ, կունենան: Եվրոպայի համակրությանը կամ անհամակրությանը Արծրունին ոչ մի արժեք չէր տալիս»*[3]*: Նույն հեղինակը ավելացնում էր, որ «կամավոր խմբեր կազմակերպողների և հայտնի ուղղությամբ գործիչներ գտնելու գործերում» եռանդուն գործունեություն է ցուցաբերել նաև Արսեն Թոխմախյանը:*

*Արևմտահայերի կամավորական շարժումը զգալի ծավալ ստացավ* 1879–1880 *թթ., այսինքն այն տարիներին, երբ ցարական կառավարությունը արգելքներ չէր հարուցում նրա դեմ: Բայց դրանից հետո, երբ ցարիզմը արմատականորեն փոխեց իր քաղաքականությունը Հայկական հարցի նկատմամբ և սկսեց հետապնդել հայ ազատագրական պայքարի կողմնակիցներին, շարժումը, բնականաբար, թուլացավ: Այս հարցում որոշ դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ արևմտահայ մի շարք գործիչներ և առաջին հերթին՝ Խրիմյան Հայրիկը, ելնելով ստեղծված նոր իրադրությունից և զգուշանալով նոր զոհերից ու կոտորածներից, կանգնեցին այն տեսակետի վրա, որ պետք է ժամանակավորապես դադարեցնել կամավորների գործունեությունը և սպասել հարմար ժամանակի: Հիասթափություն ապրեցին շատերը, բայց չնայած դրան, ոչ քիչ հայրենասեր երիտասարդներ, հաղթահարելով եղած դժվարությունները, անցնում էին Արևմտյան Հայաստան նաև հետագա տարիներին:*

---

1 *Հ. Կ. Ճանկոյեանց.* Յիշատակներ հայկական ճգնաժամէն, մաս Ա և Բ, էջ 50:

2 Նույն տեղում:

3 «Լումայ», Թիֆլիս, 1906, N 4, էջ 26-27:



3

*Հայ ազգային ազատագրական շարժման մեջ զգալի դեր խաղացին այն գաղտնի խմբակներն ու կազմակերպությունները, որոնք հիմնվեցին ու գործեցին* 1870-*ական թթ. վերջերին և* 1880-*ական թթ. սկզբներին: Կանգ առնենք դրանցից առավել կարևորների վրա:*

1879–1883 *թթ. Թիֆլիսում գործել է հայ նշանավոր մտավորականներից բաղկացած մի կոմիտե, որ խնդիր է ունեցել մասնակցել արևմտահայերի ազատագրական շարժմանը և նպաստել Հայկական հարցի բարենպաստ լուծմանը: Կոմիտեի ղեկավարն էր «Մշակ», թերթի խմբագիր Գրիգոր Արծրունին, անդամներ՝ Րաֆֆին, Արսեն Թոխմախյանը*, Բագրատ Նավասարդյանը, Գաբրիել Սունդուկյանը**, գեներալ Դմիտրի Տեր-Ասատուրովը, Աբրահամ Դաստակյանը, Ալեքսանդր Սիմոնյանը և այլք***: Իր գործունեությանը լայն ծավալ տալու համար կոմիտեն աշխատել է մասնաճյուղեր ստեղծել Անդրկովկասի հայաշատ կենտրոններում: Ժամանակակիցների հուշերի համաձայն, այդ ուղղությամբ մեծ ջանքեր է գործադրել հատկապես Արսեն Թոխմախյանը: Խոսելով այդ ժամանակաշրջանի դեպքերի մասին, Եղիշե քահ. Գեղամյանը գրել է «...Ախալցխա եկավ Արսեն Թոխմախյանը և ինձ հետ առաջին անգամ ծանոթանալով՝ հայտնեց, որ Թիֆլիսում մի ընկերություն է կազմվել, որ նպատակ ունի Տաճկահայաստանի ազատությունը: Ընկերությունը գավառներում ունենալու է յուր ճյուղերը, որպիսիներ արդեն մի քանի քաղաքներում հաստատված են: Ախալցխայում ճյուղ կազմելու և նրան ղեկավարելու համար՝ կենտրոնը ինձ է նկատի ունեցել և հենց դրա համար էլ՝ Թոխմախյանին ուղարկել է ինձ հետ բանակցելու»*[1]*: Մի այլ կապակցությամբ նույն Գեղամյանը պատմել է. «Կոմիտեի նախագահը Գրիգոր Արծրունին էր... Արսեն Թոխմախյանը շրջիկ գործակատար էր, որը մեծ ճարպկությամբ մի քանի անգամ սահմանն անցավ ու վերադարձավ»*[2]*: Թոխմախյանը իսկապես այցելել է Անդրկովկասի մի շարք քաղաքներ, ինչպես նաև Վան, Էրզրում ու Կ. Պոլիս:* 1883 *թ. նա ձեռնադրվեց վարդապետ և նշանակվեց Վարագի վարժարանի տեսուչ*[3]*: Ընկերության գործուն մասնակիցներից են եղել նաև Րաֆֆին, Բագրատ Նավասարդյանը և Գաբրիել Սունդուկյանը: Բժիշկ Բ. Նավասարդյանը ևս եղել է Կ. Պոլսում, Էրզրումում ու Վանում, զբաղվել է ազատագրական շարժման հար-*

---

1 Նույն տեղում, էջ 22:

2 *Ե. Գեղամեան.* Իմ շնորհաւորանքը «Մշակի» յոբելեանին, Թիֆլիս, 1915, էջ 226:

3 *Ռ. Փ. Հովհաննիսյան.* Նշվ. աշխ., էջ 246-247:

*ցերով: Րաֆֆին քաղաքական կապեր է ունեցել Երևանի, Մոսկվայի ու Կ. Պոլսի մի շարք հայ գործիչների հետ:*

*Կոմիտեի նպատակների մասին Րաֆֆին առիթ է ունեցել գրելու, որ իրենք զբաղվել են արևմտահայության հարցերով: «Մեր գործունեության նպատակը, մեր ցանկությունները... մեր ազգային պետքերի սահմանից այն կողմը չեն անցել: Հայկական հարցը ծագելուց հետո մենք, իրավ է, աշխատել ենք տաճկահայերի ցավալի դրության բարվոքման մասին, աշխատել ենք Բեռլինի 61-րդ հոդվածի իրագործման մասին...»[1]:*

*Մոտավորապես նույն կարծիքն է հայտնել Քրիստափոր Միքայելյանը: Գր. Արծրունու Թիֆլիսի կոմիտեն, գրել է նա, զբաղվում էր արևմտահայերի հարցով և աշխատում էր չանել այնպիսի քայլեր, որոնք հակառակ լինեն ռուսական պետության շահերին: Ի դեպ, Միքայելյանը կոմիտեի անդամներից հիշում է, բացի Արծրունուց, թատերագիր Սունդուկյանին և ռուսական բանակի զորավար Տեր-Ասատուրովին[2]:*

*Հայրենասիրական գաղափարների տարածման հետ մեկտեղ Գրիգոր Արծրունու գլխավորած միությունը (կոմիտեն) աշխատել է ստեղծել կամավորական խմբեր և ուղարկել նրանց Արևմտյան Հայաստան: Այդ ուղղությամբ գործնական քայլեր են կատարվել Իգդիրում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Ախալցխայում ու Ախալքալաքում: Խոսելով 1870-ական թթ. վերջերին ծավալված հայրենասիրական շարժման մասին բանասեր-պատմաբան Հայկ Աճեմյանը իր հոդվածներից մեկում իրավամբ գրել է, որ Բեռլինի վեհաժողովից հետո հայ գաղափարական երիտասարդները «Կովկասեն ճամփա կիյնային դեպի Վասպուրական (հետագային նաև դեպի Բարձր Հայք և Տարոն) Մայր Հայրենիքի մեջ ապրելու և գործելու նպատակով... Այդ հայրենանվեր ուխտյալներեն և գաղափարական ու անձնվեր քարոզիչներեն անդրանիկն էր կովկասահայ համեստ երիտասարդ մը –* Աղեքսանդր Թավաքալյանը, *որ 1880 թ. մայիսին կհասներ Վան, կներկայանար Խրիմյան Հայրիկին և* Ջաքի *ծածկանունով կրթական աշխատանքի կլծվեր: Այս խորհրդավոր երիտասարդը հետագային պիտի դառնար հայ հեղափոխական-ազատագրական շարժման անդրանիկ առաջյալներեն մեկը –* Բագրատ վարժապետ Գևորգ-Թավաքալյանը *»[3]:*

*Աղեքսանդր Թավաքալյանը, իսկապես, իր ժամանակի ջերմ հայրենասերներից մեկն էր: 1879 թ. ընդհատելով իր ուսումը Պետերբուրգում*

1 *Րաֆֆի,* Երկերի ժողովածու, հ. 10, Ե., 1959, էջ 591:

2 *Քր. Միքայէլեան.* Բեկորներ իմ յուշերից.– «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924 , օգոստոս, էջ 61:

3 «Վէմ», Փարիզ, 1936, N 1, էջ 26-27:



*նա գալիս է Թիֆլիս, ծանոթանում Արծրունու, Րաֆֆու և նրանց գլխավորած կոմիտեի մի շարք անդամների հետ ու ապա, հատուկ հանձնարարությամբ ճանապարհվում է դեպի Վան, ուր ժամանում է 1880 թ. մայիսին: «Երեսուն տարեկան աշխույժ երիտասարդ Թավաքալյանը կներկայանա Խրիմյան Հայրիկին, կներկայացնե իր հանձնարարականները, որոնք իրեն տրված էին Թիֆլիսեն (անտարակույս Գր. Արծրունիեն, Րաֆֆիեն և ուրիշներե) և անմիջապես կնշանակվի ուսուցիչ Արճակ գավառի Խառակոնիս գյուղը ու կերթա իր պաշտոնատեղին»: Բայց Թավաքալյանը, որին կոչում էին Գևորգ վարժապետ, սովորական ուսուցիչ չէր: «Գևորգ վարժապետը ուսուցիչ ըլլալե ավելի հեղափոխական քարոզիչ էր, զինվորական մարզիչ, որ աշակերտներուն զինվորական մարզանք կսորվեցներ, ինչպես նաև ազգային երգեր, փայտե հրացաններով վարժություններ ընել կուտար, ազգային տոներու առթիվ հանդեսներ կկազմակերպեր և հայրենասիրական ճառեր կխոսեր»[1]:*

*Վերը բերված փաստերը ցույց են տալիս, որ Գր. Արծրունու կոմիտեն քաղաքական կապերի մեջ է գտնվել նաև Վանի հայրենասերների և մասնավորապես Խրիմյան Հայրիկի հետ: Հետաքրքիր է, որ 1880 թ. վերջերին Մ. Փորթուգալյանը Վանից Թիֆլիս գնալով այցելել է Արծրունուն: Խոսելով այս մասին, իր ժամանակի գործիչներից մեկը՝ Մարկոս Նաթանյանը, միաժամանակ, նշել է, որ այդ այցելությունից հետո Փորթուգալյանի գործունեության մեջ ավելի ուժեղացան* «հեղափոխական միտումները»[2]*: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Գրիգոր Արծրունու գլխավորությամբ Թիֆլիսում գործող կոմիտեն մեծ ազդեցություն է ունեցել Անդրկովկասի ու Արևմտյան Հայաստանի հայ հայրենասերների շրջանում:*

*Թիֆլիսի կոմիտեն գոյություն ունեցավ մինչև 1883 թ. մայիս ամիսը: Այդ տարվա մայիսի 1-ին ցարական ոստիկանները խուզարկություն կատարեցին «Մշակի» խմբագրությունում և Արծրունու ու Րաֆֆու բնակարաններում: Իր բարեկամներից մեկին՝ Մ. Փանյանին ուղղված 1883 թ. մայիսի 17-ի թվակիր նամակում վիպասանը գրել է. «Ներկա ամսի 13-ին նույնպես խուզարկություն կատարվեցավ իմ բնակարանի մեջ: Բոլոր թղթերս ... գրավեցին: Եվ այժմ գտնվում եմ ժանդարմների վարչության հսկողության ներքո, ինձ արգելված է Թիֆլիսից հեռանալ»[3]: 1883 թ. հունիսի 2-ին Րաֆֆին նույն Փանյանին հայտնում էր: «Թե՛ պ. Արծրունու գործը և թե՛ իմ գործը դեռևս քննվում է»: Հարցը*

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում, էջ 26:

3 *Րաֆֆի.* Երկերի ժողովածու. հ. 10, էջ 591:

վերջացավ նրանով, որ կոմիտեն վերացվեց, ոստիկանությունը արգելեց զբաղվել «հակաօրինական» գործունեությամբ: Բանն այն է, որ Հայկական հարցում և ընդհանրապես Մերձավոր Արևելքի հարցերում ցարական կառավարության քաղաքականության մեջ տեղի ունեցավ արմատական փոփոխություն: Եթե մինչ Բեռլինի կոնգրեսը պաշտոնական Ռուսաստանը հովանավորում էր հակաօսմանյան ազգային-ազատագրական շարժումները, ապա դրանից հետո բոլորովին հակառակ դիրք բռնեց*:

Ցարական կառավարության այս շրջադարձն անակնկալ էր Արծրունու համար: Նա ապրեց հոգեկան ծանր վիճակ, դժգոհության և բողոքի պահեր: Սակայն, վերջիվերջո, «Մշակի» խմբագրին «մնում էր խոհեմաբար սպասել այն օրվան, երբ Ռուսաստանում կիրականանան սահմանադրական կարգեր»[1]:

1880-ական թթ. Գր. Արծրունու քաղաքական գործունեությունը հայտնվեց փակուղու առաջ: Նշանավոր հրապարակախոսի ղեկավարությամբ գործող կոմիտեն վերացվեց (1883 թ.): Բայց հայ ազատագրական շարժումը, իհարկե, չկանգնեց կես ճանապարհին, ընդհակառակը, այն նոր թափ ու ծավալ ստացավ:

Ազատագրական շարժումը զգալի արձագանք գտավ նաև Երևանի հայ մտավորականության մեջ: 1880–1883 թթ. Երևանում եռանդուն գործունեություն ծավալեց մի գաղտնի ընկերություն, որ կրում էր «Հայասեր-ազգասեր» անունը: Նրա մեջ ընդգրկված էին երեսունից ավելի հայ մանկավարժներ, բժիշկներ, նահանգական վարչական հիմնարկների գրասենյակային աշխատողներ և այլք: Խմբակի ղեկավար ու ակտիվ գործիչներն էին Երևանում հրատարակվող «Պսակ» լրագրի խմբագիր, փիլիսոփայության դոկտոր Վասակ Պապաջանյանը, Դորպատի համալսարանը ավարտած, բժիշկ և ուսուցիչ Լևոն Տիգրանյանը, օրիորդաց դպրոցների տեսուչ Գայանե Հովհաննիսյանը, Ս. Պետերբուրգի համալսարանի թեկնածու, փաստաբան Ռուբեն Ջալալյանը, գիմնազիայի հայոց լեզվի ուսուցիչ, Ցյուրիխի ուսուցչական ինստիտուտն ավարտած Սարգիս Բեկ-Նազարյանը, Երևանի գավառային դատավորի քարտուղարի օգնական, Լազարյան ճեմարանը ավարտած Հովհաննես Տեր-Զաքարյանը, գրագիտություն տարածող ընկերության հիմնադիր Թովմաս Մհերյանը և ուրիշներ:

Երևանի խմբակի ու նրա անդամների հետ կապեր են ունեցել Րաֆֆին, Արծրունին, Մոսկվայի համալսարանի ուսանող, հայ նարոդնիկ Սրապիոն Տեր-Գրիգորյանցը և Թիֆլիսի, Մոսկվայի ու Կ. Պոլսի այլ հայ

1 «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, N 1, էջ 21:



գործիչներ: Ի դեպ, ոստիկանությունը սկզբում այն կարծիքը հայտնեց, որ, իբր, Րաֆֆին ևս եղել է Երևանի խմբակի անդամ:

Ընկերությունը լայն քարոզչություն ծավալեց հայ բնակչության և մասնավորապես երիտասարդության մեջ ազգային-ազատագրական գաղափարներ տարածելու ուղղությամբ: Ժանդարմական վարչության նյութերում ասվում է, որ ընկերությունը ձգտել է երիտասարդությանը դաստիարակել հայրենասիրական ոգով, զենք ու դրամ ուղարկել արևմտահայերին, վերականգնել հայ ազգային պետականությունը[1]: Խմբակի անդամները տարածում էին հայրենասիրական բովանդակություն ունեցող գրքեր ու գրքույկներ, հայ հին թագավորների ու քաղաքների նկարները, հատկապես «Մայր Հայաստան» հայտնի նկարը[2]: Խմբակը կապեր է հաստատել արևմտահայ մի շարք գործիչների և Էրզրումի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպության հետ, փորձեր են արվել ստեղծել հայ-քրդական միացյալ ճակատ ուղղված թուրքական տիրապետության դեմ: Ընկերության անդամ Ջալալյանը, օրինակ, Վանի ռուսական փոխհյուպատոս Կ. Կամսարականին ուղարկած նամակներում այն միտքն էր զարգացնում, որ հայերը պետք է դաշինք կնքեն ռուս-թուրքական-պարսկական սահմանամերձ շրջաններում բնակվող քրդական ցեղերի հետ: Տարածված էր այն կարծիքը, թե չպետք է հույս դնել Բեռլինի դաշնագիրը ստորագրած պետությունների վրա, որովհետև նրանք ոչ մի գործնական քայլ չեն կատարում Հայկական հարցի լուծման ուղղությամբ: Հայերին մնում է սեփական ուժերով, սեփական արյունով նվաճել իրենց մարդկային իրավունքը: Այս տեսակետը պաշտպանում էր գլխավորապես ուսանող երիտասարդությունը:

Արխիվային նյութերից երևում է, որ Երևանի «Հայասեր-ազգասեր» կազմակերպությունը դրամ է հավաքել զեյթունցիներին օգնելու համար: «Մշակի» խմբագրությանը ուղղված Մհերյանի երկու նամակները խոսում են նաև այն մասին, որ Երևանում դրամ է հավաքվել նաև Վասպուրականի սովյալներին ուղարկելու համար:

Ընկերության գլխավոր նպատակն է եղել մասնակցել թուրքական տիրապետության դեմ ծավալված պայքարին: Սակայն քանի որ 1880-ական թթ. ցարական կառավարությունը ուժեղացրեց իր հակահայկական քաղաքականությունը, որի հետևանքով փակվեցին հայկական դպրոցների, մշակութային կազմակերպությունների ու բարեգործական ընկերու-

1 ՀՀ ՆՊ ԿՊՊԱ , ֆ. 51/115, ց. 2, գ. 44, թ. 1-20. *Թ. Խ. Հակոբյան.* Երևանի պատմությունը (1879–1917), Ե., 1963, էջ 218:

2 ՀՀ ՆՊ ԿՊՊԱ, ֆ. 51գ/115գ, ց. 2, գ. 12, թ. 1-23. *Ռ. Փ. Հովհաննիսյան.* նշված աշխ. էջ 239:

թյունների մեծ մասը, «Հայասեր-ազգասեր» խմբակի անդամները հանդես էին գալիս նաև ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ, հաճախ ընդհարվելով ռուսական չինովնիկների հետ: Բնորոշ է, որ Երևանում կատարված խուզարկությունների ժամանակ ընկերության անդամների մոտ հայտնաբերվել է Մոսկվայում հիմնված «Հայրենասերների միության» հայրենասիրական կոչը, մի հանգամանք, որ վկայում է Երևանի խմբակի և Մոսկվայի միության կապերի մասին: Չմոռանանք հիշել, որ Մոսկվայի հայ հայրենասերները գտնվում էին նարոդնիկական, հակացարական շարժման գաղափարների ազդեցության տակ:

Երևանի խմբակի գոյությունը հայտնաբերեց տեղական ժանդարմական վարչությունը 1883 թ. մարտին: Տեղի ունեցան բանտարկություններ և խուզարկություններ ոչ միայն Երևանում, այլև Թիֆլիսում: Պատասխանատվության կանչվեցին մոտ 40 մարդ, որոնցից մի մասը վարչական կարգով աքսորվեց կայսրության այլ քաղաքներ (Կազան, Օդեսա, Սուխում և այլն), մյուս մասն առնվեց գաղտնի հսկողության տակ կամ ազատ արձակվեց: Կարճվեց նաև Րաֆֆու գործը, չնայած ոստիկանության եզրակացության մեջ ասված էր, որ Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» թերթի աշխատակից Հակոբ Մելիք-Հակոբյանը «կապեր է ունեցել Հայաստանը Թուրքիայի լծից ազատագրելու նպատակով արտասահմանում հիմնված ընկերությունների անդամների հետ»: Նշվում էր նաև, որ խուզարկության ժամանակ գտնվել է նրա մի ձեռագիրը, որտեղ պարսավվում է կառավարության կարգադրությունը Էջմիածնի վանքի կալվածքները գրավելու մասին[1]:

Այդ տարիներին Թիֆլիսում ապրող Րաֆֆին ուշադրությամբ հետևում էր Երևանում կատարվող դեպքերին և նրանց մասին տեղեկություններ էր հայտնում Մոսկվայի իր բարեկամներին: 1883 թ. հունիսի 2-ին նա Մ. Փանյանին գրում էր. «Դուք, իհարկե, լսած կլինեք, որ Երևանում ևս մի քանի նշանավոր երիտասարդների մոտ խուզարկություններ են արել. սկզբում մի քանի օրով կալանավորել են, հետո դրամական երաշխավորություն են առել ու բաց թողել: Նրանց քննությունն էլ դեռևս վերջացած չէ. տեղային գուբերնատորը նրանց դեմ սաստիկ ինտրիգա է անում: Վերջը ի՞նչ կլինի, հայտնի չէ»[2]:

Նկատենք, որ Երևանի «Հայասեր-ազգասեր» ընկերության մասին ոստիկանության կողմից ստեղծված նյութերի մեծ մասը, այդ թվում և Ս. Պետերբուրգի ՊԿՊ արխիվից ստացված համապատասխան փաստաթղթերի

1 ЦИАМ, ф. Департамент полиции, 3-е делопроизводство, 1883 г., д. 172.
2 *Րաֆֆի*. Երկերի ժողովածու. հ. 10, էջ 593:



պատճենները, պահվում են ՀՀ ՊԿՊ արխիվում: Հուշագրություններից ամենաարժեքավորը՝ բժիշկ Լևոն Տիգրանյանի «Հիշատակարանը», որը պարունակում է հետաքրքիր տեղեկություններ մեզ այստեղ հետաքրքրող հարցի մասին, պահվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Թիֆլիսի կոմիտեի և Երևանի ընկերության գործունեության շրջանում տեղի ունեցան նշանակալի դեպքեր նաև բուն Արևմտյան Հայաստանում: 1881 թ. գարնանը Էրզրում քաղաքում հիմնվեց մի խոշոր գաղտնի կազմակերպություն, որը զգալի չափով խթանեց օսմանյան տիրապետության դեմ ուղղված հայ ազատագրական շարժումը: Քաղաքական-ազատագրական պայքարի նպատակով ստեղծված այդ կազմակերպությունը ուներ «Պաշտպան հայրենյաց» անունը*, սակայն նախազգուշական նկատառումներով, այն սովորաբար կոչում էին «Երկրագործական ընկերություն»: Կարծում էին, որ եթե թուրքական ոստիկանությունը հայտնաբերի նրա գոյությունը, «Երկրագործական ընկերություն» անունը կդյուրացնի այն պատճառաբանությունը, թե կազմակերպությունը հեռու է քաղաքական հարցերից և հետապնդում է խաղաղ, կրթական-լուսավորական նպատակներ:

Էրզրումի գաղտնի ընկերության մասին կան խիստ հակասական տվյալներ: Դեռ իր ժամանակ արտահայտվեցին իրար հակադիր և ծայրահեղ երկու տեսակետներ: Հայկական որոշ շրջաններ և պարբերական մամուլի մի քանի օրգաններ, կազմակերպության հայտնաբերումից անմիջապես հետո աշխատեցին այն տպավորությունը ստեղծել, թե այդ գաղտնի ընկերությունն առանձին կարևորություն չի ներկայացնում և որ այն մի քանի երիտասարդներից բաղկացած խաղաղ, մշակութային-կրթական նպատակներ հետապնդող խմբակ է եղել: Այսպես արտահայտվեցին, օրինակ, Էրզրումի առաջնորդ Մ. Օրմանյանը, Կ. Պոլսի հայ պատրիարքարանը և այնտեղ հրատարակվող որոշ թերթեր: Նրանք ամեն կերպ ձգտում էին ապացուցել, որ ընկերությունը չի կրել հակակառավարական բնույթ, և նրան օտար են եղել քաղաքական-ապստամբական շարժման գաղափարները: Այս տեսակետը պնդող և քարոզող մի շարք հոդվածներ և հայտարարություններ տպվեցին ժամանակի հայ պարբերական մամուլի էջերում և մասնավորապես, «Մասիսում»: Հիմնականում այս տեսակետն էին բաժանում նաև այն հեղինակները, որոնք ասում էին, թե կարինցի երիտասարդները ընկերություն են կազմել և զենք են հավաքել՝ ինքնապաշտպանության նպատակներով, որ նրանք նպատակ են ունեցել կռվել ոչ թե կառավարության, այլ ավազակային խմբերի դեմ: Այսպես արտահայտվեց, օրինակ, Աբգար Հովհաննիսյանի «Արձագանքը», որը 1883 թ.

իր N 1-ի (Հունվարի 1-ի) «Թուրքիայի խոստումները» խորագիր կրող առաջնորդող հոդվածում ասում էր, թե «Կարնեցի երիտասարդները հանդգնություն ունեցան տան մեջ զենք ունենալու անձնապաշտպանության (ընդգծումը տեքստում – Մ. Ն.) համար՝ այն ավազակների դեմ, որոնց կառավարությունը ուժ կամ կամք չունի զսպելու»[1]:

Չնայած այդ տեսակետը պնդողները բերում էին որոշ փաստեր ու պատճառաբանություններ, բայց անկասկած է, որ Էրզրումի ընկերության դերն ու նշանակությունը Թերագնահատողների մեջ խոսում էր նաև քաղաքական նկատառումը: Նրանք դիտավորյալ կերպով աշխատում էին աղմուկ չառաջացնել, գործին լուրջ կերպարանք չտալ, որպեսզի առիթ չտան սուլթանական կառավարությանը՝ հայերի դեմ նոր հալածանքներ և ճնշումներ սկսելու համար: Պատահական չէ, որ արևմտահայ մի շարք գործիչներ երկար ժամանակ լռություն պահպանեցին և փորձեցին մոռացության մատնել ընկերության հետ կապված դեպքերը*: Բնորոշ է, որ «Մասիսը» մի քանի անգամ ակնարկներ արեց այն մասին, թե Թիֆլիսի «Մշակը» անխոհեմ քայլ է անում, երբ Էրզրումի գաղտնի կազմակերպությունն աշխատում է ներկայացնել որպես հակասուլթանական քաղաքական մի կազմակերպություն[2]:

Բոլորովին հակառակ տեսակետ էին պաշտպանում «Մշակը» և ռուսական ու արտասահմանյան մամուլի մի շարք օրգաններ: Եթե արևմտահայ «սահմանադրականները» ամեն կերպ նսեմացնում էին Էրզրումի կազմակերպության նշանակությունը, ապա նշված օրգանները ամեն կերպ աշխատում էին գործն այնպես պատկերացնել, որ կազմակերպությունը հակասուլթանական լայն շարժման արդյունք է, որ այդ կազմակերպությունն ունեցել է ճյուղեր Արևմտյան Հայաստանի բոլոր գավառներում, թե ընկերության մեջ ընդգրկված են եղել հազարավոր անդամներ և այլն: Այսպես, օրինակ, «Մշակի» թղթակիցը 1882 թ. դեկտեմբերի 14-ին (26) Վանից գրում էր. «Ընդարձակ ճյուղեր ունեցող ապստամբական մի հայ ընկերություն երևան եկած է Էրզրում: Այս ընկերությունը հատուկ գաղտնի տպարան ունի եղեր. մինչև այժմ հազարավոր անդամակիցներ ունեցեր է, բայց Թուրք կառավարությունը չէ կրցեր իմանալ այդ գաղտնիք»[3]: Մի այլ թղթակցության մեջ, գրված Տրապիզոնից 1883 թ. փետրվարի 25-ին, ասված էր. «...գրեթե Տաճկահայաստանի ամբողջ գյուղացի ազգաբնակությունը Կարնո մեջ երևան եկած ապստամբական ընկերու-

1 «Արձագանք», 1883, N 1, էջ 1:
2 «Մասիս», 1883, N 3479:
3 «Մշակ», 1883, N 1:



թյան գործակից, և անդամ է...»[1]: Մոտավորապես նույն ձևով էին գրում նաև Ռուսաստանի և եվրոպական այլ երկրների մամուլի մի քանի օրգաններ:

«Մոսկովսկի տելեգրաֆ» լրագիրը, հենվելով արևմտաեվրոպական և մասնավորապես անգլիական թերթերի տեղեկությունների վրա, հայտնում էր, որ «ապստամբական շարժումը տեղի է ունեցել ոչ միայն Էրզրումում, այլև ընդգրկել է Փոքր Ասիայի բոլոր քաղաքները: Ամենուրեք պատրաստ են զենք վերցնել և իրենց ուսերից թոթափել թուրքական լուծը: Բանտարկություններին և ամեն տեսակ հալածանքներին վերջ չկա»[2]:

Արդյոք կա՞ր որևէ միտում Էրզրումի գաղտնի կազմակերպության գործունեությունը նմանօրինակ ձևով պատկերացնող թերթերի և նրա աշխատակիցների մեջ: Կարծում ենք՝ այո: «Մշակը», օրինակ, ցանկանում էր ցույց տալ, որ Արևմտյան Հայաստանում առկա են հակասուլթանական ժողովրդական լայն շարժումներ և որ այդպիսի պայմաններում անհրաժեշտորեն պետք է ճնշումներ գործադրվեն սուլթանական կառավարության վրա՝ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածն իրականացնելու համար:

Հետաքրքիր դիրք բռնեց սուլթանական կառավարությունը: Սկզբնական շրջանում, երբ դեռ նոր էր հայտնաբերվել գաղտնի կազմակերպությունը, նա մեծ աղմուկ բարձրացրեց, աշխատելով ցույց տալ, որ հայ բնակչությունն սկսել է հակակառավարական լայն շարժում: Թուրքական բռնապետության պաշտոնական ներկայացուցիչներն ամեն կերպ չափազանցնում էին փաստերը, որպեսզի հիմք և առիթ ունենան հայահալած նոր քաղաքականություն վարելու համար: Բնորոշ է, որ թուրքական կառավարության ռազմական նախարար Ղազի Օսման փաշան, ինչպես հաղորդում էր «Ռուսսկի կուրիեր» թերթը, Կ. Պոլսի հայ պատրիարքին հայտնել էր, թե «Բ. Դռանը շատ լավ հայտնի է ամեն բան, որ կատարվում է Հայաստանում, որ այնտեղ 300000 հայեր պատկանում են այն գաղտնի ընկերություններին, որոնք ձգտում են Հայաստանը երկրորդ Բուլղարիա դարձնել, որ այդ գաղտնի ընկերությունները ամբողջ Հայաստանում ունեն բաժանմունքներ, որոնք Երևանի միջոցով կապված են Թիֆլիսի հետ»[3]:

Թուրքական կառավարությունը, ինչպես հայտնում էր «Մշակի» Էրզրումի թղթակիցը, պաշտոնական հայտարարություն էր անում այն մասին, որ իբր, գաղտնի կազմակերպության հայտնաբերման կապակցու-

1 Նույն տեղում, N 37:
2 Московский телеграф, 1883, N 2.
3 Русский курьер, М., 1883, N 15.

թյամբ արված խուզարկությունների ժամանակ Հայոց եկեղեցու ներքնահարկում գտել են 6000 հրացան և 6 թնդանոթ[1]: Այսպիսի հայտարարություններ արվեցին նաև արտասահմանում: Սակայն թուրքական կառավարությունը շուտով արմատապես փոխեց իր դիրքը: Զգալով, որ էրզրումի դեպքերի կապակցությամբ բարձրացած աղմուկը կարող է օգտագործվել եվրոպական գաղութարար պետությունների կողմից, Բարձրագույն Դուռը հրահանգ տվեց նոր մոտեցում ցուցաբերել կատարված դեպքերի նկատմամբ՝ քիչ խոսել գաղտնի ընկերության մասին և ամեն կերպ աշխատել նվազեցնել այդ ընկերության նշանակությունը: Ինքը՝ Աբդուլ Համիդը, ինչպես ցույց է տալիս նրա կենսագրությունը, նախընտրում էր գործել լռության մեջ և արտաքուստ՝ խաղաղության պայմաններում: Եվ ահա սուլթանական կառավարության այն նույն պաշտոնական ներկայացուցիչները և թերթերը, որոնք առաջ ամեն կերպ ուռճացնում էին դեպքերը և աղմուկ բարձրացնում, այժմ ընդհակառակն, աշխատում են ցույց տալ, որ նշված հայկական գաղտնի ընկերությունը որևէ նշանակությունից զուրկ մի չնչին խմբակ է, և ոչ մի խոսք չի կարող լինել ժողովրդական լայն շարժման մասին: Այս տեսակետից խիստ բնորոշ է «Գոլոս» թերթի հետևյալ հաղորդագրությունը. «Վիեննայի թուրքական դեսպանությունը դիմել է Վիեննայի «Պոլիտիշե կորեսպոնդենցի» խմբագրությանը, խնդրելով, որ նա հայտարարություն անի այն մասին, թե Արևմտյան Հայաստանի քաղաքական դրության և հատկապես այնտեղ հայտնաբերված քաղաքական գաղտնի դավադրության մասին եղած լուրերը ճիշտ չեն և չափազանցված են: Իրականությունն այն է, որ Հայաստանում բանտարկված են մի քանի հոգի, այն էլ ոչ թե քաղաքական, այլ սովորական հանցագործության համար»[2]:

Էրզրումի ընկերության նկատմամբ թուրքական կառավարության այդ նոր վերաբերմունքը աննկատ չմնաց և այդ մասին գրվեց ժամանակի մի շարք պարբերական հրատարակություններում: Այսպես, օրինակ, «Մշակի» Տրապիզոնի թղթակիցը, խոսելով ընկերության հետ կապված խուզարկությունների և բանտարկությունների մասին, գրում էր. «Ոստիկանությունը սկզբից ամենայն ջերմեռանդությամբ ձերբակալություններ կըներ, կչարչարեր ձերբակալվածները և մեծ կարևորություն կուտար այդ խնդրույն, այժմ չենք գիտեր ի՞նչ քամի փչեց, առաջվա ընթացքին բոլորովին հակառակ դիրք մը բռնեց: Բայց երբ մի քիչ մտածենք, կհասկընանք ի՞նչ քամի փչած լինելը. հանկարծակի ոստիկանությունը խելքը գլուխը հավաքեց և տեսնելով, որ Կարնո խնդիրը մեծցընելը իրեն

1 «Մշակ», 1883, N 12:

2 Голос, 1883, N 2.



շահերուն հակառակ է, ամեն ճիգ թափեց և կթափե այդ խնդիրը ծածկելու: Պոլսո «Վաքըթը» ամեն օր կպոռա, թե սուտ են Կարնո խնդրո մասին եղած բոլոր զրույցները, և պաշտոնապես կհրատարակե, թե առ Բարձրագույն Դուռը այս մասին ոչ մի տեղեկություն դեռ տրված չէ»[1]:

Նույն միտքն էր հայտնում նաև Արփիար Արփիարյանը, որն իր մի թղթակցության մեջ առանձին քննության էր առնում այդ հարցը[2]: Պետք է համաձայնել «Մշակի» թղթակիցների հետ, բայց մեկ վերապահությամբ: Սուլթանական ոստիկանությունը դադարեց էրզրումի կազմակերպության մասին չափազանցրած լուրեր տարածելուց, սակայն չդադարեց զանգվածային խուզարկություններ, բանտարկություններ և խոշտանգումներ գործադրելուց: Տարբերությունն այն էր, որ այժմ ոստիկանությունն իր գործը կատարում էր առանց աղմուկի, գաղտագողի:

Մենք փորձեցինք ցույց տալ, որ էրզրումի գաղտնի կազմակերպության մասին գոյություն ունեն խիստ հակասական, իրար ժխտող տվյալներ, մի հանգամանք, որը բավականչափ դժվարացնում է ճիշտ գաղափար կազմելու այդ կազմակերպության մասին: Սակայն այդ միտումնավոր, սուբյեկտիվ բնույթ կրող վկայություններից բացի, մեզ հասել են նաև համեմատաբար օբյեկտիվ, արժանահավատ գրական և արխիվային նյութեր, որոնց հիման վրա հնարավոր է ընդհանուր գաղափար կազմել ընկերության մասին: Այժմ աշխատենք տեսնել, թե ինչ էր իրենից ներկայացնում 1881 թ. էրզրումում կազմակերպված հայկական գաղտնի կազմակերպությունը:

Նախ և առաջ ընկերության կազմի մասին: Ի՞նչ կազմ է ունեցել կազմակերպությունը, ովքե՞ր են եղել նրա ղեկավարները: Ցարական կառավարության արտաքին գործերի մինիստրության արխիվում պահվել են էրզրումի ռուսական հյուպատոս գեներալ-մայոր Ա. Դեննետի հեռագրերը և զեկուցագրերը կազմակերպության մասին: Դեննետը նշում է, որ ընկերության անդամների թիվը հասել է մի քանի հարյուրի, և որ նրանք «մեծ մասամբ պատկանում են արհեստավորների, մանր առևտրականների դասին և ընդհանրապես ցածր դասակարգին»[3]:

Հյուպատոսի զեկուցագրերում որպես կազմակերպության ղեկավար հիշատակվում է Խաչատուր Կերեքցյանը[4]:

1 «Մշակ», 1883, N 3:

2 Նույն տեղում, N 2:

3 АВПРИ, Армянский фонд, Константинопольское посольство, д. 71, л. 278.

4 Նույն տեղում, գ. 71/6, թ. 280:

Ի՞նչ նպատակներ է հետապնդել կազմակերպությունը, ինչպիսի՞ ծավալ է ընդունել նրա գործունեությունը: Գեներալ Դեննետի 1882 թ. դեկտեմբերի 11-ի զեկուցագրում ասվում է, որ նշված հայկական գաղտնի ընկերությունը ցանկացել է կազմակերպել «զինված ապստամբություն թուրքական կառավարության դեմ», որ «դավադիրներն ունեցել են զինվորական կազմակերպություն», որ խուզարկության ժամանակ «հայտաբերված են թռուցիկներ և զենք»[1]: Դեննետը զեկուցում էր նաև, որ գաղտնի ընկերությունն ունեցել է իր հեկտոգրաֆը, որի միջոցով տպել են անդամատոմսեր, ընկերության երդմնագրեր և այլն: Երդման տեքստում, ինչպես հաղորդում է Դեննետը, ասվում էր, թե ընկերության անդամը «երդվում է մինչև իր արյան վերջին կաթիլը զենքը ձեռքին պաշտպանել հայրենիքի շահերը»[2]:

Ավելի ուշ (1883 թ. հուլիսի 15-ին) կազմած իր զեկուցագրում գեներալ Դեննետը գրում էր, որ դավադիրները ոչ միայն կապեր են ունեցել գավառների, այլև Կոստանդնուպոլսի հայերի, ինչպես նաև Թիֆլիսի և ապա «Ռուսաստանի նիհիլիստների հետ»[3]:

Դեննետի հաղորդած տեղեկությունները, ընդհանուր առմամբ, ճիշտ են: Առանձնապես պետք է նշել, որ նրա այն պնդումը, թե Էրզրումի «դավադիրները» կապ են ունեցել Թիֆլիսի հետ, ճշտվում է:

Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանի արխիվում պահվում են գաղտնի կազմակերպության ղեկավար Խաչատուր Կերեքցյանի փոքր եղբոր՝ Տիգրան Կերեքցյանի հուշերը*: Այդ հետաքրքրական փաստաթղթից պարզվում է, որ կազմակերպությունը սերտ կապեր է ունեցել Թիֆլիսի հայ մտավորականության հետ և որ Խաչատուր Կերեքցյանը, ինչպես նաև գաղտնի ընկերության ակտիվ գործիչներից Կարապետ Նշկյանը Թիֆլիս են գնացել՝ կազմակերպության համար անհրաժեշտ դրամական միջոցներ հայթայթելու և այլն: Տիգրան Կերեքցյանն իր հուշերում այդ մասին գրում է. «81 թվականին Կերեքցյանը գնաց Վան և այդտեղից էլ Թիֆլիս, Երևան և վերադարձավ Կարին: Թիֆլիսեցիք խոստացել էին իրենց աջակցությունը նյութապես և բարոյապես: Ընկերները լսելով, որ կովկասցիք մասնակցում են, ավելի եռանդի կուգան և գործին սրտով կկպչեն: Ընկերներից մի քանիսը կպահանջեն, որ դրամական օգնությունը Ռուսաստանից պահանջվի, իսկ Կերեքցյանը հակառակը կպնդե, թե նախապես մենք պետք է գործը լավ կազմակերպենք, որպեսզի նրանց հավատքը ի չար գործած չլինենք: Այդ միջոցին Կովկասից գալիս են պարոն Բագրատ Նավասարդյանը և Արսեն Թոխմախյանը ...Գործը ուսումնասիրելեն վերջը խորհուրդ կտան երդմնագրեր հավաքել: Կարնեցիք կհամոզվեն երդմնագրեր հավաքել, մի քանիսը չեն տալիս... Նշկյան Կարապետը ուղարկում են Թիֆլիս, որ փող բերի գործին ավելի մղում տալու համար: Նշկյանը Թիֆլիսում երկար ժամանակ մնում է, նրան չեն հավատացել, մինչև որ մի նոր հանձնարարական են ուղարկում: Նշկյանը ստանում է մի գումար և մինչ վերադարձը, արդեն ընկերության գործը բացված էր»[1]:

Էրզրումի կազմակերպության գործունեության մասին կան նաև այլ աղբյուրներ: Հետաքրքիր տեղեկություններ է տալիս ընկերության դատավարության կապակցությամբ թուրքական իշխանության կազմած գաղտնի եզրակացությունը: Մեղադրական այդ եզրակացության մեջ ասված էր, թե դավադիրները «Էրզրում քաղաքը և իր շրջակայքը Թուրքիայի տիրապետությունից հանելու նպատակով հեղափոխություն են կազմակերպել... Այս հեղափոխության միտքը հղացել են Հայոց ընթերցարանում Խաչատուր Կերեքցյանը, ընթերցարանապետ Հովհաննես (Աստուրյան) և Հակոբ Թերզիբաշյան, երբ լրագրերում կարդացել են, թե նախ Գարադաղի (Չեռնոգորիա), հետո Հունաստանի խնդիրները կարգադրելուց հետո, կարգը պիտի գար Հայաստանի բարենորոգումներին... Ամբաստանագրում այնուհետև ասվում է, որ Կերեքցյանը մեկնել է Թիֆլիս, ուր տեսնվել է ոմանց հետ, խորհրդակցել է նիհիլիստների խմբի հետ և սրանցից մեկին հետն առնելով, դարձել է Էրզրում... Այս հեղափոխականները փնտրելիս են եղել մի միջոց, որ բարենորոգումները գործադրվեն առանց արյուն թափելու, իսկ եթե այդ չեղավ, կամ իրենք փչանան և կամ մի հիմնական բարվոքում կատարելով ազատվեն... Էրզրումցի Նշկյան Կարապետին իրենց տպագրած այդ թղթերով ուղարկել են Թիֆլիս, որ դրամական օժանդակություն բերե այնտեղից. մինչ այն՝ կոշկակար Ալեքսանն (Էթալիկյան) էր օգնում ոչ միայն անձամբ, այլև փողով: Երբ ձերբակալություններն սկսան, առաջնորդ Օրմանյան վարդապետի փոքրավորը՝ Մարուքեն և Կերեքցյանի եղբայրը՝ Տիգրան, բոլոր տպված թղթերը հավաքել, այրել են, բայց տպագրության ծառայող վեմը գտնվեց»*:

Ժամանակի մամուլի տված տեղեկությունները, ինչպես նաև ընկերության անդամների ցուցմունքները վկայում են, որ, իրոք, կազմակերպությունն ունեցել է հեկտոգրաֆ, որը տպագրել է զանազան թղթեր և երդմ-

---

1 Նույն տեղում, թ. 284:

2 Նույն տեղում, թ. 271:

3 Նույն տեղում, թ. 286:

---

1 ԳԱԹ, ֆ. Բ. Նավասարդյանի, փ. II. 97, III. 9:

*նագրեր[1]: Ռուսական մի շարք թերթեր մինչև անգամ տալիս էին այդ երդմնագրի տեքստը, որ հետևյալն է. «Ներքո ստորագրողս երդվում է, որ հանձն է առնում կրել ամեն տեսակ զոհողություն և եթե հարկը պահանջի՝ նաև չխնայել իր արյունը, որպեսզի ազատե իր ազգը»[2]:*

*Ինչպես վերը հիշված արխիվային նյութերը, այնպես էլ իր ժամանակին մամուլում հրապարակված հաղորդագրությունները և թղթակցությունները հիմք են տալիս ասելու, որ Էրզրումի գաղտնի կազմակերպությունը մասնաճյուղեր կամ թե առանձին ներկայացուցիչներ է ունեցել Կ. Պոլսում և Արևմտյան Հայաստանի մի քանի գավառներում: Կարծում ենք պատահական չէր, որ ընկերությունը հայտնաբերելուց անմիջապես հետո ոստիկանությունը զանգվածային բանտարկություններ կատարեց մի շարք վայրերում: Այսպես, օրինակ, խուզարկություններ և բանտարկություններ կատարվեցին Վանում, Մուշում, Բաղեշում, Տիգրանակերտում և Կ. Պոլսում: Վանից «Մշակին» գրում էին, թե Վանի Հասան փաշայի հացեով Էրզրումից ու Կ. Պոլսից հեռագրեր են ստացվել, որոնց մեջ ասված է, թե Էրզրումի ընկերության «գլխավոր անդամներ Վան ալ կան, պետք է խուզարկել և ձերբակալել»[3]: Այդ նույն թղթակիցը հաղորդում էր նաև հետևյալ, ըստ ամենայնի, հետաքրքիր փաստը: «Բաղեշի մեջ ալ,– գրում էր նա 1882 թ. դեկտեմբերին,– մի զարմանալի դեպք պատահած է մի քանի օր առաջ: Բաղեշի նահանգապետ փաշան յուր գրասեղանի վրա կգտնե մի անհայտ տեղե եկած նամակ՝ հայերեն գրերով, որի մեջ պայմանաժամ տրված է եղել իրեն մինչև չորս օր հեռանալ Բաղեշեն, ապա թե ոչ գաղտնի ընկերության գործադիր մասնախումբը հրահանգ ունի զինքը սպանել: Նահանգապետը այժմ փախած գնացած է Սղերդ»[4]: «Մշակի» մի այլ թղթակից 1883 թ. հունվարին գրում էր, թե Կ. Պոլսում բանտարկվել են 30-ի չափ հայեր[5]: Ավելի ուշ հայտնում էին նաև Մուշում կատարված ձերբակալությունների մասին[6]:*

*Կարևոր է նշել այն, որ գեներալ Դեննետն իր զեկուցագրերում հաղորդում էր, որ Էրզրումի կազմակերպությունը «նպատակ է ունեցել հայ բնակչության ստորին խավերում ստեղծել կազմակերպված ռազմական ուժերի պես մի բան, ձևավորել վաշտեր և գումարտակներ, նախատեսելով*

1 «Արձագանք», 1883, N 29:
2 Московский телеграф, 1883, N 2.
3 «Մշակ», 1883, N 1:
4 Նույն տեղում:
5 Նույն տեղում, N 15:
6 Նույն տեղում, N 80:



*այն մարդկանց, որոնք պետք է զանազան պաշտոններ վարեին այդ զինվորական մասերում»[1]:*

*Ուշագրավ է, որ իր ժամանակին հաղորդագրություններ եղան այն մասին, թե կազմակերպությունը զենքի պահեստ է ունեցել: Այսպես էին հայտարարում կառավարության պաշտոնական ներկայացուցիչները[2]: Մոտավորապես նույնն էին ասում նաև «Մշակի» թղթակիցները: Սրանցից մեկը Վանից գրում էր. «Կառավարությունը մի մթերանոց կկոխե, ուր բազմաթիվ ռուսական գլխարկներ և զորաց համազգեստներ կգտնե: Կկարծվի, որ այդ ռուսական համազգեստները հագած ընկերության անդամները գիշերային հանկարծակի բերդին վրա պիտի հարձակվին եղեր, որպեսզի բերդապահ զորքերը շփոթվելով ռուսական զորքեր կարծեն և հանկարծակիի գալով վախնան»[3]: Հնարավոր են չափազանցություններ, այդ անտեսել չի կարելի: Սակայն պետք է ընդունել, որ եղած հաղորդագրությունների ու տեղեկությունների համար եղել են ինչ-ինչ հիմքեր և որ, իրոք, կազմակերպությունն ունեցել է եթե ոչ պահեստ, ապա որոշ քանակությամբ զենք: Ամենայն հավանականությամբ, ընկերության անդամները նվիրատվության կամ այլ ձևերով դրամ են հավաքել և զենք գնել:*

*Էրզրումի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը երկար կյանք չունեցավ: Նա հիմնվեց 1881 թ. վերջերին և հայտնաբերվեց 1882 թ. նոյեմբերին:*

*Կազմակերպության հայտնաբերումից հետո Էրզրումում հայտարարվեց արտակարգ դրություն: «...Հենց առաջին գիշերը,– գրում էր «Մշակի» թղթակիցը Էրզրումից,– քաղաքը պաշարման վիճակի ենթարկվեց, բոլոր զինվորներին զենքի և պատրաստականության կոչելուց հետո, զինյալ ժանդարմներով կառավարության մի խումբ անձինք, անգթաբար և աhարկու կերպով տներում խուզարկեցին, խեղճերին կալանավորեցին, մի քանի մագազին կնքեցին»[4]: Բանտարկվեց մի քանի հարյուր մարդ: «Մոսկովսկիյե վեդոմոստի» թերթի ասելով, դրանց թիվը հասավ 300-ի[5], իսկ «Մոսկովսկի տելեգրաֆը» հայտնում էր, թե միայն Էրզրումում բանտարկվել են 400 հոգի[6]:*

1 АВПРИ, Армянский фонд, Константинопольское посольство, д. 71, л. 272.
2 «Մշակ», 1883, N 12:
3 Նույն տեղում, N 1:
4 Նույն տեղում, N 12:
5 Московские ведомости, 1883, N 7.
6 Московский телеграф, 1883, N 2.

*Խուզարկություններ կատարվեցին ոչ միայն Էրզրում քաղաքում, այլև գավառի գյուղերում: «Մշակի» թղթակիցը Տրապիզոնից գրում էր. «Թուրք կառավարությունը ավելի մեծ նշանակություն և կարևորություն կուտա հայ գյուղերուն, քան թե հայ քաղաքներուն: Տաճկահայաստանի ամեն կողմերը աննկատելի կերպով կառավարության կողմանե քննություններ կլինին և առանց աղմուկի մասնավոր ձերբակալություններ»[1]: «Գյուղացոց վիճակը,– գրում էր «Արձագանքը»,– բոլորովին դառնացել է. ոստիկանությունը զենք ժողովելու համար դուրս է եկել գյուղերը որո պատրվակով խեղճերի ամեն մի խորշերը տակն ու վերա կանեն, թուղթ և ատրճանակ գտնելու առթիվ կանանց վրագլուխը կշոշափեն. այս անիրավության դիմադրող մի հայ երիտասարդ մի քանի օրից հետո կենաց վերջին շունչը փչեց... կառավարության բողոքող հայը ձերբակալվում է իբրև ընկեր գաղտնի ընկերության»[2]: Սակայն, ինչպես կարելի է եզրակացնել թերթերում տրված տեղեկություններից, կազմակերպության անդամների մի մասը խույս է տվել բանտարկությունից և թաքնվել: «...Բացի բանտարկվածներից,– գրում էր «Արձագանքը»,– մոտ 78 հոգի ևս կառավարությունից փախչելով, թաքստյամբ են ապրում զանազան տեղերում»[3]:*

*Սուլթանական կառավարությունը, ինչպես ասացինք, դատական գործ սկսեց գաղտնի կազմակերպության անդամների դեմ: Դատի տրվեցին 76 մարդ*:*

*Գործը լսվեց Էրզրումում 1883 թ. ապրիլ ամսին: Մի քանի օր տևող դատավարությունից հետո կայացավ վճիռ, որի համաձայն՝ ազատ արձակվեցին 20 մարդ, իսկ մնացած 56 հոգին ենթարկվեցին զանազան չափի պատիժների: Խաչատուր Կերեքցյանը, որը համարվում էր կազմակերպության հիմնադիրը, դատապարտվեց 15 տարվա բանտարկության, իսկ մյուսները՝ 13, 10, 7, 6 և 5 տարվա բանտարկության:*

*Դատարանի վճիռը բողոքարկվեց Կ. Պոլսի վճռաբեկ ատյանում: Վերջինս գործը վերադարձրեց Էրզրումի դատարանին, որը և 1883 թ. հունիսին նորից քննեց այն: Այս անգամ դատարանը ազատ արձակեց ևս 16 հոգու, իսկ մնացած 40 մեղադրյալների համար հաստատեց նախկին վճիռը, այսինքն՝ Խաչատուր Կերեքցյանը նորից դատապարտվեց 15*

1 «Մշակ», 1883, N 37:
2 «Արձագանք», 1883, N 12, էջ 176:
3 Նույն տեղում:



*տարվա բանտարկության, իսկ մնացածները 13, 10, 7, 6 և 5 տարվա բանտարկության[1]:*

*Այս «մեղմ» վճիռը ամենայն հավանականությամբ պետք է բացատրել նրանով, որ սուլթան Աբդուլ Համիդը այս դեպքում ևս աշխատում էր գործին մեծ կերպարանք չտալ, որպեսզի իր համար չստեղծվեին միջազգային քաղաքական-դիվանագիտական նոր բարդություններ: Նույն Տիգրան Կերեքցյանը Խ. Կերեքցյանի հետ իր ունեցած զրույցը վերհիշելիս վկայակոչում էր այս իրողությունը. «...Քննիչները,– ասել էր Խ. Կերեքցյանը,– մեղմացնում են իրենց խստությունը և բավականանում են միայն կարևոր հարցերով, նրանք իրար մեջ խոսեր են, որ եթե մենք սրան շատ քննենք՝ մեր կառավարության վրա պիտի բարդվի...»[2]:*

*Էրզրումի գաղտնի ընկերության առաջացման պատճառների ու նախադրյալների, նրա նպատակների մասին իր ժամանակին արտահայտվեցին մի շարք թերթեր: Այսպես, օրինակ, «Մշակի» Տրապիզոնի թղթակիցը, որը լավատեղյակ էր կատարվող անցքերին, գրում էր. «Տաճկաստանցի հայերը երկար տարիներե ի վեր բողոքելով Թուրք անիրավ պաշտոնյաներու զրկողությանց և զանազան վայրենի ավազակներու հարստահարությանց դեմ, չհասան ոչինչ նպաստավոր արդյունքի, այլ, ընդհակառակը, սաստկացան բռնությունները, ավելացան հարստահարությունները, որոնց ճնշման տակ սարսափելի կերպով թշվառացավ հայ ժողովրդյան այն մասը, որ բուն հայրենիքի ծոցին մեջ կբնակի, ուրեմն շատ բնական էր, որ վերջին ծայր հուսահատության հասած այդ հեգ ժողովուրդը մտածեր յուր բազկին օգնականությանը դիմելու, յուր ներքին ուժերը ամփոփելու և ինքը յուր ձեռքով յուր վշտին դարման անելու»[3]:*

*«Իստերն էքսպրես» թերթը Էրզրումի կազմակերպության մասին 1883 թ. գրում էր. «Կարնո հայոց ... գաղտնի ընկերության նպատակը հայրենասիրական է, ազգային կամ հեղափոխական է»: Անդամները «պարտավորվում են հլու հնազանդություն ղեկավարներին: Գործը առաջ տանելու համար սահմանված են տասնապետների, հարյուրապետների և հազարապետների պաշտոններ: Թեև փոքր քանակությամբ, բայց ոչ միայն Կարին, այլև Կարնո դաշտի գյուղացոց տներում գտնված են զենքեր: Կ. Պոլսո անգլիական դեսպանատան տեղեկությունների համեմատ՝ կթվի, որ մի նշան տալու պես այս մարդիկը դաշտ և լեռներ պիտի ել-*

1 Նույն տեղում, N 29, էջ 415:
2 ԳԱԹ, ֆ. Բ. Նավասարդյանի, փ. II. 97, III. 9:
3 «Մշակ», 1883, N 37:

նեին փոքրիկ խումբերի բաժանված մի տեսակ ասպատակային պատերազմ սկսելու Հերցեգովինայի ապստամբության նման»[1]:

«Պաշտպան հայրենյաց» ընկերությունը, ինչպես ցույց են տալիս փաստերը, հանդիսանում էր ոչ միայն Էրզրումի գավառում, այլ ամբողջ Արևմտյան Հայաստանում խմորվող ժողովրդական-ազատագրական շարժման ծնունդ:

Էրզրումի գաղտնի կազմակերպության հայտնաբերումը և այդ կապակցությամբ տեղի ունեցած բանտարկություններն ու դատավարությունը մեծ ազդեցություն գործեցին հայ ժողովրդի ազգային-քաղաքական ինքնագիտակցության զարգացման վրա: Բնորոշ է, որ երբ թուրք ոստիկանները կատարում էին բանտարկություններ, այդ նույն ժամանակ Էրզրումում և նրա շրջակայքում հայերը փորձեցին զենքի դիմել և զինված ելույթ ունենալ[2]: Էրզրումի դեպքերը, որոնց մասին բավական շատ թղթակցություններ տպվեցին հայկական մամուլում, զգալի արձագանք գտան նաև արևելահայ առաջավոր երիտասարդության մեջ:

* * *

1880-ական թթ. ազատագրական շարժմանը գործուն մասնակցություն ունեցան նաև բազմաթիվ հայ նարոդնիկներ, որոնք մինչ այդ ընդգրկված էին համառուսական հեղափոխական-նարոդնիկական ընդհանուր շարժման մեջ: Թիֆլիսում, 1882 թ. նրանք ստեղծեցին մի գաղտնի խմբակ, որի գլխավոր նպատակն էր պաշտպանել «անբախտ հայ ժողովրդի շահերը», օգնել արևմտահայ եղբայրների ազատագրության գործին*:

Խմբակի հիմնադիր ու գործունյա անդամներն էին Աբրահամ Դաստակյանը, Թամարա Ադամյանը, Սրապիոն Տեր-Գրիգորյանը**, Քրիստափոր Միքայելյանը, Գաբո Միրզոյանը, Կոնստանտին Մելիքյանը, Ալեքսանդր Պետրոսյանը (Սանդալ), Գևորգ Ղարաջյանը և ուրիշներ: Կազմակերպչորեն անջատվելով համառուսական շարժումից, բայց դեռ երկար ժամանակ հավատարիմ մնալով նարոդնիկական գաղափարներին, նրանք որոշեցին զբաղվել հայ ժողովրդին այն ժամանակ ամենից շատ հուզող հարցով՝ արևմտահայությունը օսմանյան լծից ազատագրելու խնդրով: Կատարվեց մի քայլ, որը միանգամայն բնական ու հասկանալի էր, քանի որ նարոդնիկական ժողովրդասիրական գաղափարները շատ մոտ և հարազատ էին սուլթանական բռնապետության դեմ ոտքի ելած հայ ժողովրդի

1 Նույն տեղում, N 4:

2 Նույն տեղում, N 37:



ազատագրական ձգտումներին: Ավելացնենք, սակայն, որ խմբակը միատարր չէր: Այնտեղ նարոդնիկների հետ միասին գործում էին նաև որոշ թվով ազգային դեմոկրատներ ու ընդհանրապես ազատամիտ հայրենասեր գործիչներ:

Ի՞նչ ընթացք ունեցավ խմբակի գործունեությունը: Խոսելով այս մասին Քրիստափոր Միքայելյանը իր հուշերում* գրել է. «83 թ., ամառը արդեն, Թիֆլիսում գոյություն ուներ բավական ամուր և գործունյա մի խումբ: Բացի երկսեռ երիտասարդության ինքնազարգացման խմբակների ղեկավարությունից, այդ խումբը՝ 1. հրատարակում էր վիմատիպ թռուցիկ թերթեր: Ես հիշում եմ մի շարք այդպիսի թռուցիկներ Նալբանդյանից, Գամառ-Քաթիպայից և Րաֆֆիից առնված մակագրություններով («Ամենայն տեղ մահը մի է...», «Մեր հայրենիք թշվառ անտեր...», «Հիմի էլ լռենք...», «Արդյոք գալու է մի օր ժամանակ...»), որոնց մեջ տաք կերպով արծարծվում էր թրքահայկական հարցը և միաժամանակ կոչ էր արվում հասարակության և երիտասարդության՝ հայերին թրքական լծից ազատելու համար: 2. Սարքվում էր ժողովներ, որոնց մեջ՝ միացյալ խմբակների առջև կարդացվում էին մշակված շարադրություններ գերազանցապես հայ կյանքից, պատմությունից և գրականությունից առնված խնդիրների մասին: 3. Ուներ դրամարկղ և 4. Գործոն հետաքրքրություն ցույց տալով դեպի թրքահայկական հարցը, ընկերներ էր ուղարկում Թուրքիա ուսումնասիրելու համար երկիրն ու հեղափոխական պրոպագանդը»[1]:

Հաջողվել է հրատարակել մի շարք արգելված գրքեր: Այսպես, օրինակ, 1884 թ. խմբակի անդամները հեկտոգրաֆով տպագրել են Միքայել Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» հայտնի աշխատությունը, տարածել են այն ինչպես քաղաքում (Թիֆլիսում), այնպես էլ գավառներում: «Այս անլեգալ հրատարակությունից,– գրում է Գևորգ Ղարաջյանը,– ես մեծ քանակությամբ ստացա Քրիստ. Միքայելյանից և վերադարձա Գանձակ: «Երկրագործություն» գրքույկի օրինակների և թռուցիկների մի մասը ուղարկեցի Բաքու Սմբատ Սարգիսբեկյանին, իսկ մյուս մասը տարածվեց Գանձակի շրջանում»[2]: Ի դեպ «Երկրագործությունը» հեկտոգրաֆով տպագրելու գործում մասնակցել են նաև խմբակին չանդամակցող՝ Մոսկվայի Պետրովսկայա Հողագործական ակադեմիայի ուսանող Աղամալյանը, Թիֆլիսի Արհեստավորաց դպրոցի աշակերտներ Միքայել Հովհաննիսյանը (Նար-Դոսը) և Ալեքսանդր Ծատուր-

1 Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1924, օգոստոս, էջ 57:

2 Գ. Ղարաջեան. Իմ կեանքի պատմութիւնը (անտիպ). հ. 1, էջ 101 (տե՛ս ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ):

յանը: Այդ նույն ժամանակ խմբակին հաջողվեց մի շարք հայ մտավորականների՝ Շիրվանզադեի, Գրիգոր Աղաբաբյանի և այլոց աջակցությամբ լույս ընծայել «Մունետիկ» ու «Հայրենասեր ձայն» խմորատիպ թերթերը (ընդամենը մի քանի համար), որ ունեին հայրենասիրական-ազատասիրական բովանդակություն:

Կազմակերպելով գաղտնի ժողովներ, խմբակը աշխատում էր դեմոկրատական-հայրենասիրական գաղափարներ տարածել ինչպես քաղաքում ուսանողության ու արհեստավորության, այնպես էլ գյուղերում՝ գյուղացիության մեջ: Գ. Ղարաջյանի հուշերում կարդում ենք. «Խմբի կենտրոնատեղն էր Թիֆլիս քաղաքը. նրա այս կամ այն անդամը գավառներ էր գնում որևէ պաշտոնով կամ գործով: Նրանք, որոնք մնում էին Թիֆլիսում կամ ապրում որևէ գավառական քաղաքում՝ աշխատում էին կազմակերպել ուսանողական խմբեր և ժողովներ, կապ հաստատել արհեստավորների հետ և գործել նրանց շրջաններում, տեղական և տաճկահայ մշակներ խմբել իրենց շուրջը, գեթ փոքր չափով հաղորդել նրանց իրենց դժոխային կացության նկարագիրը, ներշնչել նրանց մեջ հույս, որ ժամանակին նրանց դրությունը կբարեփոխվի... Գյուղում պաշտոն վարող կամ ժամանակավորապես այցելող ընկերը ջանում էր մոտենալ գյուղական աշխատավոր խավերին, մասնակցել գյուղական ժողովներին և հավաքույթներին, վարել ըստ ամենայնի օգտակար կուլտուր-կրթական, հասարակական աշխատանք»[1]:

Առանձնապես հետաքրքիր է այն, որ Թիֆլիսում մշակությամբ զբաղվող մշեցիներից կազմվում է մի առանձին խումբ, որոնց հետ հատուկ աշխատանք են տանում Քրիստափոր Միքայելյանը, Գաբո Միրզոյանը և ուրիշներ: Մշեցիներին սովորեցնում են կարդալ ու գրել, նրանց քարոզում էին հայրենասիրական գաղափարներ, վարժեցնում են հրացանաձգության մեջ և այլն: Հետագայում այս մշեցիներից մի քանիսը դարձան արևմտահայ ազատագրական շարժման եռանդուն մասնակիցներ:

Թիֆլիսում աշխատող արևմտահայ մշակների հետ կապեր է ունեցել Րաֆֆին: Հայ ազատագրական շարժման գործիչներից մեկի՝ Լևոն Սարգսյանի հուշերում ասված է, թե նարոդնիկ Գաբրիել Միրզոյանի հետ միասին մեր նշանավոր գրողը ազատագրական գաղափարներ է տարածել նրանց մեջ, փորձել է գրականություն, զենք և երիտասարդ մարդիկ ուղարկել Մուշ ու Ալաշկերտ[2]: Ա. Շիրվանզադեն նույնպես հիշում է, որ

1 Գ. Ղարաջեան (Ա. Տ. Արկոմեդ). Հայ անդրանիկ յեղափոխական խմբակն Անդրկովկասում. Թիֆլիս, 1927, էջ 24-25:

2 «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, N 1 էջ 28:



Րաֆֆին մեծ սիրով էր ընդունում «ցնցոտիներով կծկված, խեղճ, ողորմելի մշեցիներին»*, ժամերով խոսում էր նրանց հետ, «մխիթարում, սիրտ տալիս ապագայի համար»[1]: Այսպիսով, ձևականորեն չլինելով Թիֆլիսի նարոդնիկական խմբի անդամ, Րաֆֆին փաստորեն գործուն մասնակցություն է ունեցել գաղտնի կազմակերպության աշխատանքներին:

Թիֆլիսի գաղտնի խմբակի նախաձեռնությամբ մի շարք գործիչներ անցան Արևմտյան Հայաստան, որպեսզի անձամբ ծանոթանան այնտեղ ստեղծված վիճակին և օգնեն տեղի հայրենասերներին: 1883–1884 թթ. Անդրկովկասից Թուրքիա մեկնեցին Ալեքսանդր Պետրոսյանը, Տիգրան Փիրումյանը, Հայկ Մելիք-Դադայանը և ուրիշներ[2]:

Խմբակն իր գլխավոր ուշադրությունը դարձնելով արևմտահայերի խիստ ծանր վիճակի ու Հայկական հարցի լուծման վրա, միաժամանակ համարձակ ելույթներ ունեցավ ցարական կառավարության դեմ: Այսպես, երբ 1885 թ. սկզբներին ցարական չինովնիկները բռնի փակեցին հայկական դպրոցների մեծ մասը, խմբակը ընդվզեց Ռոմանովների ինքնակալության դեմ: Հրատարակվեց մի թռուցիկ, որը տարածվեց ոչ միայն Թիֆլիսում և Անդրկովկասի մյուս քաղաքներում ու գավառներում, այլև արձագանք գտավ արտասահմանում լույս տեսնող մի շարք թերթերում[3]: 1885 թ. փետրվարին հրապարակված այդ թռուցիկը, որ ուներ «Հայ եղբայրներ և հայ քույրեր» խորագիրը, սկսվում էր հետևյալ տողերով. «Այսօր, ամենքի առաջ կատարվում է մի սարսափելի ավազակություն, մի հանդուգն բաշիբոզուկություն, մի խայտառակ բռնաբարություն՝ ռուսաց միապետությունը իրեն հատուկ բռնակալությամբ փակում է մեր դպրոցները... Բռնակալ Ալեքսանդր III-ը քարուքանդ է անում հայոց դպրոցը – մի ահագին պետության թագավորը պատերազմ է հայտնում մի փոքրիկ ազգության»[4]: Ի՞նչ պետք է անել: «Եթե այսօր մենք, հայերս, անկարող ենք դիմադրել խաբեբա բռնակալներին, գոնե մենք կարող ենք մահի վճիռ կարդալ այդ բռնակալների ձեռքի տակ գործող այն ստոր սողուններին, որոնք մեր լեզուն և նորա հետ նաև մեր ազգությունը մահու են դատապարտել... Մեր դպրոցները փակվում են շտիկների օգնությամբ, թող այդ լինի բռնակալների միակ մխիթարությունը: Յուրա-

1 Շիրվանզադե. Երկերի ժողովածու. հ. 8, Ե., 1951, էջ 295:

2 Քր. Միքայէլեան. Բեկորներ իմ յուշերից.– «Հայրենիք», ամսագիր, 1924, օգոստոս, էջ 57:

3 Մ. Ներսիսյան. Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, էջ 61:

4 Թռուցիկը, որի բնագիրը գտնվում է ՀՀ ՀՔԿՓ ՊԿ արխիվում, առաջին անգամ հրատարակվել է 1927 թ. Գ. Ղարաջեանի «Հայ անդրանիկ յեղափոխական խմբակն Անդրկովկասում» գրքույկում:

*քանչյուր հայ ընտանիք թող ներկայացնի իրենից առանձին հայ դպրոց: Այսուհետև, մեր միակ հույսը թող մենք ինքներս լինենք, այսուհետև, էլ ուրիշի, մանավանդ ռուսաց կառավարության վրա վստահ չլինենք, և երբ իբրև ճշմարիտ հայ մեր սուրբ պարտքը կատարենք, այն ժամանակ, հավատացեք հայեր, հաղթությունը արդարի կողմն է լինելու»:*

*Բավական խիստ լեզվով գրված այս թռուցիկը, որտեղ կոչ էր արվում ահաբեկչական ակտեր կատարել ցարական սատրապների դեմ, ինչպես վկայում է Գ. Ղարաջյանը, պատկանում է Քրիստափոր Միքայելյանի գրչին*[1]*:*

*Ցարական կառավարության ձեռնարկած հետապնդումների հետևանքով խմբակը վերացվեց 1885 թ. վերջերին: Բայց շատ չանցած, խմբակի անդամների մի մասը ընդգրկվեց նոր ձևավորված հնչակյանների ու դաշնակցականների կուսակցությունների մեջ, հայ ազգային քաղաքական կուսակցություններ, որոնք շարունակեցին պայքարը սուլթանական բռնապետության դեմ: Մյուս մասը հարեց հայ լիբերալ ու ազգային պահպանողական հոսանքներին*[2]*:*

*1880-ական թթ. առաջին կեսին գործող հայկական գաղտնի խմբակների ու կազմակերպությունների մեջ առանձին տեղ է գրավում «Հայրենասերների միությունը», որը հիմնվեց Մոսկվայում տեղի մի քանի հայ ուսանողների կողմից՝ 1882 թ.: Միության անդամները, որ մինչ այդ ընդգրկված էին համառուսական հեղափոխական շարժման մեջ և ունեին նարոդնիկական գաղափարախոսություն, որոշեցին զբաղվել Հայկական հարցով, արևմտահայությանը սուլթանական բռնապետության ծանր լծից ազատագրելու խնդրով:*

*Գաղտնի միության հիմնադիրներն էին Ներսես Աբելյանը (շամախեցի), Միքայել Զալյանը (գանձակեցի), Դավիթ Ներսիսյանը (շամախեցի), Մարգար Արտեմյանը (շուշեցի), Մարտին Վեքիլյանը (ալեքսանդրապոլցի), Կարապետ Տեր-Խաչատրյանը (երևանցի): Այնուհետև, ինչպես պատմում է Մ. Զալյանը, Թիֆլիսից գալով Մոսկվա՝ իրենց ուսումը շարունակելու, միանում են «Հայրենասերների միություն» խմբին երկու եղբայր՝ Սիմեոն և Սրապիոն Տեր-Գրիգորյանները, վաղարշապատցի, և օր. Թամարա Ադամյանը՝ Թիֆլիսեցի (հետագայում՝ տիկին Ներսիսյան)*[3]*:*

1 *Գ. Ղարաջեան.* Հայ անդրանիկ յեղափոխական խմբակն Անդրկովկասում. էջ 58:

2 *Մ. Ներսիսյան.* Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում, էջ 67:

3 «Վէմ», հանդէս մշակոյթի և պատմութեան. հ. Ա, Փարիզ, 1933, N 1 էջ 113:



*«Հայրենասերների միությունը» ուներ իր խմորատիպ օրգանը՝ «Ազատության ավետաբեր» թերթը, որ լույս տեսավ ընդամենը մի քանի համար. Նրա փաստացի խմբագիրն էր Ներսես Աբելյանը: «Այդ օրգանը,– գրել է Քրիստափոր Միքայելյանը,– բաղկացած էր 8 էջից, նվիրված էր Թրքահայաստանը հեղափոխական միջոցով ազատագրելու գաղափարին և հրատարակվում էր «Միություն հայրենյաց» կազմակերպության անունից»*[1]*:*

*Միության գլխավոր խնդիրն էր բալկանյան ժողովուրդների օրինակով զինված պայքար մղել սուլթանական բռնակալության դեմ: «Եթե Հայաստանի (Արևմտյան Հայաստանի – Մ. Ն.) ժողովուրդը հարստահարվում է, եթե նրա ստացվածքը, նրա աշխատանքի պտուղները հափշտակվում են, եթե նրա մարդկային սուրբ իրավունքները և զգացմունքները ոտնակոխ են լինում, անկասկած, այդ բոլոր չարիքների սկզբնապատճառը Թուրքիայի բարբարոս կառավարությունն է, նա ինքն է ամենամեծ հարստահարողը, ավազակը, որի հովանավորության տակ ապրում և գործում են մնացյալ փոքր ասպատակողները և արյուն ծծողները: Ուստի «Հայրենասերների միությունը» մահառիթ պատերազմ է հայտարարում Թուրքիայի կառավարությանը... Միությունը իր բոլոր պատրաստ ուժերը ուղղել է ոչնչացնելու նրա վարակված պետական կազմվածքը, որը կաշկանդել է ազգերի կանոնավոր զարգացումը: Այս ծանր պատմական խնդիրը իրագործելու համար հարկավոր են անձնվեր, նահատակության ընդունակ գործիչներ և նյութական միջոցներ»*[2]*:*

*Մի այլ կապակցությամբ, «Ազատության ավետաբերը» գրում էր. «Հայրենասերների միության» գոյությունը սերտ օրգանական կապ ունի մեր հասարակական կյանքի ընդհանուր հոսանքի հետ. ո՛չ մի օտար ազդեցություն, ո՛չ մի օտար ձեռք չէր կարող հիմք դնել «Հ. Մ.», քանի որ նույն իսկ մեր հասարակական հողի մեջ ցրված էին նրա գոյության սերմերը»*[3]*:*

*Միությունը տպագրել ու տարածել է մի շարք կոչեր, թռուցիկներ, որոնցից մեկի հայերեն բնագիրը պահպանվել է ցարական ոստիկանության արխիվներում: Ըստ ամենայնի հետաքրքիր այդ թռուցիկում, որը*

1 «Հայրենիք», ամսագիր, 1924, օգոստոս, էջ 58: Ինչպես տեսանք Մոսկվայի հայ ուսանողների միությունը կոչվում էր «Հայրենասերների միություն» և ոչ թե «Միություն հայրենյաց», ինչպես գրել է Քր. Միքայելյանը:

2 «Ազատութեան աւետաբեր», Մ., 1883, N 3: *Մ. Վարանդեան,* Հ. Յ. դաշնակցութեան պատմություն, հ. Ա, Փարիզ, 1932, էջ 50: Ի դեպ, «Ազատութեան աւետաբերի» խորհրդանիշն էին դաշույնը և ատրճանակը:

3 Նույն տեղում, 1884, N 4, էջ 4:

տարածվել է Մոսկվայում, Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, Գանձակում և այլուր, հանգամանորեն խոսվում է «Հայրենասերների միության» ծրագրի և անելիքների մասին: Դիմելով հայերին, կոչի հեղինակները գրում էին. «Ամբողջ հինգ տարի է անցել այն օրից, որ տաճիկ կառավարությունը խոստացել էր ռեֆորմներ մշակել մեր հայրենիքում, որն արդեն մի քանի դար է, որ տոչորվում է թուրքերի – այդ մարդկության թշնամիների լծի տակ: Մենք տեսնում ենք՝ Բեռլինի դաշնագրի համարյա բոլոր հոդվածները իրագործվեցին, իսկ Հայաստանում այդ չնչին բարենորոգումներ խոստացող 61-րդ հոդվածը թողնված է անուշադիր: Մենք տեսնում ենք, որ Եվրոպան ժամանակ չի գտնում խառնվելու մեր գործերի մեջ, որովհետև առանց այն էլ նա ավելի բազմաթիվ հարցեր ու խնդիրներ ունի վճռելու. վերջապես, նա ավելի իր նյութական շահերն ունի աչքի առաջ: Այո, մենք պարզ կերպով տեսնում ենք, բայց կրկին երկնքից կարծես մանանայի ենք սպասում: Տաճկաց այժմյան կառավարությունից որևէ բարենորոգում սպասել, մեր կարծիքով նշանակում է երկնային մանանայի սպասել: Գործելու փոխարեն, հանգիստ մեր տեղը նստած՝ մենք մեր բոլոր հույսը Եվրոպայի վրա ենք դնում, կարծես աշխարքումը մի եղած բան է, որ մի ազգ առանց զոհեր բերելու, առանց նեղություններ կրելու դյուրին և հանգիստ կերպով ազատություն ձեռք բերեր: Ո՜րպիսի տղայություն: Մի՞թե Եվրոպան իր շահերը թողած մերը կպաշտպանի, մեզ համար զոհաբերություններ կանի, քանի որ մենք ինքներս չենք կամենում զոհաբերություններ անել...»[1]:

Ո՞րն է ելքը: Այս մասին կոչում ասվում էր. «Հայաստանի ժողովուրդը իրավունքներ ձեռք բերելու և բարբարոսների լծից ազատվելու համար ունի միայն մի միջոց՝ արյունով գտնել ազատությունը... Ո՞վ կարող է ուրանալ այն մեծամեծ զոհաբերությունները, որով փոքրիկ Հունաստանը վերադարձրեց իր նախկին ազատությունը: Ո՞վ կարող է ուրանալ, որ սլավոնական ազգերը գրավեցին լուսավոր աշխարհի համակրությունը և ստացան անկախություն միայն իրենց հայրենիքը, իրենց սիրելի որդիների արյունով ներկելուց հետո»*:

Նշելով այն հանգամանքը, որ թուրքական բռնապետությունն այժմ ապրում է քաղաքական, բարոյական և տնտեսական ճգնաժամ, թռուցիկի հեղինակները գտնում էին, որ չպետք է հապաղել, հարկավոր է օգտվել ստեղծված վիճակից և առանց ժամանակ կորցնելու գործի դիմել: «Մեզ հարկավոր է մտնել ժողովրդի մեջ, հայաստանցուն հասկացնել նրա իրավունքները, ցույց տալ անարդարության դեմ կռվելու եղանակները ու մի-

1 ЦИАМ, ф. Департамент полиции, 3-е делопроизводство, д. 172, 1883, л. 4-5.



ջոցները և այդ վսեմ գաղափարը իրագործելու ժամանակ օգնել նրան ամենայն կերպով և անձնանվիրաբար»[1]:

Թռուցիկում այն միտքն էր արտահայտվում, որ արևմտահայերի փրկությունը պետք է իրագործեն երիտասարդները, որ նրանք ի վիճակի են ազատել հայ ժողովուրդը օսմանյան դարավոր լծից: «Հայրենասերների միությունը» դիմում էր երիտասարդներին հետևյալ կոչով. «Հայ երիտասարդներ: Հայրենիքի փրկությունը ձեզանով պետք է լինի. ազատության դրոշակ բարձրացնելը ձեզ է նախասահմանված, ձեր պարտականությունն է առաջնորդ հանդիսանալ այս սուրբ գործում: Հարստահարված և վերին աստիճանի հուսահատության հասցրած ժողովուրդը միայն ոգևորիչ և թարմ ուժերի է սպասում: Դուք եք ազատության այդ վսեմ գաղափարի առաքյալները, դուք եք կոչված այդ գաղափարով ժողովուրդը կրթելու, պատրաստելու»: Նկատենք, որ այս նույն ոգով մի շարք հոդվածներ տպագրվեցին «Ազատության ավետաբերում»:

Որոշ քայլեր կատարվել են նաև բանավոր քարոզչության ուղղությամբ: Միության մի շարք անդամներ ժամանելով Կովկաս, շրջել են հայաբնակ քաղաքներում և աշխատել են հայրենասիրական գաղափարներ տարածել հայ հասարակության, մասնավորապես երիտասարդության մեջ: Այսպես է վարվել, օրինակ, Դավիթ Ներսիսյանը, որը 1882 թ. ամռանը, գալով Թիֆլիս, ջերմ ընդունելություն է գտել երիտասարդության շրջանում[2]:

«Հայրենասերների միությունը» աշխատել է դրամական և այլ կարգի օգնություն ցույց տալ արևմտահայ եղբայրներին: Այսպես, երբ թուրքական իշխանությունները բանտարկեցին Էրզրումի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի ընկերության անդամներին, Մոսկվայի հայրենասերները կոչ արեցին օգնել նրանց: «Հայեր, մեր սուրբ պարտականությունն է ամենից առաջ բարոյական օգնություն հասցնել մեր սակավաթիվ, բայց եռանդուն գործիչներին: Բանտարկվածների թշվառ ընտանիքները իրենց ազգակիցների օգնությանն են սպասում. արդարև, այս ազգային ազատության գաղափարին իրենց զոհողները ո՞ւմ խնամակալությանն են թողնում իրենց ընտանիքը իրենց հարազատները, եթե ոչ նույն ազգի: Երկար մտածել չէ հարկավոր, սպասելու չէ: Բոլոր հայերը պարտական են առանց ժամանակ կորցնելու ստորագրություն բանալ Հայաստանի ազատության առաջին զոհերի և նրանց ընտանյաց համար»[3]:

1 Նույն տեղում:

2 «Վէմ», ճ. Ա, 1933, N 1, էջ 114:

3 ЦИАМ, ф. Департамент полиции, 3-е делопроизводство, д. 172, л. 6.

Էրզրումի դեպքերին անդրադարձավ նաև միության օրգան «Ազատության ավետաբերը»: «Ուրախանանք, հայեր, որ վերջապես Հայաստանի կենտրոնից հնչեց ապստամբության փողը»,- գրում էր թերթը: Ապա պատմելով կատարված դեպքերի մասին նա շարունակում էր. «Հավատով և անվեհեր շարունակենք սկսած գործը: Թող գիտնականը նվիրե իր մտավոր ուժերը, թող ունեցողը չխնայե իր ոսկին, երիտասարդը զոհ բերե հայրենիքի ազատությանը իր անձը, իսկ հայ ծնողները պատրաստեն իրենց որդկերանցից հայրենիքի ապագա պաշտպաններ... Բայց ամենից առաջ պարտականություն կա մեզ վրա՝ շարունակել մեր օգնությունը Հայաստանի այն թշվառ ընտանիքներին, որոնց աշխատավորները դեռ ևս տոչորվում են խոնավ բանտերի մեջ»:

«Հայրենասերների միությունը» աշխատել է երիտասարդ կամավորներ ուղարկել Արևմտյան Հայաստան այնտեղ գործելու նպատակով: Հայտնի է, որ միության հանձնարարությամբ 1883 թ. վերջերին Մոսկվայի Լազարյան ճեմարանի ուսանող Վարդան (Ալեքսանդր) Գոլոշյանը անցնում է Վան, որպեսզի տեղի ուժերի հետ միասին նոր գործողություններ սկսի Թուրքական լծի դեմ: Գոլոշյանը իր ժամանակի հայ ազատագրական շարժման գաղափարներով ոգեշնչված երիտասարդ սերնդի փայլուն ներկայացուցիչներից մեկն էր: Հարկ ենք համարում բերել մի քանի տեղեկություններ նրա կյանքի ու գործունեության մասին*:

Գոլոշյանը ծնվել է Թիֆլիսում 1867 թ., սկզբնական կրթությունը ստացել է Ներսիսյան դպրոցում: 1882 թ. նա ընդունվում է Մոսկվայի Լազարյան ճեմարան և շուտով դառնում է հակաօսմանյան ազատագրական պայքարի համոզված կողմնակից: Բնորոշ է, որ արդեն այդ շրջանում պատանի հայրենասերը գրել է այսպիսի տողեր.

Առաջ անցեք, առաջ գնացեք,
Հայեր, սուսեր պինդ բռնեցեք.
Պիտի գոռանք ազատություն,
Պիտի կանչենք ազատություն[1]:

Մոսկվայում եղած ժամանակ Գոլոշյանը կապեր է հաստատում «Հայրենասերների միության» հետ: 1883 թ. ամռանը նա հեռացվում է ճեմարանից, որպես «անկարգապահ» և քաղաքականապես անբարեհույս ուսանող: Թողնելով Մոսկվան, Գոլոշյանը գալիս է Թիֆլիս, սակայն շուտով գաղտնի կերպով անցնում է Պարսկաստան, այնտեղից էլ Վան: Հետաքրքիր է, որ իր ծնողներին թողած երկտողում նա գրել է. «Այն ընկերությունը, որին երդվեցի հլու ծառա և ստրուկ լինել, հրամայում է

1 Լէօ. Հայ հերոսներ. Ե., 1920, էջ 45:



գնալ Պոլիս, և ես հնազանդվում եմ»[1]: Գոլոշյանը, սակայն, ինչպես ասացինք, գնաց ոչ թե Պոլիս, այլ Վան, որտեղ մեկ տարի մնալուց հետո՝ 1885 թ. հաստատվում է Սալմաստում՝ վարելով հայկական դպրոցի ուսուցչի պաշտոնը: Համախոհներ գտնելու նպատակով 1887 թ. գալիս է Թիֆլիս և մեկ տարի հետո վերադառնում Սալմաստ: 1889 թ. մայիս ամսին Գոլոշյանը իր երկու ընկերների՝ Հովհաննես Ագրիպասյանի և Կարապետ Գուլագազյանի հետ միասին նորից ուղևորվում է դեպի Վան: Բայց այս անգամ գործը անսպասելի վախճան է ունենում: Թուրքական ոստիկանության հետ տեղի ունեցած ընդհարման ժամանակ Գոլոշյանը և Ագրիպասյանը սպանվում են, իսկ Գուլագազյանը փախուստի է դիմում[2]:

Իր ողբերգական մահվան նախօրեին Գոլոշյանը ծնողներին ուղարկում է մի նամակ, որից երևում է, թե ինչպիսի ջերմ ու անձնազոհ հայրենասեր է եղել նա: «Ես վճռեցի,– գրում է Գոլոշյանը,– մինչև մահս գործել հայրենիքի փրկության համար, նրա բարօրությունն ինձ երջանկություն համարել: Եւ այդ վճիռը չէր այն վաղանցուկ կրքերից մեկը, որ քամու պես ծնվում ու կորչում են. ոչ, նա ավելի խոր արմատ ուներ: Ես զգում եմ, որ առանց հայրենիքի ես ոչինչ եմ, որ անկարելի է ինձ մի այլ նպատակի ծառայել: Ես տեսա մեր հայրենիքի թշվառ կացությունը, նրա ժողովրդի անտանելի դրությունը. ես այդ երկրի, այդ ժողովրդի մեջ ապրեցի և իմ վճիռն ավելի ևս հաստատուն և անխախտելի եղավ... ես չգիտեմ, թե որքան կհաջողվի մեր նպատակը: Գուցե մենք կընկնենք շուտով և շատ շուտով: Բայց մեր անկումը պիտի այլոց գրգռե և մենք շատերին օրինակ կլինենք մեր գործունեությամբ: Համոզված եղեք, հայր իմ, Թուրքիան կորստի մեջ է: Թուրքիան պիտի ընկնի և տառապյալ Հայաստանը պիտի ոտքի կանգնե, դա մի ճակատագրական գաղափար է, մի իդեալ, որի անկասկածելի իրականանալը մոտիկ ապագայում տեսնելու է հայությունը»[3]:

Քաղաքացիական պարտքի և անսահման սիրո ինչպիսի՜ զգացում հայրենիքի նկատմամբ... Հիասքանչ արիության և գիտակցված անձնազոհության փայլուն մի օրինակ, որ հատուկ է միայն մեծ, իսկական հայրենասերներին: Ակամայից հիշում ես անմահ դեկաբրիստներին և «Նարոդնայա վոլյա» նարոդնիկական կազմակերպության քաջարի հերոսներին: Անմիջապես միտքդ են գալիս մեր այն հայ նախնիները, որոնք պատմական անցյալում իրենց կյանքը արիաբար զոհեցին օտար զավթիչների դեմ մղված օրհասական կռիվներում:

1 «Նորք», Ե., 1924, N 4, էջ 353:
2 Ս. Նիրվանեան. Վարդան Գոլոշեան, Յովհաննէս Ագրիպասեան, Ժընև, 1905:
3 Լէօ. Հայ հերոսներ..., էջ 65-66:

*Արևմտահայ եղբայրներին օգնության գնացած երիտասարդ կամավորներ Գոլոշյանի և նրա ընկերոջ նահատակությունը ծանր վիշտ պատճառեց հայրենասեր մտավորականությանը: Ժամանակի հայ մամուլի մեծ մասը բազմաթիվ հոդվածներ նվիրեց զոհվածների հիշատակին: Ի թիվս մյուսների, Գոլոշյանի մասին բանաստեղծություններ գրեց նաև Հովհաննես Թումանյանը (սկզբում «Լուսնյակ գիշեր», ավելի ուշ՝ «Հին կռիվը»)[1]:*

*Մոսկվայի «Հայրենասերների միության» գաղափարական ազդեցության տակ էին գտնվում ոչ միայն Վարդան Գոլոշյանը, այլև ուրիշներ, որոնց մասին, դժբախտաբար, դեռևս չունենք ճշգրիտ տեղեկություններ: Հայտնի է, սակայն, որ ազատագրական պայքարի գաղափարները հատկապես տարածված էին Մոսկվայի Լազարյան ճեմարանի և Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսանողության մեջ:*

*Միությանը հաջողվեց քաղաքական կապեր հաստատել Թիֆլիսի, Երևանի, Ղարաբաղի գաղտնի կոմիտեների և արևմտահայ մի շարք գործիչների հետ: Ըստ երևույթին, նրա ազդեցության տակ էին գտնվում նաև Ս. Պետերբուրգում սովորող մի խումբ հայ ուսանողներ, որոնք գրքույկներ էին հրատարակում բալկանյան ժողովուրդների հակաօսմանյան ազատագրական շարժումների մասին և աշխատում էին Արևմտյան Հայաստան ուղարկել երիտասարդ կամավորներ[2]:*

*«Հայրենասերների միությունը» ինքնալուծարման ենթարկվեց 1885 թ. վերջերին կամ հաջորդ տարվա սկզբներին՝ գլխավորապես ներքին տարաձայնությունների հետևանքով: Անդամներից շատերը հարեցին նոր կազմակերպված ազգային կուսակցություններին: Միության նշանավոր գործիչներից Դավիթ Ներսիսյանը մահացավ 1888 թ., Թամարա Ադամյանը՝ 1889 թ.:*

*«Հայրենասերների միությունը», որի գոյությունը տևել է մոտ երեք տարի (1882–1885 թթ.), զգալի չափով նպաստեց հայ ազատագրական շարժման ծավալմանը արևելահայության մեջ:*

*Վերջացնելով մեր խոսքը այն ընկերությունների ու կազմակերպությունների մասին, որոնք 1880-ական թթ. առաջին կեսին զգալի դեր խաղացին հայ ազգային-ազատագրական շարժման մեջ, հարկ ենք համարում նկատել, որ այդ նույն ժամանակաշրջանում ստեղծվեցին նաև հայրենասիրական փոքր խմբակներ Ղարաբաղում (Շուշի քաղաքում), Իգդիրում, Անդրկովկասի հայաշատ կենտրոններ Գանձակում, Բաքվում, Ախալցխայում, ինչպես նաև Ալաշկերտում (Արևմտյան Հայաստան), Վառնայում (Բուլղարիա) և այլուր: Դրանք, սակայն, ի վիճակի չեղան ծավալել լայն գործունեություն:*

1 *Յովհ. Թումանեան.* Հայրենիքի հետ. Թիֆլիս, 1916, էջ 31-32. «Նորք», 1924, N 4:

2 «Հայրենիք», ամսագիր, 1923, N 5, 6:



## 4

*Ինչպե՞ս էր վիճակը Զեյթունում: 1878–1879 թթ. ապստամբությունից հետո այնտեղ մոտ հինգ տարի շարունակ տիրում էր համեմատաբար խաղաղ դրություն: Բայց 1884 թ. ամռանը բռնկվեց հայ գյուղացիների մի նոր ընդվզում, որն այս անգամ գլխավորում էր քաջարի երիտասարդ Փանոս Շամ-Քեշիշյանը[1]:*

*Նշված թվականին Զեյթուն քաղաքում տեղի ունեցավ մեծ հրդեհ, որի հետևանքով մոխրակույտի վերածվեց տների մեծ մասը*: Թուրքական կառավարությունը հետապնդելով քաղաքական լուրջ նպատակներ, փորձեց օգտագործել առիթը և ցրել քաղաքի բնակչությունը Զեյթունից դուրս՝ զանազան վայրերում, բայց ժողովուրդը ընդդիմացավ և մերժեց այդ առաջարկը: Թուրքական իշխանություններն ավելացրին հարկերի քանակը, որի հետևանքով ավելի ծանրացավ հայերի վիճակը[2], ծայր առավ բողոքի ու դժգոհության նոր ալիք, որը զինված ապստամբության վերածվեց Արեգին (Ալաբաշ) գյուղում:*

*Մարաշի կառավարիչ Դեդե փաշայի հրամանով կրկնապատկվեցին Արեգին հայկական գյուղի հարկերը: Եվ երբ ոստիկանները չկարողացան իրագործել փաշայի կամքը, նրանց օգնության եկան թուրքական կանոնավոր բանակի 150 զինվորներ. հունիսի 24-ին նրանք միացյալ հարձակում կատարեցին դաշտում աշխատող անհնազանդ ու ըմբոստ գյուղացիների վրա:*

*«Հարյուրապետը հրամայեց, որ անձնատուր ըլլան. բայց գյուղացիներ 7 հրացանը մեկ ուղղեցին և մեկ հարվածով պատասխանեցին. ինկավ չավուշ մը և երկու զինվոր: Զորքերն ալ սկսան հրաձգություն... երբ գյուղացիները երկու զինվոր ևս սպանեցին, մնացածները փախան և ապաստանեցան խրճիթի մը մեջ:*

*Արեգնցիք գունդագունդ հավաքվեցան օգնության. շրջապատեցին խրճիթը և կուզեին վառել զայն զորքերով միասին: Հարյուրապետը ներսեն կը պոռար. «Մի ընեք գյուղացիներ, թագավորը ձեզ կպատժե վերջը».– «Մենք չենք ուզեր ասանկ չար թագավոր, այն ալ տաճիկ թագավոր»,– կպոռային գյուղացիները:*

1 *Զեյթունցի.* Զեյթունի անցեալն և ներկայն, էջ 149-150:

2 *Աղասի.* Զեյթուն և իր շրջակաները, էջ 131:

Այս խնդրի առթիվ խաբեությամբ Զեյթուն տարին հաշտություն կնքելու Խաչեր քեհյա Կարապետյանը և բանտարկեցին զորանոցին մեջ: Գյուղացիները զայրացած՝ լեռներ քաշվեցան: Մարաշի կառավարիչ Տեոե փաշան զգաց խնդրին ծանր հետևանքը և ներում շնորհեց ամենքն ալ, միայն պահեց գյուղապետը: 45 օր բանտը մնալե հետո, կտրեց զորանոցի պատուհանը և գիշեր ատեն՝ վար նետեց ինքզինք 10 մետր բարձրութենեն և փախավ Արեգին: Կառավարությունը ներեց անոր և այսպիսով խնդիրը փակվեցավ»[1]:

Իհարկե, «խնդիրը փակվեցավ» միայն ժամանակավորապես: Նենգ ու դաժան սուլթան Աբդուլ Համիդը շուտով ցույց տվեց իր իսկական դեմքը և զեյթունցիները նորից ստիպված էին ինքնապաշտպանական-ազատագրական կռիվներ վարել կողոպտիչների ու ջարդարարների դեմ: Հարկ է նշել, որ Շամ-Քեշիշյանը ոչ միայն հաջողությամբ ղեկավարեց արեգինցիների զինված ելույթը, այլև այդ և հետագա տարիներին հայդուկային-պարտիզանական կռիվներ մղեց օսմանյան տիրապետության դեմ: «Շամ-Քեշիշյանը, արհեստով կոշկակար, պարկեշտ, կամքի տեր մեկն էր: Ապրիլի վերջերը ձյունահալին, Կապան կերթար և վեց ամիս հոն արհեստովը զբաղվելով տարեկան պարենը կապահովեր, իսկ ձմրանը Զեյթուն պստիկ կրպակի մը մեջ կաշխատեր: Շամ-Քեշիշյանը, որովհետև Կապան գտնված վեց ամսյա շրջանին տուրք վճարած չէր, Զեյթուն գալու, թաղին հարկահավաքը երկու ոստիկաններով կերթա և հետնյալ տուրքերու միանվագ վճարումը կպահանջե. չեն համաձայնիր ու ոստիկանները Փանոսի կոշկակարության գործիքները հավաքելու կձեռնարկեն: Շամ-Քեշիշյան ձեռքի երկաթով մեկուն գլխուն և մյուսին ալ կողին կուտա «ահա խանութս ձեզի, ինչ կուզեք ըրեք» ըսելով կ'երթա զինվելու»[2]:

Աշխատասեր, բայց աղքատ ու հարստահարվող գյուղացին այսպիսով ակամայից դառնում է հայդուկ-պարտիզան և ստեղծելով համախոհների մի խումբ, զինված պայքար է սկսում ազատության և արդարության համար: Շամ-Քեշիշյանը կռվում էր թուրքական կառավարության, նրա դաժան պաշտոնյաների դեմ, բայց երբեմն էլ բռնագրավում էր թալանչիների ունեցվածքը և հնարավոր չափով օգնում խեղճ ու անոթի իր հայրենակիցներին:

Փանոս Շամ-Քեշիշյանը, որ հայրենասեր հերոսի համբավ էր ձեռք բերել ամբողջ Զեյթունում ու հարևան գավառներում իր զինակիցներով, բազմաթիվ անգամ հաղթանակներ տարավ կառավարական զորամասերի

1 Նույն տեղում, էջ 130-131:
2 Զեյթունի պատմագիրք, էջ 488:



նկատմամբ, չնայած այն բանին, որ թուրքական զորքերը գերազանցում էին թվով և զենքի որակով (թուրքերը զինված էին եվրոպական «Մարտինի» հրացաններով, իսկ հայերը՝ «չախմախլի» հին ու խիստ պարզունակ հրացաններով): Բնորոշ է այն հանգամանքը, որ, ինչպես պատմում են նրա հայրենակիցները, հայդուկ-պարտիզանը հաճախ իջնելով լեռներից, շրջում էր հայկական գյուղերում, որպեսզի թույլ չտա թուրքական ոստիկաններին «տուրք գանձելու պատրվակին տակ չքավորները, թշվառները նեղեին» և ընդհանրապես այլևայլ բռնություններ գործադրեին:

Սուլթանական կառավարությունը զանազան խոստումներ տալու միջոցով փորձեր արեց Փանոսին իր կողմը գրավել, բայց դրանք հաջողություն չունեցան: Գազազած սուլթան Աբդուլ Համիդը հրապարակեց հրովարտակ, ուր ասված էր. «ով որ Շամ-Քեշիշյանի գլուխը կամ դիակը բերե կառավարության, երեք հարյուր օսմանյան հնչուն ոսկի, իսկ ընկերներունը՝ հիսունական օսմանյան ոսկի նվեր պիտի ստանա»[1]: Բայց դավադրական այս քայլն էլ ապարդյուն անցավ: Հայդուկային իր պայքարը Շամ-Քեշիշյանը շարունակեց մինչև իր կյանքի վերջը: Թուրքական բռնապետության դեմ ուղղված զեյթունցիների 1895–1896 թթ. համաժողովրդական ապստամբության ժամանակ նա նորից աչքի ընկավ իր մարտական սխրագործություններով:

1 Նույն տեղում, էջ 492:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

# ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

*1850–1880-ական թթ. զգալիորեն խորացավ ու աննախընթաց ծավալ ստացավ հայրենասիրական-ազատասիրական գաղափարախոսությունը: Ջերմ արձագանք գտնելով ժողովրդի լայն խավերում, այն փաստորեն դարձավ իր ժամանակի հայ ազգային-ազատագրական պայքարի մի բաղկացուցիչ մասը:*

## 1

*Մեր ժողովրդի նոր պատմության մեջ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը ձևավորվեց XVIII դարի երկրորդ կեսին: Նրա առավել խոշոր ներկայացուցիչներն էին Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը և Շահամիր Շահամիրյանը: Զինված լինելով իր ժամանակի առաջավոր, լուսավորական գաղափարներով, նրանք պրոպագանդում էին այն միտքը, որ անհրաժեշտ է ազատագրել Հայաստանը օտար տիրապետությունից և վերականգնել հայկական պետականությունը: «Քանի ես ապրում եմ,– գրում էր Էմինը 1757 թ. իր ինքնակենսագրական բնույթի գրքում,– պետք է ծառայեմ հայրենիքին: Եվ եթե ես ծնված եմ, որպեսզի ազատեմ իմ անպաշտպան ժողովրդին, ապա ոչ ոք չի կարող արգելք լինել ինձ: Աստծո կամքն է, որ պիտի կատարվի... Բանականություն ունեցող էակը չպետք է թույլ տա, որ ինքը ուրիշի ստրուկ դառնա»[1]:*

*Հետևելով Էմինին, Բաղրամյանը անհրաժեշտ էր համարում վերականգնել հայկական պետականությունը, ստեղծել ազատ «Մայր Հայաստան», ուր կհամախմբվեն աշխարհով մեկ ցիրուցան եղած պանդուխտ եղբայրները: Պետք է կրթել ու դաստիարակել երիտասարդներին, որպեսզի նրանք սթափվեն քնից ու թմրությունից և դառնան արի հայրենասերներ: Լավ է «մեռանիլն միանգամ քաջաբար, քան զկեալն զայսպիսի թշուառութեամբ»[2]: Մարդիկ, գրում էր Շահամիրյանը, ծնվում են ազատ և հավասար, հետևապես նաև պետք է ապրեն ազատության մեջ, «քանզի ո՛չ գոյ*

1 Life and Adventures of Joseph Emin. 1726–1809. Written by Himself. Second Edition. Calcutta, 1918, p. 67-68, 142. Շատ կողմերով հետաքրքիր այս գիրքը առաջին անգամ հրապարակվել է Լոնդոնում, 1792 թ.:

2 Նոր տետրակ որ կոչի Յորդորակ... Մադրաս, 1772, էջ 35:



*ի երեսս յերկրի ոչ ոք առաւել քաղցրութիւն ի թոշակս մարդոյ քան թէ ազատութիւն»[1]:*

*Հայրենասիրական-ազատասիրական գաղափարները տեղ են գտել Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների շատ հրատարակություններում: Միքայել Չամչյանի, Ղուկաս Ինճիճյանի, Արսեն Բագրատունու և ուրիշների գիտական աշխատություններում ու գեղարվեստական ստեղծագործություններում, օրինակ, բազմաթիվ էջեր են նվիրված հայ ժողովրդի հերոսական անցյալին, մասնավորապես հինգերորդ դարի ազատագրական պայքարին՝ Ավարայրի ճակատամարտին, Վարդան ու Վահան Մամիկոնյաններին, փառաբանվել են ազգասիրությունը, քաջարի մարտիկների սխրանքներն ու անձնազոհությունը հայրենիքի համար:*

*Հայրենասիրական ջերմ զգացմունքով և ազատասիրական մտքերով են տոգորված Հարություն Ալամդարյանի և Մեսրոպ Թաղիադյանի մի շարք երկերը: Սակայն իսկական ժողովրդական-դեմոկրատական հայրենասիրությունը իր ամբողջ ուժով ու փայլով արտահայտվեց մեծ հայրենասեր Խաչատուր Աբովյանի ստեղծագործություններում, ինչպես նաև նրա մանկավարժական գործունեության մեջ:*

Շունչդ տուր, հոգիդ, բայց քո հայրենիք
Մի տուր թշնամյաց, ու անաշխարհիկ
Ընկնել սարե սար, լինել չարաչար
Ծառա օտարաց, կամ գերի անճար[2]:

*Աբովյանի իդեալը ըմբոստ ու ազատասեր Աղասին և նրա ընկերներն էին, որոնք անձնազոհ կռիվներ մղեցին օտար բռնակալների դեմ:*

*1840-ական թթ. հնչեց Ղևոնդ Ալիշանի մարտական քնարը.*

Հայ օ՛ն ի զէն, գունդագունդ
Ցեռեալ ի պար թուն ի թուն՝
Ի զէն ի վրէժ օ՛ն անդր յառաջ
Ի զէն ի վրէժ, մի ձախ մի յաջ[3]:

*Պետք է նկատել, որ XVIII դարի վերջին տասնամյակներին ու XIX դարի առաջին կեսին հայրենասիրական կոչերով հանդես եկան բազմաթիվ այլ հեղինակներ, գործիչներ, մամուլի օրգաններ ու անգամ լուսավորական-բարեգործական նպատակներ հետապնդող այլևայլ ընկերություն-*

1 Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան... Մադրաս, 1773, էջ 103:

2 *Խ. Աբովյան.* Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Ե., 1948:

3 *Ղ. Ալիշան.* Նվագներ. Ե., 1957, էջ 99:

*ներ ու կազմակերպություններ: Բայց մինչև 1850-ական թթ. հայ ազատագրական շարժման գաղափարախոսությունը չընդունեց լայն ծավալ, չունեցավ զգալի ազդեցություն ժողովրդական զանգվածների վրա: Դրությունը փոխվեց 1850–1860-ական թթ.: Այդ շրջանում և դրանից հետո ազատագրական պայքարի գաղափարախոսությունը ստացավ ավելի մարտական բնույթ, լայն արձագանք գտավ ժողովրդի մեջ և ունեցավ աչքի ընկնող գործնական-քաղաքական հետևանք: Ազատագրական գաղափարների պրոպագանդը դարձավ ժամանակի հայ հասարակական-քաղաքական կյանքի խոշոր երևույթներից մեկը:*

*Այս նշանակալից շրջադարձի մեջ հսկայական դեր խաղաց նախ և առաջ Միքայել Նալբանդյանը: Ականավոր հեղափոխական դեմոկրատը խորապես հիմնավորեց ազատագրական շարժման ու ազգային հարցի լուծման անհրաժեշտությունը: Իրեն հատուկ սրությամբ ու կծու հեգնանքով նա քողազերծ արեց նվաճողական քաղաքականություն վարող Անգլիային, Ավստրիային, Թուրքիային, որոնք զենքի ուժով նվաճելով շատ երկրներ, դաժանորեն ճնշում ու հարստահարում էին նրանց ժողովուրդներին:*

*Խոսելով Անգլիայի մասին, Նալբանդյանն այն միտքն էր հայտնում, թե անգլիական կառավարությունը ելնելով իր գաղութային-թալանչիական նպատակներից, մահվան է դատապարտում բազմաթիվ ազգությունների: Ավստրիայի մասին նա գրում էր. «Այն հողերի վերա, ուր սեղանապիղծ ձեռքով տնկված է ավստրիական անպարծանք դրոշը, 1857 հոկտեմբերի 1-ի տեղեկությանց նայելով, բնակվում է 35019056 հոգի ժողովուրդ: Սոցանից (զորքով հանդերձ) ավստրիացի է մի միայն 7889925 հոգին, մնացածը օտար ազգեր, որ գոն. սկլավոն 14927925 հոգի, ռումեն՝ 5632089 հոգի, մաճառ 4947134 հոգի, հայ 13256 հոգի, իսկ մնացորդը այլ և այլք:*

*Ասել է թե մոտավորապես 8 միլիոն հոգին բռնացել է 27 միլիոն օտար ժողովրդի վերա և ապրում է ծծելով նոցա արյունը, նոցա կենսական ույժը և զորությունը»*[1]*:*

*Թուրքիան, ասում էր Նալբանդյանը, ստրկացրել է հայ, սլավոն և հույն ժողովուրդներին*[2]*: Մետերնիխը, այդ «ընդհանրական և մասնավորապես ավստրիական բռնակալության ջերմեռանդ քուրմը», նկատում էր*

1 *Մ. Նալբանդյան.* Երկերի լիակատար ժողովածու. հ. 3, էջ 85:
2 Նույն տեղում, էջ 89:



*Նալբանդյանը, ոչ հեռավոր անցյալում առանց քաշվելու հայտարարում էր, թե «Իտալիան լոկ աշխարհագրական անուն է»*[1]*:*

*Մի այլ կապակցությամբ Նալբանդյանը նկատել է.*

*«Եվրոպական տերությունքը անդադար օգնություն են տալիս Թուրքիային, որ նա դիմանա և չկործանվի:*

*– Որպեսզի Թուրքիո ստրկացած հայ, սկլավոն և հույն ժողովուրդը քաղաքակրթիչ հոգաբարձվից չզրկվի»*[2]*...*

*Նշելով այս բոլորը՝ Նալբանդյանն անհրաժեշտ էր համարում, որպեսզի ճնշված ժողովուրդները պայքարի ելնեն բռնակալների դեմ, ձեռք բերեն ազատություն և դրանով իսկ ապահովեն իրենց ազատ և անկաշկանդ զարգացումը, այլապես նրանք ենթակա են ոչնչացման վտանգին: «Ոչ մի ազգություն,– գրում էր Նալբանդյանը,– իրավունք չունի կուլ տալու և ոչնչացնելու մի ուրիշ ազգություն...: Մի ազգ, որ կորուսանում է յուր ազգությունը, դուրս է ընկնում այն կազմվածքից, որպես մի փտած անդամ, և հավիտենական կոկորդը անխնա կուլ է տալիս այդպիսի ազգությունը: Այս պատճառով մարդկային սրտի համար մի ավելի տխուր բան չկա, քան թե տեսանել, որ մի ազգություն ընկնում էր և կործանվում էր ծանր հանգամանքների հարստահարության տակ – մի այլ ազգության ճնշողութենից: ...Թո՛ղ ամենայն ազգ պահպանե յուր ազգության կերպարանքը, թո՛ղ ազատ և պայծառ ծաղկի ամենայն ազգություն մարդկեղեն աշխարհի մեջ. դոքա միայն զորություն և հոգի են տալիս ազգերի ընդհանուր աշխատությանը»*[3]*: Ազգային-գաղութային ճնշման ու հարստահարությունների ենթակա ժողովուրդներն իրենց պայքարը, բնականաբար, պետք է մղեն ազգային-ազատագրական շարժման դրոշի տակ: «Այսօր, ճնշված մարդերի համար,– գրում էր Նալբանդյանը,– ազգությունն է նոցա միակ դրոշը, որ կարող է բացվիլ բռնակալության ընդդեմ»*[4]*:*

*Միքայել Նալբանդյանը հայ իրականության մեջ ազգային-ազատագրական գաղափարների պրոպագանդի ուղղությամբ աշխույժ գործունեություն ծավալեց 1850-ական թթ. վերջերին և 1860-ական թթ. սկզբներին: Նա այն միտքն էր քարոզում, թե հարկավոր է հեղափոխական պայքարի, ազատագրական շարժման միջոցով տապալել օտարի լուծը և ազատել հայրենիքն ու ժողովուրդը ազգային ճնշումներից, հարստահա-*

1 Նույն տեղում, էջ 85:
2 Նույն տեղում, էջ 89:
3 Նույն տեղում, հ. 2, 1947, էջ 259:
4 Նույն տեղում, հ. 3, էջ 90:

րությունններից: Ազգի՝ ժողովրդի ազատագրության հարցը միշտ հուզել է նրան: Իր հայտնի «Մանկության օրեր» բանաստեղծության մեջ Նալբանդյանը ասում էր, թե վշտից ու ցավերից ինքը ազատված չի լինի այնքան ժամանակ,

Որչափ իմ ազգս կմնա ստրուկ
Օտարների ձեռք, անխոս, տխրադեմ[1]:

Անհրաժեշտ է ոտքի ելնել օտարերկրյա հարստահարիչների դեմ:

Ներկա օրերում այլ ի՛նչ սև քնար,
Սուր է հարկավոր կտրիճի ձեռքին.
Արյո՛ւն ու կրա՛կ թշնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին[2]:

Նալբանդյանը բարձր է գնահատել նրանց, ովքեր քարոզել են հայ ժողովրդի քաղաքական ազատության գաղափարը: Այս տեսակետից բնորոշ են նրա այն տողերը, որ վերաբերում են Մեսրոպ Թաղիադյանի «Տեր կեցո դու զհայս» բանաստեղծությանը: «Մեռելահարցուկի» ծանոթագրություններից մեկում Նալբանդյանը Թաղիադյանի այդ բանաստեղծության մասին ասել է. «Այս երգը թե յուր բովանդակության, թե յուր բանաստեղծական վառվռուն հորինվածքի և թե հայոց ներկա վիճակի ճշգրիտ պատկերը հանդիսացնելու և դորա բարվոքելու համար հարկավոր եղած հնարները խնդրելու մասին, արժանի է ազգի մասնավոր ուշադրությանը: Եթե հնար ունենայի ես, ամենասուրբ պարտականություն կդնեի ամեն մի հայի վերա անգիր ուսանել այս երգը: Մինչև այսօր իմ կյանքի մեջ չեմ տեսած կամ լսած մի այսպիսի երգ. ահա բուն ազգային երգ»[3]:

Նալբանդյանը հայ ժողովրդի ազատագրության գործում մեծ դեր էր վերապահում երիտասարդ սերնդին: Դիմելով հայ երիտասարդությանը, նա գրում էր. «Մեր ազգի անցածը տխուր է, այն օրերի պատմական հիշատակարաններից արտասուք է հոսում: Մեր ազգի ներկան թշվառ է, ստրկությունը և աղքատությունը բարձրաձայն խոսում են այստեղ: Եթե հույս ունինք ապագայի վերա, նորա երևեցուցիչը դուք եք, ձեզանից կախվում է ազգի ապագան և ձեր վերա է միակ հույսը: Ի՛նչ չափով

1 *Մ. Նալբանդեան.* Երկեր. հ. 1, Ռոստով, 1903, էջ 14:
2 Նույն տեղում, էջ 15:
3 Նույն տեղում, էջ 75:



պիտի արդարացնեք այդ հույսը, դորա վկան և չափողը պիտի լինի ձեր գործը»[1]:

Միքայել Նալբանդյանի քարոզած ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը բխում էր հասարակական կյանքի զարգացման մասին նրա ունեցած ընդհանուր տեսությունից՝ սոցիալական կյանքի փիլիսոփայությունից: Որպես հեղափոխական-դեմոկրատ, Նալբանդյանը ժխտում էր բուրժուական լիբերալների տեսությունը: Նա համոզված էր, որ հասարակական կյանքում խոշոր բեկում, նշանակալից զարգացում կարող է տեղի ունենալ քաղաքական պայքարի, հեղափոխական շարժման միջոցով:

Նալբանդյանի գաղափարական պրոպագանդը հսկայական ազդեցություն ունեցավ դեմոկրատական շրջաններում: Ե՛վ 60-ական թթ., և՛ հաջորդ տասնամյակներին նրա քարոզած մտքերը ոգեշնչում էին ազատագրական գաղափարներով համակված երիտասարդությանը: Պատահական չէր, որ այդ երիտասարդությունը տարիներ շարունակ գաղտնի կերպով արտատպում ու տարածում էր Նալբանդյանի աշխատությունններն ու նկարները: Ահա երկու փաստաթուղթ այդ մասին:

1874 թ. Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետ մայոր Զոլոտովսկին ներքին գործերի մինիստրությանը գրած իր զեկուցագրում հաղորդում էր. «Վերջին ժամանակներս այստեղ, ինչպես ինձ հաղորդել են, երիտասարդ հայերը Թիֆլիսից սկսել են ստանալ հայ գրող Նալբանդյանի նկարները, որը, ինչպես ասում են, յուր հակակառավարական գրվածքների համար 50-ական թվականներին աքսորված է եղել Սարատովի նահանգի Կամիշին քաղաքը, որտեղ և նորերս մահացել է*: Նկարի շուրջը գովասանական խոսքեր են գրված Նալբանդյանին... Այդ նկարները Թիֆլիսում բաժանվում են երիտասարդներին ձրիաբար, բաժանվում են և ուսումնական հիմնարկներում դասընթացքն ավարտած հայերին: Իսկ թե ով է բաժանում, ինձ չհաղորդեցին»[2]:

Նալբանդյանի նկարը հայ հայրենասեր երիտասարդության կողմից գաղտնի կերպով տարածվել է նաև 1870-ական թթ. վերջերին: Այդ կապակցությամբ ցարական կառավարության արդարադատության մինիստրը «կայսեր սեփական դիվանի» 3-րդ բաժանմունքի պետին ուղղած 1880 թ. փետրվարի 15 թվակիր իր գրության մեջ** հայտնում էր, որ 1879 թ. նոյեմբերին երիտասարդ Տիգրան Նավասարդյանը Նալբանդյանի նկարը

1 *Մ. Նալբանդյան.* Երկերի լիակատար ժողովածու. հ. 3, էջ 41:
2 ЦИАМ, 3-е отд., 3-я экспед., д. 131, л. 1.

*բազմացնում է մինչև 500 օրինակ և տարածում Թիֆլիսի հայ հասարակության մեջ*[1]*:*

*Նալբանդյանի անունը ջերմությամբ էր արտասանում նաև Կ. Պոլսի և Արևմտյան Հայաստանի գավառների առաջադեմ երիտասարդությունը: 1870-ական թթ., օրինակ, Կ. Պոլսում վաճառվում էին Մ. Նալբանդյանի վիմատիպ նկարները: Նույն տարիներին թատերական ներկայացումներից առաջ Պետրոս Ադամյանը և Վերգինե Գարագաշյանը հաճախ արտասանում էին Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը*[2]*:*

*Դեմոկրատական դիրքերից ազատագրական շարժման գաղափարների պրոպագանդ ծավալեց նաև արևմտահայ ականավոր հրապարակախոս Հարություն Սվաճյանը: Դառնալով Նալբանդյանի համախոհներից մեկը, նա նոր շունչ, նոր ոգի տվեց իր խմբագրությամբ Կ. Պոլսում հրատարակվող «Մեղու» պարբերականին: Նրա հանդեսը սկսեց ավելի համարձակորեն գրել հետադիմական ուժերի դեմ, սոցիալական ու ազգային ճնշումների մասին, կոչեր արեց զենքի դիմել ազատություն ձեռք բերելու համար: Իր մասին թերթը գրում էր, որ ինքը՝ «Մեղուն» տեսավ «ամենայն բեռ, ամենայն ցավ, ամենայն թշվառություն ժողովրդին վրա ծանրացած... Ժողովրդին քարոզեց իր իրավունքը: Գահգահի աղաղակներով ուզեց արթնցնել ժողովուրդը»*[3]*:*

*«Մեղուն» հասկացնել էր տալիս ընթերցողներին, որ առանց պայքարի, առանց արյուն թափելու ժողովուրդը չի կարող ազատագրվել ու հասնել իր նպատակներին**: «...Արդարությունը,– գրում էր թերթը,– որ փորձով տեսնված է, թե առանց արյունահեղության չի պիտի կրնա տիրել երկրագունդիս...»*[4]*:*

*Սվաճյանի թերթը համարձակորեն գովաբանում էր իտալական ազգային-ազատագրական շարժման լեգենդար հերոս Գարիբալդիին: «Այս անձը, առաքյալն Աստուծո, կուգա մարդկության բարերար ըլլալու և գերի ու ստրուկ ժողովուրդներու իրենց ազատությունը ստացնելով՝ կքաշվի կառանձնանա իր տունը, ուրկե ելած էր միայն ի վերուստ իրեն հանձնյալ պաշտոնը կատարելու ամենայն հավատարմությամբ: Կարիպալտի Իտալիան ազատեց... Տա՜ր երկինք, որ ամեն ընկճյալ ազգերու համար ալ*

1 Նույն տեղում, թ.3, հմմտ. Գրական ժառանգություն, գիրք Ա., Ե., 1940, էջ 48:

2 Գ. *Ստեփանյան.* Միքայել Նալբանդյանի երկրորդ ճանապարհորդության հետ կապված մի քանի հարցեր.– Տեղեկագիր, 1949, N 9:

3 «Մեղու», 1863, N 195:

4 Նույն տեղում, 1864, N 227:



*այսպիսի անձինք հառնեին և աշխարհիս խաղաղությունը հաստատ հիմանց վրա դրվեր»:*

*Հանդեսը բարի նախանձով էր խոսում ավստրիական բռնակալական լծից ազատագրված իտալացիների մասին: «Կարիպալտի՝ նոր ժամանակի դյուցազունը, նոր սերունդին սիրտը թնդացուց և նորահաս* Մեղուն *նախանձեցավ անոր և անոր փրկյալներուն բախտին վրա»*[1]*:*

*«Մեղվի» խմբագիրը նույն ոգևորությամբ մատնացույց էր անում այն հանգամանքը, որ ռուսական ցարիզմի դեմ ոտքի ելած լեհերը, չնայած իրենց կրած ծանր տառապանքներին հանդես են բերում անդրդվելի կամք, հայրենասիրություն, ազգասիրություն:*

*Ազատագրական պայքարի գաղափարները տարածելու նպատակով Սվաճյանը իր թերթում հաճախ հրապարակում և արտատպում էր այնպիսի բանաստեղծություններ ու հոդվածներ, որոնցում կոչ էր արվում հեղափոխական պայքար մղել օտար լծի դեմ: Մեծ է Սվաճյանի դերը արևմտահայության մեջ ազատագրական պայքարի գաղափարախոսությունը տարածելու գործում:*

*Այս հարցում զգալի դեր է խաղացել նաև Ստեփան Ոսկանը (Ոսկանյանը): Իր «Արևելք» և «Արևմուտք» հանդեսների էջերում նա 1850–1860-ական թթ. հանդես եկավ ոչ միայն «սեփական» հետադեմ ուժերի, այլև հայ ժողովրդին ճնշող ու հարստահարող օտար բռնապետությունների դեմ:*

*«Արևմուտքի» էջերում Ոսկանը անսքող դրվատանքով էր խոսում ազատասեր զեյթունցիների, բռնակալության դեմ նրանց մղած կորովի պայքարի մասին: «Լեռները կսիրեմ ի վերջե, վասնզի լեռներու զավակ եմ: Նախահայրս իր հույսը լեռներու վրա դրավ և այսօր ազգիս հույսը լեռի մը վրա է»,– գրում է նա՝ ակնարկելով 1862 թ. Զեյթունի ապստամբությունը*[2]*: Շատ ուշագրավ է, որ «Արևմուտքում» Ոսկանը՝ միակը արևմտահայ 60-ական թթ. առաջադիմական գործիչների մեջ, բացասաբար էր տրամադրված թուրքական ռեֆորմատորական շարժման՝ բռնակալությունը սահմանափակելու հնարավորությունների նկատմամբ: Այս տեսակետից նայելով խնդրին նա հասարակական որևէ հեռանկար չէր կապում Բ. Դռան և սուլթանի վավերացրած՝ արևմտահայերի սահմանադրության հետ. Կ. Պոլսի հայ հասարակությունը, գրում է Ոսկանը, «պետք է, որ չմոռնա, թե ամեն կարգի կանոնի հոգի ազատություն և իրավունք են և թե ինքը Պոլսի մեջ արտոնությունեն ուրիշ բան չունի: Հին թուրք*

1 Նույն տեղում, 1860, N 116:

2 «Արեւմուտք», Փարիզ, 1864, N 4, էջ 27:

*մը կրնա նոր Թուրքի մը դրոշմին վրա իր դրոշմը դնել և գրվածը (իմա՝ սահմանադրությունը) բոլորովին անընթեռնելի ընել...»*[1]:

## 2

*Հայ ազատագրական շարժման գաղափարների քարոզչության գործում խոշոր դեր է խաղացել նաև նշանավոր հասարակական-քաղաքական ու կրոնական գործիչ, ժողովրդի լայն խավերի կողմից հարգված ու սիրված վանեցի Մկրտիչ Խրիմյանը (1820–1907): Լավ տեղյակ լինելով Արևմտյան Հայաստանի գավառներում ստեղծված ծանր վիճակին, նա բազմիցս անդրադարձել է այդ հարցին, բողոքել է հարստահարիչների դեմ, աշխատել է կրթություն, լուսավորություն տարածել երկրում, օգնել խեղճ ու անօգնական գյուղացիներին: Միաժամանակ, Խրիմյանը զարգացրել ու հիմնավորել է հայրենասիրական մտքեր այն մասին, որ անհրաժեշտ է հանդես բերել արիություն, անձնազոհություն, ըմբոստանալ դաժան կարգերի դեմ, դիմել ինքնապաշտպանության, պայքարել ժողովրդի սրբազան իրավունքի՝ ազատության համար:*

*Խրիմյանը հաճախ հիշեցնում էր հայ ժողովրդի անցյալի հերոսական դրվագները: Դեռևս 1850 թ. Կ. Պոլսում հրապարակած իր «Հրավիրակ Արարատեան» պոեմում նա մեծ ոգևորությամբ նկարագրել է Ավարայրի դաշտը, Վարդանանց ճակատամարտը, հայ մարտիկների սխրագործությունները*[2]*: Նպատակը պարզ էր. պետք է օրինակ վերցնել հերոս նախնիներից:*

*Բնականաբար, որպես համոզված քրիստոնյա, Խրիմյանը իր այդ թեզը հաճախ հիմնավորում էր քրիստոնեական վարդապետության փաստարկումներով:*

*Իր բանաստեղծություններում ևս Խրիմյանը կոչ էր անում պայքարել և եթե պետք է՝ անձը զոհել հայրենիքի համար: 1869 թ. գրած նրա «Մրմունջք հայրենասիրի առ քաջն Վարդան և նիզակակիցս իւր» բանաստեղծության մեջ հիացմունքի խոսքեր են ասվում Վարդան Մամիկոնյանի մասին, որը զոհաբերեց իրեն «հայրենիքի ազատության համար»: Հետևելով Եղիշեին, Խրիմյանը գրել է.*

...սուրբ է Հայրենիք, մեռանիլ վասն նորա
է սեպուհ պարտիք...
Տո՛ւր արևդ և կյանքդ՝ զոր ետ քեզ Հայրենիք,

1 Նույն տեղում, N 2, էջ 3:

2 Հրաւիրակ Արարատեան. Յօրինեալ ի չափս հայկականս ի Մկրտչէ Խրըմեան Վանեցւոյ. Կ. Պոլիս, 1850:



Այդպես մեռանիլ անմահություն է,
Զոր չգիտեն աշխարհիս անզգամ մարդիկ[1]:

*Բնորոշ է այն հանգամանքը, որ քաղաքական պայքարի ու ապստամբական շարժման կողմնակից Մ. Խրիմյանը խիստ քննադատության ենթարկեց սուլթանական կառավարության կողմից 1863 թ. հաստատված, այսպես կոչված «Ազգային սահմանադրությունը», որը իրականում հայերի ներքին, կրոնական-կրթական գործերին վերաբերող սոսկ մի կանոնադրություն էր և ի վիճակի չէր ազդեցություն ունենալու սոցիալ-քաղաքական լուրջ հարցերի լուծման ընթացքի վրա: Խրիմյանը չէր բաժանում արևմտահայ շատ գործիչների այն կարծիքը, թե այդ «սահմանադրությունը» շրջադարձ եղավ արևմտահայերի կյանքում և լուծեց նրանց հուզող հարցերը: Խոսելով «Ազգային սահմանադրության» մասին, նա իրեն հատուկ հումորով ասում էր. «Նորա թերթերը վարդի թերթեն ավելի փափուկ են, խստությամբ մի շոշափեք՝ պատառ պատառ կլինի: Մանավանդ ո՞րչափ սարսուռ կզգամ, երբ ոստիկանության ձեռք կդպի...»: Պատրիարք դառնալուց հետո ևս Խրիմյանը բազմիցս նշել է, որ «սահմանադրությունը» նշանակություն չունեցավ հատկապես գավառահայության համար*:*

*Այսպիսի եզրակացություն անում էր մի գործիչ, որը իր պատրիարքության տարիներին (1869–1873) անօրինակ համառությամբ փորձել էր սահմանադրությունը գործադրել տալ հայաբնակ գավառներում և միշտ էլ հանդիպել էր անհաջողության՝ ի դեմս վիլայեթներում տնօրինող ինքնագլուխ փաշաների և օսմանյան բռնակալական բյուրոկրատիայի խոշոր և մանր մյուս ներկայացուցիչների:*

*Ռուս-թուրքական 1877–1878 թթ. պատերազմի շրջանում Խրիմյանը ավելի ծավալեց իր հայրենասիրական գործունեությունը: 1877 թ. սկզբներին Կ. Պոլսում տպագրվեց նրա «Վանգոյժը», որը գրված էր նախորդ տարվա դեկտեմբերին Վանում ոստիկանության կողմից կազմակերպած հրդեհների առիթով*[2]*: Թուրքական կառավարությունը արգելեց գրքույկի վաճառքը, սակայն մի քանի ամիս անց՝ 1877 թ. կեսերին «Վանգոյժը» լույս տեսավ Թիֆլիսում և տարածում գտավ նաև Արևմտյան Հայաստանում**:*

*Խրիմյանը ողբում էր իր հայրենակիցների ծանր վիճակը, պատկերում էր կատարվածի սարսափները և անում ուշագրավ խորհրդածություններ: Խոսելով այն մասին, որ հայությունը ցուցաբերում է ավելորդ*

1 Ամբողջական երկեր *Խրիմեան Հայրիկի*. Նիւ-Եորք, 1929, էջ 823:

2 Վանգոյժ. Կուժ մը ջուր իւր այրած հայրենեաց վերայ կը սրսկէ *Խրիմեան Հայրիկ*. Տփխիս. 1877:

համբերություն և հավատարմություն իրեն հարստահարողների նկատմամբ, նա կշտամբանքով գրում էր. «Դու գիտե՞ս, ով հավատարիմ ժողովուրդ Հայոց, մարդիկ և ազգեր կան, որ քո այնչափ հավատարմությունդ կծաղրեն ու կմեղադրեն զքեզ, երբ կտեսնան, որ խիստ անմռունչ և անզգա կլինիս հավատարմությանդ մեջ, մինչև անշունչ անբարբառ դիակ մը կդառնաս դու, այնպես որ պարկեշտությունդ կնշավակեն և կոխկռտելով կանցնին վերաեդ, և դու չես իմանար: Միթե գռեհկաց կա՞վ ես դու աշխարհիս երես, ես էլ կդատիմ զքեզ, թե այդչափ ստրկանաս և աղարտես մարդկության ազատ պատիվ»[1]:

Նույն՝ 1877 թ. վերջերին հրապարակվեց «Հայգոյժը»[2], ուր Մ. Խրիմյանը անվերապահորեն կոչ էր անում ոտքի կանգնել, դիմել զենքի ու պայքարի:

«Հո՛ւշ, հո՛ւշ, ո՛վ կոտորված գառներ, ո՛վ Հայոց ողջ ու մնացորդ որդիներ, դեռ պիտի կոտորվիք, դեռ պիտի մորթվիք այդ չքոտի քյուրտերեն, քանի որ անզեն, աներկյուղ, անապաստ կապրիք. դուք մարդ եք, ձեռք և բազուկ ունիք, միթե անզգացած մեռե՞ր է ձեր սրտմտության ոգին...»[3]:

Ազատություն կարելի է ձեռք բերել միայն քաղաքական պայքարով, զոհերի գնով: Ուրիշ ելք չկա: Դիմելով հայ ժողովրդին, Խրիմյանը ասում էր. «Ո՛վ դու մաշած և հյուծած հիվանդ, թե հիրավի՛ բժշկություն կժտես, թե ստույգ ազատություն կցանկաս, օ՛ն ուրեմն, փոքր ինչ խլրտի՛ր մահճիդ մեջեն. ինքնաշա՛րժ եղիր. ահավասիկ Աստուծո մատն ու հրեշտակ աշխարհիս հեղափոխության ավազանին ջուրերը կհուզեն. ով որ զինքն վաղ ձգե նորա մեջ, նա միայն յուր ցավերեն ազատ կլինի:

Թե չգիտես, ես՝ իբրև դաս, խոսիմ քեզ, որ դու խելամտիս թե քանի՞ թանգ է ազատության գին. աշխարհիս Փրկիչ զայն յուր խաչով և արյունով գնեց. նույնգունակ մեր նախնի քաջեր Եկեղեցվո և Հայրենյաց ազատություն մահով և արյունով գնեցին: Միթե դու ցանկալի ազատություն առանց զոհի և արյան ձրի՞ ստանալ կուզես»[4]:

Հայ կանայք պետք է հետևեն V դարի հայ փափկասուն, բայց քաջասիրտ տիկնանց: Լավ է մեռնել հերոսի մահով, քան ապրել ստրկության, ճնշումների ու հալածանքների մեջ: Իր խոսքը ուղղելով որբացած հայ կանանց, Խրիմյանը գրում էր. «Օ, ի՞նչ կլիներ, որ դուք ևս այն

1 Վանգոյժ..., էջ 10:
2 Հայգոյժ. Աշխատանք Հայոց աշխարհին. գրեց և աշխարհագուժեց *Խրիմեան Հայրիկ*. Կ. Պոլիս, 1877:
3 Նոյն տեղում, էջ 28:
4 Նոյն տեղում, էջ 29:



մշեցի դյուցազն կնոջ պես զորանայիք, ձեր վշտակրության և հալածանաց մեջ կամակար մեռնեիք կրոնի սրբության համար, ձեր զավակաց սիրույն համար, ձեր համեստ պատկառանաց համար. միթե այժմ կապրի՞ք դուք և լավագույն չէ՞ր ձեզ մեռնիլ, քան այդ չարավիշտ կյանք»[1]:

Խրիմյանը լավատես էր: Նա երբեք չէր կորցնում իր հույսը լավագույն ապագայի նկատմամբ, իր բոլոր գրվածքներում քարոզում էր չվհատվել, աննկուն լինել: Հայոց աշխարհի գարունը մոտ է, ասում էր Խրիմյանը, պետք է միայն գործել, աշխատել, «...նկուն մի՛ լինիք փորձության առաջ՝ զի մարդուն կենաց ճանապարհ այս աշխարհիս վերա լի է դժնդակ փուշերով: Առաքինիք միայն զայն կոխելով կանցնին, իսկ վատասիրտներ կլքանին:

Կոխեցեք և անցեք, ո՛վ աշխատավոր եղինք, մի՛ թափառիք ու հեռանաք ձեր ավերակ ագարակեն, ելեք դարձյալ զույգ զույգ լծվեցեք. ձեր սամոտիք պինդ կապեցեք ընկերական սիրով, հեծելով, փնչալով վարեցեք ու պատռեցեք այդ տառապանաց ակոսն. ժիր մշակներ, գոգնոց կապեցեք, լի հույսով ցանեցեք ձեր վաստակասեր քրտանց սերմըն. պահ մի ևս սպասեցեք, զի ձմեռ է, ձյուն և սառնամանիք ծածկեր են մեր աշխարհ:

Գարուն մոտ է, Հայո՛ց աշխարհ...»[2]:

Նույն մտքերը Խրիմյանը զարգացնում էր նաև «Հայգոյժի» մեջ: Գրքույկի առաջաբանում ասված է. «Զվարանինք սակայն և ողբերով չհուսահատինք... դու կտեսնես թե ի՞նչպես Հայոց աշխարհն ևս կվերածնի հրաշյուք: Միայն թե մեք աննկուն արիութեամբ գործենք...»[3]:

1878 թ. եվրոպական մեծ պետությունների Բեռլինի կոնգրեսից հետո Մ. Խրիմյանը նորից եկավ այն եզրակացության, որ Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը չի լուծվի առանց զինված պայքարի ու ժողովրդական ապստամբության: Իր այդ համոզումը նա արտահայտեց «Հարիսայի» և «Թղթե շերեփի» այլաբանական հայտնի պատկերում: Բեռլինից վերադառնալով Կ. Պոլիս, Խրիմյանը հայ բնակչության հետ տեղի ունեցած հանդիպումներում, ըստ «ունկնդիր և ժամանակակից վկա Խաչիկ խան Սարաճյանի», ասել է. «Ժողովուրդ Հայոց, անշուշտ լավ հասկցաք թե զենքը ինչ կրնար գործել և կգործե: Ուրեմն սիրելի և օրհնյալ հայաստանցիներ, գավառացիներ, երբ հայրենիք վերադառնալու լինիք, ձեր բարեկամաց և ազգականաց իբրև պարգև՝ մեկ մեկ զենք տա-

1 Նույն տեղում, էջ 16:
2 Վանգոյժ, էջ 12-13:
3 Հայգոյժ, էջ Ե:

*րեք, զենք առեք ու դարձյալ զենք: Ժողովուրդ, ամենեն առաջ քո ազատության հույսը քո վրա դիր, քո խելքին և բազուկին ուժ տուր, մարդ ինքնիրմեն պետք է աշխատի, որ փրկվի»*[1]:

*Հուշերի հեղինակը այնուհետև պատմել է. «Խրիմյանի այս քարոզը շատ խոր ու անջնջելի ազդեցություն թողուց ժողովրդին վրա: Շատերը հիացան, իսկ ոմանք անխոհեմություն սեպեցին այդքան ազատ և համարձակ խոսքեր»*[2]:

*Բայց անցան տարիներ: Հայկական և ընդհանրապես Արևելյան հարցի շուրջը ծավալված դիվանագիտական հարաբերություններում տեղի ունեցան զգալի տեղաշարժեր: 1880-ական թթ. կեսերից սկսած Մ. Խրիմյանը ավելի շատ հակվեց դեպի լիբերալ հայացքները, սկսեց ավելի հաճախ խոսել զգուշության և խոհեմության մասին:*

*Հարկ է նկատել, որ Վասպուրականի արծիվ Խրիմյանի հայրենասիրական-ժողովրդասիրական գործունեության մասին դեռ իր ժամանակ ամենաջերմ խոսքեր են ասել Հարություն Սվաճյանը, Պետրոս Դուրյանը, Րաֆֆին, Մատթեոս Մամուրյանը, Ղազարոս Աղայանը և նշանավոր շատ այլ գործիչներ:*

*1860-ական թթ. ազգային-ազատագրական շարժման գաղափարների տարածման ուղղությամբ եռանդուն գործունեություն ծավալեց Սմբատ Շահազիզը: Հրապարակախոս-բանաստեղծը մռայլ գույներով էր նկարագրում ժամանակի արևմտահայ իրականությունը, վշտանում էր տիրող կացության առթիվ և միաժամանակ նշում ելքը, փրկության ուղին: Իր հերոսի՝ Լևոնի բերանով նա հետևյալ կերպ էր պատկերում Արևմտյան Հայաստանը.*

Գեղեցի՛կ աշխարհ, դու Հայո՛ց աշխարհ,
Լըցված, ողողված դառն արտասուքով,
Ո՛րքան խեղճ ես դու, և ո՛րքան թշվառ,
Արյունաշաղախ տեսարաններով[3]:

*Բանաստեղծը կարծում էր, որ առանց ազատության չի կարող լինել երջանիկ կյանք, ուստի կոչ էր անում ապստամբել և արյան գնով ազատություն ձեռք բերել.*

---

1 *Հայկ Աճեմեան.* Հայոց Հայրիկ. հ. Ա, Թավրիզ, 1929, էջ 513:
2 Նույն տեղում:
3 *Ս. Շահազիզեան.* Լեւոնի վիշտը և զանազան բանաստեղծութիւններ. Մ., 1865, էջ 116:



Մի վե՛ր կաց, կանգնի՛ր աշխարհ Հայաստան,
Մի թա՛փ տուր ուժով, թո՛ղ ճեղքվին կապանք:
Ահա՛ քեզ արյուն իմ նվիրական,
Թո՛ղ ցողեն դաշտերդ փրկության հուսանք[1]:

*Շահազիզը մեծ ոգևորությամբ էր խոսում իտալական ազգային-ազատագրական շարժման և մասնավորապես Գարիբալդիի գլխավորած շարժման մասին, խոր հարգանքով և ակնածությամբ էր հիշում V դարի հայ խիզախ կանանց և մյուս քաջարի նախնիներին: «Լևոնի վշտի» հեղինակը ջերմ տողեր է նվիրել զեյթունցիների 1862 թ. ապստամբությանը: «Եզվիտներ և Զեյթուն» բանաստեղծության մեջ Զեյթունի հերոսամարտի մասին ասված է.*

Ո՛վ ազատություն, դու սպառազեն
Տավրոս լեռներից մեզ երևեցար,
Եվ արևնարբու Ազիզն անօրեն
Տարավ նշավակ, անկավ չարաչար[2]:

*Այդ նույն բանաստեղծության կապակցությամբ գրված ծանոթագրության մեջ Շահազիզն ասում էր. «1862 թվին, օգոստոս ամսին զեյթունցիք ջարդեցին տաճիկ զորապետ Ազիզ փաշայի կանոնավոր զորքը և շատ թնդանոթներ խլեցին: Այս հաղթությունը պիտո է տոնախմբվի հայրենասեր շրջաններում, որպես փառավոր առհավատչյա հայկական քաջասրտության»*[3]:

*Շահազիզը խիստ և վճռական տողեր է գրել սուլթանական բռնակալության դեմ: Թուրքական լծի տակ հեծող Հայաստանում նա տեսնում էր «ստրկություն, բանտ և դագաղ»: 1864 թ. գրած իր «Բռնավոր սուլթան» բանաստեղծության ծանոթագրության մեջ Շահազիզը գրում էր. «Այո՛, այստեղ մեր խոսքն անհոգի և անաստված բռնավորների մասին է: Թե քանի տարել են այդ բռնակալության լուծը մեր Տաճկաստանի Հայ եղբայրակիցքը – գիտե ամեն ոք»*[4]:

*Ի՞նչ պետք է անել: Բանաստեղծն անվերապահ կերպով հայտարարում էր, որ պետք է տապալել սուլթանական բռնակալությունը և ձեռք բերել ազգային-քաղաքական անկախություն: Սակայն Շահազիզը չէր մո-*

---

1 Նույն տեղում, էջ 118:
2 Նույն տեղում, էջ 176:
3 Նույն տեղում:
4 Նույն տեղում, էջ 146:

*ռանում խոսել նաև ներքին, «սեփական թշնամիների» մասին, որոնք անխնա կերպով կեղեքում ու հարստահարում էին աշխատավորությանը:*

*Ազատագրական գաղափարների կողմնակից էր նաև Պետրոս Դուրյանը: Վաղամեռիկ բանաստեղծը ազգային-ազատագրական գաղափարներ է տարածել ինչպես իր բանաստեղծություններում, այնպես էլ դրամատիկական գործերում: Ահա մի երկու օրինակ. «Ասպատակութիւնք Պարսկաց ի Հայս կամ ավերումն Անի մայրաքաղաքին Բագրատունեաց» դրամայում հայ քաջասիրտ ռազմիկներից մեկը այսպես է խոսում. «Այո՛, ես որբ եմ, ո՛չ հայր, ո՛չ մայր և ո՛չ եղբայր ունիմ, այլ միայն թշուառ հայրենիք մը, ահա այն է հայրս, մայրս ու եղբայրս. հայրենիք մը ունիմ միայն, որ կը սիրեմ և զայն սիրելու համար կը զգամ, որ պետք է մեռնիլ, մեռնիլ, խառնել իմ երակացս արիւնը այն դիւցազանց թափած արեան հեղեղներուն, որք իրենց աշխարհէն քշեցին տարին գերութեան ահագին շղթաները և անդունդը թափեցին»[1]:*

*Նույն այդ դրամայում հայ ռազմիկները երգում են.*

Ժամ է արդ փառաց,
Որդիք քաջազանց,
Արեամբ քաղեցեք
Դափնիս վարդագեղ:
Վառեալ ի զէն հուր,
Ի սուր և երկաթ,
Ըզվրէժ դիւցազանց,
Լուծեք, օ՛ն յառաջ[2]:

*«Սև հողեր կամ հետին գիշեր Արարատյան» ողբերգության մեջ հայ ռազմիկները երգում են.*

Օ՛ն, անվեհեր վանենք զրկանք,
Որ Հայաստան առնէ նոր կեանք.
Բիւր սուր-հուր, մահ
Զազդեն մեզ ահ…
Արդ քաջալանջ՝
Նետուինք յառաջ[3]:

*«Նոր սև օրերում» բանաստեղծության մեջ Դուրյանը գրում էր, թե թշնամու զենքի դեմ պետք է զենք վերցնել և սեփական պատիվը պաշտ-*

1 *Պ. Դուրեան.* Տաղք և թատերգութիւնք. Կ. Պոլիս, 1872, էջ 267:
2 Նույն տեղում, էջ 239-240:
3 Նույն տեղում, էջ 187-188:



*պանել: Ավարայրի ճակատամարտին նվիրված ոտանավորում ասված է, թե հայրենիքի թշնամու գլխին պետք է սուր իջեցնել և մեռնել հաղթանակի համար[1]:*

*Բանաստեղծը սրտի խոր կսկիծով էր արձանագրում այն փաստը, որ ժողովուրդը հեծում է ինչպես օտար, այնպես էլ համազգի կեղեքիչների ու հարստահարիչների լծի տակ: Ծանր է հայրենիքի վիճակը: Ամեն մի իսկական հայրենասերի սրբազան պարտքն է օգնել հայրենիքին, ժողովրդին: Մեռնել առանց օգնելու հայրենիքին – այդ կլինի ամենամեծ ցավը հայրենասերի համար: «Իմ ցավը» բանաստեղծության մեջ Դուրյանը գրում էր.*

Հեք մարդկության մեկ ոստը գոս՝
Հայրենիք մը ունիմ թշվառ.
Չօգնած անոր մեռնի՛լ անճշան.
Օ՛հ, ա՛յս է սոսկ ցավ ինձ համար[2]:

*Ազգային-ազատագրական գաղափարների տարածման գործում զգալի դեր են խաղացել Ղազարոս Աղայանն ու Հակոբ Պարոնյանը: Ղ. Աղայանը իր ստեղծագործություններում արտահայտեց ժողովրդական խավերի իղձերն ու ցանկությունները, անտարբեր չմնաց թուրքական բռնակալության տակ հեծող հայ ժողովրդի նկատմամբ: Նա բազմիցս անդրադարձել է այդ հարցին և միշտ նշել, որ Թուրքիայի լծի տակ ապրող հայերի վիճակն ավելի վատ է, քան ստրուկների դրությունը: Արևմտահայ ժողովուրդը, ասում էր Աղայանը, «ոչ թե ստրուկ, այլ գերի է»[3]:*

*Աղայանը ծաղրում էր բոլոր լիբերալներին և մասնավորապես նրանց, ովքեր «ձգտում ունեին Տաճկահայաստանում լուսավորություն տարածելու» և այդ միջոցով բարվոքելու ժողովրդի դրությունը: Նա կտրականապես մերժում էր այդ վարանոտ և վերացական քարոզները և առաջ էր քաշում ժողովրդական ապստամբության անհրաժեշտության հարցը: «Թո՛ղ ամեն ոք հարցնե ինքն իրան,– գրում էր Աղայանը,– թե հնարավո՞ր է արդյոք՝ դժոխքի մեջ եդեմական տունկեր բացնել, հնարավո՞ր է արդյոք բռնակալի մեջ գութ ու խնամք փնտրել ու գտնել, հնարավո՞ր է արդյոք, ստրկական վիճակի մեջ գտնել քաղաքակրթության և լուսավորության հետքն ու արդյունքը»[4]:*

1 Նույն տեղում, էջ 21:
2 *Պ. Դուրյան.* Տաղեր. Ե., 1954, էջ 51:
3 *Ղ. Աղայանց.* Մի երես մեր նորագոյն պատմութիւնից, Մ., 1891, էջ 2:
4 Նույն տեղում, էջ 3-4:

ժողովուրդը, ասում էր Աղայանը, կարիք ունի ոչ թե իմաստակների, այլ իսկական հերոսների ու հայրենասերների: «Քաջություն, խոհականություն, անձնանվիրություն – ահա այս հատկություններն ունեցող հերոսներն են, որոնց դյուցազանց կարգն է ձգում ժողովուրդը և պաշտում»[1]:

Աղայանի քարոզած ազգային-ազատագրական գաղափարները խարսխված էին ժողովուրդների համերաշխության սկզբունքի վրա: Դեմոկրատ գրողի համար օտար էր ամեն տեսակի ու գույնի ազգայնամոլությունը:

Օսմանյան բռնակալության սատիրական քննադատությունը աննախընթաց սրության հասավ Հ. Պարոնյանի հրապարակախոսության մեջ:

Պարոնյանը ծաղրում էր պոլսահայ սահմանադրականներին, որոնք փորձում էին մխիթարել ու «բախտավորեցնել» արևմտահայ ժողովրդին «Ազգային սահմանադրությամբ»: «Խեղճերն անդին կհարստահարվին, կհալածվին, մենք ասկից սահմանադրական հրահանգ կղրկենք անոնց...»[2]:

Առհասարակ, Պարոնյանը 1870-ական թթ. առավել ամբողջականորեն է արտահայտել արևմտահայ առաջավոր մտավորականության հիասթափությունը Ազգային սահմանադրությունից, ծաղրել է դրա քաղաքական բովանդակազրկությունը: Միաժամանակ, Պարոնյանը շարունակել և ավելի նպատակասլաց է դարձրել Ստ. Ոսկանով սկզբնավորվող քննադատական վերաբերմունքը ընդհանրապես օսմանյան ռեֆորմատորական շարժման և դրա գաղափարախոսության նկատմամբ: Այս տեսակետից երգիծաբանը հիմնավոր քննադատության է ենթարկել այսպես կոչված օսմանյան սահմանադրությունը (1876), ցույց տվել, որ իր ձևական բնույթով այն կոչված է պահպանելու և ոչ թե սահմանափակելու թուրքական բռնապետությունը, մոլորության մեջ գցելու միջազգային հասարակական կարծիքը: Օսմանյան սահմանադրության, դրա հետամնաց քաղաքական խաղի մերկացման ուժով Պարոնյանի հետ կարող են համեմատվել միայն Րաֆֆին և Գր. Արծրունին:

Տաղանդավոր երգիծաբանը ծաղրում էր «ազգային լալկաններին» և ասում, որ հարկավոր է ոչ թե լալ, արտասուք թափել, այլ զենքի դիմել, արյուն թափել: «Թերություններու վրա լալն թերություններու մեծագույնն է. խեղճության վրա արտասուք թափելն ապացուցանել է, թե արյուն չունինք թափելու: Արտասուքը մանուկներու և կիներու (մեծ մանուկներու) բաժինն է. կաղաչեմ, մի դպիք ատոնց բաժինին»[3]:

---

1 Ղ. Աղայան. Երկեր, հ. Գ. Ե., 1940, էջ 262:

2 Հ. Պարոնյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 11, էջ 37:

3 Նույն տեղում, հ. 4, Ե., 1935, էջ 41:



Պարոնյանը խիստ հանդիմանում է նրանց, ովքեր փոխանակ պայքարելու, «ձեռվընին կապած» նստել, խնդրագրեր-թաքրիրներ են գրում և լաց լինում: «Ի՞նչ օգուտ կընե ամեն օր թաքրիր գրել, երբ դուք ձեր վիճակն բարվոքելու միջոցները չեք գործադրեր... ու միայն կուլաք...»[1]:

Արևմտահայ իրականության մեջ 1860-ական թթ. բավական եռանդուն կերպով ազգային-ազատագրական գաղափարներ էր տարածում բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանը: Նա այն միտքն էր քարոզում, թե հարկավոր է հայրենիքն ազատել օտարի լծից և դրա համար պետք է մարտի, պայքարի ելնել: Իր «Երգը» բանաստեղծության մեջ նա գրում էր.

Մնացե՛ս բարեաւ, սէ՛ր իմ սէր,
Հրաւէր մարտից որոտաց.
Թէ չեմ քաջաց ես ընկեր,
Չըկայ՛ բաժին ինձ փառաց:
Մի՛ լար, հոգւոյս իմ հատո՛ր,
Գուցէ դառնամ, ո՛հ, մի՛ լար.
Թ՚ա՛նկայց մարտին ես ի գոռ,
Տեսցուք յերկինս մեք զիրեար:
Եղբայրադաւ չէ նախանձ,
Որ բորբոքյալ յիս վառի.
Ի սուրբ հողոյ Հայրենեաց
Բառնամ ըզլուծ օտարի[2]:

Պեշիկթաշլյանը, ինչպես հայտնի է, ողջունեց զեյթունցիների 1862 թ. ապստամբությունը: Իր «Զեյթունի երգերում» նա հերոսների շարքը դասեց սուլթանական Թուրքիայի դեմ զենք բարձրացրած զեյթունցի քաջերին: Պեշիկթաշլյանի պատկերացումով քաջը նա է, ով չի ցանկանում ո՛չ բնության գեղեցկություն, ո՛չ մոր քաղցր սեր, սիրուհու անուշ գգվանք, այլ «վառոդ և գնդակներ»[3] թշնամու դեմ կռվելու համար: Իր զեյթունյան շարքով Մ. Պեշիկթաշլյանը խոր հետք թողեց հայ քաղաքական քնարերգության հետագա զարգացման վրա: Մասնավորապես զգալի է նրա ազդեցությունը Ա. Հայկունու (Ծիզմեճյան) նույն բովանդակությամբ գրած բանաստեղծություններում[4]:

---

1 Նույն տեղում, հ. 3, էջ 36:

2 *Մ. Պէշիկթաշլեան* Քերթուածներն ու ճառերը. Փարիզ, 1904, էջ 120:

3 Նույն տեղում, էջ 121:

4 Տե՛ս «Մաղիկ», 1862, N 30, էջ 255, N 33, էջ 280, N 41, էջ 343-344:

Ազգային-ազատագրական գաղափարներ Պեշիկթաշլյանը քարոզել է նաև զանազան ճառերում ու հոդվածներում: Բնորոշ է, օրինակ, որ Համազգյաց ընկերության մասին արտասանած իր ճառում նա ասում էր, թե իսկական հայրենասերը նա է, ով զենքը ձեռքին թշնամու դեմ կգնա և «...ինքզինքը կամաւոր զոհ կը մատուցանէ Հայրենեաց ազատութեանը համար»[1]: Իր մի այլ ճառում, որ նա արտասանել է Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, բանաստեղծը այն միտքն էր զարգացնում, թե ժողովուրդներն ու ազգերն առաջադիմում, իրենց պատմությունը կերտում են երբեմն խաղաղ զարգացման ճանապարհով և երբեմն էլ «...կրակով արյունանիշ ճամփա մը բանալով», «...բռնութիւնը շանթահարելով»: Պեշիկթաշլյանը հաճախ հիշում էր հայ ժողովրդի պատմական անցյալը, երբ դյուցազուններն արիության գործեր էին կատարում և պատրաստ էին արյուն թափելու «...ամենասուրբ իրավունքի մը համար...»[2]: Հայրենասիրական, ազգային-ազատագրական գաղափարներով են տոգորված բանաստեղծի նաև ողբերգությունները:

3

Հայ ազգային-ազատագրական գաղափարների տարածման գործում խոշոր դեր խաղացին բանաստեղծ Ռափայել Պատկանյանը, Րաֆֆին, Գրիգոր Արծրունին: Նրանք տարիներ շարունակ մարտական կոչեր են արել արևմտահայ ժողովուրդը թուրքական բռնակալության ծանր լծից ազատագրելու համար:

Ռափայել Պատկանյանն իր գրական գործունեության առաջին իսկ տարիներից սկսած հանդես եկավ որպես հայրենասիրական, ազգային-ազատագրական գաղափարների ջատագով: Նրա գրական առաջին ստեղծագործությունը՝ «Զարմայր նահապետի մահը», որ գրված է 1850 թ., համակված է հայրենասիրական-ազատագրական գաղափարներով: 1853 թ. գրած իր «Ուսանող» բանաստեղծության մեջ Պատկանյանն անվերապահ կերպով հայտարարում էր.

Ով չի երդվել ընկերաց՝
Պաշտպան լինել հայրենյաց,
Վերջին արյունը թափել,
Հայրենիքը ազատել:
Մեզնից էնպեսն հեռանա՛,
Լույս աշխարհից վերանա.

1 Մ. Պէշիկթաշլեանի Քերթուածներն ու ճառերը, էջ 113:
2 Նույն տեղում, էջ 159:



Թող անասնոց կարգն ընկնի,
Թող մեր մեջ նա չի մըտնի[1]:

Իր ընկերներից մեկին՝ Գևորգ Քանանյանին 1855 թ. գրած նամակում Պատկանյանն ասում էր, թե իր նպատակն է բարձրացնել ժողովրդի հայրենասիրական ոգին և ազատագրական պայքարի մղել նրան:

Պատկանյանը 1855–1857 թթ. «Գամառ-Քաթիպա» ժողովածուներում հրատարակեց մի շարք հայրենասիրական ոտանավորներ, որոնց թվում հռչակավոր «Արաքսի արտասուքը»:

1860 թ. լույս տեսավ Պատկանյանի «Օրորք Հայաստանի» բանաստեղծությունը, ուր նա կծու խոսքերով և հեգնանքով ծաղրում ու դատապարտում էր բոլոր նրանց, ովքեր դեմ էին Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարին: Հաջորդ տարիներին հրապարակվեցին հայրենասիրական, ազգային-ազատագրական մտքերը քարոզող նրա մի շարք այլ գործեր:

Ազատագրական գաղափարներով են ներշնչված նաև Պատկանյանի հրապարակախոսական հոդվածները: Բանաստեղծի «Հյուսիս» պարբերականում տպագրվեցին մի շարք նյութեր Զեյթունի վերաբերյալ: Պատկանյանը հմայված ու ոգևորված էր Տավրոսի լեռնականների արիությամբ, հայրենասիրությամբ և ազատասիրությամբ: «Զեյթունի հայը,- ասում էր նա,– իսկական հայրենասեր հայի տիպարը պետք է լինի»[2]: Զեյթունցիների 1862 թ. հերոսամարտի մասին նա խոսում էր մեծ ջերմությամբ և ակնածանքով: Նույն «Հյուսիսում» Պատկանյանը հաճախ անդրադառնում էր Ջուզեպպե Գարիբալդիին, նրան համարելով իսկական հայրենասերի օրինակ: «Գարիբալդին ճշմարիտ ռիցար էր»,- հայտարարում էր նա[3]:

Պատկանյանը ձգտում էր ցույց տալ, որ պետք է ազատագրել արևմտահայ ժողովրդին թուրքական զավթիչների տիրապետությունից, որ անհրաժեշտ է վերականգնել հայկական պետականությունը: Այս հիմնական միտքը կարմիր թելի պես անցնում է նրա գրեթե բոլոր ստեղծագործություններում: Սակայն ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով պետք է իրականություն դարձնել այդ արդարացի գաղափարը: Պատկանյանն այս հարցին պատասխանում էր՝ զենքի միջոցով, ապստամբությամբ:

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և նրա հետ կապված ակնկալությունները նոր ոգևորություն պատճառեցին բանաստեղծին: Պատ-

1 Ռ. Պատկանեանի Ընտիր երկասիրութիւնները, խմբագրութեամբ Գր. Խալաթեանի, հ. 1. Պետերբուրգ, 1893, էջ 15:
2 «Հիւսիս», 1863, N 1, էջ 2:
3 Նույն տեղում, 1862, N 6, էջ 45:

կանյանը հրապարակ բերեց մեծ թվով բանաստեղծություններ, որոնք ավելի անվերապահ ու վճռականորեն էին քարոզում հայ ժողովրդի ազգային ազատագրության գաղափարը: Նրա համոզմունքով, ռուս-թուրքական պատերազմը կործանելու է սուլթանական բռնապետությունը և ազատագրելու է նրա լծի տակ հեծող ժողովուրդներին: Հավատը դեպի այդ ելքը մեծ էր և բանաստեղծը կարծում էր, որ չպետք է հապաղել, որովհետև, որքան շուտ ոտքի ելնել, այնքան էլ շուտ կարելի է ազատություն ձեռք բերել: Այս մտայնությունն էր արտահայտում Պատկանյանը պատերազմի առաջին ամիսներին գրած իր մի շարք բանաստեղծությունների մեջ: Այսպես, «Վանեցի մոր երգը» ոտանավորի մեջ Պատկանյանն ասում էր.

Չար սուլթանի ոսկի թախտը ջարդվեցավ, վար ինկավ,
Թախտի տակեն հազար ազգաց ազատություն ծագեցավ.
Ով որ շուտով ոտքի ելլե, ազատություն կը գտնե...[1]:

Իր մյուս բանաստեղծություններում Պատկանյանը նորից կոչ էր անում ապստամբել, զենքի դիմել: «Վանեցոց աղոթքը» ոտանավորի մեջ նա գրում էր.

Ապա՝ թշվառ եղբայր Հայեր,
Ձեռքերս առնունք մեկ մեկ սուսեր,
Դրոշակ բանանք, փչենք փողեր...[2]:

Նույնպիսի մարտական ոգով է գրված Պատկանյանի «Վանեցի գեղջուկի տաղը» բանաստեղծությունը:

Ինչպես հայտնի է, ռուս-թուրքական պատերազմին հաջորդող տարիները հիասթափության մի նոր ալիք առաջ բերեցին հայ իրականության մեջ: Այն հանգամանքը, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ունեցավ անհաջող ելք, իսկ դրա 16-րդ հոդվածի փոխարեն ընդունվեց Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը, զգալի չափով խախտվեց հավատը արևմտահայերի ազատագրության նկատմամբ: Ոմանք, որ մեծ ոգևորություն ապրեցին պատերազմի տարիներին, այժմ՝ պատերազմից և մասնավորապես Բեռլինի վեհաժողովից հետո, ընկան հիասթափության մեջ և բարվոք համարեցին լռել ու հարմարվել ստեղծված իրադրությանը: Բայց հուսախաբության ու հիասթափության այդ տարիներին անգամ Պատկանյանը հանդես եկավ նրանց դեմ, ովքեր այլևս չէին հավատում հայ ժողովրդի ազատագրության գործին ու վհատվելով հետ էին կանգնում քաղաքական պայքարից: Պատկանյանը կարծում էր, որ հայ ժողովուրդը պետք է ոչ

1 *Ռ. Պատկանեանի* Ընտիր երկասիրութիւնները, հ. 1, էջ 144:
2 Նույն տեղում, էջ 140:



թե հուսալքվի, այլ, ընդհակառակը, զենք վերցնի, արյուն թափի և արյան գնով ազատություն ձեռք բերի: 1881 թ. գրած «Ամպամած Մասիս» բանաստեղծության մեջ Մասիս սարի բերանով նա կոչ էր անում.

Ու դո՛ւ, ազգ Հայոց, քեզ պետք է սովրել
Մի անգամ թափել արյուն հորդառատ,
Քանց կյանք ըստրուկի հավիտյան տանել,
Քանց արյուն վոթել ամեն օր կաթ կաթ[1]:

Իհարկե պատահական չէր, որ 1880-ական թթ. վերջերին Պատկանյանը կապեր է ունեցել արմենականների կուսակցության հետ: Բանաստեղծի արխիվում պահվող նյութերից երևում է, որ արմենականների առաջին ծրագիրը (այսպես կոչված «Վարդապետարանը») կազմել է հենց ինքը՝ Պատկանյանը[2]:

Պատկանյանը որոշ ժամանակ ուներ այն տեսակետը, թե «մեծ պետությունները» կօգնեն արևմտահայերի ազատագրության գործին: Այդ հավատով էլ նա դիմում ուղարկեց Գլադստոնին[3]: Սակայն շուտով եկավ այն եզրակացության, թե այդ բոլորը պատրանք ու սին հույսեր են, և որ առնվազն միամտություն է Եվրոպայից օգնություն սպասել: Պատկանյանն ըմբռնեց «քաղաքակիրթ» պետությունների խարդախ քաղաքականության էությունը փոքրաթիվ ազգությունների նկատմամբ: Իր բողոքն ու ցասումը դեպի եվրոպական պետությունները նա արտահայտեց ինչպես մի շարք նամակներում և հոդվածներում, այնպես էլ բանաստեղծություններում, որոնցից առանձնապես հիշատակելի են «Բողոք առ Եվրոպան», և «Վեհաժողովը»:

Ազգային-ազատագրական շարժման գաղափարների տարածման գործում խոշոր դեր խաղաց Րաֆֆին: Մեծ վիպասանը ուներ ազգային շարժման իր «փիլիսոփայությունը»: Ազատությունը, ասում էր նա, մարդու և ամեն մի կենդանի օրգանիզմի զարգացման անհրաժեշտ նախապայմանն է, մարդու գլխավոր հատկանիշներից մեկը: Եթե մարդը տանում է տիրապետողի լուծը, ապա այդ անում է միայն ակամայից: Ազատությունը նրան հասցնում է կատարելության, իսկ ճնշումները նրան դարձնում են ծույլ և բթամիտ: «Ազատությունը մարդու ընդաբույս բնազդումներից մեկն է. նա ստեղծված և ծնված է մարդու հետ... բնության մեջ ամեն մի առարկա, որոնց մեջ կա կյանքի և աճելության զորություն, պահանջում են ազատ լինել, ազատ զարգանալ: Եվ եթե մարդը տանում է ստրկություն, դա ա-

1 Նույն տեղում, էջ 203:
2 ԳԱԹ, ֆ. Ռ. Պատկանյանի, փ. 198:
3 Նույն տեղում, փ. 303:

կամա է. հեռացրու նրանից ճնշող ուժը, կտեսնես նա ազատ էակ է... Ազատությունը... հասարակական կյանքի մթնոլորտն է, որի մեջ զարգանում է նա, կատարելագործվում է և հասնում է իր մարդկային բարձր նշանակությանը: Որքան ճնշված, որքան սահմանափակված լինի այս մթնոլորտը, այնքան մարդը անզոր, ծույլ և բթամիտ կմնա: Ազատությունը մարդը սովորում է ազատության մեջ»[1]:

Օտարի լծի տակ գտնվող ամեն մի ժողովրդի նվիրական գործն է թոթափել իր վրա ծանրացած լուծը և ձեռք բերել ազատություն: Սակայն ինչպե՞ս: Եթե ժողովուրդը հասկանում է իր իրավունքները, գիտակցում իր դրության ծանրությունը և ի վիճակի է պայքարելու բռնակալների դեմ, ապա նա պետք է ոտքի կանգնի և առանց հապաղելու արյունով նվաճի իր ազատությունը: Իսկ եթե ժողովրդական լայն խավերը գտնվում են մտավոր ցածր աստիճանի վրա, չունեն ազատության գիտակցություն և ի վիճակի չեն առանց օգնության ոտքի կանգնել ու ապստամբել, ապա նրանց պետք է օգնության գան հասարակության ավելի գիտակից խավերը և նրանց ներկայացուցիչները: «Երբ մի ժողովուրդ այնքան զարգացած է, որ հասկանում է յուր իրավունքները, և հասկանում է, որ ինքը բռնաբարվում է, և միևնույն ժամանակ այնքան պատրաստված է, որ կարող է ընդդիմադրել բռնակալի կամայականությանը, ժողովուրդն ինքն է բողոք բարձրացնում թե՛ զենքով և թե՛ խոսքով: Այդ լինում է հեղափոխական ցույցերով, և դրան ասում ենք, թե ազատության զգացմունքն արմատից է ծագում, ամբոխի սրտից է բխում – ցածից դեպի վեր է բարձրանում:

Իսկ երբ ժողովուրդը զարգացած չէ և գտնվում է մի այնպիսի հիվանդոտ դրության մեջ, որ միայն զգում է յուր ցավերը, բայց դարման անելու շնորհ չունի, այն ժամանակ նրան յուր թշվառ վիճակից ազատելու հոգսը վերևից դեպի ցած է իջնում: Դա հայտնվում է բարձր կենտրոններում, մայրաքաղաքներում, ուր գտնվում են ժողովրդի ավելի զարգացած և գործունյա դասերը: Ամբոխը ենթարկվում է այդ դասերին և կրավորական դեր է խաղում:

Առաջին միջոցը արմատական է, իսկ վերջինը՝ ներգործական»[2]:

Մասնավորելով իր խոսքը սուլթանական բռնակալության տակ հեծող արևմտահայ ժողովրդի մասին, Րաֆֆին ասում էր, թե նա պետք է իր ազատությանը հասնի երկրորդ ճանապարհով, քանի որ արևմտահայ ժողովուրդը գտնվում է մտավոր և կուլտուրական ցածր մակարդակի վրա

1 Րաֆֆի. Կայծեր. հ. 1, Թիֆլիս, 1883, էջ 463-464:
2 Րաֆֆի. Տաճկահայք, էջ 8 (ընդգծումները հեղինակինն են):



և չի կարող անհապաղ ոտքի կանգնել ու ապստամբել: Հայ ժողովուրդը կարիք ունի մի հզոր ուժի օգնության: «Կայծերի» հերոսներից մեկը՝ Ասլանը, խոսելով արևմտահայերի մասին, ասում էր. «Այս մարդիկն առանց զգացմունքի, առանց եռանդի չեն. նրանք հասկանում են իրանց դրության բոլոր այլանդակությունը, բայց դարեվոր հարստահարությունների տակ ճնշվելով, մինչ այն աստիճան հոգով և մարմնով թուլացած են, որ շատ բնական են գտնում իրանց վիճակի բոլոր դառնությունները... Մի ձեռք, մի զորեղ ձեռք պետք է, որ դրանց վեր բարձրացնե ընկած դրությունից և կանգնեցնե մարդկային ազատ իրավունքների վրա»[1]:

Սակայն ո՞րը պետք է լինի այդ զորեղ ձեռքը, ովքե՞ր պետք է բարձրացնեն մասսաներին իրենց այդ անմխիթար վիճակից և առաջնորդեն նրանց: Րաֆֆին գտնում էր, որ այդ անհրաժեշտ ուժը չի կարող լինել ո՛չ հայ վաճառականների և ո՛չ էլ հայ հոգևորականների դասը: Վաճառականներին օտար է հայրենիքի և ազատության գաղափարը: Ժամանակի հայ հոգևորականությունը ևս անտարբեր է հայ ժողովրդի վիճակի նկատմամբ: Անդրադառնալով այս հարցին, Ասլանն իր զրուցակից Ֆահրատին ասում է. «Մենք ազնվապետական դաս չունենք, մենք ունենք վաճառականներ և եկեղեցականներ: Վաճառականները, այլ խոսքով դրամատերերը, դուք գիտեք, ինչ տեսակ հրեշներ են. մնում են եկեղեցականները... Եկեղեցականը, որ ազգի մեջ և լիներ նա, միշտ ընդդեմ է մարդկային անհատական ազատության: Եկեղեցականը միշտ ընդդեմ է ազգայնության գաղափարին. նա ճանաչում է ազգը միայն կրոնքի անունով... Եկեղեցականը միշտ ընդդեմ է աշխարհային բարեկեցությանը. նա չէ կարող համբերել, որ մարդը ճանաչեր իր հայրենիքը, այսինքն երկրի այս կամ այն կտորի վրա հիմներ իր կյանքի և ապրուստի գոյությունը: Եկեղեցականը հերքում է ներկա աշխարհը. նրա հայրենիքը երկինքն է»[2]:

Բացասական որակումներ տալով հայ վաճառականներին ու հոգևորականներին, Րաֆֆին, սակայն, գտնում էր, որ կա մի ուժ, որը կարող է օգնել ժողովրդին և նրան ազատության ու անկախության հասցնել: Այդ ուժը երիտասարդությունն է, ընդ որում ոչ հասարակ, այլ կրթված, մտավորական երիտասարդությունը: Նույն Ասլանը համոզված կերպով ասում էր. «Մեզ պակաս է հասարակական գլխավոր զորությունը, այն է թարմ և նորահաս երիտասարդությունը. դրանք կարող էին դպրոցների

1 Րաֆֆի. Կայծեր, հ. 1, էջ 457-458:
2 Նույն տեղում, էջ 458-459:

*գրականության և լրագրության միջոցով զարթեցնել և նախապատրաստել ժողովրդին»*[1]:

*Րաֆֆին կարծում էր, որ երիտասարդությունը, որպես հասարակության գաղափարական խավը, կարող կլինի ոտքի կանգնեցնել ժողովրդին և առաջնորդելով նրան, ապստամբական շարժման միջոցով ձեռք բերել ազատություն և ազգային անկախություն: Զարգացնելով իր այս տեսակետը, նա գալիս էր այն եզրակացության, որ մեծ է լինելու անհատների դերը հայ ազգային-ազատագրական շարժման մեջ, անհատներ, որոնք պետք է իրենց հեղափոխական գաղափարները դարձնեն մասսաների սեփականություն ու ժողովրդին պատրաստեն քաղաքական-ազատագրական պայքարի համար: Ազատագրական պայքարի գաղափարները ուժ և նշանակություն ունեն միայն այն ժամանակ, երբ դրանք լայնորեն կտարածվեն ժողովրդական զանգվածների մեջ: «Խենթի» հերոսներից մեկը՝ Միքայել Դուդուկչյանն ասում էր. «Երբ որ և իցե ժողովրդական շարժման գաղափարը մի քանի անհատների երևակայության ցնորք է միայն, և տակավին չէ ընդհանրացել, չէ տարրացել ամբոխի գոնե մի մասի մեջ, մի հարվածով կարելի է ոչնչացնել բոլորը, երբ առաջնորդող անձինքը ոչնչացրած կլինեն: Բայց ամբոխը ուրիշ բան է. ամբոխի մեջ միտքը սպանել անհնարին է»*[2]:

*Ինչպե՞ս պիտի աշխատի, գործունեության ի՞նչ ռազմավարություն պետք է ունենա երիտասարդությունը: Րաֆֆին գտնում էր, որ հայ երիտասարդի սրբազան պարտականությունն է գնալ ժողովրդի մեջ, շփվել նրա հետ, լուսավորել, ազգային ինքնագիտակցության բերել նրան: Երիտասարդները պետք է ժողովրդի համար դպրոցներ բացեն, ուսում, կրթություն տարածեն: Սակայն այդ բոլորը չպետք է ինքնանպատակ լինի, այլ պետք է դիտվի որպես մի միջոց հայ ժողովրդին քաղաքական, ապստամբական պայքարի հանելու համար: Լուսավորական գործունեությունը պետք է ծառայի ազգային-ազատագրական շարժումները հաջողությամբ վարելու գործին: Կրթված, գիտակից մասսան միայն կարող է հաղթանակ տանել բռնապետության դեմ, և ապահովել իր ազատությունն ու անկախությունը: Այս տեսակետից բնորոշ են այն տողերը, որ գրել է նա արիության մասին: Իսկական քաջության համար պետք է գիտակից լինել, որևէ գիտակցված իդեալ ունենալ: Վայրենի ցեղերը այն քաջությունը չունեն, ինչ որ հասկացվում է այդ բառի բուն նշանակությամբ:*

1 Նույն տեղում, էջ 465:

2 *Րաֆֆի.* Խենթը. Մ., 1890, էջ 305:



*«Իսկապես քաջ լինելու համար պետք է գիտակցաբար ոգևորված լինել որևիցե գաղափարով»*[1]:

*Կրթված երիտասարդությունը պետք է ժողովրդին նախապատրաստի ազգային-ազատագրական պայքարի: Սակայն այդ նախապատրաստությունը չպիտի երկար տևի, չպետք է ձեռքերը ծալել և սպասել՝ մինչև որ ամբողջ ժողովուրդը կրթություն, ուսում ստանա. ոչ, ասում էր Րաֆֆին, հայ մտավորական երիտասարդությունը ի վիճակի է կարճ ժամանակամիջոցում ժողովրդի հիմնական մասը ազգային ինքնագիտակցության բերել: Նրա կարծիքով, 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին ստեղծվել են այնպիսի բարենպաստ պայմաններ, որոնք հնարավորություն են տալիս ապստամբական շարժում սկսել: Այս տեսակետից բնորոշ է «Ջալալեդդինի» դրական հերոսներից մեկի գործունեության էվոլյուցիան: Այդ հերոսը Կ. Պոլսից Վանի գավառ էր գնացել ժողովրդի մեջ կրթություն տարածելու նպատակով: Սակայն 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ նա թողնում է իր խաղաղ լուսավորական աշխատանքը և զենքի դիմում*[2]:

*Րաֆֆին 1870-ական թթ. գրած իր գրեթե բոլոր գործերում այն միտքն է զարգացնում, թե արևմտահայ ժողովուրդը անհրաժեշտորեն, վաղ թե ուշ, պետք է դիմի ապստամբական շարժման և որ զինված պայքարի միջոցով միայն հնարավոր է ազատություն և անկախություն ստանալ:*

*«Առանց արյունի, առանց զոհերի՝ փրկություն չի լինում», գրում է վիպասանը: Չպետք է հույսը դնել Եվրոպայի վրա: «...Ոչ թե Եվրոպան, այլ Աստված ինքը չի օգնի Թուրքիայի հայերին, եթե նրանք ինքները իրանց օգնելու մեջ ծույլ կլինին...»*[3]*: Րաֆֆին կոչ էր անում դիմելու սեփական նախաձեռնության և ակտիվ գործունեության: Նա մատնացույց էր անում Բալկանյան թերակղզում ծավալված ազատագրական շարժումները և պնդում էր, որ արևմտահայերը պետք է հետևեն բուլղար և մյուս ժողովուրդների օրինակին, ազատագրական շարժման արմատական միջոցին:*

*Արևմտահայերին թուրքական տիրապետությունից ազատագրելու հարցում Րաֆֆին մեծ հույսեր էր կապում Ռուսաստանի հետ: Իր մի շարք երկերում ջերմորեն և ոգևորությամբ նկարագրելով ռուսական զորքի արիությունը և մարդասիրությունը, գտնում էր, որ ռուսական զորքերի օգնությունը վճռական դեր պիտի խաղա արևմտահայերի ազատա-*

1 *Րաֆֆի.* Տաճկահայք, էջ 50:

2 *Րաֆֆի.* Ջալալեդդին. Մ., 1884, էջ 53:

3 *Րաֆֆի.* Տաճկահայք, էջ 73:

գրության գործում: Նա, միաժամանակ, նշում էր, որ արևելահայերը, գտնվելով անհամեմատ բարենպաստ պայմաններում, պետք է ամեն կերպ օգնեն իրենց արևմտահայ եղբայրներին՝ ազատագրվելու սուլթանական դաժան տիրապետությունից[1]:

Գրողը որոշ ակնկալություններ ուներ արևմտյան պետություններից: Սակայն նա, ընդհանուր առմամբ, ըմբռնում էր նրանց քաղաքականության խարդախ էությունը և եվրոպական «լուսավոր կոչված ազգերին» համարում էր անհագ վամպիրներ, որոնք «խորամանկ քաղաքականությամբ ծծում են յուրյանց զոհերի արյունը և կողոպտում նոցա ապրանքը»[2]:

Րաֆֆու ազատագրական գաղափարները ստացան լայն ժողովրդականություն: Նրա ազդեցությամբ երիտասարդ սերնդի բազմաթիվ ներկայացուցիչներ քաղաքական գործունեություն ծավալեցին Արևմտյան Հայաստանում: 1880–1890-ական թթ. դեպի «Երկիր» դիմող՝ ազատագրական մտայնությամբ տոգորված երիտասարդները ամենից առաջ ոգեշնչված էին մեծ վիպասանի և հրապարակախոսի ազատաշունչ գաղափարներով:

Ազգային-ազատագրական շարժման գաղափարների պրոպագանդի գործում մեծ դեր խաղաց նաև «Մշակ» թերթի խմբագիր, նշանավոր հրապարակախոս Գրիգոր Արծրունին: 1876 թ. Բոսնիայում և Հերցեգովինայում բռնկված հակաթուրքական շարժումների կապակցությամբ նա սկսեց քարոզել այն տեսակետը, թե արևմտահայերը ևս պետք է զենքի դիմեն: Այս իմաստով նա հրապարակեց բազմաթիվ հոդվածներ ու նյութեր: «Միթե այժմ հայերի հերթը չէ» առաջնորդողում, խոսելով բալկանյան ժողովուրդների ապստամբությունների մասին, հայրենասեր խմբագիրը գտնում էր, որ այժմ արևմտահայերի հերթն է, որ նրանք պետք է հետևեն թուրքական տիրապետության դեմ ոտքի ելած բալկանյան ժողովուրդների օրինակին[3]:

Այս մտքերը Արծրունին շարունակեց զարգացնել նաև հետագա տարիներին, մասնավորապես 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանում: «Մենք կարող ենք, այնուամենայնիվ, այն համոզմունքի մնալ, որ թուրքաց տերության պես վայրենի, բարբարոս տերութենից մարդկային իրավունքներ պահանջելու համար ուրիշ ճանապարհ չկա, եթե ոչ զենքը ձեռին արյուն թափելով»[4]: Մի այլ առիթով նա թերթի «Գոյության համար կռիվ» առաջնորդողում գրում էր, որ եթե արևմտահայերը

1 Նույն տեղում, էջ 7:
2 *Րաֆֆի*. Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1950, էջ XIX, XX:
3 «Մշակ», 1876, N 28:
4 Նույն տեղում, 1877, N 63:



չեն կամենում կորչել, անհետանալ, ջնջվել աշխարհի երեսից, պետք է անպայման զենքի դիմեն[1]: Արծրունին ջերմորեն ողջունեց զեյթունցիների 1878 թ. ապստամբությունը, մեծ գոհունակություն հայտնեց այն բանի համար, որ հայերը ևս ոտքի կանգնեցին: «XIX դարի քաղաքական բարոյականությունը այս է՝ «ես ապստամբվում եմ, ուրեմն ես կամ»,- ասում էր «Մշակի» խմբագիրը[2], յուրովի շրջասության ենթարկելով Դեկարտի հայտնի ասույթը:

Կողմնակից լինելով ապստամբական գործելակերպին, Արծրունին ամենայն խստությամբ հարձակվում էր նրանց վրա, ովքեր դեմ էին հայկական ազգային շարժմանը, քարոզում էին համբերություն և հույս դնում Բ. Դռան վրա: Բնորոշ է նրա վերաբերմունքը դեպի արևմտահայերի, այսպես կոչված, «Ազգային սահմանադրությունը»: Արծրունին համոզված էր, որ սուլթանի կողմից հաստատված այդ «սահմանադրությունը» մի օդային ամրոց է, որ կառուցված է «մեր տիրացու ազգայինների բթամիտ գլուխներում միայն»[3]: Արծրունին պնդում էր, որ դա չի կարող բուժել ժողովրդի վերքերը, չի կարող լուծել նրան հուզող հարցերը: «...սահմանադրությունն անզոր է պաշտպանել հայերին տերության կամայականության և բարբարոսության դեմ, անզոր է պաշտպանել թուրքիաբնակ հայի ամենաանհրաժեշտ, անբռնաբարելի մարդկային իրավունքը... հային կողոպտում են, հարստահարում են, չարչարում են, ծեծում են, անպատվում են.– ո՞ւր է սահմանադրությունը, որ պետք է պաշտպաներ նրան»[4]:

Արծրունին բացառում էր սահմանադրության կիրառման ամեն մի երաշխիք Թուրքիայում, որտեղ անբաժան գերիշխանություն ունի շարիաթը՝ մյուս կրոնների նկատմամբ և տիրող օսմանյան թուրքերը՝ մյուս ազգությունների նկատմամբ: Սահմանադրությունը նա գնահատում էր որպես մի իրավական փաստաթուղթ, որ հրապարակ էր նետվել ոչ թե սուլթանի բացարձակ բռնակալությունը սահմանափակելու, այլ նույն այդ բռնակալությանը սպառնացող ներքին և մանավանդ, արտաքին ուժերի վրա ընդամենը տպավորություն թողնելու, նրանց ապակողմնորոշելու համար: «Հին և նոր թուրքերը», «Միդհատ փաշա և մոնղոլական քաղաքակրթությունը» և այլ հոդվածներում Գր. Արծրունին համոզիչ մերկացումներ է անում մասնավորապես այն հարցերում, որոնք վերաբերում են օսմանիզմի ազգայնամոլ թեզերին և կայսրության ոչ մահմեդական ժողո-

1 Նույն տեղում, 1878, N 82:
2 Նույն տեղում, N 165:
3 Նույն տեղում, 1876, N 45:
4 Նույն տեղում:

վուրդների նկատմամբ իրագործվող ձուլման քաղաքականությանն ու դրան համապատասխան գաղափարական ձևակերպումներին:

Արծրունին զայրույթ արտահայտեց Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի 1876 թ. շրջաբերականի նկատմամբ: Ինչպես հայտնի է, Ներսես պատրիարքը, տեղի տալով Կ. Պոլսի հայ վերնախավի որոշ շրջանների տրամադրություններին, իր այդ շրջաբերականով կոչ արեց արևմտահայերին հավատարիմ մնալ սուլթանական կառավարությանը*: Խոսելով այդ մասին, հրապարակախոսը գրում էր. «Մենք խոսքեր չենք գտնում մեր զարմանքը, մեր զայրացումը, մեր զզվանքը արտահայտելու համար»[1]: Ռուս-թուրքական 1877–1878 թթ. պատերազմի ժամանակ, սակայն, պատրիարքը փոխեց իր բարեհպատակի վերաբերմունքը կառավարության քաղաքականության հանդեպ և արևմտահայության ազատագրության հարցը կապում էր մերթ ռուսական զենքի հաջողությունների և մերթ եվրոպական միջամտության հետ:

«Մշակի» խմբագիրը նույն կերպով էր արտահայտվում արևմտահայերի գաղթի դեմ, այն համարելով մեծ դժբախտություն: Գաղթը կարող է սպառնալիք հանդիսանալ արևմտահայության հավաքական գոյության և նրա քաղաքական իդեալների իրականացման համար: Թերթը բազմիցս անդրադարձավ նաև այդ ցավոտ հարցին:

Խիստ քննադատելով արևմտյան պետությունների խարդախ քաղաքականությունը, Արծրունին գտնում էր, որ Արևմտյան Հայաստանի ազատագրությունը օսմանյան լծից և Հայկական հարցի լուծումն ընդհանրապես հնարավոր է Ռուսաստանի օգնությամբ: Արծրունու ծավալած գաղափարական պրոպագանդը հսկայական ազդեցություն թողեց ժամանակի հայրենասիրական շարժման վրա:

Ազատագրական պայքարի գաղափարների տարածման գործում այս կամ այն չափով մասնակցեցին նաև մի շարք այլ հրապարակախոսներ, գրողներ, հասարակական ու քաղաքական գործիչներ:

## 4

Սուլթանական բռնակալության դեմ ուղղված հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարների պրոպագանդի գործում զգալի դեր խաղացին նաև պարբերական մամուլի մի շարք օրգաններ: 1850–1860-ական թթ. այդ գաղափարների տարածման ուղղությամբ նշանակալից քայլեր կատարեց «Հյուսիսափայլ» հանդեսը, որի էջերում տպվում էին ոչ միայն լիբերալ լուսավորիչ Ստեփանոս Նազարյանի հոդվածները, այլև

1 Նույն տեղում, N 33:



հեղափոխական դեմոկրատ Միքայել Նալբանդյանի ազատագրական պայքարի կոչ անող մարտական բանաստեղծությունները: Ինչպես հայտնի է, այդտեղ հրապարակվեցին Նալբանդյանի «Մանկության օրեր», «Իտալացի աղջկա երգը» և «Ազատություն» բանաստեղծությունները, որոնք հսկայական ազդեցություն թողեցին երիտասարդ սերնդի վրա: Վերհիշենք երգի հետևյալ տողերը.

Ամենայն տեղ մահը մի է
Մարդ մի անգամ պիտ մեռնե.
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կզոհվի...

«Հյուսիսափայլում» տպագրվեցին նաև Սմբատ Շահազիզի, Գևորգ Բարխուդարյանի, Ռուբեն Հասան-Ջալալյանի և իր ժամանակի մի շարք այլ հայրենասերների ազատասիրական ստեղծագործությունները:

Հարություն Սվաճյանի հրապարակախոսական գործունեության կապակցությամբ մենք արդեն ծանոթացանք «Մեղու» շաբաթաթերթի ազատագրական գաղափարների հետ: Այժմ մի շարք այլ պարբերականների մասին:

«Արծվի Վասպուրական» հանդեսը, որը 1855–1856 թթ. լույս տեսավ Կ. Պոլսում, իսկ այնուհետև Վասպուրականի Վարագա վանքում, լուսաբանելով արևմտահայ գյուղացիության ծանր վիճակը, կոչ էր անում չհուսահատվել, չընկճվել, այլ համախմբվել, կազմակերպվել և զենքի միջոցով ազատագրվել բռնակալների տիրապետությունից: Ամսաթերթի էջերում հոդվածներ, բանաստեղծություններ և զանազան բնույթի նյութեր էին տպագրում Խրիմյանը, նրա աշակերտներ Գարեգին Սրվանձտյանցը, Արսեն Թոխմախյանը, Մ. Իսկանդարյանը և Խրիմյանի ջանքերով 1857 թ. Վարագա վանքում հիմնված «Ժառանգավորաց» դպրոցի մի շարք այլ սաներ:

Բավական է լացել, պետք է գործել, պահանջում էր Իսկանդարյանը:

Հայ զաւակունք, հայոց մանկունք,
Եւ դուք, ազնիւ հայոց կուսանք,
Մինչև ե՞րբ մեք
Ո՛վ, բաւ է լանք
Տխուր մնամք
Ո՛չ, ոչ գընամք
Քաջ ընթանամք[1]:

1 «Արծուի Վասպուրական», 1862–1863, N 2, էջ 62:

*Խրիմյանի տաղանդավոր աշակերտներից մեկը՝ Գ. Սրվանձտյանցը, գրում էր. «Զի լանք, եղբայրներ, ափսոս են մեր աչքեր. թող լան հին գլուխներ, խավարին աչքերը: Էն դեհ մի կռիվ կա. կլսե՞ք նախանձավոր, ահավոր ձայներ, ձայն Արևմուտքից, ձայն Հյուսիսից, ձայն և ամեն կողմից, մի, մի սարսափինք, նոքա մեզ քաջություն թող տան. կուգան դեպի մե՞զ, մեք հավ չենք. մեք էլ մարդ և մարդու զավակ ենք. Հայ և հայու ժառանգ ենք: Քաջություն նորության, հաղթություն նորության: Եվ մեք նոր սերունդներ եմք. ուրեմն մեր պարտք ու կարգ ճանաչեմք, մեր Աստված կանչեմք, որ կենանք, շարժինք ու սկսենք մեր գործը, նորեն սկսենք... բանանք մեր աչքերը, բանանք մեր կուրծքերը, միշտ դիմենք հառաջ, միշտ արի և քաջ, գործենք անվեհեր ու անձնանվեր, գործենք անդադար, թե տիվ, թե գիշեր»[1]:*

*Հոդվածի վերջում Սրվանձտյանցը դիմում էր հայ հայրենասեր երիտասարդությանը, կոչ անելով նրան ընթանալ նահատակության շավղով: Սրվանձտյանցը բացատրում էր, որ ազատություն ձեռք բերելու միակ ճանապարհը դա է և որ ուրիշ ելք չկա: Միայն, ավելացնում էր նա, պետք է այդ ճանապարհով գնալ արի, բայց զգույշ:*

*«Այլ և դու կորովիդ իմ, դու, Հայկական երիտասարդություն, ընդ օդս ի վեր կխոյանաս սլանաս. թևերուդ վրա ազատականություն բևեռած, նահատակության շավղով, ճշմարտության ճանապարհով. իրավ ճանապարհը դա է, և դու սուրբ ես քո նպատակով, բայց մեկ կողմից խառնակ է օդ, մրրկոտ է երկինք, և մյուս կողմից չվան և լարը ձգած են որոգայթ ոտիցդ: Ի՞նչ ուրեմն, դադամիտ կամեի ասել քեզ, ով ով, դու ընթացիր, բայց ծանր, ծանր, ինչպես արի, նույնպես զգույշ»[2]:*

*«Արծվի Վասպուրականի» համարներից մեկում զետեղված է «Հայրենասեր և փառասեր» վերնագիր կրող մի երկխոսություն, որում պարզ երևում են խմբագրության հայացքները: Փառասերը, որի համար միանգամայն անընդունելի են քաղաքական-ազատագրական պայքարը, ապստամբական շարժումը, դիմելով հայրենասերին, կշտամբանքով հարցնում է.*

*«Ձեր հայրենասեր համարված իսկ Վարդան չէ՞ր, որ իր ուժեն գործի ձեռք զարնելով, հայոց անմեղ և անհամար երիտասարդներու արյունով ներկել տվավ Արտազու դաշտը ու բոլոր Հայաստան աշխարհը գերել և եկեղեցիք այրել տալու պատճառ եղավ»[3]:*

1 Նույն տեղում, N 1, էջ 10-11:
2 Նույն տեղում, էջ 16-17:
3 Նույն տեղում: N 2, էջ 49:



*Հայրենասերը, որ լիովին համոզված է իր տեսակետի մեջ, փառասերի հարցին պատասխանում է.*

*«Վարդանա տանջված անտանելի դժոխք ինձ համար ընտրելի է քան Վասակա հանգիստ արքայությունը: Զեմ ընդունիր Հազկերտի շնորհած փառք, պատիվ ու պարգևները, այլ կսիրեմ Վարդանի նահատակող սուրը: Եթե հայոց անմեղ ու անհամար երիտասարդաց արյունով չոռոգվեր Հայաստանի դաշտերը, ո՞ւր տեղեն պիտի բուսաներ Հայության ազնիվ բողբոջներ. մինչև ցարդ պիտի մնար արդյոք հայ անունը... Արդ, իմացա՞ր, որ նոցա մեռնելով բոլոր Հայկա զավակներս կենդանացանք. մեք հայրենիքով կենդանի եմք, հայրենիքը մեզմով: Հայրենիքով միայն մարդ եմք, ուրեմն հայրենյաց պարտք ունինք, աշխատենք, հայրենյաց համար տքնենք, հայրենյաց համար նաև մեռնինք»[1]:*

*Թերթը ծաղրում էր արևմտահայ սահմանադրականների պատրանքները: Դիմելով սահմանադրություն կազմելու նպատակով 1861 թ. ստեղծված վարչությանը. «Արծվի Վասպուրականը» գրում էր. «Ի՞նչ կկարծես, ով նորածին վարչություն, առանց վտանգի, առանց փորձանաց, առանց արտաքին և ընտանի թշնամյաց, առանց կռվո ասպարիսի՝ ազգային բարեկարգության մրցանակն առնելո՞ւ կհուսաս, մի հուսար: Ի՞նչ ազգ կամ թագավորություն կա աշխարհիս վերա, որն որ առանց ազգային հեղափոխության, առանց անձնանվեր նահատակության կամ ճգանց հառաջադիմության մրցանակն դյուրությամբ ստացած է»[2]:*

*«Արծվի Վասպուրականի» ավանդույթները շարունակեց «Արծվիկ Տարոնո» թերթը, որ լույս տեսավ 1863–1865 թթ. Մուշում՝ Գ. Սրվանձտյանցի խմբագրությամբ: Նա ծաղրում էր բոլոր նրանց, ովքեր դեմ էին ապստամբական շարժման և քարոզում էին հեզություն ու համբերություն: 1863 թ. մայիսի 1-ի համարում զետեղված «Մեր վիճակի վրա լանք, թե ծծղանք» հոդվածում դառն հեգնանքով էր խոսվում ստրկամիտ մարդու տրամաբանության մասին, տրամաբանություն, ըստ որի «Զարկին զմեզ, բան չկա, կանցնի ցավ: Վիրավորեցին, ոչինչ, օր մը կժրես: Տունեդ հալածեցին, գնա ուրիշ տեղ մը գտիր, բայց ինչպես, ան ալ դու գիտես: Հաց, ապրուստ ձեռքեդ խլեցին, ակռավի պես ապրիր: Ինչու կուլաս, եղբայրդ սպանեցին, Աստված հոգին լուսավորի, օր մը պիտի մեռներ: Վախենաս խեղճությունից, զավակներդ մեռնին, գլուխդ ողջ մնա, տեր ես, տեր չառ»[3]: Խրիմյանի գաղափարներով սնվող և նրա հովանավորությամբ գոր-*

1 Նույն տեղում, էջ 50-51:
2 Նույն տեղում, 1861, N 5, էջ 138:
3 «Արծուիկ Տարոնոյ», 1863, N 3:

*ծող Տարոնի «Արծվիկը» երկչոտ և պատվից զուրկ մարդու այդօրինակ դատողությանը հակադրում էր իր մարտական կոչը:*

Ելիր կանգնէ, բաղխէ քնար դիւցազանց,
Ելիր երգէուրախութեան քո երգեր.
Երգ ազգային, երգ հայրենեաց,
Դեռ Հայաստան չէ մեռած[1]:

*Մի այլ առիթով թերթը գրում էր, թե «մարդ պետք է առյուծ լինի գայլերեն չհաղթվելու համար»:*

*«Ծաղիկ» պարբերականը, որ լույս էր տեսնում Զմյուռնիայում Գրիգոր Չիլինկիրյանի խմբագրությամբ, հաճախ ազատագրական պայքարի կոչեր էր անում: 1861 թ. օգոստոսի 1-ին նա գրում էր. «Սթափելու ժամանակը ալ եկած է... կոտրեմք այն շղթաները, որոնք մինչև ցարդ զմեզ վատթարության մեջ կարգիլեին. ալ բավ է հայեր, աշխատելու ժամանակը հասած է.– արիացեք անգամ մը, բարձրացուցեք ճակատներնիդ»[2]: Թերթը զարգացնում էր այն տեսակետը, թե սրով պետք է լուծել հարցը. «Այնպիսի օրերու մեջ կապրինք դեռ, ուր մարդկային իրավունքը սուրին ծայրն է և թե հոն, ուր սուր չկա, իրավունքը առաթուր պիտի կոխվի»[3]: Ազատություն կարելի է ձեռք բերել այն ժամանակ, երբ կխորտակվի բռնապետությունը: Խոսելով Արևմտյան Հայաստանում տիրող դաժան ճնշումների ու հարստահարությունների մասին, հանդեսը գրում էր. «Ազատությունը պիտի փայլի ձեր վրա, երբ քաջասրտությամբ, հարատևությամբ և միաբանությամբ այս ամեն գերություններու անուրը պիտի խորտակեք»: «Ծաղիկի» խմբագիր Գր. Չիլինկիրյանը ընթերցողին ազատասիրական խորհրդածությունների էր մղում բռնապետության դեմ պայքարի անհրաժեշտության հիմնավորումով: Անհատի և ժողովուրդների վրա բռնության ծանրացումը նա համարում էր «բնական իրավունքի» բռնադատում, անբնական երևույթ, որը հակասում է առաջադիմության ու քաղաքակրթության զարգացմանը: Հիմնավորելով օսմանյան բռնակալության և առհասարակ ամեն մի բռնակալության դեմ ուղղված հեղափոխական զինված պայքարը, նա գրում էր. «Հեղափոխություն մը ոչ այլ ինչ է, բայց եթե արվեստականին դեպի իրական վերադարձը: Հեղափոխություն կըլլա, վասնզի պետք է որ ըլլա»[4]: Պատահական չէր,*

1 Նույն տեղում, 1864, N 1:
2 «Ծաղիկ», 1861, N 4, էջ 30-31:
3 Նույն տեղում, 1862, N 46, էջ 379:
4 Նույն տեղում, 1865, N 104, էջ 343:



*ինչպես, այն, որ «Ծաղիկը» հայտնում էր իր գաղափարական շփումները Մ. Նալբանդյանի հայացքների հետ:*

*Կ. Պոլսում հրատարակվող «Օրագիրը» 1869 թ. նոյեմբերի 6-ի առաջնորդող հոդվածում բավական զգույշ կերպով այն միտքն էր զարգացնում, թե հայ գյուղացին պետք է իր հարստահարիչների հետ խոսի զենքի ուժով, որ նա չպետք է գլուխ խոնարհի իրեն ճնշողների առաջ, որ բնական օրենքը պահանջում է դիմադրել, ըմբոստանալ, պայքարի ելնել[1]: Ազատագրական գաղափարների պաշտպանությամբ հանդես էր գալիս Կ. Պոլսում հրատարակվող «Մյունատիի էրճիաս» («Արգեոսի մունետիկ») թերթը: Նրա խմբագիր Կ. Փանոսյանը, որ հայտնի էր արևմտահայերի սահմանադրության և մամուլի ազատության համար իր ունեցած համարձակ և սկզբունքային ելույթներով, անվերապահորեն պաշտպանեց 1862 թ. Զեյթունի ապստամբությունը: Ավելին, Կ. Փանոսյանը զեյթունցիների վրա արշավող թուրքական զորամասի հրամանատար Ազիզ փաշային անվանեց «փարավոնական բարբարոս»՝ դատապարտելով նրա գործողությունները: Թուրքական կառավարությունը բանտ նետեց Կ. Փանոսյանին (1862 թ. օգոստոս-սեպտեմբերին) և տուգանեց 50 լիրայով: «Մյունատիի էրճիասը» ընդմիշտ խափանվեց[2]: «Այս բանտարկությամբ,– գրում էր «Ծաղիկը»,– մեր հայրենասեր բարեկամին անունը ավելի կփառավորվի, քան թե կնսեմանա»[3]:*

*Տարիներ հետո մոտավորապես նույն մտքերն էր զարգացնում Կ. Պոլսում հրատարակվող «Մամուլը»: Այս թերթի 1871 թ. սեպտեմբեր ամսի համարներից մեկում կարդում ենք. «Հայուն պարծանքը չմնաց, պատիվն ալ չմնաց, ստացվածքն ալ չմնաց, աչքդ գոցես բանաս նե՝ հա՛յն ալ չպիտի մնա... Ուրեմն դո՛ւք զձեզ պաշտպանեցեք, ո՛վ ասիացիք. դո՛ւք ձեր փրկությունը հոգացեք, երբ մարդ այնպիսի երկրի մը մեջ կապրի... ուր կյանքն ու ինչքն անապահով է, հարկ անհրաժեշտ է որ կրե իր վրա ինչ որ յուր կենաց ընչից և պատվո ապահովության համար պետք է»[4]:*

*Կ. Պոլսում հրատարակվող «Փունջ» շաբաթաթերթը* տպագրեց տարբեր հեղինակների գրչին պատկանող այնպիսի հոդվածներ, որոնք զգույշ կամ բացահայտ կերպով քարոզում էին արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման անհրաժեշտության գաղափարը: Այսպես, թեր-*

1 «Օրագիր», Կ. Պոլիս, 1869, N 51:
2 «Մասիս», 1862, օգոստոսի 25, սեպտեմբերի 11:
3 «Ծաղիկ», 1862, N 43, էջ 360:
4 «Մամուլ», Կ. Պոլիս, 1871, սեպտեմբերի 30:

*թի 1878 թ. համարներից մեկում զետեղված է Ե. Այվազյանի հոդվածը, ուր ասվում է. «Հայոց ազգը... երբեմն յուր հույսերը սահմանադրության վրա դրած էր, այսօր ալ յուր բոլոր անկնկալությանց կեդրոն ըրած է դպրոցները և կսպասե, որ դպրոցներեն գտնե ազատություն, բայց մինչև դպրոցին մեջ կսովորի հայն արյունռուշտ թշնամուն թուրը ջախջախել... պաշտպանել պետք է ազգությունը ինչ միջոցով ալ ըլլա, եթե բարոյական ազդեցությամբ, եթե բռնությամբ. եթե հեղափոխությամբ, միայն թե հայրենիք փրկվի»[1]:*

*Նույն գաղափարներն էր քարոզում նաև Եղիա Տեմիրճիպաշյանը: Խոսելով ժամանակի նշանաբանի մասին, նա իր հոդվածներից մեկում ասում էր. «Այն ժողովուրդները, որք մի անմիտ խնամակալության տակ են այժմ, չափահաս պիտի լինեն և ինքնագլուխ պիտի վարեն յուրյանց ճակատագիր. այն ժողովուրդներ, որ կհեծեն լուծի տակ, պիտի փշրեն յուրյանց շղթաներ...»[2]: Ընդհանրապես, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակաշրջանում ազատագրական գաղափարների լայն տարածման շնորհիվ հայ բազմաթիվ պարբերականներ արտահայտում էին ազատասիրական տրամադրություններ: Ժողովրդին և նրա առաջավոր մտավորականությանը համակած ձգտումները ներթափանցում էին թերթերի ու հանդեսների էջերը և այդ՝ նույնիսկ դրանց խմբագիրների հայտնի պահպանողականության պայմաններում, անկախ որոշակի հասարակական հայացքների սահմանափակությունից:*

*Իսկապես «Օրագիր», «Փունջ» և մի քանի այլ պարբերականներ, որոնք ռուս-թուրքական պատերազմի շրջանում նման համարձակ տողեր էին գրում, միայն պատերազմից հետո կողմնորոշվեցին դեպի պահպանողականությունը և այդ պատճառով էլ քննադատության ենթարկվեցին դեմոկրատ գործիչների կողմից:*

*Ազատագրական գաղափարների ժողովրդականացման փորձ էր կատարում նաև Երևանում 1880–1884 թվականներին Վասակ Պապաջանյանի խմբագրությամբ լույս տեսնող «Պսակը»: Այս շաբաթաթերթը, որը Երևանի առաջին պարբերականն էր, որոշ հարցերում բաժանում էր «Մեղու Հայաստանիի» տեսակետները և երբեմն հարձակումներ գործում «Մշակի» վրա: Սակայն, չնայած դրան, նա ընդունում էր ազգային-քաղաքական շարժման անհրաժեշտությունը և աշխատում էր ազգային-ազատագրական գաղափարներ տարածել հայ իրականության մեջ: «Պսակը» գրում էր, որ Հայկական հարցը հայ ժողովրդի հարցն է, և ինքը ժողովուրդը իր սեփական ուժերով պիտի լուծի իր ազատության հարցը: «Հայկական խնդիրը ինքը ժողովուրդն է... նա պետք է ինքն իր ինքնագործությամբ լուծում տա այդ խնդրին»[1]: Չպետք է հույս դնել եվրոպական պետությունների, միջազգային դիվանագիտության վրա, ժողովուրդն իր ազատությունը պետք է ձեռք բերի քաղաքական-ազատագրական պայքարով, զոհերի գնով: Առանց զոհերի ոչինչ չի հաջողվի և իսկական հայրենասերը նա է, որն իր կյանքը չի խնայում սեփական ժողովրդի ազատության համար: «Ճշմարիտ հայը պետք է ցանկա, պետք է միշտ պատրաստակամ և քաջասիրտ լինի նվիրելու, զոհելու իր կյանքը, իր ազգի բարեկեցությանը, պատվին, փառքին, անդորրությանն ու երջանկությանը... մեր ներկա վիճակը մեզանից զոհ է պահանջում»[2]:*

1 «Փունջ», Կ. Պոլիս, 1878, ապրիլի 29:
2 Նույն տեղում, 1877, մարտի 10:



*Պապաջանյանի թերթը կարծում էր, որ հասարակական կյանքում վճռական դերը վերապահվում է ազատագրական պայքարին: Խոսելով գյուղացու մասին, նա ասում էր, թե գյուղացին իրեն հուզող հարցերը կարող է լուծել միայն պայքարով: Այս միտքը թերթն արտահայտում էր հետևյալ այլաբանությամբ. «Նա [գյուղացին] լսեց բանականությանը, տվեց հափշտակողին պարկը և պաշտեց սրբի տեղ չոմախը, չոմախը... անգին չոմախը: Այժմ մեր գյուղացին ունի միայն մի չոմախ, օրհնյալ է փայտն, որով լինի արդարություն»[3]:*

*«Պսակի» տեսակետներն անծանոթ չմնացին ցարական ոստիկանությանը: Վերջինս 1883 թ. ժամանակավորապես արգելեց թերթի հրատարակությունը:*

*Թուրքական տիրապետության դեմ ուղղված հայ ազատագրական շարժման գաղափարախոսության ձևավորման գործում հսկայական դեր է խաղացել Թիֆլիսում Գրիգոր Արծրունու խմբագրությամբ հրատարակված «Մշակ» նշանավոր լրագիրը, որը սկսեց լույս տեսնել 1872 թ.: Տարիներ շարունակ նա հետևողականորեն զարգացրել է այն տեսակետը, որ Արևմտյան Հայաստանի ազատագրությունը օսմանյան լծից հնարավոր է իրագործել միայն զինված պայքարի միջոցով Ռուսաստանի օգնությամբ: Այդ հարցին մենք արդեն անդրադարձանք, երբ խոսում էինք Գ. Արծրունու մասին:*

*Ազատասիրական-հայրենասիրական գաղափարներ այս կամ այն չափով արտահայտել են մամուլի նաև մի շարք այլ օրգաններ: Նրանք, սա-*

1 «Պսակ», Ե., 1883, N 7:
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում, 1880, N 1:

կայն, մեծ մասամբ կրկնում էին այն հիմնական պարբերականներին, որոնց մասին խոսվեց վերևում:

Պետք է նկատել, որ արդեն 1880-ական թթ. հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսների դերում հանդես եկան նաև հասարակական-քաղաքական այնպիսի գործիչներ, որոնք դավանում էին ընկերվարական, ավելի ճիշտ՝ ռուսական նարոդնիկական սոցիալիզմի սկզբունքները: Նոր սերնդի այդ ներկայացուցիչները ձգտում էին լուծել հայ ժողովրդի, մասնավորապես արևմտահայության ինչպես ազգային ազատագրության, այնպես էլ սոցիալ-տնտեսական հարցերը: Այդ ուղղությամբ գրավոր ու բանավոր քարոզչություն ծավալեցին հատկապես Թիֆլիսում 1882 թ. հիմնված հայրենասիրական-նարոդնիկական խմբակի և նույն տարում Մոսկվայում ստեղծված «Հայրենասերների միության» անդամները:

Առաջ քաշվեցին նոր գաղափարներ, նոր խնդիրներ: «Հայրենասերների միության» օրգան «Ազատության ավետաբեր» թերթը գրում էր. «Մենք թշնամի ենք ներկա անձնական, բաժան-բաժան կազմակերպության, որտեղ տկարն անօգնական է, իսկ ուժեղը՝ հարստահարող և անգութ: Մենք քարոզում ենք ընկերական միաբանություն, որտեղ ընդհանուրը հոգում է յուրաքանչյուրի համար, իսկ յուրաքանչյուրն ընդհանուրի համար: Ահա ինչու բոլոր մասնավոր կալվածատերերի և պետության հողերը պետք է անցնեն համայնքների ձեռքը: Համայնքը միակ սեփականատերն է, միակ սպառողն է, որովհետև նա միակ աշխատող, արդյունաբերողն է: Միևնույն ժամանակ, համայնքները ներկայացնում են այն սկզբնական քաղաքական տարրերը, որոնցից պետք է կազմվի ընդհանուր քաղաքական դաշնակցություն, ֆեդերացիա»[1]:

Ազգային հարաբերությունների մասին նույն թերթը գրում էր, որ «Հայրենասերների միության» «պատգամներից մեկն է ազգերի համերաշխությունը... Ուստի, մենք քարոզում ենք սերտ համերաշխություն Հայաստանում բնակվող ազգերի մեջ: Մենք հավասարաչափ հարգում ենք յուրաքանչյուր ազգի լեզուն, կրոնը և անկախությունը, եթե միայն նա չի ձգտում հարստահարել ուրիշներին, արգելք չի դնում ուրիշների կանոնավոր զարգացման»[2]:

Հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը ավելի խորացավ 1880-ական թթ. երկրորդ կեսին, երբ սկսեց գործել Հնչակյան կուսակցությունը, որի շատ անդամներ նույնպես ոգևորված էին իր ժամանակի սոցիալիստական գաղափարներով: Սակայն, նշելով

---

1 «Ազատութեան աւետաբեր», 1883, N 1:

2 Նոյն տեղում:



այս փաստը, չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ այս կարգի մտածողները ևս գիտակցում էին, որ այնուամենայնիվ, առաջնահերթ ու վճռական հարցն արևմտահայության ազգային ազատագրության խնդիրն է: Այս տեսակետն էին պաշտպանում նաև ռուսական նարոդնիկության ազդեցության տակ գտնվող այն հայ հայրենասեր ուսանողները, որոնք 1880-ական թթ. սկզբներին գաղտնի խմբակներ հիմնեցին Թիֆլիսում, Մոսկվայում և Պետերբուրգում:

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

# ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՒ ԿԱՊԵՐԸ

### 1

*Օսմանյան տիրապետության դեմ ծավալված հայ ազգային-ազատագրական շարժումն ուներ ժողովրդական-դեմոկրատական բնույթ: Նրա գլխավոր շարժիչ ուժը գյուղացիությունն էր, որը զենքի դիմեց Զեյթունում, Սասունում, Վասպուրականում, Էրզրումում և Արևմտյան Հայաստանի մյուս մասերում: Ազատագրական շարժման մեջ լայնորեն ընդգրկվեցին նաև արհեստավորները, մանր ու միջին առևտրականները ու արդյունագործները, ինչպես և իր ժամանակի առաջավոր, հայրենասեր մտավորականությունը:*

*Բնորոշ է, որ Վանում 1872 թ. հիմնված «Միություն ի փրկություն» ընկերության մեջ հիմնականում մտնում էին գյուղացիներ, արհեստավորներ և ուսուցիչներ: Էրզրումի «Պաշտպան հայրենյաց» (1882 թ.) կազմակերպության անդամների ճնշող մեծամասնությունը դարձյալ արհեստավորներ ու գյուղացիներ էին:*

*Մոտավորապես նման սոցիալական կազմ ունեին նաև մյուս գաղտնի կազմակերպությունները և կամավորական այն ջոկատները, որոնք Կովկասից մեկնում էին Արևմտյան Հայաստան, մասնակցելու այնտեղ ծավալվող հակասուլթանական շարժմանը: Եվ միանգամայն բնական էր այն հանգամանքը, որ ազատագրական շարժման ղեկավարությունը գտնվում էր ժողովրդական զանգվածների իղձերն արտահայտող տարաստիճան (ռազնոչին), ազգային-ազատագրական պայքարի գաղափարներով տոգորված դեմոկրատական մտավորականության ձեռքում:*

*Ազատագրական շարժմանը մասնակցեց արևմտահայ գավառական բուրժուազիան, այսինքն այն առևտրականներն ու արդյունագործողները, որոնք ապրելով բուն երկրում Արևմտյան Հայաստանում, մշտապես գտնվում էին ահ ու սարսափի մեջ, թալանի, կողոպուտի վտանգի տակ, ազգային ճնշումների ու հարստահարությունների դժնդակ պայմաններում: Կենսականորեն շահագրգռված լինելով ազգային ճնշման ու օսմանյան*



*ռազմա-ֆեոդալական կարգերի վերացման հարցում, հասարակական այդ խավը միացավ ժողովրդական զանգվածների ազատագրական պայքարին[1]:*

*Ինչ դիրք բռնեց հայ խոշոր բուրժուազիան: Արևմտահայ ամիրաները, սառաֆները ու բարձրաստիճան էֆենդիները, որ կորցրել էին իրենց ազգային դեմքը, անվերապահորեն հանդես եկան ազատագրական շարժման դեմ: Նրանք բազմաթիվ թելերով կապված էին սուլթանական կառավարության հետ: Ամիրաների մասին ժամանակակիցներն ասում էին, որ նրանք Թուրքիայի ղեկավար շրջաններում վայելում են վստահություն, «Անոնք կհայթայթեն պետք եղած դրամը փաշաներուն՝ հաստատվելու համար իրենց պաշտոններուն մեջ, և արքունի փողերանոցին ընդհանուր տնօրենը հայ մը կըլլա»[2]:*

*Երկրի հարկերի հավաքման գործի մի մասը գտնվում էր հայ վաշխառուների ձեռքում, նրանցից ոմանք ստեղծելով բանկային ընկերություններ զգալի դեր էին խաղում երկրի տնտեսական կյանքում[3]: Արևմտահայ խոշոր բուրժուազիան առիթ չուներ դժգոհելու, նա պաշտպան էր կանգնում տիրող կարգերին և դեմ էր արտահայտվում արևմտահայ քաղաքական, մասնավորապես, ժողովրդական-դեմոկրատական շարժումներին:*

*Հայ ամիրաների ու սառաֆների գաղափարական ներկայացուցիչներն այն միտքն էին զարգացնում, թե ամբողջ հույսը պետք է դնել «բարեխնամ կայսեր» վրա և հեռու մնալ ապստամբական շարժումներից: Այսպես, արևմտահայերի Ազգային ժողովում դիրք և պաշտոններ ստացած Հ. Նուրյանը, Սիմոն Մաքսուտը, պատրիարքներ Հ. Վեհապետյանը, Խ. Աշըգյանը և ուրիշներ կտրականապես դեմ էին ազատագրական պայքարին, այն համարելով կործանարար հայ ժողովրդի համար[4]: Մեծահարուստ հայ աղաները միայն ողորմածություն էին փնտրում և վճռականորեն մերժում որևէ քաղաքական շարժում ուղղված տիրող կարգերի դեմ[5]: Կղերա-ամիրայական ռեակցիայի գաղափարախոսներից մեկն էր Հովհաննես Տերոյենցը (Զամուռճյան), որին Միքայել Նալբանդյանը բնորոշել է որպես «ոտքից մինչև գլուխ միստիկականությամբ խմորված» խավարամիտ գործիչ[6]:*

---

1 *Մ. Գ. Ներսիսյան.* Հայ ազգային-ազատագրական շարժումը օսմանյան բռնապետության դեմ և պատմության կեղծարարները.– ՊԲՀ, 1984, N 3, էջ 11:

2 *Յ. Մրմըրեան.* Մասնական պատմութիւն հայ մեծատուններու. Կ. Պոլիս, 1910, էջ 120:

3 *Յ. Մրմըրեան* Թուրքահայոց հին վաճառականութիւնն և վաճառականք. 1908:

4 Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1876, էջ 241:

5 Նույն տեղում, 1879, էջ 126:

6 *Մ. Նալբանդյան.* Ընտիր երկեր. Ե., 1953, էջ 373:

*Ազգային-ազատագրական շարժման նկատմամբ վեհերոտ դիրք բռնեցին արևմտահայ վերնախավի այն ներկայացուցիչները, որոնք ձգտում էին «մեծ պետությունների» միջամտությամբ ու օգնությամբ բարենորոգումներ կիրառել Արևմտյան Հայաստանում: Այս տեսակետն էր դավանում, մասնավորապես, պատրիարք Ներսես Վարժապետյանը:*

*Ոգևորվելով սահմանադրական շարժմամբ և մեծ հույսեր կապելով նրա հետ, հայ լիբերալ լուսավորական մի շարք գործիչներ (Գրիգոր Օտյան, Նահապետ Ռուսինյան, Սերվիչեն, Ն. Պալյան, Աղաթոն եղբայրներ և ուրիշներ), անտեսելով քաղաքական պայքարի անհրաժեշտությունը, զարգացնում էին այն տեսակետը, թե պետք է երկրի վիճակը բարելավել լուսավորություն, գիտություն տարածելու, զանազան մշակութային-կրթական, երկրագործական-գյուղատնտեսական ընկերություններ ստեղծելու ու այլ խաղաղ միջոցներով: Այդ միտքը Կ. Պոլսի «Սեր» թերթը արտահայտում էր հետևյալ կերպ. «Մենք տարակույս չունինք, որ քաղաքակրթությունը հաղթական պիտի ելնե, բայց ոչ թե արյունահեղ պատերազմներով, այլ խաղաղությամբ, հանդարտությամբ և լուսավորությամբ: Մտաց վրա թանձրացած խավարը թնդանոթներով չպիտի փարատվի, այլ քաղաքակրթության զորությամբ: Գաղափարաց ազդեցությունը գաշխարհ պիտի վերակենդանացնե, և փիլիսոփայությունն ինքնին պիտի առաջնորդե մարդկության լավեն ի լավագույն վիճակը մը, լավագունեն ալ դեպի ամենալավը»[1]:*

*Լիբերալ լուսավորիչները չէին բաժանում ապստամբական շարժման գործելակերպը, թեև խիստ մտահոգված էին ժողովրդի ծանր վիճակով: Նրանք հանդես էին գալիս որպես ջերմ, բայց խաղաղ հայրենասերներ: Նրանց հույսն ու երազանքն էր տեսնել հայրենիքը ազատ ու երջանիկ, սակայն առանց արյուն թափելու: Հիշենք Նահապետ Ռուսինյանի հայտնի «Կիլիկիա» բանաստեղծությունը, ուր կան հայրենասիրական նուրբ զգացմունքներ, բայց ոչ խրոխտ կոչեր.*

Երբոր բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ձըմեռ,
Զքնաղ երկիրն մեր Արմենիոյ
Երբ փայլէ իւր քաղցրիկ օրեր,
Երբոր ծիծառն ի բուն դառնայ,
Երբոր ծառերն հագնին տերև

1 «Սէր», Կ. Պոլիս, 1864, N 11, էջ 2:



Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արև[1]:

*Արևմտահայ ազատագրական շարժման մեջ ուրույն տեղ են գրավում հայ դեմոկրատ մտավորականության նշանավոր ներկայացուցիչներ վիպասան Ծերենցը և հրապարակախոս Մատթեոս Մամուրյանը: 1860-ական թթ., և մասնավորապես զեյթունցիների 1862 թ. ապստամբության ժամանակ, Ծերենցը ոչ միայն ազատագրական պայքարի կողմնակից էր, այլև, ինչպես վկայում են մի շարք փաստեր, կապեր ուներ Զեյթունի ապստամբների հետ: Սակայն հետագա տարիներին նա պաշտպանեց այն տեսակետը, թե հայ ժողովուրդն իր հույսը պետք է դնի ոչ թե ապստամբությունների ու զինված ելույթների, այլ վերևից եկող բարենորոգումների վրա: Այս հարցի կապակցությամբ Ծերենցը 1876 թ. բանավիճում էր Արծրունու և Րաֆֆու հետ: Խիստ հարձակումներ գործելով «Մշակի» խմբագրի և նրա թղթակիցների դեմ, նրանց անվանելով «բռնկած գլուխներ», «թեթևամիտ երիտասարդներ» և այլն, Ծերենցը, վերջ ի վերջո, շարադրում էր իր աշխարհայացքը, որ տիպիկ լիբերալ էր: Ոչ թե ապստամբություն, քաղաքական պայքար, այլ խաղաղ զարգացում, բարենորոգումներ վերևից: «Մենք կուզենք,– գրում էր նա,– որ ամեն հեղափոխություն վերեն գա և ոչ վարեն: Վարեն եկած հեղափոխությունք (թե որ հաջողին ալ) այնչափ աղետք՝ այնչափ թշվառություն ունին և այնչափ արյուններու առիթ կլինին, և հայ ազգն այնչափ քիչ արյուն ունի յուր երակներուն մեջ, որ իր կարողութենեն վեր է այդ մասին շռայլ լինիլ. և ընդհակառակ վերեն եկած հեղափոխությունք միշտ հաստատ են և երբեք այն արյանց գիներով չեն լինիր... Ռուսիո ինքնակալությունն երեսուն միլիոն մարդերու ազատություն տվավ գրեթե առանց արյուն թափելու, հրովարտակով մը միայն, հրովարտակ՝ որու բոլոր անցյալ և ապագա Աղեքսանդր անունը կրողներուն էն մեծը պիտի լինի նորա ստորագրողը հանդերձյալ ողջամիտ դարերու մեջ»[2]:*

*Իր այս խորհրդածություններից հետո Ծերենցը գալիս էր այն եզրակացության, թե «յառաջդիմութիւն կայ՝ կամայ ակամայ. ուստի մենք, Թուրքիոյ հայքս, կրնանք սպասել վասն զի չենք կրնար ալ ուրիշ բան մը ընել»[3]:*

*Հայտնի գրող և հրապարակախոս Մատթեոս Մամուրյանը տեսականորեն ընդունում էր ապստամբական շարժման անհրաժեշտությունը և*

1 Նոր երգարան կամ մրմունջ Հայկական. Վառնա, 1901, էջ 51:
2 «Արևելեան մամուլ», Զմիւռնիա, 1876, հոկտեմբեր, էջ 349-350:
3 Նոյն տեղում, նոյեմբեր, էջ 394:

կարևորությունը հասարակական կյանքի զարգացման գործում, բայց միաժամանակ նշում էր, որ հայերը դեռևս պատրաստ չեն դրա համար*: Արևմտահայ դեմոկրատական շարժման այդ նշանավոր գործիչը 1860–1870-ական թթ. առիթներ ունեցավ պաշտպանել ազատագրական պայքարի գաղափարները, բայց ընդհանուր առմամբ ավելի հակված էր դեպի խաղաղ զարգացման տեսությունը: Մամուրյանը խոսում էր արևմտահայերի ծանր վիճակի մասին, ցույց էր տալիս սոցիալական ու ազգային այն կեղեքումներն ու հարստահարությունները, որոնց ենթակա էր գավառաբնակ ժողովուրդը: Իր «Անկլիական նամականիի» մեջ նա գրում էր. «Պատրիարքն ամիրան կճզմե՝ եթե սա հզոր փաշայի մը տված չէ իր կռնակը, ամիրան՝ վարդապետը, վարդապետը՝ քահանայն, քահանայն՝ տիրացուն, տիրացուն՝ ժամկոչը, ամենքն ալ խեղճ ժողովուրդը կճզմեն, որ այս բռնական դրությունը շատ բնական կգտնեն, և երբ պաշտոնական ու անպաշտոն հարստահարությանց չտոկալով՝ թեթև ճիկ մը հանե, իսկույն անոր աչքին կցուցնեն դժոխքն ու Թուրքի լախտն ու լռության կդատապարտեն, այնպես որ կարծես թե այս տեղ ու գավառները հայք հետին ծայր խաղաղ, անդորր ու հանգիստ կյանք մը կվայելեն, թեև ներքուստ կտառապին, կմաշին, կ'լան և իրենց արտասուքը լռելյայն կուլ կտան»[1]:

Այս անտանելի կացությունից դուրս գալու համար Մամուրյանը գտնում էր, որ պետք է դիմել խաղաղ տնտեսական ու մշակութային գործունեության: «Անկլիական նամականիի» դրական հերոս Ներսեսը (Նելսոնը), շրջագայելով Արևմտյան Հայաստանում, ուսումնասիրելով տիրող իրականությունը, գալիս էր այդ եզրակացությանը: Իր բարեկամներից մեկին Մուշից գրած նամակում Ներսեսը ասում էր. «...Պետք է որ այս լեռներն ու բլուրներն որ գլխ կշրջապատեն, այս փլատակներն, որ կմխան, այս արյունաներկ դաշտերն, որ դեռ տատասկներով ու ճահիճներով ծածկված են, այս գետերն ու լճակներն, որ անթումբ կհորդեն, կողողեն, կավերեն, այս անտառներն, ուր գայլեր, օձեր ու վարազներ որջ դրած են, այս սարավանդներն, որոց վրա կիսափուլ բորբոսուտ վանքեր և տաճարներ կերևին, այս ամեն բնության և արվեստի ույժերն, որ ընդունայն կսպառին, այս տգետ, դանդաղ ու անհոգ բնիկներն, որ իրենց կոխած հողին տերն անգամ չեն, այս հրոսակներն որ անսանձ կարշավեն ու կթալլեն, այն զեղծմունքն, որ անիշխանության վիժմունքն են, այն անստուգությունն որ տգիտության ու անհոգության հետևանքն է, այլափոխին, չէ թե բռւռն՝ այլ քաղաքակրթական միջոցներով, պետք է որ հանքեր, այգեստաններ, նավարկելի ծովեր ու ջրանցքներ, բանուկ արահետներ, գործատուններ, պարտեզներ դառնան, պետք է որ գործունի աշխատավորներ, հողատերներ, հանդարտ ու բարեկարգ, ժիր ու օրինաց հնազանդ քաղաքացիներ դառնան, պետք է որ մետաղներ, զանազան արմտիք, ապրանք, ուսմունք ու լույս սփռեն, պետք է որ երկաթը, շոգին, էլեկտրական հեղուկն կենդանություն, շարժում տան այս անշունչ և փշալից բնության»[1]:

Մամուրյանի հերոսը այս բոլորը պիտի կատարեր իր տրամադրության տակ եղած բավական խոշոր դրամագլխով: Ներսեսի կարծիքով, իր ձեռնարկումները սիրով կընդունվեն ոչ միայն հայերի, այլև քրդերի, ասորիների, տաճիկների ու թաթարների կողմից, և որ իր այդ ձեռնարկումները կփրկեն Արևմտյան Հայաստանը, կապահովեն նրա լավ ապագան: Մ. Մամուրյանի հայացքները հիմնականում բաժանում էին 1860-ական թթ. Զմյուռնիայում մշակութային-կրթական, լուսավորական գործունեությամբ զբաղված Մ. Նուպարյանը, Գ. Կոստանդյանը, Գր. Չիլինկիրյանը և ուրիշներ: Բնորոշ է, որ նրանք ևս հետագա տարիներին Մամուրյանի նման դարձան չափավոր (լիբերալ) գործիչներ:

Արևելահայ իրականության մեջ հայ ազգային-ազատագրական շարժման դեմ արտահայտվեցին կովկասահայ բուրժուազիայի գաղափարակիր ազգային-պահպանողականները*: Թիֆլիսում հրատարակվող «Մեղու Հայաստանի» թերթը, օրինակ, քարոզներ էր կարդում այն մասին, որ ամեն ինչ, «իր բնական ընթացքով պետք է ընթանա», որ «ապերախտություն է» ապստամբություն բարձրացնել «օրինական» կառավարության դեմ, որ պետք է հաշտվել ստեղծված վիճակի հետ և հնազանդություն ցուցաբերել: Վնասակար համարելով հայ ազգային-ազատագրական շարժումը, նա գրում էր, որ արևմտահայերի դրությունը տանելի է և որ նրանք ոչ մի դեպքում չպետք է ապստամբեն: Թերթը առաջարկում էր համախմբվել եկեղեցու շուրջ և այդ ճանապարհով պահպանել ազգությունը: Արևմտահայերը, ավելացնում էր նա, իրենց վիճակը պետք է բարելավեն աշխատասիրության միջոցով: Արևմտյան Հայաստանում կատարված ազատագրական ելույթներն ու ազատագրական շարժումները նա որակում էր որպես «ցավալի իրողություն»[2]:

«Մեղու Հայաստանի» թերթը առանձնապես թշնամական դիրք բռնեց ազատագրական պայքարի կապակցությամբ Պատկանյանի, Րաֆֆու և նրանց կողմնակիցների ծավալած գործունեության հանդեպ, հարձակումներ սկսեց «Մշակի» դեմ: Նա ցնորամիտներ ու ցուցամոլներ էր



1 *Մ. Մամուրյան.* Երկեր. Ե., 1966, էջ 381-382:

1 Նույն տեղում, էջ 457-458:

2 «Մեղու Հայաստանի», 1880, N 61:

որակում բոլոր նրանց, ովքեր ազատագրական պայքարի կոչ էին անում: Թերթի հիմնական աշխատակիցներից մեկը՝ Հայկունին (Եղիշե քահանա Գեղամյանց) ռեակցիոն-պահպանողական դիրքերից խիստ քննադատության ենթարկեց Րաֆֆու «Կայծերը»՝ նրա ազատագրական գաղափարների համար:

Թերթը և նրա շուրջը համախմբված տարրերը մեծ հույսեր էին կապում Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի հետ: Նրանք հավատացնում էին, որ այդ հոդվածը կկիրառվի կյանքում: «Տաճկահայերի հարցը,– գրում էր «Մեղու Հայաստանին»,– որ Բեռլինի դաշնագրութեան որոշմանց վերայ է հիմնուած, չէ կարող անկատար մնալ»[1]: Իսկ երբ կիրառվի կյանքում այդ հոդվածը, շարունակում էր թերթը, ապա բոլոր հարցերը կլուծվեն[2]:

Պահպանողական «Փորձը» և «Նոր դարը» ևս զարգացնում էին այն տեսակետը, թե արևմտահայերը չպետք է դիմեն զինված ապստամբության, որովհետև Օսմանյան կայսրության մեջ նրանց տնտեսական ու կուլտուրական զարգացման համար կան անհրաժեշտ նախադրյալներ*: «Օսմանյան պետութեան այժմեան կազմակերպութիւնը և քաղաքական դրութիւնը,– ասում էր «Փորձը»,– ամենայն միջոց տալիս է, որ ազգն այդ ճանապարհով («տոկուն աշխատութեամբ» – Մ. Ն.) առաջ գնայ»[3]: Նույն պարբերականը գրում էր. «Հայերի դրութիւնը Թուրքիայում, նոցա վայելած իրաւունքներն ու արտոնութիւնները դեռ այնքան են, որ առանց ապստամբութեան դիմելու, կարող են բարւոքել իրանց դրութիւնը...»[4]:

Իր խմբագրական հոդվածներից մեկում, որ նվիրված էր Ասիական Թուրքիայում կիրառվելիք բարենորոգումների խնդրին, «Նոր դարը» կոչ էր անում արևմտահայերին՝ չդիմել զենքի, չապստամբել: «Պէտք է համբերել, պէտք է սպասել»,– գրում է նա[5]:

Ազատագրական պայքարի անհրաժեշտությունը ժխտում էր նաև Մ. Աղաբեկյանի «Կռունկ Հայոց աշխարհին» հանդեսը: Նա պաշտպանում էր այն տեսակետը, թե սուլթանական կառավարությունը եվրոպական պետությունների ճնշման տակ կբարելավի արևմտահայության վիճակը և հետևապես պետք է հեռու մնալ քաղաքական պայքարից[6]:

---

1 Նույն տեղում:
2 Նույն տեղում, N 47:
3 «Փորձ», 1876, N 2, էջ 106:
4 Նույն տեղում, էջ 411:
5 «Նոր դար», Թիֆլիս, 1884, N 6:
6 «Կռունկ Հայոց աշխարհին», 1860, N 1, էջ 15:



Հետաքրքիր է նշել նաև այն, որ լիբերալ լուսավորական շարժման այնպիսի նշանավոր ներկայացուցիչ, ինչպիսին էր Ստեփանոս Նազարյանցը, արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման նկատմամբ լռություն պահպանեց, դրանով իսկ ցույց տալով, որ կողմնակից չէ նման շարժումներին: Հայտնի է, որ նա բացասական վերաբերմունք ուներ նաև եվրոպական հեղափոխությունների վերաբերմամբ և ընդհանրապես կողմնակից էր հասարակության խաղաղ ու աստիճանական զարգացման ուղուն:

Խոսելով XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման բնորոշ կողմերի մասին՝ հարկ է նշել այն հանգամանքը, որ այդ շարժումը հիմնականում ուներ ինքնապաշտպանական բնույթ: Ժողովրդական զանգվածները մեծ մասամբ զենքի էին դիմում այն դեպքերում, երբ սուլթանական կառավարությունը փորձում էր կազմակերպել հայերի հոծ կոտորածներ: Այդպիսի պայմաններում տեղի ունեցան, օրինակ, զեյթունցիների 1862 թ. հայտնի ապստամբությունը և դրան հաջորդող տարիներին բռնկված մի շարք զինված ելույթները:

Ճիշտ է, 1870-ական թթ., երբ ռուսական պետությունը վարում էր հովանավորող քաղաքականություն արևմտահայերի նկատմամբ, երբ սպասվում էր, որ նա Արևմտյան Հայաստանում ևս կարող է վճռականորեն հանդես գալ որպես հակաօսմանյան ազատագրական շարժման պաշտպան (ինչպես որ այդ տեղի ունեցավ Բալկաններում), հայկական շրջաններում զգալի տարածում գտավ այն մտայնությունը, թե պետք է քաղաքական պայքարի, ապստամբությունների միջոցով ազատագրել արևմտահայությունը սուլթանական լծից և վերականգնել հայկական պետականությունը: Այդ ոգով հանդես եկան հայ ազատագրական շարժման նշանավոր շատ գործիչներ՝ գրողներ հրապարակախոսներ, նույն նպատակին էին ձգտում հայրենասիրական մի շարք խմբակներ ու կազմակերպություններ: Սակայն Բեռլինի 1878 թ. վեհաժողովից հետո, երբ փոխվեց ցարիզմի քաղաքականությունը ու պարզ դարձավ եվրոպական պետությունների ոչ հայանպաստ վարքագիծը հայկական հարցում, իշխող դարձավ այն տեսակետը, թե առայժմ պետք է զբաղվել ինքնապաշտպանությամբ և ձգտել նրան, որպեսզի ստեղծվի հայկական քաղաքական ինքնավարություն Օսմանյան կայսրության մեջ: Այս տեսակետն ավելի տարածվեց 1880–1890-ական թթ.: Հատկանշական է, որ զեյթունցիների 1895–1896 թթ. համաժողովրդական հերոսական շարժման ղեկավարներից մեկը՝ հնչակյան կուսակցության անդամ Աղասին 1896 թ. փետրվարի 12-ի թվակիր իր նամակում՝ ուղղված իտալական հյուպատոս, հայ լեռնականներին ջերմորեն համակրող Հենրիկո Վիտտոյին, գրում էր, որ Ա-

րևմտյան Հայաստանում ստեղծված ներկա վիճակը (ազգամիջյան լարված հարաբերությունները, հատկապես քուրդ շեյխերի թշնամական տրամադրությունները հայկական շարժման նկատմամբ) և մեծ պետությունների այսօրվա թուրքամետ քաղաքականությունը ստիպում են մեզ առայժմ հետաձգել անկախ պետականության հարցը և առաջ քաշել ազգային ինքնավարության ու բարեփոխությունների խնդիրը[1]: Ստեղծված պայմաններում, ըստ երևույթին, դժվար էր գտնել ուրիշ ելք: Սակայն, չնայած դրան, XIX դարի երկրորդ կեսին՝ հակաօսմանյան շարժման ամբողջ ընթացքում առկա է եղել նաև այն մտայնությունը, որ պետք է դիմել միայն զինված պայքարի և սեփական ուժերով լուծել հայ պետականության վերականգնման հարցը:

## 2

XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժումը կազմում է օսմանյան բռնապետության դեմ նույն դարում ծավալված ազգային ազատագրական շարժման ընդհանուր շղթայի մի օղակը: Սերբերի, հույների, բուլղարների և մյուս ժողովուրդների ազատագրական պայքարը շատ ընդհանուր գծեր ուներ հայ ազատագրական շարժման հետ: Առկա են եղել փոխազդեցություններ, գաղափարական ու գործնական-քաղաքական կապեր, միատեղ պայքարելու ձգտում ու փորձեր ընդհանուր թշնամու դեմ և այլն: Խիստ բնորոշ է այն փաստը, որ հույն ականավոր հայրենասեր-դեմոկրատ Ռիգաս Վելեստինլիսը (1757-1798) դեռ իր ժամանակ կոչ էր անում.

Բուլղարներ և ալբաններ, հայեր և հույներ,
Սևեր ու սպիտակներ, ոտքի ելնենք միասին,
Ազատության համար զինվենք բոլորս սրերով,
Եւ թող որոտա ձայնը մեր քաջ հերոսների:

Արդ, ի՞նչ կապեր է ունեցել, ի՞նչ ազդեցություններ է կրել հայ ազգային-ազատագրական շարժումը:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի վրա զգալի ազդեցություն է թողել նախ և առաջ իր ժամանակի համառուսական հեղափոխական շարժումը: Այս հանգամանքը նկատել է պրոֆ. Լեոն, որն իր «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատության մեջ գրել է, որ 1860-ական թթ. սկսած արևմտահայերի ազգային-քաղաքական շարժումները ծնունդ են առել և զարգացել ռուսական նարոդնիկական շարժման ազդեցության տակ. «...ռուսական նարոդնիկական հեղափոխությունն էր, որ հայ ինտելիգենցիայի միջոցով սկիզբ դրեց թուրքահայ հեղափոխության»[1]:

1 *Aghassi*. Zeïtoun..., p. 316:



Իրավացիորեն արձանագրելով նարոդնիկության ազդեցությունը, նշանավոր պատմաբանը, սակայն, խիստ չափազանցնում էր այդ փաստի նշանակությունը, և հակառակ նախահեղափոխական շրջանի իր ճիշտ տեսակետների, թուրքական բռնակալության դեմ ուղղված հայ ազատագրական շարժման պատճառները փնտրում է ոչ թե ժողովրդի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի, այլ դրսի ազդեցությունների ու անհատների գործունեության մեջ: Լեոն կարծում էր, որ եթե չլինեին ռուս նարոդնիկները, մասնավորապես Բակունինը և նրան հետևող մի շարք հայ մտավորականներ, ապա չէին լինի նաև հայ ազատագրական շարժումներ. «...բակունինյան հախուռն ապստամբականությունը» տարիներ շարունակ արհեստականորեն փաթաթված է եղել «հայ ժողովրդի շլինքին»[2]: Սխալն ակնհայտ է:

Ըմբռնելով, որ Անդրկովկասի ժողովուրդների ազատագրությունը սերտ կերպով կապված է ռուս ժողովրդի պայքարի և ազատագրության հետ, հասկանալով, որ անդրկովկասյան ժողովուրդների ազատագրության բախտը կապված է ռուսական բուրժուա-դեմոկրատական ընդհանուր հեղափոխության բախտի հետ, անդրկովկասյան հեղափոխական տարատիճան մտավորականության այդ մասն իր պայքարը միավորում, միաձուլում էր ռուսական հեղափոխական ընդհանուր շարժման հետ և ակտիվ կերպով գործում, աշխատում էր ռուսական հեղափոխական շարժումների մեջ: Անդրկովկասի հեղափոխական մտավորականության այս թևը կանգնած էր ընդհանուր պայքար վարելու տեսակետի վրա: Այդ թևի ներկայացուցիչները սերտ, անգամ անձնական կապեր էին հաստատում ռուս հեղափոխական շարժման խոշորագույն ներկայացուցիչների հետ և աշխատում էին ռուսական հեղափոխական խմբակներում: Նրանք գլխավորապես գտնվում էին ռուս հեղափոխական մտքի և նրա ականավոր ներկայացուցիչների գաղափարական ազդեցության տակ[3]:

Հարկ է նշել, որ հայ ազատագրական շարժման և ռուս հեղափոխական-դեմոկրատական շարժման միջև կապեր հաստատվեցին դեռևս 1860-ական թթ. սկզբներին: Այդ կապերը նախ և առաջ ստեղծվել էին Միքայել Նալբանդյանի միջոցով: Հայ ականավոր հեղափոխական-դեմոկրատը հան-

1 *Լէօ*. Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը. հ. Ա, Փարիզ, 1934, էջ 27:
2 Նույն տեղում:
3 *Մ. Ներսիսյան*. Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, էջ 15:

դես եկավ որպես 1860-ական թթ. համառուսական հեղափոխական-դեմոկրատական շարժման ականավոր գործիչ, որպես ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատների հավատարիմ զինակից: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը ինչպես ցարիզմի, այնպես էլ թուրքական բռնակալության դեմ՝ նա դիտում էր որպես համառուսական հեղափոխական շարժման մի օրգանական մաս, նրա մի օղակը: Նալբանդյանը հստակ կերպով պատկերացնում էր, որ ռուսական հեղափոխական շարժումը խոշոր նշանակություն ունի ոչ միայն ռուս, այլև եղբայրական մյուս ժողովուրդների համար: «Ռուսիո ազատությունը,– գրում էր Նալբանդյանը,– ընդհանուր մարդկության ազատության վերաբերությամբ, մե՛ծ խորհուրդ ունի...»[1]: Մեկնելով իր այս խոր համոզումից, Նալբանդյանը հսկայական ջանքեր թափեց, որպեսզի հայ ժողովրդի ազատագրական շարժումները շաղկապի ռուսական հեղափոխական շարժման հետ: Ռուսական հեղափոխության միջազգային նշանակության այսպիսի ըմբռնումը խոր հետք թողեց հայ առաջավոր հասարակական մտքի ներկայացուցիչների վրա: Մ. Մամուրյանը գրում էր, որ «ռուսական ներքին հեռաւոր յեղափոխութիւնը նախ Ասիան պիտի դղրդէ, հրդեհէ»[2]: Թուրքական բռնապետության կործանումը Մամուրյանը հաճախ տեսնում էր ռուսական քաղաքական փոթորիկների մեջ:

Հայտնի է, որ Միքայել Նալբանդյանն ակտիվ մասնակցություն ունեցավ ռուս հեղափոխական-դեմոկրատների ծավալած գործնական-քաղաքական աշխատանքներին: Նա քաղաքական կապեր հաստատեց Գերցենի, Օգարյովի, Բակունինի, Սերնո-Սոլովևիչի և մյուսների հետ: Նալբանդյանը մասնակցեց «Զեմլյա ի վոլյա» հեղափոխական անլեգալ կազմակերպության ստեղծման, ինչպես և հեղափոխական մի շարք թռուցիկներ հրատարակելու գործին[3]: Լոնդոնի ռուս վտարանդիների խմբի համձնարարությամբ, նա իր վրա վերցրեց քաղաքական-հեղափոխական բնույթի մի շարք պարտավորություններ: Միաժամանակ, Նալբանդյանը ղեկավարում էր հայ իրականության դեմոկրատական ուժերն ու նախապատրաստում հայ ժողովրդի ազատագրական պայքարը:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի մի շարք ներկայացուցիչներ (Քր. Միքայելյան, Ս. Տեր-Գրիգորյան, Թ. Աղամյան և ուրիշներ) 1870–1880-ական թթ. ընթացքում կապեր հաստատեցին ռուսական հեղափոխական նարոդնիկական կազմակերպությունների, մասնավորապես Կովկասում գործող «Նարոդնայա վոլյա» մարտական կազմակերպություններ-

1 Մ. Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 61:

2 Մ. Մամուրեան. Սեւ լեռին մարդը. Աթէնք, 1932, էջ 165:

3 Ս. Դարոնյան. Միքայել Նալբանդյան. Կյանքը և գործունեությունը. Ե., 1970, էջ 404:



րի Թիֆլիսի բաժանմունքի հետ[1]: Ցարական կառավարության ներքին գործերի մինիստրը Ալեքսանդր III-ին ներկայացրած իր զեկուցագրերից մեկում գրում էր. «Գաղտնի ընկերության, այսպես կոչված, «Նարոդնայա վոլյա» կուսակցության ղեկավար խմբակի անդամների կողմից Օդեսայում կազմակերպված ընդհատակյա տպարան հայտնաբերելու գործի առթիվ անցյալ դեկտեմբերին կատարված հետաքննության միջոցին տեղեկություններ էին ստացվել, որ Կովկասում վերջին երկու տարվա ընթացքում ծագել են մի քանի սոցիալիստական խմբակներ, որոնք սերտ հարաբերության մեջ են նույն տեղում, հայ բնակչության որոշ շրջանում գոյություն ունեցող ազգային բնույթի քաղաքական խնդիրներ հետապնդող ընկերությունների հետ: Այդ տեղեկությունների մեջ հիշված է ոմն Տեր-Գրիգորյանի անունը, որը միջնորդ է հանդիսանում այս և այն երանգավորումն ունեցող խմբակների միջև»[2]: Խոսելով այս նույն խնդրի մասին՝ Կ. Պոլսի ռուսական դեսպան Նելիդովը ավելի ուշ վկայում էր, թե հայ ազատագրական շարժման գործիչները «համակված են 1870-ական թթ. վերջերի մեր նիհիլիստների ֆանատիզմով»[3]:

Կապերն ու գաղափարական ազդեցությունները, իսկապես առկա էին, քանի որ ռուս և հայ ազատագրական շարժումները ունեին մի շարք ընդհանուր գծեր: Ընդհանուր էր ամենից առաջ այն, որ թե՛ Ռուսաստանում, և թե՛ Արևմտյան Հայաստանում ոտքի էին ելել ճնշված ու հարստահարված ժողովրդական խավերը: Ընդհանուր էր նաև այն, որ և՛ ռուսական հեղափոխության, և՛ հայ ազատագրական շարժման գլուխ էր կանգնած ժողովրդական զանգվածների շահերը արտահայտող հեղափոխական-դեմոկրատական մտավորականությունը: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ ազատագրական շարժման մեջ առանձնապես ակտիվ դեր ունեցավ կովկասահայ, ավելի ճիշտ, ռուսահայ դեմոկրատական մտավորականությունը, այսինքն նրա այն մասը, որ գտնվում էր ռուս հեղափոխական շարժման ազդեցության տակ:

Հայ ժողովրդի ազատագրական շարժման վրա զգալի ազդեցություն են թողել նաև բալկանյան ժողովուրդների և մասնավորապես բուլղար ժողովրդի հակաօսմանյան ազատագրական շարժումները: Թուրքական բռնապետության դեմ ուղղված բուլղար ժողովրդի հերոսական պայքարը խորապես ոգևորել է հայ ժողովրդին և նրա դեմոկրատական մտավորականությանը:

1 Մ. Ներսիսյան. Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում:

2 ЦИАМ, ф. Департамент полиции, 3-е делопроизводство, д. 700, л.1.

3 ՀՀ ՆՊ ՊԿԱ, քաղվածքների բաժին, գ. 51, թ. 16:

Երկու ժողովուրդների՝ օսմանյան բռնակալության դեմ այս ընդվզումները կազմում էին մշակութային և տնտեսական շատ ավելի բարձր զարգացում ունեցող հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի բաղկացուցիչ մասը: «Իրենց տիրապետության հենց սկզբից Թուրքերը Բուլղարիայում հաստատեցին ռազմա-ավատատիրական բռնակալական ռեժիմ՝ ռազմա-հողատիրական համակարգով: Օսմանյան ավատատեր զինվորականները (սիփահի) զավթեցին լավագույն հողերը, բուլղարացիներին դուրս մղեցին քաղաքներից և ազգաբնակչությանը վերածեցին ռայայի՝ ձգտելով արմատախիլ անել բուլղարացիների մեջ ոչ միայն ազգային ինքնագիտակցությունը, այլև բուն «բուլղարացի» անվանումը»[1]:

Բուլղարական ազատագրական շարժման ականավոր գործիչներ Գեորգի Ռակովսկու, Վասիլ Լևսկու և Խրիստո Բոտևի հեղափոխական գործունեությունը, 1876 թ. ապրիլյան զինված ապստամբությունը համակրանքով էր ընդունվում և լայնորեն լուսաբանվում ժամանակի առաջավոր հայ պարբերական մամուլի էջերում: Այդ ուղղությամբ առանձնապես եռանդուն գործունեություն ծավալեց Գր. Արծրունու «Մշակ» լրագիրը: Նրա էջերում մերկացվում էր Թուրք նվաճողների վանդալիզմը, դրվատվում բուլղարների հերոսական պայքարը հայրենիքի ազատության համար և կոչ էր արվում արևմտահայությանը՝ հետևել բախտակից ժողովրդի օրինակին: Թերթը բարձր գնահատական տվեց բուլղար ժողովրդի ազատագրական պայքարին, համարելով այն քաղաքակրթության պայքար բարբարոսության դեմ: Հրապարակվեցին հայերեն լեզվով մի շարք գրքույկներ հերոսական ապստամբության ու նրա ղեկավար գործիչների մասին, կազմակերպվեցին ապստամբներին օգնող հատուկ հանձնաժողովներ, տեղի ունեցավ հանգանակություն, որին մասնակցեցին հայ հասարակության լայն խավերը:

Բուլղար ժողովրդի զինված պայքարը ջերմորեն ընդունվեց արևմտահայության մեջ: Հասարակության որոշ շրջաններում առաջացավ այն միտքը, որ եթե չբարելավվի հայության վիճակը, ապա պետք է զենքի դիմել բուլղարների օրինակով: Բնորոշ է այդ տեսակետից հետևյալ փաստը: 1876 թ. Էջմիածնի կաթողիկոսը ստանում է իրեն հասցեագրված մի դիմում-խնդրագիր, որի տակ ստորագրել էին 4000-ի չափ արևմտահայեր: Դիմումի հեղինակները, նկարագրելով իրենց ծանր վիճակը, խնդրում էին կաթողիկոսին գործնական քայլեր անել իրենց դրությունը բարելավելու համար, այլապես, ասում էին նրանք, մենք կապստամբենք բուլղարների նման: «Վէհափառ հայր, եթէ ոչ լինիցի վախճան ցաւոց մե-

1 А. А. Ровняков. В борьбе за свободу. Ленинград. 1980, с. 7.



րոց,— գրում էին գանգատարկուները,— եթէ տեսցեն բաւեսցեն գերութեանս դառնալից աւուրք, եթէ դեռևս լացցեն հարսունք զիւրեանց նորատի փեսայս, ո՛հ, մի լիցի մեզ հասանել այնմ աւուր, այլ բաբէ, օրինակ առաջի աչաց է մեր, զպուլկարացն ասեմ, զայն օրինակ Թօթափեսցուք և մեք զլուծ գերութեանս, հեզմամբ արեան մերոյ»[1]:

Բուլղարիայում ապրող հայերից շատերը բուլղար հայրենասերներին ցույց են տվել զգալի օգնություն և անգամ գործուն մասնակցություն են ունեցել նրանց ազատագրական պայքարին: Այդպիսիների թվին են պատկանել, օրինակ, Երանոս Երանոսյանը, Հովհաննես Ալաջաջյանը, Գևորգ Ռուսչուկուլյանը, Խաչեր Վարդազարմյանը, Հարություն Գետիկյանը, Կարապետ Փափազյանը և ուրիշներ[2]: 1877–1878 թթ. ռուս-Թուրքական պատերազմի ժամանակ Բուլղարիայի հայ բնակչությունը հնարավոր բոլոր միջոցներով օգնել է Թուրքական ագրեսորների դեմ կռվող ռուսական զորքերին ու բուլղար աշխարհազորայիններին: Ի դեպ, այդ ժամանակ Բալկաններում գործող ռուսական զորամասերում գտնվում էին բազմաթիվ հայ զինվորականներ ու կամավորներ, որոնց մի մասը հերոսաբար ընկավ պատերազմի դաշտում*:

Մենք արդեն խոսեցինք այն մասին (տե՛ս չորրորդ գլուխը), որ 1870-ական թթ. Բ. Դռան կողմից Դիարբեքիր աքսորված բուլղար հեղափոխականների և տեղի հայերի միջև հաստատվել են բարեկամական ու քաղաքական կապեր: Պահպանվել են բազմաթիվ վկայություններ այն մասին, որ Դիարբեքիրի հայերը, ինչպես նաև տեղի քրիստոնյա մյուս համայնքների ներկայացուցիչները (հույները, քրիստոնյա արաբները) ջերմ վերաբերմունք են ունեցել բուլղարների նկատմամբ, ամեն կերպ աշխատել են նյութական ու բարոյական օգնություն ցույց տալ խիստ ծանր պայմաններում գտնվող աքսորյալներին: Կատարվել են նաև այլ քայլեր: Աքսորական Մինչո Ստոյանովի հուշերում, օրինակ, ասվում է, որ 1876 թ. ցմահ բանտարկության դատապարտված բուլղարները ցանկացել են փախուստի դիմել և այդ նպատակով հայ հայրենասերների միջոցով ձեռք են բերել հրացաններ, ատրճանակներ ու սրեր, ապա միասին կազմել են փախուստի ծրագիր, ուսումնասիրել ճանապարհները և այլն: Նախատեսված է եղել անցնել Արևելյան Հայաստան և հասնել Էջմիածին[3]: Ծրագիրը չի իրականացվել, բայց հայ և բուլղար հայրենասերների ջերմ

1 Մատենադարան, Կաթ. դիվան, 1876, թղթ. 228, վավ. 23:

2 Տե՛ս С. В. Овнанян. Армяно-болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во второй половине XIX в., с. 86-89.

3 Տե՛ս К. Вызвызова-Каратеодорова. Армяно-болгарские связи 70-х годов XIX века по данным одной болгарской рукописи.– ИФЖ, 1984, N 1, с. 143-151.

բարեկամական հարաբերությունները շարունակվել են: Տառապյալ աքսորյալները ազատվեցին միայն 1878 թ. երբ սուլթանական կառավարությունը ստիպված եղավ հայտարարել համաներում: Նկատենք, որ բուլղար աքսորականները բազմիցս շնորհակալություն են հայտնել հայերին այն բազմակողմանի օգնության համար, որ նրանք ցույց տվեցին իրենց՝ «Դիարբեքիրի գնդանում» գտնված ծանր օրերին: Հետաքրքիր է, որ հրապարակորեն, թերթի միջոցով նման շնորհակալություն է հայտնել նաև բուլղարական ազգային-ազատագրական շարժման նշանավոր ղեկավարներից մեկը՝ Խրիստո Բոտևը:

Արևմտյան Հայաստան աքսորված բուլղար ապստամբների ու հայ բնակչության կապերի ու հարաբերությունների մասին հետաքրքրական տեղեկություններ կան նաև փաստաթղթերի այն ժողովածուում, որ լույս է տեսել 1946 թ. Սոֆիայում, բուլղարերեն, պատմաբան Ստեֆան Կարակոստովի խմբագրությամբ[1]: Այդ նույն հարցի վերաբերյալ հայկական աղբյուրներից պետք է հիշել Տիգրան Մկունդի բավական հետաքրքիր աշխատությունը[2]:

Հայ իրականության մեջ լայն արձագանք գտավ նաև իտալական ազգային-ազատագրական պայքարը: Այն ոգևորել է հայ ժողովրդի հայրենասեր-դեմոկրատական մտավորականության շատ ներկայացուցիչների[3]: Հայտնի է, որ Միքայել Նալբանդյանը ամենայն ուշադրությամբ հետևել է այդ շարժմանը: Ս. Թագվորյանի նամակը Նալբանդյանին, ինչպես և վերջինիս մոտ գտնված ծածկագիր բառարանը և մի շարք այլ փաստաթղթեր, որոնց մասին արդեն խոսել ենք, ցույց են տալիս, որ Նալբանդյանը փորձեր է արել քաղաքական կապեր հաստատել Գարիբալդիի և նրա զինակիցների հետ: Այդ տարիներին, ինչպես հայտնի է, ծրագրվում էր ստեղծել հեղափոխական-ազատագրական մի այնպիսի հզոր շարժում, որի մեջ ընդգրկվեին ոչ միայն սլավոնները, այլև իտալացիները, հայերը և մյուս ժողովուրդները:

Իտալական ազատագրական շարժման մասին գրեցին «Հյուսիսափայլը», «Մեղուն», «Արևմուտքը», «Ծաղիկը», «Արևելյան մամուլը», «Արշալույս Արարատյանը», «Հայկական աշխարհը», «Մշակը» և այլ թերթեր ու հանդեսներ[4]: Ջնչին բացառությամբ նրանք ողջունեցին իտալացիների հերոսական ապստամբությունը: «Հյուսիսափայլում» 1861 թ. լույս տեսավ Միքայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը».

Մեր հայրենիք թշվառ, անտեր
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իր որդիքը արդ կանչում է,
Հանել իր վրեժ քեն ու ոխ:

Մեր հայրենիք շղթաներով,
Այսքան տարի կապկապած,
Իր քաջ որդոց սուրբ արյունով
Պիտի լինի ազատված...

Ջերմ տողեր են գրել նաև Սմբատ Շահազիզը, Ստ. Ոսկանը, Հարություն Սվաճյանը, Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Ռափայել Պատկանյանը, Գր. Չիլինկիրյանը և ուրիշներ: Ընդգծվում էր այն, որ բախտակից իտալացիների նման հայերը ևս պետք է պայքարի ելնեն իրենց ազատության համար: 1861 թ., երբ նոր հաջողությունների էր հասել Իտալիայի միավորման գործը, զմյուռնահայ մի քանի երիտասարդ մտավորականներ այցելում են Զմյուռնիայի իտալական հյուպատոսին և շնորհավորում նրան: Նրանցից մեկը ընդգծում է, որ Իտալիայի օրինակը մեծապես ոգևորում է ճնշված հայ ժողովրդին, քանզի «Ազատ և միաւորեալն Իդալիա՝ մխիթարութիւն և յոյս մըն է լքեալ ազգաց, որոնք չեն կրնար իրենց համակրութիւնը չյայտնիլ»[1]:

Դրանից առաջ, 1859 թ. Ստ. Ոսկանը Փարիզում ուշադրությամբ հետևում էր իտալական ազատագրական շարժմանը և դրա հաջողության համոզմունքով էր հուսադրում իր ընթերցողին: «Վայրկեան մը չենք տարակուսիր և յառաջմէ կըսենք,– գրում էր նա,– որ քիչ ատենէն Իդալիան իսպառ պիտի ազատի օտարին անտանելի լուծէն»: Ոսկանը ուղղակի ակնարկում էր իտալական օրինակի կարևորությունը հայերի համար. «Իդալացիք, աշխարհիս ցույց կուտաք, որ մի և անկախ հայրենիքի արժանի էք. պիտի յիշուիք դուք իբրև օրինակ և ձեր անունը կխամեռ ազգերու սիրտը պիտի բժշկէ»[2]:

Հետաքրքիր է, որ իտալական Վերածննդի (Ռիսորջիմենտոյի) և ազատագրական շարժման մի շարք ներկայացուցիչներ իրենց հերթին նշում էին այն ընդհանրությունները, որոնք գոյություն ունեն երկու «քույր ժողովուրդների» միջև: Դեռևս 1843 թ. Նիկոլո Տոմազեոն, որ

1 Տե՛ս *Ст. Каракостов.* Диарбекирски заточеници... София, 1946.
2 *Տիգրան Մկունդ.* Ամիտայի արձագանքներ:
3 *Ա. Ս. Բաբայան.* Իտալական ազատագրական շարժումները և հայերը.– ՊԲՀ, 1971, N 3, էջ 190:
4 *Հ. Ա. Ասմարյան.* Իտալական ազգային-ազատագրական շարժման արձագանքները հայ պարբերական մամուլում.– ՊԲՀ, 1979, N 2:

1 «Սէր», 1861, N 17:
2 «Արեւմուտք», 1859, N 10, էջ 76-77:

Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» թարգմանել էր իտալերենի, գրել է. «Մեր երկու ազգերին, որոնք երբեմն տիրողներ էին, հետագայում տիրեցին և բաժան-բաժան արեցին: Նրանք մի որոշ ժամանակ կորցրին նույնիսկ իրենց լեզվի անաղարտությունը, և այժմ տանջալի սիրով նորից ձեռք են բերում այն: Երանի թե Հայաստանի հին հիշատակարանների այս թարգմանությունները սիրո նոր կապ հաստատեն իրարից հեռու, բայց հավատով ու վշտով համանման քույր ժողովուրդների միջև»[1]:

Իտալական ազգային-ազատագրական պայքարը, անկասկած, նոր թափ հաղորդեց հայրենասիրական շարժմանը:

1860-ական թթ. դեմոկրատական շրջաններում արձագանք գտավ նաև լեհական ազատագրական շարժումը: Դեռևս 1861 թ. Հ. Սվաճյանի «Մեղու» պարբերականը հրապարակեց Լեհաստանին նվիրված Լամընեի արձակ բանաստեղծությունը՝ «Մաղթանք վասն Լեհաստանի» վերնագրով[2]:

Լեհաստանի խնդրին, ինչպես հայտնի է, անդրադարձավ Մ. Նալբանդյանն իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ: Գերցենի «Կոլոկոլի» տվյալներով, 1863 թ. հայ ուսանողության մեջ համակրական ցույց է տեղի ունեցել լեհական շարժման կապակցությամբ[3]:

Քաղաքական կապեր և ավելի որոշակի հարաբերություններ ստեղծվեցին արևմտահայերի ու հարևան ժողովուրդների՝ ասորիների, քրդերի ու մասամբ փոքրասիական արաբների միջև: Հայտնի է, որ ենթարկված լինելով թուրք սուլթանների ու փաշաների դաժան կեղեքումներին ու հարստահարություններին, նրանք ևս բազմիցս դիմել են զենքի՝ օտար տիրապետությունից ազատվելու համար:

Այսպես, 1850 թ. սուլթանական տիրապետության դեմ ապստամբեց Սիրիայում բնակվող մոտուալի ցեղը: Ապստամբությունը մեծ ծավալ ընդունեց և տևեց մոտ երկու տարի, բայց վերջ ի վերջո դաժանորեն ճնշվեց Մուստաֆա փաշայի հրամանատարությամբ գործող թուրքական բանակի կողմից[4]: Նույն թվականին հուզումներ բռնկվեցին Հալեպում՝ տեղի արաբ բնակչության մեջ[5]: 1852 թ. դրուզները Սիրիայում բարձրացրին ապստամբություն, որի դեմ ուղարկվեց հատուկ պատժիչ էքսպեդիցիա: Սուլթանական զորքերին մեծ դժվարությամբ հաջողվեց ճնշել ապստամբությունը[1]: 1854 թ. սկսվեց թուրքական տիրապետության դեմ ուղղված քրդական խոշոր շարժում Եզդանշիրի գլխավորությամբ: Ապստամբությունը հսկայական ծավալ ստացավ և տարածվեց Բաղդադից մինչև Վան: Հետաքրքիր է, որ ազատագրական բնույթի քրդական այդ շարժմանը մասնակցում էին ասորիները, հույները և արաբները[2]: Քրդական այդ հզոր շարժումը թուրքական կառավարությունն ի վիճակի եղավ ճնշել Անգլիայի ու Ֆրանսիայի օգնությամբ: Սիրիայում բնակվող մի շարք ցեղերի մեջ հուզումներ բռնկվեցին 1860–1862 թթ.: Սուլթանական Թուրքիայի դեմ արաբները զինված ելույթներ ունեցան 1870 և 1875 թթ.: Գնդապետ Զելենոյը 1875 թ. Կոստանդնուպոլսից ցարական կառավարության զինվորական մինիստրին գրում էր, թե «դեռևս չեն հնազանդվել Բաղդադի և Արաբիայի քրդերը և արաբները: Հեջազը և Եմենը կրակի մեջ են»[3]: 1878 և 1880 թթ. տեղի ունեցան քրդական նոր շարժումներ:

Մենք թվեցինք միայն մի քանիսը ազատագրական այն շարժումներից, որոնք ծավալվեցին Փոքր Ասիայում սուլթանական կառավարության դեմ: Արդյոք եղե՞լ են կապեր այդ շարժումների և հայ ազատագրական պայքարի միջև: Պատմական նյութերի ուսումնասիրությունը բերում է այն եզրակացությանը, որ առաջադրված հարցին պետք է տալ դրական պատասխան:

Արդեն Ղրիմի պատերազմի տարիներին ռուսական բանակի շարքերում թուրքական զորքերի դեմ կռվում էին նաև հայ և քրդական կամավորական ջոկատներ: Պատերազմի Կովկասյան ճակատի ռազմական գործողությունների մասնակից գեներալ Լիխուտինը վկայում է, որ Արևմտյան Հայաստանի հայ, քուրդ և ասորի բնակիչները ողջունում էին ռուսական բանակի հաղթանակները և «կանչում էին մեզ (ռուսական զորքերին – Մ. Ն.) իրենց մոտ՝ սպասելով որպես փրկիչների»[4]: Հայերի և քրդերի 1855 թ. իրական համագործակցության մասին են վկայում նաև մի շարք այլ ժամանակակիցներ: Այսպես, այդ թվականին Արդեբիլի արքեպիսկոպոս Իսահակ Սաթունյանցին հայտնում էին, որ Հեքյարի գավառի հայ, քուրդ և ասորի բնակիչները ռուսական զորքերի առաջխաղացման դեպքում պատրաստ են միացյալ ելույթ ունենալու թուրքական կառավարության դեմ՝ գործի մեջ դնելով մի քանի տասնյակ հազար կամա-

1 N. Tommaséo. Storia di Agatangelo. Venezia, S. Lazzaro, 1843. p. XXIII.
2 «Մեղու», 1861, N 138, էջ 156-157:
3 Колокол, М., 1865, N 109.
4 РГВИА, ф. ВУА, д. 54396, л. 26.
5 Նույն տեղում, թ. 36:



1 Նույն տեղում, գ. 50323, թ. 329-356:
2 П. И. Аверьянов. Курды в войнах России с Персией и Турцией, с. 148-149.
3 РГВИА, ф. ВУА, д. 56518, л. 6.
4 М. Лихутин. Русские в Азиатской Турции, с. 222.

վորներ[1]: Ասորիները ոչ պակաս ճնշումների ու հարստահարությունների էին ենթարկվում թուրքական սուլթանների ու փաշաների կողմից: 1853–1856 թթ. Արևելյան պատերազմի տարիներին, օրինակ, նրանք գաղտնի կապեր հաստատեցին ռուսական զորքերի հետ և օգնություն խնդրեցին սուլթանական արգահատելի լուծը թոթափելու համար[2]: 1855 թ. մայիսին ասորիների պատրիարք Աբրահամ Մարշիմոնը ռուսական զորքերի Կովկասյան գործող կորպուսի հրամանատար գեներալ Վ. Բեհբութովին գրած նամակում ասում էր, որ ասորիները, հայերը, ինչպես նաև քրդերը պատրաստ են միանալու ռուսական զորքերին[3]: Նույն պատրիարքը 1855 թ. գրում էր գեներալ Մուրավյովին. «Ես հաստատ համոզված եմ, որ մենք ձեզ հետ միասին եղբայրներ ենք... Այդ պատճառով էլ, երբ դուք կշարժվեք դեպի Վան, ես 5000 լավ զինված մարդիկ կառանձնացնեմ, որպեսզի պատերազմի ամբողջ ժամանակամիջոցում արյուն թափեն Ռուսաստանի փառքի համար»[4]: Խոսելով ռուսական զորքերի հրամանատարությանը գրած այդ պատրիարքի նամակների մասին, Պ. Ի. Ավերյանովը գրում էր, թե նամակները «վկայում են քրդերի ու քրիստոնյաների զարմանալի միասնության մասին, միասնություն՝ ուղղված ընդհանուր թշնամի՝ թուրքերի դեմ»[5]:

Մենք արդեն ասացինք (տե՛ս աշխատության երրորդ գլուխը), որ 1862 թ., երբ Վանի հայ բնակչությունը զենք բարձրացրեց թուրքական պետության դեմ, ապա նրան օգնության եկավ գավառի հայ և քուրդ գյուղացիությունը[6]: 1880 թ., ինչպես հայտնում էր «Մշակը», արևմտահայերի ազատագրական շարժման մեջ մասնակցություն ունեցան նաև քրդական մի քանի ցեղեր[7]:

Պետք է նկատել, որ ազատագրական շարժման գաղափարներով տոգորված արևմտահայ մտավորականության մի շարք ներկայացուցիչներ որոշ քայլեր կատարեցին հայ-քրդական բարեկամության ու քաղաքական կապերի հաստատման ուղղությամբ: Այս տեսակետից բնորոշ է Հ. Սվաճյանի և նրա համախոհների գործունեությունը: 1860 թ. Հ. Սվաճյանը, Մ. Մամճյանը և մյուսները Կ. Պոլսում կազմակերպեցին մի ընկերություն, որ կրում էր «Բարեկարգություն արևելյան» անունը: Ընկերության նպատակն

1 AKAK. T. XI, док. 479.
2 Նույն տեղում, փ. 350:
3 Նույն տեղում, փ. 351:
4 Նույն տեղում, փ. 140:
5 *П. И. Аверьянов*. Курды в войнах России с Персией и Турцией, с. 155.
6 «Փարիզ», 1862, N 76:
7 «Մշակ», 1880, N 153:



էր գիր-գրականություն տարածել քուրդ ժողովրդի մեջ, բարեկամական հարաբերություններ հաստատել քրդական շրջանների հետ[1]:

Հայ-քրդական քաղաքական կապեր ստեղծելու ուղղությամբ փորձեր կատարվեցին նաև 1870–1880-ական թթ.: Ինչպես պատմում է հայականավոր բանասեր Ստեփան Մալխասյանը, 1880-ական թթ. սկզբներին հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներից մի քանիսը Անդրկովկասից անցնելով Թուրքիա, գաղտնի բանակցություններ են վարել քուրդ Սմկո բեյի հետ, ընդ որում, վերջինս «խոստացել է քրդերին ոտքի հանել հայերի հետ միասին սուլթանական կառավարության դեմ մաքառելու»[2]: Հայ-քրդական համաձայնության վերաբերյալ իր ժամանակ գրեց Ս. Պետերբուրգում հրատարակվող «Գոլոս» թերթը: Նույն խնդրի մասին էր վկայում նաև ցարական կառավարության ներքին գործերի մինիստր կոմս Դ. Տոլստոյը ցար Ալեքսանդր III-ին ուղղած իր՝ 1883 թ. օգոստոսի 11-ի թվակիր զեկուցագրում: Խոսելով Երևանում գործող քաղաքական խմբակների անդամների մոտ կատարված խուզարկությունների մասին, Դ. Տոլստոյը գրում էր. «...վերջին երկու խուզարկությամբ հաստատված է, որ հայերի ու քրդերի միջև համաձայնություն գոյություն ունի՝ հարկ եղած դեպքում զինված օգնություն ցույց տալու հայկական շարժմանը»[3]:

Հայերի ու քրդերի միջև «հաղորդակցություն և միաբանություն» հաստատելու ուղղությամբ որոշ քայլեր ու փորձեր են կատարել նաև Մ. Խրիմյանը, Գ. Սրվանձտյանցը, Հ. Նորատունկյանը և ուրիշներ[4]: Սակայն, դժբախտաբար, դրանք ընդհանուր առմամբ անհաջող ելք ունեցան: Օսմանյան կառավարությունը Հայկական հարցի լուծումը կանխելու և հայ ազատագրական շարժումը ճնշելու նպատակով դիմեց սադրիչ բոլոր միջոցներին, որպեսզի խափանի հայ-քրդական միությունը: Կաշառելով ցեղապետներին, տալով նրանց «ազատ գործելու» հնարավորություն ու արտոնություն, Բ. Դուռը կարողացավ արհեստականորեն թշնամանք ստեղծել երկու ժողովուրդների միջև: Շատ աշիրեթապետներ փաստորեն դարձան արյունարբու սուլթանի կամակատարներ: Սուլթան Համիդի կողմից «համիդիե» քրդական ոչ կանոնավոր հեծելազորի ստեղծումը նպատակ ուներ ոչ միայն ամրացնել ռուս-թուրքական սահմանները քրդերի միջոցով, այլև տնտեսապես և ֆիզիկապես ջլատել հայերին, ոչնչացնել օսմանյան բռնակալության դեմ նրանց դաշնակցության կամ համատեղ պայքարի ամեն մի հնարավորություն:

1 *Մ. Նալբանդյան*. Անտիպ երկեր, էջ 465:
2 ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, պրոֆ. Լեոյի ֆոնդ:
3 ЦИАМ, ф. Департамент полиции, 3-е делопроизводство, д. 700, л. 31.
4 Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԳ, էջ 346:

*Կասկած չկա, որ եթե հաստատվեր հայ-քրդական միություն, ապա դրանից հավասարապես կշահեր ինչպես հայ, այնպես էլ քրդական ազատագրական պայքարը:*

*Բարեկամական կապեր հաստատվեցին հայերի և ասորիների միջև:*

*Ասորի ժողովուրդը, որ նույնպես ենթարկվում էր բիրտ ճնշումների ու կեղեքումների, քանիցս ապստամբական ելույթներ ունեցավ սուլթանական բռնապետության դեմ: Գրեթե բոլոր դեպքերում ապստամբ ասորիներն աշխատում էին միանալ հայերի հետ: Այսպես, օրինակ, 1878 թ. Արևմտյան Հայաստանում սկսված ազատագրական շարժման մեջ ընդգրկվեց նաև ասորի բնակչությունը*: 1880 թ. ասորիները զինված ելույթ ունեցան թուրքական պետության դեմ և շարժվեցին Վան՝ տեղի հայ ապստամբներին միանալու համար: Այդ ժամանակ, ինչպես հայտնում են ժամանակի թերթերը, ասորիների պատրիարքը արտասանել է մի ճառ, որտեղ կոչ է արել հայերի հետ միասին «կյանքի ու մահու կռիվ մղել» սուլթանական բռնապետության դեմ[1]:*

*Կան տվյալներ այն մասին, որ հայկական ազատագրական շարժմանը միացել են նաև արաբներն ու թուրքմենները: Հենվելով «Գոլոս» թերթի վրա, «Մշակը» 1880 թ. սեպտեմբերին արևմտահայերի ապստամբության կապակցությամբ գրում էր. «Հայ ապստամբների հետ միացել են արաբական շատ ցեղեր և Հալեպի վիլայեթի թուրքմենները, որոնց առաջնորդում էր Թուրքիայի մեջ հայտնի Խոզան-օղլի Ահմեդի որդին»[2]: Ինչպես արխիվային նյութերում, այնպես էլ մամուլում կան տեղեկություններ այն մասին, որ արևմտահայերի ազատագրական շարժմանը երբեմն մասնակցել են նաև լազերը:*

*Պետք է ենթադրել, որ որոշ կապեր եղել են նաև հայերի ու հույների (մանավորապես փոքրասիական) միջև: Բայց առայժմ դժվար է խոսել այդ մասին, քանի որ մենք դեռևս չունենք համապատասխան ճշգրիտ տվյալներ: Այդ հարցը ցարդ չի ենթարկվել հատուկ քննության:*

*Ավելորդ չենք համարում նկատել, որ հայ ազգային ազատագրության հետ կապված հարցերը լայն արձագանք գտան հարևան Վրաստանի պարբերական մամուլում: Քանիցս հանդես եկավ վրաց հայտնի «Իվերիա» ամսագիրը**: Այսպես. 1883 թ. այնտեղ տպագրվեց մի ծավալուն հոդված, որի հեղինակ Պետրե Ումիկաշվիլին նախ պատմական մի համառոտ ակնարկ էր գցում Հայաստանի հեռավոր անցյալի վրա, խոսում հայ և վրաց ժողովուրդների դարավոր եղբայրական կապերի և բարեկամության մասին, ապա ցույց տալիս, թե ինչպիսի ծանր վիճակ է ապրում թուրքական տիրապետության տակ գտնվող արևմտահայությունը: «Հայ*

1 «Մեղու Հայաստանի», 1880, N 72:

2 «Մշակ», 1880, N 153:



*անզեն ժողովուրդը,– գրում էր Ումիկաշվիլին,– շարունակում է անասելի զրկանքներ կրել և հալածվել… Թուրքահայաստանի հայ աշխատավոր ժողովուրդն իր աշխատածի տերը չէ, նրա աշխատանքը կամ տեղական իշխանավորներն են տանում և կամ կառավարությունը: Հայ աշխատավոր ժողովուրդը գտնվում է անասելի աղքատության մեջ»[1]:*

*«Իվերիայի», հոդվածագիրն այն կարծիքն էր հայտնում, թե արևմտահայ ժողովուրդը կարող է ազատագրվել միայն Ռուսաստանի օգնությամբ: Բուլղարիան ազատագրվեց Ռուսաստանի ջանքերով, նույն ճանապարհով պետք է ազատագրվի նաև Արևմտյան Հայաստանը, որովհետև արևմտաեվրոպական պետությունները, և մասնավորապես. Անգլիան, պաշտպանում են Թուրքիային: Հոդվածագիրը, ի վերջո, հույս էր հայտնում, թե մի ժողովուրդ, որ ունի բազմադարյան պատմություն ու մշակույթ և դիմացել է բազմաթիվ արհավիրքների, վաղ թե ուշ ձեռք կբերի իր ցանկացած ազատությունը:*

*Հայ ազատագրական պայքարին արձագանքող վրացական առաջավոր պարբերականների շարքին է պատկանում նաև «Դրոեբա» նշանավոր թերթը, որը մի շարք հոդվածներ տպագրեց նշված խնդրի մասին*: 1880 թ. մայիսի 27-ին, օրինակ, լույս տեսավ Իվանե Մաչաբելու «Հայերի բախտը» վերնագիրը կրող հոդվածը: Հեղինակը խոսում էր Բեռլինի կոնգրեսից հետո արևմտահայերի համար ստեղծված քաղաքական ծանր դրության մասին և խիստ քննադատության ենթարկում եվրոպական պետություններին ու հատկապես Անգլիային, նշելով վերջինիս դիվանագիտական խարդախ խաղերը Հայկական հարցում:*

*Նույն թերթը 1883 թ. մայիսի 24-ին հատուկ առաջնորդող հոդված նվիրեց արևմտահայերի հարցին: Հոդվածը նշում էր, որ թեպետ Բեռլինի կոնգրեսից հետո տարիներ են անցել, բայց սուլթանական բռնակալության տակ հեծող հայ ժողովուրդը ոչինչ չստացավ, ոչ մի ձևով չբարեփոխվեց նրա դրությունը: Եվրոպական պետությունները, չնայած նրանց հավաստիացումներին, ոչինչ չեն անում Հայկական հարցի լուծման ուղղությամբ և միայն հետապնդում են նվաճողական քաղաքականություն Մերձավոր Արևելքում[2]:*

*Վրաց առաջավոր մամուլն, այսպիսով, համակրանքով ու ջերմությամբ էր խոսում հայ ազատագրական շարժման մասին ու անկեղծ ցավ արտահայտում արևմտահայության ծանր վիճակի առթիվ:*

1 «Իվերիա», Թիֆլիս, 1883, N 7-8 (վրաց.):

2 «Դրոեբա», Թիֆլիս, 1883, մայիսի 24, N 96 (վրաց.):

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 1

*Օսմանյան կայսրության մեջ ծավալված ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ թշնամական դիրք բռնեցին արևմտյան պետությունները: Ելնելով Մերձավոր Արևելքում վարած իրենց նվաճողական քաղաքականության շահերից, նրանք հանդես եկան ազատագրական այդ շարժումների դեմ և աշխատեցին պահպանել սուլթանական բռնակալության տիրապետությունը նվաճված ժողովուրդների վրա: Այդ պետությունների թվում պետք է հիշել նախ և առաջ Անգլիային, Ֆրանսիային, Ավստրիային ու Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին:*

*Անգլիական բուրժուազիան արդեն XVIII դարի վերջերից սկսած, հանդես եկավ որպես միջազգային հետադեմ ուժ և հեղափոխական ազատագրական շարժումների թշնամի, որպես փոքր, անպաշտպան ժողովուրդների կողոպտիչ ու հարստահարող: Այս հանգամանքը նշել է դեռևս Բայրոնն իր հռչակավոր «Ջայլդ Հարոլդում»: Խոսելով խարդախ, նվաճողական քաղաքականություն վարող Ալբիոնի մասին, Բայրոնը գրում էր.*

И мне гласить на языке британца,
Что он Афин слезами упоен?
Покрыть Европу краскою румянца,
Сказать, что беззащитных давит он?
.............................................................
Сам взялся за грабеж такого рода,
Которым брезгали деспоты и годы![1]

*Նվաճելով գաղութներ աշխարհի գրեթե բոլոր մասերում և իր ազդեցության տակ առնելով բազմաթիվ երկրներ, Անգլիան դիմեց ամեն միջոցի՝ ճնշելու համար ժողովուրդների ինչպես սոցիալական, այնպես էլ ազգային-ազատագրական շարժումները: «Անգլիան,– գրում էր Կ. Մարքսը 1848 թ.,– կարծես թե մի ժայռ է, որին դիպչելով փշրվում են հեղափոխության ալիքները»[2]:*

---

1 *Байрон.* Избранные произведения в одном томе. М., 1935, с. 41.

2 *К. Маркс и Ф. Энгельс.* Сочинения. Т. 6, 1957, с. 159.



*Անգլիական բուրժուազիան, որ հանդես էր գալիս Օսմանյան կայսրության «պաշտպանի» դիմակի տակ, իրականում ձգտում էր այն բանին, որպեսզի աստիճանաբար Թուրքիան գաղութ դարձնի և ապա նրա միջոցով իրականացնի իր զավթողական քաղաքականությունը Կովկասի և Բալկանների նկատմամբ: Գլխավորապես հենց այս պատճառով էր, որ նա Մերձավոր Արևելքում վարում էր* status quo-*ի տխրահռչակ քաղաքականությունը, քաղաքականություն, որի հիմնական նպատակներից մեկն էր ամեն կերպ պահպանել սուլթանական դեսպոտիզմի տիրապետությունը զենքի ուժով նվաճված ու հպատակեցված բազմաթիվ ժողովուրդների վրա: 1853 թ. Ֆ. Էնգելսը, անդրադառնալով Թուրքիայի նկատմամբ արևմտյան պետությունների և մասնավորապես Անգլիայի ու Ֆրանսիայի վարած հայտնի քաղաքականությանը, գրում էր. «Ի՞նչ է նշանակում այդ* status quo-*ն: Բարձրագույն Դռան քրիստոնյա հպատակների համար այդ նշանակում է միայն հավերժորեն կրել Թուրքիայի լուծը»[1]:*

*Այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրության կեղեքված ու հարստահարված ժողովուրդները հերոսական պայքար էին մղում իրենց ազատագրության համար, անգլիական կառավարությունն ամեն կերպ օգնում էր թուրքական սուլթաններին ու փաշաներին, որպեսզի նրանք ճնշեն ժողովուրդների ազատագրական այդ պայքարը: Փաստերն այս մասին այնքան պերճախոս ու հստակ են, որ անգամ անգլիական հեղինակները ստիպված են խոստովանել այդ: Այսպես, օրինակ, Էդուարդ Ֆրիմանը «Օսմանյան պետությունը Եվրոպայում» խորագրով իր աշխատության մեջ, որ լույս է տեսել Լոնդոնում 1877 թ., գրում էր, որ արևմտաեվրոպական պետություններն ամեն կերպ պաշտպանում են թուրքական սուլթաններին, աշխատում են ամրապնդել ու հավերժացնել ազգային ճնշումներն ու հարստահարությունները Օսմանյան կայսրության մեջ: «Այն ամենը, ինչ որ մի որևէ պետություն կարող է անել մյուս պետությանը օգնելու համար, կատարվել է Թուրքիայի համար, թեև այն ամենը, ինչ որ կատարվում է Թուրքիայի համար, կատարվում է հարստահարվող ազգությունների դեմ»: Արևմտաեվրոպական պետությունները, շարունակում է Ֆրիմանը, «չամաչեցին տրամադրել իրենց սպաներին պատժիչ զորամաս կազմելու համար, զորամաս, որի օգնությամբ հարստահարողները ճնշում են իրենց զոհերին»: Այդ պետությունները խրախուսեցին թուրքական սուլթաններին, «տրամադրելով նրանց փոխառություն, քաջ իմանալով, որ այդ դրամը բարբարոս թուրքական կառավարությունը ծախսելու է դաժան ակտեր կազմակերպելու համար, լավ իմանալով նույնպես, որ այդ դրամի տոկոսները կարող են վճարվել միայն հպատակ ազգու-*

---

1 Там же, т. 9, с. 31.

*թյունների անձանց նկատմամբ բռնության ու հարստահարման հնարավոր բոլոր ձևերն իրականացնելու հետևանքով»[1]:*

*Ֆրիմանի գրքում բերված է Կոստանդնուպոլսի անգլիական դեսպան Հենրի Էլլիոտի 1876 թ. սեպտեմբերի 4-ի նամակը՝ ուղղված արտաքին գործերի մինիստր կոմս Դերբիին: Այդ նամակում բացարձակ ցինիկությամբ խոսվում է այն մասին, որ, չնայած Բուլղարիայում Թուրքիայի կողմից կատարված ահռելի կոտորածներին, այնուամենայնիվ, պետք է օգնել ու պաշտպանել Թուրքիային, որովհետև, ինչպես պատճառաբանում էր նամակի հեղինակը, Անգլիան ղեկավարվում է ոչ թե «սենտիմենտալ զգացմունքներով», այլ իր ռեալ շահերով: Նամակում փորձ էր արվում արդարացնել թուրքական ջարդարարներին, չնայած ամբողջ աշխարհին արդեն հայտնի էր կատարված անցքերի էությունը: Խոսելով այն մասին, որ Անգլիայի շահերը պահանջում են ճնշել ազգային-ազատագրական շարժումները թուրքական կայսրության մեջ, Էլլիոտը գրում էր, որ Անգլիայի քաղաքականության վրա չի կարող ազդել այն հանգամանքը, որ թուրքական կառավարությունը համատարած ջարդեր է կազմակերպել Բուլղարիայում: Կոտորածը Բուլղարիայում «չի կարող լինել պատճառ, որպեսզի մենք հրաժարվենք մի քաղաքականությունից, որը բխում է մեր շահերից»[2]:*

*Կամ ահա մի ուրիշ օրինակ: 1821 թ., երբ թուրքական կառավարությունը կազմակերպեց հույների նոր կոտորած, Կ. Պոլսի դիվանագիտական ներկայացուցիչները որոշեցին այդ առթիվ բողոք ներկայացնել սուլթանին: Սակայն, ինչպես գրում է անգլիացի հեղինակներից մեկը, «մի պետություն հարմար գտավ ձեռնպահ մնալ և այդպիսով Բարձրագույն Դռանը ուղղված բողոքը անհետևանք դարձրեց: Այդ պետությունն Անգլիան էր»[3]:*

*Օսմանյան կայսրության կողմից ճնշված ժողովուրդների նկատմամբ հետադեմ քաղաքականություն էին վարում թե՛ պահպանողականները և թե՛, այսպես կոչված, լիբերալները: Անգլիական այդ երկու կուսակցություններն էլ, ինչպես նկատում է Ֆրիմանը, հավասարապես «մեղավոր են Արևելքի ճնշված ազգությունների հանդեպ»[4]: Այդ քաղաքականությունն անգլիական իշխող, ղեկավար շրջանների քաղաքականությունն էր:*

1 *E. Freeman.* The Ottoman Power in Europe. London, 1877, p. 204.
2 Նույն տեղում, էջ 251:
3 *L. Sergeant.* New Greece. London, 1878, p. 278.
4 *E. Freeman.* The Ottoman Power in Europe, p. 230.



*Անգլիական կառավարությունը հաճախ անմիջական մասնակցություն էր ունենում թուրքական բռնապետության դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումների ճնշման գործին: Այդպես վարվեց նա, օրինակ, 1866–1868 թթ. Կրետե կղզում բռնկված ապստամբության ժամանակ: Երբ թուրքական զավթիչները 1868 թ. անասելի գազանությամբ ճնշում էին Կրետեի հույն բնակչության ապստամբությունը, թուրքական ջարդարարների հետ միասին գործում էին անգլիական ռազմածովային ուժերի սպաները: Անգլիայի «հումանիզմի» մասին պարզ պատկերացում է տալիս հետևյալ փաստը: Կրետեում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Դիքսոնը, հետևելով ռուսական հյուպատոսի օրինակին, որոշում է անգլիական «Աշուրանս» նավով հույն բնակչությունից մի խումբ երեխաներ, կանայք ու ծերեր փոխադրել Հունաստան՝ փրկելու համար նրանց վերահաս կոտորածներից: Բնորոշ է, որ Դիքսոնն իր այդ «հանդուգն» փորձի համար անգլիական կառավարության արտաքին գործերի մինիստրի կողմից ստանում է խիստ նախազգուշացում[1]:*

*Ռուս-թուրքական 1877–1878 թթ. պատերազմի ժամանակ Անգլիան ցույց էր տալիս Թուրքիային ամեն տեսակ օգնություն, որն ուղղված էր ոչ միայն Ռուսաստանի, այլև հակասուլթանական ազգային-ազատագրական պայքար մղող ժողովուրդների դեմ: Անգլիական շատ սպաներ գործում էին թուրքական բանակում: Դեռևս պատերազմի նախօրեին անգլիական 70 սպա ու 300 նավաստի ծառայության անցան թուրքական ռազմածովային ուժերի կազմում: Անգլիական ռազմական հրահանգիչներն իրենց ձեռքը վերցրին Սև ծովի նեղուցների ռազմական օբյեկտների ամրացման գործը: Թուրքական ռազմածովային ուժերի ղեկավարներից էր Հոբարդ փաշան, որը անգլիացի էր: Հակառակ Փարիզի 1856 թ. պայմանագրի՝ անգլիական չորս առաջնակարգ զրահանավ մտան նեղուցները և օգնեցին թուրքական ռազմածովային ուժերին[2]:*

*Բնորոշ է նաև հետևյալ փաստը: 1878 թ., երբ ռուսական բանակի օգնությամբ բուլղար ժողովուրդը ազատագրվեց սուլթանական տիրապետությունից, Թուրքիան մի շարք փորձեր կատարեց իր տիրապետությունը Հարավային Բուլղարիայում վերականգնելու համար: Այդ նպատակով կազմված թուրքական զորամասերը շոշափելի օգնություն էին ստանում Անգլիայից: Ավելին: Թուրքական զորամասերում գործում էին անգլիական սպաներ[3]:*

1 Նույն տեղում էջ 207:
2 РГВИА, ф. ВУА, д. 49974, л. 1.
3 Освобождение Болгарии от турецкого ига. Сборник статей. М., 1953, с. 83.

*Ազատագրական շարժումների նկատմամբ անգլիական կառավարության վարած հետադիմական քաղաքականության մի արտահայտություն էր նաև այն, որ անգլիական բուրժուական մամուլն իր պաշտպանության տակ էր վերցնում սուլթանական բռնապետությունը և հասարակական նպաստավոր կարծիք ստեղծում նրա մասին: Այս տեսակետից բնորոշ է «Դեյլի նյուզ» թերթի դիրքը: Այն ժամանակ, երբ սուլթանական բռնապետությունն իրեն ենթակա այլազգի ժողովուրդների նկատմամբ վարում էր ձուլման, անլուր ճնշումների ու բիրտ հալածանքների քաղաքականություն, այդ թերթը, կեղծելով իրական փաստերը, գովասանական հոդվածներ էր տպագրում սուլթանի «մեծահոգության», Թուրքիայում տիրող «դեմոկրատիայի» մասին և այլն: 1853 թ., օրինակ, թերթը բազմաթիվ հոդվածներ հրապարակեց, որոնց մեջ երեսպաշտորեն այն միտքն էր քարոզում, թե սուլթանական կառավարությունը «հայրական կառավարություն է», որի հովանու տակ ազատ և անկաշկանդ ծաղկում և զարգանում են այլազգի ժողովուրդները: Սուլթանական Թուրքիային ուղղած «Դեյլի նյուզի» այս սնամեջ և բացահայտ դիֆիրամբների իսկական էությունն իր ժամանակ բացահայտեցին Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը[1]: Անգլիական բուրժուական թերթերը սուլթանական Թուրքիայի հասցեին նման գովաբանություններ էին անում նաև 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ:*

*Անգլիական իշխող վերնախավը, այսպիսով, թե՛ գործով և թե՛ խոսքով պաշտպանում էր սուլթանական բռնապետությունը և հանդես էր գալիս հակասուլթանական ազգային-ազատագրական շարժումների դեմ:*

*Օսմանյան կայսրության մեջ հարստահարվող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ թշնամական դիրք բռնեցին, ինչպես ասացինք, նաև Ավստրո-Հունգարիան ու Ֆրանսիան: XIX դարի 20-ական թթ., երբ տեղի էր ունենում հույն ժողովրդի ապստամբական շարժումը թուրքական տիրապետության դեմ, ավստրիական կառավարությունը բացահայտ կերպով նեցուկ դարձավ թուրքական սուլթանի համար: Ավստրիայի ոչ անհայտ կանցլեր Մետերնիխը անում էր ամեն բան, որպեսզի արյան մեջ խեղդի հույների ազատագրական այդ շարժումը: Ծայրահեղ հետադեմ այդ կանցլերը ապստամբներին համարում էր «խռովարարներ ու ավազակներ», որոնք զենք են բարձրացրել իրենց «օրինական» տերերի դեմ:*

*Ավստրիան առանձին վճռականությամբ պայքար էր մղում բալկանյան սլավոնների ազատագրական շարժումների դեմ: Նա դիմում էր բոլոր*

1 *К. Маркс и Ф. Энгельс*. Сочинения. Т. 9, с. 23-25.



*հնարավոր միջոցների, որպեսզի խափանի բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժումների հաղթանակը: Մետերնիխը հաճախ հայտարարում էր, թե «Սերբիան պետք է լինի կամ թուրքական, կամ ավստրիական»: 1862 թ., երբ սերբերը պահանջեցին դուրս հանել իրենց երկրից թուրքական կայազորները, Ավստրիան, Անգլիայի հետ միասին, հանդես եկավ այդ միանգամայն իրավացի պահանջի դեմ, պահանջ, որ կենսական խոշոր նշանակություն ուներ Սերբիայի համար: 1875 թ., երբ սկսվեց Հերցեգովինայի հայտնի ապստամբությունը, Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի մինիստր կոմս Անդրաշին անմիջապես հասկացրեց թուրքական սուլթանին, որ ավստրո-հունգարական կառավարությունը կպաշտպանի թուրքական կառավարության բոլոր միջոցառումներն ապստամբների դեմ: Ավստրո-Հունգարիայի այդ վարքագծի պատճառներից մեկն այն էր, որ հարավային սլավոնների ազատագրական շարժումներն օրինակ էին հանդիսանում Ավստրո-Հունգարիայի սլավոնների՝ խորվաթների ու սլովենների համար[1]:*

*Հետադեմ քաղաքականություն էր վարում նաև Ֆրանսիան: Ելնելով իր տնտեսական ու քաղաքական շահերից, ֆրանսիական բուրժուազիան պաշտպանում էր սուլթանական կառավարությանը և հանդես էր գալիս Օսմանյան կայսրության մեջ ճնշվող ու հարստահարվող ժողովուրդների ազատագրական շարժման դեմ: Որպես օրինակ, կարելի է բերել հետևյալ փաստերը: Թալեյրանին ուղարկած 1806 թ. հունիսի 9-ի իր նամակում Նապոլեոն I-ը ցուցում էր տալիս՝ տեղեկացնել սուլթանին, որ Ֆրանսիան թշնամական դիրք ունի դեպի ազգային-ազատագրական շարժումները և որ ինքը՝ Նապոլեոնը ոչ մի օգնություն ցույց չի տա Եգիպտոսում, Սիրիայում և Հունաստանում բռնկված ապստամբություններին, որոնք ուղղված են թուրքական տիրապետության դեմ: 1807–1808 թթ., երբ սերբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը օսմանյան բռնապետության դեմ լայն ծավալ էր ստացել, Նապոլեոնը ապստամբներին համարելով խռովարարներ, համակրական ցույցեր էր անում սուլթանին և խոստանում նրան ամեն տեսակի օգնություն:*

*Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքականությունը Թուրքիայում ծավալված ազատագրական շարժումների նկատմամբ չէր տարբերվում արևմտաեվրոպական պետությունների քաղաքականությունից: Ամերիկյան պետությունը ևս, որ իր զավթողական պլանների իրականացումը Մերձավոր Արևելքում աշխատում էր կատարել status quo-ի «հավասարակշռության» օգնությամբ, թշնամական քաղաքականություն էր վարում*

1 История Болгарии. Т. 1, с. 292.

սուլթանական բռնակալության դեմ ազատագրական պայքար մղող ժողովուրդների նկատմամբ: Ինչպես ռուս-թուրքական պատերազմների, այնպես էլ բալկանյան ու մյուս ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը ճնշելու ժամանակ, թուրքական սուլթանները մեծ քանակությամբ զենք ու զինամթերք էին ստանում Ամերիկայից: Հետադեմ քաղաքականություն էին վարում ամերիկյան կառավարող շրջանները, երբ հանդես էին գալիս ճնշված ժողովուրդների «պաշտպանի» դերում: Թե, օրինակ, ինչպես ի՞նչ էր նշանակում ամերիկյան և անգլիական առևտրականների «հունասիրական» դիրքը 1820-ական թթ. հույն ժողովրդի ազգային-ազատագրական ապստամբության ժամանակ, այդ մասին պատմաբան Ֆինլին գրում էր. «Հունաստանն ամենից շատ տուժեց այն մարդկանցից, որոնք Անգլիայում ու Ամերիկայում իրենց անվանում էին հունասերներ»[1]:

Ինչպես նկատեցինք, արևմտյան պետությունները հաճախ հանդես էին գալիս Օսմանյան կայսրության «ամբողջականությունը պահպանելու» նշանաբանի տակ: Այդպես վարվեցին նրանք, օրինակ, 1853–1856 և 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ: Բայց այդ «բարեկամները» հենց իրենք էին կողոպտում Թուրքիան՝ ամեն կերպ աշխատելով այն իրենց գաղութը դարձնել: Հայտնի է, օրինակ, որ առաջին կապիտուլյացիաները, այդ միակողմանիորեն տրված արտոնությունները[2], որոնք Թուրքիան գաղութ դարձնելու առաջին քայլերն էին, ստացան հենց Ֆրանսիան ու Անգլիան: Հետագայում այդպիսի կապիտուլյացիա, փաստորեն, ստացավ նաև Ամերիկան: Հայտնի է նաև, որ թուրքական կայսրության «անդամահատության» գործում ակտիվ դեր խաղացին նույն Անգլիան ու Ֆրանսիան: Ֆրանսիան, օրինակ, 1830 թ. գրավեց Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Ալժիրը, Անգլիան 1878 թ.՝ Կիպրոս կղզին, Ավստրո-Հունգարիան նույն թվականին՝ Բոսնիան ու Հերցեգովինան և այլն: Այսպիսով, բարեկամների կեղծ դիմակի տակ հանդես եկող պետությունները «պաշտպանում» էին Թուրքիային այն բանի համար, որպեսզի թալանեն ու կողոպտեն նրան, որպեսզի իրականացնեն իրենց գաղութային-նվաճողական պլանները:

## 2

Արևմտյան պետությունները հետադեմ, թշնամական քաղաքականություն վարեցին նաև հայ ժողովրդի ազատագրական շարժման նկատմամբ:

1 *L. Sergeant.* New Greece, p. 347.

2 *К. Маркс и Ф. Энгельс.* Сочинения. Т. 10, 1958, с. 169.



Այդ քաղաքականությունը, որ երկար ժամանակ արտահայտվում էր խիստ քողարկված ձևով, XVIII և հատկապես XIX դդ. բավական բացահայտ բնույթ ստացավ:

Ինչպես հայտնի է, XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին հայ ժողովուրդը նոր փորձեր կատարեց ռուսական զենքի օգնությամբ ազատագրվելու պարսկական ու թուրքական բռնապետությունների ծանր լծից: Ենթարկվելով անասելի ճնշումների ու հարստահարությունների, գտնվելով ձուլման ու ֆիզիկական ոչնչացման վտանգի տակ, նա իր փրկության միակ ելքը գտնում էր խաների ու փաշաների ճիրաններից ազատագրվելու և Ռուսաստանին միանալու մեջ: Հենց այս ուղղությամբ էլ հայ ժողովուրդը ծավալեց ազատագրական լայն պայքար:

Սակայն այդ շրջանում արևմտյան պետությունները և, մասնավորապես, Ֆրանսիան ու Անգլիան դիմում էին ամեն միջոցի, որպեսզի խափանեն այդ փորձերը: Ձգտելով իրենց գաղութային տիրապետությունը հաստատել Իրանում, Թուրքիայում և Կովկասում, նրանք դիվանագիտական բանակցություններ սկսեցին պարսկական ու թուրքական պետությունների հետ, աշխատեցին պահպանել այդ բռնապետությունների տիրապետությունն Անդրկովկասի ժողովուրդների վրա:

Դիմենք փաստերին: 1784 թ. ֆրանսիական կառավարության հանձնարարությամբ Պարսկաստան ժամանեց կոմս Ֆերեր-Սովբեֆը: Նրա միսիայի գլխավոր նպատակն էր ստեղծել ֆրանս-թուրք-պարսկական միություն՝ ուղղված Ռուսաստանի դեմ, թույլ չտալ Հայաստանի ու Վրաստանի ազատագրությունը թուրք-պարսկական լծից և միացումը Ռուսաստանին: 1795 թ. Պարսկաստան եկան ֆրանսիական գործակալներ Օլիվյեն ու Բրյուգերը: Մի շարք ձեռնարկումների հետ միասին նրանք աշխատեցին ամեն կերպ օգնել արյունարբու Աղա-Մահմադ խանին և խափանել Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու ուղղությամբ կատարվող բոլոր փորձերը[1]:

XIX դարի առաջին իսկ տարիներին Ֆրանսիան ակտիվ գործունեություն ծավալեց Մերձավոր Արևելքում: Նապոլեոն Բոնապարտը բանակցություններ սկսեց ինչպես պարսկական շահի, այնպես էլ թուրքական սուլթանի հետ: Նրանց ուղարկած իր նամակներում Նապոլեոնն առաջարկում էր միացյալ ճակատ ստեղծել և՛ Անգլիայի, և՛ Ռուսաստանի դեմ, խոստանում էր ամեն տեսակ օգնություն՝ պարսկական ու թուրքական տիրապետությունը պահպանելու համար Մերձավոր Արևելքում և Անդր-

1 *А. Р. Иоаннисян.* Борьба Англии и Франции против присоединения Армении к России.– Известия, 1953, N 3, с. 49-50.

կովկասում: 1804 թ. սկզբներին սուլթան Սելիմ III-ի մոտ ուղարկվեց գեներալ Ժոբերը՝ Նապոլեոնի հատուկ նամակով: 1805 թ. Թուրքիա և Պարսկաստան գնացին ֆրանսիական միսիաներ, որոնք աշխատեցին Թուրքիային և Պարսկաստանին հրահրել Ռուսաստանի դեմ: Բնորոշ է, որ 1807 թ. հունվարին Թալեյրանը ցուցում էր տալիս Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Սեբաստիանիին՝ կազմակերպել թուրք-պարսկական միացյալ ճակատ Կովկասում, ուղղված Ռուսաստանի դեմ, վերականգնել Պարսկաստանի ու Թուրքիայի կորցրած դիրքերն Անդրկովկասում[1]:

Նապոլեոնի դիվանագիտության գործադրած ջանքերի հետևանքով 1807 թ. մայիսին Ֆինկենշտեյն ամրոցում կնքվեց դաշնագիր Ֆրանսիայի ու Պարսկաստանի միջև: Այդ գաղտնի դաշնագրի 2-րդ հոդվածի համաձայն Ֆրանսիայի կայսրը երաշխավորում էր Պարսկաստանի տարածքների անբաժանելիությունը և անձեռնմխելիությունը: Իսկ այդ նշանակում էր, որ Ֆրանսիան խոստանում էր թույլ չտալ, որ Հայաստանը և Անդրկովկասի մյուս շրջանները ազատագրվեն պարսկական խաների լծից: Ավելին: Ֆինկենշտեյնի դաշնագրի 3-րդ և 4-րդ հոդվածներում ասվում էր, թե ֆրանսիական կայսրը ընդունում է, որ Վրաստանի օրինական տերը Պարսկաստանի շահն է, և որ Ֆրանսիան կանի ամեն ինչ, որպեսզի ստիպի Ռուսաստանին Պարսկաստանին վերադարձնելու Վրաստանը և «պարսկական» մյուս տարածքները[2]: Այսպիսով, Նապոլեոնը փորձում էր պարսկական լծից նոր ազատագրված վրաց ժողովրդի վրա վերստին հաստատել պարսիկ շահերի ծանր տիրապետությունը:

Ֆինկենշտեյնի դաշնագիրը կնքելուց շատ չանցած, 1807 թ. հունիսի 3-ին, Դանցիգում սկսվեցին բանակցություններ ֆրանս-թուրքական միություն ստեղծելու համար: Նապոլեոնն այստեղ ևս երաշխավորում էր թուրքական կայսրության անձեռնմխելիությունը, խոստանում էր Թուրքիային՝ վերադարձնել Վալախիան, Մոլդավիան, Ղրիմը և Վրաստանը, առաջարկում էր Թուրքիային Պարսկաստանի հետ միասին միացյալ ճակատ ստեղծել Ռուսաստանի դեմ և նրանից կտրել ու զավթել Կովկասը:

Շուտով Պարսկաստան ու Թուրքիա գնացին ֆրանսիական հատուկ միսիաներ: 1807 թ. դեկտեմբերի 4-ին Թեհրան հասավ գեներալ Գարդանի դեսպանությունը, որ բաղկացած էր 150 մարդուց: Այդ տարիներին, ինչպես հայտնի է, անգլո-ֆրանսիական հակամարտություններն Արևելքում սուր կերպարանք էին ստացել: Գարդանն աշխատում էր մի կողմից վերացնել անգլիական ազդեցությունը Պարսկաստանում, մյուս կողմից՝

1 *О. П. Маркова*. Восстание в Кахетии в 1812 г. М., 1951, с. 254.
2 Նույն տեղում, էջ 264-265:



թույլ չտալ Անդրկովկասի միացումը Ռուսաստանին: Նրա գլխավորությամբ ֆրանսիական գործակալները ծավալեցին խիստ աշխույժ գործունեություն:

Ռուս-պարսկական 1804–1813 թթ. պատերազմի ժամանակ Ֆրանսիան նյութական օգնություն էր ցույց տալիս Պարսկաստանին, զենք ու զինամթերք էր ուղարկում այնտեղ, ֆրանսիական սպաները ռազմական հրահանգիչների դեր էին կատարում պարսկական բանակում և անգամ ակտիվ կերպով մասնակցում էին պատերազմական գործողություններին: Ֆրանսիական 60 սպա, ինչպես հայտնում էր Կովկասի ռուսական բանակի հրամանատար գեներալ Գուդովիչը 1808 թ. ապրիլին, պարսկական կանոնավոր զորքերին սովորեցնում էին ռազմական արվեստը[1]: Նույն գործով էր զբաղվում Փարիզից ուղարկված սպաների մի խումբ՝ Թավրիզում: Սպահանում ստեղծվեց հրանոթների ձուլման արհեստանոց: Գեներալ Գարդանը ստորագրեց մի պայմանագիր, որը նախատեսում էր 20000 հրացան տրամադրել պարսկական բանակին: Ֆրանսիական ինժեներներն ամրացնում էին պարսկական բերդերը և այլ կարգի օգնություն ցույց տալիս պարսկական զորքերին: 1808 թ. Երևանի համար մղված կռիվներում պարսկական զորքերի շարքերում՝ ռուսական բանակի դեմ կռվում էին ֆրանսիական սպաներ, որոնք, սակայն, իրենց մասնակցությունը գաղտնի պահելու նպատակով հագնում էին պարսկական զինվորական համազգեստ[2]:

Այս բոլոր և նման մյուս այլ ձեռնարկումների նպատակն էր ամեն կերպ հրահրել Պարսկաստանին՝ շարունակելու պատերազմը Ռուսաստանի դեմ, խափանել Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու գործը, պահպանել պարսկական խաների բիրտ տիրապետությունը Անդրկովկասում և իրագործել ֆրանսիական բուրժուազիայի զավթողական ծրագրերը Արևելքում: Նապոլեոնի գործակալների սանձարձակությունն այն աստիճանի էր հասնում, որ նրանք, չնայած Տիլզիտի պայմանագրի առկայությանը, մշտապես միջամտում էին ռուս-պարսկական բանակցություններին և դիմելով ահաբեկումների՝ առաջարկում էին հետ կանչել ռուսական բանակը Անդրկովկասից: Այս տեսակետից խիստ բնորոշ է հետևյալ փաստը: 1809 թ. դեկտեմբերին գեներալ Գուդովիչի մոտ է գալիս Թեհրանի ֆրանսիական դեսպանության քարտուղար Լաժարը և առաջարկում է դուրս բերել ռուսական բանակը Երևանի ու Նախիջևանի խանություններից[3]:

1 АКАК. Т. III, Тифлис, 1869, с. 466.
2 *Ռաշիդ Յասեմի*. Իրանի պատմություն (պարսկ.). Թեհրան, 1944, էջ 223-224:
3 АКАК. Т. III, с. 511.

Նույն ռեակցիոն քաղաքականությունն էր վարում Նապոլեոնը Թուրքիայում: Ֆրանսիական գործակալները ամեն կերպ հրահրում էին սուլթաններին Ռուսաստանի դեմ, օգնում էին նրանց՝ կռվելու Թուրքական տիրապետության տակ հեծող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման դեմ:

Ելնելով իր զավթողական-նվաճողական քաղաքականությունից, Մեծ Բրիտանիան ևս ամեն կերպ հովանավորում էր պարսկական և թուրքական բռնապետություններին, անում էր ամեն ինչ, որպեսզի Անդրկովկասը չմիացվի Ռուսաստանին, ձգտում էր իր գաղութային տիրապետությունը տարածել Պարսկաստանի, ամբողջ Առաջավոր Ասիայի ու Կովկասի վրա:

1800 թ. Պարսկաստան ժամանեց անգլիական կապիտան Ջոն Մալկոլմը[1]: 1801 թ. նրան հաջողվեց կնքել անգլո-պարսկական պայմանագիր, որը հավասարապես ուղղված էր ինչպես Ֆրանսիայի, այնպես էլ Ռուսաստանի դեմ: Պայմանագրի նպատակներից մեկն էր կանխել Վրաստանի, Հայաստանի և Անդրկովկասի մյուս տարածքների միացումը Ռուսաստանին: Անգլո-պարսկական 1801 թ. դաշնագրի համաձայն, Անգլիան խոստանում էր ռազմական օգնություն Պարսկաստանին: Շուտով Պարսկաստան եկան անգլիական բազմաթիվ քաղաքական ու ռազմական գործակալներ, որոնք զինամթերք էին մատակարարում պարսկական բանակին և գրգռում պարսկական կառավարությանը՝ Ռուսաստանի դեմ:

Անգլիայի ազդեցությունը Պարսկաստանում առանձնապես ուժեղացավ 1809 թ. սկսած. մարտի 12-ին Անգլիայի ու Պարսկաստանի միջև կնքվեց դաշնագիր, որի համաձայն, Անգլիան պետք է ֆինանսական ու ռազմական «օգնություն» ցույց տար Պարսկաստանի շահին: Ի կատարումն այդ դաշնագրի՝ իրանական կառավարությունը Անգլիայից պետք է ստանար տարեկան դրամական սուբսիդիա, զգալի քանակությամբ զենք ու զինամթերք: Պարսկաստան ժամանեցին բազմաթիվ անգլիական ռազմական հրահանգիչներ: 1810 թ. պարսկական կառավարությունը ստացավ 200000 թուման դրամ, 30000 հրացան և 20 թնդանոթ[2]: Նույն թվականին գեներալ Մալկոլմը գալով Պարսկաստան, պարսկական շահին «նվեր» բերեց 12 դաշտային թնդանոթ՝ բոլոր անհրաժեշտ սարքավորումներով[3]: 1811 թ. վերջին ստացվեց 32 հրանոթ, 12000 հրացան, մահուդ՝ 12000 զինվորների զգեստավորման համար և այլն[4]: Բնորոշ է, օրինակ, որ Աս-

1 *К. Маркс.* Хронологические выписки по истории Индии. Огиз, 1947, с. 105.

2 *Ռաշիդ Յասեմի.* Իրանի պատմություն (պարսկերեն), էջ 226:

3 *I. W. Kaye.* History of the War in Afganistan, V. I, London, 1874, p. 140.

4 AKAK. T. V. Тифлис, 1873, с. 177.



լանդուզի հայտնի ճակատամարտի ժամանակ, որ տեղի ունեցավ 1812 թ. հոկտեմբերի 20-ին, ռուսական զորքերի գրաված զենքերի ու զինամթերքի մեջ գտնվեցին անգլիական 11 հրանոթ, որոնց վրա կային մակագրություններ, թե դրանք անգլիական թագավորի նվերներն են պարսկական շահին:

Դրամական ու ռազմական այն օժանդակությունը, որ ստանում էր պարսկական շահը Անգլիայից, հասկանալի է, որ գործադրվեց ինչպես Ռուսաստանի, այնպես էլ ազատագրության համար պայքարող հայ ժողովրդի դեմ: Սակայն գործը չսահմանափակվեց միայն դրամով ու ռազմամթերքով: Միաժամանակ Պարսկաստան ուղարկվեցին բազմաթիվ սպաներ, ենթասպաներ ու զանազան հրահանգիչներ, որոնք ոչ միայն վերակազմում ու վերապատրաստում էին պարսկական բանակը, այլև անմիջական մասնակցություն էին ունենում պատերազմական գործողություններին: 1812 թ. պարսկական թագաժառանգ Աբբաս Միրզայի բանակում հետևակը ղեկավարում էր անգլիական կապիտան Կրիստին, որը սպանվեց Ասլանդուզի ճակատամարտում, իսկ հրետանին՝ լեյտենանտ Լինդսեյը:

Նույն թվականին՝ Լենքորանում տեղի ունեցած պատերազմական գործողությունների ժամանակ պարսկական զորքերի առաջապահ ջոկատը դրոհներ էր կազմակերպում ռուսական զորքերի վրա անգլիական մայոր Արսի հրամանատարությամբ[1]: Այդ ջոկատում մեծ թիվ էին կազմում անգլիական սպաները, ենթասպաներն ու այլ կարգի զինվորականները:

Խիստ ագրեսիվ դիրք էր բռնել անգլիական դիվանագիտությունը: Պարսկաստան ուղարկված դեսպաններն ու հյուպատոսները ուժեղ ճնշում էին գործ դնում Պարսկաստանի շահի վրա, որպեսզի նա նոր թափով շարունակի պատերազմը Ռուսաստանի դեմ և չկատարի ոչ մի զիջում: Անգլիական գործակալներն աշխատում էին ամեն կերպ սրել ռուս-պարսկական հարաբերությունները: 1810–1812 թթ. մի շարք փորձեր կատարվեցին Ռուսաստանի ու Պարսկաստանի միջև զինադադար ու խաղաղություն հաստատելու համար, սակայն այդ փորձերը խափանվեցին անգլիական դեսպաններ Հարֆորդ Ջոնսի և ապա Գոր-Օուզլիի մեքենայությունների ու սադրիչ գործունեության հետևանքով: Եվ եթե, այնուամենայնիվ, 1813 թ. հոկտեմբերին կնքվեց Գյուլիստանի հաշտության պայմանագիրը, ապա այդ կատարվեց հակառակ անգլիական ագրեսիվ քաղաքագետների կամքի ու ցանկության:

Մեծ Բրիտանիայի գործակալների սադրիչ գործունեությունը շարունակվեց նաև հետագա տարիներին: 1814 թ. նոյեմբերին կնքվեց անգլո-

1 AKAK. T. V, c. 593.

*պարսկական պայմանագիր, որը փաստորեն 1809 թ. նախնական պայմանագրի կրկնությունն էր: Պայմանագիրը ուղղված էր գլխավորապես Ռուսաստանի դեմ և նպատակ ուներ Պարսկաստանին նոր պատերազմի հանել՝ Անդրկովկասը Ռուսաստանից կտրելու և անգլիական ու պարսկական մյուս զավթողական ծրագրերը իրագործելու համար: Գյուլիստանի պայմանագրին հաջորդող տարիներին ևս անգլիական սպաները տենդորեն բարեփոխություններ էին կատարում պարսկական բանակում, իսկ դիվանագիտական ներկայացուցիչներն ամեն կերպ հրահրում էին Պարսկաստանին՝ Ռուսաստանի դեմ:*

*Բնորոշ է, որ Պարսկաստանի շահը 1816 թ. վճռականապես պահանջում էր վերանայել Գյուլիստանի պայմանագիրը: 1817 թ. մարտին Երմոլովը գրում էր, թե անգլիական գործակալների խարդավանքների հետևանքով Պարսկաստանում Ռուսաստանի դեմ ուղղված պատերազմի մեծ պատրաստություններ են տեսնվում[1]: Նույն թվականի հոկտեմբերին Երմոլովը հայտնում էր, որ, անցնելով Թավրիզ քաղաքով, ծանոթացել է Աբբաս Միրզայի ռազմական ուժերին և անձամբ տեսել է, որ պարսկական հետևակը և հրետանին ամբողջությամբ գտնվում են անգլիական սպաների ու ենթասպաների հրամանատարության տակ[2]:*

*Փաստերը կասկած չեն թողնում այն մասին, որ ռուս-պարսկական 1826–1828 թթ. պատերազմի պատճառներից մեկը անգլիական կառավարության ագրեսիվ ու նենգ քաղաքականությունն էր: 1825 թ. գեներալ Մադաթովը գրում էր, թե անգլիացիները հրահրում են պարսիկներին՝ խզել դիվանագիտական հարաբերությունները Ռուսաստանի հետ և առաջարկում են զինամթերք ու դրամ[3]: Մադաթովը նույն թվականի նոյեմբերին մի այլ կապակցությամբ հայտնում էր, թե Սպահան է հասել 200 բեռ անգլիական զենք՝ Աբբաս Միրզայի զորքերի համար[4]: Անգլիացիների դրդումով պարսիկները 1826 թ. հուլիսին հարձակման անցան և սկսեցին նոր պատերազմ՝ Անդրկովկասում կորցրած իրենց տիրապետությունը վերականգնելու համար: Ինչպես նախորդ պատերազմի, այնպես էլ ռուս-պարսկական 1826–1828 թթ. պատերազմի ժամանակ Անգլիան պարսկական շահին տրամադրում էր զենք և դրամ: 1828 թ. Թեհրանի ռուսական դեսպան, ականավոր գրող Ա. Ս. Գրիբոյեդովը հայտնում էր, թե Մալկոլմի դեսպանության ժամանակից Անգլիան պարսկական շահին տրամադրել*

1 AKAK. T. VI, ч. II, Тифлис, 1875, с. 148-149.
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում, էջ 343:
4 Նույն տեղում, էջ 324:



*է 75 միլիոն ռուբլի և շարունակում է տրամադրել նոր միլիոններ[1]: Բայց անգլիական կառավարողների փորձերը՝ պահպանել և ամրապնդել պարսկական բռնապետության լուծը Անդրկովկասում, ապարդյուն անցան: Հակառակ անգլիական կառավարության բոլոր ջանքերին, Արևելյան Հայաստանը, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասը ազատագրվեց պարսկական շահերի ու խաների բիրտ տիրապետությունից և միացվեց Ռուսաստանին:*

*Սակայն պետք է նշել, որ եթե այդ ազատագրությունը հանդիպեց շատ դժվարությունների և ձգձգվեց երկար ժամանակ, ապա դրա հիմնական պատճառներից մեկն Անգլիայի ու Ֆրանսիայի վերը հիշված զավթողական քաղաքականությունն էր: Չպետք է մոռանալ նաև այն, որ Անգլիայի ու Ֆրանսիայի խոստումը՝ Պարսկաստանին «օգնելու» մասին, բացարձակ կեղծիք էր, որովհետև և՛ Անգլիան, և՛ Ֆրանսիան այդ «օգնության» քողի տակ, ըստ էության, աշխատում էին իրենց ձեռքն առնել ու գաղութացնել Պարսկաստանը և իրագործել իրենց նվաճողական-զավթողական ծրագրերը Կովկասի ու Միջին Ասիայի նկատմամբ:*

*Անգլիական կառավարության ագրեսիվ քաղաքականությունը բացահայտ կերպով արտահայտվեց նաև սուլթանական Թուրքիայի լծի տակ հեծող արևմտահայ ժողովրդի ազատագրական շարժման նկատմամբ: Նպատակ ունենալով ամբողջ Թուրքիան իր գաղութը դարձնել, Անգլիան աշխատում էր պահպանել Օսմանյան կայսրությունը, ձգտում էր անխախտ պահել սուլթանական բռնապետության լուծը նվաճված ժողովուրդների վրա: Աստիճանաբար իր գաղութային ցանցի մեջ առնելով Թուրքիան, անգլիական բուրժուազիան հանդես էր գալիս սուլթանական բռնապետության եռանդուն պաշտպանի դերում: Սուլթանի և անգլիական կառավարության շահերը մի շարք հարցերում և, մասնավորապես, ազգային-ազատագրական շարժումները ճնշելու գործում, համընկնում էին: Անգլիական նվաճողական քաղաքականությունը իրագործողները, պատահական չէ, որ հետագա տարիներին, խոսելով XIX դարի անգլո-թուրքական հարաբերությունների մասին, հայտարարում էին, թե «սուլթանի թշնամիները մեր թշնամիներն էին, նրա բարեկամները՝ մեր բարեկամները»[2]:*

*Անգլիան հանդես եկավ ինչպես բալկանյան ու մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ և վրաց ժողովուրդների հակասուլթանական ազատագրական շարժումների դեմ: Այդ քաղաքականությունը նա հետևողականորեն և բացահայտ կերպով վարեց 1806–1812 թթ. և 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ: Թուրքիան գաղութացնելու և*

1 Նույն տեղում, հ. VII, էջ 667:
2 *L. F. Abbott.* Turkey, Greece and the Great Powers. New York, 1917, p. 152.

*նրա միջոցով Կովկասի նկատմամբ ունեցած իր զավթողական պլաններն իրագործելու նպատակով, Անգլիան ձգտում էր պահպանել սուլթանական բռնակալության տիրապետությունն Արևմտյան Հայաստանում և Հարավարևմտյան Վրաստանում: Նա դիմում էր ամեն միջոցի, որպեսզի, ինչպես արդեն ասել ենք, տեղի չունենա Անդրկովկասի միացումը Ռուսաստանին, որին ձգտում էին Անդրկովկասի ժողովուրդները: 1809 թ. Անգլիայի և Թուրքիայի միջև կնքվեց դաշնագիր, որն ուղղված էր Ռուսաստանի դեմ: Անգլիական դիվանագիտությունը համառ կերպով աշխատում էր անգլո-թուրք-իրանական միացյալ ճակատ ստեղծել՝ Կովկասը զավթելու համար: Նա ամեն կերպ պաշտպանում էր ինչպես Պարսկաստանի, այնպես էլ Թուրքիայի նվաճողական պլանները Հայաստանի, Վրաստանի ու կից շրջանների նկատմամբ:*

*Արևմտյան պետությունների ագրեսիվ քաղաքականությունը Անդրկովկասի նկատմամբ, նրանց թշնամական դիրքը հայ ժողովրդի ազատագրական շարժումների հանդեպ, ավելի պարզ դարձան 1850–1870-ական թթ.: Ղրիմի պատերազմի տարիներին զավթողական պլաններով հանդես եկան Անգլիան, Ֆրանսիան ու նրանց գործակից Թուրքիան: Անգլիական կառավարությունը ձգտում էր Ռուսաստանից կտրել-անջատել Ղրիմը, Բեսարաբիան, Կովկասը, Ֆինլանդիան, Լեհաստանը, Լիտվան, Էստոնիան, Կուրլյանդիան և Լիֆլանդիան[1]: Նա ծրագրում էր գրավել Անդրկովկասը և այնտեղ ստեղծել մի շարք խամաճիկ իշխանություններ անգլո-թուրքական «հովանու ներքո»[2]: Այսպիսով, այն ժամանակ, երբ արևմտահայ ժողովուրդը փորձեր էր անում սուլթանական բռնապետության լծից ազատագրվելու համար, անգլիական տիրող շրջանները ամեն կերպ աշխատում էր ոչ միայն ամրապնդել թուրքական տիրապետության լուծը ճնշված ազգությունների վրա, այլև ընդարձակել այդ տիրապետության սահմանները, նրա մեջ առնելով Անդրկովկասի ժողովուրդներին*:*

*Անգլիական կառավարության թշնամական դիրքը հայ ժողովրդի ազատագրական շարժման նկատմամբ չափազանց ցայտուն կերպով արտահայտվեց Զեյթունի 1862 թ. հայտնի ապստամբության ժամանակ: Երբ բռնկվեց զեյթունցիների 1862 թ. ապստամբությունը, Կ. Պոլսի անգլիական դեսպան Հենրի Բուլվերը բացահայտ կերպով արտահայտվեց այդ շարժման դեմ: Ապստամբությունից հետո, ինչպես պատմում է վիպագիր Ծերենցը, զեյթունցիք խնդրագրեր ներկայացրին Կ. Պոլսի ռուսական, ֆրանսիական և անգլիական դեսպաններին, բողոքելով թուրքական կա-*

1 *Е. В. Тарле*. Крымская война, второе издание. Т. 1. М.-Л., 1950, с. 4.

2 *Е. Е. Бурчуладзе*. Крушение англо-турецких захватнических планов в Грузии в 1855–1856 годах.– Вопросы истории, 1952, N 4, с. 22.



*ռավարության կողմից կիրառվող հալածանքների քաղաքականության դեմ: Անգլիական դեսպանն արհամարհանքով է ընդունել խնդրագիրը իրեն ներկայացնողին և բացահայտ կերպով իր թշնամական վերաբերմունքն է արտահայտել զեյթունցիների նկատմամբ: Ծերենցն այդ մասին գրում էր. «Զեյթունցվոց վերոհիշյալ աղերսագիրը իրեն [դեսպանին] մատուցանողը շատ դաժան և արհամարհոտ կերպով ընդուներ էր, և աչք մը ձգելեն վերջը ըսեր էր զայրագին. «բայց դուք պետք է գիտնաք, թե այդ ձեր անզգամ զեյթունցիք, այդ ավազակները շատ վատ գործողություն ըրեր են և Ազիզ փաշան խորտակեր ու փախուցեր են. ինչպե՞ս կհամարձակիք հիմա իրենց կողմեն ինձ աղերսագիր բերել»[1]:*

*Անգլիական դեսպանն, այսպիսով, ավազակներ էր համարում իրենց ազատագրության համար պայքարող հերոս զեյթունցիներին և իր պաշտպանության տակ վերցնում թուրքական ջարդարար Ազիզ փաշային*: Անգլիական կառավարության այս դիրքը ցայտուն արտահայտություն գտավ Կ. Պոլսի «Լեվանտ հերալդ» անգլիական թերթի էջերում: Թերթը 1862 թ. տպագրեց մի շարք հոդվածներ, որոնցում ամեն կերպ վատաբանում էր զեյթունցիներին և արդարացնում թուրքական կառավարության ճնշումների ու հալածանքների քաղաքականությունը նրանց նկատմամբ: Իր ժամանակին «Լեվանտ հերալդի» դեմ բողոքի ձայն բարձրացրին մի շարք հայկական պարբերականներ՝ «Մեղուն», «Ծաղիկը», «Փարիզը», «Դիմակը» և այլն: Զմյուռնիայում հրատարակվող «Ծաղիկ» պարբերականը գրում էր. «...հայ ազգին վրա չարախոսություն ընելու համար գլխարկը նետող սա «Լեվանտ հերալդ» լրագիրը չեմ գիտեր մարդկության, քաղաքականության, քրիստոնեության, կրթության և վերջապես խմբագրության որ օրենքով կամ սկզբունքով այս մոտերս ելեր և առանց ամչնալու այնպիսի անտեղի, անհիմն և կամ գոնե խիստ զարհուրելի կերպիվ չափազանցյալ տեղեկություն մի հրատարակեր է Զեյթունի վրա, որ եթե մեր զարմանքը չի շարժե, յուր հայոց թշնամին լինելուն վրա ալ այլ տարակույս չի թողուր մտքերնուս մեջ... Լեվանտի թղթակիցը պարտ է գիտնալ, որ ինքը նախ բոլորովին տգետ է զեյթունցոց վրա, երկրորդ՝ թշնամի է հայոց և երրորդ՝ ստախոս է... պարոն թղթակիցն հայոց թշնամի լինելը հաստատելու համար երկու խոսք խիստ բավական է. ան մարդը, որ կելլե և զեյթունցոց կրածը նոցա վրա թողլով զանոնք կզրպարտե և կչարախոսե և բերնեն ելած ածականները և վատ արանց միմիայն վայել զրպարտությունները անոց վրա կտեղացնե՝ այնպիսի մեկը եթե հայոց թշնամի չէ հապա ի՞նչ է...»[2]:*

1 «Փորձ», 1879, N 11, էջ 27:

2 «Ծաղիկ», 1862, N 42, էջ 351-352:

*Անգլիայի թշնամական քաղաքականությունը հայ ժողովրդի ազատագրական շարժումների նկատմամբ այնքան բացահայտ էր, որ այդ մասին գրում էին նաև օտարերկրյա թերթերը: Այսպես, օրինակ, ֆրանսիական «Դեբա» թերթը Զեյթունի 1862 թ. ապստամբության կապակցությամբ գրում էր, թե սուլթանական կառավարությունը Կ. Պոլսի անգլիական դեսպանության հովանավորության հետևանքով է, որ ուժեղացրել է ճնշումները հայ ժողովրդի նկատմամբ[1]: Ֆրանսիացի հրապարակախոս Ժիրարդենը զեյթունցիների 1862 թ. ապստամբության կապակցությամբ գրած իր հոդվածներից մեկում այն կարծիքն էր հայտնում, թե թուրքական կառավարության հայահալած քաղաքականության ամբողջ պատասխանատվությունն ընկնում է անգլիական կառավարության վրա, որովհետև նա է հովանավորում սուլթանին՝ հայ ազատագրական շարժումները ճնշելու գործում[2]:*

*Ի՞նչ դիրք էր բռնել Ֆրանսիան: Զեյթունի 1862 թ. ապստամբության ժամանակ ֆրանսիական կառավարությունը ձգտում էր Զեյթունը և ամբողջ Կիլիկիան իր գաղութը դարձնել, աշխատում էր ազգային-ազատագրական պայքար մղող հայ ժողովրդի վրա իր գաղութային տիրապետությունը հաստատել: Ֆրանսիական կառավարությունն իր այդ նպատակներն աշխատում էր իրագործել կաթոլիկ եկեղեցու օգնությամբ, որի ներկայացուցիչները բավական ակտիվ գործունեություն էին ծավալել Կիլիկիայում: Սրանց մասին էր, որ բանաստեղծ Սմբատ Շահազիզը իր «Եգվիտներ ու Զեյթուն» բանաստեղծության մեջ գրում էր.*

Զեյթուն, սրբազան մնացորդ անցյալի,
Տավրոս լեռների հայ ազգ բնակիչ,
Արթուն կաց. – գիտե՞ս, վերադ է գալի
Եգվիտ ամբոխը, գայլեր գիշատիչ:
...............................................
Շատ ժամանակ է, որ Եվրոպայից
Այդ աղվեսները արտաքս հանվելով
Եկել են Ձեր կողմն...[3]:

*Բանաստեղծը հենվում էր ռեալ իրողությունների վրա: Իսկապես, դեռևս 1847 թ. Կ. Պոլսում հրատարակվող «Ժուռնալ դը Կոստանտինոպլ» հանդեսը, որն արտահայտում էր ֆրանսիական կաթոլիկների ծայրահեղորեն հետադիմական շրջանների տեսակետը, հանդիմանում էր հայերին՝ Բ.*

1 «Փարիզ», 1862, N 77:
2 «Փորձ», 1879, N 11, էջ 25:
3 *Ս. Շահազիզեան.* Լեւոնի վիշտը..., էջ 174-175:



*Դռան հանդեպ «անհավատարիմ» լինելու համար: Այդ պարբերականը ուղղակի առաջ էր քաշում հայերի և մյուս հպատակ ազգերի՝ թուրքերին ձուլելու գաղափարը, հաճոյանալով թուրքական մոլեռանդությանը. «Օսմանյան տերության մեջ ազգաց կատարյալ հավասարություն ըլլալու համար պետք է ... որ բոլոր հոնտեղացի ազգերը մեկ ձուլվին, վասնզի մեկ ազգի մեջ չկրնար երեք-չորս ազգ պարունակվիլ», – գրում էր նա[1]:*

*Նապոլեոն III-ի կառավարությունն աշխատում էր կաթոլիկ կղերականների միջոցով մեռցնել հայ ժողովրդի մեջ ազատասիրության ոգին: Այդ տեսակետից բնորոշ է հայ կաթոլիկների պարագլուխ Անտոն Հասունյանի քայքայիչ գործունեությունը: Կամակատար այս կղերականը պայքար էր մղում ազատագրական-հայրենասիրական գաղափարների ամեն մի արտահայտության դեմ, աշխատում էր ջլատել, պառակտել ազատագրական շարժման ուժերը և քարոզներ էր կարդում Ֆրանսիայի «հովանավորության» անհրաժեշտության մասին:*

*Հետաքրքիր է, որ 1860-ական թթ. սկզբներին ֆրանսիական գործակալների ջանքերով Կ. Պոլսում հիմնվեց մի կազմակերպություն, որ նպատակ ուներ հակառուսական գործունեություն ծավալել Կովկասում[2]: Ակնհայտ է, որ Անգլիայի նման Ֆրանսիան ևս ուներ նվաճողական ծրագրեր:*

*Արևմտյան պետությունների այդ քաղաքականությունը շարունակվեց նաև հետագա տարիներին: Ռուս-թուրքական 1877–1878 թ. պատերազմի ժամանակ արևմտահայ ժողովուրդը փորձեց ռուսական զենքի օգնությամբ ազատագրվել սուլթանական Թուրքիայի տիրապետությունից: Այդ տարիներին, ինչպես հայտնի է, տեղի ունեցան բուլղար ժողովրդի ազատագրական շարժումները: Անգլիական կառավարությունը բացահայտ կերպով հանդես եկավ ինչպես բուլղար, այնպես էլ հայ ժողովրդի ազատագրության դեմ: Թուրքիայից զավթելով Կիպրոս կղզին, Անգլիան միաժամանակ դիմեց ամեն միջոցի, որպեսզի պահպանվի սուլթանական Թուրքիայի տիրապետությունն Արևմտյան Հայաստանում: Դիվանագիտական ճնշմամբ և ռազմական ահաբեկումներով Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագիրը նրա ամենաակտիվ ջանքերով փոխարինվեց Բեռլինի դաշնագրով, որի 61-րդ հոդվածը, ինչպես հայտնի է, մի կատարյալ չարիք դարձավ արևմտահայերի համար:*

*1877–1878 թթ. Անգլիան զենք ու զինամթերք էր ուղարկում Թուրքիա, անգլիական սպաները հրահանգավորում էին թուրքական ռազմա-*

1 «Եւրոպա», Վիեննա, 1849, սեպտեմբերի 15:
2 Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԳ, էջ 55-56:

կան շտաբները: Քաջալերվելով Անգլիայի հովանավորությունից, թուրքական կառավարությունը դեռևս այդ տարիներին կազմակերպեց արևմտահայ ժողովրդի կոտորածներ:

Անգլիայի այս քաղաքականությունը չփոխվեց և հետագայում: Բնորոշ է այն դիրքը, որ նա բռնեց 1895–1896 թթ. հայկական զանգվածային կոտորածների ժամանակ: Երբ իր երկրի կառավարող շրջանների առանձին ներկայացուցիչներ հայկական կոտորածների կապակցությամբ կոկորդիլոսի արցունքներ էին թափում, Վանի անգլիական հյուպատոսը օգնում էր թուրքական ջարդարարներին և միանալով նրանց, թնդանոթով կրակում էր ինքնապաշտպանության դիմած Վանի հայ բնակչության վրա: 1896 թ. հուլիսի 24-ին Վանից գրում էին. «Աղետի սկզբնաւորութենէն ցվերջ անգլիական հիւպատոսի ցոյց տուած վարմունքն շատ զարմանալի է և հակասական հակառակ մարդասիրութեան և ուղղութեան… տեղական կառավարութիւն հայոց տուները ռմբակոծելով անոնց ընդդիմադրական ոյժը շուտով ջախջախելու խորհուրդի թելադրութիւնն իսկ անոր կը վերագրուի: Մինչև իսկ կը հաստատուի, որ պ. հիւպատոսն լինելով թնդանօթաձիգ սպա, երբ կտեսնէ, որ Ցայնկոյների բլրի վրայ զետեղուած թնդանօթներն (թուրքական – Մ. Ն.) ճշտիւ նպատակին չեն զարներ, անձամբ պատերազմի վայրը կ'երթայ և թնդանօթները բլրէն վար իջեցնելով՝ հայոց թաղերու մէջը զետեղել և տուները ուղղակի ռմբակոծել կը տայ՝ թնդանօթի վրայ ինքն անձամբ զինուորություն ընելով:

Անգլիական հիւպատոսի այդ տարօրինակ վարմանց միակ նպատակն էր շուտով ջախջախել հայոց ընդդիմութիւնը, որպէսզի գործն չերկարի… Ինքն անձամբ շրջագայած լինելով հայոց անձնապաշտպանութեան հաստակցեալ տուներու մէջը և մանաւանդ տեսած լինելով հայոց յաջող ընդդիմադրութիւնը, կարող եղած էր շուտով կռահել, որ եթէ ջախջախիչ միջոցներ ձեռք չառնուին, հայոց ընդդիմադրութիւնն կարող է տակաւին տոկալ երկար ժամանակ, և այդ միջոցին թերևս տեղի տրուի որևէ չփափագուած միջամտութեան և գրաւման: Թնդանօթն միայն կարող էր շուտով ջախջախել հայոց ընդդիմադրութիւնը ինչպէս որ եղաւ»[1]:

Այդ քաղաքականությունը շարունակվեց նաև հետագայում: 1903–1904 թթ. Էրզրումի անգլիական հյուպատոս Շիպլեյը և Բիթլիսի փոխհյուպատոս Հիչոտը «հովանավորում» էին արևմտահայերի ապստամբական շարժումը, սակայն միաժամանակ հրահրում էին թուրքական իշխանություններին հայերի դեմ: Այս առթիվ Կովկասյան ռուսական բանակի շտաբի զեկուցագրերից մեկում, գրված 1904 թ. մարտի 14-ին, աս-

1 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 236 ԺԱ, վավ. 226 գ.:



ված է. «Անգլիական կառավարությունն աշխատելով կազմակերպել հայկական ապստամբություն մեծ մասշտաբներով, խիստ անբավական է նրանից, որ թուրքական իշխանությունները պասիվ վերաբերմունք ունեն ապստամբության համար հայերի կողմից կատարվող բացահայտ նախապատրաստությունների հանդեպ: Այժմ նա (անգլիական կառավարությունը – Մ. Ն.) ինքն է մատնում հայերին* և հրահրում է թուրքերին դատաստան տեսնել նրանց (հայերի – Մ. Ն.) հետ»[1]:

Անգլիական կառավարության հետադեմ, թշնամական դիրքը հայ ազատագրական շարժման նկատմամբ, իհարկե, չվրիպեց ինչպես ժողովրդի, այնպես էլ ժամանակի հայ հասարակական-քաղաքական գործիչների աչքից**: Մենք արդեն տեսանք, որ դեռևս 1860-ական թթ. սկզբներին հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը փայլուն կերպով բացահայտեց անգլիական բուրժուազիայի գաղութային-զավթողական քաղաքականության էությունն ինչպես Արևելքի բոլոր երկրներում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում***: Անգլիական կառավարությանը մերկացրել է Հակոբ Պարոնյանը: Ըմբռնելով նրա դիվանագիտության խարդախ էությունը, Պարոնյանը ցույց է տվել դիմակավորված լորդերի զավթողական նպատակները և ծաղրել նրանց, ովքեր հույսեր էին կապում Անգլիայի հետ[2]: Գրիգոր Արծրունին Անգլիայի և ընդհանրապես Արևմտյան Եվրոպայի մասին, 1876 թ. գրել է. «Այն խոսքերը, թե Անգլիան պատրաստ է պահանջել ինքնավարությունը Թեսալիայի, Էպիրոսի և Հայաստանի համար, սուտ, դարդակ, կեղծավոր խոսքեր են: Մենք նրանց չենք հավատում… Անգլիան ներկայացնում է Արևմտյան Եվրոպայում… եսական քաղաքականության տիպը: Արևմտյան Եվրոպան՝ սկսած խաչակիր պատերազմներից, միշտ ծառայեցրել է իր օգուտներին արևելյան ազգերը… այժմ երբ որ հայերը կարոտ են Եվրոպայի օգնությանը, ոչ մի եվրոպական պետություն չի օգնի նրանց: Միակ պետությունը, որի վրա հայերը կարող են հույս դնել – այդ Ռուսաստանն է: Արևմտյան Եվրոպան ընդհակառակն, գուցե և կուզենար որ մենք ամենքս կոտորվենք, որ մեր տեղը իրանց եվրոպական գաղթականությունները բնակեցնեն»[3]:

Անգլիայի նման խարդախ քաղաքականություն էր վարում նաև Ֆրանսիան: Հետաքրքիր է, որ երբ 1894–1896 թթ. տեղի ունեցան արևմտահայ բնակչության ջարդերը, ֆրանսիական կառավարությունը ոչ միայն չբողոքեց այդ կոտորածների դեմ, այլև իր «չեզոք՝ լռելյայն» դիրքով փաստորեն պաշտպան կանգնեց ջարդարար սուլթան Աբդուլ Հա-

1 РГВИА, ф. ВУА, д. 78263, л. 62.
2 Հ. Պարոնյան. Երկերի լիակատար ժողովածու. հ. 10. Ե., 1947, էջ 185:
3 «Մշակ», 1876, N 44:

*միդին: Հայկական կոտորածների կապակցությամբ Սմբատ Շահազիզը Ֆրանսիայի և ընդհանրապես Եվրոպայի խարդախ քաղաքականության մասին գրել է. «Եվրոպան խաղ է անում, մի անարգ և բարբարոսական կոմեդիա. տասնիններորդ դարի էջերը կմնան սևացած պատմության մեջ և կարձանագրեն խայտառակ դիպլոմատիայի հնարագիտությունները: Եվրոպայի մարդասիրությունը, Եվրոպայի պրոգրեսը ոչ այլ ինչ է, քան թե մի ամբողջ շարք վայրենի կրքերի և անառակության: Թքեմ այդ ցիվիլիզացիայի երեսին, որ ներկայացնում է մի կատարյալ մտավորական սիֆիլիզացիա: Տես՝ ինչ դիրք է բռնել այն ճղճղան Ֆրանսիան, որ մեզ ուսուցանում էր* եղբայրություն և հավասարություն, *այժմ ինքը փոխվել է ստրուկ և ծառա և պապանձել է լեզվով, որ մի ժպիտ անգամ չհանե այն անմեղ զոհերի համար, որոնք պաշտպան են հանդիսանում նրա դավանած սկզբունքների համար: Գրիչս հրաժարվում է շարունակել այն անտանելի պատմությունը: Բայց այնուամենայնիվ ավելի պիտի հուսալ, քան թե վհատել»[1]:*

*Արևմտաեվրոպական պետությունների ռեակցիոն դերը հայ ժողովրդի պատմության մեջ լավ գիտակցում էր նաև Գարեգին Սրվանձտյանցը: Ցնորամիտ համարելով նրանց, ովքեր հույսեր են կապում արևմտյան պետությունների հետ, Սրվանձտյանցը գրում էր. «Այդ կեղծ բարեկարանները ոչ հայուն հորեղբայրն էին և ոչ հայուն քեռին, այլ ավելի ճարպիկ որսորդներ ու մսագործներ, որ զմեզ... պատրաստ ոչխարներու ու պարարակ կովերու տեղ դնելով, մեր փարախեն կուզեին խրտնեցնել, հեռացնել և իրենց ձեռքը ձգելով ի սպանդ մատուցանել»[2]:*

*Այժմ Ամերիկայի Միացյալ Նահանգների մասին: Այդ երկրի կառավարությունը XVIII դարի վերջերին արդեն հանդես բերեց, ամերիկյան պատմաբանի խոսքերով ասած, «զգալի արկածախնդրական ոգի առևտրի և ծովագնացության մեջ»[3]: Նա իր հայացքն ուղղեց նաև դեպի Մերձավոր Արևելք: 1785 թ. ամերիկյան առևտրական նավերն այցելեցին Զմյուռնիա և նույն թվականին Թուրքիայից ստացված ապրանքները վաճառքի հանվեցին Նյու-Յորքում, Բոստոնում և Ֆիլադելֆիայում: 1786 թ. բանակցություններ սկսվեցին Ալժիրի հետ: 1800 թ. ամերիկյան «Ջորջ Վաշինգտոն» ռազմանավը այցելեց Կ. Պոլիս: 1803–1804 թթ. ծովահենների դեմ կռվելու պատրվակով ամերիկյան ռազմանավերը շրջում էին Միջերկրական ծովում[4]:*

1 *Ե. Շահազիզ.* Սմբատ Շահազիզի կենսագրությունը. Ե., 1947, էջ 94:
2 *Գ. Սրվանձտեանց.* Թորոս աղբար. հ. Բ, էջ ԺԷ:
3 *J. W. Foster.* American Diplomacy in the Orient. Boston and New York, 1904, p. 1.
4 *E. A. Speiser.* The United States and the Near East. Harward, 1950, p. 238.



*Ամերիկյան կառավարությունը բանակցություններ սկսեց թուրքական սուլթանների հետ, որպեսզի իր գործունեության համար դիրքեր նվաճի Օսմանյան կայսրության մեջ: Արդեն 1798-1799 թթ. Լոնդոնի ամերիկյան դիվանագիտական ներկայացուցիչ Ռուֆուս Քինգը կապեր հաստատեց Լոնդոնի թուրքական դեսպանի հետ: Քինգի սկսած գործը շարունակեց ամերիկյան դիվանագիտական ներկայացուցիչներից մեկը՝ Վիլյամ Սմիթը, որին Միացյալ Նահանգների կառավարության կողմից տրված հրահանգներում ասված էր, թե պետք է Անգլիայի և Ֆրանսիայի նման ձեռք բերել կապիտուլյացիաներ Թուրքիայում, պետք է աշխատել, որ Օսմանյան կայսրություն ներմուծվող ամերիկյան ապրանքների մաքսը 5 տոկոսի փոխարեն սահմանվի 3 տոկոս և այլն: Սակայն ամերիկյան կառավարության ծրագրերն առժամանակ չիրագործվեցին Անգլիայի և Ֆրանսիայի դիմադրության պատճառով:*

*1820-ական թթ. Միացյալ Նահանգները նոր ակտիվ քայլեր կատարեցին իրենց պլանները Թուրքիայում իրագործելու ուղղությամբ[1]: Տարիներ տևող բանակցությունները, որոնց ընթացքում Ամերիկան հաճախ դիմում էր ահաբեկումների, վերջացան նրանով, որ սուլթանական կառավարությունը ստիպված եղավ 1830 թ. մայիսին կնքել պայմանագիր Միացյալ Նահանգների հետ: Պայմանագրի 4-րդ հոդվածով Ամերիկան ստանում էր կապիտուլյացիաներ և էքստերիտորիալության իրավունքներ: Այս առաջին խոշոր հաղթանակն էր, որ ձեռք էր բերում նա իր գաղութային ծրագրերը Մերձավոր Արևելքում իրագործելու ուղղությամբ: Ամերիկյան բուրժուազիան ամրապնդեց իր դիրքերը Թուրքիայում: Բնորոշ էր, որ 1830 թ. նշված պայմանագիրը կնքելուց մեկ տարի հետո Երուսաղեմում և Յաֆայում նշանակված ամերիկյան հյուպատոս Դավիդ Դարմոնը Միացյալ Նահանգների կառավարությանն առաջարկում էր գրավել Կիպրոս կղզին[2]: 1852 թ. սենատոր Վ. Հ. Սիվարդը մի ճառ արտասանեց, ուր բացահայտ կերպով խոսում էր Արևելքում գաղութներ ունենալու անհրաժեշտության մասին[3]: Մերձավոր Արևելքի ամերիկյան հյուպատոսներից մեկը՝ Բիրդսլին պետական դեպարտամենտի ուշադրությունն էր հրավիրում Սուեզի ջրանցքի շրջակա երկրների պոտենցիալ հարստությունների շահագործման վրա[4]:1876–1877 թթ. արդեն ամերիկյան կապիտալիստները երևացին Բաքվում[5]:*

1 *L. G. Gordon.* American Relations with Turkey, 1830-1930. Philadelphia, 1932, p. 9.
2 *F. E. Manuel.* The Realities of American-Palestine Relations. Washington, 1949, p. 9.
3 J. W. Foster. American Diplomacy in the Orient, p. 401.
4 F. E. Manuel. The Realities of American-Palestine Relations. p. 14-15.
5 Кавказ, 1877, N 150.

Մերձավոր Արևելքում իր գավթողական ծրագրերն իրագործելու հիմնական ուղին ամերիկյան բուրժուազիան համարում էր դիվանագիտական ճնշման և առևտրական-տնտեսական ներթափանցման «խաղաղ» ճանապարհը: Միացյալ Նահանգները ձգտելով իրենց դիրքերը ամրացնել Թուրքիայում, հանդես եկան որպես Օսմանյան կայսրության «անձեռնմխելիության» կողմնակից, թուրքական բռնակալության դեմ ուղղված ազատագրական շարժումների հակառակորդներ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության թշնամական քաղաքականությունը հայ ժողովրդի ազատագրական շարժման նկատմամբ, բացահայտ կերպով արտահայտվեց Զեյթունի 1862 թ. ապստամբության ժամանակ: Վերը հիշված «Լեվանտ հերալդ» թերթում 1862 թ. հուլիսին տպագրվեց մի անստորագիր նամակ, ուր զեյթունցիները պատկերվում էին որպես խռովարարներ, որոնք իբր հաճախ ավազակային հարձակումներ էին կատարում հարևան ցեղերի վրա և արյունահեղ ընդհարումների պատճառ դառնում: Իրականությունը կեղծող և զրպարտություններով լի այդ թղթակցությունը մեծ բողոք ու զայրույթ առաջ բերեց ժամանակի հայ պարբերական մամուլում: Ո՞վ էր նրա հեղինակը: Կ. Պոլսում հրատարակվող «Մեղուն», որ լավ տեղյակ էր կատարվող անցքերին, հանդես գալով «Լևանտ հերալդում» տպագրված հոդվածի դեմ, գրեց, որ նամակի հեղինակն ամերիկյան միսիոներներն են, որոնք «բռնությանց, զրպարտությանց, արյունահեղությանց միջոցով կուզեն իրենց ոտքը հոն (Զեյթուն – Մ. Ն.) հաստատել, անմեղ ժողովուրդին կուրծքը պատռելով ոտքերնին անոր սիրտին վրա կոխել կուզեն»[1]:

«Մեղուն» այնուհետև նշում էր, որ ամերիկյան միսիոներները Զեյթունում կատարվող դեպքերը միտումնավոր կերպով նկարագրելուց հետո, խորհուրդ են տալիս սուլթանական կառավարությանը, որպեսզի նա «թույլ տա զարնել, բնաջինջ ընել» Զեյթունի հայ ժողովուրդը[2]:

Բնորոշ էր Ամերիկայի դիրքը ռուս-թուրքական 1877–1878 թթ. պատերազմի տարիներին: Հայտնի է, որ այդ շրջանում ինչպես բուլղար, այնպես էլ արևմտահայ ժողովուրդները ձգտում էին Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել թուրքական բռնակալության ծանր լծից: Այդ նպատակով հայերն ամեն կերպ օգնում էին ռուսական բանակին, նրա հաղթանակի մեջ տեսնելով իրենց փրկությունը փաշաների ու բեկերի մշտական ճնշումներից ու հալածանքներից:

1 «Մեղու», 1862, N 169, էջ 175:

2 Նույն տեղում, էջ 176:



Ամերիկան այդ տարիներին ևս ամեն կերպ պաշտպանեց սուլթանական բռնակալությանը: Նա մեծ քանակությամբ զենք և զինամթերք մատակարարեց Թուրքիային: Պաշտոնական տվյալների համաձայն, 1875 թ. Ամերիկայից Թուրքիա է ներմուծվել ապրանք՝ 3928149 դոլլարի արժողությամբ, իսկ 1876 թ. 3101044 դոլլարի չափով: Այդ ապրանքների մեծ մասը կազմել է զենքը և զինամթերքը[1]:

Կ. Պոլսում հրատարակվող «Փունջ» լրագիրը 1877 թ. հունվարի 29-ին հաղորդում էր, որ «կայսերական կառավարության կողմանե դարձյալ 20000 Հենրի Մարթինի հրացան և 30000 ռևոլվեր ապսպրվեր է Ամերիկային»[2]: Նույն թերթը 1877 թ. մարտի 2-ին գրում էր. «Երեկ Ամերիկային մայրաքաղաքս հասավ շոգենավ մը, որում կայսերական կառավարության համար 33000 Մարթինի-Հենրի հրացան, հանդերձանք, 10 միլիոն «Շնայտրի» փամփուշտ և այլք կգտնվեին: Մեկ պելճիքյան և մեկ անգղիական շոգենավ ալ երեկ հասան, կառավարության համար թնդանոթ և այլ ռազմական պիտույք բեռնավորյալ»[3]: Պարզ է, որ այդ բոլորն օգտագործվում էր ինչպես Ռուսաստանի դեմ կռվելու, այնպես էլ բուլղարական ու հայկական ազատագրական շարժումները ճնշելու համար:

Պետք է նկատել, որ թուրքական կառավարությունն Ամերիկայի Միացյալ Նահանգներից մեծ քանակությամբ զենք ու զինամթերք էր ստանում նաև նախորդ տարիների ընթացքում: Այսպես, 1869 թ. Ամերիկայում գնվել է «Էնֆիլդ» մակնիշի 114000 հրացան և «Շպրինգ» սիստեմի 200000 հրացան: Բացի այդ, նույն թվականին գնվել է «Ռեմինգտոն» մակնիշի 20000 ատրճանակ[4]: 1870 թ. թուրքական զինվորական մինիստրությունն ամերիկյան գործարաններին պատվիրել էր «Վինչեստեր» մակնիշի 20000 հրացան[5]: 1871 թ. Ամերիկայից նույն մակնիշի 25000 հրացան ստացվեց[6]:

Ամերիկայի խարդախ քաղաքականությունը հայ ժողովրդի և նրա ազատագրական շարժման նկատմամբ արտահայտվեց նաև հետագա ժամանակաշրջաններում: Բերենք մի օրինակ: Արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը, ինչպես հայտնի է, 1894 թ. կազմակերպեց հայ ժողովրդի կոտորած Սասունում, որի ընթացքում սրի քաշվեց ավելի քան 10000 մարդ: Կոտորածի դեմ իր բողոքի ձայնը բարձրացրեցին ժամանակի ա-

1 *L. G. Gordon.* American Relations with Turkey, p. 47-48.

2 «Փունջ», 1877, N 1147:

3 Նույն տեղում, N 1156:

4 РГВИА, ф. ВУА, д. 56520, л. 53.

5 Նույն տեղում, գ. 54595, թ. 2-3:

6 Նույն տեղում, գ. 56522, թ. 9:

ռաջավոր հասարակական շրջանները: Միացյալ Նահանգների կառավարությունը որոշեց օգտագործել այդ հանգամանքը: Նշված թվականին «վեճ» կար Ամերիկայի և թուրքական կառավարության միջև՝ ամերիկացիներին տրված կապիտուլյացիաների, Թուրքիա ներմուծվող ամերիկյան ապրանքների մաքսի չափի և այլ հարցերի շուրջ: Որպեսզի ահաբեկման միջոցով ստիպի սուլթանին զիջումներ կատարել, Ամերիկան սկսեց խոսել Հայկական հարցի մասին, «բողոքեց» հայկական կոտորածների դեմ և այլն: Սուլթան Աբդուլ Համիդը շուտով զիջումներ կատարեց վեճի առարկա դարձած հարցերում:

Ամերիկյան կառավարությունն անմիջապես «մոռացավ» Հայկական հարցը և վերականգնեց իր բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հետ: Եվ հետաքրքիր է, որ 1895–1896 թթ., երբ տեղի ունեցան հայկական նոր, ավելի զանգվածային և ընդհանուր կոտորածներ, ապա պաշտոնական Ամերիկան պահպանեց լռություն և չմտածեց որևէ «բողոքի» մասին: Ավելին: Պետական դեպարտամենտի քարտուղար Օնլեյը հանդես եկավ ջերմեռանդ սուլթանի պաշտպանի դերում, հայտարարելով, թե հայկական կոտորածների մասին եղած լուրերը չափազանցված են և ճիշտ չեն: Հետաքրքիր է, որ ամերիկյան քաղաքագետների կողմից պաշտպանություն գտած սուլթանը մի քանի տարի հետո փոխհատուցց եղավ: 1898 թ., երբ Միացյալ Նահանգների կառավարությունը զավթողական պատերազմ սկսեց Ֆիլիպինների դեմ, սուլթան Աբդուլ Համիդը, իբրև մուսուլմանական խալիֆ, հատուկ կոչով դիմեց Ֆիլիպինների մուսուլմաններին, առաջարկելով նրանց չդիմադրել ամերիկյան զորքերին և ընդունել Ամերիկայի տիրապետությունը[1]:

Հայ ժողովրդի ազատագրական շարժման գործին անգլիական ու ֆրանսիական միսիոներների հետ միասին քիչ վնաս չեն հասցրել նաև ամերիկյան միսիոներները*: Նրանք թեև հանդես էին գալիս կրոնական քարոզի քողի տակ, բայց իրականում Միացյալ Նահանգների կառավարության գործակալներն էին, որ ամեն կերպ աշխատում էին հող պատրաստել, ճանապարհ բացել, որպեսզի ամերիկյան կապիտալը ներթափանցի Թուրքիա: «Քրիստոնյա միսիոներները,– գրում է ամերիկյան տնտեսագետներից մեկը,– աշխատում էին ամերիկյան առևտրականների համար»[2]: Միսիոներների «խաղաղ պրոպագանդը»,ասում էր պրեզիդենտ Տաֆտը, մեծապես նպաստում է Ամերիկայի դիրքերի ուժեղացմանը Թուրքիայում[3]: Ամերիկյան «Նյու-Յորք հերալդ» թերթը, խոսելով Թուրքիայում միսիոներների գործունեության և հետապնդած նպատակների մասին, դեռևս 1860 թ. գրել է. «Տաճկաստանի մէջ մեր ունեցած շահը անոր դեղորայքն ու համէմունքն են, անոր պտուղները, բուրդը և ուրիշ բերքերը...»[1]: Միսիոներական կազմակերպությունների մեջ, ինչպես վկայում են մի շարք հեղինակներ, ընդգրկված էին նաև կառավարական և առևտրական շրջանների ներկայացուցիչներ: Ինքնին հասկանալի է, թե ինչու Միացյալ Նահանգների կառավարությունը ֆինանսավորում էր միսիոներներին ու նրանց կազմակերպություններին:

Ամերիկյան առաջին միսիոներները Մերձավոր Արևելք եկան 1819 թ. և սկզբում հաստատվեցին Մալթա կղզում, իսկ 1820 թ.՝ Զմյուռնիայում: 1823 թ. նրանք միսիոներական կազմակերպություն ստեղծեցին Երուսաղեմում, 1825 թ.՝ Բեյրութում, 1828 թ.՝ Զմյուռնիայում, իսկ նույն ժամանակներից սկսած իրենց գործունեությունը ծավալեցին Հայաստանում և Վրաստանում: 1845 թ. նրանք սկսեցին բանակցություններ վարել քրդական շեյխերի ու բեկերի հետ: XIX դարի կեսերին արդեն միսիոներները շրջում էին ամբողջ Թուրքիայում, Պարսկաստանում և Անդրկովկասում: Իրենց հետապնդած քաղաքական ու տնտեսական նպատակների իրագործումն ապահովելու համար նրանք բացում էին դպրոցներ, քոլեջներ, հրատարակում գրքեր ու պարբերականներ: Առաջին դպրոցներից մեկը հիմնվեց 1850 թ. Մոսուլում: Ամերիկյան գաղութարարների ուշադրությունից դեռևս այդ թվականներին, ինչպես տեսնում ենք, չէին վրիպել Մոսուլի նավթահանքերը: Ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում միսիոներները աշխատում էին բողոքականություն տարածել, ժողովրդին հավատափոխ անել, խափանել հայկական մշակույթի զարգացումը, պայքարում էին հայ ժողովրդի ազգային-քաղաքական և սոցիալ-դասակարգային ինքնագիտակցության դեմ, փորձում էին կանխել հայ ազատագրական շարժումները, հրահրում էին կրոնա-դավանաբանական ներքին կռիվներ, որպեսզի պառակտեն և խախտեն ժողովրդի պայքարի միասնական ճակատը: Նրանք, միաժամանակ, կատարում էին տնտեսական-առևտրական խարդախ գործարքներ և խաբում ու կեղեքում էին աշխատավորական զանգվածներին:

Կ. Պոլսի «Մեղուն» 1860 թ. հուլիսին հայտնում էր, որ ամերիկյան միսիոներները կրոնական-դավանաբանական մի վեճի ժամանակ դիմել են սուլթանական կառավարության ոստիկանության օգնությանը և այդ ոստիկանությունը միսիոներների պահանջով կրակ է բացել ժողովրդի վրա: Միսիոներները, գրում էր թերթը, «իրենց նպատակին հասնելու համար և

1 *L. G. Gordon.* American Relations with Turkey, p. 13.
2 Նույն տեղում, էջ 246:
3 Նույն տեղում, էջ 245:



1 «Փարիզ», 1860, N 31:

ոչ մի բանի կխնայեն... տերության զենքերը դարձնել կուտան դժբախտ և խեղճ Հայոց վրա... զենքերը դարձնել կուտան հայ ժողովրդի մը վրա, որ իր ձեռքը զենք չունի... արյունը թափել կուտան այն ժողովրդին... որ կրոնքի համար երբեք մեկու մը կաթիլ մը արյունը թափած չէ և որ միմիայն իր նահատակացն ու մարտիրոսացն արյունովը գրած է իր պատմությունը»[1]: «Փարիզ» պարբերականը 1861 թ. փետրվարին գրում էր, թե ամերիկյան միսիոներները բողոքականություն չընդունող հայերին պատժելու համար «Միացյալ Նահանգաց կառավարութենեն պատերազմական նավ մը անգամ կուզեն»[2]:

«Մեղուն» նկատում էր, որ միսիոներները հայ ժողովրդի վրա «դեռ նվաստ ու ցած ազգի համարումով մը կնային»[3]: Նույն թերթը 1863 թ. գրում էր, որ նրանք «ուր որ գնացին, մեծամեծ աղմուկներ հանեցին, գրգռեցին և կռիվներու առիթ տվին ու փառավոր վարձատրություններ ընդունելեն վերջ՝ քաղաքական զորության դիմեցին... և ետքը ճերմակ երեսով դարձան, զիրենք ղրկող... դեսպանաց առջևը պարծեցան փառավոր հաղթությանց... լուրեր տալով...»[4]:

Բնորոշ է, որ միսիոներները իրենց ձեռքն ընկած հայ պատանիներին պատվաստում էին թշնամական զգացմունքներ Ռուսաստանի նկատմամբ: Ռուսական Կովկասյան զինվորական օկրուգի շտաբի պետն իր զեկուցագրերից մեկում հայտնում էր. «Ամերիկյան միսիոներների գործունեությունը, անկասկած, չափազանց վնասակար է ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ Ռուսաստանի շահերի համար Ասիական Թուրքիայում: Ամենուրեք հիմնելով որբանոցներ ու դպրոցներ, միսիոներները հայ որբ պատանիներին դարձնում են բողոքականներ և հայերի մեջ սերմանում կրոնական ծայրահեղ երկպառակություններ: Ամերիկյան միսիոներների դպրոցներում հայ աշակերտները չեն լսում և ոչ մի լավ խոսք Ռուսաստանի մասին: Ընդհակառակը, Ռուսաստանի և ռուսների մասին նրանց հաղորդվում են Ռուսաստանի համար խիստ նվաստացուցիչ և անասելի ստեր: Դրա հետևանքով էլ մենք Ռուսաստանի թշնամիների հանդիպում ենք ամերիկյան միսիոներների հենց այդ դպրոցներում դաստիարակված նախկին սաների մեջ»[5]:

Ամերիկյան միսիոներների թշնամական քաղաքականությունը հայ ազատագրական շարժումների նկատմամբ, նրանց քայքայիչ, վնասակար

1 «Մեղու», 1860, N 103, էջ 150:
2 «Փարիզ», 1861, փետրվարի 15:
3 «Մեղու», 1862, N 177, էջ 234:
4 Նույն տեղում, 1863, N 223, էջ 317:
5 РГВИА, ф. ВУА, д. 78263, л. 201.



գործունեությունը բողոք և զայրույթ առաջացրին հայ ժողովրդի մեջ: Դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչները բազմիցս և՛ գրավոր, և՛ բանավոր հանդես եկան միսիոներների դեմ: Միքայել Նալբանդյանն իր սուր գրչով քողազերծ արեց և ցույց տվեց նրանց գործունեության ռեակցիոն էությունը: Պատռելով «ազատության» անունից խոսող միսիոներների դիմակը, Նալբանդյանը նրանց մասին գրում էր. «Ազատության պահապանքը դոքա չե՞ն. դոքա ավազակ են ուրիշի խղճի ազատության. դոքա հափշտակում են այդ ազատությունը և քամում են ազատ դատողության վերջին բարոյական զորությունը, որ առավել բացարձակաբար բռնանան յուրյանց որսի վերա: Այդպիսի ընթացքով դոքա միշտ դժբախտ մարդկության ուտիչ ցեցերը պիտի համարվի՞ն...»[1]:

1863 թ.՝ ծանոթանալով ամերիկյան միսիոներների դեմ «Մեղուի» հրապարակած մի շարք հոդվածներին, Մ. Նալբանդյանը գրում էր. «Կոստանդնուպոլսի մեջ հրատարակված «Մեղուի» մի քանի համարներում... Ա. Պ. Ա. ստորագրությամբ մի պատվական աշխատություն տեսանք, որ անախտակիր ոգով, ազատ և լուսավոր հայացքով հանդես է հանել մեզ անծանոթ հեղինակը՝ ամերիկյան միսիոնարների չարաչար ընթացքը Տաճկաստանի մեջ, մեր խեղճ ազգին տված հարվածները և Քրիստոսի ավետարանն իրենց ձեռքում խաբեբայության գործիք շինելը*: Ի՞նչ ամոթալի բաներ, որ հրապարակ է հանած այդ ոգելից աշխատության մեջ, դոքա տակավին հարյուրից մեկը չեն, ինչ որ հայտնի է լուսավոր մարդոց առհասարակ, որսորդ միսիոնարների վերաբերությամբ, նոցա ասածների հարյուրերորդ մասը տակավին չէ ընկել գրչի տակ, բայց ՀաՃՃիպալ փոոթաս. հեռի չէ այն օրը, երբ հայ ազգության ոգին հաշիվ կպահանջե նոցանից լուսավոր աշխարհի առաջև»[2]:

Այնուհետև կանգ առնելով «Մեղուի» հոդվածագրի մի շարք սխալ տեսակետների վրա, Նալբանդյանը շարունակում էր. «Բայց ցավում ենք, որ արգո հեղինակը թյուր ըմբռնություն ունի բողոքական եկեղեցու բռնակալ դրությանց մասին: Հեղինակը կարծում է, թե այդ բոլոր պախարակելի գործերը և հալածասեր ուղղությունքը Տաճկաստանի մեջ գտնված միսիոնարների սոցա անհատական հատկություններից է բխում և թե բուն միսիան, այսինքն՝ կառավարող ընկերությունը ազատ է այդ դատապարտելի գործերից... Մենք ո՛չ միայն համաձայն չենք արգո հեղինակի կարծիքին, այլ մանավանդ դորան ներհակ կարծիքի տեր ենք»[3]:

1 *Մ. Նալբանդյան*. Երկերի լիակատար ժողովածու. հ. 4, էջ 306:
2 Նույն տեղում, էջ 304:
3 Նույն տեղում:

Խոսելով ամերիկյան միսիոներների խարդախությունների մասին, Նալբանդյանը իր եղբորն ուղարկած նամակներից մեկում ասում էր. «Ես չգիտեմ, թե պաստոր Բարտոլդը Թուրքիայի հայ բողոքականների մասին ինչ է տպագրել, բայց զգում եմ, որ դա պետք է լինի աչառու ներբող մասնագիտությամբ իր եղբայրակիցների՝ ամերիկական արկածախնդիրների օգտին: Այդ խնդրի մասին ինչ էլ որ տպագրեն միսիոնարները՝ անիրավացի է ու սուտ, այդ հարցում նրանց կարելի է հավատալ այնքան, որքան կարելի է հավատալ եզվիտներին, երբ նրանք շարադրում են XVI և հետագա դարերի պատմությունը: Իհարկե, ով տեղում հիմնավորապես չի ուսումնասիրել, թե ո՛վքեր են հայ բողոքականները և որ գլխավորն է, թե ի՛նչ տեսակ մարդիկ են այդ պարոնայք միսիոներները, նա անպայման կխաբվի, բայց ինձ չեն մոլորեցնի ո՛չ որևէ Բարտոլդ, ո՛չ ինքը միսիան, որն աշխատում է նույն սկզբունքներով, ինչ սկզբունքներով պատվարժան Ֆրանսուա Կսավիեն աշխատում էր Հնդկաստանում, Ճապոնիայում և որոնցով աշխատում էին հետագայի եզվիտ-առաքյալները «երկնքի որդու» մայրաքաղաքում»[1]:

Մ. Նալբանդյանը, այսպիսով, դեռ իր ժամանակ բացահայտել է միսիոներների գաղութարարական նպատակները, նրանց թշնամական քաղաքականությունը հայ ժողովրդի ազատագրական շարժումների նկատմամբ: Ամերիկյան միսիոներների ազգապառակտիչ գործունեության դեմ հայ հեղափոխական-դեմոկրատի մղած պայքարի ավանդույթները շարունակեցին հետագայի առաջադիմական գործիչները: «Մասիսը», «Մետեորան», «Մանզումեի էֆքյարը», «Թատրոնը», «Արևելքը», «Հայրենիքը» և այլ պարբերականներ բազմաթիվ առիթներով անդրադարձել են միսիոներների վնասակար գործունեությանը՝ ուղղված հայ ժողովրդի ազգային միասնության դեմ: Հատկանշական է, որ արևմտահայ գործիչները ևս հատուկ ուշադրություն էին դարձնում միսիոներների պառակտիչ դերին՝ ժողովուրդների ազատագրական շարժումները բնութագրելու հարցում: 1879-ին, երբ «Մասիսում» բանավեճ էր սկսվել ամերիկյան միսիոներ Վուդի և Հորոյի (Նշան Ճիվանյան) միջև, վերջինս ընդգծում էր վերոհիշյալ դիրքորոշումը՝ հանդես գալով «Մետեորա» պարբերականում[2]:

Սուլթանական բռնակալության դեմ ուղղված հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման նկատմամբ թշնամական դիրք բռնեց նաև կայզերական Գերմանիան: XIX դարի 80-ական թվականներից սկսած նա

1 Նույն տեղում, էջ 187:

2 Մ. Ն. Հակոբյան. «Մետեորա» հանդեսը արևմտահայ լուսավորական-դեմոկրատական շարժման մեջ. Ե., 1977, էջ 252-253:



գաղութային ակտիվ քաղաքականություն վարեց Մերձավոր Արևելքում[1]: Ուշագրավ է, որ օսմանյան Թուրքիայում գերմանական ակտիվ քաղաքականության հիմքերը դրվեցին 1880-ական թթ., ռուս-թուրքական պատերազմին հետևող ժամանակաշրջանում: Արևելյան հարցում և մանավանդ Թուրքիայի ժողովուրդների ազատագրական պայքարի խնդրում Բիսմարկը ճարպկորեն օգտագործում էր այդ երկրի և եվրոպական տերությունների հակասությունները: Թուրք-գերմանական մերձեցման սկիզբը դրվեց ռազմական բնագավառում. 1880-ական թթ. Կ. Պոլիս մեկնեց մայոր ֆոն դեր Հոլցը, որը տասնամյակներ շարունակ գլխավորեց գերմանական ռազմական միսիան Թուրքիայում և հրահանգավորեց թուրքական բանակը: Հաջորդ տասնամյակին՝ 1890-ական թթ. գերմանական զենքի ներմուծումը Թուրքիայում հասավ մեծ չափերի՝ անհամեմատելիորեն գերազանցելով եվրոպական մյուս տերություններից համապատասխան ներմուծման չափերը[2]: Կայզերական Գերմանիայի ռազմական այսպիսի ներթափանցումը շատ բանով պայմանավորեց նրա և Թուրքիայի համագործակցությունը Առաջին համաշխարհային պատերազմում, իսկ դրանից առաջ և բուն պատերազմի տարիներին՝ արևմտահայերի ազատագրական շարժումները ճնշելու և նրանց անարգել ոչնչացնելու գործում: Ջգտելով իր տիրապետության տակ առնել օսմանյան ամբողջ կայսրությունը, նա պաշտպանում էր «Թուրքիայի անձեռնմխելիությունը» և աշխատում էր խափանել սուլթանական լծի դեմ ուղղված ինչպես մյուս, այնպես էլ հայ ժողովրդի ազատագրական շարժումները: Հետաքրքիր է նշել, որ Գերմանիայի կառավարող շրջանները իրենց թշնամական դիրքը հայ ժողովրդի ազատագրական շարժումների հանդեպ փորձում էին «հիմնավորել» նրանով, որ, իբր թե այդ շարժումներն ունեն սոցիալիստական բնույթ:

Մեծ պետությունների հետադեմ քաղաքականությունն արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման նկատմամբ գոտեպնդեց Բ. Դռանը: Օգտվելով նրանց բարյացակամ ու հովանավորող քաղաքականությունից, սուլթանական կառավարությունը ձեռնամուխ եղավ արևմտահայ բնակչության զանգվածային կոտորածներին: Առաջին քայլը այդ ուղղությամբ կատարվեց 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին, երբ սուլթան Աբդուլ Համիդի ցուցումներով ամայացան Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներ: Հաջորդ քայլը կատարվեց 1894 թ:

1 *А. С. Ерусалимский.* Внешняя политика и дипломатия германского империализма в конце XIX века. М., 1948, с. 247.

2 *А. С. Силин.* Экспансия германского империализма на Ближнем Востоке. М., 1976, с. 9-10.

Արյունարբու սուլթանի հրամանով թուրքական չորրորդ բանակը Զեքի փաշայի հրամանատարությամբ շարժվեց Սասունի վրա, որը հայ ազատագրական շարժման գլխավոր օջախներից մեկն էր: Սասունի հայ բնակչությունը դիմեց հերոսական դիմադրության: Պարզունակ զենքերով զինված հայ գյուղացիությունը կատարեց բազմաթիվ սխրագործություններ և ցույց տվեց խիզախության ու անձնազոհության սքանչելի օրինակներ: Բայց ուժերն անհավասար էին: Սուլթանական բանակին վերջ ի վերջո հաջողվեց մտնել Սասուն և անասելի կողոպուտի ու կոտորածի ենթարկել այն: Իսպառ ավերվեցին ու կործանվեցին 48 հայկական գյուղեր, սրի քաշվեց 10000 մարդ:

Սուլթանական կառավարությունը 1895–1896 թթ. իրականացրեց ընդհանուր և անհամեմատ ավելի մեծ չափերի կոտորածներ ու ջարդեր: 1895 թ. սեպտեմբերին Կ. Պոլսից հետո զանգվածային կոտորածներ սկսվեցին Տրապիզոնում, հոկտեմբերին՝ Էրզրումում և Մարաշում, այնուհետև՝ Սեբաստիայում, Երզնկայում, Վանում, Բայազետում, Խարբերդում, Տիգրանակերտում և այլն: Կոտորածը տարածվեց Արևմտյան Հայաստանի բոլոր գավառներում և ընդգրկեց Թուրքիայի գրեթե բոլոր հայաբնակ վայրերը: 1896 թ. օգոստոսին նույնը, ինչպես ասվեց, դարձյալ կատարվեց մայրաքաղաքում: Երկու տարվա ընթացքում սրի քաշվեց մոտ 300000 մարդ:

Հայ բնակչությանը կոտորածի էին ենթարկում ինչպես կանոնավոր զորքերը, այնպես էլ անկանոն հրոսակախմբերը: Ջարդարարները գործադրում էին անասելի բռնություններ ու գազանություններ: Նրանք սպանում էին հրացաններով, սրերով, քարերով ու փայտերով, այրում էին՝ առանձին-առանձին, կամ խմբերով՝ փակված տներում ու եկեղեցիներում: Կոտորում էին առանց սեռի ու հասակի խտրության, ենթարկում էին ամեն տեսակի տանջանքների, թալանում ու հափշտակում ժողովրդի կայքն ու գույքը: Հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ ավերվեցին, բազմաթիվ շրջաններ ու գավառներ բոլորովին ամայացան: Ինքնին հասկանալի է, որ հայ ժողովրդի ապրած այս ողբերգության համար քիչ հանցանք չունեն նշված պետությունները, որոնք, ինչպես արդեն տեսանք, հանդես եկան հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման դեմ:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

# ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ

## 1

Արևմտահայ ժողովրդի XIX դարի երկրորդ կեսի ազգային-ազատագրական շարժումը, որ ուղղված էր թուրքական բռնակալության դեմ, ուներ ռուսական կողմնորոշում: Բացառությամբ ամիրա-կղերական վերնախավի ու կոմպրադորական բուրժուազիայի, որ կապված էին սուլթանական պալատի ու արևմտյան պետությունների հետ, հայ բնակչության մյուս խավերը հիմնականում հակված էին դեպի Ռուսաստան: Ժողովրդական մասսաները համոզված էին, որ իրենց ազատագրությունը սուլթանական դաժան տիրապետությունից կարող է տեղի ունենալ Ռուսաստանի օգնությամբ:

Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը ձևավորվեց դարերի ընթացքում ռուս և հայ ժողովուրդների միջև տեղի ունեցած տնտեսական, մշակութային և քաղաքական կապերի, ռազմական համագործակցության ու բարեկամության հիման վրա: Հայտնի է, որ արդեն XI–XII դդ. Կիևում գոյություն է ունեցել հայկական գաղթօջախ, երկու ժողովուրդների միջև եղել են ռազմական համագործակցության փաստեր: Կան վկայություններ այն մասին, որ 1009, 1062 և 1280 թթ. ռուս իշխանների հրավերով ռուսական զորքերի մղած պատերազմական գործողություններին մասնակցել են նաև հայկական ջոկատներ[1]: Հետաքրքիր է նշել, որ 1410 թ. Գրյունվալդի մոտ տեղի ունեցած հայտնի ճակատամարտին մասնակցել են նաև հայերը, որոնք ռուսների, լեհերի, լիտվացիների, չեխերի, հունգարացիների հետ միասին պարտության մատնեցին տևտոն ասպետներին[2]: Ռուս-հայկական կապերը, սակայն, ավելի ուժեղացան հետագա դարերում:

Ռուսաստանում թաթար-մոնղոլական լծի թոթափումը և հզոր կենտրոնացված պետության ստեղծումը խոշոր դեր խաղացին ոչ միայն ռուս, այլև մի շարք այլ ժողովուրդների պատմական ճակատագրում: «Ռուսական կենտրոնացված պետությունը հսկայական դեր խաղաց ռուս, ուկ-

1 *Л. М. Меликсет-Бек*. Древняя Русь и армяне.- ՀՍՍՀ ԳԱ Լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու». Հ. 1, Ե., 1946, էջ 138:

2 *Е. Разин*. История военного искусства. Ч. II, М., 1940, с. 167.

*րաինական, բելոռուս ժողովուրդների և մեր երկրի մյուս ժողովուրդների պատմական ճակատագրում: Իր ծագման հենց սկզբից նա ձգողական կենտրոն և հենարան հանդիսացավ օտարերկրյա ստրկացնողների դեմ պայքարող եղբայրական ժողովուրդների համար»[1]: Ռուսական պետության հզորացումը մեծ հույսեր առաջացրեց օտար զավթիչների տիրապետության տակ հեծող շատ ժողովուրդների մեջ: Ինչպես ուկրաինացիների, բելոռուսների, սերբերի ու բուլղարների, այնպես էլ հայ ու վրաց ժողովուրդների համար Ռուսաստանը դարձավ այն պետությունը, որի օգնությամբ նրանք կարող էին ազատագրվել օտարերկրյա հարստահարիչների ծանր լծից: Պատահական չէ, որ արդեն XV դարում Բուլղարիայում լայն տարածում ստացավ յուրահատուկ մի լեգենդ՝ ճնշված ժողովուրդների պաշտպանի դերում պատկերված «Իվան պապի» մասին: Թուրքիա ուղարկված Վենետիկի պատվիրակը 1576 թ. գրում էր, որ Բուլղարիայի, Սերբիայի, Բոսնիայի, Մորեայի և Հունաստանի բոլոր ժողովուրդները միանգամայն նվիրված են Մոսկովյան մեծ իշխանին և պատրաստ են զենք վերցնել ու ապստամբել թուրքական ստրկացուցիչ լծի դեմ ու ենթարկվել Մոսկովյան պետությանը[2]: Ռուսական պետության ազատագրական միսիայի գաղափարը լայն տարածում գտավ նաև Անդրկովկասում: XV դարի վերջին Վրաստանից Մոսկվա ուղարկվեց դեսպանություն: Այն նամակում, որն իր հետ տարավ դեսպանությունը, ասված էր, որ Մոսկվան հանդիսանում է քրիստոնյա ժողովուրդների հույսը և հենարանը: 1563 թ. նոր փորձեր կատարվեցին ռուսական պետության օգնությունը ստանալու համար: 1568 թ. Վրաստանում առաջին անգամ երևացին ռուսական զորքեր, իսկ 1585 թ. Ռուսաստանի և Կախեթիայի միջև կնքվեց դաշնագիր:*

*Քաղաքական կապերը Ռուսաստանի և Անդրկովկասի միջև ուժեղացան հատկապես XVII դարում: 1660-ական թթ. հայ առևտրականները տնտեսական ու քաղաքական բնույթի բանակցություններ են վարում ռուսական պետության հետ[3]: Նույն թվականներին հայկական շրջաններում առաջ է քաշվում քաղաքական մի ծրագիր, որ նախատեսում էր Ռուսաստանի օգնությամբ հայ-հունական միացյալ ապստամբություն*

1 Թեզիսներ Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակի մասին (1654-1954). Ե., 1954, էջ 7:

2 История Болгарии. Т. I, с. 180.

3 Վ. Ոսկանյան. *Հայ-ռուսական հարաբերությունները 17-րդ դարում.– «Տեղեկագիր», 1948, N 1:*



*բարձրացնել սուլթանական տիրապետության դեմ[1]: 1670-ական թթ. սկզբներին Էջմիածնի կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին նամակ է գրում ցար Ալեքսեյ Միխայլովիչին, խնդրելով Ռուսաստանի օգնությունը պարսիկ խաների դաժան իշխանության տակ հեծող հայ ժողովրդի դրությունը բարելավելու համար[2]: Այդ տարիներին ռուսական արքունիքի հասցեով գրեթե նույն բովանդակությամբ նամակ է գրում Գանձասարի Պետրոս կաթողիկոսը[3]:*

*Այս փաստերը ոչ մի կասկած չեն թողնում այն մասին, որ արդեն XVII դարում Հայաստանում եւս մեծ հույսեր էին կապում Ռուսաստանի հետ: Ճիշտ է, արևմտաեվրոպական պետություններից օգնություն ստանալու պատրանքը դեռևս չէր վերացել, բայց հայ ազատագրական շարժման շատ գործիչներ իրենց հայացքն ուղղում էին դեպի հյուսիս՝ դեպի Ռուսաստան:*

*Այսպիսով, կարելի է ասել, որ արդեն XVII դարի հայ իրականության մեջ սկսում է ձևավորվել ռուսական քաղաքական կողմնորոշում, որը գնալով ավելի ու ավելի էր ամրապնդվում և ժողովրդականություն ստանում: Անկասկած, չափազանց խոշոր է այն դերը, որ խաղացել է ականավոր քաղաքական գործիչ Իսրայել Օրին հայ ժողովրդի ազատագրական պայքարը Ռուսաստանի հետ կապելու գործում, սակայն սխալ կլինի ասել, թե հայ իրականության մեջ ռուսական կողմնորոշման ստեղծողը և առաջին ներկայացուցիչը Օրին էր: Չի կարելի ժխտել Օրու նախորդների աշխատանքն այդ ուղղությամբ:*

*Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը պարսկա-թուրքական լծից ազատագրելու գաղափարը լայն արձագանք գտավ և արագորեն համակեց ժողովրդի լայն խավերին: XVIII դարի առաջին տասնամյակներին արդեն ռուսական կողմնորոշումը հանդիսանում էր ոչ թե անհատների ու առանձին խմբակցությունների, այլ ժողովրդական լայն զանգվածների տրամադրությունների ու ցանկությունների արդյունք, մի բան, որ չափազանց հստակ կերպով երևան եկավ հատկապես Պետրոս I-ի պարսկական արշավանքի տարիներին: Ահա մի քանի փաստեր այդ մասին:*

1 Հ. *Անասյան.* Հայ-հունական ազատագրական շարժման մի էջ Կանդիայի պատերազմի շրջանից.– «Տեղեկագիր», 1954, N 3:

2 *Ա. Հովհաննիսյան.* Հակոբ Ջուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին.– «Արարատ», 1915, N 9-10: Տե՛ս նաև *Վ. Կ. Ոսկանյան.* Հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման պատմությունից.– XVI-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայգաղթավայրերը, Ե., 1989, էջ 31-32:

3 Армяно-русские отношения в XVII веке. Сборник документов. Т. I, Е., 1953, с. 92.

*XVIII դարի հայ ազատագրական շարժման գործիչներից մեկը՝ Իվան Կարապետը, ռուսական կառավարությանն ուղարկած 1724 թ. մարտի 10-ի իր նամակում, խոսելով Արցախում տիրող դրության և մասնավորապես հայ գյուղացիության ծանր վիճակի մասին, գրում էր, որ գյուղացիներն ու տանուտերները գիշեր ու ցերեկ աղոթում են, որպեսզի Պետրոս I-ը զորք ուղարկի իրենց օգնելու համար*: Այդ նույն շրջանում հայկական գյուղերից Մոսկվա են ուղարկվել մի շարք նամակներ, որոնցով գյուղացիները խնդրում էին զորք ուղարկել թուրք-պարսկական զավթիչներից իրենց ազատագրելու համար**: Էջմիածնի կաթողիկոսական տեղապահ Հովսեփ վարդապետը Արցախի հայ մելիքներին գրած իր նամակներից մեկում հայտնում էր, որ Էջմիածնի և Երևանի հայ բնակչության «ակնկալությունն հյուսիսային է, նորա գալստյանն և ճանապարհին են սպասում: Ղապուղ են հյուսիսայնոց գալստյանն»[1]: 1724 թ. Գեղարքունիքի 30 գյուղերի բնակիչների կողմից կազմված հանրագրում ասված է, որ իրենք ցանկանում են հպատակ դառնալ և հավատարմությամբ ծառայել ռուսական արքունիքին[2]: Պարսիկների և թուրքերի լծից ազատագրվելու գործում հայերի ռուսական կողմնորոշումը առաջ էր բերում բռնակալների ցասումը և մղում նրանց դիմելու պատժիչ գործողությունների ու բռնությունների՝ խաղաղ բնակչության նկատմամբ: 1720-ական թթ. համանման իրադրության բերումով Պետրոս դի Սարգիս Գիլանենցը գրում էր, թե պարսկա-թուրքական բռնակալները «ասում ան, թէ հայքն թամամ ջառթել պիտի, որ էս երկիրն վարթարաֆ արարին, էսպես որ ըռուստն (իմա՛ ռուսին) բերին կոխեցին ղըլբաշի երկիրն, աղվանն տարան Ըսպահան և կՌ (60000) խայ էլ բոլորվել ա՝ որ ըռուստին խետ միայվորվեն, որ մեզ վարթարաֆ առեն: Հայը սուրբ, էս խեղճ խայերն որ բոլորվել ան՝ մեծ եփրատոր թագավորին (իմա՛ Պետրոս I-ի) անման ան բոլորվել»[3]:*

*Կրոնական անտագոնիզմի հետ միասին, հայերի նկատմամբ մահմեդական տիրողների չափազանց անհանդուրժող վերաբերմունքը պետք է բացատրել նշված կողմնորոշման հանգամանքով:*

*Այսպիսով, ռուսական կողմնորոշումը, դուրս գալով նեղ շրջանակներից, լայն չափեր էր ընդունել: XVIII դարում Հայաստանի ազատագրությունը պարսկա-թուրքական լծից չէր պատկերացվում առանց Ռուսաստանի օգնության: Ազատագրական շարժման բոլոր ականավոր գործիչ-*

1 *Ա. Գ. Աբրահամյան.* Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից. Ե., 1953, էջ 51:

2 Նույն տեղում, էջ 53:

3 Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի, տե՛ս «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, N 3, էջ 209:



*ներն անվերապահորեն պաշտպանում էին ռուսական կողմնորոշումը: Հայտնի է, որ քաղաքական գործունեության այդպիսի ուղու վրա էին կանգնած Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը, Հովսեփ Արղությանը և ուրիշներ:*

*Ռուսական կողմնորոշումը, ինչպես Հայաստանում, այնպես էլ թուրքական տիրապետության տակ գտնվող մյուս երկրներում, ավելի ուժեղացավ XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին, երբ տեղի ունեցան մի շարք պատերազմներ Ռուսաստանի և Թուրքիայի միջև: Այդ պատերազմները թուլացնում էին Օսմանյան կայսրության ռազմական հզորությունը և օբյեկտիվորեն ստեղծում էին բարենպաստ պայմաններ՝ հակասուլթանական ազգային-ազատագրական շարժումների համար: Ավելին: Այդ ժամանակաշրջանում Ռուսաստանի զինված օգնության ու դիվանագիտական միջամտության շնորհիվ թուրքական տիրապետությունից ազատագրվեցին մի շարք ժողովուրդներ: «Երբ 1804 թ.,– գրում էր Էնգելսը,– պայթեց սերբական հեղափոխությունը, Ռուսաստանն անմիջապես իր պաշտպանության տակ վերցրեց ապստամբած «ռայաներին» և, պաշտպանելով նրանց երկու պատերազմներում, երկու պայմանագրով նրանց երաշխավորում էր իրենց երկրի անկախությունը ներքին գործերում: Իսկ ո՞վ որոշեց պայքարի ելքը հույների ապստամբության ժամանակ: Ո՛չ Յանինայի Ալի փաշայի դավադրությունները և խռովությունները Յանինայի տակ, ո՛չ Նավարինի ճակատամարտը, ոչ ֆրանսիական բանակը Մորեայում կամ լոնդոնյան կոնֆերանսներն ու արձանագրությունները, այլ Դիբիչը, որ ռուսական բանակի գլուխ անցած Բալկանների վրայով մտավ Մարիցայի հովիտները»[1]:*

*Մի այլ կապակցությամբ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը 1853 թ. գրել են. «Սերբերին, որոնց թուրքերը երկար ժամանակ ճնշում էին, ռուսական 1809 թ. պատերազմը հնարավորություն տվեց ձեռք բերելու ինքնուրույնություն թեկուզ և թուրքերի գերագույն իշխանության ներքո: Այդ ժամանակներից սկսած Սերբիան մշտապես մնում էր Ռուսաստանի անմիջական հովանավորության տակ»[2]:*

*Հանդես գալով այսպիսի դերում, Ռուսաստանը զգալի համակրանք էր վայելում թուրքական տիրապետության տակ հեծող ժողովուրդների մեջ: «Չնայած Ագրամի և Պրագայի էնտուզիաստների պանսլավոնական բոլոր ջանքերին, սերբը, բուլղարը, բոսնիական ռայան, Մակեդոնիայի ու Թրակիայի սլավոն գյուղացին ազգային մեծ համակրանք են տածում դե-*

1 *К. Маркс и Ф. Энгельс.* Сочинения. Т. 9, с. 32.

2 Նույն տեղում, էջ 10:

պի ռուսները և ունեն նրանց հետ ավելի շատ շփման կետեր, հոգևոր հաղորդակցության ավելի շատ միջոցներ, քան նույն լեզվով խոսող հռոմա-կաթոլիկական հարավային սլավոնների հետ: Ինչ որ էլ լինի, նրանք Պետերբուրգից են սպասում իրենց մեսիային, որը նրանց կազատի բոլոր չարիքներից»[1]:

Հասկանալի է, որ ցարիզմն այն ուժը չէր, որ մտահոգվեր ճնշված ժողովուրդների ազատագրությամբ: Հայտնի է, որ նա ազգային ճնշման քաղաքականություն էր վարում ռուսական կայսրության ոչ ռուս ժողովուրդների նկատմամբ: Սակայն ցարական կառավարությունը, ելնելով իր արտաքին քաղաքականության շահերից, պաշտպանում էր Թուրքիայի դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումները, պաշտպանում էր այնքանով, որքանով որ դրանք համապատասխանում էին իր ծրագրերին: Ցարական Ռուսաստանի քաղաքականությունն Արևելյան հարցում, նրա պատերազմները Թուրքիայի դեմ օբյեկտիվորեն օգնում էին Օսմանյան կայսրության լծի տակ գտնվող ազգությունների ազգային-ազատագրական շարժման զարգացման ու հաջողության գործին: Բայց սա հարցի միայն մի կողմն է: Եթե ցարական կառավարության քաղաքականությունը թուրքական տիրապետության դեմ պայքարող ժողովուրդների նկատմամբ բխում էր սեփական տնտեսական ու քաղաքական որոշակի նկատառումներից, ապա Ռուսաստանի առաջադեմ, դեմոկրատական շրջանները ողջունում էին սուլթանական բռնապետության դեմ ուղղված ազատագրական շարժումները, ելնելով մարդասիրական գաղափարներից: Բալկանյան սլավոն ժողովուրդների ազատագրական շարժումների ժամանակ ապստամբների շարքերում կռվում էին բազմաթիվ ռուս կամավորներ, որոնք միանգամայն անկեղծությամբ ու ազնիվ ոգևորությամբ ձգտում էին ազատագրել թուրքական լծի տակ հեծող եղբայրակից ժողովուրդներին: Սուլթանական բռնապետության դեմ ծավալված ազատագրական պայքարի ջերմ պաշտպանի դերում հանդես եկավ ռուսական առաջավոր մտավորականությունը՝ դեկաբրիստները, Ա. Ս. Պուշկինը, նարոդնիկները:

Այսպիսի պարագաներում օսմանյան լծի դեմ ազատագրական պայքար մղող ժողովուրդների մեջ ավելի էր ամրապնդվում ռուսական կողմնորոշումը, ավելի էր ուժեղանում այն հավատը, որ Ռուսաստանի օգնությամբ միայն կարող են ազատագրվել թուրքական բռնապետության տիրապետությունից: Այսպես էր դրությունը Բալկանյան և մյուս երկրներում, այդպես էր վիճակը նաև Հայաստանում: XVIII դարի վերջին տասնամյակներին հայ քաղաքական գործիչները ակտիվ գործունեություն են ծավալում Հայաստանը Ռուսաստանին միացնելու ուղղությամբ: Կատարվում են բազմաթիվ դիմումներ, տեղի են ունենում բանակցություններ: Հետաքրքիր է նշել, որ 1779–1781 թթ. Հայաստանը և Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու խնդրով հատուկ հանձնարարությամբ զբաղվել է ռուս մեծ զորավար Ա. Վ. Սուվորովը[1]: Նա տեսակցություններ է ունեցել Հովհաննես Լազարևի և Հովսեփ Արղությանի հետ, նամակներ է գրել վրաց Հերակլ թագավորին, կապեր է հաստատել Արցախի հայ մելիքների հետ, մանրամասնորեն ուսումնասիրել է Անդրկովկասը և այլն[2]: Ճիշտ է, Հայաստանի և Անդրկովկասի միացումը Ռուսաստանին տեղի ունեցավ ավելի ուշ, բայց պատմական այդ ակտի նախապատրաստության մեջ փոքր դեր չխաղացին ռուս մեծ զորավարի նշված ձեռնարկումները:

Թե ինչպիսի ձգտում և վերաբերմունք կար դեպի Ռուսաստանը, այդ մասին հստակ գաղափար է տալիս նաև հայ բնակչության դիրքը ռուս ժողովրդի նկատմամբ՝ 1812 թ. հայրենական պատերազմի ժամանակ: Երբ Ռուսաստան ներխուժած Նապոլեոնի բանակների դեմ ռուս ժողովուրդը հերոսական պայքար ծավալեց, ապա ինչպես Ռուսաստանի հայ գաղթավայրերում, այնպես էլ Հայաստանում սկսվեց լայն շարժում Ռուսաստանին օգնելու համար: 1812 թ. հայրենական պատերազմի ժամանակ Ռուսաստանի հայ բնակչությունն ամեն կերպ օգնում էր ռուսական բանակին. ռուսական զորքերի շարքերում ուկրաինացի, վրացի և այլ ազգությունների զինվորականների հետ միասին կռվում էին նաև մի քանի տասնյակ հայ գեներալներ, սպաներ, ենթասպաներ և այլն[3]: Երբ պատերազմից տուժածների համար կազմակերպվեց հանգանակություն, ապա այդ նպատակով Աստրախանի հայ բնակչությունը զգալի չափով նյութական միջոցներ հավաքեց[4]: Բնորոշ է, որ պատերազմի արդեն առաջին օրերին հայկական եկեղեցիներում սկսեցին մաղթանք կատարել ռուսական բանակի հաղթանակի համար: Եփրեմ կաթողիկոսը հատուկ կոնդակով շնորհավորեց ռուսական բանակների տարած փայլուն հաղթանակը[5]: Պատերազմին մասնակցություն ունենալու համար տասնյակ հայ զինվորա-

1 Նույն տեղում, էջ 9:



1 *Մ. Ներսիսյան.* Սուվորովը և ռուս-հայկական հարաբերությունները 1770-1790 թթ., Ե., 1944:

2 М. Г. Нерсисян. А. В. Суворов и русско-армянские отношения в 1770-1780-х годах. Е., 1981.

3 Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа. Ч. III, М., 1838, с. 307.

4 Государственный архив Астраханской области, ф. 810, опись N 2, ед. хр. N 154 («Дело о пожертвованиях армянским обществом на военные нужды за 1812 г.»).

5 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 57, գ. 26, թ. 12:

կաններ արժանացան պարգևների ու շքանշանների[1]: 1813 թ. սեպտեմբերի 15-ին Ալեքսանդր I-ը Բոհեմիայի Տեպլից քաղաքում, ուր այն ժամանակ գտնվում էր ռուսական բանակի գլխավոր շտաբը, ստորագրեց «Հայ ազգին» ուղղված մի հրովարտակ, որով գոհունակություն և շնորհակալություն էր հայտնում Ռուսական կայսրության սահմաններում բնակվող հայ հասարակությանը՝ 1812-1813 թթ. ընթացքում Ռուսաստանի նկատմամբ ցուցաբերած հավատարմության և օգնության համար[2]:

Այդ շարունակական ձգտումը, որ կար դեպի Ռուսաստանը, արտահայտվեց նաև այլ ձևերով: Պարսկական խաների ու թուրք փաշաների դաժան հարստահարություններից ազատվելու նպատակով հայ բնակչությունը փորձեր էր անում անցնել ռուսական սահմանները և հաճախ օգնություն հայցող դիմումներ էր ուղարկում ռուսական զորահրամանատարությանը:

XIX դարի սկզբին թուրքական բռնակալության լծի տակ հեծող արևմտահայության մեջ նոր շարժում սկսվեց դեպի Ռուսաստան: Այսպես, 1806 թ. սեպտեմբերին ռուսական կովկասյան բանակի գեներալ Նեսվետաևին զեկուցում էին այն մասին, որ Բայազետի մոտ տասը հազար հայ բնակիչներ ցանկանում են անցնել Արևելյան Հայաստան, բայց նրանք սպասում են, որ ռուսական զորքերը գրավեն Երևանը, որպեսզի իրենք գաղթեն այնտեղ[3]: Կովկասի ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Ա. Պ. Երմոլովին 1817 թ. հայտնում էին, որ Երևանի խանության բնակչությունը ցանկանում է գաղթել ռուսական տարածքները: Այդ տարիներին սովորական երևույթ էր առանձին ընտանիքների փախուստը Երևանից դեպի հյուսիսային շրջաններ, որոնք արդեն միացված էին Ռուսաստանին[4]:

1822–1823 թթ., երբ պարսկա-թուրքական պատերազմի հետևանքով ասպատակվում էր Արևմտյան Հայաստանը, իսկ բնակչությունը գերեվարվում և կոտորածի ենթարկվում, բազմաթիվ դիմումներ ուղարկվեցին ռուսական Կովկասյան բանակի հրամանատարությանը՝ գաղթի խնդրանքով 1822 թ. Կարսի, Էրզրումի և Բայազետի հայ բնակչությունը դիմումներ ուղարկեց գեներալ Երմոլովին՝ խնդրելով թույլ տալ գաղթել Լոռի-Փամբակ: Ռուս-պարսկական 1826–1828 թթ. և ռուս-թուրքական 1828–1829 թթ. պատերազմների ժամանակ, ինչպես տեսանք, հայ ժողովրդական լայն խավերը ակտիվորեն օգնում էին ռուսական զորքերին: Այդ

1 *М. Г. Нерсисян.* Отечественная война 1812 года и народы Кавказа. Е., 1965.
2 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 57, ց. 159, թ. 7:
3 AKAK. T. III, док. 917.
4 Н. Дубровин. История войны и владычества русских на Кавказе. Т. VI, СПб., 1888, с. 245.



պատերազմների ընթացքում կազմակերպվեցին հետևակ և հեծյալ կամավորների խմբեր ու գումարտակներ, որոնք, գտնվելով ռուսական բանակի առաջապահ զորամասերում, ակտիվորեն մասնակցում էին ռազմական գործողություններին: Հայտնի է նույնպես, որ Թուրքմենչայի և Ադրիանուպոլսի պայմանագրերի կնքումից անմիջապես հետո մոտ 130000 մարդ պարսիկ խաների ու թուրք փաշաների ճնշումներից ու կեղեքումներից ազատվելու համար Կովկաս գաղթեցին:

Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը այնքան ակնառու էր, որ այդ մասին իր ժամանակին գրում էին անգամ անգլիական ճանապարհորդները: Նրանցից մեկը, պատմելով 1820-ական թթ. Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում կատարած իր շրջագայությունների մասին, հայտնում էր, որ արևմտահայերը «մեծ շահագրգռվածություն են հանդես բերում դեպի ռուսական զորքերի առաջխաղացումը և ռուսներին համարում են փրկարարներ»[1]: Այլ կապակցությամբ նույն հեղինակը հայտնում էր, թե հայերը առանց քաշվելու հայտարարում են, որ ռուսական զորքերին սնունդ մատակարարելու նպատակով իրենք գաղտնի կերպով պահում են անհրաժեշտ պաշարներ[2]:

Անգլիացի մի այլ հեղինակ, որը 1828–1829 թթ. եղել էր Ռուսաստանում, Իրանում, Թուրքիայում ու Հունաստանում, նույնպես ստիպված էր ընդունել, որ հայերը մեծ հարգանք են տածում դեպի ռուսները: «Խոյ հասնելուց մի քանի ժամ առաջ,– գրում է նա,– մենք հանդիպեցինք մոտ երկու-երեք հարյուր մարդուց կազմված մի խումբ հայերի… երբ նրանք մեզ նկատեցին, մեծ ոգևորությամբ ողջունեցին, կարծելով, թե մենք ռուսներ ենք, բայց դառնությամբ հիասթափվեցին, երբ տեսան, որ իրենք սխալվել են: Խումբը բաղկացած էր մոտ 40 քրիստոնյա ընտանիքներից, որոնք թույլտվություն էին ստացել գաղթել: Նրանք գնում էին Ռուսաստան»[3]: Արևմտահայերի մասին այդ հեղինակը պատմում էր, որ նրանք մեծ սպասելիքներ ունեն ռուսներից: «Մի անգամ մտնելով մի եկեղեցի, որտեղ նրանք աղոթում էին, համոզվեցինք, որ ավելի շատ աղոթում են ռուսների առաջխաղացման, քան թե այլ նպատակների համար»[4]:

1 *I. B. Armstrong.* Journal of Travels in the Seat of War During the Last Two Campaings of Russia and Turkey. London, 1831, p. 121.
2 Նույն տեղում, էջ 185:
3 *Th. Alcock.* Travels in Russia, Persia, Turkey and Greece in 1828-1829. London, 1831, p. 102.
4 Նույն տեղում, էջ 122:

## 2

*Հայության ռուսական կողմնորոշումը համաժողովրդական դարձավ մասնավորապես ռուս-պարսկական 1826–1828 թթ. պատերազմի ժամանակ, պատերազմ, որի շնորհիվ Արևելյան Հայաստանը ազատագրվեց պարսկախանական լծից և միացվեց Ռուսաստանին: Ռուսական զորքերի հետ միասին, որոնց շարքերում գտնվում էին Կովկաս աքսորված բազմաթիվ դեկաբրիստներ, հերոսաբար կռվում էին հայ կամավորական խմբեր[1]: Մարտական այդ համագործակցությունը շարունակվեց նաև ռուս-թուրքական 1828–1829 թթ. պատերազմի շրջանում: Ի դեպ, նկատենք, որ հայ կամավորական ջոկատների ստեղծման գործում մեծ դեր խաղացին Ներսես Աշտարակեցին ու Հարություն Ալամդարյանը:*

*Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, որն առաջադիմական մեծ նշանակություն ունեցավ երկրի տնտեսական, մշակութային ու քաղաքական կյանքում, աննախընթաց ոգևորություն առաջացրեց ժողովրդի ու նրա մտավորականության մեջ: Առաջադեմ ու հայրենասեր բոլոր գործիչները ջերմությամբ ողջունեցին պատմական այդ իրադարձությունը: Խաչատուր Աբովյանը անդրադառնալով այդ հարցին, գրում էր. «Օրհնվի էն սհաթը, որ ռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ, ու ղզլբաշի անիծած չար շունչը մեր երկրիցը հալածեց... Հայք ե՞րբ կարեն Ռուսաց արածը մոռանալ, քանի որ շունչ ունին»[2]:*

*Իր ժամանակի առաջավոր հայ գրող Մեսրոպ Թաղիադյանը, լսելով, որ ռուսական զորքերն ազատագրել են Երևանը պարսկական լծից, շտապեց Հնդկաստանից (որտեղ նա գտնվում էր այդ ժամանակ) ողջույնի նամակ ուղարկել իր հայրենակիցներին: Երևանի բնակիչներին ուղղված իր այդ նամակում, գրված 1828 թ., Թաղիադյանն ասում էր. «Աչքներդ լույս, որ մեր քաղցր աշխարհքն պարսից դառն չարչարանքիցն ազատվեց... Երբ որ լսեցի ներկա մեր աշխարհի ազատությունը, սիրտս ուրախությամբ վառվեց»[3]:*

*Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին գոտեպնդեց արևմտահայերին, որոնք ամեն կերպ ձգտում էին ազատագրվել թուրք փաշաներից և վերամիավորվել արևելահայ եղբայրների հետ: Այս ձգտումը ավելի էր խորանում, երբ ավելի էին սաստկանում սուլթանական բռնակալության ազգային ճնշումներն ու հարստահարությունները, երբ ավելի*

1 *Մ. Գ. Ներսիսյան.* Դեկաբրիստները Հայաստանում. Ե., 1958:

2 *Խ. Աբովյան.* Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 58, 180:

3 Կենսագրութիւն Մեսրովբայ Դավթեան Թաղիադեանցի, հաւաքեց և խմբագրեց տ. Յովհաննէս Մկրեան. Թիֆլիս, 1886, էջ 133-134:



*հստակ էր դառնում այն տարբերությունը, որ կար երկու հատվածների դրության միջև: Դիմենք փաստերին:*

*Ղրիմի պատերազմի տարիներին, ինչպես տեսանք, արևմտահայության ամենալայն խավերն աշխատեցին ռուսական զորքերի օգնությամբ ազատագրվելու սուլթանական Թուրքիայի տիրապետությունից: Միաժամանակ, դեպի Անդրկովկաս գաղթելու բազմաթիվ փորձեր կատարվեցին: Ռուսական զորքերի հրամանատարությունը ստանում էր բազմաթիվ դիմումներ, որոնցով թույլտվություն և օգնություն էին խնդրում գաղթելու համար: Այս ուղղությամբ շատ դիմումներ եղան հատկապես պատերազմին հաջորդող տարիներին: 1860 թ. Խարբերդի, Արաբկիրի և Էրզրումի գավառների հայ բնակչությունը, օրինակ, հատուկ դիմումներով Ռուսաստանից հովանավորություն և օգնություն էր խնդրում[1]: 1866 թ. Բայազետի, Մուշի և Սղերդի հայ բնակչությունը դիմումներ էր հղում ռուսական կառավարությանը՝ ռուսական հպատակություն ընդունելու համար: Նույն բովանդակությամբ դիմումներ ուղարկեց Վասպուրականի հայ բնակչությունը 1872 թ.:*

*Կովկասի փոխարքայի ու Երևանի նահանգապետի հասցեներով ուղարկած իրենց դիմումների մեջ վանեցիները խնդրում էին՝ Վանում ռուսական հյուպատոս նշանակել, որպեսզի նա հովանավորի ու օգնի հայ բնակչությանը[2]: Գործն այնտեղ էր հասնում, որ անասելի հարստահարություններից խուսափելու նպատակով՝ երբեմն հավատափոխ լինելու և ռուսական ուղղափառ հավատ ընդունելու փորձեր էին կատարվում: 1872 թ. Գ. Սրվանձտյանցն իր նամակներից մեկում հայտնում էր, որ Վանում Մուտ և Տես անունով մի գաղտնի ընկերություն է հիմնվել, որը տեղական բնակչությանը քարոզում է ուղղափառություն ընդունել: Ինչպես 1860-ական, այնպես էլ 1870-ական թթ. Էջմիածնի կաթողիկոսությունը ստացավ բազմաթիվ դիմումներ արևմտահայ բնակչությունից՝ Կովկաս գաղթելու ցանկությամբ: Պատահական չէր, որ հեռավոր Տավրոսի լեռներում ապրող զեյթունցիներն անգամ իրենց ազատագրության գործը կապում էին Ռուսաստանի հետ[3]:*

*Մենք արդեն տեսանք, որ ռուս-թուրքական 1877–1878 թթ. պատերազմի տարիներին արևմտահայերը գործուն մասնակցություն ունեցան Արևմտյան Հայաստանում ծավալված պատերազմական գործողություններին: Իրենց հույսերը կապելով Ռուսաստանի հաղթանակի հետ, արևմտահայերը*

1 Մատենադարան, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 8, վավ. 233ա:

2 Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԳ, էջ 273-276:

3 Մատենադարան, Կաթ. դիվան, անթվական վավերագրեր, թղթ. 21, վավ. 1410: Վավերագիրը գրված է հայատառ թուրքերենով:

*բոլոր հնարավոր միջոցներով օժանդակում էին ռուսական զորքին: Հայ բնակչությունը ռուսական բանակին տրամադրում էր սննդամթերք, խնամում էր վիրավոր մարտիկներին, բանակի հրամանատարությանը հաղորդում էր ռազմական կարևոր նշանակություն ունեցող տեղեկություններ, տալիս էր կամավորական հեծյալ և հետևակ զինված ուժեր և այլն:*

*Թուրքիայի հարստահարվող ժողովուրդները ռուսական առաջխաղացող զորքերին իրենց համակրանքի բազմաթիվ վկայություններ տվեցին: Ժամանակակից թերթերից մեկի զինվորական թղթակիցը հայտնում էր, որ ռուսական զորքերի՝ Արևմտյան Հայաստանում եղած ժամանակ տեղական բնակչությունը բարեկամաբար էր ընդունում ռուսական զորքերին*[1]*:*

*Հասկանալի է, որ սուլթանական դաժան բռնակալության տակ ճնշված ու քայքայված, անարխիայի, փաշաների ու վալիների անվերջ թալանների զոհ դարձած գյուղացիությունը համակրական վերաբերմունք պետք է ունենար դեպի ռուսական բանակը, որ ներկայացնում էր մի այնպիսի քաղաքակիրթ երկիր, ինչպիսին Ռուսաստանն էր:*

*Պատերազմը վերջանալուց հետո արևմտահայերի մեջ մեծ շարժում սկսվեց Ռուսաստան գաղթելու համար: Գաղթն այնպիսի զանգվածային կերպարանք ստացավ, որ ցարական կառավարությունը որոշեց արգելել այն: Հրապարակվեցին հատուկ կոչեր, որոնցով արևմտահայերին առաջարկվում էր գաղթի չդիմել: Սակայն, չնայած դրան, միայն Էրզրումից գաղթեցին մի քանի հազար մարդ*[2]*:*

*Արևմտահայերի ռուսական կողմնորոշման փաստը չէին ժխտում անգամ անգլիական կառավարության ներկայացուցիչները, որոնք ամեն կերպ հովանավորում էին թուրքական բռնապետությունը: 1869 թ. Էրզրումի անգլիական հյուպատոս Թեյլորը գրում էր, թե արևմտահայերը խիստ դժգոհ են տիրող կարգերից և պատրաստ են գաղթելու Ռուսաստան: Նրանք ամեն կերպ գովաբանում են Ռուսաստանը և գտնում, որ միայն նա ցանկություն ունի և կարող է ազատագրել արևմտահայերին սուլթանական լծից: Այս մտայնությունը, ասում էր հյուպատոսը, գնալով ավելի ու ավելի է ուժեղանում: 1876 թ. Կ. Պոլսի անգլիական դեսպանը հայտնում էր, որ արևմտահայ ժողովրդական զանգվածները, որոնց հարստահարությունները ծայր աստիճանի էին հասնում, ուժեղ ձգտում ունեն դեպի Ռուսաստան*[3]*:*

1 Тифлисский вестник, 1877, N 119.

2 Сборник материалов по русско-турецкой войне 1877–1878 гг. на Кавказско-малоазиатском театре. Вып. 1, с. 123-124.

3 Blue Book, Turkey, 1877, p. 375.



*Միքայել Նալբանդյանը միանգամայն իրավացի կերպով դեռևս 1861 թ. նշում էր այն փաստը, որ Արևմտյան Հայաստանի բնակչությունը, չնայած անգլիական և ֆրանսիական գործակալների բոլոր խարդախություններին, պահպանում է իր տրամադրվածությունը դեպի Ռուսաստանը. «...Հայերը ամբողջ Թուրքիայում,– գրում էր Միքայել Նալբանդյանը,– տրամադրված են Ռուսաստանի օգտին, և եթե ռուս կառավարության կողմից ցույց տրվի նրանց թեկուզ և ամենափոքր օգնությունը, այն ժամանակ ֆրանսիական և անգլիական կառավարությունները կզրկվեն նրանց վրա ներգործելու հնարավորությունից, հետևաբար և կանգ կառնի նրանց կրոնի և ազդեցության պրոպագանդը»*[1]*:*

*Ղրիմի պատերազմի Կովկասյան ճակատի ռազմական գործողությունների ղեկավարներից մեկը՝ գեներալ-մայոր Մ. Լիխուտինը գրում էր, որ արևմտահայ ժողովուրդը պարզ գիտակցում է, որ ինքը օգնություն կարող է սպասել ոչ թե արևմտաեվրոպական պետություններից, այլ միայն Ռուսաստանից: Այդ պատճառով էլ նրանք ամենայն սիրով ու ջերմությամբ են խոսում Ռուսաստանի մասին*[2]*:*

*Րաֆֆին իր ժամանակ միանգամայն բնական էր համարում այն, որ արևմտահայերը դեպի Ռուսաստան են ձգտում*[3]*: Հայ պարբերական մամուլի մեծ մասը խրախուսում էր ռուսասիրական տրամադրությունները: Այդ տեսակետը բաժանում էին «Հյուսիսափայլը» և նրա խմբագիր Ստ. Նազարյանը: «Հայերը,– գրում էր Նազարյանը,– ճշմարտապես և իրավացի շնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նորանց մի անտանելի, անարգական ստրկութենից»*[4]*: Այդ կարծիքին էին Արծրունին, Արփիարյանը, և շատ ուրիշներ: 1872 թ. նոյեմբերին «Օրագրի» խմբագիր Օ. Խոճասարյանը Բ. Դռանն ուղղած սուր քննադատության մեջ անսքող արտահայտում էր արևմտահայության հույսը, որ նա տածում էր դեպի Ռուսաստանը. «Հայ ազգը,– գրում էր նա,– պիտի պարտավորի դիմել Էջմիածին, ուր է իր հոգևոր գլուխը, և անոր միջոցով Ռուսիո վեհափառ կայսեր պիտի ներկայացնե Հայաստանի վիճակին խնդիրը»*[5]*:*

*Արևմտահայերի ռուսական կողմնորոշման դրսևորումներից էին 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ծայր առած գաղթերը Ռուսաստան: Արևմտահայ պարբերականների՝ «Մասիսի», «Լրագրի», «Մանզումեի էֆքյարի» էջերում բազմաթիվ նյութեր են տպագրվել ան-*

1 *Մ. Նալբանդյան.* Երկերի լիակատար ժողովածու. հ. 2, էջ 357:

2 *М. Лихутин.* Русские в Азиатской Турции, с. 168.

3 *Րաֆֆի.* Տաճկահայք, էջ 114:

4 «Հյուսիսափայլ», 1859, հունվար, էջ 12:

5 «Նոր կեանք», Լոնդոն, 1900, N 3, էջ 40:

*տանելի հարստահարությունների ենթարկվող ժողովրդի՝ ռուսական հովանու ներքո անցնելու կամ այդպիսի ցանկություն ունենալու մասին: 1878 թ. սեպտեմբերին Ռուսաստան գաղթեցին Կարինի և Ալաշկերտի հայ բնակիչների խմբերը, գաղթելու տրամադրությունները տարածվում էին մանավանդ Տիգրանակերտում և այլուր*[1]*: Թուրքական կառավարությունը փաստորեն չէր արգելում հայերի գաղթը՝ շարունակելով դեռևս 1860-ական թթ. Ալի փաշայի ուղեգիծը Արևմտահայաստանը հայերից պարպելու գործում: Հիրավի, երբ 1867 թ. Կարինի վալի Խայրեդդին փաշան դիմեց մեծ վեզիրին՝ արքունի գանձարանն ու երկիրը շենացնող հայ բազմություններին Վանում, Մուշում և Բաղեշում որոշ անվտանգություն ապահովելու համար, խիստ առարկության հանդիպեց. «Դուք պետական ներքին քաղաքականության խառնվելու չեք. իսկ հայոց՝ բարի ճանապարհ, եթե գաղթել կուզեն. երկիրը կրնամ շենացնել չերքեզներով»*[2]*:*

*Արևմտահայերի ռուսական կողմնորոշումը դրսևորվեց նաև 1880-ական թթ. սկզբներին: Այդ են վկայում արևմտահայերի բազմաթիվ դիմումներն ու խնդրագրերը: Ահա մի քանի օրինակ: Վասպուրականի բազմահազար հայ բնակչության ներկայացուցչական ժողովը 1880 թ. մարտ ամսին հատուկ դիմում ուղարկեց ռուսական կառավարությանը: Նկարագրելով իրենց ծանր վիճակը և նշելով այն, որ սուլթանական բռնակալությունը հայ ժողովրդի նկատմամբ վարում է ֆիզիկական բնաջնջման քաղաքականություն, ժողովը խնդրում էր Ռուսաստանի օգնությունը: Դիմումի մեջ ասված էր, որ հայ ժողովուրդը սպասում է Ռուսաստանից այնպիսի ազատագրական առաքելություն, ինչպիսին նա կատարել է բուլղար ժողովրդի համար*[3]*: Երկու տարի հետո, 1882 թ. փետրվարին, Վանի հայ բնակչությունը նոր դիմում ուղարկեց Ռուսաստան*[4]*: Այդ նույն ժամանակ, 1882 թ. ապրիլ ամսին, Կ. Պոլսի ռուսական դեսպան Նովիկովը զեկուցում էր արտաքին գործերի մինիստր Գիրսին, որ անձնական խոսակցության ժամանակ Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսեսը հայտարարել է, թե հայերն իրենց հայացքն ամբողջությամբ ուղղել են դեպի Ռուսաստան, որպես Արևելքի ճնշված ժողովուրդների միակ պաշտպանի ու ազատագրողի*[5]*:*

*1880-ական թթ. երկրորդ կեսին և ապա հաջորդ տարիներին, սակայն, հայերի ռուսական կողմնորոշումը կանգնեց փակուղու առաջ, մի*

1 «Լրագիր», Կ. Պոլիս, 1879, յունուարի 8:

2 *Ա. Ալպօյաճեան.* Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Բ., Գահիրէ, 1937, էջ 1341:

3 АВПРИ, Армянский фонд, Константинопольское посольство, д. 118, л. 3-4.

4 Նույն տեղում, գ. 119, թ. 47:

5 Նույն տեղում:



*հանգամանք, որ պայմանավորված էր ցարական արքունիքի հակահայկական քաղաքականությամբ և Արևելյան հարցում նրա քաղաքականության կտրուկ փոփոխությամբ: Անգլիայի հետ արտաքին քաղաքական հակասությունները և հայ ազատագրական շարժման ծավալումից ունեցած երկյուղը ցարիզմին փաստորեն հասցրեցին հակահայկական դիրքորոշման*[1]*: Ցարիզմը ձեռնարկեց մի շարք քայլեր, որոնք չէին կարող դժգոհություն չառաջացնել հայկական շրջաններում: Ինչի՞ մասին է խոսքը: Եթե 1850–1870-ական թթ. ռուսական միապետությունը հովանավորում էր արևմտահայերին, կողմ էր օսմանյան պետության դեմ ուղղված նրանց ազատագրական շարժմանը, ապա 1880-ական թթ. կեսերից սկսած անցավ Բ. Դռան պաշտպանների շարքը: Հայ ազգային-ազատագրական շարժումը համարվեց վնասակար ինչպես Օսմանյան, այնպես էլ Ռոմանովների կայսրությունների համար, փակվեցին բազմաթիվ դպրոցներ ու մշակութային-լուսավորական ու բարեգործական ընկերություններ Կովկասում, խիստ հալածանքներ սկսվեցին հայ կամավորների՝ բոլոր այն հայրենասերների դեմ, որոնք փորձում էին անցնել Արևմտյան Հայաստան՝ տեղում մասնակցելու ազատագրական պայքարին:*

*Առանձնապես մեծ վրդովմունք ու զայրույթ առաջացավ 1890 թ., երբ ցարական իշխանությունները դաժան պատիժների ենթարկեցին մի խումբ հայ կամավորների, որոնք փորձեցին երիտասարդ հայրենասեր Սարգիս Կուկունյանի գլխավորությամբ անցնել սահմանը և միանալ արևմտահայ ապստամբներին: Խմբի անդամներից մի մասը աքսորվեց Սիբիր, մյուս մասը՝ Սախալին: Այստեղ ուղարկվեց և Կուկունյանը, որ դատապարտվել էր քսան տարվա տաժանակիր աշխատանքի:*

*Սարգիս Կուկունյանը Արևմտահայաստանի ազատագրությանը գործնականում ձեռնարկած առաջին մտավորական գործիչներից մեկն էր: Նրա հայրենասիրական տրամադրությունները ձևավորվել են դեռևս Վ. Գոլոշյանի գործունեության շրջանում՝ 1890-ական թթ., մասնավորապես Պետերբուրգի իր ուսանողական միջավայրում: Հետաքրքիր է, որ Կուկունյանը մտերիկից շփվել է Կարապետ Եզյանի հետ և նրան ներկայացրել Արևմտահայաստան անցնելու և նրա ազատագրության համար մարտնչելու իր ծրագիրը: Կ. Եզյանը սկզբունքորեն չի առարկել Կուկունյանին՝ առաջարկելով մի որոշ ժամանակ Պարսկաստանում լրջորեն նախապատրաստվել ծրագրվող արշավանքին:*

*1890 թ. ամռանը, կազմելով հայրենասեր երիտասարդների մի խումբ, Կուկունյանը փորձեց անցնել ռուս-թուրքական սահմանը: ՀՀ*

1 *А. Ф. Миллер.* Краткая история Турции, с. 107.

Դաշնակցության նորակազմ կենտրոնը թեև նախապես առարկում էր մեծ խմբով սահմանն անցնելուն, այն համարելով նախապես դատապարտված գործ, սակայն հաշվի առնելով Կուկունյանի ջոկատի ոգևորությունը և այն սառեցնելու անցանկալի հետևանքները, համաձայնեց, որ ջոկատը մանր խմբերով անցնի սահմանը, ապա հաջորդ գարնանը միավորվելով, սկսի իր զինված պայքարը Արևմտահայաստանում:

Կուկունյանի արշավանքը, սակայն, դատապարտված էր ձախողման՝ ազգային շարժման հանդեպ Ռուսաստանի ժխտական վերաբերմունքի պատճառով: Մյուս կողմից, արշավանքը նախապատրաստված էր հապշտապ, Կուկունյանի ծրագիրը առավել հենվում էր ոգևորության, քան սթափ հաշվարկների վրա, բնականաբար, պակասում էր նաև փորձը:

Բասենի Ջյուրյուկ գյուղից խումբը 1890 թ. սեպտեմբերին անցնում է Ալաշկերտի սահմանը և ոտք դնում Արևմտահայաստանի տարածքներ: Թուրք սահմանապահների հետ ընդհարվելուց հետո խումբը հետ է նահանջում դեպի Բասենի կողմերը, սակայն այստեղ ևս շրջապատվում է Կաղզվանից հայտնված կազակ սահմանապահների կողմից: Փոխհրաձգության ժամանակ ջոկատը կորցնում է վեց մարդ, իսկ Կուկունյանին և նրա երկու տասնյակի չափ զինակիցներին ձերբակալում են կազակները: Մեկ ամիս Կաղզվանի բանտում պահելուց հետո կալանավորներին տեղափոխում են Կարսի բանտ: Դատարանը, առաջնորդվելով հայերի ազատագրական շարժումներն ընկճելու՝ ցարիզմի քաղաքական պատվերով, Ս. Կուկունյանին դատապարտեց 20 տարվա տաժանակիր աշխատանքի և մշտական աքսորի: Խմբի մյուս անդամները համեմատաբար թեթև պատիժ ստացան՝ դատապարտվելով 8-15 տարվա տաժանակիր աշխատանքի՝ աքսորավայրում: 1894 թ. բանտարկյալները աքսորվեցին Սախալին: 1905 թ. Կուկունյանը ցարական հոկտեմբերյան մանիֆեստից հետո ազատվում է աքսորից, վերադառնում է Կովկաս և ՀՀ Դաշնակցության շարքերում իր մասնակցությունը բերում ազատագրական պայքարի իրադարձություններին: 1910 թ. նոյեմբերին նա կրկին ձերբակալվում է Բաքվում և նետվում Օրյոլի բանտ, որտեղ և վախճանվում է 1914 թ.*:

Հայ հասարակական-քաղաքական գործիչների շրջանում, ժողովրդի լայն խավերում բնականաբար առաջացավ հիասթափություն, ապա նաև դժգոհություն ու թշնամություն դեպի «Հյուսիսի արծիվը»: Սակայն հատկանշական է, որ շատերը կարողացան տարբերել ցարական կառավարությունը ռուս առաջավոր ուժերից ու ժողովրդից: Արփիար Արփիարյանը, օրինակ, 1887 թ. գրել է. «Ռուս ժողովուրդը հավան չէ յուր չինովնիկներու հայատյաց քաղաքականության: Թեպետև կատկովներ, մալշանովներ և ուրիշ խավարամիտներ մերթ ընդ մերթ հարվածներ կտեղան



հայոց դեմ, բայց ողջամիտ, լուսավորյալ մասը բոլորովին տարբեր կմտածեր»[1]:

Ռուսական կողմնորոշման համոզված պաշտպան էր Կոմիտասը: Նա զարմանալի խորաթափանցությամբ նկատում էր, որ Ռուսաստանը Հայաստանի նկատմամբ իր քաղաքականությունն իրականացնում է, անտարակույս, սեփական շահերից ելնելով, որը միաժամանակ, համընթաց է հայերի ազգային տրամադրություններին ու շահերին: Նույն կերպ, Ռուսաստանի հետ Արևմտահայաստանի միավորվելը համապատասխանում է հայության ազատագրական բաղձանքներին: Ա. Չոպանյանին գրած՝ 1912 թ. դեկտեմբերի 25/12 թվակիր նամակում նա նշում էր, իրոք, գործնական ուղիներ այս հարցում: «Զպե՛տք է բաժանվենք,– գրում էր նա,– չպե՛տք է խաբվենք, Եվրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներեն, միանալու ենք և գործնական ճամփան բռնելու՝ ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայությունն ամփոփել ռուսի իշխանության տակ, երկրորդ քայլն է տնտեսապես ու բարոյապես, զուտ ազգային, առանց օտարեն ու մեզ անմարս գաղափարներով առաջնորդվելու՝ զարգանալ. երրորդ քայլն արդեն ինքը՝ ռուս հեղափոխությունն է, որ պիտի անե, ո՛չ թե մենք. իսկ մենք օգտվելու ենք այդ քայլեն, սակայն պատրաստվելով, լեհերու պես զուտ ազգային շավիղը բռնելով»[2]:

Ա. Չոպանյանը ևս բաժանում էր Կոմիտասի այս տեսակետը, ընդսմին, հստակ տարբերելով ռուսական կառավարությունը և չինովնիկությունը ռուս ժողովրդից և նրա ստեղծած համամարդկային մշակութային արժեքներից և ընդգծելով նրա խոշոր դերը Թուրքիայի հպատակ ազգությունների ազատագրության գործում: «Ապուշություն է «ռուս» ըսելով չինովնիկները, կնուտը, Սիպերիան, կախաղանը և բանտերը միայն տեսնել... կհասկնամ ռուս ժողովուրդին խանդոտ, գաղափարապաշտ, մարդասեր հոգին, կհասկնամ ռուս զորության կատարած անուրանալիորեն գեղեցիկ ու մարդկօգուտ դերը մահմեդականությունը զսպելու և Թուրքիո գերի ազգությանց ազատման նպաստելու, կհասկնամ ռուս գիտությունը, գեղարվեստը, կհասկնամ ռուս ազատագրական շարժման բոլոր հանդուգն ու հոյակապ ճիգերը, բոլոր այն անբաղդատելի հերոսները, զոր տված է ռուս տարրը ազատության դատին համար...»[3],– գրում էր նա:

Ռուսական կողմնորոշմանը պատմական հիմնավորում էր տալիս Հովհ. Թումանյանը, որը հայ ժողովրդի համար կենսականորեն կարևոր

---

1 «Մասիս», 1887, N 3870:
2 ՊԲՀ, 1958, N 1-2, էջ 264-265:
3 Նույն տեղում, 1998, N 1, էջ 56:

այս խնդրին խորամուխ է եղել իրեն հատուկ լայնախոհությամբ և հիմնավոր վերլուծությամբ: Նրա համոզմամբ, Հայկական հարցը կարող էր և ի վիճակի էր լուծելու միայն Ռուսաստանը, որովհետև նրա շահերը համընկնում էին հայ ժողովրդի շահերին: Հենց այս պատճառով էլ բանաստեղծի համակրանքներն ու հույսերը կապվում էին հզոր Ռուսաստանի հետ:

Ռուսաստանի դերը՝ օսմանյան Թուրքիայի բռնակալական հզորությունը կոտրելու հարցում և մյուս կողմից՝ պաշտոնական Ռուսաստանի քաղաքական դեմքն ու գործողությունները նա հիմնովին տարբերում էր միմյանցից: Ընդհակառակն, Ռուսաստանի վերոհիշյալ պատմական դերը Թումանյանին հիմք էր տալիս եզրակացնելու նրա հուսադրող ապագայի մասին, իսկ պաշտոնական արատները՝ համարել ոչ թե անհրաժեշտություն, այլ անցողիկ երևույթ: Ռուսաստանը, գրում էր Թումանյանը 1914 թ., երեք հարյուր տարի անհաշտ ու անընդհատ պատերազմներ է մղել օսմանյան Թուրքիայի՝ «էդ դաժան ու խավար ուժի դեմ՝ հետզհետե կտրատելով ու կրճատելով նրա լայնածավալ տերության սահմանները... մեծ է Ռուսաստանի էս ծառայությունը քաղաքակիրթ աշխարհի առաջ և երբեք նրա կառավարության հոռի կողմերը չպետք է արգելեն տեսնելու էս մեծ գործը...»[1]: Թումանյանը հոգևոր սերտ աղերսներ էր տեսնում մասնավորապես ռուս և հայ մշակութային գործիչների, նրանց ստեղծած արժեքների միջև և ընդգծում էր, որ հայ մտավորականությունը ձևավորվել ու իր զարգացումն է ապրել ռուսական մշակույթի բարերար և խոր ազդեցության ներքո: Վ. Բրյուսովին ուղղած իր խոսքում նա հայտնում էր. «Սիրով ու պատկառանքով խոնարհում եմ ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև... որի վրա կրթվել են մեր գրողներից ու մտավորականներից շատ շատերը»[2]: Եվ դարձյալ, ի հակակշիռ դրա, Թումանյանը ռուսական պաշտոնեության անմտությունն էր համարում, օրինակ, Դաշնակցության դեմ կազմակերպած նրա դատը 1912–1913 թթ., քանի որ դաշնակցության պայքարը ոչ թե Ռուսաստանի դեմ էր, այլ «ազգային ինքնապաշտպանություն, ուրիշ ոչինչ»[3]:

Արևմտահայության ապագան Ռուսաստանի հետ էր կապում ականավոր զորավար Անդրանիկը: Նա ևս Հայաստանի ռուսական հատվածում ապահովված էր համարում հայության ֆիզիկական գոյությունը, ուստի և կուսակցությունների, մասնավորապես Դաշնակցության առաջնահերթ

1 *Հովհ. Թումանյան.* Երկերի լիակատար ժողովածու. հ. 7, Ե., 1995, էջ 274:

2 Նույն տեղում, էջ 220-221:

3 Նույն տեղում, էջ 485:



խնդիրն էր համարում ազատագրական պայքարի կազմակերպումն ընդդեմ օսմանյան բռնապետության[1]:

Անդրանիկը ևս որոշակիորեն տարբերակված վերաբերմունք ուներ ռուսական բյուրոկրատիայի, կառավարությունների և մյուս կողմից ռուս ժողովրդի և ռուսական պետության նկատմամբ: Կարելի է հիշել նրա քննադատական դիտողությունները ռուսական կառավարության հաացեին՝ կամավորական շարժումն օգտագործելու և ապա, իր նեղ եսասիրական շահերից ելնելով՝ դրանք ցրելու վերաբերյալ, 1917 թ.՝ Ժամանակավոր կառավարության քննադատությունը՝ հայ գերիների հանդեպ անտարբերության համար և այլն: Այս առողջ կողմնորոշմամբ է բացատրվում Անդրանիկի համագործակցությունը ռուսական բանակի հետ նաև 1918 թ.՝ Կովկասյան բանակի կազմում, որտեղ գլխավորում էր Հայկական առանձին դիվիզիան: Ռուս զինվորներին զինաթափ անելու մտադրություն ունեցող գործիչներին նա զայրույթով ասել է. «Մեր միակ բարեկամը Ռուսիան է, և դուք ձեր աղետաբեր ձեռնարկով կուզեք զայն ալ հեռացնել մեզմե: Մենք հրացաններու պետք չունինք, մենք անոնց բարեկամության պետք ունինք»[2]: Կովկասի ժողովուրդների խաղաղությունն ու համերաշխությունը ապահովելու գործում Անդրանիկը անգնահատելի էր համարում Ռուսաստանի դերը այդ ժողովուրդների զարգացման ընթացքին լայն հուն տալու՝ ռուսական գործոնին: Նույն՝ 1918 թ. Անդրանիկը ասել է. «Կովկասյան ժողովուրդները միտք չունին բաժնվելու ռուս դեմոկրատիկ հանրապետութենեն, այլ էր, երբ կար ցարիզմը»[3]: 1926 թ. նոյեմբերի 28-ին կազմակերպված տոնախմբության ժամանակ, իր մահվանից ամիսներ առաջ, Անդրանիկը նշել է, որ հայ ժողովուրդը առհավետ փրկված է շնորհիվ ռուս ազատասեր ժողովրդի, որն արհավիրքի ժամին ձեռք մեկնեց խորտակվող հայ ժողովրդին և փրկեց անդունդի եզրից: Այժմ բազմաչարչար ու տանջված հայ ժողովուրդը ունի իր հայրենիքը[4]:

Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությանն ու համագործակցությանը կարևորագույն նշանակություն էր տալիս հայ հանճարեղ բանաստեղծ Ավ. Իսահակյանը, որն այդ բարեկամությունը իմաստավորում էր ամենից առաջ հայության հարատևման ու պատմական ու մշակութային առաջընթացի տեսակետից: XX դարի առաջին երկու տասնամյակների ժա-

1 Տե՛ս *Г. Р. Симонян.* Истинный народный герой.– ИФЖ, 1988, N 3, с. 16.

2 «Մշակ», 1918, հունվարի 25-26:

3 Նույն տեղում:

4 Տե՛ս *Մ. Գ. Ներսիսյան.* Ժողովրդական հերոսը (Զորավար Անդրանիկի ծննդյան 100-ամյակի առթիվ).– «Սովետական Հայաստան», 1965, փետրվարի 25, «Լրաբեր», Նյու Յորք, 1965, մարտի 13:

մանակաշրջանի հայ մտավորականներից և ոչ մեկը, թերևս, այնպես չի հիասթափվել Հայկական հարցում արևմտյան տերությունների «ավանդական» դարձած երեսպաշտ ու կեղծավոր քաղաքականությունից, ինչպես Ավ. Իսահակյանը: Ի տարբերություն համազգի «սթափ» շատ քաղաքագետների և լրջմտության հավակնող ազգային գործիչների, բանաստեղծը խորաթափանց հայացքով էր գնահատում Մեծ եղեռնից հետո Եվրոպայի խոսքի ու գործի աղաղակող տարբերությունը հայության ճակատագրի նկատմամբ, մասնավորապես, Սևրի պայմանագրից (1920 թ. 10 օգոստոսի) մինչև Լոզանի կոնֆերանսը (1922 թ. նոյեմբեր 20–1923 թ. հուլիս 24) ընկած ժամանակաշրջանում, երբ Եվրոպան բավարարվեց քար քաշելով Հայկական հարցի վրա: «Այժմ այլևս անմտություն է,– գրում էր Ավ. Իսահակյանը,– հույս դնել Արևմուտքի վրա. ոչ մի օգնություն: Սա պարզ է: Ինքը՝ Անգլիան, հայտնեց, թե մենք շահագրգռված չենք հայերով: Դա մարդասիրական-բարեգործական հարց է, իսկ Եվրոպան երբեք ընդունակ չէ եղել և չէ մարդասեր լինելու:

Բայց մենք ունենք ելք՝ ռուսը, ռուս պետականությունը...»[1]:

Վերը նշված և բազմաթիվ այլ փաստեր անառարկելիորեն ցույց են տալիս, որ XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբների հայ առաջավոր հասարակական-քաղաքական գործիչների, հոգևորականների, մտածողների, գրողների և արվեստագետների համոզմունքով Հայկական հարցը ի զորու է լուծելու միայն Ռուսաստանը[2]:

Նշելով հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը, պետք է միաժամանակ մերժել այն սխալ տեսակետը, որ իբր Թուրքական տիրապետության տակ գտնվող Մերձավոր Արևելքի ժողովուրդներից ռուսական կողմնորոշում ունեցել է միայն հայ ժողովուրդը: Չի կարելի անտեսել պատմական այն փաստը, որ մեզ այստեղ հետաքրքրող ժամանակաշրջանում, ինչպես տեսանք, դեպի Ռուսաստան են ձգտել, օրինակ, նաև քրդերը, ասորիները և սուլթանական դեսպոտիզմի տակ հեծող մյուս ժողովուրդները:

* * *

Հայաստանի պարբերական մամուլում վերջին տարիներին հրապարակվել և շարունակում են հրապարակվել հոդվածներ, որոնց մեջ և իրավացիորեն, քննադատության են արժանանում Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանի պատմագիտության թույլ տված սխալները: Սակայն,

1 Ավ. Իսահակյան. Հիշատակարան. Ե., 1977, էջ 357-358:

2 Տե՛ս *Е. К. Саркисян*, Армянский вопрос и Россия в 1912-1914 гг.,– ИФЖ, 1995, N 1, с. 111.



դրա հետ միաժամանակ, հայտնվել է մասնագիտական իմացությունից կատարելապես զուրկ, բայց իրեն ըստ ամենայնի ամեն ինչի մասնագետ համարող դիլետանտների մի ամբողջ խումբ, որը հավակնում է վերածնել XIX դարի 2-րդ կեսի արևմտահայ էֆենդիների և հետադիմական գործիչների տեսակետները՝ հայ ժողովրդի շահերին իբր ռուսական կողմնորոշումը խորթ և վնասակար լինելու, արևմտահայության բարվոք վիճակը սուլթանական ողորմածության հետ կապելու, արևմտահայության՝ օսմանյան տիրապետության տակ գտնվելու «բարիքների» և լայն իրավունքներից ու արտոնություններից «օգտվելու» և այլնի վերաբերյալ: Մերօրյա «էֆենդի պատմաբանները» փորձում են համոզել, որ հայ ժողովուրդը չպետք է ընդվզեր օսմանյան տիրապետության դեմ, որովհետև ավելորդ ու վնասակար էր հայ ազատագրական շարժումը և որ հայությունը ռուսականի փոխարեն պետք է ունենար արևմտյան կողմնորոշում: Ժամանակակից այս «գիտունները» աչք են փակում 1915 թ. Մեծ եղեռնի պատմության, քեմալականների հայաջինջ ծրագրերի, Լոզանի 1922-1923 թթ. կոնֆերանսի որոշումների՝ Հայկական հարցը արևմտյան տերությունների օժանդակությամբ գերեզմանում թաղելու և նման խնդիրների առջև, չցանկանալով հաշվի առնել ո՛չ պատմության իրողությունները և ո՛չ էլ տրամաբանությունը: Այս դիլետանտները, աղավաղելով հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման իմաստը, ավելի հեռուն են գնում և խստիվ քննադատում հայ քաղաքական գործիչներին այն բանի համար, որ օտարի տիրապետությունից ազատվելու իրենց փորձերն անելիս անտեսել են սեփական ուժերը, չեն հենվել դրանց վրա, այլ դիմել են «երրորդ ուժի» օգնությանը: «Երրորդ ուժ» ասելով նրանք նկատի ունեն գլխավորապես Ռուսաստանը և Եվրոպան: Սթափ մտածողությունը ակնհայտորեն լքում է այս «տեսաբաններին»: Նրանք չեն գիտակցում այն կարևոր հանգամանքը, որ հայ ժողովուրդը և՛ Արևմտյան, և՛ Արևելյան Հայաստանում մեծ մասամբ ապրում էր թվական գերակշռություն ունեցող մահմեդական բնակչության շրջապատում, չէր կազմում միաձույլ ու հզոր հավաքական ուժ, ուստի և ի վիճակի չէր զուտ սեփական ուժերով, առանց օգնության ազատվել օտար և իրենից անհամեմատ ուժեղ բռնապետությունների ծանր լծից:

Մի կողմ թողնելով ՀՀ Դաշնակցության գործիչներից Քր. Միքայելյանի հանրահայտ և միակողմանի կողմնորոշումը դեպի Եվրոպա, նկատենք, որ նա ևս ազատագրական շարժումը չէր պատկերացնում առանց երրորդ ուժի՝ տվյալ դեպքում առանց Եվրոպայի միջամտության: «Համաձայն այն նպատակին, որ մենք հատկացրինք հեղափոխական շարժման, հեղափոխական գործունեության եղանակը ի նկատի պետք է ունենար, ի միջի այլոց, եվրոպական միջամտություն առաջ բերելու բոլոր հնարավորությունները»,– գրում է նա և ապա՝ «...Հեղափոխական ձեռնարկները

սիստեմատիկաբար պետք է շարունակվեին, քանի չէր ապահովված Եվրոպայի իրական միջամտությունը: Այո, այդ էր պահանջում ժողովրդի դրությունը, այդ էին մեզ թելադրում և ուրիշ ազգերի օրինակները»[1]:

Այսպիսով, անցյալի մեր գործիչները այս հարցում ևս շատ ավելի իրատես էին, քան այսօրվա ուռա-հայրենասիրության քարոզիչները:

Անհիմն է նաև մեր նախնիներին միամիտ ու «պարզունակ» հռչակելը այն բանի համար, որ նրանք դիմել են եվրոպական պետություններին՝ ակնկալելով նրանց օգնությունը: Բայց պատմությանը քիչ թե շատ ծանոթ յուրաքանչյուր ոք գիտե, որ շատ դեպքերում օսմանյան տիրապետության տակ հեծող ժողովուրդներն իրենց ազատությունն ու անկախությունը ստացել են մեծ տերությունների օգնության և միջամտության շնորհիվ: Այդպիսի միջամտությունից օգտվել են հույները, սերբերը, բուլղարները, մակեդոնացիները, Լիբանանի քրիստոնյա մարոնիները՝ 1862 թ., ավելի ուշ՝ արաբական մի շարք երկրներ և այլն: Անշուշտ, մեծ տերությունները այդպիսի միջամտության էին դիմում՝ ելնելով իրենց տնտեսական ու քաղաքական որոշակի շահերից: Անշուշտ, նույն այդ տերություններն այլ պարագաներում մեկ անգամ չէ, որ փոքր ժողովուրդների հանդեպ վարել են երկդիմի, խաբեբայական հանցավոր քաղաքականություն: Այսուհանդերձ, փաստը մնում է փաստ, որ պատմական որոշ իրադրություններում տեղի է ունեցել մեծերի ու փոքրերի շահերի համընկնում, որից և օգտվել են նաև փոքր ու ճնշված ժողովուրդները: Անցյալի մեր նշանավոր գործիչները բավական հստակ տարբերել են մեծ տերությունների քաղաքականության ինչպես բացասական, այնպես էլ դրական հետևանքները, ուստի առնվազն ամբարտավանություն է նրանց պարզունակության կամ «քծնանքի» մեջ մեղադրելը: Հակառակ մեր ժամանակների դիլետանտների, նրանք ոչ թե ընկնում էին անպտուղ նիհիլիզմի դաշտերը, ոչ թե հակադրում էին «սեփական» և «երրորդ» ուժերը, այլ անհրաժեշտ էին համարում, եթե կար հնարավորությունը, դիմել և մեկին, և մյուսին:

Մնում է ավելացնել, որ դիլետանտները հիշեցնում են մոլախոտեր, որոնք աճում են բոլոր ժամանակներում, վերարտադրվում են անուցիչ հողում և որոնց դեմ անխնա պայքարը պատմագիտության կարևոր խնդիրներից մեկն է:

1 *Քր. Միքայէլեան.* Ամբոխային տրամաբանութիւն.– «Դրօշակ», Աթէնք, 1900, N 2, էջ 18, N 3, էջ 35:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

# ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԸ

Հայ ազատագրական շարժման պատմությունը կեղծելու ուղղությամբ կատարվել են շատ փորձեր: Դրանք իրենց արտահայտությունն են գտել նախ և առաջ թուրքական պատմագիտական և հրապարակախոսական գրականության մեջ ինչպես անցյալում*, այնպես էլ մեր ժամանակներում:

XIX դարի 60-70-ական թթ., երբ սրվել էր Արևելյան հարցը և նոր թափ էին ստացել ապստամբական շարժումներն Օսմանյան կայսրության մեջ, մեծապետական ազգայնամոլությամբ տոգորված թուրք մտավորականության մի մասը, այսպես կոչված «Նոր օսմանները», վճռականորեն հանդես եկան հպատակ ժողովուրդների ազգային ինքնորոշման իրավունքի և ազատագրական պայքարի դեմ: Նպատակ ունենալով պահպանել կայսրության ամբողջականությունը ոչ թուրք ժողովուրդներին օսմանիզացիայի ենթարկելու միջոցով, նրանք առաջ քաշեցին բացահայտորեն արտառոց այն թեզը, որ իբր սուլթանների կայսրության մեջ գոյություն է ունեցել բարեկարգ վիճակ և ժողովուրդների «համերաշխ դաշնակցություն» և այդ պատճառով էլ այնտեղ չի եղել և այսօր էլ չկա համապատասխան հող ազգային-ազատագրական շարժումների համար: «Նոր օսմանները» փորձեցին «շինծու» և «անօրինական» համարել դրանք, պահանջելով, որ ոչ թուրք բոլոր ժողովուրդները համարվեն սուլթանին հպատակ օսմանցիներ՝ անկախ իրենց ռասայական ու կրոնական պատկանելությունից (այսպես կոչված «օսմանլըլըքի»՝ օսմանցիության դոկտրինան): Այսպես, 1875 թ. Եվրոպայում լույս տեսավ նրանց ղեկավար անդամներից մեկի՝ Ալի Սուավիի գրքույկը՝ նվիրված Հերցեգովինայի խնդրին և Արևելյան հարցին ընդհանրապես: Հեղինակը պարզապես ժխտում էր ազգային-ազատագրական պայքարի առկայությունը կայսրության մեջ, իսկ այնտեղ, ավելացնում էր նա, որտեղ տեղի են ունենում ինչ-որ խռովություններ, ապա դրանք միայն դրսի ուժերի մեքենայությունների արդյունք են[1]:

Դրանից առաջ, 1860-ականի երկրորդ կեսին, Լոնդոնում հրատարակած իրենց թերթերում («Մուհբիր», «Թասվիր-ի էֆքյար») «Նոր օսմանները» ճգնում էին կայսրության ոչ մահմեդական ժողովուրդներին պար-

1 *Ю. А. Петросян.* Турецкий публицист прошлого века о Восточном вопросе.– ИФЖ, 1987, N 3, с. 162.

տադրել պետական կառավարման շարիաթի նորմերը՝ ելնելով իսլամի և եվրոպական պառլամենտարիզմի անհրաժեշտ շփոթ ներկայացնող շովինիստական պատկերացումներից:

Հայերի և ընդհանրապես կայսրության հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի ժխտումը օսմանիզմի հիմնական դրույթներից էր, որ ձևավորվել էր 1850–1860-ական թթ.: Այդ գաղափարախոսության ջատագովներից մեծ վեզիր Ալի փաշան պնդում էր, որ հպատակ ազգությունները զբաղված են միայն իրար նկատմամբ թշնամանք կուտակելով, ատում են միմյանց, և որ միայն թուրքական տարրն է, որն ի վիճակի է կանխելու այդ թշնամանքի պոռթկումները և հավասարակշռություն ստեղծել նրանց փոխհարաբերությունների մեջ: «Հետևաբար,– գրում էր նա,– Արևելքում ոչինչ չի կարող փոխարինել այս հին կայսրությանը (Օսմանյան – Մ. Ն.), որին նրա թշնամիները ոչ առանց բավականության հիվանդ են հռչակել և որի մասին անկողմնակալ դիտորդները հակառակը կարող են ասել»[1]:

Օսմանիզմի մյուս ոգեշնչողը՝ Ֆուատ փաշան, թեև տագնապով խոստովանում էր անկախական տրամադրությունների առկայությունը հպատակ ազգերի մեջ, սակայն հիմքից իսկ ժխտում էր դրանց ամեն մի հեռանկարայնություն և նախապես ձախողման դատապարտված դնում բալկանյան և հայ ժողովուրդների ազատագրական պայքարի վրա: «Գարատաղ մը, սերպ իշխանություն մը, Հայաստանի թագավորություն մը իրենց և աշխարհի ամենափոքր օգուտ մը չընծայելե ի զատ, առավել կամ նվազ ցնորական երազներ են, մարդկային բաժանումներու դժբախտ մնացորդներ»[2],– գրում էր նա:

Սահմանադրական կարգերի կողմնակից մեծ վեզիր Միդհատ փաշան, որ վճռականապես պայքարում էր նվաճված ժողովուրդների ազգային անկախ զարգացումը կասեցնելու համար, 1878 թ. հրապարակած իր մի գրքում նույնպես այն միտքն էր քարոզում, որ Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցող ազգային շարժումները պետք է բացատրել միայն օտար պետությունների գործակալների հրահրումներով[3]: Այս կարծիքը, ի դեպ, շատ համահունչ էր սուլթան Աբդուլ Համիդի բազմիցս արված այն հայտարարությանը, ուր ասվում էր, թե «հայկական շարժում չկա, այլ մի խումբ դրսից եկած խառնակիչներ են, որ խռովում են իմ հպատակներին»: Բնորոշ է, որ արևմտահայերի ցեղասպանության գլխավոր

1 *И. Л. Фадеева*. Официальные доктрины в идеологии и политике Османской империи (османизм-паносманизм). XIX-начало XX в., М., 1985, с. 82.
2 *Ա. Ալպօյաճեան*. Պատմութիւն Եւդոկիոյ հայոց. Գահիրէ, 1952, էջ 1108:
3 *Midhat-pacha*. La Turquie, son passé, son avenir. Paris, 1878.



կազմակերպիչներից մեկը՝ Ջեմալ փաշան, չզլացավ զբաղվել պատմության հարցերով և կրկնել իր նախորդների ու մասնավորապես, սուլթան Աբդուլ Համիդի մտքերը Հայկական հարցի ու հայերի ազատագրական շարժման մասին[1]:

Պատմության աղավաղումը Թուրքիայում լայն ծավալ ստացավ 1930-ական թթ., երբ քեմալական իշխանությունների կամքով ու օժանդակությամբ հրապարակվեց «Թարիհ» («Պատմություն») բազմահատորյակը, որի գլխավոր նպատակն էր ամեն կերպ իդեալականացնել Օսմանյան կայսրությունը, ցույց տալ, որ այնտեղ իշխող հասարակական-քաղաքական կարգերը իբր ավելի բարձր ու քաղաքակիրթ էին, քան մյուս երկրներում, որ այնտեղ հաստատվել էր ներդաշնակություն տարբեր ցեղերի ու ժողովուրդների միջև, որ պետությունը ապահովում էր իր բոլոր հպատակների կյանքը, գույքը ու պատիվը[2]: Անհիմն ու մտացածին է այն կարծիքը, պնդում է պաշտոնական այդ պատմագրությունը, որ իբր Օսմանյան կայսրության մեջ տեղի են ունեցել զանգվածային կոտորածներ ու ցեղասպանություն: Այս ոգով գրվել են և այսօր էլ գրվում են բազմաթիվ ու բազմատեսակ աշխատություններ, որոնց նպատակն է, համոզել ընթերցողին, թե հայերի կոտորածներ չեն եղել ո՛չ 1894–1896, ո՛չ 1909 և հետո, ընդսմին, վճռականորեն ժխտվում է հատկապես հայերի ցեղասպանությունը 1915–1923 թթ.:

Պաշտոնական այդ հրատարակության բացարձակ շինծու տեսակետները ստացան ղեկավար գաղափարախոսական ցուցմունքների ուժ: Ազգայնական-պանթուրքիստական գաղափարներով հանդես եկան նոր անուններ՝ Մահմեդ Ֆուադ Քյոփրուլյուն, Թայիբ Գյոքբիլգին, Հուսեին Նամըք Օրկունը, Շինասի Ալթընդաղը, Յուսուֆ Հիքմեթ Բայուրը և ուրիշներ: Տարիներ անց, դրանց միացան նոր սերնդի ներկայացուցիչները՝ Էսաթ Ուրասը, Սադի Քոչաշը, Աբդուլա Ցամանը, Էնվեր Քարալը, Բիլել Շիմշիրը և այլք, որոնք այս կամ այն չափով կանգ են առել Հայկական հարցի ու արևմտահայ ազատագրական շարժումների պատմության վրա: Բոլորից վերստին լսում ենք ծանոթ հեքիաթի տարբերակները: Ահա մի քանի օրինակ:

Հայտնի պատմաբան Յուսուֆ Հիքմեթ Բայուրը «Թրքական հեղափոխության պատմությունը» աշխատության մեջ նենգափոխելով պատմական իրականությունը, փորձել է ցույց տալ, որ Օսմանյան կայսրության մեջ արևմտահայությունը միշտ էլ գտնվել է «ծաղկուն» վիճակում, օգտ-

1 Տե՛ս Записки *Джемаль-паши*, 1913-1919 гг. Тифлис, 1923.
2 Türk Inkilâbi Tarihi. Cilt II, Kısım III, Ankara, 1958, s. 3-4.

*վել է լայն իրավունքներից, և եթե 1880-ական թթ. սկսած տեղի են ունեցել որոշ ելույթներ, ապա դրանք առաջացել են եվրոպական պետությունների, հատկապես Ռուսաստանի ու Անգլիայի գործակալների դրդմամբ*[1]*:*

*Պատմաբան Էսաթ Ուրասը «Հայերը պատմության մեջ և Հայկական հարցը» իր գրքում այն միտքն է զարգացնում, որ հայերը Օսմանյան կայսրության մեջ վարել են խաղաղ կյանք, գոհ են եղել իրենց վիճակից և միշտ բարգավաճել են: Հայկական հարցը ստեղծել են ոչ թե նրանք, այլ Թուրքիայի նկատմամբ թշնամական քաղաքականություն վարող պետությունները*[2]*:*

*Է. Ուրասի այս, ինչպես և մյուս հակագիտական ու հակապատմական մտամարզանքները դիպուկ քննադատության են ենթարկվել անգլիացի պատմաբան Քր. Ուոլքերի գրախոսականում, որ տպագրվել է «Journal of the Royal Asiatic Society» հանդեսի 1991 թ. N 1-ում*[3]*:*

*Ինչպես ցույց է տալիս գրախոսը, Է. Ուրասը բացահայտ միտումնավորությամբ աղավաղել ու կեղծել է հայոց պատմության իրական փաստերը: Միաժամանակ, նա մերկացնում է Ուրասի այն սնամեջ պնդումները, թե Հայաստանը զուտ աշխարհագրական հիշողություն է և որ նրա տարածքը, իբր, զուրկ է քաղաքական որևէ սահմանից:*

*Առհասարակ, Է. Ուրասը կտրականապես ժխտում է արևմտահայության կոտորածները և 1915–1916 թթ. ցեղասպանության փաստերը, իսկ այդ մասին վկայող վիթխարի գրականությունը համարում միտումնավոր ու սարքովի: Կեղծիքների այս վարպետը վկայակոչում է արևմտյան թուրքասեր հեղինակներին, սակայն, ակնհայտ կողմնակալությամբ լռում է բարեխիղճ հեղինակների՝ Ջ. Բրայսի, Ա. Թոյնբիի, Է. Դիլլոնի, Ֆ. Գրինի, Հ. Մորգենթաուի և այլոց ճշմարտացի երկերի մասին, որովհետև դրանք փաստում են թալանի, մշտական հալածանքների և կոտորածների ենթարկված հայերի դրությունը օսմանյան Թուրքիայում: Նույն կերպ, պանթուրքական այս հեղինակը չտեսնելու է տալիս թուրք պատմագիրներ Իբրահիմ Փեչևիի, Նաիմայի և այլոց պերճախոս վկայությունները ոչ թուրք ժողովուրդների հանդեպ օսմանյան պետության վարած բարբարոսական քաղաքականության մասին: Դրա փոխարեն, նա ստեղծում է օսմանյան Թուրքիայի երևութական լայնախոհության ստապատիր պատ-*

1 *Bayur Yusuf Hikmet.* Türk Inkilâbi Tarihi, Cilt II, Kısım III. Ankara, 1952, s. 18.

2 *Esat Uras.* Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Istanbul. 1950.

3 Այս գրախոսականը հայերեն տպագրվել է «Փյունիկի» 1991, N 11-ում՝ Ա. Այվազյանի թարգմանությամբ:



*կերը, քարոզելով, թե, իբր, օսմանյան պետությունը անգերազանցելի է մնացել դավանանքի ազատությունը հարգելու հարցում: Հենց այդպիսի ազատության շնորհումն է, պնդում է նա, որ աղետներ բերեց կայսրության գլխին: Հայերը օգտվեցին իրենց այդքան մեծահոգաբար տրված սահմանադրությունից և գլուխ բարձրացրեցին երկրի քաղաքական կարգերի դեմ՝ իրենց քայքայիչ գործունեությամբ խռովելով պետության խաղաղությունը*[1]*: Է. Ուրասը այստեղ մի վերապահում է անում, ճիշտ է, արդեն ընդհանրացնող կեղծիք պարունակող վերապահում, թե, իբր, այդ խռովությունը սերմանել են ժողովրդից կտրված գործիչները, իսկ ինքը՝ ժողովուրդը, չի համակրել ազատագրական շարժումները՝ առավել խելացի համարելով թուրքական ծառայության մեջ գտնվող հայ պաշտոնյաների լոյալությունը*[2]*: Հայերի ազատագրական շարժումները անվերապահորեն ժխտող այս կեղծարարը, սակայն, մոռանում է, որ հայ ժողովուրդը անցյալում ևս հաճախ համառ դիմադրություն և հերոսական կռիվներ է մղել թուրք նվաճողների դեմ: Հայտնի է, թե ինչպիսի ռազմական սխրանքներ գործեցին հայկական զինված ուժերը XVIII դարի առաջին քառորդին: Նրանք ոչ միայն ծանր կորուստներ պատճառեցին թշնամուն, այլև փայլուն հաղթանակներից հետո ստեղծեցին հայկական ինքնավար իշխանություն՝ Դավիթ Բեկի ղեկավարությամբ:*

*Հայերի ազատագրական շարժումների վերաբերյալ վերոհիշյալ կեղծարարության հունը առավել լայնացրեցին հետագա տասնամյակների թուրք պատմաբանները, փորձելով այդ կեղծիքը շպարել տեսական խորհրդածություններով: Այսպես, իր բազմահատոր «Օսմանյան պատմության» մեջ Է. Զ. Կարալը ոչ միայն ժխտում է այդ ազատագրական պայքարը, այլև դրա դրսևորումները որակում է իբրև եվրոպական քաղաքականության, իմպերիալիզմի հրահրումների արդյունք: Պճնվելով քեմալականների ժամանակաշրջանի քաղաքական դարձվածներով, Կարալը նույնացնում է միջազգային իմպերիալիզմը և հայ ազատագրական շարժումները*[3]*: Այս կապակցությամբ պետք է նկատել, որ ոչ միայն Կարալը, այլև թուրքական արդի գրեթե բոլոր պատմաբանները օսմանյան Թուրքիան համարելով միջազգային իմպերիալիզմի զոհ, առանց որևէ վերապահության ծուռ հայելու մեջ են ներկայացնում պատմական փաստերը. մի դեպքում նրանք ժխտում են ազատագրական շարժման բուն իրողությունը, իսկ մյուս կողմից, արևմտահայությանը համարում են միջազ-*

1 *Esat Uras,* Նշվ. աշխ., էջ 177-178:

2 Նույն տեղում, էջ 182:

3 Տե՛ս British Documents on Ottoman Armenians. Vol. I, 1856-1880, ed. by Bilâl N. Şimşir. Ankara, 1982.

գային իմպերիալիզմի հինգերորդ զորասյուն: Թուրքիայի քաղաքական պատմությունը նրանք ներկայացնում են Թուրքիայի և եվրոպական տերությունների ու Ռուսաստանի ծայրահեղորեն միակողմանի մեկնաբանությամբ, իսկ Թուրքիայի և նրա կազմի մեջ մտնող ժողովուրդների հակասությունները լիովին անտեսում են, շրջանցելով այդ ժողովուրդների քաղաքական ինքնորոշման իրավունքը:

Բիլել Շիմշիրը, որ երկար տարիներ աշխատել է անգլիական արխիվներում, կազմել ու հրատարակել է «Անգլիական փաստաթղթերը օսմանյան հայերի մասին» երկհատոր ժողովածուն: Այստեղ նա գալիս է այն եզրակացության, որ թուրքերը գտնվել են ավելի ծանր վիճակում, քան հայերը, որոնք լիովին օգտվել են իրենց տրված բազմաթիվ արտոնություններից և չեն ունեցել լուրջ դժգոհության առիթներ: Սակայն, ավելացնում է նա, միայն 1880-ական թթ. հայերը դիմեցին խռովությունների՝ զանազան «կոմիտեների» հրահրումներով ու ղեկավարությամբ[1]: Ավելին, նա հայկական շարժումները համարում է «Արևելյան Անատոլիայում անգլո-ռուսական մրցակցության... գործոն», մեծ տերությունների քաղաքականության խաղալիք, մի քաղաքականության, որը «կեղծ հույսերով» է կերակրել այդ շարժումները[2]: Այս նախապես մշակված տեսակետից էլ նա մեկնաբանում է 1879 թ. թուրքերի դեմ զեյթունցիների ընդվզումները՝ գանգատվելով, մասնավորապես, անգլիական դիվանագիտությունից, որի ճնշմամբ իբր, վիժեցվել էր 1879 թ. ապրիլին Զեյթուն ուղարկված օսմանյան հանձնաժողովի գործունեությունը: Այդ ճնշման շնորհիվ, գրում է նա, 1879 թ. նոյեմբերին ազատվեցին Զեյթունի բոլոր բանտարկյալները, այդ թվում և Պապիկ իշխանը[3]: Բ. Շիմշիրը թուրքական պատմագրության այն ընդծված ներկայացուցիչներից է, որոնք տալիս են պատմական փաստերը գլխիվայր մեկնաբանելու անհեռանկար օրինակները:

Գրեթե նույն կերպ է խեղաթյուրում պատմությունը Զ. Դանիշմանը իր «Սուլթան Աբդուլ Համիդ Խան Առաջին» գրքում, ընդ որում, հայ ժողովրդին կշտամբելով անհավատարմության մեջ: Ըստ նրա, այն, որ հայերը ազատ զբաղվել են երկրագործությամբ և առևտրով, վկայում է օսմանյան պետության մեծահոգի և ներողամիտ վերաբերմունքի մասին: Մանավանդ, հավելում է Դանիշմանը, նրանց ցուցաբերվում էր մեծ վստահություն, տրվում էին բարձր պաշտոններ՝ կայսրության մեջ: Հայ ժողովրդի ազատագրական շարժումը նա պարզապես համարում է վատ դիտավորության դրսևորում, որը խափանել է հայերի և թուրքերի ներդաշնակ ավան-

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում, էջ XXX:

3 Նույն տեղում, էջ XXIX:



դական հարաբերությունները և որի համար ամբողջ մեղքը ընկնում է հայերի վրա[1]: Դանիշմանը պնդում է այն կեղծիքը, որ Թանզիմաթից հետո հրապարակված ֆերմանների ուժով կայսրության քրիստոնյա հպատակները առավել լավ կացություն ունեին, քան մահմեդականները[2], որով և բացառվում է նրանց ազատագրական շարժման որևէ հիմք:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարը ժխտելու առավել մերկապարանոց և հարձակողական ձև է ընտրել թուրք պատմաբան Ի. Օզգայան: «Հայ ժողովուրդը և թուրքերին հարստահարելու փորձեր» գրքում[3] նրան այլևս չի բավարարում Ռուսաստանի և եվրոպական տերությունների կողմից Հայկական հարցը ստեղծելու և հրահրելու վերաբերյալ ավանդական դարձած կեղծիքը: Ազատագրության համար հայ ժողովրդի մղած պայքարը նա նենգափոխում է ահաբեկչական գործողություններով, որոնց նպատակը, իբր, Օսմանյան կայսրության թուլացումն էր, իսկ այնուհետև՝ թուրք ժողովրդին ոչնչացնելը: Օզգայայի կեղծարարությունը, եթե նույնիսկ անգիտանանք ստի և կեղծիքի հրեշավոր չափերը նրա շարադրանքում, կարելի է բացահայտել իր իսկ հորինած վիճակագրական տվյալներով: Ըստ նրա, մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Թուրքիայում ապրում էր ընդամենը 200000 հայ. արդ, հարց է առաջանում, ինչպես կարող էր այդքան փոքրաթիվ հանրությունը սպառնալ բազմամիլիոն թուրք ժողովրդի և նրա պետության գոյությանը:

Հայերի կողմից ոչնչացման մշտական սպառնալիքի տակ գտնվող թուրքերի «պաշտպանության» անմիտ դերն են ստանձնել 1970–80-ական թթ. մի շարք թուրք պատմաբաններ, որոնց թվում իր գործադրած ճիգերով ամենևին էլ վերջին տեղը չի զբաղեցնում Ալթան Դելիորմանը[4]: Թուրք հեղինակը համոզված է, որ թուղթը անմռունչ կարող է տանել ամեն ինչ, ուստի և կատարում է զոհերի և դահիճների փոխատեղում՝ իր գրքի ծավալուն հատվածներ նվիրելով թուրքերի հանդեպ հայերի կատարած «բռնություններին»: Այս հեղինակը, իր հերթին, հայ ազատագրական պայքարը նենգափոխում է տերությունների սադրիչ գործողություններով, ժողովրդի ընդդիմությունը՝ մի բուռ կոմիտեականների ֆանատիզմով: Հայերի ազատագրական շարժումները արժեզրկելու, եվրոպական ու ռուսական «քաղաքականության գործիք» դառնալու, թուրքերի հանդեպ

1 *Z. Danişman.* Sultan Ikinci Abdulhamid Han. Istanbul, 1966, s. 144.

2 Նույն տեղում, էջ 34:

3 *I. J. Oskaya.* Le peuple Arménien et les tentatives de réduire peuple Turk. Stambul, 1971.

4 *A. Deliorman.* Türklere Karşi Ermeni Komitecileri. Istanbul, 1973.

«Երախտամոռ լինելու» ակնհայտ կեղծիքով են հագեցած թուրքական շատ հեղինակների աշխատությունները:

Որպես կանոն, այս բոլոր հեղինակներին ընդհանուր է «հավատարիմ միլեթի» ակնհայտորեն կեղծ և սխեմատիկ պատկերացումը, որից շեղված հայերը հետագայում, օսմանյան պետության արտաքին թշնամիների թելադրանքով, պետք է երախտամոռ «ոտնձգություններ» անեին «հայրախնամ» թուրքական պետության դեմ: Այսպիսի եզրակացությունը հերքող բազմաթիվ փաստերը նրանք մի կողմ են նետում իրենց գրքերում կամ դրանց տալիս են մտացածին մեկնաբանություններ: 1970-ական թթ. սկսած, սակայն, թուրքական պատմագրությունը տենդորեն ելք էր որոնում առավել կամ պակաս չափերով քողարկելու իր փաստական և վավերագրական հիմքերի սնանկությունը: Կեղծիքը հնարավոր էր քողարկել միայն կեղծիքով, ուստի և այս հատուկ միտումով գրվեցին մի շարք աշխատություններ, որտեղ ընդգծվում էր դրանց զուտ «փաստագրական» արժեքը: Իրականում, ցանկացած փաստ հարմարեցվում է մեզ արդեն ծանոթ՝ հայերի «բարեհպատակության» և օսմանյան պետության «հանդուրժող ու ներողամիտ քաղաքականության» վերաբերյալ շինծու թեզերին, որոնց համաձայն, մինչև XIX դարի վերջին տասնամյակները հայերի մտքով չէր էլ կարող անցնել պայքարելու օսմանյան պետության դեմ: Այս կերպ «փաստական» հիմնավորում էր տրվում հայ ժողովրդի ազատագրական պայքարի ժխտմանը՝ Ա. Յալչընի, Ն. Բանօղլուի, Ա. Յամանի, Գ. Կամյուրանի և այլոց գրքերում[1]:

Թուրք գիտնականների կողմից պատմության գիտական վերարտադրությունը ոտնահարելու, այն վերանայելու ճիգերը շարունակվում են առայսօր՝ հուսահատ համառությամբ: Արդեն սովորական դարձած կարծիքներին, բուրժուա-ազգայնական թույնով թաթախված դրույթներին ավելանում են նորերը՝ էլ ավելի բարձրացնելով նրանց ստեղծած ստի ու կեղծիքի շենքը: Ըստ էության, թուրքական պատմագրությունը ամբողջովին հպատակեցված է թուրքական պետական քաղաքականությանը, բխում է դրանից և սպասարկում դրան՝ ոչ մի ընդհանուր բան չունենալով բարեխիղճ հետազոտության տարրական սկզբունքների հետ: Տասնամյակներ շարունակ նրանք շարունակում են պատմության նենգափոխողի իրենց անփառունակ դերը և այս իմաստով միանգամայն հետևողական են: Հի-

1 *A. Yalçin.* Belgeleri Isliginda Türk-Ermeni Meselesinin Içyüzü. Istanbul, 1975. *N. A. Banoğlu.* Ermeninin Ermeniye Zülmü. Ankara, 1976. A. Yaman. Ermeni Meselesi ve Türkiye. Istanbul, 1973. *G. Kamuran.* Le Dossier Arménien. Paris, 1983.



րավի, նրանց համար ևս բնութագրական է հայտնի դարձվածը՝ ոչ հինն են մոռանում և ոչ էլ սովորում են նորը:

Թուրք հեղինակներին զարմանալի ստրկամտությամբ կրկնում են արևմտյան մի շարք պատմաբաններ, որոնց համար, ըստ երևույթին, կարևորը ոչ թե գիտական օբյեկտիվությունն է, այլ քաղաքական ու այլ նկատառումները: Այսպես. 1976–1977 թթ. Քեմբրիջի համալսարանի հրատարակությամբ լույս տեսան Թուրքիայի պատմությանը նվիրված երկու ծավալուն հատորներ, որոնց հեղինակ Ս. Շոուն ամեն կերպ գովերգում է Օսմանյան կայսրության մեջ տիրող կարգերը և գործը պատկերում է այնպես, որ թուրքական սուլթանները մեղմ և հանդուրժողական քաղաքականություն են վարել իրենց ենթակա ժողովուրդների նկատմամբ: Խոսելով արևմտահայության մասին, կրկնելով իր թուրք գործընկերներին, նա ևս պնդում է, որ հայերը հավատարմորեն ծառայել են օսմանյան պետությանը, և երբեք հանդես չեն եկել նրա դեմ: Բացառություն է կազմում 1880–1890-ական թթ. շարժումը, որը ստեղծվել է արհեստականորեն, մի շարք պետությունների խարդավանքների և հայկական «կոմիտեների» արկածախնդրական գործունեության հետևանքով[1]: Շոուի այս տեսակետը բաժանում է ամերիկյան մի այլ պատմաբան (ծագումով թուրք) Ք. Կարպատը իր մի շարք աշխատություններում[2]:

Ամփոփելով կեղծարարների այս և այլ հայացքները, կարող ենք ասել, որ նրանք առաջ են քաշում երեք հիմնական թեզ. 1. Օսմանյան կայսրության մեջ հայ ժողովուրդը չի ենթարկվել ո՛չ ազգային ճնշման և ո՛չ էլ սոցիալական հարստահարության: 2. Դժգոհ չլինելով թուրքական պետությունից, արևմտահայությունը չի մտածել ազգային-ազատագրական պայքարի մասին: 3. Հայերի 1880–1890-ական թթ. և հետագա տարիների «խռովությունները» տեղի են ունեցել հայկական անպատասխանատու «կոմիտեների» ու մի քանի պետությունների (գլխավորապես Ռուսաստանի ու Անգլիայի) գործակալների դրդմամբ:

Առաջին թեզն այնքան ակնառու ստախոսություն է, որ անգամ ավելորդ է այդ մասին վեճի բռնվել: Ներկա գրքի նախաբանում և առաջին ու երկրորդ գլուխներում բերված են բազմաթիվ անհերքելի փաստեր այն մասին, թե ինչպիսի անլուր, բարբարոսական ճնշումների, ավերի ու թալա-

1 *Shaw St.* History of the Ottoman Empire and Modern Turkey. Vol. 1-2. Cambridge-London, 1976–1977. Տե՛ս նաև *Shaw St. I. and Shaw E. K.*, The Authors Respond.– International Journal of Middle East Studies, 1978. Vol. 9, N 2, p. 389-400; *R. G. Hovannisian.* The Critic's view Bejond Revisionism.– International Journal of Middle East Studies, 1978. Vol. 9, N 2, p. 379-388.

2 The Ottoman State and its Place in Word History. London, 1974.

նի, ջարդերի ու կոտորածների էր ենթարկվել արևմտահայությունը օսմանյան սուլթանների անօրինակ դաժան լծի տակ: Հայ, ռուսական և համաշխարհային պատմագրության մեջ այդ մասին գրված են ոչ քիչ աշխատություններ: Չմոռանանք ավելացնել նաև այն, որ թուրքական բռնապետության վանդալիզմը իր դեմքը ցույց է տվել նաև Սերբիայում, Հունաստանում, Բուլղարիայում և հրով ու սրով նվաճված մյուս երկրներում[1]:

Հարկ է, թեկուզ համառոտ ձևով, կանգ առնել կեղծարարների երկրորդ թեզի վրա: Պատմական իրողությունն այն է, որ հայ ժողովուրդը ոչ միայն XIX դարում, այլև նախորդ շրջաններում բազմաթիվ փորձեր է կատարել ազատագրվելու օսմանյան արյունոտ տիրապետությունից: Հայտնի է, օրինակ, որ դեռևս 1547 թ. Էջմիածնում կայացած գաղտնի ժողովի որոշման համաձայն կաթողիկոս Ստեփանոս Սալմաստեցին մեկնեց Արևմուտք, որպեսզի օգնություն խնդրի հայ ժողովրդին պարսկական ու թուրքական տիրապետությունից ազատագրելու համար: 1562 թ. Արևմտյան Հայաստանի Սեբաստիա քաղաքում տեղի ունեցավ մի նոր գաղտնի ժողով, որը նույն նպատակով Եվրոպա ուղարկեց մի պատվիրակություն Աբգար Եվդոկացու (Թոխաթեցու) գլխավորությամբ: Ավելի ուշ՝ 1672 թ. Արևմտյան Հայաստանի Բիթլիս քաղաքից Փարիզ ժամանեց հայ վաճառական խոջա Մուրադը և գրավոր դիմում ներկայացրեց Լյուդովիկոս XIV-ին, խնդրելով նրան օգնել հայ ժողովրդին ազատագրվելու թուրքական լծից[2]: XVII դարի երկրորդ կեսին հայ ազատագրական շարժման գործիչները՝ կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին, Իսրայել Օրին և ուրիշներ, դիմումներ ներկայացրին նաև ռուսական կառավարությանը: XVIII դարի սկզբից իշխող դարձավ ռուսական կողմնորոշումը: Այս բոլոր դիմումների ու խնդրագրերի մեջ, իհարկե, արտահայտվում էին հայ ժողովրդի լայն խավերի իղձերը՝ ազատագրվելու թուրքական ու պարսկական լծից:

Գործը, սակայն, չէր սահմանափակվում խնդրագրերով: Հայ ժողովրդական զանգվածները մի անգամ չէ, որ զենքը ձեռքին կռվել են օսման զավթիչների դեմ: Հիշենք թեկուզ այն կռիվները, որ նրանք վարեցին XVIII դարի 20-ական թթ.: 1724 թ., երբ թուրքական բազմահազարանոց բանակը փորձեց գրավել Երևան քաղաքը, նրա բնակչությունը կազմակերպեց հերոսական դիմադրություն: Մոտ երեք ամիս շարունակ օսմանյան զորքերը գրոհում էին Երևանի վրա, բայց նրա պաշարված

1 *Մ. Գ. Ներսիսյան.* Օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին.– ՊԲՀ, 1997, N 2, էջ 41-58, 1998, N 1-2, էջ 27-44, տես նաև *Մ. Գ. Ներսիսյան.* Պատմության կեղծարարները. Ե., 1998:

2 *Հ. Ս. Անասյան.* XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում. Ե., 1961, էջ 159:



բնակչությունը բացառիկ խիզախությամբ և անձնազոհությամբ հետ էր շպրտում հզոր թշնամուն*: Օժանդակ ուժեր ստանալուց հետո միայն Թուրք փաշային հաջողվեց գրավել քաղաքը և սրի քաշել մոտ 10000 մարդ: Թուրքերը կորցին շուրջ 20000 զինվոր[1]: Հայտնի է, որ Լեռնային Ղարաբաղի ու Սյունիքի հայ գյուղացիությունը Ավան Յուզբաշու, Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանի, Դավիթ Բեկի, Մխիթար Սպարապետի և մյուսների գլխավորությամբ 1725-1728 թթ. ու հետագա տարիներին հերոսական կռիվներ մղեց թուրքական նվաճողների դեմ** և մի շարք փայլուն հաղթանակներ տանելով՝ ծանր հարվածներ հասցրեց նրանց[2]:

Պահպանվել են փաստաթղթեր այն մասին, թե օսմանյան բռնապետությունը ինչպիսի արշավանքներ է կազմակերպել Ղարաբաղի «գյավուր» և «խռովարար» հայության դեմ: Բերենք երկու օրինակ: 1729 թ. Թուրքական սուլթանը ֆերման է ուղարկում Շաքիի բեյլերբեյ Ալի փաշային՝ նրան հրամայելով միանալ Գանձակում գտնվող իր վեզիր Իբրահիմ փաշային, շարժվել դեպի Լեռնային Ղարաբաղ, և «պատժել ու ճնշել սղնախների խռովարարներին և դրանով ծառայություն մատուցել մեր պետությանը և հավատին»: Սուլթանի կամքն էր, որ արշավանքին մասնակցեն նաև մուսուլման հոգևորականությունը, մի խոշոր ջոկատ Դաղստանից և ընդհանրապես, այլ կարգի «հերոսներ», որոնք ընդունակ են վարել «սրբազան պատերազմ»: Ֆերմանում կարդում ենք. «...դուք պետք է ձեզ հետ վերցնեք ձեր հոգևորականությանը, ձեր զավակներին, ձեր բեկերի զավակներին և այլ հերոսների, որոնք ընդունակ են վարել սրբազան պատերազմ, դաղստանցիներից մի զորամասի գլխավորությամբ, ոչ պակաս 1500 մարդուց, և շարժվեք Գյանջայի դաշտավայրը... միանալու վեզիր Իբրահիմ փաշային և մինչև ծառերի կանաչելը արշավելու հիշված խռովարարների դեմ, որպեսզի նրանց ճնշելու ու պատժելու համար ձեռնարկեք հարկ եղած միջոցները»[3]:

Ահա մի ուրիշ փաստաթուղթ: 1731 թ. գարնանը թուրքական սուլթանը նույն բեյլերբեյ Ալի փաշային ուղղված ֆերմանում գրել է. «Գյանջայի շրջանի հարևանությամբ ապրող անիծյալ սղնախների գյավուրները (խոսքը Լեռնային Ղարաբաղի հայերի մասին է – Մ. Ն.) արդեն մի քանի տարի է, որ չեն վճարում օրինական հարկերը և սկսել են համառել և դիմել անհնազանդության ու ապստամբությունների: Ուստի,

1 Մանրամասնությունները տե՛ս *Աբրահամ Երեւանցի.* Պատմութիւն պատերազմացն, Ե., 1938:

2 Տե՛ս Ընտիր պատմութիւն Դավիթ Բէգին: Армяно-русские отношения в первой трети XVIII века. Т. 2, ч. 2, Е., 1967.

3 АКАК. Т. II. Тифлис, 1868, с. 1092.

Национально-освободительное движение западных армян, направленное против турецкого владычества, имело русскую ориентацию. За исключением амирайско-клерикальной верхушки и компрадорской буржуазии, которые были связаны с дворцом султана и с западными державами, широкие слои армянского народа тяготели к России. Поборниками русской ориентации выступали прежде всего, крестьянские массы, которые были против пустых программ «реформ» и «автономий» и безоговорочно желали присоединения к России. Для широких народных масс было совершенно ясно, что их освобождение от жестокого султанского господства может иметь место только при помощи России. Именно с таким сознанием они вели борьбу против турецкого владычества.

Русская ориентация армянского народа имеет вековую историю. Она сложилась на протяжении веков на основе экономических, политических и культурных связей, военного сотрудничества и дружбы между русским и армянским народами.

Свержение татаро-монгольского ига в России и создание могучего централизованного русского государства сыграли крупнейшую роль в исторических судьбах не только русского, но и других братских народов. Усиление русского государства возбудило большие надежды среди многих народов, стонавших под господством иноземных захватчиков.

Еще в 1660-х годах в армянских политических кругах выдвигалась программа, которая предусматривала при помощи России поднять объединенное армяно-греческое восстание против султанского господства. В 1670-х годах из Армении в

Москву был послан ряд петиций, в которых испрашивалась помощь России. В первые десятилетия XVIII века ориентация на Россию уже выражала чаяния и желания широких народных масс.

Русская ориентация еще более усилилась к концу XVIII – началу XIX вв., когда между Россией и Турцией разразился ряд войн. Эти войны ослабляли военную мощь Оттоманской империи и объективно создавали благоприятные условия для антисултанских национально-освободительных движений. В этот период, благодаря военной помощи России и ее дипломатическому посредничеству, от турецкого господства освободились некоторые народы – сербы, греки и другие.

Понятно, что царское правительство не думало об освобождении угнетенных народов. Наоборот, оно всячески угнетало и притесняло как русский, так и нерусские народы. Царизм исходя из интересов своей внешней политики, защищало направленные против Турции национально-освободительные движения и защищало их постольку, поскольку они отвечали его внешнеполитической программе. И тогда, когда освободительные движения внушали тревогу, что могут усилиться настроения национального самоопределения, усугубится опасность в стремления к сепаратизму в самой России, российские власти резко меняли свое отношение к освободительным движениям. Поэтому после 1870-х гг. царские власти заняли враждебную позицию к антиосманскому освободительному движению армян, боясь собственных представлений о настроениях самоопределения армян в Российской империи. Политика России в Восточном вопросе, ее войны против Турции объективно помогали развитию и успехам национально-освободительного движения народов, находившихся под ярмом султанского деспотизма.

Однако это только одна сторона вопроса. Если политика царского правительства в отношении народов, боровшихся против турецкого господства, вытекала из определенных экономических и политических расчетов, то в этом вопросе совершенно другой позиции придерживались прогрессивные, демократические круги России. Освободительные движения против султанского деспотизма нашли горячий отклик в широких кругах русского общества. Русский народ выказал большую симпатию и искреннее сочувствие народам, боровшимся против турецкого ига, и оказывал им бескорыстную помощь. Во время освободительных движений славянских народов на Балканах в рядах повстанцев героически сражалось большое количество русских добровольцев, многие из которых пали смертью храбрых. В годы русско-турецких войн русские воины совершали самоотверженные подвиги; они совершенно бескорыстно и с благородным воодушевлением стремились освободить своих собратьев, стонавших под игом иноземных захватчиков.

Как указанная политика русского государства, так и искреннее, бескорыстное отношение и помощь русского народа сильно обнадеживали народы, ведущие освободительную борьбу. Народы эти все больше верили в то, что от турецкого деспотического господства они могут освободиться только с помощью России и русского народа. Так было в балканских странах, так было и в Армении.



В последние десятилетия XVIII века армянские политические деятели проявили большую активность в пользу присоединения Армении к России. Царскому правительству были направлены многочисленные обращения, велись переговоры. Интересно отметить, что в 1779–1781 гг. вопросом присоединения Армении и Закавказья к России занимался и великий русский полководец А. В. Суворов. В течение нескольких лет он подробно изучал Закавказье, его топографию, дороги, собирал сведения о турецких и персидских силах, устанавливал связи со многими закавказскими политическими деятелями. Суворов сыграл большую роль в укреплении вековой братской дружбы между русским народом и народами Закавказья. Прославленный полководец в значительной степени подготовил исторический акт присоединения Закавказья к России.

Присоединение Закавказья к России, происходившее в течение первых трех десятилетий XIX века, имело огромное прогрессивное значение в политической, экономической и культурной жизни народов Закавказья.

Перейдя под господство царизма, армянский народ, конечно, не освободился от социального и национального гнета. Царское правительство как государственная власть русских помещиков и дворян эксплуатировало и угнетало как русский, так и другие народы империи. Однако, несмотря на это, присоединение Армении к России в сложившихся конкретных исторических условиях было наилучшим исходом.

Благодаря этому историческому акту армянский народ, прежде всего, спасся от опасности физического уничтожения, под угрозой которой он находился при варварских восточных деспотических режимах. Армения избавилась от постоянных кровавых нашествий, набегов и разбоя различных грабительских орд и от колонизации западных держав. Рассеянное по всему свету, армянское население начало переселяться в Восточную Армению, вследствие чего здесь создалось значительное количество компактного армянского населения.

Присоединение Восточной Армении к России имело огромное прогрессивное значение для экономической жизни страны и культуры народа. Хозяйство вышло из состояния застоя и получило более благоприятные условия и возможности для развития. Строительство шоссейных и железных дорог, разработка месторождений полезных ископаемых, создание в Закавказье промышленных предприятий и т. д. объективно стимулировали развитие экономической жизни страны.

Безгранично велико то благотворное влияние, которое оказала богатая, передовая и демократическая культура русского народа на развитие культуры армянского и других народов.

Благодаря присоединению Армении к России армянский народ накрепко связал свою судьбу с русским народом, и тем самым создал вполне реальные условия для своего социального и национального освобождения.

Армянский народ и все армянские прогрессивные деятели горячо приветствовали этот исторический акт. Присоединение вызвало огромную радость также у

западных армян, которые продолжали нести тяжелое ярмо султанского деспотизма. Этот исторический поворот породил в них новые надежды, появилась вера, что и западные армяне, по примеру восточных армян, освободятся от жестокого турецкого господства. Хорошо чувствуя огромную разницу в судьбах двух искусственно разделенных частей армянского народа, разницу, которую ясно давала чувствовать сама жизнь на каждом шагу, западные армяне стали еще больше тяготеть к России.

Таким образом, присоединение Восточной Армении к России стало новым стимулом для усиления русской ориентации западных армян, которые всеми силами стремились освободиться от турецких пашей и в пределах русского государства воссоединиться со своими восточными братьями.

В годы Крымской войны самые широкие слои западных армян делали попытки освободиться при помощи русских войск от господства султанской Турции. Одновременно они всячески старались переселиться в Закавказье. Командование русских войск получало многочисленные обращения, в которых испрашивались разрешение и помощь для переселения. Особенно много обращений было в послевоенные годы. Так, в 1860 г. армянское население Харбертской, Арабкирской и Эрзерумской провинций в своих обращениях к России просило покровительства и помощи. В 1866 г. армянское население Баязета, Муша и Схерта обратилось к русскому правительству с просьбой о принятии его в русское подданство. С такой же просьбой в 1872 г. обратилось армянское население Васпуракана. Как в 1860-х, так и в 1870-х гг. католикосат Эчмиадзина получал многочисленные обращения от западных армян с выражением пожелания переселиться на Кавказ.

Население Западной Армении не представляло своего освобождения от султанского ярма без помощи России. Многие армянские деятели были убеждены в том, что без России невозможно освободиться от турецкого господства. В русско-турецкой войне 1877–1878 гг. западные армяне активно участвовали в развернувшихся военных действиях. Связывая свои надежды с победой России, они всеми возможными способами помогали русскому войску – снабжали русскую армию продовольствием, ухаживали за ранеными воинами, сообщали командованию военные сведения, предоставляли в распоряжение русского командования конные и пешие вооруженные добровольческие силы и т. д. После окончания войны с новой силой началось широкое движение за переселение в Россию.

Наличие русской ориентации у западных армян не отрицали, между прочим, и официальные представители английского правительства, всячески покровительствовавшие турецкой тирании.

Имевшая многовековую историю русская ориентация армянского народа была ориентацией широких слоев народа. Это обстоятельство наложило глубокую печать на национально-освободительную борьбу, которую вел армянский народ против султанской Турции. Освободительное движение армянского народа было тесно связано с Россией и опиралось на помощь, которую оказывал русский народ. Без



учета этого важного обстоятельства нельзя составить полного представления об армянском национально-освободительном движении.

В силу исторического стечения обстоятельств оставаясь под жестоким султанским владычеством и превратившись в предмет коварной дипломатической игры и кровавых упражнений западных держав, население Западной Армении подверглось массовым погромам и резне. А в годы Первой мировой войны и на протяжении последующих лет турецкие правители, фанатично жаждущие покончить с Армянским вопросом, осуществили геноцид западных армян – самую трагическую страницу в истории армянского народа.

Конец освободительной борьбы борющихся народов против османской тирании не был однозначным. Если движение сербов, греков и болгар закончилось победой, то борьба армянского народа не имела удачи. Это обстоятельство, однако, не может бросить тень на эту борьбу, ибо она была справедливой и героической, велась за свободу и за достоинство родины и человеческих прав.

Национально-освободительная борьба армянского народа, богатая яркими примерами героического сопротивления и самоотверженности – одна из блестящих страниц его многовековой истории.

# ՀԱՎԵԼՎԱԾ

## 1

## ԱՄԱԿ ՈՒՂՂՎԱԾ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

28 փետրվար, 1856

Շամախի

Նորին Սրբազնակատար օծութեան,

Աստուածընտիր Վեհափառ կաթողիկոսի ամենայն Հայոց Տեառն և Տեառն

Ներսիսի Աստուածապատիւ Մեծի Հայրապետի

Ի վիճակային Հայոց կոնսիստորէս Շամախւոյ

Ցայտարարութիւն

Վիճակային Հայոց կոնսիստորիայս Շամախւոյ համաձայն Սրբատառ կոնդակի Սրբազնակատար Հայրապետութեան Ձերում ի սեպտեմբերի 3-ն 1855 ամի անցելոյ համար 221 ժողովեալ ի հոգեւորականաց եւ ի ժողովրդականաց թեմիս Շամախւոյ զկամաւոր նուիրադրամս յօգուտ ծովային զօրացն Սեւաստապօլու ընդ ամէնն՝ *զերկու հարիւր յիսուն և ինն մանէթ եօթանասուն և երկու կօպէկ արծաթեայ* առաքեաց ի միասին ընդ ամին ի Ս. Պետերբուրգ ի Կօմմիսարիատսկի Դեպարտամէնտն ի 28 այսր փետրվարի համարաւ 248 ի կիր ածելով յայնմ գումարոյ նաև զհասանելի ծախսն յօգուտ փոստին զերկու ռուբլի վաթսուն կօպէկ արծաթեայ, զորմէ պատիւ ունի Կոնսիստորիայս ամենայարգոյաբար յայտ առնել և Ձերումդ Սուրբ Վեհափառութեան հանդերձ մատուցմամբ համառօտ ցուցակի վասն այնոցիկ ժողովեալ դրամոց:

Համար 249 ի 28 փետրվարի ամի ազգական

ՌՅԵ (1305) եւ փրկչական 1856 ի ք. Շամախի

Անդամք՝

Մովսէս վարդապետ Մաղաքեանց,

Անդրէաս քահանայ Չերգեշտեանց

Ատենադպիր

Տ. Լազարեանց

*Մաշտոցի անվան Մատենադարան,*

*կաթողիկոսական դիվան, թղթ. 181, վավ. 75*[1]

2

## ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՄԱՍԻՍԻՑ»

### Ազգային

«Մասիս», 1866, N 770

Ոստիկանութեան դուռն արգելեալ Ուլնեցի իշխանաց վրայօք պտտած սուտ ու սխալ տարաձայնութիւններն ազգայնոց շատերուն սիրտը յուզուելով, անցեալ երկուշաբթի օր երեք անձէ բաղկացեալ պատգամաւորութիւն մը Պատրիարքարանի Խառն ժողովին ներկայացաւ բազմաթիւ ստորագրութեամբ լի մանզերով մը. և հարցուցին թէ ի՞նչ է պատճառը Ուլնեցի իշխանաց բանտարկութեանը, և թէ ինչու՞ համար պատրիարքարանն անտարբեր մնացած է կամ չի յաջողած անոնց ազատութիւնը ձեռք բերելու և այլն: Խառն ժողովը պատգամաւորաց ազգասիրական ոգւոյ շարժեալ այս հարձակումները սիրալիր ուշադրութեամբ մտիկ ընելէ ետքը, անկէ առաջ ձեռք առնուած միջոցները համառօտիւ ծանոյց անոնց, և ապահովցուց, որ Բ. Դրան շնորհիւ և վերջին անգամ տուած խոստմամբ՝ իրիկուն կամ հետևեալ առտուն Ուլնեցի իշխանները թող պիտի տրուին և Պատրիարքարան պիտի ղրկուին, և եթէ նոյն օրն իսկ Գաբու օղլանին Բ. Դուռը ղրկած էր այս գործին համար Բ. Դռնէն պետք եղած հրամանագիրը առնելու և այլն: Պատգամաւորներն այս պատասխանէն գոհ ըլլալով մեկնեցան, և յիրաւի, ինչպէս արդէն ծանուցած ենք, արգելեալ իշխանները չորեքշաբթի իրիկուն թող տրուելով Պատրիարքարան խրկուեցան: Ահաւասիկ Խառն ժողովոյ մատուցած մանզերնիս օրինակը:

Ամենապատիւ Սրբազան հայր և ազգախնամ տիարք Ազգ. խառն ժողովոյ: Ցիրաւի թէպէտ և պատկառելի ատենիդ առաջարկելիք ազգային իրաւանց նկատմամբ խել մը հարցումներ ունիմք, բայց այժմ անոնց ամէնքը մեկդի թողնելով միմիայն անոնցմէ մինը և կարևորագոյնը ձեռք առնուլ կուզիմք, և այն է մեր չորս Ուլնեցի Հայկազն եղբարց բանտարգելութեան մասին մէկ քանի հարցումներ ընել, թէ այդ մարդիկ մինչև հիմայ, որ կը տագնապին ի՞նչ է անոնց յանցանքը, անձնակա՞ն թէ ընդհանրական, այսինքն ստուգուած հանցանքը լոկ իրենց անձին կը վերաբերի, թէ ընդհանուր Ուլնիոյ ազգայնոց, և թէ ի՞նչ կերպիւ, ի՞նչ պարագայի մէջ, ի՞նչ հանգամանքներով և ո՞ւր կամ ո՞ր ատեանը և ի՞նչպիսի հարցափորձով վճռած ու բանտարկութեան դատապարտած են, ըստ որում, մինչև ցարդ իրողութեան վրայ կատարեալ և որոշ գաղափար կամ տեղեկութիւն մը ձեռք բերել անհնար եղած ըլլալուն, շատերուն ուշը գրաւած, ու զամենքը՝ որոց և մեր իսկ զգացմանց թարգման են ստորագրեալք՝ վերջին ծայր մտատանջութիւն և անհամբեր հետաքրքրութեան մէջ մղած է, և գործին այսչափ գոց և այսչափ ամուր և աչալուրջ հսկողութեան ներքև բռնելուն նայելով կերևայ թէ ատոնց յանցանքը խիստ խիստ ծանր և հետևանքը խիստ չար, խիստ վտանգաւոր ըլլալու է:

Քանզի կը յիշէ Գոզանցի պեյերը, որոնք հարիւր տարիներէ հետէ ինչ ինչ բարբարոսութիւններ, ինչ ինչ ստահակ ապստամբութիւններ յարուցանելէ, մինչև անգամ տէրութեան հրովարտակներն ու հրամանները առ ոչինչ և առ ոտն առնելը և արհամարհելէ վերջը, այսօր անոնց իւրաքանչիւրը մեծերէն բռնէ մինչև փոքր որդիքը. իսկ մեծագումար և առատ ամսականներով, երևելի պաշտոնով, փառաշուք պատուանշաններով և հոյակապ պալատներով վարձատրուած՝ մայրաքաղաքիս հրապարակին վրայ արձակ յամարձակ և մի քանի արբանեակներով փառօք շրջելու վրայ են. իսկ ասոնք բանտին խորշերը կը մաշէն. (որ քիչ զարմանք և փոքր վիշտ չէ մեզ համար) ըսել է անոնց յանցանքը, անոնցինին կրկնապատիկը ծանր ըլլալու է և հետևաբար քանի որ անոնց պաշտած կրօնքն և խաչը կը պաշտենք մենք ևս, մեզի կը վերաբերի և մեր անձերուն պարտք և իրաւունք կը համարուի խնդրանօք աղաչել զՁեզ, որ օր յառաջ և ժամ յառաջ պաշտօնական ծանուցմամբ մեր այս անհամբեր հետաքրքրութեան հարցմանց գոհացուցիչ պատասխաններ տալ բարեհաճեք, և եթէ դուք ևս մեզի նման իրողութեան տակաւին կատարեալ տեղեկութիւն չունեք, որ յուսալի է… այս կետէն անփոյթ չմնալով ուրկէ որ անկէ՝ հարցնել և տեղեկանալ, կամք և շնորհ ըներ, որպէսզի հասկանանք այս մարդոց սարսափելի մեղք գործած ըլլալնին, ու այս հիւծողական սրտադողէն փոքր ինչ հանգիստ առնենք:

Իսկ եթէ ոչ այս է, ոչ այն ու հանցանքնին միմիայն եթէ իրենց ստրուկ քրիստոնեայ գտնուելն է, դարձեալ ըսէք և յայտնեցէք մեզ, որ գոնէ մենք ալ մեր քրիստոնեայ ստրուկ ժողովուրդ մը գտնուելնիս մեր թշուառութեանց անդարձ ճակատագիրը ճանաչելով, կամ նոցա պէս բանտից խորշերը այսուհետև կեանքերնիս մաշեցնելու, այսպիսի դատապարտութեան մը դատապարտուած ըլլալնիս հասկանանք և ձայներնիս յաւիտեան կտրենք, և կամ հիմակուց ջանանք գտնել մեզի համար այնպիսի հաւատք մը, որ ինչպէս ուրիշները, նոյնպէս և զմեզ ու մեր որդիք ապագայ թշուառութեանց և փորձանաց շանթերէն ու յորձանքներէն պատսպարել և ազատ պահելու ծառայէ … և այլն:

3

## ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՄԱՍԻՍԻՑ»

«Մասիս», 1866, N 63

Երեքշաբթի օր Ս. Պատրիարք հայրը կայսէրական տերութեան արտաքին գործոց պաշտօնեայ բարձրապատիւ Ալի փաշային երթալով, Սսոյ Նիկողայոս եպիսկոպոսին մինչև այսօր ազգին կամացն և տերութեան հրամանին հակառակ Կիլիկիոյ մեջ յամառել կենալուն և ազգին մեջ տարաձայնութեանց, դժգոհութեանց և ուրիշ կերպ կերպ չարեաց առիթ ըլլալուն վրայ դառնապէս գանգատեր է. նոյնպէս Զարսանճախի տէրէպէյիներուն դէմ մինչև հիմայ վարչութեան կողմանէ եղած խնդիրներուն անգործադրելի մնացած ըլլալեն երկրին հայ ժողովրդեան զգացած ցաւն ու յուսահատութիւնն նկարագրելով, բարեխնամ տէրութեան կարեկցութիւնն ու պաշտպանութիւնն հայցեր է:

Դարձեալ Զեյթունի հայ ժողովրդոց համար իրենց երկրէն ուրիշ տեղ փոխադրելու պատճառը հարցնելով գոհութեամբ իմացեր է, որ Բ. Դուռն այնպիսի տնօրինութիւն մը կամ հրաման մը ըրած չէ Զեյթունի խղճալի հայ ժողովրդոց համար և խնդրեր է որ բանտէն արձակեալ իշխաններուն ալ իրենց հայրենիք դառնալու հրաման շնորհուի:

Կը լսենք թէ Բարձր. Ալի փաշան Ս. Պատրիարք հօր խնդրուածքը մարդասիրաբար լսելով, անոնց կատարման մասին պէտք եղած միջոցները Բ. Դրան կողմանէ 'ի գործ դնելու գոհացուցիչ խոստումներ տուեր է:

4

## ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՄԱՍԻՍԻՑ»

«Մասիս», 1866, N 68

### Ազգային

Հալեպէն նոյ. թուով գրած նամակէ մը կիմանանք թէ Զեյթունի չորս իշխանաց բանտարկութեան լուրը Զեյթուն հասնելուն, կրօնափոխութեան շշունջ մը ծագեր է բնակչաց մէջ, և երբոր իշխանաց ընտանիքն ալ Մարաշ տարուէր* են, զեյթունցի քահանայ մը և քառասունի չափ ժողովուրդ Մարաշ երթալով լատին եպիսկոպոսին և հռոմեականաց գերապայծառին դիմէր են, որպէսզի յիշեալ ընտանիքին ազատելով Զեյթուն դարձնեն և իրենք ալ հռովմէական ըլլան: Բայց Հալէպի առաջնորդ գեր. Տիգրանեան Մկրտիչ վարդապետին և արժանայարգ Քիւրքճեանօֆ Յոհաննէս աղայի յուսադրական և յորդորական գրութիւնները, և Մարաշի երևելեաց ոմանց ջանիւք չորս իշխաններուն ընտանեաց հայոց յանձնուիլը, կրօնափոխութեան դիմողներուն սիրտը իջուցեր և դիտաւորութիւններէն ետ դարձուցեր են: Ուստի Հալեպէն այս գործին համար Մարաշ դիմող լատին Մօնսեօներն ալ ապարդիւն ելնելով Հալեպ վերադարձել է: Զեյթունի իշխանաց բանտէն ազատուելուն լուրն ալ, զոր Պատրիարքարանը հեռագրով Հալէպ դրկել է 4-ին հոն հասնելով, գեր. առաջնորդը յատուկ սուրհանդակ հաներ է Զեյթուն հասցնելու համար, և ինքն ալ վարչութեան հրամանին համեմատ անյապաղ Զեյթուն երթալու կը պատրաստուի եղեր:

* Պատրիարքարանն այս լուրն ստուգելու համար շաբաթ օր հեռագիր քաշել տուաւ ի Մարաշ բայց մինչև այս առաւօտ պատասխանը եկած չէ:



5

## ԴԻՄՈՒՄ, ՈՒՂՂՎԱԾ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

20 հունվար, 1867

Մեք 'ի ներքոյ ստորակնքեալքս Զար Սանճախ վիճակի ժողովուրդքս՝ իսրայէլացւոց ազգի նման գերութեան մէջ ենք... Առաջին՝ կոյս աղջիկ և կամ այրի ամուսնացած ժամանակը հինգ հարիւրէն մինչև հազար հինգ հարիւր ղուրուշ կանխիկ ստակ պիտի վճարենք գիւղին մէջ նստող աղային, որ հրաման ընէ ամուսնանալու և յետ այնորիկ արտոնութիւն ունենանք հարսանեաց հանդէսը կատարել. Երկրորդ՝ ամէն մարդ տարին տասներկու ամիս անխախտ ձրի և առանց հացի և հացերնիս մեր քսակէն յետերնիս առնելով արտորէից, այգեաց և պարտէզաց մշակութիւնը անխաբան պիտի կատարենք. ամէն տուն իր աղային յիսուն-վաթսուն բեռ փայտ տարոց տարի պիտի հասուցնի. նաև որքան որ պէտք ըլլա իջևանին համար իւղ, ոչխար, գառ, մուճակ, ամենայն կարևոր պիտոյքը ձրիաբար պիտի հասուցանենք. եթէ ընդդիմանամք կամ զանց առնենք և կամ սակաւ ինչ ուշանայ, շղթա, գելան, մահադեղ, սուր, հրացան, արդէն մեզի համար պատրաստուած է, վասն զի իբրև թագաւորի հրաման անմիջապէս պիտի կատարուի. մենք աչքերնիս բացեր ենք թագաւորնիս զանոնք կճանչնանք: Ինչպէս այր մարդիկ արտաքին ծառայութիւնը կընեն, նմանապէս ընտանիքնիս արտաքին և ներքին իբրև աղախին ծառայութիւն պիտի ընեն... Երրորդ՝ հարկի կողմանէ որ հարցանեք՝ ութսուն տարէն աւելի է, որ անոնց թագաւորական հարկը դարձեալ մենք պիտի վճարենք, իրենք ազատ են: Այս ամէն տեսակ հարստահարութեանց կհամբերենք, որովհետև օրէնք եղած է. աւելի անհամբերելին սա է, որ այգի, պարտէզ և տուն կը հաստատենք

կամ հայրենական ժառանգ մնալով, բարկացած ժամանակը մեր ձեռքէն կառնէ ուրիշի մը կուտայ, կամ գիւղէն կը վանէ: Ժամանակին Չար Սանճախ երեք հազար տուն էր. այժմ հազար հինգ հարիւր տուն մնաց. Կիսուն ապստամբները փախուցին և ոմանք ալ յոժարութեամբ գաղթեցին և անոնց ալ թագաւորական հարկը դարձեալ կառնէ կառավարութիւնը մենէ: Այն պատճառ հասած է գէշութիւնը, որ ժամանակ մը մեր ննջեցեալները գերեզմանատուն չթողուցին ամփոփել, թէ երկիրը մերն է, չենք թողուր. վիճակէ դուրս տեղ տարէք. այս ետքին մեր վերայ եկած գէշութիւն, հարստահարութիւն շատ: Նախ սոյն երկիրը Հայաստան ըլլալուն շատ ապացոյցներ ունինք. գիւղ կայ որ մինչև տասն հինգ աւերակ եկեղեցի և աղբիւր կայ, որոց արձանագրութիւնը կը վկայէ. ալ ինչպէս կրնայ ըլլալ որ տուն, այգի, պարտէզ և բոլոր կալուած իրենց սեպհականել: Մենք առաջ ձեռքերնիս գիր մուրհակ ունէինք, բայց շատերուն ձեռքէն բռնի առած կրակած են. իսկ այժմ ալ անոնց ձեռքը տէրութեան կանոնի համաձայն գիր կայ և ոչ մեր. կարելի է որ հինուց մնացած գիր հայոց ձեռքը կայ, անոնց ձեռքը չի կայ:

Շատ քննիչներ եկան քննութիւն ըրին, ամենին բան մի չգտան. բռնի կամ գողութեամբ տիրած են. արքայական դիւանատունը քննութիւն ըրած ենք և Ազգային պատրիարքարանն ալ իմացած է այս կարևոր խնդիրը, որ սոյն ընդամէն այն կալուածները և անտառները տէրութեանն է. սիրով կփափաքիմք, որ այն կալուածները բաժին և բաժին աղքատաց ժողովրդոց ծախուի, տէրութեան կողմանէ արժանաւոր գին մը յատկացնելով, եթէ ոչ մենք ալ մեր նախնեաց պէս ցիրուցանք կըլլանք կամ ուրիշ միջոց մը ճարել. վերջապէս մենք անոնց հետ չի պիտի կրնանք միաբանիլ. վասն զի մեր նախնեաց արիւնները ծծած են տզրուկի պէս. քանիցս անգամ տէրութեան փոխարքային և Ազգային պատրիարքարանին աղերսագիր տուինք. այսօր վաղը ըսելով գործը քանի երկարացաւ, վիճակը այնքան գէշ եղաւ. վասն զի վերջին յուսահատութեան մէջ իյնալով այն առջի միաբանութիւննիս ալ ցիր ու ցան ըլլալու վրայ է, քանզի ութ ամիս է որ Առաջնորդնիս ալ մայրաքաղաքս ի թափառական կը պտըտի: Այսքան աղերսագիր երկարօրէն մախսերագրութիւններ եկաւ Պատրիարքարանի, թէ գոնէ առաջնորդնիս ղրկեցեք որ միաբանութիւննիս թող չի ցրուի, դարձեալ չեղաւ: Ք[րիստո]ստէրն մեր ըսաւ թէ՝ խնդրեցեք և տացի, բաղխեցէք և բացցի: Ոչ խնդրածնիս առինք, ոչ ալ բաղխածնիս բացուեցաւ: Ահա հիմա կիմացնենք, որ վիճակի մէջ սա մօտերս կողմնապահութիւն մը պիտի ծագի, վասն երկիւղի այն ժամանակը ոչ Պատրիարքարանը կրնայ մաքրէ և ոչ մէկը...

...Կարելի [է] այս եղելութիւնները լրագրերու միջոցաւ ալ իմացած էք, եթէ ընդամենը գրելու ըլլանք, ձանձրութիւն պիտի ըլլայ. միայն երևելի



խնդիրները գրեցինք... բաւական է մեզի այսքան ժամանակ սնօտի խօսքերով խաբեն: Այս վերջի խնդիրնիս է, որ կմատուցանեմք...

Պոլիս մարդ մի ... մեռնելու ըլլայ, տարի մը երկուք սուգ կը պահեն, ապա ու՞ր կմնայ ասանկ քանի՛ քանի միամորներ չարաչար մեռուցին. լոկ կարդալ անցնելով չըլլար. քանի՛ քանի տուներ գոցուեցաւ: Այս աղերսագիրը մշտնջենաւոր հետդ պահես և որքան որ երևելի տեղեր երթաս ցոյց տաս. ասանկ երկիր կամ վիճակ ուր տեղ կայ...

[55 ստորագրություն և կնիք]

*Մատենադարան, Կաթ. դիվան,*

*թղթ. 202, վավ. 549*

6

## ՄԱՍՆԱՎՈՐ ՆԱՄԱԿ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 հունիս, 1874

Մեծ Ղարաքիլիսա

Յարգոյ բարեկամ

Պարոն Արշակ Տէր Ղազարեանց

Ամսոյս 20-ին մի քանի արիական հայազգի զաւակունք, ոմանք յաղագս ծառայութեան եւ ոմանք յաղագս երկար ժամանակեայ օդափոխութեան եկեալ այսր ի գիւղն Մեծ Ղարաքիլիսայ Փամբակու ձորոյ Աղեքսանդրապոլու գաւառի, եւ գումարեալ ի միասին անձնանուէր համահաճութեամբ համարեցին վասն իւրեանց կազմել մի սենեակ, անուանդրել «Կանտոր հայրենեաց սիրոյ», քան թէ զբոսնել ի զուր ի պարսաւանս այլոց: Որոշեցին ի նոյն կանտորն հաւաքելոյ իւրաքանչիւրում շաբաթու երեք օր, այն է երկուշաբթի, հինգշաբթի եւ կիւրակէից օրերն առաւօտեան 9 ժամից 12-ն կէսօրէի և կէսօրէի 3 ժամից ց6-ն երեկոյի, յաղագս զանազան լրագիրս կարդալոյ, նմանապէս ազգային զպատմութիւնս և միով բանիւ ամենատեսակ ազգաօգուտ գործոց վերայ մտածելու, բաց ի տէրութեանց գործոց, որն որ արգելուած է, այնպէս որ չիցէ իւրեանց հայութեան նախկին սէրն այս գիւղումն ռամկօրէն ի մոռացութեան ենթարկեն այլ ունիցին զարգասիս անմահ յիշատակութեան: Իւրեանց մասնաւոր ուսումնականութեամբ, որք են Աղեքսանդրապոլու քաղաքացիք եւ թէպէտ թուով շատ, բայց ի մերոյ նոցա ընտրեալ անձինքն այսորիկ են անուանի. կառավարիչ կանտորի պարոն Գեւորգ Խոսրովեանց. անդամք. Աղեքսանդր Լազարեանց, Մկրտիչ Լազարեանց եւ Բաղդասար Չարխեանց. ատենադպիր Համբարձումն Բա-

լասանեանց եւ այլն ըստ կարգի եւ ըստ նմանութեան այլ տեղեաց. վասն որոյ հայրենասէր եղբայր պարոն Արշակ, խոնահաբար խնդրեմ զանց չառնել յինքենէ կամ զսոյնս առաքելով հրատարակել, ի մէջ Մշակ լրագրի այս կանտորի հիմնարկութեան մասին. զի լուեալ անծանօթ եւ հեռաւոր հայ ազգի ուսումնական եղբարց մերոց ուրախ լիցին քան զչափն աւելի. եւ եթէ ոք ցանկայ անձամբ անձին ներկայանալ կամ գրաւոր հաղորդակցութիւն ունենալ ընդ կանտորիս (կողմանէ) կարող է, միայն պարտ է յայտնել նամակով պարոն կառավարիչ Գեւորգ Խոսրովեանցին եւ վճարել ի ծախսարարութեան կանտորի տարեկան երեք ռուբլի. այլեւ, պարոն Արշակ, խնդրեմ Ձեր կողմից խնդրել պարոն խմբագրին Մշակ լրագրի, զի հրատարակեսցէ սաստիկ ծաղկեալ եւ յորդոր ոճով: Ողջ լերուք եւ ներեցեք վռազ նամակիս:

Որ եւ մնամ միշտ բարեացակամ Ձեր

Համբարձում Յարութիւնի Բալասանեանց

ЦИАМ, 3-е отд., 3-я экспед, д. 120, л. 36.

7

## ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՄԱՍԻՍԻՑ»

«Մասիս», 1877 , N 958

Կէմէրէք Սեբաստիոյ կառաւարութեան ներքև և Սեբաստիայէն դեպի արևմուտք իբր 18 ժամ, իսկ Կեսարիայէն դեպի արևելք իբր 12 ժամ հեռի գիւղ մը է և ունի իբր 300 տուն հայ, 200 տուն մահմէտական բնակիչ, այս գիւղին մէջ 1870 թուականէն ի վեր վեց կամ եօթն հայ աղջիկներ մահմէտականացուած են այլ և այլ միջոցներով որ բոլորովին հակառակ են կառավարութեան օրինաց և կրօնական ազատութեան: Քանի մը տարի առաջ ձեր թերթին և ուրիշ լրագրաց մէջ հրատարակուեցան այս բռնի կրօնափոխութիւնէն մէկ քանիները, մանաւանդ աղջկայ մը պատմութիւնն որոյ հայրն իր կամօքն մահմէտական կրօնն ընդունած էր, և անլուր նեղութիւն և տանջանք կուտար իր աղջկան ալ, որպէսզի ընդունէր իր հօր նոր կրօնը: Խեղճ աղջիկը այս գազանաբարոյ հօր ձեռքին գրեթէ մարտիրոսի մը նման տանջուելէն ետքն, ինկաւ այն մոլեռանդ Իմամին ձեռքը, որուն խօսքը պիտի ըլլայ այս նամակիս մէջ: Թողունք անցեալ, ներկայ դեպքը պատմել սկսինք: Բարէկամս այսպէս կը գրէ ինձ փետր. 26 թուականաւ. «Առաջին նամակաւս կը փափաքէի ձեզ ուրախառիթ լուրեր հաղորդել մեր գիւղին վրայ, սակայն ստիպուած եմ ցաւալի լուրեր տալ ձեզ, և նորոգել ձեր միտքին մէջ այն դէպքերուն յիշատակն, որ կարեւէր խոցած են ձեր և ամենուս սրտերը: Մեր գիւղին բնակիչներէն Գալայճեան Պետրոսի դուստրը՝ Կիլիսթան բաւական ատենէ ի վեր նշանուած էր Քիւչիւքեան Խաչատուրի որդւոյն Սարգսի հետ: Կէօզ Օսման օղլու Իսմայիլ, որ ինչպէս գիտեք, իր աւազակութեան և սրիկայութեան կողմանէ նշանաւոր հանդիսացած է այս կողմերը, այլ և այլ ապօրինաւոր միջոցներ գործածած է Կիլիսթանը մահմէտական ընելու և անոր հետ ամուսնանալու. բայց և տեսանելով, որ այն միջոցները չեն յաջողիր, դաւ նիւթելով աղջիկն առանձին տեղ մը բերել կուտայ, աղջկան դրացի և հասակակից մահմէտական աղջկանց միջոցաւ: Իսմայիլ իր հետն առնելով Ղանի օղլու Իբրահիմը, կերթայ այն տեղ ուր յիշեալ մահմէտական աղջկունք խաբելով տարած էին խեղճ Կիլիսթանը:

Հոն Իսմայիլ այս երեքտասնամեայ կուսին վրայ իր վայրագ կիրքը յագեցնելէ ետքը կ'սպառնայ ըսպանել զանի, եթէ չհաւնի իր հետը փախչելով ամուսնանալ: Խեղճ աղջիկը անոր քովը դառնալու խօսք տալով հազիւ կը յաջողի գազանաբարոյ Իսմայիլին ձեռքէն այն օրն ազատուիլ: Աղջիկ տունը վերադառնալէն ետքը կը պատմէ մօր թէ ինչ փորձանք եկաւ գլխուն: Աղջկան ծնողքը վախենալով թէ Իսմայիլը իւր սպառնալիքը կատարելու չափ անգութ և հանդուգն է, անմիջապես կիմացնեն իր փեսացու Սարգսին, որ շուտով հարսնիք ընէ, և աղջիկն այս կերպով ազատուի բռնաւորին ձեռքէն: Երիտասարդը շատ աղքատ ըլլալով՝ վերին աստիճան նեղութիւն կը քաշէ հարսնիք ընելու, սակայն Կիլիսթանի հօրեղբօր որդիներէն Մինաս աղա Գալայճեան կը հանի հարսանեաց ծախքը վճարել և հարսնիքը կը կատարուի: Իսմայիլը տեսնելով որ չյաջողեցաւ իրեն կին առնուլ կը կատղի և կը խորհի աղջիկն և անոր ամուսին միանգամայն սպանել: Վերջապես աղջկան հարս ըլլալէն տասն և ինն օր ետքը, շաբաթ գիշեր մը, փոթորիկէն և աղջամուղջէն օգուտ քաղելով և հետը ուրիշ երեք օգնականներ առնելով կը մտնէ Քիւչիւքեան Խաչատուրին տունն և երեք շաբթուան հարսին՝ Կիլիսթանին գլուխը կը կտրէ և Սարգիսը ծանր կերպով կը վիրաւորէ երկու տեղէն, երբ անոնք քունի մէջ էին: Սարգիսին աղիքները դուրս թափելով կը սկսի աղաղակել. խեղճ երիտասարդին հայրը գիւղը չէր, մայրը կարթննայ, նոյնպես դրացիներն ալ արթննալով օգնութեան կը դիմեն բայց մարդասպանները խոյս կուտան: Հետևեալ օրն այս ոճրագործութիւնը Ծարգըշլայի գայմագամին իմաց տալու համար գիւղէն հոն մարդ ղրկուեցան: Կառաւարութեան կողմէն դատաւորն և տեաւիի ժողովոյ անդամներէն անձ մը նաև գրագէտ մը գիւղն եկան քննութեան համար, և Իսմայիլն ու Իբրահիմը բռնուեցան ու Ծարգըշլայ տարին քննելու: Ոճրագործները քանիցս հարցաքննուեցան, բայց ուրախութեամբ միայն պատասխան տուին իրենց ուղղեալ հարցմանց: Գայմագամը ոճրագործները Սեբաստիա ղրկեց որպեսզի հարցաքննութիւնը հոն շարունակուի: Տեսնենք ինչ ելք կունենայ:

Սարգսին վէրքերը, ինչպէս ըսի, վտանգաւոր են: Բժիշկ Մարգար աղան, որ իր ճարտարութեամբ նշանաւոր եղած է այս կողմերը, կը դարմանէ յիշեալ երիտասարդը: Վտանգը բաւական թեթևացած է, բայց դեռ հիւանդին կեանքն կը վախցուի: Մոտերս աւազակները շատցած էին, և ամեն մարդ մեծ վախու մէջ էր, երբոր այս ոճիրն ալ գործուեցաւ, գիւղիս հայերը բոլորովին սարսափի մեջ ինկան, և հիմայ գիշեր ցերեկ իրենց քովէն զենք չեն պակսեցներ: Գիւղիս իմամ Հաճի էֆենտին հետևեալ սպառնալիքն ըրած է մեզ ըսելով թէ «եթէ դուք այս ոճիրը չծածկեք և ոճրագործները փնտռէք, պիտի ստիպէք զմեզ ձեր ամենուն արիւնը թափելու»: Երբ իմամ մը այսպէս խօսի ալ կրնաք երևակայել թէ ռամիկ ժողովուրդը, մանաւանդ գիւղիս բռնաւորներն ալ ինչեր չեն խորհէր և գործէր»: Այս պարզ պատմութիւնը բաւական է նկարագրելու թէ Կէմէրէքի խեղճ հայերն ինչ թշուառ վիճակի մեջ են, և ինչպիսի դրութիւն կը վայելեն իրենց հայրենակից թիւրքերէն: Տէր խմբագրապետ, կը խնդրեմ որ դուք ալ այս մասին ձեր ազդու դիտողութիւնն ըներ, և հաճէք կառաւարութեան և Պատրիարքարանի ուշադրութիւնը հրաւիրել այս դէպքին վրայ, որ Կէմէրէքի համար առաջին չէ, և կը վախնամ, որ վերջինն ալ պիտի չըլլայ, եթէ ոճրագործներն ըստ արժանւոյն չը պատժուին:

Ընդունեցէք յարգանացս հաւաստիքը...:

8

## ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ ՑԱՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ II-ԻՆ

1/13 փետրվար, 1878

Կ. Պոլիս

Տէր Արքայ

Այն պատերազմէն յետոյ, որ վախճան առաւ Ձեր կայսերական մեծութեան զինուց յաղթութեամբը, և որ ամէնէն աւելի փառաւորն է, թող ներուի Թուրքիոյ Հայոց եկեղեցական գլխաւոր պաշտօնէիցս ներկայացնել իրենց զարմացումը, յարգանքը, և խոնարհ շնորհաւորութիւններն, յոտս Ձեր կայսերական մեծութեան Աթոռոյն, որոց հետ կը միանան նաեւ Հայոց Ազգի ուխտն ու փափաքներն:

Տէր Արքայ, Ձեր զէնքերն յաղթանակեցին այնպիսի մի ժողովրդեան, որ քաջ պատերազմիկ ժողովրդոց մին է, որով Ձեր կայսերական զօրութիւնը նոր քայլ մը ստացաւ աշխարհի վերայ: Ձեր սուրը յաղթանակ կանգնեց թէ Եւրոպիոյ եւ թէ Ասիոյ մէջ և Ձեր զօրապետներն ու զօրքերը, ինչպէս Պուլկարիոյ դաշտաց մէջ իրենց ամենամաքուր արիւնն թափեցին. նոյնպէս թափեցին Հայաստանի այն հինօրեայ հողոյն վրայ՝ որ մեր



ծնողքն տեսաւ և զոր մեր հայրերն ի սկզբանէ դարուց իրենց քրտամբ և արտասուօքն ոռոգեցին:

Տէր Արքայ, Ձեր խոստումերն ամէնուն համար էին: Ձեր խնամքը պէտք է ամէնուն համար հաւասար տարածուի: Հայերն ալ ունին այնչափ իրաւունք, որչափ ունին Թուրքիոյ միւս քրիստոնեայ հասարակութիւնք՝ այն հոգատարութեան որ կը գործէ աշխարհի վրայ առանց շահասիրութեան, և այս անշահասիրութիւնը ամենէն աւելի գեղեցիկ յատկութիւնն է իշխանի մը, որ աշխարհի զօրաւորն է և զոր Աստուած մեծութեան տիտղոսով պսակած է:

Այո՛, տէր Արքայ, Հայերն այս նշանաւոր պարագային մէջ յորում իրենց կրօնակից եղբարց վիճակն կ'որոշուի, կը համարձակին Ձեր կայսերական Մեծութեան զօրաւոր պաշտպանութիւնն հայցել: Նոքա ալ վշտացած են, նոքա ալ կը յուսան: Խառնաղանճ վայրենիներէ շրջապատեալ և Եւրոպայէն հեռի մի անկիւն նետուած, իրենց տառապանքներն աւելի անգթաբար կը գործուին, քան թէ միւս քրիստոնէից, առանց իրենց աղաղակներն լսելի լինելոյ:

Ինչ բան որ այսօր կը խնդրենք և ինչ բան որ համարձակութիւն առած կը հայցեմք Ձեր կայսերական մեծութենէն, յանուն նոցա, ուրիշ բան չէ եթէ ոչ եւրոպական Թիւրքիոյ քրիստոնէից վիճակին նմանութիւնն: Եթէ եւրոպական Թիւրքիոյ գաւառաց միեւնոյն ինքնօրէն վարչութիւնն միեւնոյն երաշխաւորութիւններով տրուի Հայոց հասարակութեան, այն ատէն նոցա սրտեռանդն ցանկութիւններն լսուած պիտի լինին և վախճան պիտի առնուն իրենց ընդ երկար նահատակութիւնն:

Տէր Արքայ, խիստ դառն է մեզ համար որ խաբուինք մեր յուսոյն մէջ, բայց այս կարելիութեան չեմք ուզեր հաւատալ, միայն Ձեր վեհանձնութեան վրայ ունեցած յաւաստինուս շնորհիւ:

Կաղաչեմք Ձեր Մեծութեանը հաճիլ ընդունելոյ մեր սրտաբուղխ օրհնութեանց հետ մեր խորին յարգանքներն, ընդ որոյ պատիւ ունիմք լինիլ

Տէր Արքայ

Ձեր Կայսերական մեծութեան

ամենախոնարհ և ամենահնազանդ ծառայք

Պատրիարքարան Հայոց

*ՀՀ ՆՊ ՊԿԱ, Մ. Ներսիսյանի անձնական ֆոնդ:*

## 9

## ՄԱՏԹԵՈՍ ԻԶՄԻՐԼԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՎԱՀՐԱՄ ՄԱՆԿՈՒՆՈՒՆ

13 փետրվար, 1878

Կոստանդնուպոլիս, Ղալաթիա

Գերապատիւ Սրբազան եղբայր ի Քրիստոս

Տ. Վահրամ Ս. եպիսկոպոս Մանկունի

Հրաման ընկալեալ յամենապատիւ Սրբազան պատրիարքէ մերմէ ներփակել աստ զինքնագիր նամակ նորին Սրբազնութեան ուղղեալ առ Վեհափառ Տէր մեր և սոյն նամակս գրել առ Ձերդ Սրբազնութիւն և մանրամասնել Նորին սրբազնութեան նամակին իմաստը և վերջին օրեր ասոր ձեռնարկուած իրողութիւնները:

Խորին ուշադրութիւն և փութաջան գործունէութիւն կը խնդրուի ի ձէնջ ներկայ ազգային քաղաքական խնդրոյն վրայ, և առանց ժամ և վայրկեան կորուսանելոյ արժան եղածին գործադրութիւնը:

Արդէն գրեթէ հինգ ամիս յառաջ Արմաշեցի Ներսէս Հայր սուրբին հետ բերանացի հաղորդած եմ ներկայ պատերազմին վախճանին վերայ ձեռնարկելի երեք կէտերը, որոնց առաջինն ու գլխաւորն էր Ասիական Թուրքիոյ՝ այն է Հայաստանի վարչական ինքնօրէնութեան կամ անկախութեան համար՝ որ մեր Վեհափառ տիրոջ ինչպէս նաև ամեն հայու վերջին կէտ նպատակին է, ամեն ջանք ի գործ դնել: Ի հարկէ Ներսէս Հայրսուրբը հաղորդած է Ձեզ ցարդ, ինչպէս նաև վերջին հեռագրիս առած պատասխանս յուսադրել կուտայ ինձ թէ ցարդ ամեն միջոց ձեռք առնուած է Վեհափառ Տիրոջմէն:

Այժմ կը կրկնեմ նոյնը, որ ոչ միայն իմ, Ս. Պատրիարքին և եկեղեցականաց այլ համայն ազգին իղձն ու նպատակն է. այժմ աստ ոչ կուսակցութիւն կայ և ոչ վէճ. այլ ամեներեան մեծ ու պզտիկ, ամեն բարձր դիրք ունեցող աստիճանաւորք իսկ միահամուռ այդ նպատակին հասնելու գուն կը գործեն, և ամենքն առհասարակ առ Վեհափառ Տէրն մեր աչուինին դարձուցած կ'սպասին որ նորին օծութիւնն ինքն անձամբ դիմէ Վեհ. կայսերն Ռուսիոյ և Հայաստանի ինքնօրինութիւնը խնդրէ, նման եւրոպական Թուրքիոյ քրիստոնէից շնորհեալք ինքնօրինութեան:

Ընդհանուր Ազգին այս ջերմ և միաշունչ ըղձից թարգման կը կանգնի մեր Ամեն. Ս. Պատրիարքը և վստահ եմք որ արդէն նորին Ս. Օծութիւնը պէտք եղածներն ըրած է, և դարձեալ պատրաստ է զանձն իւր դնել ի վերայ ոչխարաց իւրոց:



Խաղաղութեան բանակցութեան առաջին ժամուն աստ շարժեցաւ ազգն համայն և երկու օրինակ խնդրագիրք ստորագրեցին տասն եպիսկոպոսունք, հանդերձ Ս. Պատրիարքաւ, որք ուղղեալ էին առ Վեհ. կայսրն և առ Մեծ. Կորչագօֆ իշխանն: Ժամանակը շատ կարճ լինելուն համար մէկ օրինակներն յԱդրիանուպօլիս ղրկուեցան առ քօնթ Իկնադիէֆ, առանձին նամակաւ Ս. Պատրիարք հօր, և միւս օրինակներն յանձնուեցան Խրիմեան եւ Նարպէյ Սրբազաններուն, որ պատգամաւոր նշանակուած էին, բերել առ Վեհափառ Տէր մեր, և նորին Օծութեան միջոցաւ մատուցանել Վեհ. կայսեր. ընդ այս ես ալ պատգամաւոր նշանակուեցայ. գալ և ի դիմաց Ս. Պատրիարքին բերանացի յայտնել զիղձ և զխնդրուած համայն Ազգիս, որ 'ի Թուրքիա:

Փափորթնիս պատրաստուեցան բայց դժբախտաբար ճանապարհ չը գտանք: Օդեսայի ճանապարհը նոր բացուեցաւ, բայց անտի 'ի Բօթի շոգենաւ ըլլալը տակաւին չ'իմացուեցաւ: Սակայն ուրախ ենք ըսել թէ միւս կողմէն յ'Ադրիանուպօլիս ղրկուած գրերն իրենց տեղը հասան, և իմացանք որ քօնթ Իկնադիւէֆ առ կայսր հեռագրեր է զխնդիր Հայոցս, և խնդրագիրն ալ փոսթայով ղրկեր է:

Չ'մոռնամ ըսել թէ Թուրքիոյ կառավարութեան մէյմէկ պաշտօնով այժմ յԱդրանուպօլիս կը գտնուին Համամճեան Սարգիս էֆենտի քարտուղար, Ստեփան փաշա զինուորական հիւանդանոցաց համար, Նուրեան էֆենտի Կարմիր մահիկի հիւանդանոցաց համար: Անդ կը գտնուի նաև առաջնորդական փոխանորդ Գէորգ վարդապետ, այր բանիբուն և կատարեալ, որ այս յարաբերութեանց միջնորդ կանգնած է:

Նիքօլա մեծ դքսին ալ օրհնութեան գիր գնաց:

Այս ամենը մեծ համակրութեամբ և սիրով ընդունուած են: Փետր. 7ին դուքս, քօնթ և այլք մեր եկեղեցին եկած են, ուր մեծ հանդէս կատարուէր է, անդ ներկայ գտնուէր են վերոյիշեալ երեք հայ աստիճանաւորք ալ:

Արդէն քօնթ Իկնադիէֆ Սաֆֆէթ փաշային դժուարութեամբ ընդունել տուած է սա պայմանը:

Սուլթանը երաշխաւոր պիտի կենայ Հայոց կենաց, պատուոյ և ընչից ապահովութեանը, երբ այս գրերն հասեր են խոստացեր է յաւելուլ թէ «Կովկասեան նահանգին սահմանակից և Էջմիածնի Հայրապետին իրաւասութեան տակ գտնուող Հայոց գաւառներուն՝ Էրզրում, Վան, Մուշ, Սըվազ ևն, վարչական ինքնօրինութիւն շնորհել, և այս մասին վիլայեթի օրինաց մէջ պէտք եղած փոփոխութիւն ընել»:

Սակայն մերոնք տակաւին աւելի առաջ գացած են և կաշխատեն:

Գործերն ալ այնքան արագ ընթանալու կերպարանք մ'առած են, որ այսօր ԱյՍտեֆանօ մտած են Ռուսք ուր ի տան Տատեանց պիտի ստորագրուին հաշտութեան նախագիծ դաշինքը: Անկէ ետքը քոնֆերանսը կայ:

Աւելորդ ժամանակ կորուսանել չըլլար: Գիտեմք և կը հաւատամք որ մեր Վեհափառ Հայրապետը իր կեանքը ազգին համար դրած է. ուստի փութանակի պէտք է դիմել առ կայսրն և ապա առ քօնվէրանսն. զի նա է գլուխ մեր և տէր հոգևոր: Նա կը ներկայացնէ ընդհանուր հայ ազգը, պատմութեան մէջ անմահ անուն պիտի թողու:

Ժամանակին ըրածը ոչ ոք կրնայ ընել, ժամանակը շատ բան կը փոխէ, պարագաներուն և դէպքերուն պէտք է հնազանդինք, մեր հին ընթացքը փոխելու ենք, մեր խորագիտութիւնը և շրջահայեցութիւնը պահելով դիմելու ենք կայսեր: Այսօր Թուրքիա անոր ոտից ներքև է. մէկ մեծ ու նշանաւոր մասը կորոյս, Ասիական մասին ալ մենք տէր ըլլալու ջանալու ենք: Թուրքիա այդ մասին մէջ մնայ ալ, այսուհետև Ռուսիոյ խոնարհ ծառան է: Ամեն պարագային մէջ Ռուսիոյ պաշտպանութեանը կը կարօտինք, փութանք միշտ նորա համակրութիւն ու սէրը գրաւել. փութանք այս անգամ բան մ'ըլլալ, կամ գէթ ապագայի նախապատրաստութիւն ընել, հայկական խնդիրն այժմէն հանելով. և օր մը՝ որ շատ չպիտի ուշանայ, երբ Ասիական Թուրքիոյ խնդիրն ելնէ (եթէ այս անգամ չելնէ) մեր երկրին վրայ, մեր բաժնին տէրն ըլլանք:

Մի տարակուսեք թէ արդեօք պիտի յաջողի՞նք, մենք աստ մեծ յոյսեր ունինք, նախնական բանակցութիւնք գոհ կընեն զմեզ, բայց ատոնց արդիւնաւորելուն և հիմնապէս արդիւնաւորելուն համար Վեհափառ Հայրապետին գործակցութիւնը, մանաւանդ թէ գործին տէր կանգնելն հարկ է: Դիցուք թէ մեր ջանքերն ի դերև ելնեն, ի՞նչ կորուստ կընենք: Գէթ մեր խղճին և ապագային առջև պատասխանատու չենք մնար. պատմութիւնը պիտի ըսէ Վեհափառ Գէորգ Դ ազգասէր կաթուղիկոսը անձամբ դիմեց կայսեր և քոնֆերանսին, բայց օգուտ չունեցաւ, նա իր պարտաւորութիւնը կատարած է... Բայց անկէ ետքը մեր ընելիքն ալ կայ...:

Այսու ամենայնիւ վստահութեամբ կըսենք թէ նախախնամութեան օգնութիւնը մերձ է մեզ հասնիլ. Աստուած և ժամանակ մեծ զօրութիւն են մեր նպատակին:

Պատասխանոյ կըսպասիմք, բայց նախ հեռագրի մը. եթէ հեռագրէք թէ «եպիսկոպոսները մինչև ապրիլ 15 հոս հասնելու են» կը հասկնամք թէ ամեն միջոց ձեռք առած էք և ապահով կըլլամք:

Ես արդեն գրեցի Օդեսայի քահանային, որուն միջոցաւ կը ղրկեմ նամակս, որ եթէ Օդեսայէն Բոթի շոգենաւ ըլլայ, ես շուտով ճամբայ պիտի ելնիմ առ Ձեզ: Բայց դուք նամակնիդ իմ հասցէովս յեկեղեցին Հայոց ի Ղալաթիա ղրկեցէք Թահուլու, այսինքն կրկին վարձք վճարեցէք:



Ամեն. Ս. Պատրիարք Հայր առ Վեհափառ Հայրապետն գրած նամակին մէջ ըսած է. «ի նամակէ Մատթէոս եպիսկոպոսէ և յայլոց, որ այդր են (կ'ակնարկէ Ներսէս վարդապետն) կարող է Վեհափառութիւն Ձեր իմանալ զխորհրդոց Ազգիս»: Ահա ըստ հրամանի նորա գրեցի առ Ձեզ, և շնորհ ընէք ներկայացնել Նորին Վեհափառութեան իմ որդիական ջերմ համբոյրիս Սրբոյ Աջոյն:

Աստուծոյ օգնութիւնը հասնի մեր ազգին և Տէրը զօրացնէ մեր Վեհափառ Հայրապետը իւր ձեռնարկութեանցը մէջ, և օրհնէ զՁեզ որ աջակիցն էք Նորին Ս. Օծութեան և զամէնեսին որ Հայազգին վերակենդանութեանը կաշխատին:

Մնամ աղօթանուէր

Մ. Եպիսկ. Իզմիրլեան

Յ. Գ. Չը մոռնամ ըսել թէ՝ կը լսենք որ Հասունեանք և բողոքականք Գաղղիոյ և Անգղիոյ միջոցաւ Կիլիկիոյ մասին համար կաշխատին յանուն Հայութեան: Նաև Անգղիոյ գաղթական Հայք կաշխատին, ամեն Հայ այս միջոցին կ'աշխատի եւրոպական Թուրքիոյ վիճակակից ընել զՀայաստան. քօնֆէրանսին ասկէ ալ շարժում պիտի ըլլայ:

Նոյն:

*ՀՀ ՆՊ ՊԿԱ, Մ. Ներսիսյանի անձնական ֆոնդ:*

10

## ԳՈՐԾ ԴԻՎԱՆԱՏԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. ԵՎ Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ-Ի

13 փետրվար, 1878

Կ. Պոլիս

Վեհափառ սրբազնասուրբ Հայրապետ ամենայն Հայոց

Ողորմած Հայր Հարանց

Առ հզօրագոյն ի կայսերս Մեծի պաշտպան քրիստոնէից դիմեցուք կամաւ ազգին, և ստորագրեցուք աղերսագրին ինն եպիսկոպոսօք՝ խնդրելով և վասն Հայաստանի զամենայն առանձնաշնորհութիւնս (autonomie) որ շնորհի շնորհիւ նորին՝ Եւրոպայ Տաճկաստանի քրիստոնէից:

Ձեր վեհափառութեան շնորհիւ պարտ և օրինաւոր էր առնիլ՝ բայց չգոյր ժամանակ ներողամիտ լերուք. զի ահա կնքի դաշնն նախագիծ:

Ազգն յուսայ և հաւատայ զի զանխուլ ի մէնջ Ձեր վեհափառութիւն արարեալ է զամենայն ինքնաբերաբար:

Ազգն խնդրէ 'ի վեհափառութենէդ դիմել անձամբ առ կայսրն նախքան, կամ եթէ չէ հնար գէթ 'ի պահու գումարման դեսպանախորհրդոյն և շնորհ խնդրել ի նմանէ վասն Հայաստանի որպէս առ այլս:

Զի որպէս աչք ծառայի 'ի ձեռն տեառն իւրոց, որպէս և աչք ամենեցուն ի Ձեզ և 'ի Կայսրն յաղթական, զի բազում լցաք տառապանօք և արհամարհանօք...:

'Ի նամակէ Մատթէոս եպիսկոպոսի և այլոց որք այդր են Վեհափառութիւն Ձեր կարող է իմանալ զխորհրդոց ազգիս:

Հայր հասարակաց համբուրելով զԱջդ
մնամ խոնարհ ծառայ Ներսէս եպիսկոպոս

*ՀՀ ՆՊ ՊԿԱ, Մ. Ներսիսյանի անձնական ֆոնդ:*

11

## ՄԱՏԹԵՈՍ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

10 մարտ, 1878
Ս. Էջմիածին

Աստուածարեալ Վեհափառ Հայրապետ Ամենայն Հայոց
Վեհափառ Ս. Հայրապետ և Տէր.

Պաշտօնական պատգամաւորութեամբ ի դիմաց Թուրքիոյ Հայոց դիմած եմ յոտս Վեհափառութեան Ձերոյ Թուրքիոյ Հայոց կողմանէ ինձ յանձնուած խնդիրը Ձեր վեհափառութեան ներկայացնելու: Խնդիրը Հայոց փրկութեան խնդիրն է և Ձեր Ս. Օծութեան անմիջական ուշադրութեան արժանի, ուստի իբրև Թուրքիոյ հայ ժողովրդեան պատգամաւոր կը խնդրեմ Ձեր վեհափառութենէն, որ շնորք ընէք ընդունիլ զիս Ձեր պատկառելի ներկայութեանը և հաճիք լսիլ Ազգին իղձն ու փափաքը, զոր Ազգն իմ միջոցաւ կը ներկայացնէ Ձեր վեհափառութեան և կը յուսայ թէ Ձեր Ս. Օծութիւնը իր ազգասիրական բարձր զգացմամբը մինչև իսկ իր անձնական տկարութեան ժամանակ Հայոց Ազգին այս կենաց և մահու խնդրոցն լուծմանն համար կը հաճի ի գործ դնել իր Հայրապետական սրբազան պաշտօնը ի փրկութիւն Թուրքիոյ Հայ ժողովրդեան:

Ձերդ վկհափառութեան անձնուէր որդի
Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեանց
պատգամաւոր Հայոց ժողովրդեան Թուրքիոյ

*ՀՀ ՆՊ ՊԿԱ, Մ. Ներսիսյանի անձնական ֆոնդ:*



12

## ԽՈՐԵՆ ՆԱՐ-ՊԵՅԻ ՆԱՄԱԿԸ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

21 մարտ, 1878
Ս. Պետերբուրգ

Գերապատիւ պատրիարքի Հայոց Կոստանդնուպօլսոյ
Տ. Ներսիսի Սրբազան Արքեպիսկոպոսի յաւէտ սիրելոյ մերոյ
Խնդալ ի Տէր

Յանցելում եօթնեկի եկն եհաս այսր ի Ս. Էջմիածին հոգեզգօն Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան հոգևոր որդի մեր, մինչ մեք դառնապէս չարաչար ի բազմատագնապ վիշտս կրկնատեսակ անձնական տկարութեան յոգիս ապաստան եղեալ, և յետ աւուրց ի թեթևանալ ցաւոյս դոյզն ինչ՝ ներկայացեալ մեզ պատմեաց ի դիմաց Ձերոց զհանգամանաց փափուկ խնդրոյն, զորէ ակնարկէք յերկոսին՝ գրութիւնքս Ձեր ի թուագրեալս ի 4-ն և ի 13-ն փետրվար ամսոյ անցելոյ, կամելով մեր ընդարձակագոյնս լսել ի բերանոյ նորա՝ քանի քանիցս խօսակցեալ նմա և ապա աւանդեալ որ ինչ հարկ և կարևոր թուէր մեզ յօգուտ Ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց, թոյլատրեցաք նմա վերադառնալ առ Ձեզ առ ի հաղորդել սրբազնութեան Ձերում զբարի նպատակ դիտաւորութիւնս մեր և զպատասխանիս:

Վեհափառ Տեառն իմոյ և Աստուածարեալ հայրապետի

Սրբազնագործ Աջոյն նուիրեմ համբոյր որդիական սիրով ի թղթոց անդր Ամեն. Ս. պատրիարքին Կ. Պօլսոյ և մանաւանդ ի ծայրալիր տեղեկութեանց զոր եբեր յոտս Վեհափառութեանդ սիրեցեալ եղբայրն մեր գեր. Մատթէոս Սրբազան՝ քաջ իսկ ծանօթ է Աստուածարեալ Հայրապետիդ պաշտօնն ազգային որ ինքն աւանդեցաւ:

Ընդ եօթնեակս երկուս ակնկալեալ մնացի ընդունել զհրամանս Վեհափառութեանդ, որպէս խնդրեալ էր իմ ի ձեռն վերոյիշեալ եղբօր: Այլ ի յապաղիլ հրամանաց Վեհափառութեանդ, և ի քաղաքական պարագայիցն հետզհետէ ծանրանալ, ընկալայ և յիշատակագիր և հրահանգս նոր ի Կ. Պօլսոյ, որոնք ստիպեցայ ձեռնամուխ լինիլ ի պաշտամանս գործադրութեան, ըստ խորհրդոց, խոհական բարեկամաց որ աստ, այնպէս իմն համարելով թէ անշուշտ ոչ առանց խորհրդոց էր լռութիւն Վեհ. Տեառնդ, այնպէս զի՝ լռութիւնդ այդ հաճութիւն իսկ էր որոշմանց ժողովոյն Կ. Պօլսոյ: Վասն որոյ նախ և առաջ հարկ համարեցայ տեսակցել ընդ օգնականն նախարարին արտաքին գործոց Կիրս, և ընդ առաջաւորս նախարարութեան Գ. Ժոմինի և Տէ Համպուրկէր, յայտնելով զքնութիւնս պաշտամանս և խնդրելով

զի դիւրացուսցին ինձ զայն խօսելով ընդ իշխանն Կորչաքօֆ: Բարեկամն մեր վաղեմի, կոմս Իկնադիէֆ՝ աստ գալով՝ ըստ մերոյ բաղձի, դիւրութիւն մեծ հայթհայթեաց ինձ ի յաջողութիւն ընթացից մերոց իւրովն բարեսիրութեամբ, զոր ցուցեալն էր արդէն ի Սան-Ստեֆանօ: Զի զոյգ եօթնեակ մի առ նմա դեգերեալ էմ յայնժամ, յաջողեցաք տալ մուծանել ի դաշնագրին զյօդուածն 16-դ: Թէև բազումս ընդդիմացան այնմ և յոչ կամաց ստիպեցան ընդունել լիազօր պատգամաւորքն Տաճկաց: Մեծ հաւաստիք են այս բարեկամութեան Իկնաթիէֆ զօրավարի առ Ազգս մեր անօգնական, զի զօրութեամբ յօդուածոյն այնորիկ՝ ա) Անուն Հայաստանի պաշտօնապէս ընկալեալ եղև Օսմանեան պետութենէ. բ) խոստացեալ եղին և երաշխաւորեցան անմիջական բարեկարգութիւնք ի Հայաստան. գ) բացաւ մեզ դուռն դիմելոյ առ կայսրութիւնն Ռուսաց, և առ այլս ի պետութեանց ի գործադրութիւն յօդուածոյ դաշնագրին ի Բ. Դրանէ, ի նախագծի անդ յօդուածոյն զոր առաջարկեալ էր մեր առ կոմս Իկնաթիէֆ. երկու ինչս եղեալ էր մեր ի կէտ նպատակի:

Առաջին՝ տալ ընդունիլ զանմիջական իշխանութիւն Առաքելական Աթոռոյն և Վեհ. Գահակալիդ ի վերայ Տաճկաստանեայց Հայոցս, և երկրորդ ինքնավարութիւն Հայաստանի: Այլ տաճիկք բացէ ի բաց մերժեցին զերկոսին ևս առաջարկութիւնս մեր, գիտելով քաջ, զարգասիս նոցա... և զօրավարն Իկնաթիէֆ չունելով մասնաւոր հրաման ի կառավարութենէ իւրմէ պնդել և տալ ընդունել զմերս զայս աղերս, և միւսմէ կողմանէ՝ ի քաղաքական հանգամանաց անդի գալով ստիպեալ փութացուցանել զստորագրութիւն դաշնագրին, հարկ եղև բարեփոխել զայն և մուծանել ի կերպարանս առաջիկայ 16րդ յօդուածոյն, որ և այն դարձեալ ի շնորհ մեծ է համարելի. քանզի յապագային կարէ յօդուածն այն զկարևոր ընդլայնումն ստանալ, ի ներել ժամանակին. որպէս և ինքն իսկ Իկնադիէֆ և Հիրս և Տէ Համպուրկէր և Ժօմինի յայս կարծիս են և ետուն ինձ յուսալ և յուսացուցանել և զԱզգն շատ է զի գիտասցուք յօգուտ ի գիր արկանել զհանգամանս որ ելանին և ելցեն մեզ ընդ առաջ ի լուծումն անդ բազմակնճիռն խնդրոյն Արևելից, յողորմութեանց բարձրելոյն Աստուծոյ:

Ի 14 ամսոյն իշխան Կորչաքօֆ, ըստ հրաւիրագրին՝ ընկալաւ զիս պատուով, և ի լինել բանից յայտնեաց թէ Վեհ. կայսրն և ինքն իսկ փափաքելով փափաքին զի և Հայոցս խնդիր զլաւագոյն ընկալցի լուծումն. այլ Անգղիա նենգուպատիր ընթացիւքն խոչընդոտն լինի, և զօրացուցանէ զԱյլազգն ի վնաս հարստահարեալ Քրիստոնէից, յորոց միջի էք և դուք, ասէ: Շնորհակալ եղէ զի ի դաշնագրին յիշեաց Ռուսիա և զմեզ, այլ ասացի, Ազգն Հայոց առաքէ զիս ներկայացուցանել Ձեզ զայս յիշատակագիր, հաւաստի գոլով թէ կառավարութիւնդ մեծ բարեհաճեսցի առնուլ զայն ի նկատողութիւն:



Այնուհետև ետու բերանացի բացատրութիւնս, որոց ունկն ետ քաղցրութեամբ, և խոստացաւ առաջի առնել զյիշատակագիրն առ Կայսրն, և խնդրել վասն իմ ունկնդրութիւն ի նորուն Վեհափառութենէ:

Եւ արդարև ի հետևեալ աւուր ընկալայ հրաւիրագիր ներկայանալ ի պալատն կայսերական ց18 ամսոյս: Եւ թէպէտ հեռագրաւ աւետեցի Վեհիդ մերոյ զբարեյօժար ընդունելութիւն ինքնակալին, սակայն նկարագրեցից աստ համառօտիւ զգլխաւորս ի բանից նորա:

Բազումք սպասէին ի դահլիճի անդ ընդունելութեան, այլ մուծին զիս նախ քան զամենեսին առաջի մեծի ինքնակալին: «Ճանաչեմ զձեզ, ասաց և ուրախ եմ տեսանել զձեզ այսր վերստին, տեսի զյիշատակագիր ձեր, և եթէ հանգամանք քաղաքականք ներեսցեն՝ կամիմ զի գոհ լինիցի ազգին Հայոց յապագային»: Եհարց ապա թէ իւ՞ կարծէք երաշխաւորել ձեզ զբարելաւութիւնս 16րդ յօդուածոյ դաշնագրի Սան-Ստեֆանօյի: Պատասխանի ետու թէ բազմիցս պարտեալ ի Տաճկաց, չ'կարիմք այլևս յուսալ ի խաբուպատիր խոստմունս նոցա. թող զի՝ և եթէ կամիցին իսկ՝ չկարացին զսպել զՔիւրտս ... բնակելոյ ի Հայաստան: Ապա ի վերայ բերի թէ չիք մեզ այլօրինակ զերծանիլ ի հարստահարութեանց, բայց եթէ պաշտպանութեամբ Ռուսիոյ և յերկարացմամբ զինուորական գրաւմանն, մինչև հաստատեսցի ի Հայաստան ինքնավարական իմն վարչութիւն պէս գունակ Լիբանանու: Ապա ներկայացուցի ծրագիր իմն ի դոյն, որ ունէր զհետևեալ յօդուածս, զորոց ետու բացատրութիւն սուղ բանիւք:

Ա. Տալ Հայաստանի ընդհանուր կառավարիչ, հայ-լուսաւորչական ազգէ, *մարզպան* և *վալի* անուանակոչութեամբ և աստիճանաւ *միւշիրի*, որոյ ընտրութիւն լինիցի ի սուլթանէն, համահաճութեամբ կայսերն Ռուսաց:

Բ. Կուսակալք և գաւառապետք՝ լինիցին հայ-լուսաւորչական ազգաւ, ընտրեալք յերեսփոխանական ժողովոյ Հայաստանի և վաւերացեալք ի Բ. Դրանէ:

Գ. Բարեկարգարանն լինիցի ի ձեռս Հայոց, յորոց լինիցին և քաղաքապահ զինուորքն:

Դ. Դատաստանարանք բացցին և վարեսցին օրինօք Քրիստոնէից ընդ նախագահութեամբ հայ դատաւորաց: Քատըք և այլ կրօնական պաշտօնեայք չունիցին անդ անդ մասն և բաժին:

Ե. Զնջեսցին արտօնութիւնք Քիւրտից, *չօրպանըյից և տէրէպէյքից:*

Զ. Նոր և արդար բաշխումն հարկաց:

Է. Բարեկարգութիւն վաքըֆի և քննութիւն կալուածական և հողային:

Ը. Զինաթափութիւն տաճկաց առհասարակ ի Հայաստան:

Թ. Պատրաստութիւն կանոնագրոց ի կառավարութեան երկրին, զոր վաւերացուսցէ սուլթանն, համահաճութեամբ Ռուսիոյ:

Ժ. Երաշխաւորութիւն ինքնավարութեան Զէյթունի, ըստ հնգադարեան վարչութեանն:

Ընկալաւ ինքնակալն զծրագիրն և յակն արկեալ մի անգամ, «Բարւոք է, ասէ, գուն գործեսցուք: Աղօթս արարէք զի օգնեսցէ ինձ Աստուած»: Ցայտ է թէ ջան ի վար արկի տալ միշտ զպատշաճական պատասխանիս: Յիշեցուցի նմա (որպէս և Կորչաքօֆ իշխանի) չընդդիմանալ մեր ազգովիմք, չառնուլ զէն ընդդէմ Սրբոյ խաչին զոր նա ինքն ինքնակալն ունէր ի ձեռին ի դրօշ ազատարար քրիստոնէութեան: «Գովելի էր քաջութիւն այդ Ձեր» ասէ: Ցուելի քաղաքավարութեամբ և զգուշաւոր բանիւք շնորհակալ լինիլ զի կամեցաւ ի հանդէս ածել յաչս աշխարհի զհաւատարմութիւնս և զքաջութիւնս Հայ զօրավարաց: «Նոքա գոհ արարին զիս» պատասխանեաց ինքնակալն ախորժ հաճութեամբ դիմաց: – Մի ևս գլխաւոր խնդիր մեր ասեմ, ի Վեհ. Տեառնէդ, այս է զի բարեհաճեսջիք դիւրացուցանել Առաքելական Աթոռոյ մերոյ տարածել զլուսարձակ և զփրկաւէտ ազդեցութիւն իւր ի վերայ Տաճկաստանեայ Հայոցս: «Այլ, ասէ, ո՞չ ապաքէն դուք ինքնին ընդդէմ կայք այդմ, և այս ի մեծ վնաս Ձեզ»: – «Ներեսցէ ինձ Վեհափառութիւնդ տալ դիտել թէ ազգ մեր զՍ. Աթոռն իւր համարի կեդրոն կրօնական միութեան իւրոյ և ցանկալով ցանկայ զի Սրբազնագոյն գահակալն նորա ունիցի զնախնին իւր ընդարձակ և լիուլի հովուապետական տեսչութիւն ի վերայ մեր, զի այն է օգուտ մեր և շահ և փրկութիւն. այլ Բ. Դուռն ընդդիմանայ այդմ, և կոմսն Իկնաթիէֆ վկայ է ըղձից այսց մերոց, և բուռն է հակառակութիւն տաճկաց ոչ միայն յընթացս տասնեհինգ ամեայ պաշտօնավարութեան իւրոյ, այլ և նոյն իսկ յաւուրս վերջինս կնքելով դաշնագրին, Աղէ՛, Վեհափառութիւն Ձեր բարեհաճեսցի տալ ի գլուխ հանել և զայս մեր խնդիր՝ զոր կենսական համարիմք ի բարգաւաճանս եկեղեցւոյ մերոյ»: – - «Այս կենսական խնդիր է այդ, յաւել ինքնակալն և զկարևորն հոգասցուք ի ժամանակին»: – «Ներեսցէ ինձ Վեհափառ Տէրդ, ասացի, զի դարձեալ աւետել համազգեայցս զհիրալիր համակրանս և զխոստմանս զոր բախտ եղև ինձ լսել յօգնստոսափառ շրթանց Ձերոց»: – «Ասացէք համազգեայցդ զի ես սիրեմ զազգն Հայոց», պատասխանի ետ կայսրն: Եւ մինչ խոնարհեալք միմեանց՝ յափշտակեցի զձեռն նորա և համբուրելով գոչեցի. «Օծեա՛լդ Աստուծոյ, թոյլ տուր զի յանուն չորս միլիոն տառապեալ Հայոց համբուրեցից զաջն զայն, որ տայ փրկութիւն Հայաստանի»: – «Այո՛, ունիցեք դուք միշտ զիմ համակրութիւն, վստահ լերուք յիմ վերայ»: Այս եղին վերջին բանք Վեհ. ինքնակալին և ես մեկնեցայ արտասուագին խնդութեամբ, խնդրելով ի Տեառնէ և բարեմաղթական բանս ինչ ասելով վասն կենաց նորա և օգոստափառ ընտանեացն և զաւակաց:



Ահա այս է համառօտ նկարագիր ընդունելութեան իմոյ ի կայսերէն: Ի նմին աւուր եկն ինձ յայց և իշխանն Կորչաքօֆ, որպէս և երկիցս եկին յառաջնմէ Կիրս, Ժօմինի և Համպուրկէր:

Հեռագրեցի առ Սուրբ պատրիարքն, այլ չունիմ պատասխանի. և ի թղթոց բարեկամացս իմանամ զի զայրագնեալ է եպարքոսն ընդդէմ ինձ. և խրատ տան չ'դառնալ առ այժմ մինչև անցցէ բարկութիւն, կամ հանգամանք ժամանակին փոխեսցին: – Ակնդէտ բարձր հրամանաց Վեհափառութեանդ խոնարհիմ ի համբոյր Աստուածաշօշափ աջոյդ, և մնամ միշտ ընդ կեանս իմ համօրէն:

Ձերում Վեհափառութեան ամենահնազանդ և ամենախոնարհ որդի
Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ

*ՀՀ ՆԴ ԴԿԱ, Մ. Ներսիսյանի անձնական ֆոնդ:*

## 13

## ՍԵՐՎԻՉԵՆԻ ՆԱՄԱԿԸ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

12 ապրիլ, 1878
Կ. Պոլիս

Առ նորին Վեհափառութիւն Սրբազան կաթողիկոս և ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց

Վեհափառ Տէր

Ինձ կը թուի որ որչափ որ Ձեր սրբազնութիւնը զիս կը ճանչէ, նոյնչափ ալ ես Ձեր սրբազնութիւնը. իր սիրտը բոլոր հանգամանքներով: Ցաւալին այդ է որ մէկզմէկէ ի հեռու ես, քաջ տեղեկութիւն չունիմ Ձեր կողմի պարագաներուն, ինչպէս ալ Ձեր սրբազնութիւնը մեզմէ հեռանալէն ետքը այստեղի պարագաներուն փոփոխութեանց: Գիտեմ որ Ձեր սրբազնութիւնը պէտք չէ տեսներ գրով ինձ յայտնել ինչ որ կը վերաբերի Ձեր կողմի. ասիկա մեծ կարևորութիւն ալ չունի, որովհետև իմ գտնուած վիճակս Ձեր Վեհափառութեան վիճակին համեմատութիւն անգամ չունի: Բայց որովհետև դուք գլուխ Ազգիս պէտք է գիտենաք երկու կողմի վիճակն ալ, ուստի ինձ պարտք կը համարիմ ինչ որ գիտեմ մեր կողմի պարագաներուն վրայ, պարզապէս պատմել Ձեր խոհականութեան ձգելով բռնուելիք կամ արդէն բռնուած ընթացքներն. վասնորոյ դատողութիւն ընել: Նախ որ Ձեր գիտցած պարագաները անյայտ եղած են այն օրէն որ Ֆուատ և Ալի մեռան առանց

մեկը ձգելու որ զիրենք շարունակէ, ասոր տեղը երևան ելած է Գայմագամ, պարագաները այսինքն դարերէ ի վեր այս տեղի ժողովուրդը խումբ խումբ զատ կեանք վարելէն ետքը փորձ մը եղած էր ետքի ժամանակները ասոնք միացնել և միահամուռ ժողովուրդ կազմել, առանց դիպչելու ամէն մէկ խումբի ազգային աւանդութեանց. այս փորձը որ թելադրութեամբ Անգղիոյ և Գաղիոյ ի գործ դնելու աշխատած են Ռեշիտ Ալի և Ֆուատ զ՚պսակուելով. տէրութեան զօրութիւնն ալ հին դարերու մէջ ունեցած կացութիւնը վերանորոգելու անբաւական ըլլալուն, ամէն խումբի համար միևնակ ընելիք մը մնացած է, այն է զատուիլ և ամէն մէկ խումբ իր ճարը տեսնէ. ահա հիմակուան կացութիւնը: Դուք քաջ գիտեք Վեհափառ Տէր, որչափ ես և ինձիպէսները աշխատեցան իմացնելու այս տէրութեան որ իւր շահը Հայը առաջ բերելն է: Ասիան զօրացնելով, ասոր փոխարէն իրօք սա ցուցուցին, որ թէև միտում ալ ունենան անկարող են էական բան մը ընելու:

Արդի շարժման մէջ ինչ ընել հարկ է՞ր, երբ կը տեսնենք Պուլղարը, Ցոյնը, Պոշնակը նմանապէս Արաբացին ազգայնութեան խնդիր մէջ կը բերեն, մենք Հայք ի՞նչ պետք էր որ ընէինք, տաճկաց հետ միանա՞լ, անցեալը արդէն ապացուցուած է, որ ասոնց հետ միանալու համար ուրիշ ճար չի կայ, այլ մահմետական ըլլալ. այսինքն Ազգը ուրանալ, ահա Հայ խնդիրը այսպէս երևան ելաւ, մենք երեւան չը հանեցինք, պարագաները հանեցին:

Մենք որ մեր նախնեաց աւանդութիւնները, որոնց մէջ կան կրօնքնիս և լեզունիս և յիշատակարաններնիս երկրպագելի կը համարիմք, ճար մը փնտռեցինք յաղթողին դիմելով յաղթողը քաջ ճանչնալով և յաղթողին ապագային մէջ ունենալիք դիրքը աղէկ գիտնալով: Իրեն դիմեցինք խնդիրքներով որպէսզի մեր ազգը օրինաւոր կացութիւն մը ունենայ: Մենք, ինչպէս որ քաջ գիտեք, ո՛չ թրքանալ եւ ո՛չ ռուսանալ գիտենք, Հայ եմք և մինչև ի վախճան հայ պիտի մնամք: Հայութեան նպատակին ծառայելու դիտմամբ գործեցինք և պիտի գործեմք, թէև արդիւնք ալ ձեռք չը բերինք գոնէ մեկը չի կրնար մեզ ամբաստանել, որ հայութեան պարտքը չի կատարեցինք, թէև սխալ ենք գոնէ պարտազանց չենք ըլլար:

Ձեր Սրբազնութիւնը կը կասկածէ որ մեր կողմէն ինքզինքնիս, կամ միևնոյն բան է, ազգը կը ծախենք որու որ ալ ըլլայ, բայց ասանկ չէ, ծախող չի կայ, կարելի է առնել ուզող ըլլայ:

Կը սխալի՞նք արդէօք այս բռնած ընթացքնուս մէջ, բայց ինչպէ՞ս, երբ որ մեր նպատակը Ձեզի յայտնի է, աղէկ գիտցէք, որ այսօր Թուրքաց կառավարութիւն չի կայ. մենակ քրտերու հարստահարութիւն կայ Հայոց համար, միանգամայն ազգ կազմելու կամ անհետանալու խնդիրը կայ մէջտեղը, ասանկ պարագային մէջ քրէական յանցանք է ընդ մեզ թէ որ չի գործենք:



Դուք որ մեր լոյսը ըլլալու կոչուած եք, Ձեր աթոռը, որ մեր նախնեաց սրբազան աւանդութեան կեդրոնն է բոլոր Ազգայնոց համար, նաեւ անոնց համար, որ Ձեր աթոռոյն հակառակը համարէք, պարտազանց կըլլաք, թէ որ մեզ աջակից չըլլաք, ի՞նչ կը վախէք, մենք մահկանացու եմք, պարտք կատարելու համար մենակ այս աշխարհ եկած ենք, պարտք կատարելով պետք է կեանքերնիս կնքիմք, ահա իմ կարծիքս, իմ սկզբունքս, չեմ կարծեր, որ այս մասին մեկզմեկէ զատուինք:

Ուրեմն, Վեհափառ Տէր, աղէկ գիտցեք, որ ոչ միայն Ռուսաց, այլ Գերմանացոց, Անգղիացոց, Գաղղիացոց և բոլոր Եւրոպիոյ դիմեցինք ազգին համար քաղաքական ապագայ մը ճարելու համար, ով որ մեզի հետ է, մեզի բարեկամ է, մենք բնաւ մեկու մը անձնատուր չենք եղած, և չեմք ըլլար, պաշտպան կը փնտռենք մեր խեղճութեանը, թէ որ մեկուն շահը հայ շահուն հետ կրնայ միանալ, անոր հետ՝ թէ որ չէ ուրիշի հետ: Վերջապէս մեզի առաջնորդող սիւնը ազգին շահն է: Ձեզի համար ալ այդպէս է. տարակոյս չունիմ:

Ահա մեր ըրածը ու ընելիքը կը մնայ Ձերդ Վեհափառութեան իր բարձր հաւանութիւնը վաւերացնել:

Մնամ բարձր Սրբազնութեանդ ամենախոնարհ ծառայ և որդի

Սերվիչեն

*ՀՀ ՆՊ ՊԿԱ, Մ. Ներսիսյանի անձնական ֆոնդ:*

14

## ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՄԱՍԻՍԻՑ»

«Մասիս», 25 դեկտեմբեր, 1880, N 2509

10 նոյեմբեր, 1879

Մուշ

Ազնիւ Մասիս

Տխուր սրտով և անմխիթար հոգւով դողդողուն ձեռքս կառնում տկար գրիչս ազատաբոյր Մասիացըդ հիւրընկալու էջերուն մէջ ի հրատարակ աշխարհի հանել այն ծայրահեղ ոճիրներն և խժդժութիւնները, որք տեղի ունեցան բարենորոգմանց գործադրութեան օրերուն մէջ, այս սրտաճմլիկ համբաւ մ'է, զոր կսփռեմ ամեն հայ ազգասէր սրրտերու:

Տարոնոյ խաւար հորիզոնի տակ ճնշուած հայերուն՝ հանկարծ աւետիք հասաւ թէ անգղիական բարեխնամ կառավարութեան վսեմ. Հիւպատոս, պ. Էթուարտ Քլեյթն Մուշ պիտի գայ ամէն անկարգութեանց առաջն առնելու, և հիւանդ հայուն սպեղանի մը մատուցանելու: Հաւատաց վշտա-

ցեալ ժողովուրդը, և բարեկարգութեան գործադրութիւնն իրականութիւն առաւ հոս:

Յուլիսի 19-ին քաղաքս հասաւ վսեմ. Հիւպատոսը, Հայք եռանդագին սրտիւ և լիայոյս համակրանօք նմանը չտեսնուած ընդունելութիւն մը ըրին: Բայց տես Գողթնի զաւակ. միթէ բարբարոսութիւնն անտարբեր կը կենա՞յ սորա ազատաբեր գալստեան և Հայոց այս փառաւոր ընդունելութեանը: Նա Հայոց առաջնորդարանի Մելքոն անուն հայ սուրհանդակը կը մորթէ բանաւոր զոհ նուիրելով Անգղիոյ մարդասէր կառավարութեան և նորա վսեմ. հիւպատոսին. Հայք նորա ուշադրութիւնն կը հրաւիրեն այս վայրագութեան վրայ և նա քմծիծաղով մը կպատասխանէ...: Ահա Հիւպատոսի ըրած բարւոքումը:

Մինչդեռ Մելքոնի արիւնը չէր չորցած այն կանաչազարդ մարգագետնին վրայ, և նոյն պահուն (հոկտեմբեր 28) յորում կայսերական քոմիսէր վսեմ. Եւսուֆ փաշա և Աղաբէգեան Սարգիս էֆենտի Մուշ կը մտնեն բարենորոգումներ ի գործ դնելու, ժողովրդին նոր և սրտաճմլիկ համբաւներ ևս կը հասնին: Բարբարոսութիւնն իր շահատակութիւններն կրկնապատկելով երկու հայ ի Ջուխուր, մէկն ի Պուլանըխ և երեք ալ ի Վարդոյ սպաննելով արեան գերեզմանին մէջ կը թաղէ զանոնք, նոցա ստացուածքն ալ աւարի առնելով հանդերձ:

Վարդոյ նահանգի սպանեալ հայերէն երկուքին մարմինները պատառպատառ ըրած և միւսին ալ գլուխը կտրելով գեսերէն ծառէն կախած են յահ և ի սարսափ աշխարհի, ծայրայեղ անգտութիւն. կարծես դժբաղտ հայն ծնած է ընդհանուր աշխարհին աղէտից և թշուառութեանց տեսարան և թատր մը ներկայացնելու: Ո՞ւր է ուրեմն բարէկարգութիւնն, ինչու չգործադրեցին բարենորոգման պաշտօնայք: Հայն օտարէն կսպասէ իր փրկութիւնն, բայց տեսնեմք պիտի գտնէ՞: Քոմիսէր փաշաներն առանց բնաւ արդիւնք մը ցոյց տալու շաբաթ մը հոս կենալէն ետքը, նոյեմբ. 6-ին Վան մեկնեցան, բարեկարգութեան գործադրութիւնն հոն սկսելու: Ասոնց մեկնելու օրը քաղաքէս կէս ժամ հեռաւորութեամբ Գառնին ըսուած գիւղին մէջ հայ մը մահմեդական մը չարաչար վիրաւորելով այսօր մահուան անկողնոյն կը ծառայէ: Վերջապէս լոկ ցոյցեր և ժողովուրդը խաբելու հնարեալ միջոցներ են: Աշխարհը իր շահն կը մտածէ և մենք տակաւին անխելք ենք: Ի՞նչ կը կարծեն հայերը. միթէ լոկ լալով խօսքով սեթևեթի ալ բառերով պիտի ազատուի մեր հայրենիքն: Չգիտեմ հայն դեռ համոզուած չէ, մինչև որ սէր միութիւն, յարատև աշխատութիւն և փութաջանութիւն չունենամք, անկարելի է մեր վիճակին բարուոքումը: Բան չունիս պօռա կանչէ հայուն թէ անգգայ ընթացքըդ ոճիր մէ, որով որդիդ և ապագայդ ձեռքովդ կը մորթես: Ըմբռնեցի՞ք այս ճշմարտութիւնն, ոչ երբէք, վասն զի հայն դարձեալ



անարգիր. հայուն յուսոյ ճրագ վանքերը յղփութեան մէջ. գաւառները շահախնդրութեամբ մէկզմէկէ բզքտիլ կը ջանան, պատրիարքարանը պատերազմի վայր դարձած է և վանահօր Առաջնորդի ու քարոզչի խնդրով կը զբաղուի: Պէտք է քիչ մ'ալ իբրև դրական մարդ ապրինք, պէտք է անկանոն զեղխ և ազգատեաց անձինք պատժուին և պաշտօնէ զրկուին, ազգասէրք վարձատրուին և քաջալերուին: Բայց քանի որ այս ամէն անկարգութիւնք կան և կը կենան, հայն դարձեալ իր նախկին կիսդեմեռ և անմխիթար ընթացքն շարունակելով դաստիարակութեան պարտաւորիչ միջոց ի գործ չդներ. արդարև խիստ և խիստ տխուր է հայուն ապագայն:

Հայրենասէր խմբագիր, ներկայս հայրենասերիդ յղելով խնդրեմք Բ. Դրան և Պատրիարքարանի ուշադրութիւնը հրաւիրէք այս վայրագութեանց առաջքն առնելու:

15

## ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՄԱՍԻՍԻՑ»
## «Մասիս», 26 դեկտեմբեր, 1880, N 2510

### Քիւրդ և Քիւրդստան

Քրդական ապստամբութիւններն և զանոնք զսպելու համար ի գործ դրուած միջոցներն երկար ժամանակէ ի վեր զարմանալի կատակերգութիւն մ'եղած են, որ իրօք շատ պիտի զբօսցնէ զմեզ եթէ գործին ներքև Հայոցս վնաս չկենար: Քիւրտ տերեպէյի մը կամ Շէյխ, իր սովորական չարագործութիւնները բաւական չհամարելով, և աւելի (կը նկատէ) մեծ անուն վաստակել ուզելով, ինք զինք կը նկատէ փառաց ասպարեզի մը մէջ, որոյ սահմաններն արդէն իր նախորդները գծած են. կապստամբի ուղղակի տէրութեան դէմ, և այս բացառիկ դերին առիթ բռնելով, աւելի համարձակ կը քանդէ, կ'աւերէ, կը զարնէ, կը կողոպտէ և կը կեղեքէ տեղացի խեղճ ժողովուրդը: Վրան զօրք կը ղրկուի: Թուրք զօրականք քրտաց երեսը նայելով կը խնդան, քիչ մը ժամանակ յաջ և յահեակ շարժումներ կընեն, և երբ որ կատակերգութեան վերջանալու ժամը կը հասնի, հռչակաւոր ապստամբապետն յանկարծ ամենահաւատարիմ հպատակ կը լինի, ընծաներ կընդունի, և դարձեալ իր լեռները կը քաշուի: Եւ ոմանք կը փորձուին հաւատալ թէ այս ալ մասնաւոր եղանակ մ'է քրտաց մօտը բնակող քրիստոնեայները վերջնականապէս յուսահատեցնելու:

Շէյխ Ուպէյտուլլահ, որոյ խօսքը կ'ընէ աստ Թայմզի թղթակիցն, իր նախորդաց ընթացքին հետևեցաւ և ամէն չարագործութիւնքն իր քով մնալէ յետոյ, վեհ. սուլթանէն պատուանշան ըստացաւ, և այժմ կըսուի թէ Կ. Պոլիս պիտի գայ իր յարգանքը մատուցանելու Ն. Կ. վեհափառութեան:

Յնական է ուրեմն հարցնել թէ շեյխ Ուպէյտուլլահի օրինակն ուրիշ բազմաթիւ փառասէր քիւրտ տերէպէյիներու ալ քաջալեր մը չպիտի՞ լինի, և երբ կառավարութիւնը բաւական հեռատես է այսչափ պարզ հետևութիւններ նախատեսելու համար, միթէ՞ այս ամէն կատակերգութիւններէ վեր, կամ այս ամեն ապստամբութեանց ներքև գաղտնի դիտումներ չկա՞ն, որ պետք է անհոգ Հայոցս աչերը բանան...

Նոյնպէս, Թրոթթըր հազարապէտն անցեալ ամառ կը ծանուցանէր իւր տեղեկագրաց մէջ թէ Տերվիշ փաշան (այժմ արքունեաց միւշիր և ընդհ. սպայակոյտին նախագահ) երեսուն վաշտէ աւելի զօրքով պաշարած է Տերսիմն, և ամէն յարաբերութիւն արգելած է Տերսիմի երկրին և շրջակայից միջև: Անգղիացի հիւպատոսն, ինքն ևս զօրական մը, դիւրին գործ մը կը համարէր Տերսիմի ապստամբաց նուաճումը, բայց ժամանակ եկած էր վարագոյրը ձգելու. ուստի քանի մը շաբաթ յետոյ Տերվիշ փաշան, որոյ վրան եղած զրոյցներն յայտնի են, մայրաքաղաքս կոչուեցաւ վարձատրութիւն ստանալու, Տերսիմն նոյն վիճակի մէջ թողուեցաւ. երկու կողմերն ալ գոհ եղան. վա՜յ երրորդին...:

Թայմզի թղթակիցը կըսէր նաև թէ քրտաց գտնուած լեռներն օսմանեան զօրաց արգելք մ'են ապստամբներն և չարագործները պատժելու: Զանց ընելով այս միամտական խօսքին ուրիշ պատասխաններն, աստ բաւ կը համարեմք սա անուրանալի իրողութիւնը միայն յիշել թէ այդ լեռները քրտաց բնել տուողը մեծ մասամբ օսմանեան նախարարաց ոմանց աշխարհավարութիւնն էր: Հարաւէն Հայաստանի մէջ քիւրտերէ պատուար մ'երազեցին նախարարք ոմանք, և Վանայ ծովուն արևելեան եզրէն դէպի պարսկական և ռուսական սահմանագլուխները տարածուող և արևմտեան ծովեզրէն դեպի Տերսիմ տարածուող լերանց վրայ դիտմամբ քիւրտ բնակիչ հաստատել տուին, այլ և այլ մեքենայութեամբք այդ լեռներու հայ բնակիչները դէպի դաշտերը մղելէ ետև: Այսպէս պատուար մը շինուեցաւ, ոչ թէ սակայն տէրութեան օտար թշնամեաց դէմ այլ տեղական հանդարտ ժողովրդոց բարգաւաճման դէմ:

Մ. Խ.

## 16

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍԻՑ»

### «Մասիս», 14 սեպտեմբեր, 1882, N 3285

Առաւել դառն վիճակ մը ունին մեր ազգակիցք, որ ի Խիզան: Այս գաւառը վերջին օրերս գայմագամութեան վերածուեցաւ, զի առաջ մի մասն էր



Ծիրւանի գաւառին: Ոչ մի տեղ չեն գործուեր այնչափ հարստահարութիւնք, որչափ այդ դժբախտ գաւառին մէջը: Ալկանցի, Տիտիրցի և ուրիշ վրանաբնակ ցեղեր ամեն տարի կգրաւեն նոցա լերանց կատարներն, ամեն տեսակ չարիքներ հասցունելով մեր խեղճ ազգակցաց, որք առանց այդու էլ հասած են տնտեսական ամենավատթար դրութեան: Հարկահաններու և միւլթեզիմներու չարիքներն արդէն աննկարագրելի են: Միայն իմ ստացած տեղեկութեանց համաձայն գարնանէ ի վեր 1500 ոչխար յափշտակուած է Սպայկերտէն նոյնպէս Պախուր և Հիւկիւրձի գիւղերուն ամբողջ ոչխարները. առաւել բարեբախտ գտնուեցան Հասղուի գիւղացիք, որք զանազան խալաթներով (նուեր) յափշտակողին ոտքը գնացին և յաջողեցան իրենց յափշտակած ոչխարաց մի մասը ետ դարձունել: Ի՞նչ ընեն խեղճերը, ոչ միայն չլսուիր իրենց ձայն, եթէ տեղական կառավարութեան բողոքեն, այլ իրենց քիւրտ դրացեաց մեծագոյն վրէժխնդրութիւնը պիտի հրաւիրեն իրենց վրայ: Ազգային իշխանութիւնը ներկայացուցիչ մը չունի այդ գաւառին մէջը պաշտպանելու համար հայոց իրաւունքները: Աղթամարի կաթողիկոսը միայն իւր պտղիները հաւաքելու համար վարդապետ մը դրած է այն տեղ, որ «առաջնորդ Խիզան գաւառի» կստորագրէ, թէև քիւրտերն այնչափ հարստահարող չեն, որչափ այդ անխիղճ վարդապետն, որ զերթ իւր «վեհափառ Տէրն» գիտէ տզրուկի պէս ծծել հայ գիւղացոց արդեն ցամաքած արիւնը:

Այս անխնամ գաւառը թշուառության ամենաբարձր գագաթին հասուցանելու համար բնական աղետներ ալ գնացած են միանալու քիւրտաց բերած աղետներուն հետ: Մայիսի 15-ին սաստիկ ձիւն տեղալով սառեցուցած էր արդէն այդ գաւառի հնձոց մեծագոյն մասն, երբ հունիս 29-ին սաստիկ կարկուտ տեղալով հեղեղ մը գոյացոյց և ապականեց հնձոց մնացած մասն ալ, այնպէս որ Խիզանի գրեթէ ամբողջ բնակիչք մինչև աշնան վերջն ալ բաւական պաշար չունին:

Այսպիսի նիւթական և բարոյական խղճալի վիճակ մը հարկաւ չէր կրնար անտես մնալ մարդորսորդաց սրատես աչքերէն, որք փութացին հանգամանքներէն օգուտ քաղել, դպրոց մը բանալով Խիզանի Տի անուն գիւղին մէջը, հայ ժողովուրդն ամէն բանի հետ իւր միակ եկեղեցիէն ալ զրկելու համար թէև Խիզանու Ուսումնասիրաց Պատ. ընկերութեան, որ նախախնամութիւն մը եղած է այդ գաւառին համար, ձեռք առած ճարտար միջոցներով, այդ վտանգի առաջքն առնեցաւ փակուելու դատապարտելով յիշատակեալ վարժարանն:

17

## ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՄԱՍԻՍԻՑ»
«Մասիս», 6 նոյեմբեր, 1882, N 3331

Ճիչ մ'ալ կլսուի Ծատախէն: Ամսոյս սկիզբները Միրանցւոց աշիրեթի գլխաւորն 100-200 մարդիկներով պաշարեց յանկարծ Ծատախի Սակ և Սոկանց անուն երկու գիւղերը, զորս սաստիկ կրակի ենթարկելով թալանեց ամբողջապէս ոչխար տաւարներէն սկսեալ ցյետին կահ-կարասին: Նաև Սակ գիւղին մէջ սպաննեց երկու մարդիկ և խեղեց Արտամետ գիւղացի հայու մը թևն, որ նոյն օր հիւր էր յիշեալ գիւղին մէջ և մեռաւ 3 օրէն վերջ: Ի՞նչ զարմանք եթէ նմանօրինակ ոճիրներ կգործուին ի Ծատախ կամ յայլուր, երբ կրացի Մէհմէտի նման հռչակաւոր չարագործի մը ոճիրներն անպատիժ մնացած են, երբ վսեմ. կուսակալը մինչև իսկ զայն քանիցս իրեն սեղանակից կընէ և ապա առանց պատժի կը թողու որ նա հանդարտութեամբ բնակի իր տան մէջ[1]: Ահա երկու հայաբնակ գիւղերը ալ որք տնտեսապէս կկործանեն, խեղճերը կորուսին իրենց ամբողջ հարստութիւնը, ի՞նչ կըսեմ, իրենց օրապահիկն, և այժմ անօթի և մերկ (զի իրենց միքանիսներն ալ մերկացուցած են) տեղւոյս կառաւարութեան դիմած են, զօր եթէ չկարենայ բան մը ընել խեղճերուն ուրիշ ճար չմնար ընել, եթէ ոչ բռնել այն երկայն ճամբան, որ Ծատախու լեռներէն կը սկսի և կը յանգի ի Սիպիր: Գաղթել և թող իզուր հարցունէ մեր հայրենակից պ. Ա. Տէր-Սարգսեանց, «Ծահէնն ո՞ւր, Սիպիրն ո՞ւր»: Ահա երկու գիւղեր ալ որք կորսուեցան ամեն կերպով, նիւթապէս և բարոյապէս:

Ամսոյս սկիզբները 400 ոչխար ալ յափշտակեցին Ծիտան գաւառի Ասեղ անուն գիւղէն և տարօրինակ բան, ճիշտ այն օր, երբ Ախթամարի կաթողիկոսը տակաւին երկու ժամ առաջ յիշեալ գիւղն ելած էր իր պտղիկները հաւաքելու, այսինքն անուղղակի կերպիւ հափշտակելու համար: Խեղճ ժողովուրդ, որոյ արիւնը կծծեն չարագործք ոմանք մէկ կողմէն, վաշխառուաց և կրօնաւորաց դասն ալ միւս կողմէն, և մի՞թէ հրաշք չէ եթէ տակաւին կապրին և կըսեն թէ հրաշից դարն անցած է:

---

1 Ո՛չ միայն մեր Վանայ թղթակիցք, այլ Վանէն Կ. Պոլսոյ ուրիշ լրագրաց նամակ գրող ամէն թղթակիցք գանգատած են այս կրացի Մէհմէտ անուն աւազակապետի չարագործութեանց դէմ, զոր կ'ըսուէր կայսերական զօրքերը կհալածեն: Եթէ իրաւ է, որ Վանայ տեղական կառաւարութենէն նպաստաւոր ընդունելութիւն կգտնէ, շատ ցաւալի է:

Ծանօթ խմբագրութ.



18

## ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՄԱՍԻՍԻՑ»
«Մասիս», 21 ապրիլ, 1883, N 3460

Կարնոյ բանտարգելոց դատաստանը.

Կարինէն ապրիլ իննից քսան և մէկ թուով հետևեալը կը գրեն:

Կարծեցեալ յեղափոխութեան համար բանտարգելոց խնդիրն այս շաբթու այնպիսի ծանր վիճակ մը ստացաւ որ մեք ամենքս ստիպուած կարևորութիւն տուինք արդեն անցեալ շաբթուընէ սկսեալ բանտարկեալք իրենց հարցաքննութիւններն կատարելագործելու համար մեր քաղաքին նախադատ ատենի պատժական մասին առջև կը հրաւիրուէին կարգաւ, որպէսզի արդարութեան օրինաց համաձայն դատերնին տեսնուէր: Ամսոյս 5-ին լուր ելաւ թէ ընդհանուր դատախազն իր դատագիրն (իտտաանամէ) տուած էր Հէյէթը իթհամիյէին (ամբաստանութեան ատեանին) և տակաւին Հէյէթը իթհամիյէն թուղթերը կարդալուն զբաղած միջոցին, գաւառիս ընդհանուր քննիչն հրապարակային դատաստանի համար մեծ դահլիճն շինել և պատրաստել տալով կզբաղէր, առանց հաշուելու թէ թերևս ամբաստանութեան ատեանն անպարտ պիտի վճռէր բանտարկեալներն, յորմէ դիւրին է եզրակացընել թէ արդեն ծանօթ էր արդարութեան քննիչին ամբաստանութեան ատենի վճիռն: Ինչ որ է, հինգ հարիւր երես հարցաքննութիւն մէկ օրուան մէջ կարդալով ամբաստանութեան ատեանն իր վճիռն կ'արձակէր մի ընդարձակ մազպաթայով, որոյ իմաստն այս է.

Անհատական յանցանօք ամբաստանեալ չորս հայ յանցաւորներէ մին թուղթ մը կը ներկայացնէ կառաւարութեան յորմէ կը հասկցուի թէ ինք զինուոր մ'է տասնապետի իշխանութեան ներքև. թէ ինք չճանչէր իր տասնապետն, բայց իր ընկերներն կը ճանչնայ և կ'անուանէ. թէ անոնցմէ ոմանք կանչուելով երկար քննութիւններէ յետոյ կը հաստատուի թէ, տէրութեան գաւառներէն մին տէրութեան ամբողջութենէն զատելու նպատակաւ ընկերութիւն մը կազմելու համար՝ Բարձրագոյն ժողով (Մէճլիսը ալի) մը կազմած են հինգ անձինք որոյ երկուքն բացակայ են այժմ, և թղթերը ցրուած են զինուոր գրուելուն համար երեսուն և վեց ամբաստանեալներ, և Հայկական թագաւորութեան վերականգնման համար թուղթ ընդունած երդում տուած և յանձնառութիւն ստորագրած լինելով, այդ թուղթերը վիմագրութեամբ տպելու համար ընկեր մը գտած են վիմագիր Միքայէլ անուն, և անոր հետ աշխատած են ուրիշ երկու անձինք ևս. այս բարձրագոյն ժողովոյ անդամներէն մին նախ Հայաստանի գաւառները շրջելով Վան գնացած է,

Խրիմեանի դիմած և յայտարարած է որ բարենորոգմանց խնդրոյն մի նոր զարկ տալու համար ցոյցի մը պէտք կ'զգայ, և առանց արիւնյեղութեան ցոյց մը ընելու միջոցներն իմաց տուած է: Բայց Խրիմեան պահպանողական խորհուրդներ տուած ըլլալուն համար, ստիպուած է Ռուսիա գնալ և անտի մի նիհիլիստ (ոչնչական) գտած և բերած է իրենց ընկերութիւնն կազմաւորելու համար, այդ նիհիլիսթ տեսնելով որ երդմնագրերն անուանց վրայ շինուած են, յարմար չը դատելով թիւերու վերածել տուեր է, և խել մը օգնութիւններէ յետոյ խորհուրդ տուեր է որ թուղթերն հաւաքուին բայց չեն յաջողած մեծ մասն հաւաքելուն. այս նիհիլիսթի երթալէն յետոյ Կարնոյ առաջնորդ Օրմանեանի դիմած են եղեր. այն ևս խել մը խօսքեր ըսած է (որք կը պակսին ամբաստանագրին մէջ), և մինչ այս մինչ այն այս խնդիրն երևան ելած է: Գտնուած է բացի երդմնագրէն թուղթ մը ևս յորում Հայկազեան, Արշակունեաց, Բագրատունեան և Ռուբինեան հայ իշխանութեանց պաշտօնական զինանշաններէն ի զատ, երկու զինուորի պատկեր տեսնուած են զինեալ և բերդի մը վրայ յարձակման վիճակի մէջ: Նշանակեալ քառասուն և երեք անձերէն ի զատ եօթն անձինք ևս թագրիր կամ խոստովանութիւն չունին թէև, բայց ազգին ազատութեանը փափագողներէն են եղեր. մնացեալներէն ոմանք՝ այս իրողութիւնն իմացուելեն յետոյ՝ վնասակար թղթեր ոչնչացուցած լինելու յանցանօք և մին ևս վիմագրութեան քարը պահած լինելու յանցանօք պատժական օրինաց 58-րդ յօդուածին ներքեւ և յաւելեալ առաջին մասին համաձայն, մահուան պատժոյ կամ մշտենջենական դատապարտութեան արժանի համարուած են:

Այս ամբաստանագիրն ապրիլ 6-ի գիշերն ցրուեցաւ բանտարգելոց պայմանաւ որ յաջորդ օրն 7 ապրիլ ժամը 5-ին հրապարակային դատաստանն սկսուէր: Ապրիլ 7-ին ժամ 6 1/2 ատեանը բացուեցաւ և հինգ հարիւրի չափ հայ և թուրք ունկնդրաց ներկայութեամբ: Ամբաստանեալք մեծագոյն մասամբ մերկ բոբիկ և գլխաբաց, ներս բերուելով նստան իրենց որոշեալ նստարաններուն վրայ և դատարանն սկսաւ նախնական գործողութիւնները կատարել, յորմէ յետոյ ամբաստանեալներէն փոխանորդներ ուզուեցան, և ամբաստանեալք փոխանորդ չունենալով դատարանն երեք փաստաբանաց յանձնեց փոխանորդութիւնը. քսան և հինգ ծանրագոյն յանցանօք ամբաստանեալք յանձնուեցան փաստաբան Համամճեան մեծապատիւ Յակոբ էֆենտիի, տասն և հինգ ամբաստանեալք փաստաբան Թուղլաճեան Տիգրան էֆենտիի և տասն և եօթ ամբաստանեալք Օսման Ֆայիտ էֆենտիի: Մեծ գոհութեան և շնորհակալեաց արժանի էր յիշեալ մարդասէր և ազնիւ փաստաբանաց անմիջական համաձայնութիւնն, որք միաբանութեամբ չդիմանալով բանտարգելոց խորին արգահատանաց արժանի վիճակին փութացին պահանջել դատարանէն հարցաքննութեանց թղթերն, զորս դատարանն պահ մը վարանմանէ յետոյ խոստացաւ յանձնել և այսօր իսկ



յանձնած է իրենց: Բայց որովհետև տեղական իշխանութեանց կողմանէ մի մեծ անապարում կայ այս դատաստանը փութով տեսնելու վերջացնելու և որովհետև ամէն հաւանականութիւն ակներև է թէ վերաքննութեան ատեանը պիտի անպատճառ հաստատէ ամբաստանութեան ատենի վճիռն, առ առաւելն փոքր ինչ թեթևացմամբ, ուստի օրէնսգիտաց կարծեօք լաւագոյն դատուած է մեֆսուխիյէթի խնդրագրով խնդիրը մայրաքաղաքիդ վճռաջինջ ատեանն հանել, և անտի օգնութիւն սպասել, այս ողորմելեաց համար, որ այսչափ սոսկալի պատժոց պիտի ենթարկին: Իրաց վիճակն այս է և ահա այս օրուան համար:

Հետզհետէ թէ ինչ կերպարանք պիտի ստանայ գործը, կը գրեմ Ձեզ:

19

## ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՄԱՍԻՍԻՑ»

«Մասիս», 26 ապրիլ, 1883, N 3464

Դատաստան Կարնոյ բանտարկեալ Հայոց

Դատագիր Ընդհ. դատախազին.

Ահաւասիկ թարգմանութիւնն այն իտտաանամէի կամ դատագրոյ, որով Կարնոյ ընդհանուր դատախազը բանտարկեալ Հայոց եղեռնադատ ատենին առջև դատուիլը կը պահանջէր:

Ի ստորև անուանեալ անձինք փորձ փորձած լինելով յեղափոխական ընկերութիւն մը կազմելու և ժողովրդեան մի մասը զէն ի ձեռին ապստամբութեան մղելու որպէսզի Կարնոյ նահանգն օսմանեան տիրապետութենէ կորզեն, հարցաքննիչ դատաւորի տեղեկագրին և ընդհանուր դատախազի պահանջման համեմատ նկատելով, որ բացատրուած շարժառիթք ճշմարտութեան համաձայն են, որոշուեցաւ ըստ օրէնի դատի ենթարկել ամբաստանեալներն ըստ տեղեկագրոյ ամբաստանիչ ատենին, որոշում, որ ապրիլ 6/16ին հաղորդուեցաւ բանտարկեալ ամբաստանելոց անձամբ փախածներուն ալ տուները:

Ամբաստանելոց խոստովանութեամբք և համիմաստ վկայութեամբք ապացուցուեցաւ թէ անոնցմէ հինգն իբր երկու տարի առաջ յեղափոխական գաղտնի ընկերութիւն մը կազմած են գերագոյն խորհուրդ անուամբ: Ահա անոնք խմբագրած են թուղթերը, զանոնք տպագրել տուած են և ամբաստանեալ անձանց բաշխել տուած, և մի քանի ամիս առաջ պաշտօն յանձնած են Նշկեան Կարապետի՝ այս յեղափոխական գրուածներով եր-

թալ ի Տփխիզ և հոն հանգանակութիւն բանալ, իրենց դիտմանց իրագործման հարկաւոր եղած գումարն հաւաքելու համար:

Ի Կարին հաստատեալ կոշկակար Ալեքսան կամբաստանուի թէ ամենայն եռանդեամբ ու գործունէութեամբ բարոյական և դրամական աջակցութիւն մը նուիրած է հինգ անդամէ բաղկացած վերոյիշեալ մասնախմբին (Քոմիտէ): Ալէքսան այս մասնախմբի հրամանաց և հրահանգաց համեմատ վարուած է, թէ գոգոհիչ թուղթեր ցրուելով հասարակութեան մէջ, և թէ համախոհներ գտնելով և անոնցմէ երդում առնելով: Ամբաստանելոց եօթն յանցաւոր են որովհետև նոյնչափ գործօն մասնակցութիւն մ'ունեցած են ապստամբական գրուածներ ցրուելով, համախոհներ հաւաքելու, անոնց երդում ընել տալու, ինչպէս նաև յեղափոխական զինուորներ գրելու մէջ: Ուրիշ երեսուն և վեց անհատներ, որոնց մին ռուսահպատակ, կամբաստանուին, որովհետև երդում տուած են և զինուոր գրուած են յեղափոխականաց կարգերուն մէջ պատերազմելու համար: Ուրիշ հինգ անձեր թէև յայտարարած են թէ յեղափոխականաց չեն վերաբերիր ամենևին ամբաստանելոց մատնութեան վրայ կամբաստանուին թէ ըսած են որ կընդունին մտնել յեղափոխական բանակին մէջ:

Հաստատուեցաւ նաև եղած քննութեամբք և ապստամբական գրուածոց և վիմագրական քարերու գտնուելովը թէ Մարուքէ անուան անձն, որ Կարնոյ առաջնորդ սրբազանին մարդն է, և Տիգրան ոմն ուզած են ապստամբական գրուածներն այրել ապացոյցներն անհետ ընելու համար, և միևնոյն ժամանակ Կարապետ անուն անձը գաղտնապէս իր տունն ընդունած է վիմագրական քարերն. ընթացք մը, որ կրնայ նկատուիլ իբրև յեղափոխականաց տրուած օգնութիւն մը:

Ցետևաբար վերոյիշեալ անձանց արարքները պատժական օրինաց 58-րդ յօդուածով նախատեսնուած ոճիրներ լինելով, յօդուած, զոր ամբողջացուցած են նոյն օրինագրքի առաջին գլխուն յաւելածական տրամադրութիւնք, և այս անձինք իրօք այս ոճիրներուն հեղինակները լինելով, անոնց հրապարակային դատաստանը պէտք է տեղի ունենայ, զոր պահանջելու համար ի գիր առնուած է ներկայ դատագիրս: Կայսերական ընդհանուր դատախազ Կարնոյ:

6/18 ապրիլ

1883



20

## ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

2 սեպտեմբեր, 1890

Նորին վեհափառութեան

Տ. Տ. Մակարայ սրբազնագոյն կաթուղիկոսի ամենայն Հայոց

Ամենախոնարհ խնդիր

Վեհափառ Տէր. անշուշտ յայտնի է Ձերդ վեհափառութեան այն աղետալի վիճակն, որին ենթարկուած է այսօր 500 տարի ստրկութեան լուծը կրող տանջահայ ժողովուրդը: Վերջին ժամանակ տեղի ունեցան դեպքերն – Կարնոյ տխուր եղելութիւնը, Կ. Պոլսոյ ճգնաժամի հասած խառնակութիւնը, որ առաջ բերին վատթարագոյն հետևանքներ մեր բնիկ հայրենեաց մէջ. դեռ տակաւին ասոնք վտանգներու փոքրիկներն են, որ անցած ու այսօր ծանր վտանգը կսպառնայ հասնիլ իր գագաթնակետին:

Ոչ մարդկային լեզուն և ոչ նորա գրիչը չեն կարող նկարագրել այն բազմատեսակ ծանր դժբախտութիւնք որ մենք կրած ենք և կկրենք ցայս վայր:

Մեր մայրենի հողի վերայ մեր կեանքը խաղալիք է դարձել մեր իշխողներու ձեռքին, մեր գոյքը անապահով դրութեանց մատնուած է, մեր ընտանիքը ամօթաբեր բռնութեանց, մեր զաւակներն զոհ են դարձած կոպիտ ոյժի, մեր դառն քրտինքով վաստակած հացը մեզնից կորզելով մեր զաւակներն սովամահ կոտորուելու ենթարկուած են, մեր եկեղեցիները կորբապղծուին ու հրոյ ճարագ կլինին մեր սրբութիւնները կանարգուին, մեր հաւատքը կը հայհոյուի ու հոգեւորականութիւնը ենթարկուած է հինգերրորդ դարում տեղի ունեցած բոլոր տառապանաց:

Վեհափառ Տէր. Համբերութեան վերջին գագաթնակետին հասած ու մեր արեան վերջին կաթիլը քամուած լինելով ուժէ զրկուած ենք, ոչ ոքից այլ եւս գթութեան եւ օգնութեան յոյս անգամ չունինք ու մենք զմեզ օրհասական վերջին ճգնաժամին մէջ գտած եմք այս վայրկենիս:

Այսօր մեր առաջ բացուած կայ երկու ճանապարհ,– տակաւ առ տակաւ մահանալ կամ դիմադրելով մահանալ: Առաջինը արդէն դարերէ ի վեր կը շարունակուի, իսկ վերջինը կատարելու համար նիւթական ոյժ չունիմք, պիտի պարտաւորինք գոնէ բրով կամ գաւազանով դիմադրել ու մեռնել: Եւ ահա այդ կորստաբեր յետեւանքներու առաջն առնելու համար, Վեհափառ Տէր, կդիմենք Ձեզ, որ ընդհանուրիս Հայրն, Տէրն ու պաշտպանն էք, կա-

ղերսեմք փակել մեր առաջ այդ երկու կորստաբեր ճանապարհներն եւ բանալ մեզ համար խաղաղութեան ու կենաց ճանապարհ:

Հայր. միայն Դուք էք, որ կարող էք գտնել այդ ճանապարհը. կաղերսեմք Ս. Լուսաւորչի բարձրագոյն գահէն տարածեցէք Ձերդ վեհափառութեան օգնութեան ձեռքը յանուն Ձեր դժբաղդ որդւոյ, դիմեցէք եւրոպական բարեխնամ տէրութիւններուն, հայցեցէք մեզ համար օգնութիւն. Յիշեցէք այն հզօր տէրութիւններուն իւրեանց հանդիսաւոր խոստումը Բերլինի դաշնագրութեան մէջ. օգնութիւն խնդրեցէք Ռուսական յաղթող եւ հզօր բարեբար կայսերից, որ միշտ պաշտպան գտնուած է քրիստոնեայ ճնշեալ ազգերուն: Դիմեցէք Արեւելեան խնդրոյ կարգադրութեանց ցանկացող խաղաղասէր բրիտանական կառավարութեանը, յիշեցէք Կիպրոսի դաշնագրութիւնը, որ ի միջի այլոց պարտաւորած է թեթեւացնել ճնշուած տաճկահայերու վիճակը:

Վեհափառ Տէր, մենք բոլոր տաճկահայերս ծնկաչոք աղերսելով համբուրում ենք Ձերդ Վեհ Հայրութեան սուրբ աջը և խնդրում ենք ի կատար ածելու մեր այս խնդիրը. գթալով Ձեր դժբախտ որդւոց վերայ, մինչդեռ չեն զրկուել իւրեանց վերջին շնչից:

Անհամբերութեամբ սպասում ենք Ձերդ Վեհափառութեան օգնութեանը խնամքին և Ձերդ Հայրութեան բարի յոյսերին:

Տաճկահայք. 2/IX 1890

Յարութիւն քահանայ Տէր-Մինասեան.

Դանիէլ քահանայ Տէր-Սիմոնեան.

Զաքարայ քայանայ Մարտիրոսեան.

Յովանէս... Զարթանէան.

Կ. Պօլսեցի Արտաշէս Մ. Մկրտիչեան.

Մշեցի Յոհաննէս Յարութունեանց.

Վանցի հաճի Համպար Անանեանց.

Կարինցի Միսակ Ավակօվ.

Ալաշկերտ Կարաքլիսէն՝ Վարդան մահտեսի Մկրտչեան.

Ալաշկերտցի՝ Գրիգոր Յարութիւնեան.

Կ. Պօլսեցի՝ Արամ Մնակեան.

Ակնցի՝ Յակոբ Աղաբեկեան.

Լճեցի՝ Վահան Գ. Կալպէտեան.

Մշեցի՝ Լէզան Գասպարեան.

Տիկրանայգէտցի՝ Խազար Սահակեան.

Ալաշկերտցի՝ Մէլիք Եազիչիեանց.



Մշեցի՝ Յովաննէս Յարութունեան Տէր-Մկրտիչեանց.

Մշեցի՝ կրոնաւոր քահանայ Տէր-Յակոբեանց

Մշեցի՝ Սարգիս Ալամշարեան.

Մշեցի՝ Մկրտիչ Պատրիկեանց.

Բիթլիզցի՝ Յովսէփ Սիսակեան:

*Մատենադարան, Կաթ. դիվան*

*թղթ. 236. վավ. 48:*

## 21

## ՄԱՐԶՎԱՆԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՄՍՈՒՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՆԱԼԵՏՈՎԻՆ

9 Նոյեմբեր, 1895

Մարզվան

Վսեմափայլ Տեարք

Ժամանակէ մ'ի վեր թուրք կառավարութիւնը իր երկրէն քրիստոնեայ տարրը բնաջինջ ընելու գաղտնի քաղաքականութիւն ի գործ դնելու համար զարմանալի և տարօրինակ ընթացքի մը կը հետևէր որոյ ազդեցութիւնը տեսնուեցաւ նաև թուրք խուժանին վրայ և հետևաբար ամենաչնչին պատճառներ կ'որոնէին հայոց հետ սին վէճեր յարուցանելով կռւոյ մը տեղի տալու, հայ խանութպաններէ վար գնով կամ ապառիկ ապրանք կը պահանջէին և անլուր նախատական խօսքերով կը գրգռէին զհայս, մինչև իսկ մի քանի հայեր յանիրաւի շուկաներու և հրապարակներու մէջ գանակոծուեցան և երբ աղերսագրով կառավարութեան դիմում կըլլար քննութիւն մ'իսկ չէր կատարուեր. համարձակ շուկաներու մէջ հայերը կողոպտելու և կոտրելու խօսքեր կընէին: Բայց կառավարութիւնը այս բոլոր անցած դարձածին անտարբեր աչօք նայելով գոզցես քաջալեր կը կարդար թուրք խուժանին. սոյնօրինակ անհաճոյ դէպքեր աւելի յաճախակի տեղի կունենային բարեկարգութեան հրովարտակը ստորագրուելէ յետոյ, իսկ մենք հայերս Ազգ. պատրիարքարանի կողմանէ եկած հրահանգներու համաձայն կատարեալ խոհեմութիւն և խոնարհութիւն ցոյց կուտայինք հանդէպ այս բոլոր նախատանաց և սպառնալեաց, ի վերայ այսր ամենայնի տեղւոյս գայիմմագամը քաղաքիս նշանաւոր հայ անձնաւորութիւնները ի ներկայութիւն իւր կոչելով սպառնալեօք կը հրամայէ ոնէ անտեղի դէպքի տեղի չ'տալ. հակառակ պարագային կը սպառնայ Սասնոյ հայոց ջարդին նման կոտորել զհայս, բոլորովին արգիլուեցաւ մեզ և ոչ իսկ զմելին մը կրել մեր վրայ, մինչդեռ

թուրք ժողովուրդը և կառավարական կարևոր պաշտօնեայք շուկաներու մէջ համարձակ զէնք ալ կը շրջէին: Հայ թաղերու գիշերապահները ասկէց առաջ հայերէ բաղկացեալ էին, իսկ կառավարութիւնը ամիս մ'առաջ իւրաքանչիւր թաղի մէջ մէկ թուրք գիշերապահ յաւելցուց և 15 օր առաջ ալ բոլոր հայ գիշերապահները արգիլելով մարդասպան և գող թուրքերու յանձնեց հայոց թաղին պահպանութիւնը, խստիւ արգելք դրուեցաւ հայոց երեկոյեան 12-էն վերջ տուներէ դուրս լինել, ընդհակառակը թուրքերը մինչև առաւօտ համարձակ կը շրջէին, և սենեակներու ու սրճարաններու մէջ համախմբումներ կընէին: Այսպէս խստութիւնները հետզհետէ սաստկացան երբ տեղական լրագրաց մէջ կատարուելիք բարեկարգութեանց նկատմամբ մի քանի կցկտուր հատուածներ տեսնուեցան: Անցեալ ուրբաթ օր հոկ. 27/8 նոյ. բազմաթիւ թուրքեր Փաշա ճամիսի ըսուած մզկիթը հաւաքուելով կը պատրաստուէին հայոց վրայ յարձակում ընելու. բայց գայիմմագամը փութով կը հասնի և գաղտնի խօսակցութեամբ համոզելով կը յաջողի ցրուել սոյն համախումբը (սոյն միջոցին տակաւին զօրաց բաշխելու զէնքը և ռազմամթերքները քաղաքս հասած չէին):

Բոլոր այս արտակարգ շարժումներէ սկսանք կասկածիլ քանի որ առաջի աչաց ունէինք Կ. Պոլսոյ, Տրապիզոնի և այլ քաղաքաց թուրք խուժանին վայրագ արարքները, որոյ վասն 3 նոյեմբեր հիգշաբթի օր մեր Աւագ քահանայ Տ. Գաբրիէլ Հայրը գայիմմագամին ղրկեցինք բացատրութիւն պահանջել եղած տարաձայնութեանց նկատմամբ: Սա կատարելապէս կը վստահեցնէ զքահանան և նոյնիսկ կը խոստանայ խստիւ պատժել հայոց զրկանք ընելու համարձակողները. նոյն օր գայիմմագամին գնաց նաև Պորտ. ընկերութեան միսիօնարներէն պատ. Թրէյսի որոյ նոյնպէս անդորրութիւնը և զինուորական զօրութիւնը կատարեալ ըլլալուն ապահովութիւն կուտայ: Հայեր, գայիմմագամին տուած այս վստահութիւններէն և քաղաքիս մէջ այս օրերս համախմբեալ 1000էն աւելի զօրաց ներկայութենէն որք ըստ բանի կառավարութեան քաղաքիս պահպանութեան համար ժողոված էին. բոլորովին անպատրաստ մեր գործերով կզբաղէինք:

1895 նոյեմբեր 3/15 ուրբաթը քաղաքիս համար սև և տխրայիշատակ օր մ'եղաւ. այդ օր Թուրքիոյ պատմութիւնը իր արիւնաներկ էջերուն մէջ փառապանծ հատուած մ'ևս յաւելցուց սև տառերով ի սոսկումն և ի զայրոյթ հանուր քաղաքակիրթ աշխարհի, գամ մ'ևս կրկնուեցաւ թուրք արիւնարբու խուժանին վայրագ և խուժդուժ բարբարոսական արարքներին: Թուրքիա անգամ մի ևս իր արեամբ ներկեալ գահն ողողեց բազմաթիւ քրիստոնէից անմեղ արեամբ: Ո՜հ, երանի թէ այս վերջին անգամը լինէր հայ ազգին կրած տառապանաց և մարտիրոսութեանց շարքը, և միանգամ ընդ միշտ



վերջ մի գտնէր հայոց խնդիրը. և մարդասէր Եւրոպիոյ Տէրութիւնք չունենային դժբախտութիւն լսելու սոյնօրինակ քստմնեցուցիչ արարքներ:

Այդ առաւօտ իւրաքանչիւր ոք ըստ սովորականի միամտաբար շուկայ երթալով իր խանութը կը բանայ և գործով կզբաղի, կէսօրէ առաջ ոստիկանապետ Թէֆիք և փօլիսը իրենց մտերիմ մի քանի հայոց խանութը երթալով գաղտնի կը խօսակցին, և նոքա ալ անմիջապէս յետոյ խանութնին փակելով կը մեկնին: Նոյնպէս գայիմմագամին աղջիկը իրեանց քով սպասաւորող հայ աղջկան կըսէ թէ այսօր հայերը պիտի ջարդուին, խանութպանք այս բաներէն կսկսին կասկածիլ, և մանաւանդ տեսնելով որ թուրքերը կէս օրուան աղօթքի մզկիթ գացած ատենին խանութնին ամրապէս կը փակեն (ամեն ժամանակ լոկ լաթէ վարագոյրով կը գոցէին), վաճառականները և մի քանի արհեստաւորք կը փութան խանութնին փակել տուն երթալ, այս միջոցին ոստիկանապետը և փօլիսը շուկայ լինելով բազմաց չեն թողուր իրեանց խանութները փակել, ըսելով որ խռովութեան տեղի՞ մի պիտի տաք. կէս օրուան աղօթքը հազիւ լրացած էր, թուրք հոծ խուժան մը սրերով, բրերով և տապարներով զինեալ, մզկիթներէն, զորքերը իրեանց պահականոցներէն և մերձակայ գիւղերէ քաղաքիս շուրջ համախմբեալ թուրք ամբոխ մը իրեանց թաքստարաններէն յանկարծ շուկայ կը թափին, և ահա՝ զինուորական փողահարութեան ձայն մը կը լսուի, և պատրաստ խուժանը ամենքը մեկանց կսկսին հանդիպած հայը ջարդել առանց խնայելու ծերին, երիտասարդին, մանկան, նոյն միջոցին կը ձեռնարկեն խանութներու փեղկերը կոտրելով մէջի ապրանքները ամբողջովին կողոպտել, կողոպտիչներու պահպանութեան համար զօրքեր դրուած էին, որք կ'օգնէին նոցա ապրանքները կառքերու և քրաստներու վրայ բեռցնելու, ամբողջ շուկային մէջ տաճկաց և յունաց խանութները զերծ մնացին սոյն կողոպուտէն (քաղաքիս մէջ միայն 5 հատ յունաց խանութ կայ և 30-ի չափ թրքաց, որք մրգավաճառութեամբ կզբաղին. բոլոր վաճառականք և արուէստաւորք հայերէ կը բաղկանան). կողոպուտը այն աստիճան սոսկալի է որ խանութներու մէջ արժէքաւոր բան մը մնացած չէ, նոյն իսկ կոշկակարներուն փայտեայ կաղապարները, հացագործներու փայտերը յափշտակած են, իսկ անկարևոր դատածնին կոտրած և փշրած են: Այդ օր տաճկաբնակ թաղերու մէջ բնակող հայոց տուները ևս կողոպտուած և միջի բնակիչները սրակոտոր եղած են. թէև հայաբնակ թաղերու վրա ալ յարձակման փորձեր ըրին, բայց հայոց ցոյց տուած յուսահատ ընդդիմութենէն չ'յաջողեցան քաղաքիս խորերը թափանցելու: Այս յափշտակութիւնները 'ի հեռուստ մեր տուներէն կը տեսնէինք մեր սրտերէն արիւն կը հոսէր և կզգայինք թէ քաղաքիս հայութիւնը նիւթապէս բոլորովին կոչնչանայ, բայց եղած կոտորածէն անտեղեակ գոլով անձի կորուստ չըլլալու համար խոհեմութիւն համարեցինք լռութիւն պահել: Ժամը 11-ին որ այլևս շուկային մէջ բան մը չէր

մնացած մեր անդորրութեան վերահսկող գայիմմագամը ոստիկաններով շրջապատեալ շուկայ կիջնէ, և առանց սոսկումի յօշոտեալ դիակներու վրայէն քալելով իր պարտականութիւնը կատարող անձի մը զգացած ներքին ուրախութեամբ կը ցրուէ աստ անդ գտնուող մի քանի թուրքերը: Այս ընդհանուր կողոպուտէն զերծ մնացած է միայն Թաշխանն, ուր ապաստանող 40-ի չափ հայերը զօրքերու և ոստիկանաց առաջնորդութեամբ գայիմմագամը հայոց եկեղեցին կը ղրկէ, վիրաւորեալներէ նոքա, որք տուն գալու անկարող ըլլալով շուկան մնացած էին, կսպանուին պահպանութեան համար դրուած զօրքերու ձեռամբ, այս իրողութիւնը երդմամբ կը հաստատեն իրեանց թաքստեաններէ տեսնող հայերը:

Ուրբաթ գիշերը քաղաքիս թուրքերուն համար ուրախութեան և խրախճանաց, իսկ հայերու համար սուգի և լացի գիշեր մ'եղաւ, ամեն տունէ պակաս մը կար, մէկը իր սրտահատոր զաւակը կը փնտռէր, միւսը իր սիրելի ամուսինը, ուրիշ մը իր հոգեկից եղբայրը և այլն. և իւրաքանչիւր ոք կսպասէր անձկանօք արշալուսին ծագման, նկատելով իրենց համար փրկիչ մը, այլ ավա՛ղ, այդ օրուան արշալոյսը փոխանակ ժպտուն դէմքեր ողջունելու, շուկային մէջ բազմաթիւ թաւալագլոր արիւնալուա դիակներու վրայ տարածեց իր աղօտ ճաճանչը, որք օր մ'առաջ խաղաղիկ իրեանց գործերով կզբաղէին և կ'օրհնէին զԱստուած իր բիւր բարեաց համար:

Նոյ. 4 շաբաթ առաւօտ է, տակաւին հայոց թաղերը սաստիկ պաշարման ենթարկուած ըլլալուն, ոչ ոք չհամարձակեր տունէ դուրս ելնել, գայիմմագամը, ոստիկանապետը և փօլիսը առտուն կանուխ շուկայ կիջնեն և աղբի կառքեր բերել տալով շուկայի դիակները հայոց գերեզմանատունը փոխադրել կուտան, և բռնի մի քանի հայեր բերել տալով մեծ խրամ մը կը բանան ու հոն չորսական կարգ վրայ վրայի դիզելով հողով կը ծածկեն վրայնին, առանց անուննին արձանագրելու և բժշկական քննութեան ենթարկելու. ա՛հ ինչ անտանելի բարբարոսութիւն, ի՛նչ մեծ ոճիր և քարասրտութիւն. գէթ չեն թողուր մեզ մեր մեռելներու լալու և նոցա ցուրտ ճակատներու վրայ վերջին համբոյր մը դրոշմելու բարեբաղդութիւնը ունենալ, ի՛նչ - սոսկալի հանդգնութիւն և բռնաբարութիւն որք կը համարձակին մեր կրօնական արարողութիւնները նս սրբապղծել, որ մեր մեռեալները անբան անասուններու նման առանց կրօնական արարողութեան կը թաղեն, ամօ՛թ, հազար ամօ՛թ թուրք կառավարութեան որ Աստուածապաշտ անունն կրելով իսկ կռապաշտներու երկրին մէջ չգործածուած խժդժութիւններ տեղի կուտան: Ա՛հ, Աստուա՛ծ իմ, մինչև ցե՞րբ քո հաւատացեալ ժողովուրդ և ամենասուրբ Երրորդութեանդ դաւանող երկրպագուներդ, որ այս տեսակ բարբարոս ժողովրդեան ձեռքը պիտի թողուս, արդեո՞ք չլրացաւ մեր գերութեան և նահատակութեան երկայն շրջանը: Քո ողորմութիւն և գթութիւն



անհուն է, և մենք վստահ ենք, որ Եւրոպիոյ քրիստոնեայ մարդասեր տէրութեանց ազդու միջնորդութեանց շնորհիւ այլևս պիտի ազատիմք մեր գերութեան շղթայներէն:

Սպաննուածները ամենասոսկալի անգթութեամբ և չարաչար մահուամբ մեռցուցած են, հարիւրաւոր բիրերու հարուածներով և հրացանի գնդակներով անշնչացնելէ զկնի դանակներով ալ վզերնին կամ այլ անդամնին յօշոտուած են, այնպէս որ բոլոր մեռեալները ալ անճանաչելի եղած են, այս բոլորը պիտի ստուգուին եթէ մօտ ժամանակին արդարդատ քննիչ մը գալով դիազննութեան ենթարկէ մեռեալները:

Սպաննուածներու թիւը մեռելաթաղերու համրածին համաձայն 80 այր, 13 մանուկ, 5 կին է, սոյն թիւէն դուրս են նոյն օր քաղաքէս դուրս դաշտերը, այգիները և թրքաբնակ գիւղերը գտնուող սպանեալները որոց թիւը աւելի շատ է կըսուի: Այժմ 500-ի մօտ վիրաւորեալներ կան որոց մեծ մասը վտանգաւոր կացութիւն մը ունին և օրական 4-6 հատ կը մեռնին, կառավարութեան անգթութիւնը այն աստիճանի հասած է, որ վիրաւորելոց բժշկական դարման տանելն իսկ արգիլուած է: Գալով նիւթական վնասին, 1500-ի չափ հայոց խանութներ կողոպտուելովը 150000 ոսկիէն շատ աւելի է, իսկ բզկտուած մուրհակներէ և տետրակներէ գոյանալի վնասը առ այժմ յայտնի չէ:

Տակաւին սաստիկ պաշարման մէջ ըլլալով մեռելոց, վիրաւորելոց և մեր կրած նիւթական վնասին ճշգրիտ որքանութիւնն սահմանել չեմք կարող, բայց կը խոստանամք — եթէ զերծ մնամք ներկայիս թուրք խուժանին սպառնացող կատաղութենէն — ի վերջոյ մեռեալներուն և նիւթական վնասին ստոյգ տեղեկագրերը պատրաստելով հաղորդել Ձերդ վսեմութեանց:

Կառավարութիւնը մինչև ցայժմ զմեզ այս անտանելի կացութենէ ազատելու ո՛և է ձեռնարկ մը ըրած չէ. մեր պաշարեալ վիճակը կը շարունակուի, բազմաթիւ ընտանիքներ իրեանց սիրելիներէ զրկուելէ 'ի զատ անօթի ծարաւ լոկ չոր հացի մը կտորէն. նոյն իսկ հայաբնակ թաղերու ջուրերը կտրել տուած են, և եթէ փոքր ինչ եւս տեւէ մեր այս վիճակը, շատեր սովամահ պիտի կորնչին: Մենք ակներև կը տեսնիմք թէ թուրք խուժանը և կառավարութիւնը տակաւին իրեանց կատաղութեանց չափը յագեցած չհամարելով կը պատրաստուին աւելի մեծ կոտորածի մը և բոլորովին բնաջինջ ընելու հայ ազգաբնակութիւնը քաղաքէս:

Ուստի արտասուաթոր աչօք կը նետուիմք Ձերդ հայրական մխիթարիչ բազկացը մէջ, և կը հայցեմք կողկողագին յանուն քրիստոնէութեան, 'ի սէր մարդկութեան, Ձեր ազդու միջնորդութեամբ ազատել զմեզ այս ամենածանր և տագնապալից կացութենէ, եթէ ոչ օր մի ևս պիտի լսէք թէ Մարզուան հայ անունով անհատ մի չէ մնացած:

Թերևս կառավարութիւնը ջանայ և սովորական անամօթ ստախօսութեամբ բարուրանքներ յերիւրել այս ծանր դէպքին պատճառը Հայոց վերագրելու, բայց մենք յամենայն դէպս պատրաստ եմք ապացուցանել այս կոտորածին հեղինակը կառավարութիւնը ըլլալուն, ունիմք ի ձեռին բազմաթիւ զօրաւոր փաստեր և ապացոյցներ, որք արևի պէս պայծառ կերպիւ պիտի հաստատեն թէ այս կոտորածը կանխամտածութեան արդիւնք էր:

Ուստի կը խնդրեմք, որ քաղաքիս համար այլևայլ ազգերէ և օտար հպատակներէ բաղկացեալ քննիչ յանձնաժողով մը կազմուի, յայնժամ երևան պիտի ելնէ, թէ մեր ներկայ համառօտ տեղեկագիրը, լոկ մանրանկար մի է թուրք կառավարութեան և խուժանին 'ի գործ դրած խժդժութեանց:

Ներկայ տեղեկագիրս կնքելու վրայ էինք, երբ լսեցինք թէ Ապտուլլահ փաշայի նախագահութեամբ [յանձնաժողով մը] քաղաքս կ'գայ. անմիջապէս իրաց ճշգրիտ եղելութիւնը նկարագրող թրքերէն լեզուաւ տեղեկագիր մը պատրաստեցինք, նոյ. 8 չորեքշաբթի օր յիշեալ յանձնաժողովը քաղաքս հասնելով ուղղակի կառավարատունը իջաւ. ժամը 12-ին քաղաքիս մի քանի երևելի անձնաւորութիւններն և կղերական դասը 'ի ներկայութիւն իւր կոչեց, որք միատեղ տարին պատրաստուած տեղեկագիրը: Ապտուլլահ փաշա առանց զայն կարդալու բարկութեամբ կըսէ թէ «Տէրութիւնը հայ ազգը նուաճելու համար 150 հազար զօրք ժողոված է և զՁեզ իւր երկրէն բնաջինջ պիտի ընէ մինչև որ հանդարտ կենաք (իբրև թէ մենք տէրութեան դէմ ապստամբած ըլլայինք) և կը յաւելու թէ մինչև ցարդ Անգղիոյ տէրութիւնը զձեզ կը պաշտպանէր, այն ալ այժմ ետ քաշուեցաւ, այսուհետև որո՞յ պիտի դիմէք: Գացէք և ձեր ընելիքը լաւ խորհեցէք» ըսելով կը վռնտէ առանց բառ մը արտասանել տալու մեր կղերական և աշխարհական ազգայնոց:

Յանձնաժողովը այս առաւօտ կանուխ մեկնեցաւ առանց ամէնափոքր կարգադրութիւն մ'ընելու. թուրք խուժանը յանձնաժողովոյ բռնած այս տարօրինակ ընթացքէն քաջալերուելով ալ աւելի կատաղած կը պատրաստուին մեր տուներու վրայ յարձակելով զմեզ բնաջինջ ընելու և մեր ինչքերը կողոպտելու:

Ողորմագութ Տեա՛րք, այժմ մենք բոլորովին ապշած և շուարած, ինչ ընելիքնիս չեմք գիտեր, մեր տուներուն մէջ փակուած սպանդարան տարուելիք ոչխարի նման մեր մահը կսպասենք, Ձեր վսեմութեանց վրայ է մեր բոլոր յոյսը, ակնկալութիւնը և կենաց ապահովութիւնը, եթէ ոչ կորուսուած եմք մեր ընտանեօք և զաւակօք:

Ուրեմն կաղաչեմք կը պաղատիմք մի անտես առնէք մեր խնդիրքը և հաճեցեք ազատել զմեզ այս ամենասոսկալի վիճակէն:



Ակնկառոյց և անձկանօք սպասելով Ձեր մարդասիրական ընդ փոյթ տնօրինութեան

Մնամք ամենախոնարհ յարգանօք
Վսեմափայլ Տիար, Հիւպատոս
Ռուսական հզօր Տէրութեան 'ի **Սամսոն**
ի դիմաց Մարզուանի հանուր հայ ժողովրդեան

Կնիք

բողոքական աւետարանական հասարակութեան
ներկայացուցչին

Կնիք

լուսաւորչական հայ եկեղեցւոյ ժողովոյն

Ծանօթ.- Ներկայիս բնագիրը ուղարկեալ է Պոլիս յԱզգային պատրիարքարան:

АВПРИ, Константинопольское Посольство, д. 3181, л. 38.

## 22

## ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ԱՐՄԵՆԻԱՅԻՑ»
8, 12, 15 Փետրվարի, 1896, N 54-56

### ՏԵՂԵԿԱԳԻՐ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԷՆ

31 դեկտեմբեր, 1895, 12 հունվար, 1896

Տիգրանակերտ

(Քաղվածքներ)

1895-րդ տարին խիստ դժբաղդ տարի մ'եղաւ բոլոր Թուրքիոյ քրիստոնէիցըս համար, նոյնպէս եւ Տիգրանակերտին. վերջին երեկոյն է, կը փորձեմ անգամ մը եւս գրել այն դժբաղդութեանց վերջին մասը որով վերջացուցինք տարին, թէեւ տակաւին ապահովութիւն չունինք:

Տէր, թէեւ գրած եմ ձեզ տարբեր միջոցներով, նոյն իսկ վերջին կոտորածին առթիւ ալ, բայց այս միջոցաւ իսկ փորձել չեմ յետաձգեր:

Գոլերայէն հազիւ ազատուած էինք ամէն ոք իր կորուսած մի ազգականի եւ բարեկամի մասին կ'ողբար, եւ բոլոր նահանգը կը մտածէր գոլերային առթիւ ընդհանուր դադարի պատճառած նիւթական կորուստը դարմանել եւ ահա զրոյց մը կը դառնայ իսլամներու մէջ թէ «Կեավուրներն պետք է ջարդուին»: Շատ տարիներէ ի վեր իսլամներու խորհածը իրագործել ոչ ոք կը հաւատար առաջին առթիւ, բայց հետզհետէ իրականութեան

կերպարանք առնուլ սկսեց իսլամ գօմիթէի մը հրահանգներուն շնորհիւ: Սոյն առթիւ քաղաքի Գաղիական հիւպատոսն ու Հայոց առաջնորդական Տեղապահն առանձին դիմեցին քաղաքիս վալիին եւ զօրաց հրամանատարին եւ մօտալուտ վտանգի մը կասկածը յայտնեցին, բայց վալին ու հրամանատարը թրքական ամենամեծ երդմամբ վստահացուցին հիւպատոսն ու Հայոց Տեղապահը:

Գաթօլիկաց Ամենայն սրբոց տօնի օրն էր, արեւածագին րոպէ առ րոպէ մօտալուտ վտանգի մը տագնապը կ'աճէր քրիստոնէից մէջ: Թուրքեր կանուխէն սկսած էին գործնական նմոյշներ ցոյց տալ. բոլոր քաղաքը տագնապի ալեկոծութեան մը մէջ կը տատանէր, վերջապէս մօտ էր թրքական կէսօրն, եւ ահա թուրքերն հակառակ իրենց սովորութեան խանութնին կը գոցեն աղօթքի երթալու համար:

Թրքական աղօթքը շուտ կը վերջանայ. նկատելով այն, քրիստոնեայք եւս փութացին խանութները գոցել եւ դէպի թաղերը փութաց ամեն ոք իր տունը ապաստանելու:

Հոկտ. 20/1 նոյ.ի ուրբաթ օրը, թրքական կէսօրին, Ուլի ճամիի օրուան քարոզիչն էր Ապաս Հօճան եւ իր քարոզի հետեւեալ վերջաբանով յարձակման նշանը տրուեցաւ. «Քանի որ կեավուրները իրենց լուծը թօթափել կը ջանան, մեր քուրանի օրհնօք եւ կայսեր հրամանով պէտք է ամեն մի ճշմարիտ իսլամ 25 անհաւատ քրիստոնեայ ջարդէ եւ նոցա ընչից, ստացուածոց եւ կնոջ տիրանայ. ձեզ տեսնեմ, ղազի ըլլաք թէ շէյիտ, Մուհամմէտ ձեզ գրկաբաց արքայութեան մէջ կ'սպասէ»:

Մինչ քրիստոնեայք կը փութային իրենց տուները, Ուլի ճամիի աշտարակէն նշանը տրուեցաւ, թիւրք ու քուրտ (շրջակայ քուրտեր սովորականէն խիստ աւելի քաղաք լեցուած էին) պոռալով Մուհամմէտի *սալավաթը,* հարձակեցան մեծ մասամբ շուկաներուն վրայ. արհինարբու գազաններուն առաջին զոհերն եղան այն պարզամիտներն որք տակաւին չէին հաւատար մօտալուտ վտանգի մը հետեւանքին եւ անոնք զորոնք իրենց թուրք ընկերները խաբելով վստահացուցած էին աղօթքէ վերջ պատրաստ զոհ գտնելու նպատակաւ: Մզկիթներէն ելնելով զէն ի ձեռին յարձակեցան իրենց առաջին հանդիպած քրիստոնէից վրայ. սուրով, տապարով ու կացինով ջարդուփշուր մարտիրոսեցին եւ հետզհետէ գաղտնաբար ցրուելով ձեռք ձգածնին ոչխարի պէս մորթեցին եւ կամ ողջ ողջ մսավաճառներու կեռերէն կախելով, ջարդեցին հայհոյելով զՔրիստոս եւ ոռնալով Մուհամմէտի սալավաթը:

...Խանութներն արդէն սկսած էին խորտակուիլ եւ անթիւ խուժանի մը փութաջանութեամբ հազիւ րոպէներ կը տեւէին ամբողջ շուկաներն պարպելու եւ յանկարծ աղմուկը կը բարձրանար. «Հա՛ կեավուր, հա՛ ֆլայ, հա՛ ֆլայ». եւ ահա սուրերու եւ կացիններու հարուածներուն տակ փշոր փշոր



կը տապալէր խեղճ զոհը, եւ այս կերպով գրեթէ խուժանը ժամ ու կէս զբաղեցաւ. թաղերու վրայ յարձակելէ առաջ կը ջանար աւար տանել:

Միեւնոյն ժամանակ քաղաքիս կառավարութիւնն ալ կը գործէր. փոլիսներէն, ժանտարմաներէն եւ զօրքերէն մաս մը ուղղակի աջակից էին խուժանին, եւ ժանտարմաներու Ալայ Պաշի Ազիմաթ Փաշան ալ խիստ զբաղեալ էր ոսկերճինոցի թանկագին աւարով. եւ ահա զօրանոցէն փողը հնչեց եւ երկչոտ քուրտը խոյս տալ կը պատրաստուէր կարծելով որ զօրաց հրաման կը տրուի աւերումը դադրեցունել. գիտակից թուրքերուն աջակից զինուորներ կը՛ պոռան. «Ո՞ւր, կեցէք, մի՛ փախչիք, կրակի փող է. կրակ տուէք», խանութներուն, եւ աւերիչներու բուռն ջանքով ու կազերու շնորհիւ վայրկենաբար բոցերը բարձրացան բազմաթիւ շուկաներէ, իսկ Ազիմաթ փաշա բաւական ժամանակ ունեցաւ ոսկերճինոցի շուկայէն զատ քանի մը վաճառականաց դրամարկղներու խորտակման ալ հասնիլ որոնք գրեթէ ամենն ալ լի էին կանանց ոսկիէ եւ մարգարտէ թանկագին զարդերով որ գոլերայի առթիւ քաղաքէս դուրս ելնելուն ապահովցուցած էին գողերէն:

Կրակը շուկաներու մէջ սկսեց վայրագաբար վառել այրելու եւ խորովելու խանութներու խորերը պահուըտած անձեր եւ ստացուածոց մեծ հարստութիւնն ալ. նոյնպէս վայրենի քուրտը, բարբարոս թիւրքը, ժանտարմա ու զօրքը վայրագաբար սկսեցին քալել դէպի թաղերը:

... Ֆաթիհ փաշայի ճամիէն յարձակողներն աւարեցին ու ջարդեցին Աղմազար թաղի քրիստոնեայ տուները, ուր տեղ թաղեցիք դէպքը ծագելու պահուն հաւաքուած էին մի տան մէջ 80-էն աւելի. ատոնք անգթաբար մորթեցին, աչքեր փորեցին, անդամահատեցին եւ վերջապէս մեծ մասը չարչարանօք նահատակեցին եւ ամենափոքր մաս մը կոյսեր եւ կիներ գերեցին. Նոյնպէս Առպատաշի թաղն ալ բաւական աւարեցին ու կոտորեցին. բայց այնչափ զոհեր ի մի հաւաքուած չը յաջողեցան գտնել, այլ հազիւ 5-10-20: Ս. Սարգիս եկեղեցին աւարեցին, ժամարար Տէր Ցարութիւն քահանան, ժամկոչը եւ քանիներն որք եկեղեցին գտան անլուր չարչարանօք նահատակեցին. քանդեցին տաճարներն եւ գարշելի պղծութիւնք գործեցին անդ. պատառեցին, գնտակահարեցին սրբոց պատկերները, Ս. Գրեանց մատենադարանի եւ դպրոցի գրեանքը պատառելով կոյուղիներն ու ջրհորները լեցուցին, վերջապէս բնաջինջ ըրին թանկարժէք հնութիւնքը:

... Ծաբաթի արշալոյսը դեռ չը ծագած բարբարոսներն սկսած էին վերստին գործի. ժանտարմայի, զինուորի եւ բոլոր պաշտօնական անձանց դերը նոյնը մնաց շաբաթ ալ. ինչ որ սուրը, կացինը, դաշոյնը ու ռէվօլվէրը անկարող էին գործել, կը գործէին կառավարական զէնքերը:

Հետզհետէ պաշարուեցան քրիստոնէից թաղերն ու տուները, մարդագազան խուժանի Մուհամմէտի *սալավաթի* շէխի տաֆի, կանանց *լըլիի*, հրացաններու պայթմանց եւ այլոց աղմուկով լեցուած էր բոլոր քաղաքը:

Представители ванских армян подали прошение на имя Государя императора, каковое и препроводили вашему высокопревосходительству. Получивши ныне копию с упомянутого прошения, имею честь препроводить при сем оное, и так как в нем есть ссылка на таковое же, посланное названными армянами во вверенное Вам посольство в минувшем году, то прилагаю также и копию с первого прошения их. По поводу означенных прошений, считаю долгом заявить, что действительно положение здешних армян, систематически преследуемых турками, стало невыносимее чем когда-либо. Нужно быть здесь на месте, чтобы судить, до каких возмутительных пределов доходит преследование турками армян. При этом, наиболее высокопоставленные правительственные чиновники открыто высказывают, что здесь готовится им, будто бы, вторая Болгария и что они, наученые опытом, сумеют задушить вредный их правительству элемент и таким образом, раз навсегда покончить с «Армянским вопросом». Подобное настроение высшей турецкой администрации, вдохновляемой конечно Портой, и отсутствие каких-либо признаков обещанных реформ, побудило местных армян вновь обратиться с просьбой к нашему правительству. Укажу между прочим на следующий факт: со времени учреждения Ванского вилайета, на должность вице-губернатора (муавин), назначался постоянно армянин (в последнее время некто Агатон-эфенди). Ныне последний вызван в Константинополь (полагают, что должность муавина будет упразднена) и на вновь установленную должность мутесарифа ванского назначен Шукри-Эр, бывший молла. Назначение это произвело тяжкое впечатление на здешних армян...

Добавлю, в заключение, что к кому бы ни обращались за помощью здешние армяне, но они ждут действительной поддержки только от России. Если между учащимися армянами и есть лица, по простительному заблуждению опирающиеся на Англию, то с другой стороны нельзя не признать за истину, что подавляющее большинство их всецело предано России и верит только в ее заступничество.

Камсаракан

АВПРИ, Армянский фонд, д. 119, л. 48



**Приложемие к документу N 39**

**Обращение ванских армян к Александру III.**

10 февраля 1882 г.

г. Ван

...От имени армянской христианской нации, проживаюшей в Ванской губернии Армении, в дополнение нашего нижайшего обращения, посланного Вашему Величеству 16 марта 1880 года о бедственном положении нашего народа, снова повторяем нашу мольбу... Мы осмелились предпринять этот шаг в силу того факта, что в настоящее время, армянский народ находится на краю гибели, ибо его положение безнадежное и бедственное.

...Вместо того, чтобы претворять в жизнь реформы, предусмотренные в 61 статье Берлинского конгресса, с помощью которой был бы положен конец нашим мучениям и страданиям, турецкое правительство усилило репрессии, угнетения и, если все останется без изменения, мы неминуемо все поголовно будем уничтожены.

С момента заключения Берлинского трактата, который был заключен благодаря гуманным усилиями России до сегодняшнего дня, со стороны правительства Великой Порты не наблюдается какого-либо желания ввести справедливость и равенство в Армении, наоборот, в центральных правительственных управлениях совершенно игнорируются интересы армян-христиан, насаждается фанатизм и ненависть к армянам, в результате чего, всякого рода правительственные чиновники, разбойничьи банды и вообще все угнетатели, известным образом, возбуждаются и удваивают количество своих преступлений.

Даже и теперь... когда уже свыше 9 месяцев идут переговоры по Армянскому вопросу и по проведению реформ в Армении, как Вам известно, правительство его султанского величества, не желает признать свои обязательства, вытекающие из 61 статьи Берлинского конгресса, ибо, все его поведение, обещания и всякого рода маневры рассчитаны на то, чтобы избегнуть выполнения этой статьи с тем, чтобы окончательно разбить все надежды у армянского народа и стереть его с лица земли.

Вот почему, если могучее и гуманное влияние Вашего Величества не спасет нас, как это имело место в Румелии, которой была предоставлена административная автономия и, если наше терпение не будет соот-

ветственно вознаграждено и если 61 статья Берлинского конгресса не будет претворена в жизнь, мы погибнем...

Быв. патриарх константинопольских армян Хримян

Хорен Ованесян

Айрапет Ханджян

АВПРИ, Армянский фонд, д. 119, л. 48

40

## Депеша посла в Константинополе д. с. с. Нелидова

13 января, 1883

Аресты в Эрзеруме, о которых доносил ген.-м. Деннет прекратились; большинство задержанных лиц (их было, говорят, до 300) выпущены. Остается только несколько десятков арестованных, их число будет, кажется, уменьшено до 5 или 6 главных зачинщиков. Турецкое правительство старается теперь загладить это дело, боясь, чтобы, наделав шуму на западе, оно не вызвало снова англо-европейского вмешательства.

Между тем, из доверительного сообщения патриарха Нерсеса следует, что нечто в роде заговора или тайного общества действительно существовало. Источником ему служили банды, сформированные несколько лет тому назад в турецких пределах, при помощи русских армян, с целью произвести восстание. Списки завербованных бойцов за свободу велись постоянно, собирались деньги, оружие, устраивались склады и распределялись должности. Вследствие ссоры в Эрзеруме, по поводу священника Мелькиседека, существование этих замыслов было открыто турецким властям и хотя главные документы могли быть уничтожены, в руки турок вероятно должны были попасть хотя какие-нибудь бумаги.

По словам патриарха Нерсеса, между скомпрометированными лицами нет влиятельных, но большею частию неизвестные жители провинций. Но, его блаженство опасается, что, тщательно избегая огласки, турецкое правительство будет однако еще недоверчивее и строже относиться к армянам, в населенных ими местностях, где судьба народа уже и без того весьма плачевна. Для него лично, это составляет новые затруднения в его, и без того тяжелом и сложном положении, т. к. он убежден, что доверие и милости, оказываемые ему Портою, чисто наружные, а что в сущности турки питают к нему прежние чувства ненависти и недоверия, и только силою обстоятельств были побуждены, частью ласками. частью угрозами заставить его снова возложить на себя Патриаршее достоинство...



АВПРИ, Армянский фонд, д. 71, л. 279

41

## Посол в Константинополе Нелидов министру иностранных дел И. А. Зиновьеву

13 октября, 1883

В ответ на отношение от 24 августа сего года N3288, которым Вашему Превосходительству угодно было просить о заключении моем по предмету армянского заговора в Эрзеруме, о коем сообщал наш генеральный там консул, считаю долгом высказать следующее.

Все дело эрзерумского заговора имело, как кажется, скорее местный характер...

Армянский патриарх Нерсес имел, правда, на аудиенции у султана по этому поводу не большое объяснение, которое, однако, нисколько не поколебало благосклонности к нему Абдул-Гамида и все дело это затем было предано забвению. Пущенный было даже слух, что движение в Эрзеруме вызвано образованными армянами в России — точно также долго здесь не продержался. Что касается до предположения нашего генерального консула в Эрзеруме, что все армянское там движение непременно известно было и армянам Константинопольским, то, как предположение, оно могло бы иметь положительную ценность только в том случае, если бы было подтверждено какими-нибудь доказательствами, или по крайней мере более или менее ясными указаниями, каковых однако в донесении г. Деннетта не видно. Весьма легко может статься, что патриарх был кем нибудь извещен о существующем заговоре. В таком случае я скорее полагаю, что он должен был стараться остановить это бесцельное движение, не представлявшее никакой надежды на успех. Но мне кажется положительно невозможным, чтобы он ему покровительствовал и тем паче сам был его главою и побудителем.

Относительно личности Орманиана, управлявшего Эрзерумскою епархиею, которому, повидимому, менее всего доверяет наш генеральный консул в Эрзеруме, я не могу не руководиться особенно осторожностью во всем что касается этого человека. Армянский иерарх этот как

известно, бывший в руках армян католиков, вернулся за тем обратно к григорианско-армянскому вероисповеданию. Довольно этого одного факта, чтобы понять какою тонкою незуитскою интригою окружен этот иерарх, которому никогда не простят его отступничества армяне католики. Точно также понятно какой строгой критике необходимо подвергать все слухи и сведения об Ормaниане, чтобы отличить тенденциозность от истины...

Во главе национального движения являются только самые крайние деятели, которым нечего терять и которые, задаваясь отчасти теориями нигилизма, смотрят на разрешение существующего порядка вещей, как на главную цель своей деятельности. Не то будет вероятно, когда дремлющие ныне консервативные элементы и высший владеющий класс станут во главе народа и получат должное на него влияние...

АВПРИ, Армянский фонд, д. 71, л. 286

42

## Группа зарубежных армян министру иностранных дел России

### Выдержки из письма

27 октября, 1885

Перевод с французского

Мы берем на себя смелость прибегнуть к помощи вашего превосходительства для того, чтобы привлечь благосклонное внимание правительства его величества императора к судьбе миллионов мучеников, стонущих в Армении под ярмом нынешнего турецкого режима...

Полное отсутствие правосудия, отправление которого зависит от произвола любого мусульманского священника-фанатика, в глазах которого каждый христианин является неверным; злоупотребления властей, которые обращаются с народом-мучеником, как с настоящим рабом, чья жизнь, имущество и честь приносяться в жертву прихотям чиновников; разбой, чинимый... по приказу и в интересах провинциальных властей,— таково положение вещей в Армении.

Население Киликии, доведенное до отчаяния существующими условиями, попыталось, после неудачи 1855-1860 годов вновь взяться за оружие, чтобы отстоять свою свободу, но киликийцы были преданы Ахметом-паша Козанли, и ныне они все еще стонут в цепях, брошенные в тюрьмы Мараша.



Аналогичное положение в Эрзеруме, где было предано движение 1882 года. Ван, Муш и Диарбекир являются, без преувеличения, аренами неслыханных зверств, одна мысль о которых заставила бы содрогнуться народы Европы.

Все это привело к тому, что народ наш... явно обрекается на гибель; гибнут люди, уничтожаются хозяйства; проводится в жизнь план истребления. Со времен принятия 61 статьи Берлинского трактата турецкое правительство, применяя скрытую систему, направляет все свои усилия к истреблению армянской нации на ее родине. Те, кто имеют несчастье привлечь к себе внимание турецких властей либо своим умом, либо занимаемым социальным положением, могут избежать преследований лишь покинув пределы страны; так тысячи отцов семейств оказываются за границей и ежедневно пополняют их ряды... Вдали от семей, они бродят по свету, изыскивая все средства, чтобы вернуться к милым их сердцу очагам и к своим несчастным детям. Они тоскуют за границей по своим семьям, в то время как их семьи—отцы, матери, дети—гибнут от нужды и лишений на родине...

Мы хотим имет возможтость вернуться на свою родину, жить там и мирно обрабатывать священную землю, завещанную нам нашими предками, полившими ее своей кровью.

Мы говорим от имени лишенных родины отцов, тоскующих по своим детям, от имени сыновей, которые были вынуждены покинуть родителей и сестер не для того, чтобы избежать пыток, а чтобы спасшись самим, обеспечить своим несчастным семьям кусок хлеба...

АВПРИ, Армянский фонд,

Константинопольское посольство, д. 3133, л. 27

43

## Из доклада младшего цензора Гр. Караханова в Кавказский цензурный комитет о романе Раффи «Хент»

Ноябрь, 1889

...В этой исторической повести весьма талантливо описывается положение армян в Турции. Поэт, проникнутый возвышенными чувствами и глубоким состраданием к родной армянской земле, бичует высшее турец-

кое правительство, обвиняя последнее во всевозможных злоупотреблениях и в высшей степени бесчеловечной политике, клонящейся к уничтожению армянского элемента в Турции... как видно из содержания повести, автором выводятся типы горячих деятелей в лице Дудукчяна и его последователей, которые силою политической пропаганды стараются учинить восстание армян против турецкого правительства. Эти типы по характеру своей деятельности придают повести социалистический дух, тем более, что в уста их автором влагаются идеи о правах крестьян, о необходимости проливать кровь для свободы. Хотя положение русско-подданных армян отнюдь не имеет ничего общего с тем, в которое поставлены армяне турецкие, но это обстоятельство, конечно, не устраняет известной между ними солидарности, как людей, принадлежащих к одной народности и исповедывающих одну религию. Идеи, которые с таким талантом развивает в своем произведении Раффи, не могут остаться совершенно чуждыми русским армянам, хотя бы по сочувствию к своим турецким собратиям, претерпевшим бедствия и гонения.

Книга Раффи имеет большой успех среди здешней армянской интеллигенции, что доказывается тем обстоятельством, что она представлена ко второму изданию; между тем, распространение идей, в ней изложенных, отнюдь не может совпадать с видами нашего правительства и потому казалось бы необходимым не распространять сочинение Раффи между армянским населением края. Вследствие этих соображений я полагал бы сочинение г. Раффи к третьему изданию не допускать, о чем и имею честь представить Цензурному комитету.

ЦГИА Грузии, ф. 114, д. 976, л. 472

## 44

## Копия с шифрованного донесения военного агента в Константинополе управляющему делами Военно-учетного комитета главного штаба из Терапии,

От 16 до 18-го августа, 1896

Терапия.

14 августа с полудня и сегодня ночью происходила в Константинополе избиения армян. Паника среди населения тем большая, что нет доверия мероприятиям властей. Полиция подстрекает и принимает участие в побоищах. Патрули намеренно не слушают или содействуют убийцам. Гарнизон недостаточен для усмирения беспорядков. Вытребованы подкрепления. Настроение мусульман такое, что ежеминутно можно ожидать общего взрыва, тогда немедленный переворот тем вероятнее, что власти бездействуют и общая ненависть к султану растет ежедневно. Мнение о необходимости его низложить произносится турками почти громко. Считаю, что настоящие обстоятельства не могут не вызвать мешательства держав, а потому боевая готовность Черноморского флота и войск Одесского округа необходимы.



АВПРИ, Политархив, д. 3449, л. 183

## 45

## Депеша д. т. с. Нелидова.

16/28 августа, 1896 г.

Буюкдере

Ваше превосходительство уже поставлены в известность телеграммами моими от 14 и 15 августа о возникших в Константинополе серьезных беспорядках. Они вызваны были армянами, проникшими хитростью в числе 30 человек, с револьверами и динамитными бомбами, в Оттоманский банк, откуда они предъявили турецкому правительству и представителям великих держав требования, изложенные в литографи рованных письмах революционного комитета Дашнакцутюн. Одновременно с этим в различных кварталах города брошены были из окон бомбы и сделаны выстрелы по полиции и войскам.

Известие о движении армян, о котором, как оказывается, в армянских средах уже шла с некоторого времени речь, быстро распространилось из города и из разных турецких кварталов высыпали вооруженные ножами и палками толпы башибузуков, которые стали нападать на всех тех, кого принимали за армян, и началось самое варварское избиение беззащитных и ни в чем неповинных христиан. Полиция не только оставалась спокойной зрительницей происходящих ужасов, но даже во многих случаях принимала участие в убийствах и грабежах. Войска, весьма поздно появившиеся на месте беспорядков, также ничего не предпринимала для их прекращения. Таким образом в различных местах Стамбула, Галата, Перы и даже некоторых более отдаленных кварталов до самого вечера происходила грозная расправа с христианами, для прекращения коей не было приятно никаких мер.

Между тем, засевшие в Оттоманском банке революционеры бросали из окон бомбы по сбежавшимся солдатам и полицейским, которые ограничились тем, что издали окружили здание. Из банка отправлен был ими во дворец помощник директора банка г. Обуано, которому они поручили заявить султану, что выйдут, только если им обеспечено будет, при участии иностранных посольств исполнение всех их требований. В это время явился во дворец первый драгоман посольства, г. Максимов, посланный мною для разведания о происходящем и для предложения султану, в случае опасности, моих услуг. Абдул-Гамид стал горячо просить его принять участие в том деле и уполномочил обещать восставшим свободный выход из банка и выезд из Турции, если они откажутся от своего преступного замысла взорвать это учреждение на воздух.

Несмотря на явную опасность предприятия г. Максимов смело принял на себя это поручение и отправился вместе с гг. Винцентом и Обуано для переговоров с восставшими. Ему удалось, после трех часов весьма трудных с ними прений, уговорить их, в интересах защищаемого ими дела, к которому Европа уже показала все возможное участие, добровольно выйти из банка и пересесть на английское судно с тем, чтобы на другой день быть отправлеными за границу. Бомбы и динамит (в количестве 13 килограмм) были ими оставлены в банке, раненые в числе пяти и убитые пять — перенесены были в нашу больницу. Революционеры же, коих осталось 15 человек, все армяне и как они уверяют, турецкие поданные, посажены на пороход и отправлены в Марсель.

Несмотря на устранение этой первой причины беспорядков, спокойствие в городе со вчерашнего вечера не было восстановлено. Избиение армян продолжалось в широком размере, и вместе с тем начался разбой и грабеж армянских домов и магазинов, причем доставалось нередко и другим христианам, даже из иностранцев. Так сколько до селе известно, разграблена банкирская контора грека итальянского подданного Стефановича-Скилицци, и магазин одного француза, австрийца у русско-подданного.

Беспокойство в среде христиан и даже иностранцев принимает все более широкие размеры и доходит до паники. С иностранных стационеров свезены на берег десанты, охраняющие казенные здания и учреждения, а равно и некоторые частные дома. Магазины заперты; жители, имеющие возможность оставить город, бегут и распространяют тревогу в пригородных селениях, где теперь тоже начинаются преследования и избиения армян. Так, вчера вечером ожидали нападения курдов, лазов и



турок на христианские дома в Буюкдере, и я должен был принять меры для обеспечения и особенно успокоения напуганных соотечественников и обращавшихся ко мне с просьбой о покровительстве христиан вообще. Тревожное настроение увеличено было известием о вспыхнувшем в Пере, вблизи посольства пожаре, который, однако, к счастью вскоре был потушен.

Министр иностранных дел, которому мы отправили прилагаемую у сего в копии общую ноту, приезжал под вечер от имени султана известить вас, что все меры приняты, войска, в которых ощущался недостаток, вызваны из Исмида и Адрианополя и учреждены комиссии для разбора виновных и быстрого над ними суда.

Можно надеяться, что беспорядки теперь прекратятся, но положение остается тревожным и потребует, для уврачевания дела, более основательных мер, чем те, на которые способны Абдул-Гамид и заседающие в дворцовом совете его министры.

*Примите и проч.*

P. S. Вследствие полученных нами сегодня утром тревожных известий из города и окрестностей мы отправили в полдень прямо в Ильдыз прилагаемую у сего в копии общую телеграмму.

АВПРИ, Политархив, д. 3449 л. 170-173

46

**Копия с шифрованного донесения военного агента в Константинополе, генерального штаба полковника Пешкова управляющему делами Военно-учетного комитета Главного штаба,**

19 августа, 1896

Терапия

В Константинополе убито за два дня более 5500 беззащитных армян, в том числе много других христиан: положительно выяснено, что избиения совершались заранее правительством организованными шайками под руководством чинов полиции. Благодаря решительным представлениям дипломатического корпуса, а особенно нашего посла, вчера и сегодня спокойнее, но паника продолжается; если избиения повторятся, правительство не в силах их остановить. Здесь всего 17000 пехоты, 1800 кавалерии. Из них около половины составляет охрану Ильдиза, осталь-

ные теперь разбросаны полуротами и патрулями в 3-х столицах и селениях Босфора; с укреплений последних снята половина гарнизонов. Турецкий флот выйти в бой не может. Не касаясь вопросов общей политики, считаю долгом донести, что для решения вопроса о проливах в случае неминуемых новых беспорядков, России представятся благоприятные местные условия; появление нашего флота и десанта будет радостно приветствуемо не только христианским, но и турецким населением.

АВПРИ, Политархив, д. 3449, л. 184

47

## Копия с рапорта студента императорского посольства князя Шаховского

21 августа, 1896

Константинополь.

Осмотрев предместье Хаскёй, я нашел следующее:

Резня в Хаскёй началась около $1^{1/2}$ ч. вечера (тур. вр.) 14-го и кончилась на следующий день около 10 ч. вечера (тур. вр.). За одно с турками в данном случае действовали и испанские евреи, которых очень много в этом квартале. Они скупали у турок за бесценок награбленные вещи и показывали им армянские дома. Что они были соучастниками турок, достаточно доказывает одно то, что всех их дома были помечены мелом следующими надписями, которые я сам видал ... или ... Некоторые армянские дома были помечены крестом. Всех армянских домов в Хаскёй насчитывается около 900, из них только 9 осталось неразграбленными, остальные же ограблены совершенно начисто, так что буквально ничего не осталось; если в некоторых домах и остались некоторые громоздкие вещи, которых нельзя было унести, то они так исковерканы, что ничего не осталось. Убитых всего около 430 и раненых около 60; женщин и детей не трогали. Мне говорили только об одной убитой женщине. Моряки с Дели–Мехмет– пашой во главе прибыли (по сообщению местных армян) около 3 ч. вечера (тур. вр.) 14-го и были зрителями происходящих бесчинств. Здесь же в Константинополе я слышал будто бы это он прекратил резню. Другие же войска пробыли 15-го около 10 час. вечера (тур. вр.). Один из главных виновников зверств является один



полицейский Хаккы (он теперь сидит в Галате Серая), которого уцелевшие обвиняют в следующем:

1. Что вымагал у армян деньги, говоря, что если ему заплатят то он охранит их, и немедленно по получении денег напускал на них толпу.

2. Что он предательски велел убить некоего Мардироса Томбак-Джиана (племянника Габриель эфенди), который со своей матерью искал убежища на полицейском посту; Хаккы уговорил его выйти, говоря, что с ним ничего не будет, и как только он вышел, приказал убить.

Армяне, спасшиеся в церковь, разошлись теперь частью в школу, меньшая же часть по домам. В церкви оставались только раненые.

АВПРИ, Политархив, д. 3449, л. 220-221

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՆԱԽԱԲԱՆ

### Էջ 13

* Մի այլ կապակցությամբ Մարքսը նշել է. «*Թուրք օսմանները*, որոնք հանդես գալով որպես *օղուզներ կամ ույգուրներ*, Չինգիզ խանի արշավանքի ժամանակ 50000 մարդուց բաղկացած հորդայով քշվեցին *Լեռնային Հայաստան… Օսմանի ժամանակ* թուրքական *ավազակները* շարժվեցին դեպի Կարահիսար ամրոցը, որը գրավված էր եղել Էրտողրուլի կողմից և դարձավ նրա տիրապետության կենտրոնը» (Архив Маркса и Энгельса. Под ред. М. Б. Митина. Т. VI, Политиздат, 1939, с. 170) (*ընդգծումները մերն են – Մ. Ն.*):

### Էջ 15

* Կ. Պոլսի անկումը ծանր տպավորություն է թողել նաև հայության մեջ: Մեզ են հասել, օրինակ Աբրահամ Անկյուրացու և Առաքել Բաղիշեցու չափածո «Ողբերը», որոնցում դեպքերի ժամանակակից այդ հայ հեղինակները պատմում են բյուզանդացիների մեծ ողբերգության մասին: Երբ թուրքական հորդաները 1453 թ. մայիսի 29-ին ներխուժեցին Կ. Պոլիս, գրում է Անկյուրացին, ապա նրանք

Զպատերազմողսըն զոր գըտին
Զամենեսան կոտորեցին.
Այլ եւ ըզայրս եւ ըզկանայս
Ի գերութիւն իսկ վարեցին:
Եւ զնորահաս տըղայս նոցին
Ի մօր գրկացըն խըլէին,
Առեալ զքարի հարկանէին,
Զծերսըն սըրով խողխողէին…

Այս հարցին հատուկ ուսումնասիրություն է նվիրել Հ. Ս. Անասյանը (տե՛ս նրա «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին». Ե., 1957):

** Գիրքը հրատարակվել է անգլերեն 1969 թ. Քեմբրիջում. նրա ռուսերեն թարգմանությունը լույս է տեսել 1983 թ.:

### Էջ 17

* Թուրքական զորքերի կողմից Անդրկովկասում այդ նույն ժամանակ կոտորածի ու ավերի մասին տե՛ս նաև՝ *Ismail Hami Danişmend.* Izahli Osmanli Tarihi Kronolojisi. 2 cilt, 1948. Ժամանակակից թուրքական հետադիմական պատմաբանները ամեն կերպ ջանում են թաքցնել պատմական փաստերը: Ավելին, նրանք փորձում են գործն այնպես ներկայացնել, որ իբր սուլթանական հորդաների զավթողական արշավանքները «քաղաքակրթություն և ապահովություն» էին բերում: Բնորոշ է, որ այս ոգով են արտահայտվում նաև թուրքական և ամերիկյան թերթերն ու ամսագրերը:



### Էջ 23

* Ֆրիդրիխ Շիլլերի «Վիլհելմ Տելլ» պոեմից բերված քաղվածքը մեջբերվում է Մ. Վարանդյանի թարգմանությամբ (*Մ. Վարանդեան. Հ. Յ. Դաշնակցութեան* պատմութիւն. Հ. Ա, Փարիզ, 1932, էջ 27): Պոեմը ամբողջությամբ թարգմանել է Գ. Բարխուդարյանը (*Ֆ. Շիլլեր. Ընտիր երկեր. Ե., 1952*):

### Էջ 25

* Միայն զայրույթով կարելի է կարդալ թուրքամետների այն կեղծ պնդումը, թե XIX դարում, թուրքական տիրապետության տակ ինչպես հույներն ու սլավոնները, այնպես էլ հայերն ունեին լայն ազատություններ ու ինքնավարություն (Турецкий сборник. СПб., 1900, с. 83). Ի դեպ այդ բացարձակ հերյուրանքը կրկնում են ժամանակակից թուրքական պաշտոնական պատմաբաններն իրենց «պատմագիտական» աշխատություններում (տե՛ս Tarih. III, yeni ve Yakin Zamanlar. Istanbul, 1933, s. 292):

Թուրքական կեղծարարների հետ համամիտ են ժամանակակից անգլո-ամերիկյան հետադիմական պատմաբանները: Այսպես, օրինակ, անգլիական պատմաբաններից մեկը գրում է, որ թուրքական սուլթանները բարյացկամ վերաբերմունք են ունեցել կայսրության ասիական նահանգների քրիստոնյա բնակչության նկատմամբ (*Q. E. Kirk.* A Short History of the Middle East. London, 1952, p. 59): Կեղծարարներն այնքան հեռու են գնում, որ անգամ փորձում են արյունարբու սուլթան Աբդուլ Համիդին պատկերացնել այսօր որպես մարդասեր, ընդունակ և առաջավոր սուլթան (Cümhürriyet, 10 Mayis, 1954, տե՛ս Osman Qaziden Atatürke. հավելվածը):

** Ստալինյան բռնապետության պայմաններում (մասնավորապես 1930-1940-ական թթ.) երբ իշխում էին հակագիտական դոգմաները, օսմանյան տիրապետության դեմ XIX դարի երկրորդ կեսին ծավալված հայ ազատագրական շարժումը դիտվում էր արկածախնդրական շարժում: Նշված տարիներին այդ տեսակետը իր արտահայտությունն է գտել Խորհրդային Հայաստանի գրեթե բոլոր պատմաբանների ու գրականագետների աշխատություններում: Հաճախ հրապարակվում էին գրքեր, գրքույկներ ու հոդվածներ, որոնցում քարոզվում էին պարզապես անհեթեթ ամոթալի մտքեր: Ահա երկու օրինակ: «Հայ բուրժուազիայի մարտական կուսակցություն՝ դաշնակցությունը եղել է, և է հակահեղափոխական այն ուժը, որի մոտ 40 տարվա ավանտյուրիստական, ֆիդայական քաղաքականության պատճառով բնաջնջվել են միլիոնավոր հայ և թուրք աշխատավորներ, աշխարհի չորս կողմն են նետվել որբերի, հաշմանդամների ու գաղթականների հոծ զանգվածներ» (տե՛ս՝ *Վ. Պարսամյան.* Էջմիածինը հակահեղափոխության սպասարկու. Ե., 1932, էջ 35): 1940 թ. «Գրական թերթում» լույս տեսավ Ա. Մակարյանի հոդվածը, ուր հեղինակը և նրա

հետ միասին թերթի խմբագրությունը ամեն կերպ վատաբանում էին հակաօսմանյան ազատագրական այն շարժումը, որի գլխավոր գաղափարախոսներից ու պաշտպաններից մեկը Րաֆֆին էր: Հոդվածում կարդում ենք. «Րաֆֆու պաշտպանած այդ շարժումը, որի նպատակն էր տաճկահայերին «ազատագրել», այսինքն՝ սուլթանի փոխարեն նրանց ցարի հպատակ դարձնել, ռեակցիոն շարժում էր, որովհետև մի կողմից՝ հայ ժողովրդին կտրում էր ցարիզմի ու սուլթանիզմի դեմ պայքարող ժողովուրդների դեմոկրատական ու ապա բանվորական ընդհանուր շարժումից և մյուս կողմից՝ ոչ միայն չէր թուլացնում, այլ նպաստում էր իմպերիալիզմին, հատկապես ցարիզմին, որն իմպերիալիզմի գլխավոր օջախներից էր»: Այսպիսի անմտություններ գրում էին նաև ուրիշները:

*** Պատմագիտության, ինչպես նաև գաղափարական ճակատի մյուս բնագավառներում, որոշ թարմություն, կամ ինչպես սովորաբար ասում են «ձնհալ» սկսվեց Ստալինի մահից հետո, երբ երկրի ղեկավարության գլուխն անցավ Ն. Ս. Խրուշչովը: 1955 թ. լույս տեսավ մեր այս գիրքը, իսկ մի քանի տարի հետո հոդված զորավար Անդրանիկի մասին: 1960-ական թթ. սկսած հրապարակվեցին Աշ. Հովհաննիսյանի, Ե. Սարգսյանի, Հ. Ղազարյանի, Ռ. Հովհաննիսյանի, Ծ. Աղայանի, Հ. Պողոսյանի, Ա. Համբարյանի և այլոց աշխատությունները, որոնցում այս կամ այն չափով քննարկվում են հայ ազատագրական շարժման հետ կապված առանձին հարցեր:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### Էջ 30

* Ռոլեն-Ժեկմենը 1880-ական թթ. սկզբներին պարսկահայերի թիվը հաշվում էր 200000-ից մինչև 225000, Հնդկաստանում, Ճավայում և Չինաստանում գտնվող հայերի թիվը՝ 40000, Ավստրո-Հունգարիայում՝ 30000, Արևելյան և Արևմտյան Եվրոպայում, Ամերիկայում և Աֆրիկայում՝ 97000 մարդ (Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году. М., 1896, с. 11):

### Էջ 36

* 1870 թ. Երևանում համքարությունների մեջ ընդգրկված էին 2081 արհեստավոր (վարպետներ ու աշակերտներ), համքարություններից դուրս էին 270 արհեստավոր (*С. А. Егиазаров.* Исследования по истории учреждении в Закавказьи. Ч. 2, Казань, 1891, с. 264):

### Էջ 38

* Վարչական այն համակարգը, որի համաձայն Օսմանյան (թուրքական) կայսրությունը բաժանվում էր էլայեթների, ընդունվեց XVI դարի վերջում: XVII դարի ֆրանսիացի հեղինակ Ռիկոն Թուրքիայի պատմությանը նվիրված իր գրքում ի թիվս այլ էլայեթների հիշում է նաև Դիրաբեքիրի, Սվազի, Վանի, Չըլդրի, Մարաշի, Տրապիզոնի, Կարսի էլայեթները (տե՛ս Histoire de l'état présent de l'Empire Ottoman, traduite de l'Anglois de monsieur *Ricaut* par monsieur *Briot*. Paris, 1670):



### Էջ 40

* Եվրոպական մի շարք ուսումնասիրողներ արևմտահայության թիվը զգալի չափով պակաս են ցույց տալիս, որովհետև նրանք օգտվել են թուրքական կառավարության պաշտոնական տվյալներից, որոնք ինչպես ասացինք, խիստ աղավաղված ու աննիշտ են: Այսպես, օրինակ՝ Ուբիչինին հայերի թիվը 1850-ական թթ. սկզբներին Օսմանյան կայսրության մեջ հաշվում էր 2400000 (որից 400000 Թուրքիայի եվրոպական մասում), Ռուսաստանում՝ 900000, Պարսկաստանում՝ 600000 (վերջին թիվը խիստ չափազանցված է), Ասիական մյուս երկրներում՝ 40000, Արևմտյան Եվրոպայում՝ 60000 (*A. Ubicini.* Letters sur la Turquie... deuxième partie. Paris. 1851, p. 22): Ի միջի այլոց նշենք, որ թուրքական կառավարության պաշտոնական տվյալների համաձայն, 1840-ական թթ. հայերի թիվը Կ. Պոլսում կազմել է 220000 (Ibid., première partie, Paris, 1853, p. 27): «ԲԵՀ»-ի 1969 թ. N 2-ում (էջ 98-113) զետեղված է *Ա. Համբարյանի* «Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը» հոդվածը, ուր բերված են զանազան աղբյուրներից տվյալներ արևմտահայերի թվաքանակի մասին XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին:

### Էջ 52

* Պատմական գրականության մեջ եղել են փորձեր ցույց տալու, թե իբր արևմտահայ գյուղացիությունը մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը տանելի պայմանների մեջ է գտնվել: Ճիշտ է, որ այդ պատերազմից հետո գյուղացիության տնտեսական ու իրավական դրությունն ավելի ծանրացավ, բայց որ մինչ այդ էլ արևմտահայ գյուղացիությունն ապրում էր խիստ ծանր վիճակ, դա անվիճելի է: Այս բանում համոզվելու համար բավական է թերթել ժամանակի հայ պարբերական մամուլը, ուր բերված են հարյուրավոր և հազարավոր օրինակներ գյուղացիության օրհասական դրության մասին: Պետք է ասել, որ գրականության մեջ արտահայտված այդ միանգամայն կեղծ պնդման հեղինակներից մեկը ոչ անհայտ Ջամալ փաշան է՝ 1915-1916 թվականների հայկական ջարդերի գլխավոր կազմակերպիչներից մեկը (տե՛ս Записки *Джемаль-паши*, 1913-1919 гг., Тифлис, 1923):

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### Էջ 53

* Այս նպատակին էին ուղղված Անդրկովկասում տնտեսական քաղաքականության բոլոր լծակները՝ հարկային, առևտրական և մաքսային համակարգերը, ֆինանսական մատակարարումները և այլն: Հատուկ ուշադրություն էր

դարձվում հումքի արդյունահանմանը: Ընդսմին, ռուսական կառավարությունը ռուս առևտրականներին ընձեռում էր արտոնյալ պայմաններ՝ Անդրկովկասի շուկայում նրանց մենաշնորհ դիրքն ապահովելու նպատակով (տե՛ս ֆինանսների նախարար Ե. Ֆ. Կանկրինի՝ 1836 թ. զեկուցագիրը Նիկոլայ I-ին հարկային նոր կարգի մասին, Կովկասի Գլխավոր հրամանատար Գ. Վ. Ռոզենի զեկուցագիրը Ե. Ֆ. Կանկրինին՝ Կովկասում առևտրի կացության վերաբերյալ, Հայկական մարզի պետ Վ. O. Բեբութովի զեկուցագիրը ֆինանսների նախարարին՝ Հայկական մարզում որդան կարմիրի արդյունահանման մասին և այլն (Документы и материалы по истории армянского народа. Под ред. Н. А Тавакаляна. Е., 1993, с. 129-132, 247-250, 255-261 и др.):

## Էջ 55

* Անդրկովկասում հակացարական ելույթների մասին Գերցենի «Колокол» հանդեսում տպագրվեց Ռիո Նելիի (Նիկոլայ Նիկոլաձեի) հետաքրքիր հոդվածը (տե՛ս Колокол, 1865, N 199):

## Էջ 56

* Բնորոշ է, որ հայ լիբերալ հոսանքի պարագլուխ Ստ. Նազարյանը կտրուկ կերպով դեմ էր հայ ազգային-քաղաքական շարժմանը Ռուսաստանում: «Հայերս,– ասում էր նա,– քաղաքական մտքով ռուս ենք» («Հյուսիսափայլ», Մ., 1864, N 4, էջ 227):

## Էջ 59

* Համքարների այդ ելույթի մասին իր ժամանակ գրվեց Колокол-ում, Кавказ, С. Петербургские ведомости, Русский инвалид և այլ թերթերում, որոնք իրավամբ համքարների այդ շարժումը գնահատեցին որպես սոցիալական բնույթի ելույթ:

## Էջ 62

* Ընդ որում, Մարքսը ընդգծում էր Թուրքիայի ասիական տիրույթներին հատուկ վայրագ իրականությունը. Ասիական Թուրքիան, գրում էր նա, կազմում է «մահմեդական ֆանատիզմի և թուրքական ազգայնության չափազանց համախմբված կոմպլեքսը»:

** Ժամանակակից թուրքական և որոշ արևմտյան հետադեմ պատմաբաններ, հակառակ պատմական փաստերի, ամեն կերպ փառաբանում են այդ ռեֆորմները, ձգտելով գործը պատկերել այնպես, որ իբր թանզիմաթը խոշոր չափով բարելավեց ինչպես թուրք, այնպես էլ սուլթանական բռնապետության տակ հեծող մյուս ազգությունների դրությանը (տե՛ս *S. E. Behman*. Mustafa Reşit paşa ve Tanzimat devir tarihi. Istanbul, 1945, նաև *F. E. Bailey*. British policy and the Turkish reform movement. London, 1942. *K. Karpat*-ի ներածականը The Otto-



man State and its Place in World History. Leiden, 1974, գրքում. *S. Koçaş*. Tarih boyunca Ermeniler ve Selcuktan beri Türk-Ermeni, Ilişkileri. Ankara, 1950, s. 178):

## Էջ 68

* Նկատի ունենալով «Տեղեկագիրք գավառական հարստահարութեանց»-ի I և II մասերի տրամաբանությունը, Րաֆֆին նշում էր, որ «Երկրորդ «Տեղեկագրքի» մեջ հարստահարությանց խնդիրների թիվը առավելություն է կազմում: Հարստահարությունները ավելի բազմատեսակ են դառնում և իրանց քրեական բնավորությամբ ավելի սարսափելի են... Պատճառն շատ պարզ է: Դրանով բացատրվում է այն հարցը, թե Տաճկաստանը 25 տարվա ընթացքում որքան առաջ է գնացել: Այո, նա մեծ առաջադիմություն է գործել ոչ մահմեդական ազգերը նորանոր ձևերով կեղեքելու, կողոպտելու և անպատվելու մեջ...» (*Րաֆֆի*. Երկերի ժողովածու, հ. 10. Ե., 1991, էջ 420-421): էջ 68

** Սուլթան Աբդուլ Համիդի պահանջով, օրինակ, գրաքննությունն արգելեց գործածել «հետապնդում», «արիություն», «ազատություն», «ուժ», «իրավունք», «միություն», «հավասարություն», «բռնապետություն» և նման «վտանգավոր» բազմաթիվ այլ բառեր (*М. Мак-коль*. Султан и державы. Перевод с английского. СПб., 1897, с. 297):

## Էջ 69

* Այդ դեպքերի կապակցությամբ Վանի բնակչության մի մասը Կովկաս գաղթեց: 1877 թ. մայիսին Թիֆլիսի թերթերը գրում էին. «Թիֆլիսում երևացին վանեցի հայերը. նրանք խիստ նիհար են, գունատ, հաշմանդամ, հենակներով հազիվհազ շարժվում են Թիֆլիսի փողոցներում և ողորմություն խնդրում... Մի քանի ամիս առաջ նրանք թրքական սարսափելի մոլեգնության զոհը դարձան» (Тифлисский вестник, 1877, N 98):

## Էջ 72

* XIX դ. սկզբներին Օսմանյան կայսրության սահմաններում ապրող քրդական գրեթե բոլոր ցեղերն անկախ կամ կիսանկախ վիճակ ունեին (տե՛ս *Malcolm's* History of Persia (modern). London, 1888, p. 72-73):

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## Էջ 80

* «Արծուի Վասպուրականը» լույս է տեսել 1855-1864 թթ.՝ Կ. Պոլսում և Վանում (Վարագ), Մ. Խրիմյանի նախաձեռնությամբ և խմբագրությամբ: Արևմտահայ պարբերականների մեջ առաջինն էր, որ քարոզել է ազգային-ազատագրական պայքարի գաղափարներ, կոչ է արել ժողովրդի մեջ զարգացնել ազգային ինքնագիտակցության ոգին, ներարկել նրա մեջ արժանապատվության, եր-

քեմնի զորեղ երկրի և ներոսական նախնիների արժանավոր ժառանգը լինելու զգացումներ: «Արծուի Վասպուրականը» կրոնաբարոյախոսական խնդիրների հետ միասին արծարծել է արևմտահայ գյուղացու սոցիալական և ազգային ծանր կացության, պանդխտության, նրա կենսական կարիքների հետ կապվող հարցեր, ձգտել սատարել նրան և ներշնչել հայրենասիրական զգացումներ: «Արծուի Վասպուրականը» քննադատել է արևմտահայերի սահմանադրական պատրանքները, ցույց տվել, որ առանց ազգային հեղափոխության և պայքարի ոչ մի ազգ չի կարող «ազատ կյանք» ստեղծել իր համար և ապահովել «հառաջադիմության մրցանակը»: Պարբերականին աշխատակցել են Մ. Խրիմյանը, Գ. Սրվանձտյանցը, Ա. Թոխմախյանը, Րաֆֆին, Պ. Սաղաթյանը (Սեյադ) և ուրիշներ:

Էջ 84

* «Մշակ» լրագրի 1895 թ. N 132-ում Հ. Ա.-ն գրում էր, թե օսմանյան պետությանը տրվող այդ հարկի չափը կազմում էր 60 հազար ղուրուշ, «որը սակայն, վճարվում էր, երբ կամենում էին, կամ հարկավոր էին համարում»:

Էջ 86

* Ղրիմի պատերազմից հետո Հյուսիսային Կովկասից Թուրքիա անցան զգալի թվով չերքեզներ, որոնց մի մասը, մոտ 30 հազար տեղավորվեցին Լեռնային Կիլիկիայում: Սուլթանական կառավարությունը նրանց հաճախ օգտագործեց հայ ազատագրական շարժման դեմ:

** 1862 թ. ապստամբության մասնակից Մ. Սեմերճյանը (Զեյթունցին): ինչպես նաև մի շարք հեղինակներ գրում են, որ Ազիզ փաշայի բանակում կար 40 հազար մարդ: Կարծում ենք այդ թիվը չափազանցված է:

*** Վիկտոր Լանգլուան զեյթունցիների մասին գրում էր. «Այս հայ լեռնականներն ընդհանրապես խոշոր են, բարձրահասակ, քաջ և կորովի» («Մասեաց աղաւնի», 1856, N 6):

Էջ 89

* Վիկտոր Լանգլուան գրում է, որ օգոստոսի 2-ի (14-ի) ճակատամարտից հետո ապստամբները գրավեցին թշնամու շատ դրոշակներ, թնդանոթներ, զենքեր ու զինամթերք (Revue des deux mondes, 1863, t. XLIII, p. 989, «Մասեաց աղաւնի», 1856, N 6):

Էջ 91

* Զեյթունի դեպքերի մասին գրեցին նաև «Ծաղիկ» (1862, N 42), «Մեղու Հայաստանի» (1863, N 9, 11), «Մասիս» (1862, N 548), «Համբաւաբեր Ռուսիոյ» (1862, N 31) և այլ պարբերականները: Զեյթունի անցքերին անդրադարձան նաև ռուսական ու եվրոպական մի շարք թերթեր:



Էջ 92

* Որ «իշխան Լուսինյանը» մի բախտախնդիր էր, դա երևում է թեկուզ այն բանից, որ նա իր ծառայությունն էր առաջարկում հավասարապես թե՛ ցարական, թե՛ անգլիական ու ֆրանսիական կառավարություններին: Ղրիմի պատերազմի տարիներին նա հրապարակեց մի կոչ, ուր պահանջում էր պաշտպան կանգնել «բարերար» սուլթանին (*К. Маркс и Ф. Энгельс.* Сочинения. Т. 9, с. 169). Միքայել Նալբանդյանը, ամենայն իրավամբ, այդ «իշխանին» որակել է որպես բախտախնդիր, շառլատան, որպես արևմտաեվրոպական պետությունների գործակալ (*Մ. Նալբանդյան.* Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 406) «Ազազուն իշխանին» սպանիչ տողերով է բնութագրել նաև Ստեփան Ոսկանը իր «Արեւմուտքում». Լուսինյանը, գրում է նա, «Հայաստանի հողը և արևը կմոռնա Իդալիայի երկինքին համար, և եթե իրեն տրվի ամիսը հազար ֆրանք թոշակ, պատրաստ է ուրանալ նաև հայրենիքի ոսկրոտիքը: Ոսկորը պարարտություն չբերեր առ Լևոն իշխանը կարոտություն ունի պարարտ... ըղեղի» («Արեւմուտք», Փարիզ, 1864, N 5, էջ 35):

Էջ 93

* «Փարիզը» գրում էր, որ այդ կռիվների ժամանակ երկու կողմից սպանվեցին և վիրավորվեցին 1000 մարդ, և որ թուրքերն ունեին կանոնավոր զորք և ռազմական գերակշիռ ուժ: «Իսկ Հայք բոլոր այս առավելություններեն զուրկ, բայց և նույնպես կպատերազմեն, կհաղթեն և բերդին ալ կտիրեն... Ուրեմն, Հայք տակավին իրենց նախնյաց մեկ նշանավոր հատկությունը դեռ պահած են» («Փարիզ», 1862, մարտի 28, N 64):

Էջ 94

* Օսման բեյը (Ֆ. Միլլինգենը) 1877 թ. «Кавказ» լրագրում տպագրեց մի շարք հետաքրքիր հոդվածներ Թուրքիայի մասին:

Էջ 98

* Մ. Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը որոշ և մասնավորապես ազգային-ազատագրական շարժման հարցում, իրենց վրա կրել են, ինչպես ցույց են տալիս առկա ուսումնասիրությունները, նաև Մատթեոս Այվատյանը, Ստ. Ոսկանը, Գր. Չիլինկիրյանը, Մ. Մամուրյանը և մի քանի այլ գործիչներ: Այս մասին տե՛ս Գ. Ստեփանյանի հոդվածաշարը՝ նվիրված Մ. Նալբանդյանի՝ արևմտահայ իրականության հետ ունեցած կապերի հարցին («Տեղեկագիր», 1949, N 10, 1952, N 6, 1953, N 11):

** Մ. Նալբանդյանի մոտ գտնված ծածկագիր բառարանից պարզվում է, որ «Մարտիրոս» պայմանական անվան տակ նկատի է առնված իտալական ազգային ազատագրական շարժման նշանավոր գործիչ Մաձձինին:

Էջ 100

* Ս. Թագվորյանի այս նամակի ստույգ տեքստը առաջին անգամ հրապարակել է Աշոտ Հովհաննիսյանը: Նրան միաժամանակ հաջողվել է արխիվային նյութերի օգնությամբ ապացուցել, որ նամակի հեղինակը ոչ թե Հարություն Սվաճյանն է, ինչպես կարծում էին երկար ժամանակ, այլ Սերովբե Թագվորյանը (*Մ. Նալբանդյան.* Անտիպ երկեր. խմբագրություն և կոմենտարներ Աշոտ Հովհաննիսյանի. Ե.-Մ., 1935, էջ 445-446):

Էջ 108

* 1860-ական թթ. Ալեքսանդրապոլում գործում էին նաև մշակութային-կրթական, բարեգործական բնույթ ունեցող մի շարք լեգալ ընկերություններ:

** «Բարենպատակ ընկերության» մասին մի փաստաթուղթ հրապարակել է պրոֆ. Լեոն («Նոր ուղի», Ե., 1932, Ա գիրք, էջ 139-144): Այդ փաստաթուղթը նա հայտնաբերել է Մատենադարանում, սակայն ընկերության մասին եղած ամբողջական գործը, որը գտնվում է Մոսկվայի կենտրոնական պատմական արխիվում (ЦИАМ, 3-е отд., 3-я эксп., д. 120), Լեոյին անծանոթ մնաց:

Էջ 109

* Որպես ուսուցիչ Հայկազունին աշխատել է Ալեքսանդրապոլում, Շիրակի Խլի-Ղարաքիլիսայում և այլն: Ժամանակի հայ պարբերականներում նա տպագրել է հոդվածներ ու բանաստեղծություններ: Ինչպես երևում է արխիվային նյութերից, Հայկազունին ճանապարհորդել է Արևմտյան Հայաստանում, որը, իհարկե, պատահական բնույթ չի ունեցել: Նա Արևմտյան Հայաստանի գավառներում ելույթներ է ունեցել, կոչ անելով ժողովրդին ոտքի ելնել ազգային-ազատագրական պայքարի:

Էջ 110

* Իր զեկուցագրերի մեջ մայոր Ջոլոտովսկին չի հաղորդում այն մարդու անունը, որը հայտնել էր ոստիկանությանը ընկերության գոյության մասին: Ժամանակին Կ. Պոլսում հրատարակվող «Լոյս» պարբերականում տպագրվեց Ալեքսանդրապոլից ուղարկված մի նամակ, ուր ասվում էր, թէ «Բարենպաստ ընկերութիւնը» մատնել է մի ոմն վարդապետ («Լոյս», Կ. Պոլիս, 1875 նոյեմբեր): Գաղտնիքը պարզում է կատարված անցքերի ժամանակակիցներից մեկը՝ Վահան Բաստամյանն իր օրագրում: Նա հայտնում է, որ մատնությունը կատարել է այն ժամանակ Ալեքսանդրապոլում գտնվող Մարտիրոս վարդապետ Տոնականյանը (Մատենադարան, Գ. Հովսեփյանի անձնական արխիվ, թղթ. 110, վավ. 40): Բաստամյանի հաղորդած տեղեկությունը ճիշտ է:



Էջ 115

* Նշանակալի չափով միլիցիական զորամասեր կազմվեցին Վրաստանում: Բնորոշ է, օրինակ, որ միայն Մինգրելիայի և Գուրիայի պաշտպանությանը մասնակցում էին 10000 հետևակ և հեծյալ միլիցիոներներ, որոնք խոշոր դեր խաղացին Վրաստանի պաշտպանության գործում (*Е. Е. Бурчуладзе.* Крушение англо-турецких захватнических планов в Грузии в 1855–1856- годах,– Вопросы истории, 1952, 4, с. 16):

Էջ 118

* 1855 թ. ապրիլի 30-ին և մայիսի 8-ին Թիֆլիսի կենտրոնական հրապարակում տեղի ունեցավ աշխարհազորայինների զորահանդես, որը մեծ տպավորություն թողեց ներկաների վրա (Кавказ, 1855, N 34, 36):

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Էջ 125

* Տիգրան Մկունդը հավաքել է արժեքավոր տեղեկություններ Դիարբեքիր աքսորված բուլղար հեղափոխականների, նրանց և տեղի հայերի միջև ստեղծված կապերի մասին: Գրքում կարդում ենք, որ քաղաք ժամանած առաջին աքսորական բուլղարները շղթայակեապ էին, «ոտքերուն երկաթե ծանր օղակներ անցուցած, և շղթայով կապված... Աքսորականները երեք-չորս ամիս բանտ մնալե վերջ փոխադրվեցան հունաց Մար Գըզմա եկեղեցին. կառավարիչն չուզեց ավելի երկար կերակրել զզանոնք: Հունաց եկեղեցապետն տեղավորեց զանոնք եկեղեցիին կից սենյակի մը մեջ, ուր ամենքը միասին կապրեին շատ խեղճ վիճակին մեջ. բեռնակրությունով ինչ դրամ որ վաստակեին՝ այնպեսով կապրեին, հավաքաբար ծախսելով և կերակուր հայթայթելով»: Հայերը ամեն կերպ օգնել են աքսորականներին և երբեմն էլ կազմակերպել խմբային հանդիպում, ավելի ճիշտ հյուրասիրություն: Այդպիսի մի հավաքույթի ժամանակ բուլղար աքսորականներից մեկը, որին «պրոֆեսոր» էին կոչում, պատմել է բուլղար ժողովրդի ծանր վիճակի ու իրենց հեղափոխական գործունեության մասին և վերջում կոչ արել հայերին ոտքի ելնել թուրքական բռնապետության լծի դեմ: Ժողովրդին, երիտասարդությանը պետք է սովորեցնել զենք գործածել, որպեսզի հաջողությամբ կռվեն թշնամու դեմ: «Փրոֆեսորի խոսքերն խորին տպավորություն մը ըրին բոլորի վրա. մի քանի վայրկյան լռութենե վերջ՝ սկսվեցավ նվագածություն, և ոգելից ըմպելիներու զվարթացուցիչ ազդեցության տակ մինչև կես գիշեր ուրախությունով անցուցին» (*Տիգրան Մկունդ.* Ամիտայի արձագանքներ. Նիւ Եորք, 1950, էջ 182-183): Պետք է նկատել, որ բուլղար հազարավոր հեղափոխականներ աքսորվեցին ոչ միայն Դիարբեքիր, այլև Էրզրում, Մոսուլ, Կիպրոս և այլ քաղաքներ ու երկրամասեր:

Էջ 127

* 1860-1870-ական թթ. Դիարբեքիր էին աքսորվել բուլղարական ազատագրական շարժման այնպիսի ճանաչված գործիչներ, ինչպես Անգել Օբրետենովը, Գեորգի Միրկովիչը, Աթանաս Ուզունովը, Անաստաս Խինով-Պոպովը, Պյոտր Բերկովսկին, Կոստանտին Դոգանովը և ուրիշներ: Բուլղար հեղափոխականները Դիարբեքիր են աքսորվել երկու խոշոր խմբերով՝ 1862 թ. և 1874 թ., որոնց թիվը կազմում էր մի քանի հարյուր մարդ (տե՛ս *С. В. Овнанян.* Из истории армяно-болгарской дружбы,– ՊԲՀ, 1967, N 2-3, էջ 303-313):

Էջ 132

* Հալեպի անգլիական հյուպատոս լեյտենանտ Հ. Չըրմսայդը 1879 թ. մայիս-նոյեմբեր ամիսներին Մարաշից և Զեյթունից կանոնավորապես տեղեկագրեր է հղել Կ. Պոլսի անգլիական դեսպան Հ. Լայարդին՝ Զեյթունի ապստամբների, Պապիկ իշխանի և նրա համախոհների, Զեյթունի հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների վայրագությունների, Զեյթունում բանտարկված (Մարաշի բանտ) անմեղ հայերի ծանր կացության և այլնի մասին: 1879 թ. հունիսի 2-ի իր տեղեկագրում նա նշում է, որ 323 բանտարկյալներից 200-ը արդեն ազատվել են որպես ապօրինի ձերբակալվածներ, իսկ մյուսները դատի են սպասում (տե՛ս Correspondence Respecting the Commission Sent by the Porte in Inquire into the Condition of the Vilayet of Aleppo. London, 1880 (Turkey, N 1), p. 73). Անգլիական դիվանագիտության ճնշումների հետևանքով Զեյթունի կայմակամը որոշ քայլեր էր արել՝ հօգուտ անմեղ դատապարտված հայերի և առհասարակ, Չըրմսայդի տեղեկագրերում բավական ճիշտ է ներկայացվում թուրքերի ստեղծած անտանելի կացությունը Զեյթունում, որի պատճառով էլ հայերը հարկադրված են եղել զենքը ձեռքին դիմադրել բռնադատիչներին: Այսուհանդերձ, Չըրմսայդը ևս տուրք է տալիս անգլիական դիվանագիտության ավանդական հակառուսական քարոզչությանը, երբ փորձում է Զեյթունի ապստամբության մեջ տեսնել ռուսական միջամտության հետքերը: Ավելորդ չէ նշել, որ ի հաճույս թուրքական կառավարության, Չըրմսայդը ևս Զեյթունի ապստամբներին որակում է իբրև խռովարարների:

Էջ 134

* Աղասու ֆրանսերեն այս աշխատությունն առաջին անգամ լույս է տեսել 1897 թ. Ա. Չոպանյանի թարգմանությամբ: Հայերեն ձեռագիրը հեղինակը (1871-1941) վերանայել և ճշգրտել է 1938 թ., բայց այն հրապարակվել է միայն 1968 թ. Հաճնի Հայրենակցական միության նախաձեռնությամբ:

Էջ 136

* Պապիկ իշխանի և նրա զինակից, հայդուկ Քացախ Փանոսի մասին հետաքրքիր հուշեր, զրույցներ ու տեղեկություններ կան «Զեյթունի պատմագիրք» ծավալուն ժողովածուի մեջ (տե՛ս Զեյթունի պատմագիրք. Պուենոս Այրես, 1960, էջ 473-487):



Էջ 144

* Ի դեպ, նկատենք, որ Բայազետի պաշտպանության պատկերումը Րաֆֆու «Խենթում» հիմնականում համապատասխանում է պատմական իրողությանը: «Խենթում» գործող բժշկի, որի մարդասիրական կերպարը հմտորեն կերտել է Րաֆֆին, նախատիպն է Բագրատ Նավասարդյանը (1852-1934), որը ժամանակի ճանաչված հայ հասարակական գործիչներից մեկն էր, բարեգործ: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում նա իր մասնագիտական հմտություններն ու իմացությունը ի սպաս է դրել գաղթական ժողովրդին, որ և պատկերված է «Խենթում»: Անվճար բժշկական ծառայություն է կազմակերպել Թիֆլիսում՝ չքավոր հիվանդների համար (1880 թ.): Թիֆլիսում 1881 թ. հիմնել է Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը: Բ. Նավասարդյանը Կարինի «Պաշտպան հայրենյաց» ընկերության կազմակերպիչներից մեկն էր:

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Էջ 150

* Ռուսաստանի և եվրոպական տերությունների, մասնավորապես ռուս-անգլիական քաղաքական հակասությունները նոր ընթացք ստացան Սան-Ստեֆանոյի պայմանագրից հետո, որով Ռուսաստանը իր համար շահավետ դիրքեր էր ապահովում Թուրքիայում՝ մասնավորապես հնարավորություն ստանալով վերահսկել բարենորոգումների իրականացումը Արևմտյան Հայաստանում: Բեռլինի կոնգրեսից քիչ առաջ, 1878 թ. հունիսի 4-ին անգլիացիները թուրքերի հետ կնքեցին Կիպրոսի համաձայնագիրը, որով Անգլիան Թուրքիային խոստանում էր ապահովել Ալաշկերտի հովտի, Բայազետի և կից շրջանների պահպանվելը նրա տարածքներում, թուլացնել Ռուսաստանի դիրքերը Թուրքիայում՝ վերացնելով Արևմտահայաստանում բարենորոգումների գործը վերահսկելու նրա բացառիկ իրավունքը: Այդ համաձայնագրով Անգլիան հետամտելով Ռուսաստանի մեկուսացումը, ինքն էր ստանձնում Թուրքիայում քրիստոնյաների, այդ թվում և հայերի պաշտպանության գործը: Փոխարենը, Թուրքիան Անգլիային էր հանձնում միջերկրածովյա տարածքում ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Կիպրոս կղզին: Կիպրոսի համաձայնագիրը փաստորեն նախապատրաստեց Բեռլինի կոնգրեսի՝ Հայկական հարցին վերաբերող ոչ նպաստավոր որոշումները և նվազեցրեց ռուսական զենքի հաղթանակի արդյունքները Թուրքիայում:

## Էջ 152

* Բահրի բեյը հայտնի էր որպես ավազակ և ջարդարար: Սուլթան Աբդուլ Համիդը նրան 1880 թ. օգոստոսին Արևմտյան Հայաստան ուղարկեց իբր թե հայկական «բարենորոգումների» կիրառումը նախապատրաստելու համար: Սուլթանի այս ձեռնարկումը ամենուրեք զայրույթ առաջացրեց, որովհետև բոլորի համար պարզ էր, որ նա խաբում է և հետապնդում սադրիչ նպատակներ:

## Էջ 153

* Ըստ երևույթին, թերթը նկատի ունի զեյթունցիների 1879 թ. ապստամբությունը:

** «Փունջ» լրագիրը հայտնում էր, որ 1879 թ. Էրզրումում տեղի է ունեցել զինված ընդհարում քաղաքի հայ բնակիչների և նրանց հարստահարիչների միջև: 1879 թ. հուլիսի 14-ին թերթը այդ առթիվ գրում էր. «Կարինեն առ Բ. Դուռը քաշված հեռագրոց մեջ ալ «հայերը ապստամբեցան և զորաց դիմադրեցին» գրված է» («Փունջ», Կ. Պոլիս, 1879 թ. N 1390): Էրզրումի անցքերի մասին «Փունջի» տված այս կցկտուր տեղեկություններից բացի մեզ հայտնի չեն այլ տվյալներ:

## Էջ 154

* Ավելորդ չէ նշել այն, որ պարբերական մամուլի տված տեղեկությունների նկատմամբ իր ժամանակ որոշ կասկած հայտնվեց: Նույն «Մեղու Հայաստանի» թերթը, որ դեմ էր արևմտահայերի ազատագրական շարժմանը և թերագնահատում էր դրա նշանակությունը, անդրադառնալով Արևմտյան Հայաստանում կատարվող անցքերին, այն կարծիքը հայտնեց, թե հատկապես «Մշակում» հրապարակված հաղորդագրությունները, որ վերաբերում են արևմտահայերի 1880 թ. ազատագրական պայքարին, չափազանցված են: Սակայն, եթե նույնիսկ ընդունենք մեղվականների այս պնդումը, այնուամենայնիվ, մի բան անկասկած է, որ այդ թվականին Արևմտյան Հայաստանում, ինչպես կտեսնենք, առկա էին հակասուլթանական, ազատագրական բնույթ կրող մի շարք ելույթներ: Դա չէր ժխտում նաև ինքը՝ «Մեղու Հայաստանին» («Մեղու Հայաստանի», 1880, N 82):

## Էջ 163

* Ա. Թոխմախյանի մասին «Վէմը» գրում է. «Նա (*Թոխմախյանը* – Մ. Ն.) սկսած 1880 թվականից գործում էր հայ հեղափոխական անդրանիկ ընկերության կենտրոնական կոմիտեի անդամների հետ միասին: Այդ կոմիտեն կազմակերպվել է 1879 թվականին, Թիֆլիսում, 3 հոգուց բաղկացած (թվում է, թե սա այն կոմիտեն է, որի մասին հիշում է իր գրքում Քր. Միքայելյանը – խմբ.): Հետո, 1881 թվին ընկերների թիվը հասավ 9 հոգու: Նա 1880 թվականին հրատարակեց անդրանիկ հայ հեղափոխական տպագիր թռուցիկը՝ «Թռուցիկ թերթ» վերնագրով: Մի տարի հետո նա միացավ Մոսկվայի նորակազմ մյուս հեղափոխական ընկերության հետ՝ «Հայրենասերների միություն» անունը ընդունելով: Գործունեության կենտրոնն անցավ Մոսկվա և այնտեղ էլ հրատարակվում է... մի երկրորդ հեղափոխական թերթ «Ազատության ավետաբեր» անունով և թեք խաչագծով սուր ու հրացանի դրոշմով» («Վէմ», Փարիզ, ԺԶ, 1932, էջ 97-98):

** Գաբրիել Սունդուկյանի 1881 թ. հունվարի 16 թվակիր նամակից՝ ուղղված Բագրատ Նավասարդյանին, երևում է, որ դրամատուրգը մտերիմ է եղել նրան և մեծ հույսեր է կապել նրա հայրենասիրական գործունեության հետ (տե՛ս *Գաբրիել Սունդուկյան.* Երկերի լիակատար ժողովածու. հ. IV. Ե., 1961, էջ 369):

*** Աշոտ Հովհաննիսյանը գրում է, որ Կոմիտեի ղեկավար անդամների ընդհանուր թիվը կազմել է 9 մարդ (տե՛ս ԲԵՀ, 1968, N 1, էջ 20):

## Էջ 166

* Ցարական կառավարությունը 1880-1890-ական թթ. խիստ հետադիմական քաղաքականություն վարեց Հայկական հարցի նկատմամբ: Նա «չէր կամենում, որ Հայաստանը իր համար դառնա «երկրորդ Բուլղարիա», արգելակելով իր առաջ Փոքր Ասիայի սիրտը: Ցարիզմի երկյուղը կրկնապատկում էր, մանավանդ, այն մտահոգությունը, թե ազատագրված Արևմտահայաստանը կարող էր դեպի իրեն քաշել Ռուսաստանի գաղութային քաղաքականությանը դիմակայող և ազգային ինքնորոշման ու վերամիավորման ձգտող արևելահայ ժողովրդին» (*Աշ. Հովհաննիսյան.* Արծրունու և Րաֆֆու գաղափարական ներհակության ակունքը.– ԲԵՀ, 1968, N 1, էջ 78): Ցարիզմի հակահայկական քաղաքականությունը բացահայտ դարձավ, մասնավորապես, 1895-1896 թթ. երբ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրի պաշտոնը զբաղեցնում էր իշխան Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկին:

## Էջ 169

* Դրանից առաջ Էրզրումում գործում էր կրթական նպատակներ հետապնդող մի ընկերություն, որը կոչվում էր «Բարձր Հայքի ընկերություն»: Թուրքական ոստիկանությունը կասկածելով, թե այդ ընկերությունը քաղաքական բնույթ ունի, արգելեց նրա գործունեությունը:

## Էջ 170

* Այս կապակցությամբ «Մշակի» 1883 թ. N 57-ում տպագրված մի թղթակցության մեջ, որ գրված էր Տրապիզոնից, հարձակումներ էին կատարվում «Մասիսի» վրա: Անստորագիր թղթակիցը «Մասիսին» մեղադրում էր այն բանի մեջ, որ նա լուրեր չի տպագրում Կարինի մասին և աշխատում է գաղտնի ընկերության գոյությունը բացատրել որպես «մասնավորաց հակառակությանց և խռովությանց արդյունք» («Մշակ», 1883, N 57):

## Էջ 174

* Տիգրան Կերեքցյանը ևս ակտիվ մասնակցություն է ունեցել կազմակերպության աշխատանքներին (տե՛ս ԳԱԹ, ֆ. Բ. Նավասարդյանի, փ. II 97-99, III 9 ):

## Էջ 175

* Ամբաստանագրի այս մասի բովանդակությունը Ա. Արփիարյանը դեռ իր ժամանակ հրապարակեց «Մշակում» (տե՛ս «Մշակ», 1883, N 78):

## Էջ 178

* Իր զեկուցագրերում հյուպատոս Դեննետը պնդում էր, որ թուրքական իշխանություններին չհաջողվեց պարզել Էրզրումի կազմակերպության բոլոր կապերը և հայտնաբերել այդ կազմակերպության բոլոր ղեկավարներին ու անդամներին: «Մասիս» լրագիրը հայտնում էր, որ այս դեպքերի կապակցությամբ բանտարկվել են 17 մարդ («Մասիս», 1883, փետրվարի 26):

## Էջ 180

* 1860-ական թթ. ռուսական հեղափոխական շարժման մեջ ընդգրկվել էին Մոսկվայում, Պետերբուրգում և այլ քաղաքներում սովորող կովկասցի շատ ուսանողներ: 1861 թ. Պետերբուրգում բանտարկված հեղափոխական ուսանողների թվում կային ոչ քիչ վրացիներ ու հայեր: 1870-1880-ական թթ. «Զեմլյա ի վոլյա» ու «Նարոդնայա վոլյա» կազմակերպություններում, ի թիվս մյուս ժողովուրդների, ընդգրկված էին բազմաթիվ հայ մտավորականներ (տե՛ս *Մ. Ներսիսյան.* Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում. Ե., 1940):

** Ժանդարմական գործում Ս. Տեր-Գրիգորյանի մասին ասված է, որ նա գործուն մասնակցություն է ունեցել 1882 թ. Թիֆլիսում հիմնված գաղտնի խմբակի աշխատանքներին (տե՛ս РГИА. Департамент министерства юстиции. Второе уголовное отделение, д. N 11312, с. 56):

## Էջ 181

* Քր. Միքայելյանի այս հուշերի բնագիրը ռուսերեն է: Նրա հայերեն թարգմանությունը, որ զետեղված է «Հայրենիք» ամսագրի 1924 թ. համարներում, կատարված է ոչ բավարար մակարդակով:

## Էջ 183

* Րաֆֆու տվյալներով Թիֆլիսում գտնվում էին մինչև 5000 հայ մշակներ (տե՛ս *Րաֆֆի.* Երկերի ժողովածու. հ. 9. Ե., 1958, էջ 480):



## Էջ 186

* «Հայրենասերների միության» այս թռուցիկի հայերեն բնագիրը պահվում է Մոսկվայի կենտրոնական պատմական արխիվում (ЦИАМ, ф. Департамент полиции, 3-е делопроизводство, д. 172, 1883). Այն խմորատիպ է, բաղկացած 4 էջից, մաշված է, կարդացվում է դժվարությամբ: Թռուցիկին կցված է Երևանի Նահանգական ժանդարմական վարչության պետի գրությունը՝ ուղղված ոստիկանության դեպարտամենտին: 1883 թ. մարտին կազմված այդ զեկուցագրում ասված է, որ թռուցիկը գտնվել է Երևանի «Պսակ» թերթի խմբագիր Վասակ Պապաջանի մոտ: Մոսկվայի կենտրոնական պատմական արխիվում է պահվում թռուցիկի ռուսերեն թարգմանությունը, որ կատարել է տիտուլավոր խորհրդական Տեր-Սարկիսյանցը: Այդ թարգմանության մի պատճենը գտնվում է նաև ՀՀ ՆՊ ԿՊ արխիվում: Հավանաբար, այս թռուցիկի մասին էր խոսում Երևանի նահանգական ժանդարմական վարչության պետը, երբ 1883 թ. մարտի 9-ին զեկուցում էր Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր պետ, իշխան Դոնդուկով-Կորսակովին. «Սույն թվականի փետրվարի վերջերին ինձ լուր հասավ, որ Երևան քաղաքում հայերեն լեզվով թռուցիկներ են երևացել, որի պատճառով իմ կողմից կարգադրություն եղավ հայտնաբերել դրանք. մի օրինակ ինձ հաջողվեց ձեռք բերել գաղտնի ճանապարհով: Ըստ լուրերի, հիշյալ թռուցիկը ստացվել է Երևանում՝ Մոսկվայի փոստի միջոցով, բայց թե քանի՞ այդպիսի թռուցիկ և ում կողմից է ստացված, դեռևս պարզ չէ» (տե՛ս ЦИА НИ РА, Канцелария нач. главн. управления главнокомандующего гражданской частью на Кавказе, д. 552):

## Էջ 188

* Վարդան (Ալեքսանդր) Գոլոշյանի մասին մեր պարբերական մամուլի էջերում տպագրված է հարուստ նյութ (տե՛ս, օրինակ, «Մշակ», «Հայաստան», «Աղբիւր», «Նոր դար», «Արձագանք», «Արմենիա» թերթերի 1889 թ. համարները, «Հորիզոնի» 1913 և 1916 թթ., «Նորքի» 1924 թ. նյութերը և այլն: Դեռևս 1905 թ. լույս տեսավ *Ս. Նիրվանյանի* «Վ. Գոլոշեան և Հ. Ագրիպասեան», իսկ 1920 թ. *Լեոյի* «Հայ հերոսներ» գրքույկները): Գոլոշյանի մասին արխիվային նյութեր են պահպանվում ՀՀ ՀՔԿՓ ՊԿ արխիվում (ֆոնդ 3, գործ 12):

## Էջ 191

* Հրդեհի հետևանքով նյութական խիստ ծանր վիճակում գտնվող զեյթունցիներին օգնելու համար հայության շատ կենտրոններում տեղի ունեցավ հանգանակություն: Այդ մասին հարուստ տեղեկություններ կան ժամանակի հայ մամուլում:

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

### Էջ 199

* Ինչպես տեսնում ենք, ցարական չինովնիկը աղոտ գաղափար է ունեցել Մ. Նալբանդյանի մասին, նա նույնիսկ շփոթում է Մ. Նալբանդյանի աքսորվելու տասնամյակը:

** Այս փաստաթուղթը հրապարակվել է 1940 թ. (տե՛ս Գրական ժառանգություն, Ա գիրք, Ե., 1940, էջ 47):

### Էջ 200

* Մ. Նալբանդյանը «Մեղուի» մասին գրում էր, որ նա հանդիսանում է «կենդանի ժողովրդի մաքուր բերանը, ազգի ցավերի և ուրախության ճշմարտապես հայտարարը» (*Մ. Նալբանդյան.* Երկերի լիակատար ժողովածու. հ. 3, էջ 107):

### Էջ 203

* Մ. Խրիմյանը իր պատրիարքության գլխավոր նպատակներից մեկը դարձրեց սահմանադրությունը Արևմտահայաստանում գործադրելու գաղափարը: Դրան էր հետամտում նրա պատրիարքության ժամանակ առաջ քաշված սահմանադրական հրահանգը, որի միջոցով Խրիմյանը փորձում էր արևմտահայ գավառներում ստեղծել կամ կազմակերպված հունի մեջ դնել գավառական վարչությունները, դրանց գործունեությամբ ինչ-որ չափով դիմակայել Արևմտահայաստանում սաստկացող հարստահարություններին: Այս մտայնության հետ էր կապվում Խրիմյանի պատրիարքության օրով կազմված Գավառական հարստահարությունների տեղեկագիրը (տե՛ս *Լ. Չորմիսեան.* Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան. հ. Ա, Բեյրութ, 1972, էջ 238-239: *Ա. Չօպանեան.* Խրիմեան Հայրիկ. Փարիզ, 1925, էջ 50-52: *Աստմ.* Ազգային սահմանադրութիւն. Կ. Պոլիս, 1914, էջ 68 և այլն): 1880-ական թթ. Հայկական հարցի նկատմամբ տերությունների որդեգրած հանցավոր քաղաքականության պայմաններում Խրիմյանը հարկադրված էր չափավորել իր եռանդը ցուցաբերել զգուշավորություն և խոհեմություն: Այդ իրողության դրսևորումներն էին նրա ակնկալիքները՝ կապված հայերի հանդեպ թուրքական կառավարության քաղաքականության փոփոխությունների հետ, զգաստության կոչերը. Խրիմյանը հակաթուրքական բացահայտ ելույթներից նախընտրելի էր համարում լուսավորական խաղաղ գործունեությունը, որ և առիթ տվեց նրա և Վանի արմատականորեն տրամադրված երիտասարդության տարաձայնություններին:

** Ավելորդ չէ հիշատակել, որ գրքույկի Թիֆլիսի հրատարակությունը գլուխ է բերվել մեր անվանի դերասան Մ. Ամերիկյանի ջանքերով, իսկ բաժանորդագրությունը կազմակերպել է Պ. Պռոշյանը: Վանի 1876 թ. հրդեհի մասին տես «Մշակ», 1877, N 5, 13:



### Էջ 222

* 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանում և դրանից հետո Ն. Վարժապետյանը փոխեց իր երբեմնի բարեհպատակային կեցվածքը, որ վկայում է Թուրքիայում արևմտահայերի կացության բարվոքման գործում իր պատրանքներից հրաժարվելու մասին: Արևմտահայերի դատի պաշտպանությունը նա սկսեց ակնկալել մերթ արևմտյան և մերթ Ռուսաստանի հայանպաստ արտաքին քաղաքականությունից և գործնական ջանքերի դիմեց (Սան-Ստեֆանոյի դաշնագիր, Բեռլինի կոնգրես) Հայկական հարցը միջազգայնացնելու ուղղությամբ: 1877-1880 թթ. հարկադրված հաշվի առնելով Թուրքիայի արտաքին քաղաքական հեղհեղուկ վիճակը, Աբդուլ Համիդը առերես հանդուրժում է պատրիարքի՝ օտար ուժերին ապավինելու հանդգնությունը:

### Էջ 227

* Խոսքը վերաբերում է 1863-1907 թթ. Կ. Պոլսում հրատարակվող՝ Հ. Ալաճաճյանի «Փունջ» շաբաթաթերթին:

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

### Էջ 236

* Մատթեոս Մամուրյանի լիբերալ հայացքներն ավելի խորացան Բեռլինի վեհաժողովից հետո՝ 1880-1890-ական թթ.: Այդ ժամանակաշրջանում նա վերջնականապես հարեց հասարակության զարգացման աստիճանական (էվոլյուցիոն) տեսության կողմնակիցներին (տե՛ս «Արեւելեան մամուլ» 1886, հունվար, էջ 5-8, 1885, հունվար, էջ 10-17, 17-23): Մ. Մամուրյանի, Գ. Կոստանդյանի, Գր. Չիլինկիրյանի և 1860-ական թթ. դեմոկրատական շարժման մյուս ներկայացուցիչների սոցիալ-տնտեսական ու քաղաքական հայացքները հանգամանալի քննարկել է Հ. Ղազարյանը (տե՛ս *Г. М. Казарян.* Армянское общественно-политическое движение в 50-60-х годах XIX века и Россия. Е., 1979):

### Էջ 237

* Կովկասահայ բուրժուազիան, որ ուժեղ դիրքեր էր գրավել Անդրկովկասի առևտրի ու արդյունաբերության մեջ, չզբաղվեց Արևմտահայաստանի հարցերով, որի համար էլ խիստ քննադատության ենթարկվեց հայրենասեր գրողների ու քաղաքական գործիչների կողմից: Զարմանալի է, սակայն, որ չնայած այս ակնհատ իրողությանը, մի ժամանակ բավական տարածված էր բոլորովին անհիմն այն տեսակետը, թե արևմտահայերի ազատագրական շարժումը գլխավորել է այդ բուրժուազիան: Ճիշտ է, ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ խոշոր բուրժուազիայի ու մեծահարուստների որոշ ներկայացուցիչներ երբեմն հանդես էին գալիս որպես «ազգային բարեգործներ»՝ տրամադրելով նյութական միջոցներ զանազան մշակութային-կրթական ու բարե-

գործական ընկերություններին, բայց սրանով էլ սահմանափակվում էր նրանց «ազգասիրական» գործունեությունը: Իրավացի էր Դավիթ Անանունը, երբ գրում էր, թե հայ խոշոր բուրժուազիան քաղաքականորեն երկչոտ էր, ազգայնորեն՝ դիմազուրկ (տե՛ս *Դ. Անանուն.* Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900). հ. 2, Էջմիածին, 1922, էջ 183):

## Էջ 238

* Քննադատելով արևմտահայերի ազատագրական պայքարի կողմնակից Գ. Արծրունուն և նրա ռուսահայ համախոհներին, «Մեղու Հայաստանի» ու «Փորձի» շուրջ համախմբված ազգային պահպանողականները անխոհեմ, վնասակար ու վտանգավոր էին համարում քաղաքական, ապստամբական պայքար ծավալել Արևմտյան Հայաստանում՝ ուղղված օսմանյան տիրապետության դեմ: Այդպիսի գործելակերպը, պնդում էին նրանք, կարող է խիստ ծանր փորձությունների առաջ կանգնեցնել արևմտահայ ժողովրդին (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1880, N 71): «Փորձում» երբեմն հրապարակվել են նյութեր, որոնցում պաշտպանվել են արևմտահայ ազատագրական շարժման գաղափարները: Քաղաքական պայքարի կարևորության մասին գրել է, մասնավորապես, մեր նշանավոր պատմաբան Ստ. Պալասանյանը, բայց այդ չէր փոխում ամսագրի հիմնական ուղղությունը, որը, ինչպես տեսանք, պահպանողական էր:

## Էջ 245

* 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Բալկանյան ռազմաճակատում բազմաթիվ բուլղարահայեր կռվում էին ռուսական բանակում և կամ ամեն կերպ նպաստում նրա առաջխաղացմանը, անգամ այն բուլղարահայերը, որոնք մինչ այդ գտնվել էին թուրքական վարչական կամ ռազմական ծառայության մեջ: Նրանց դերն ակնառու էր Պլովդիվի, Վառնայի, Ռուսեի և այլ քաղաքների համար մղած մարտերում (տե՛ս *Զ. Մ. Ղասաբյան.* Էջեր հայ-բուլղարական կապերի պատմությունից,– ՊԲՀ, 1982, N 4, էջ 84-93):

## Էջ 252

* Վանում ռազմական փոխհյուպատոս Կ. Կամսարականը իր տեղեկագրում նշում էր, որ «Տեղական քրիստոնյաները, ինչպես հայերը, նույն կերպ և նեստորականները, հենվելով հանրահայտ բազմաթիվ փաստերի վրա, բողոքում են, որ թուրքական կառավարությունը նախապես և համառորեն ձգտում է Անատոլիայում ճնշել քրիստոնեական տարրը: Այդպիսի փորձը արդեն բանակցությունների տեղիք է տվել Վանի վիլայեթի նեստորականների առաջնորդ Մար շիմոնի և վանեցի հայերի ներկայացուցիչների միջև: Նեստորականների պատրիարքը կարևորում է նեստորականների և հայերի անհապաղ միավորման անհրաժեշտությունը՝ հարկ եղած դեպքում



թշնամուն համերաշխ հարված տալու համար» (РГВИА, ф. ВУА, д. 78735, л. 37):

** «Իվերիան» հիմնադրել է վրաց ականավոր գրող Իլյա Ճավճավաձեն՝ 1877 թ.: Մինչև 1886 թ. լույս էր տեսնում որպես ամսագիր, իսկ այնուհետև՝ որպես օրաթերթ:

## Էջ 253

* «Դրոեբան» («Ժամանակ») հիմնվել է 1866 թ. և փակվել է ցարական կառավարության կողմից՝ 1885 թ.: Նրա խմբագիրները տարբեր ժամանակ եղել են Գ. Ծերեթելին, Ս. Մեսխին, Կ. Լորդքիփանիձեն, Ի. Ճավճավաձեն և Ի. Մաչաբելին:

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

## Էջ 268

* Ղրիմի պատերազմի տարիներին անգլիական դիվանագիտությունը հրահրում էր Պարսկաստանին հարձակվելու Անդրկովկասի վրա (АКАК. Т. X, 1885, с. 745): Թավրիզի անգլիական հյուպատոսը դիմեց ամեն մի միջոցի, որպեսզի Ռուսաստանի դեմ հանի քրդական ցեղերին: Սակայն այդ սադրիչ փորձն անհաջող անցավ ինչպես Թուրքիայում, այնպես էլ Պարսկաստանում (*П. И. Аверьянов.* Курды в войнах России с Персией и Турцией, с. 83):

## Էջ 269

* Անգլիական դեսպանն իր թշնամական վերաբերմունքը արևմտահայերի նկատմամբ հրապարակայնորեն արտահայտեց դեռևս 1860 թ. (տե՛ս «Մեղու», 1860, հուլիս 20):

## Էջ 273

* 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանից սկսած և վերջացրած 1915 թ. արևմտահայերի ցեղասպանության փաստով, հայ ազատագրական շարժման հանդեպ Անգլիայի թշնամական գործողությունները և դրանց աղետալի ճակատագրական հետևանքները սպառիչ կամ գրեթե սպառիչ կերպով խոստովանում է անգլիական քաղաքական խոշոր գործիչներից մեկը՝ Լլոյդ Ջորջը: Անգլո-ռուսական հակամարտության հետևանքով Թուրքիայից ռուսների հեռանալը 1878 թ. նա համարում է կործանարար աղետ արևմտահայության համար, որի հետևանքով Հայաստանը դարձավ Թուրքիայում անգլիական քաղաքականության զոհը: «Բրիտանական կառավարության քաղաքականությունը,– գրում է Լլոյդ Ջորջը,– ճակատագրական անխուսափելիությամբ հասցրեց 1895-97 և 1909 թվականների սոսկալի սպանդներին և 1915 թ. սահմռկեցուցիչ կոտորածներին: Նույնիսկ թուրքական բռնակալության պատմության մեջ նմանը չունեցող այդ չարագործությունների պատճառով Թուրքիայում հայ ազգաբնակչության թվաքանակը կրճատվեց ավելի քան

մեկ միլիոն մարդով» (*Ллойд Джордж.* Правда о мирных договорах. Т. 2, М., 1957, с. 390)։ Անգլիական պետական գործիչը հարկ էր համարում եզրակացնել, որ հենց անգլիական քաղաքականությունն է հնարավորություն տվել թուրքերին՝ կատարելու այդ հանցագործությունները։ Ինչ վերաբերում է Լլոյդ Ջորջի՝ նշված խոստովանությունից բխող սխալը հետագայում ուղղելու բարոյական պատրաստակամությանը, որ ուներ Անգլիան հայերի հանդեպ, ապա, ինչպես ցույց տվեց պատմությունը, դրանք մնացին սոսկ որպես գեղեցիկ խոսքեր։ Դրանք հավուր պատշաճի ասված խոսքեր էին՝ գրվելուց հետո մոռացության մատնվելու համար։

** Անգլիական մի շարք պատմաբաններ, ինչպես, օրինակ, Գ. Հենդերսոնը Ռ. Բուլարդը և ուրիշներ աշխատում են զարգացնել այն թեզը, թե Անգլիան Արևելքում և մասնավորապես Մերձավոր Արևելքում, վարել է պաշտպանողական քաղաքականություն, ձգտել է պատնեշ կանգնեցնել Ռուսաստանի կողմից «Հնդկաստանին սպառնացող վտանգին» և որ Կովկասի նկատմամբ ոչ մի ագրեսիվ նպատակ չի ունեցել (*G. Henderson.* Crimean War Diplomacy and other Historical Essays. Glasgow, 1947)։ Որոշ հեղինակներ անգամ պնդում են, որ XIX դարի առաջին երեք տասնամյակների ընթացքում տեղի ունեցած ռուս-պարսկական պատերազմների ժամանակ, Անգլիան վարել է «խաղաղասիրական քաղաքականություն», աշխատել է հաշտեցնել Պարսկաստանը Ռուսաստանի հետ։ Այս տեսակետը խիստ ընդգծված կերպով արտահայտել է հատկապես անգլիական դիվանագետ Ռ. Բուլարդը (*R. Bullard.* Britain and the Middle East from the Earliest Time to 1950. New York, 1951)։ Անգլիական ռեակցիոն պատմաբանների այս պնդումները բացարձակ կեղծիք են և ոչ մի առնչություն չունեն իրականության հետ։Պատմական փաստերի բացարձակ կեղծիք են կատարում նաև ամերիկյան որոշ պատմաբաններ։ Նրանցից մեկը՝ օրինակ, Ե. Սպեյսերը (*E. A. Speiser.* The United States and the Near East. 1950) իր «ուսումնասիրություններում» փորձում է ցույց տալ, որ իբր Ամերիկայի Միացյալ Նահանգները «հովանավորող ու բարյացակամ» քաղաքականություն են վարել հայ ժողովրդի նկատմամբ։

*** Իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր աշխատության մեջ Նալբանդյանը ցույց տվեց, թե ինչպես «քաղաքակրթություն տարածելու» կեղծ նշանաբանի տակ անգլիական և եվրոպական մյուս պետությունները իրականացնում են իրենց գաղութային նպատակները, թե ինչպես նրանք հանդես են գալիս ժողովուրդների ազատագրական շարժումների դեմ։ Նալբանդյանը բուռն ատելությամբ է գրել անգլիական միսիոներների մասին, որոնք դավեր էին լարում հայ ժողովրդի դեմ և փորձում Արևմտյան Հայաստանը, ինչպես և ամբողջ Թուրքիան դարձնել իրենց գաղութներից մեկը։

## Էջ 278

* 1820-1830-ական թթ. միսիոներներ էին գործում (ամերիկյան «Bord» ընկերությունը) Ուրմիայում, Զմյուռնիայում, Էրզրումում, Տրապիզոնում, Գա-



վառում (տե՛ս AKAK. Т. XII, Тифлис, 1904, с. 583-584)։ Հայ առաջադիմական հասարակական մտքի ներկայացուցիչները, սակայն, միանշանակ գնահատական չեն տվել միսիոներների գործունեությանը։ Նրանց դավանական քարոզչության հետևում նկատելով ազգի միասնությունը պառակտելու իրական վտանգ և չդադարելով պայքարել այդ քարոզչության դեմ, նրանք նշել և գնահատել են նաև միսիոներների գործունեության որոշ դրական կողմերը, որ առանձնապես ի հայտ եկան 1890-ական թթ. կոտորածների շրջանում և դրանից հետո, երբ գավառներում զգալի դարձավ նրանց մարդասիրական օգնությունը թուրքական պետական քաղաքականության զոհը դարձած հայերին։ Այս ժամանակաշրջանից հայտնի են ազնիվ, ժողովրդին օգնող միսիոներներ, որոնք հավատարիմ էին մնում հոգևորականի բարոյական կոչմանը (տե՛ս օրինակ՝ «Արեւելեան մամուլ», 1897, հուլիսի 1, էջ 468-471, հուլիսի 15, էջ 499-502, 1898, հուլիսի 15, էջ 558-560)։ «Արեւելեան մամուլը» առանձնացնում էր, ի դեպ, ոչ միայն գերմանացի միսիոներների զուտ կրոնական, այլև ամերիկուհի հայասերներ, օրիորդներ Ֆրազերի և Գլիսնի, տիկ. Նայվընի և այլոց մարդասիրական գործունեությունը (նույն տեղում, 1897, 15 փետրվարի, էջ 134-136, 15 օգոստոսի, էջ 500-502)։Որոշ միսիոներներ, հաղթահարելով իրենց գործունեության հետ կապված քաղաքական շահախնդրությունները, բավական ճշմարտացի են պատկերել Արևմտահայաստանի կացությունը, ինչպես ամերիկյան միսիոներներ Ֆ. Դ. Գրինը իր «Հայկական ճգնաժամը և թուրքերի տիրապետությունը» աշխատության մեջ, որը ներկայացնում է Սասունի 1894 թ. կոտորածները (տե՛ս Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896). Միսիոներների մասին տե՛ս նաև *Мустафа ал Халиди Омар Фарух.* Миссионеры и империализм в арабских странах. М., 1961.; *Х. Ф. Б. Линч.* Армения. Путевые очерки и этюды. Т. П., Тифлис, 1910, с. 556-590; *L. Apree.* A Century of Armenian Protestantism (1846-1946). New York, 1946. *Գաբիկեան Խ.* Գ. Հայկական հարցը Արեւելեան հարցի մէջ (1860-1880). Պեյրութ, 1962։ *Լ. Բայրամյան.* Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում. Ե., 1982։ *Ա. Ալպօյաճեան.* Պատմութիւն Եւդոկիոյ հայոց. Գահիրէ, 1952։

## Էջ 281

* Մ. Նալբանդյանը նկատի ունի «Մեղվի» այս հեղինակի «Նկարագիր միսիոներական երեսնամեայ ընթացից ի Տաճկաստան և տարաբախտութիւն հայ ժողովրդեան» ծավալուն հոդվածը («Մեղու», 1862, N 176-178, 1863, N 183, 219-221, 223, 1864, N 226)։

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

### Էջ 288

* Իվան Կարապետը մեծ վաստակ ունի XVIII դարի 20-ական թթ. ռուս-հայկական հարաբերությունների զարգացման և զինակցության գործում՝ 1723-1727 թթ. հանդես գալով իբրև Ռուսաստանի դեսպան՝ Ղարաբաղի մելիքների մոտ: Ռուսական կառավարությանը Ղարաբաղի գործերի մասին տեղյակ պահելուց, ինչպես և ժողովրդի ազատագրական ձգտումներն ու ռուսական կողմնորոշման տրամադրությունները կազմակերպված հուն ուղղելու գործունեությունից բացի, Իվան Կարապետը հաշտեցնում էր գժտված հայ մելիքներին, կարգավորում Ղարաբաղի հայեր հարաբերությունները Գանձակի մահմեդականների հետ, կոչ անելով ընդունել ռուսական հովանավորությունը: Պատմական վավերագրերի մեջ ի հայտ է գալիս այս եռանդուն գործչի կերպարը, որը մեծ ազդեցություն ուներ Ղարաբաղի հայ բնակչության, մելիքների ու Եսայի կաթողիկոսի վրա՝ այդ ազդեցությունը ծառայեցնելով իր առաքելության նպատակին: Պակաս ուշագրավ չէ Իվան Կարապետի գործունեությունը օսմանյան թուրքերի արշավանքի դեմ Ղարաբաղի մելիքների զինված պայքարը կազմակերպելու և Ռուսաստանի ռազմական օգնությանը դիմելու խնդրում (Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов. Т. II, ч. II. Под ред. А. Иоаннисяна, Е., 1967, с. 39-43, 56, 71-72, 199-200, 290-291 և այլն):

** Ղարաբաղի մելիքների ղեկավարությամբ 1720-ական թթ. ազատագրական պայքարը և նրանց ռուսական կողմնորոշման փաստն անտեսվում է ամերիկյան որոշ պատմաբանների կողմից: Ամերիկահայ պատմաբաններից ոչ անհայտ Ռ. Սյունին, մասնավորապես չզբաղվելով հարցի ուսումնասիրությամբ, նշում է, թե իբր հայ խորհրդային պատմաբանները չարարկել են Ղարաբաղի մելիքների ռուսական կողմնորոշումը, և որ իբր, այդ կողմնորոշումը ոչ միայն տևական չի եղել, այլև հատուկ չի եղել հայերի մեծամասնությանը: Ինչպես տեսանք, պատմական փաստերը հակառակն են ապացուցում, ուստի Ռ. Սյունիի և նրա համախոհների այս կարգի դատողությունները սնամեջ ազդարարություններից բացի, այլ բան չեն ներկայացնում (*Ա. Այվազյան. Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ*. Ե., 1998, էջ 73-75 և այլ):

### Էջ 300

* Ելիզավետպոլի նահանգի փոխարքայի գրասենյակի 1910 թ. հուլիսի 1-ի մի գրության մեջ Ս. Կուկունյանը, ի թիվս այլ գործիչների, բնութագրվում է իբրև «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութեան Բաքուի կօմիտէի ինտելիգենտ, ակտիւ եւ խորապէս գիտակից գործիչ», (ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 609, թ. 1-2): Պահպանվել է Կուկունյանի՝ երկրորդ անգամ կալանավորվելուց հետո Կովկասի փոխարքայի գրասենյակի 1910 թ. N 971 գրությունը՝ Ս. Կուկունյանին և Նուխու գավառի, Նիժ գյուղի նրա մի քանի համագյուղացիներին 5 տարով Կովկասից արտաքսելու վերաբերյալ, իբրև անձանց, որոնք «մերկացվել են Դաշնակցություն կուսակցությանը պատկանելու մեջ» (նույն տեղում, թ. 14):Ս. Կուկունյանի արշավանքի, նրա դատավարության և հետագա գործունեության մասին տե՛ս *Ծերունի (Ստ. Ստեփանեան). Կուկունեան խմբի արշաւանքը*: Կուկունեան խմբի ամբաստանագիրը.- Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան. հ. 1. Բոստոն, 1934, էջ 10-68: *Արամայիս (Տէր-Դանիէլեան)*. Սարգիս Կուկունեան. Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան հ. 2, Բոստոն, 1938, էջ 5-25: Տե՛ս նաև Կուկունյանի խմբի արշավանքը. Երևան, 1992:



## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

### Էջ 307

* Թուրքամետ պատմագրությունը ամեն գնով ձգտում է հիմնավորել օսմանյան Թուրքիայի նվաճողական քաղաքականությունը՝ սկսած Բյուզանդիայի և նրա մայրաքաղաքի զավթումից և վերջացրած ոչ մահմեդական և արաբական երկրների գրավումով և նրանց ժողովուրդներին անագորույն ճնշումների ենթարկելու իրողությամբ: Օսմանյան Թուրքիայի նկատմամբ իրենց ակնածանքը այդ հեղինակները դրսևորում են ամբողջովին կեղծարարական մեթոդներով՝ սրբագրելով պատմական դեպքերն ու դեմքերի գործողությունները, փաստերը հարմարեցնելով իրենց ցանկալի մեկնաբանություններին, ինչպես և պատրաստի եզրակացություններին: XIX դարի թուրքամետ պատմագրության ներկայացուցիչներից Ա. Դեյսմանը արյունռուշտ Մեհմեդ 2-րդին պատկերում է լուսավորյալ ինքնակալի, արվեստների և գիտության հովանավորի լուսապսակով և առհասարակ, թուրքերին սիրաշահելով, հանդես է գալիս որպես ժամանակի Գերմանիայի՝ Մերձավոր ու Միջին Արևելքում իմպերիալիստական ձգտումները հիմնավորող քաղաքականացված պատմաբան (տե՛ս *A. Deissman*. Forschungen und Funde im Serai. Berlin-Leipzig, 1933): Նույն կերպ, օսմանյան Թուրքիայի լծի տակ հեծող ժողովուրդների համակերպվելու, այդ լուծն անմռունչ կրելու քարոզչությունն է աչքի զարնում ֆրանսիացի հեղինակ Մ. Ուբիչինիի աշխատության մեջ (*M. Ubicini*. Chronique du règne de Mahomet II par Critobule d'Imbros. Paris, 1871): Այս և եվրոպական այլ թուրքամետ հեղինակների քննադատությունը տե՛ս *З. В. Удальцова*. Предательская политика феодальной знати Византии в период турецкого завоевания.– Византийский временник, VII. 1953, с. 93-121): Ի դեպ, և Ա. Դեյսմանը, և Մ. Ուբիչինին բարձր են գնահատում ռենեգատ հույն հեղինակ, թուրքամետ Կրիտովուլոսին, որը փառաբանում է հույների ոխերիմ թշնամի Մեհմեդ II-ին և նրա նվաճումները (տե՛ս *Critovoulos*. History of the Mahomet the Conqueror. Princeton, 1954: Աշխատությունը առաջին անգամ հրատարակել է Կ. Մյուլլերը՝ *K. Müller*. Fragmenta Historiorum Graecorum. T. V, 1870): Առհասարակ, Կրիտովուլոսը ներշնչանքի անսպառ աղբյուր է թուրքամետ պատմագրության հա-

մար և իր երկով ցուցադրում է այն իրողությունը, որ օսմանյան Թուրքիայի նվաճողական քաղաքականության սկզբնավորման հետ միաժամանակ ի հայտ է եկել այդ նվաճումները հիմնավորող և դրանց հետագա ծավալումը խրախուսող կողմնակալ պատմագրությունը:

## Էջ 317

* Իր «Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի» աշխատության մեջ Աբրահամ Երևանցին նկարագրում է, թե Երևանի պաշտպանները ինչպիսի խիզախությամբ էին հետ մղում հարձակվողների գրոհները. «Շատ բազում օսմանցի սրով անցան, ոչ կարեց օսմանցին մտանել քաղաքն: Օսմանցին փոքրացյավ, Ափդուլայ փաշէն դրկեց Բեյլայզիղա ԼԵՌ (35000) քուրդ եկավ, նրանք էլ ոչ կարեցան մտնել քաղաքի մէջն»,– գրում է նա (Աբրահամ Երևանցի. Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի. Վենետիկ, 1977, էջ 25-26): Նույն՝ 1724 թ. Երևանի հայերի հաջող կռիվներին անդրադառնալով, Աբրահամ Երևանցին նշում է մի այլ հերոսական դրվագ. «Օրն է երկուշաբթի, Աստուծոյ ողորմութիւն հասավ, յախդվեցավ օսմանցին, ՋՌ (6000) օսմանցին անցավ սրով, ՌԳՃ (1300) քրիստոնիցն անցավ սրով: Օսմանցին փախավ, անցավ ջուրն Զանգու, գնաց իւրեանց եօթեվանը» (նշվ. աշխ., էջ 29-30): Կ. Պոլսի ռուսական դեսպան Իվան Նեպլյուևի զեկուցագրերից երևում է, որ Երևանի 1724 թ. պաշտպանությանը «մասնակցել են նաև Կախեթի թագավոր Կոնստանտին II ենթակա վրացական զինվորական ուժերը» (*Վ. Մ. Մարտիրոսյան.* Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թ. պաշտպանությունը.– ՊԲՀ, 1965, N 2, էջ 189): Երևանի պաշտպանությանը մասնակցել է նաև քաղաքի պարսկական կայազորը: Պարսիկները այդ ժամանակ պատերազմի մեջ էին թուրքերի հետ:

** Այդ հերոսական մարտերի գունեղ նկարագիրը հանգամանորեն տրված է շարժման մասնակիցներից և ղեկավարներից մեկի՝ Ստեփաննոս Շահումյանի աշխատության մեջ (Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին..., Վաղարշապատ, 1871): Անդրադառնալով Մեղրիի հայ պաշտպանների ռազմական ակտիվ գործողություններին, նա գրում է. «Այլ մինչչև էին հասեալ սոքա *(թուրքերը – Մ. Ն.)* ի Մեղրի, քաջ և արի զօրքն մեղրեցւոց գործ քաջութեան ի նմին գիշերի գործեցին. զի անցեալք յայնկոյս գետոյն, յեղակարծումն ժամանակի ի մէջ բանակի թշնամեացն յարձակէին, և զբազումս ի նոցանէ ի սուր սուսերի սատակէին... ի յՕրդուվար քաղաք ի փախուստ արկանէին» (նշվ. աշխ., էջ 31-32): Օսմանյան զորքի թվաշատությանը և ամբարտավանությանը Դավիթ Բեկն ու նրա զինակիցները հակադրեցին իրենց անձնազոհությունը, տեղանքի հիանալի իմացությունը և ռազմական հնարամտությունը: Օսմանյան զորքը բառացիորեն մաշվում էր հայերի անակնկալ, հաճախ՝ գիշերային հարձակումների հետևանքով: Նկարագրելով 1724 թ. այդպիսի մարտերից մեկը, հեղինակը գրում է. «Ապա յետ այսորիկ իբրև սակաւ ինչ ժամանակ ի վերայ անցանէր, ասպատակիչ փաշայն օսմանցւոց բազում զօրօք դիմէր գայր և ի Բէխ



կոչեցեալ գիւղն բանակէր... Այլ զօրականքն Դաւթի ի գիշերի միում ի վերայ հասին նոցա, հարին կոտորեցին զբազումս ի նոցանէ և զփաշան հալածական արարին» (նշվ. աշխ., էջ 57):

Դավիթ Բեկի մահվանից հետո նրա զինակիցները շարունակեցին պայքարը թուրքական նվաճողների դեմ: Ընդհուպ մինչև շարժման վախճանը: Մխիթարը, որ Դավիթ Բեկից հետո փաստորեն գլխավորում էր հայերի ռազմական գործողությունները, քանիցս պարտության մատնեց թշնամու զորքերին: «Զզորսն օսմանցւոց խորտակէր, և առնոյր զվրէժ ի նոցանէ զբազում ամուրս և զքաղաքս ի նոցանէ թափէր, ապա երթայր զՕրդուվար քաղաք պաշարել և իբրև զբռամբ աճէր զայն, ի նոցանէ զամենեսեան ի սուր սուսերի սատակէր»,- գրում է հեղինակը (նշվ. աշխ., էջ 71):

## Էջ 318

* Ուշագրավ է, որ Ա. Վ. Սուվորովի արխիվային նյութերում հետաքրքիր տվյալներ են պահպանվել Ղարաբաղի հայ մելիքների և Անդրկովկասի խաների հետ նրանց փոխհարաբերությունների վերաբերյալ: Այսպես, մելիք Ադամի և մելիք Հովսեփի մասին ասված է, որ նրանք կարող են «հավաքել, ամեն մեկը 1000 մարդ՝ հետիոտն, այդ թվում և մի մասի կամ մեկ տասներորդի չափով՝ հեծելազոր: Թեև նրանք Փանահ խանին չեն համակրում, բայց բավական կախվածության մեջ են» (Архив АН России, ф. 99, оп. 2, д. 13, с. 67-68). 1780-ական սկզբի որոշ գրառումներում որոնք վերաբերում են Ղարաբաղի մելիքներին, կան Ա. Վ. Սուվորովի ձեռքով արված դիտողություններ: Այսպես, դրանցից մեկի վրա մեծ զորավարը գրել է «մելիք Յուսուպ *(մելիք Հովսեփ – Մ. Ն.)* 2-րդի վերջերս վախճանվելուց հետո նրան հաջորդեց իր ավագ որդին՝ Բեկլար բեկը» (նույն տեղում, էջ 65): Նշված գրառումները վկայում են, որ Սուվորովը լավատեղյակ էր Անդրկովկասի անցյալի (1720-ական թթ.), այլև իր ժամանակի քաղաքական ու ռազմական իրադարձություններին և մեծ ուշադրությամբ հետևում էր դրանց:

## Էջ 319

* Արխիվային նյութերը վկայում են, որ 1788 թ., ռուս-թուրքական երկրորդ պատերազմի ժամանակ, Նոր Նախիջևանի կառավարիչ մայոր Իվան Աբրամովը (Հովհաննես Աբրահամյանը) ստեղծում է կամավորական ջոկատ կազմված հայերից և մասամբ ուկրաինացիներից: Ջոկատը, որ բաղկացած էր 224 մարդուց, նպատակ ուներ կռվել թուրքական զորքերի դեմ Ղրիմում (РГВИА, ф. 52, оп. 194, с. 1-4): Այդ նույն ժամանակ Բեսարաբիայում տեղական հայերից ձևավորվեց կամավորների մի այլ խումբ Հովսեփ Արղությանի ու փոխգնդապետ Ստեփան Դավթյանի նախաձեռնությամբ (տե՛ս *Մ. Գ. Ներսիսյան.* Հայ ժողովրդի նոր պատմության էջերից. Ե., 1982, էջ 39-41):

** Արևմտահայերը Թուրքիայի դեմ կռվող ռուսական զորքերին միշտ էլ դիտել են որպես իրենց ազատարարներ: Դեկաբրիստ Ե. Լաչինովը իր օրագրերում,

օրինակ, նշել է, որ երբ ռուսական զորքերը 1829 թ. մոտեցան Արդահանին, «ապա Արդահանի բեկը փախավ լեռները. նրան հետևեցին բոլոր մահմեդականները, իսկ հայերը դիմավորեցին մեզ հնազանդությամբ ու [քաղաքի] բանալիներով» (տե՛ս Декабристы об Армении и Закавказье. Составил и редактировал *М. Г. Нерсисян.* Е., 1985, с. 169)։ Լաչինովը բերում է բազմաթիվ օրինակներ այն մասին, որ Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը միշտ դիմում էր ռուսական զորքերի օգնությանը։ Ե. Լաչինովը այսպես է նկարագրում Երևանի հայ բնակիչների կողմից ռուսական զորքերին դիմավորելը. «Աննկարագրելի են ցնծության այն սրտառուչ տեսարանները որով դիմավորեցին մեզ հայ ընտանիքները, երբ մենք գրավել էինք այն (Երևան – Մ. Ն.)։ Էլ չասած այն մասին, որ նրանք աոջևում տեսնում էին երջանիկ ապագան... Ռուսաստանի կառավարման ներքո...» (տե՛ս *М. Г. Нерсисян.* Из истории русско-армянских отношений. Книга первая. Е., 1956, с. 359-360)։

Էջ 323

* Իր այլ բանաստեղծություններում ևս Ա. Ս. Պուշկինը ողջունել է հույների հակաօսմանյան ազատագրական պայքարը։ «Восстань, о Греция, восстань» բանաստեղծության մեջ օրինակ, նա գոհունակություն էր հայտնում, որ

страна героев и богов

расторгла рабские вериги...

(*А. Пушкин.* Полное собрание сочинений. Т. 2, Academia, 1935, с. 332)։

Էջ 324

* Նորագույն ուսումնասիրողներից Ա. Այվազյանը իր աշխատության մեջ (*Ա. Այվազյան.* Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. Ե., 1998) ցույց է տալիս, որ ամերիկյան պատմագրության որոշ ներկայացուցիչներ խեղաթյուրում են ոչ միայն հայ հին ու միջնադարյան, այլև նոր պատմության հանգուցային հարցերը և որ արևմտյան կեղծարարների «համապարփակ ընդգրկումների» ձգտման հիմքում ընկած են նրանց քաղաքական պատվիրատուների նպատակները։

# ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԵՀ - «Բանբեր Երևանի համալսարանի»

«Լրաբեր» - ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» (հասարակական գիտությունների)

ՊԲՀ, ИФЖ - ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդես»

«Տեղեկագիր», «Известия» - ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտությունների)

## ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), ֆ. Բ. Նավասարդյանի, փ. II 97-99, III 9, ֆ. Ռ. Պատկանյանի, փ. 198, 303, N 270/1996։

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, պրոֆ. Լեոյի ֆոնդ։

Հայաստանի Հանրապետության նոր պատմության պետական կենտրոնական արխիվ (ՀՀ ՆՊ ՊԿԱ),

ֆ. 51/115, ց. 2, գ. 12, 44, ֆ. 57, գ. 26, 159, ֆ. 113, оп. 3, д. 609, քաղվածքների բաժին, գ. 51, Канцелярия нач. главн. управления главнокомандующего гражданской частью на Кавказе, д. 552. Մկրտիչ Ներսիսյանի անձնական արխիվ։

ՀՀ ՀՔԿՓ ՊԿ արխիվ, ֆ. 3, գ. 12։

Մաշտոցի անվան Մատենադարան (Մատենադարան), ձեռ. 2776, 4982։

Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 8, վավ. 233ա, Գ. Հովսեփյանի արխիվ, թղթ. 110, վավ. 40։ Կաթողիկոսական դիվան, թղթ. 21, վավ. 1410, թղթ. 176, վավ. 259, 323, 324, 325, թղթ. 181, վավ. 165, 214, 393, թղթ. 183, վավ. 453, 460, թղթ. 202, վավ. 549, թղթ. 228, վավ. 23, թղթ. 236, վավ. 48 թղթ. 236ԺԱ, վավ. 226գ։ Անթվական վավերագրեր, N 1410։

Архив АН России, ф. 99, оп. 2, д. 13.

Архив внешней политики Российской империи (АВПРИ), Армянский фонд, Константинопольское посольство, д. 71, 71/6, 118, 119, 271, 272, 278, 280, 284, 286, 1587, 3176.

Государственный архив Астраханской области, ф. 810, опись N 2, ед. хр. 154 («Дело о пожертвованиях армянским обществом на военные нужды за 1812 г.»).

Центральный государственный исторический архив Грузии (ЦГИА Грузии), ф. 558, д. 18, ф. 559, д. 5, 18.

Центральный исторический архив, Москва (ЦИАМ), ф. Департамент полиции, 3-е делопроизводство, д. 172, 700, 3-е отд., 3-я эксп., д. 120, 131, 707.

Российский государственный военно-исторический архив (РГВИА), ф. Военно-учебного архива (ВУА), д. 49974, 50323, 54396, 54595, 56518, 56520, 56522, 78263, 78664, 78735, 78755, ф. 52, оп. 194.

Российский государственный исторический архив (РГИА), ф. Петербурского цензурного комитета, 1861, д. 90, Департамент министерства юстиции. Второе уголовное отделение, д. N 11312, 1883, д. 11321.

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Ազատութեան աւետաբեր
Աղբիւր
Արարատ
Արեւելեան մամուլ
Արեւմուտք
Արծուի Վասպուրական
Արծուիկ Տարօնոյ
Արձագանք
Արմենիա
Գրական թերթ
Դրոեբա (վրաց.)
Դրօշակ
Եւրոպա
Իվերիա (վրաց.)
Լոյս
Լրաբեր (Նիւ Եորք)
Լրագիր
Լումայ
Ծաղիկ
Կռունկ Հայոց աշխարհին
Համբաւաբեր Ռուսիոյ
Հայաստան
Հայկական աշխարհ
Հայրենիք
Հանդէս գրականական եւ պատմական
Հիւսիս
Հիւսիսափայլ
Հովիտ
Հորիզոն
Մամուլ
Մասեաց աղաւնի
Մասիս
Մեղու
Մեղու Հայաստանի
Մշակ
Մուրճ
Նոր դար
Նոր կեանք
Նոր ուղի
Նորք
Պսակ
Սէր
Սովետական Հայաստան
Վէմ
Փարիզ
Փյունիկ
Փորձ
Փունջ
Օրագիր



Биржевые ведомости
Былое
Вопросы истории
Голос
Кавказ
Колокол
Московские ведомости
Московский телеграф
Новое время
Радуга
Русский инвалид
Русский курьер
С. Петербургские ведомости
Тифлисский вестник
Cümhürriyet
Revue des deux monde

## ՏՊԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

*Ա-Դօ.* Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները. Ե., 1912:

*Աբովյան Խ.* Երկերի լիակատար ժողովածու. հ. 3, Ե., 1948:

*Աբրահամ Երեւանցի.* Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի. Վենետիկ, 1977:

*Աբրահամ Երևանցի.* Պատմություն պատերազմացն. Ե., 1938:

*Աբրահամյան Ա. Գ.* Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից. Ե., 1953:

*Ալիշան Ղ.* Մաղթունի, Նուագք, Բ. Վենետիկ, 1885:

*Ալիշան Ղ.* Նվագներ. Ե., 1957:

*Ալիշան Ղ.* Սիսուան. Վենետիկ, 1885:

*Ալլահվէրտեան Հ.* Ուլնիա կամ Զեյթուն. Կ. Պոլիս, 1884:

*Ալպօյաճեան Ա.* Պատմութիւն Եւդոկիոյ հայոց. Կահիրէ, 1952:

*Ալպօյաճեան Ա.* Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Բ. Կահիրէ, 1937:

*Աղայան Ղ.* Երկեր, հ. Գ. Ե., 1940:

*Աղայեանց Ղ.* Մի երես մեր նորագոյն պատմութիւնից. Մ., 1891:

*Աղասի.* Զեյթուն եւ իր շրջակաները. Պեյրութ, 1968:

*Աճեմեան Հայկ.* Հայոց Հայրիկ..., հ. Ա, Թավրիզ, 1929:

*Այվազյան Ա.* Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. Ե., 1998:

*Անանուն Դ.* Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հ. 2. Էջմիածին, 1922:

*Անասյան Հ. Ս.* Հայ-հունական ազատագրական շարժման մի էջ Կանդիայի պատերազմի շրջանից.– «Տեղեկագիր», 1954, N 3:

*Անասյան Հ. Ս.* Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին. Ե., 1957:

*Անասյան Հ. Ս.* XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում. Ե., 1961:

Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հ. 2, Ե., 1950:

Աշխատությունների ժողովածու ՀՍՍՀ ԳԱ Լեզվի ինստիտուտի, հ. 1, Ե., 1946:

*Ասմարյան Հ. Ա.* Իտալական ազգային-ազատագրական շարժման արձագանքները հայ պարբերական մամուլում.– ՊԲՀ, 1979, N 2:

Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ. Կ. Պոլիս, 1876, 1879:

*Ատոմ.* Պետական վերանորոգութիւնն ու հողային հարցը. Կ. Պոլիս, 1910:

*Ատոմ.* Ազգային սահմանադրութիւն. Կ. Պոլիս, 1914:

*Արամայիս (Տէր-Դանիէլեան).* Սարգիս Կուկունեան.– Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2. Բոստոն, 1938:

*Արծրունի Գ.* Թիւրքաց հայերի տնտեսական դրութիւնը (հրապարակախօսական դասախօսութիւն, կարդացուած 1879 թ. մարտի 25-ին). Թիֆլիս, 1894:

*Բաբայան Ա. Ս.* Իտալական ազատագրական շարժումները և հայերը.– ՊԲՀ, 1971, N 3:

*Բայրամյան Լ.* Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում. Ե., 1982:

*Բեքարյան Ա. Ա.* Բայրոնը և Մխիթարյանները.– ՊԲՀ, 1988, N 2:

*Գաբիկեան Խ.* Հայկական հարցը Արեւելեան հարցի մեջ (1860-1880). Պեյրութ, 1962:

*Գալուստեան Գ. Հ. (Կիլիկեցի).* Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զեյթուն. Նիւ Եորք, 1934:

*Գեղամեանց Ե.* Իմ շնորհաւորանքը «Մշակի» յոբելեանին. Թիֆլիս, 1915:

*Գեղամեանց Ե.* Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում կամ Հայկական հարցի չորրորդ շրջանը. Բաքու, 1915:

Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան... Մադրաս, 1773:

Գրական ժառանգություն, Ա գիրք, Ե., 1940:

*Դաշտենց Խ.* Բայրոնը և հայերը. Ե., 1959:



*Դարոնցյան Ս.* Միքայել Նալբանդյան. Կյանքը և գործունեությունը. Ե., 1970:

Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԳ. Թիֆլիս, 1915:

*Դուրեան Պ.* Տաղք եւ թատերգութիւնք. Կ. Պոլիս, 1872:

*Դուրյան Պ.* Տաղեր. Ե., 1954:

*Երիցեանց Ա.* Ռուսիոյ հայոց վիճակագրութիւնը.– «Փորձ», Թիֆլիս, 1881, N 2:

*Երիցեանց Ա.* Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիզ, 1894:

*Երկանյան Վ.* Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում. Ե., 1970:

Զեյթունի պատմագիրք. Պուենոս Այրես, 1960:

*Զեյթունցի.* Զեյթունի անցեալէն և ներկայէն, Ա մասն. Վիեննա, 1900:

*Զուլալյան Մ. Կ.* Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ. Ե., 1995:

Թեզիսներ Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակի մասին (1654-1954). Ե., 1954:

*Թումայեան Կ.* Պատմութիւն Արևելեան խնդրոյ և առաջնորդ Հայկական հարցի, հ. Բ, Լոնդոն, 1905:

*Թումանեան Յ.* Հայրենիքի հետ. Թիֆլիս, 1916:

*Թումանյան Հ.* Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Ե., 1995:

Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան. Ե., 1961, հ. Բ. Ե., 1964:

*Թօխմախեան Ա.* Մասիս լեռների հարաւային ստորոտները, Բ. մասն. Թիֆլիս, 1882:

*Ինճիճեան Ղ.* Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առաջին, հ. Ա. Վենետիկ, 1806:

*Իսահակյան Ա.* Հիշատակարան. Ե., 1977:

*Լենին Վ. Ի.* Երկերի լիակատար ժողովածու, հ. 3. Ե., «Հայաստան» հրատ., 1975:

*Լէօ.* Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը. հ. Ա. Փարիզ, 1934:

*Լէօ.* Հայ հերոսներ. Ե., 1920:

*Խառատյան Ա.*, Արևմտահայերի Ազգային «սահմանադրությունը» (1860-1863).– ՊԲՀ, 1992, N 2-3:

*[Խրիմեան Մկրտիչ Վանեցի].* Հրաւիրակ Արարատեան. Ցօրինեալ ի չափս հայկականս. Կ. Պոլիս, 1850:

*[Խրիմեան Հայրիկ].* Ամբողջական երկեր. Նիւ-Եորք, 1929:

*[Խրիմեան Հայրիկ].* Հայգոյժ. Աշխատանք Հայոց աշխարհին. Գրեց և աշխարհագուժեց Խրիմեան Հայրիկ. Կ. Պոլիս, 1877:

*[Խրիմեան Հայրիկ].* Վանգոյժ. Կուժ մը ջուր իւր այրած հայրենեաց վերայ կը սրսկէ Խրիմեան Հայրիկ. Տփխիս, 1877:

*Ծերունի (Ստ. Ստեփանեան).* Կուկունեան խմբի արշաւանքը: Կուկունեան խմբի ամբաստանագիրը.– Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1. Բոստոն, 1934:

Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանեան Հայաստանի. Կ. Պոլիս, 1878:

Կենսագրութիւն Մեսրովբայ Դաւթեան Թաղիադեանցի, հաւաքեց և խմբագրեց տ. Յովհաննէս Մկրեան. Թիֆլիս, 1886:

Կիլիկիա. Պետերբուրգ, 1894:

Կուկունյանի խմբի արշավանքը. Ե., 1992:

*Հակոբյան Թ. Խ.* Երևանի պատմությունը (1879-1917). Ե., 1963:

*Հակոբյան Հ.* Ուղեգրություններ, հ. Ջ. Ե., 1934:

*Հակոբյան Մ. Ն.* «Մետեորա» հանդեսը արևմտահայ լուսավորական-դեմոկրատական շարժման մեջ. Ե., 1977:

Հայաստան և Մակեդոնիա. Ժընև, 1903:

*Համբարյան Ա.* Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը.– ԲԵՀ, 1969, N 2:

*Հովհաննիսյան Ա.* Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին. Ե., 1955:

*Հովհաննիսյան Ա.* Արծրունու և Րաֆֆու գաղափարական ներհակության ակունքը.– ԲԵՀ, 1968, N 1:

*Հովհաննիսյան Ռ. Փ.* Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը. Ե., 1965:

*Ղազարյան Հ.* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Ե., 1967:



*Ղասաբյան Ջ. Մ.* Էջեր հայ–բուլղարական կապերի պատմությունից.– ՊԲՀ, 1982, N 4:

*Ղարաջեան Գ.* Իմ կեանքի պատմութիւնը (անտիպ), հ. 1. (տե՛ս ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ):

*Ղարաջեան Գ. (Ս. Տ. Արկոմեդ).* Անցեալի յիշողութիւններից. Թիֆլիս, 1918:

*Ղարաջեան Գ. (Ս. Տ. Արկոմեդ).* Հայ անդրանիկ յեղափոխական խմբակն Անդրկովկասում. Թիֆլիս, 1927:

*Ճանկուլեան Հ. Կ.* Յիշատակներ հայկական ճգնաժամէն. մասն Ա և Բ., Կ. Պոլիս, 1913:

*Մակարյան Ա. Մ.* Նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատիան. Ե., 1946:

*Մամուրեան Մ.* Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը. Զմիւռնիա, 1881:

*Մամուրեան Մ.* Սեւ լեռին մարդը. Աթենք, 1932:

*Մամուրյան Մ.* Երկեր. Ե., 1966:

Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան. Ե., 1956:

*Մարտիրոսյան Վ. Մ.* Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թ. պաշտպանությունը.– ՊԲՀ, 1965, N 2:

*Մելիքսեթյան Վ.* Զեյթունի 1862 թ. ապստամբությունը. (Հայաստանի պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», հ. 2. Ե., 1950):

*Միքայէլեան Ք.* Ամբոխային տրամաբանութիւն.– «Դրոշակ», Աթենք, 1900, N 2, 3:

*Միքայէլեան Ք.* Բեկորներ իմ յուշերից.– «Հայրենիք» ամսագիր, 1924, օգոստոս:

*Մխիթարյան Մ. Հ.* XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից. Ե., 1976:

*Մրմըրեան Յ.* Թիւրքահայոց հին վաճառականութիւն եւ վաճառականք. Կ. Պոլիս, 1908:

*Մրմըրեան Յ.* Մասնական պատմութիւն հայ մեծատուններու. Կ. Պոլիս, 1910:

*Մուրադեան Հ.* Ծորտատիրութիւնը Թիւրքիայում.– «Մուրճ», 1899, N 10:

*Յասեմի Ռաշիդ.* Իրանի պատմություն. Թեհրան, 1944 (պարսկերեն):

*Յովհաննիսեան Ա.* Յակոբ Ջուղայեցու մի գրութիւնը ռուս արքունիքին.– «Արարատ», 1915, N 9-10.

*Նաթանեան Պ.* Արտօսր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուայ, Քարբերդու, Չարսանճագի, Ճապաղջուրի եւ Երզնկայու. Կ. Պոլիս, 1883:

*Նալբանդյան Մ.* Անտիպ երկեր, խմբագրություն և կոմենտարներ Աշոտ Հովհաննիսյանի. Ե.-Մ., 1935:

*Նալբանդեան Մ.* Երկեր, հ. 1. Ռոստով, 1903:

*Նալբանդյան Մ.* Երկերի լիակատար ժողովածու. Ե., հ. 1, 1945, հ. 2, 1947, հ. 3, 1940, հ. 4, 1949:

*Նալբանդյան Մ.* Ընտիր երկեր. Ե., 1953:

*Ներսիսյան Մ. Գ.* Դավիթ-Բեկի շարժման արձագանքները Վասպուրականում և հարևան գավառներում.– «Տեղեկագիր», 1941, N 5-6:

*Ներսիսյան Մ. Գ.* Դեկաբրիստները Հայաստանում. Ե., 1958:

*Ներսիսյան Մ. Գ.* Ժողովրդական հերոսը (Զորավար Անդրանիկի ծննդյան 100-ամյակի առթիվ).– «Սովետական Հայաստան», 1965, փետրվարի 25, «Լրաբեր», Նյու Յորք, 1965, մարտի 13:

*Ներսիսյան Մ. Գ.* Հայ ազգային-ազատագրական շարժումը օսմանյան բռնապետության դեմ և պատմության կեղծարարները.– ՊԲՀ, 1984 N 3:

*Ներսիսյան Մ. Գ.* Հայ ժողովրդի նոր պատմության էջերից. Ե., 1982:

*Ներսիսյան Մ. Գ.* Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում. Ե., 1940:

*Ներսիսյան Մ. Գ.* Պատմության կեղծարարները. Ե., 1998:

*Ներսիսյան Մ. Գ.* Սուվորովը և ռուս-հայկական հարաբերությունները 1770-1790 թթ., Ե., 1944:

*Ներսիսյան Մ. Գ.* Օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին.– ՊԲՀ, 1997, N 2, 1998, N 1-2:

*Ներսիսյան Մ. Գ., Խառատյան Ա. Ա.* Միջազգային հասարակական կարծիքը արևմտահայության ցեղասպանության մասին.– ՊԲՀ, 1986 N 1:

*Նիրվանեան Ս.* Վարդան Գոլոշեան, Յովհաննէս Ագրիպասեան. Ժընև, 1905:



Նոր երգարան կամ մրմունջ Հայկական. Վառնա, 1901:

Նոր տետրակ որ կոչի Յորդորակ: Շարադրեցեալ սակս սթափելոյ երիտասարդացն եւ մանկանցն Հայկազանց ի վհերոտեալ եւ ի հեղգացեալ թմրութենէ քնոյ ծուլութեան... Մադրաս, 1772:

*Շահազիզ Ե.* Սմբատ Շահազիզի կենսագրությունը. Ե., 1947:

*Շահազիզեան Ս.* Լեւոնի վիշտը եւ զանազան բանաստեղծութիւններ. Մ., 1865:

*Շահումեան Ստեփաննոս,* Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին եւ պատերազմաց հայոցն Խափանու. Վաղարշապատ, 1871:

*Շիլլեր Ֆ.* Ընտիր երկեր. Ե., 1952:

*Շիրվանզադե.* Երկերի ժողովածու, հ. 8. Ե., 1951:

*Ոսկանյան Վ.* Հայ-ռուսական հարաբերությունները 17-րդ դարում.– «Տեղեկագիր», 1948, N 1:

*Ոսկանյան Վ. Կ.* Հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման պատմությունից.– XVI-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը. Ե., 1989:

*Չոպանեան Ա.* Խրիմեան Հայրիկ. Փարիզ, 1925:

*Չորմիսեան Լ.* Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Ա. Բէյրութ, 1972:

*Պատկանեան Ռ.* Ընտիր երկասիրութիւններ, խմբագրութեամբ Գր. Խալաթեանի, հ. 1. Պետերբուրգ, 1893:

Պատկանյան Ռ. Երկերի ժողովածու, հ. 6. Ե., 1976:

*Պարոնյան Հ.* Երկերի ժողովածու, հ. 3. Ե, 1964, հ. 4. Ե, 1965:

*Պարոնյան Հ.* Երկերի լիակատար ժողովածու, հ. 10. Ե., 1947, հ. 11. Ե., 1948:

*Պարսամյան Վ.* Էջմիածինը հակահեղափոխության սպասարկու. Ե., 1932:

*Պէշիկթաշլեան Մ.* Բանաստեղծութիւններ, ճառեր. Վենետիկ, 1956:

*Պէշիկթաշլեան Մ.* Քերթուածներ ու ճառեր. Փարիզ, 1904:

*Պետրոս դի Սարգիս Գիլանենց.* Ժամանակագրութիւն.– «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, N 3:

*Պողոսյան Ա.* Ղրիմի պատերազմի Կովկասյան ռազմաճակատը և հայերի մասնակցությունը ռազմական գործողություններին.– «Տեղեկագիր», 1950, N 3:

*Պողոսյան Հ. Մ.* Զեյթունի պատմությունը. Ե., 1969:

*Պողոսյան Հ. Մ.* Սասունի պատմություն. Ե., 1985:

*Պողոշյան Պ.* Հուշեր. Ե., 1940:

*Ռեկլիւ Էլիզէ.* Լազիստան, Հայաստան եւ Քիւրդիստան..., Վաղարշապատ, 1893:

*Սարուխան.* Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում 1860–1910, հ. Ա. Թիֆլիս, 1912:

*Սիմէոն դպրի Լեհացւոյ* Ուղեգրութիւն. Վիեննա, 1936:

*Ստեփանյան Գ.* Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության արձագանքները 1862-1872 թթ. տասնամյակում.– «Տեղեկագիր», 1953, N 11:

*Ստեփանյան Գ.* Մ. Նալբանդյանի երկրորդ ուղևորության հետ կապված մի քանի հարցեր.– «Տեղեկագիր», 1949, N 9, 10:

*Ստեփանյան Գ.* Մ. Նալբանդյանի «Երկու տողում» հիշատակված մի ազգանվան աղավաղման շուրջը.– «Տեղեկագիր», 1952, N 6:

*Սրուանձտեանց Գ.* Թորոս աղբար, հ. Բ. Կ. Պոլիս, 1884:

*Սրուանձտեանց Գ.* Հնոց եւ նորոց. Կ. Պոլիս, 1874:

*Սունդուկյան Գ.* Երկերի լիակատար ժողովածու, հ. IV. Ե., 1961:

*Վարանդեան Մ.* Հայկական շարժման նախապատմութիւնը, հ. Ա. Ժընեւ, 1912:

*Վարանդեան Մ.* Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն. հ. Ա. Փարիզ, 1932:

*Վարդանեան Գ.* Հողատիրութիւնը Թուրքիայում.– «Մուրճ», 1893, N 5:

Տեղեկագիր գաւառական հարստահարութեանց. Կ. Պոլիս, 1876:

Տեղեկագիր հողային գրաւման յանձնաժողովոյ, տետր Ա., Կ. Պոլիս, 1910:

*Տէր-Մելքիսէդեկեան Գ.* Նուէր քեասիք գեղըցիներին. Թիֆլիս, 1879:

*Տիգրան Մկունդ.* Ամիտայի արձագանքները. Նիւ-Եորք, 1950:

*Րաֆֆի.* Երկերի ժողովածու, հ. 2. Ե., 1950, հ. 9. Ե., 1958, հ. 10. Ե., 1959:

*Րաֆֆի.* Երկերի ժողովածու, հ. առաջին. Ե., 1983, հ. տասը. Ե., 1991:

*Րաֆֆի.* Խենթը. Մ., 1890:

*Րաֆֆի.* Կայծեր. հ. 1. Թիֆլիս, 1883:



*Րաֆֆի.* Ջալալեդդին. Մ., 1884:

*Րաֆֆի.* Տաճկահայք. Թիֆլիս, 1895:

*Փափազյան Հ.* Մկրտիչ Փորթուգալյանը Արմենական կուսակցության մասին (հրապարակում).– ՊԲՀ, 1996, N 1-2:

*Аверьянов П. И.* Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия. Тифлис, 1900.

*Адлер И.* Железнодорожное строительство на Кавказе.– Кавказ, Тифлис, 1912, N 97.

